ՀԱՆՐԱՀԱՆԱՑ ՀԵՂԻՆԱԿ

ՋՈՆ ԲԻՎԵՐ

Տեսնալ Աստծուն

Մտերիմ կյանք Աստծո հետ

Սիրելի՛ ընկեր,

Աստվածաշնչում կան բազմաթիվ փառավոր խոստումներ: Այդ խոստումները ճշմարիտ են և կարող են փոխել մեր կյանքը: Այնուամենայնիվ, ամենից զարմանալի խոստումն այն է, որ Աստված փափագում է մտերմորեն ճանաչել ձեզ:

Հակոբոսի թղթում գրված է. *«Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (4.8):* Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք հետևյալը. Տիեզերքի, երկրի և բոլոր բնակիչների Արարիչը խնդրում է ձեր ներկայությունը: Եվ Նա ոչ միայն խնդրում է ձեր ներկայությունը, այլև ցանկանում է մտերմորեն շփվել ձեզ հետ, քանի որ գրված է, որ Նա Աստված է, Ով նախանձավորությամբ է վերաբերվում Իր հարաբերությանը ձեզ հետ:

Տիեզերքի Արարիչն անհավատալի և անփոփոխ հրավեր է ուղղել մեզ՝ ոչ թե երկրպագելու Իրեն հեռվից՝ բառերով և ծեսերով, այլ՝ մուտք գործելու այնպիսի իմաստալից և մտերիմ հարաբերության մեջ, որում դուք ճանաչում եք Նրա սիրտը, իսկ Նա՝ ձերը:

Ընկեր, հորդորո՛ւմ եմ ձեզ ընդունել այս հրավերը և սկսել հրաշալի և ոգեշնչող ընթացք: Մոտեցե՛ք Հորը. մոտեցե՛ք անմիջապես Աստծո սրտին:

Ձեր եղբայրը Քրիստոսում,

MessengerX

Ջոն
JohnBevere@ymail.com

Messenger INTERNATIONAL

ՀԱՆՐԱՀԱՆԱՉ ՀԵՂԻՆԱԿ

Ջ Ո Ն Բ Ի Վ Ե Ր

Մտեևալ Աստծուն

Մտերիմ կյանք Աստծո հետ

Drawing Near by John Bevere, Armenian
© 2023 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Drawing Near

Additional resources in Armenian by John and Lisa Bevere
are available for free download and video streaming at
MessengerX.com and on the **MessengerX** App
To contact the Author: JohnBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

«Մոտենալ Աստծուն», Ջոն Բիվեր, հայերենով
© 2023 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով,
«Մոտենալ Աստծուն» վերնագրով

Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են
անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար
MessengerX.com կայքում և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC-ի ապրանքանիշերն են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն V

Գլուխ 1. Բոլոր ժամանակների մեծագույն հրավերը 1

Գլուխ 2. Աստծո փափագը 13

Գլուխ 3. Պաշտպանեք ձեր քաղցը 31

Գլուխ 4. Ձգտում Նրա ներկայությանը 53

Գլուխ 5. Վարագույրի ետևում. 71

Գլուխ 6. Աստծո ընկերները 91

Գլուխ 7. Ինչն է խոչընդոտում ճշմարիտ մտերմությունը. 119

Գլուխ 8. Ճշմարիտ երկրպագություն. 151

Գլուխ 9. Ո՞ւմ հետ է բնակվում Աստված 169

Գլուխ 10. Մտերմություն Սուրբ Հոգու հետ. 187

Գլուխ 11. Հոր խոստումը. 217

Գլուխ 12. Մտերմության լեզուն 251

Գլուխ 13. Հավատքի լիարժեք վստահություն 285

Գլուխ 14. Մոտենալ Աստծուն. 315

Հավելված Ա. 329

Հավելված Բ 335

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստված հստակ խոսեց սրտիս 1991 թվականին. «Որդի՛ս, ուզում եմ, որ գրես»:

Հաջորդող օրերը լի էին տարաբնույթ զգացմունքներով: Մի կողմից՝ վախը պատել էր ինձ և ռմբակոծում էր անխուսափելի ձախողման մտքերով. մյուս կողմից՝ դա ծիծաղելի էր թվում: Ես տանել չէի կարողանում գրելը: Դպրոցական տարիներին ժամեր շարունակ հառում էի աչքերս տետրի դատարկ թերթերին, երբ հանձնարարում էին շարադրություն գրել: Ես նույնիսկ անբավարար գնահատական ստացա միասնական ընդունելության քննության բանավոր անգլերենի բաժնից: Լեզվի և գրականության հանդեպ իմ ուժգին հակակրանքի պատճառով ես համալսարան ընդունվեցի՝ ընտրելով ինժեների մասնագիտությունը:

Իսկ այժմ Աստված պատվիրում էր ինձ գրել: Հազիվ թե այդպես լիներ: Ես կարծեցի, թե ճշտորեն չէի լսել Աստծուց:

Այնպես որ, ոչինչ չարեցի, բայց տասն ամիս ոչինչ չանելուց հետո Աստված երկու շաբաթվա տարբերությամբ երկու կանանց ուղարկեց ինձ մոտ՝ երկու տարբեր նահանգներից, որոնք նույնական ուղերձներ փոխանցեցին ինձ: Երկուսն էլ սիրով, բայց հաստատակամորեն զգուշացրին. «Ջո՛ն, եթե դու չգրես այն գրքերը, որոնք Տերը տվել է քեզ, Նա կտա դրանք մեկ ուրիշի, բայց դու դատաստանի կենթարկվես դրա պատճառով»:

Երբ երկրորդ կինը խոսեց, Աստծո երկյուղն իջավ ինձ վրա՝ գերակշռելով թե՛ վախը, թե՛ գրելու հանդեպ հակակրանքը: Ես սկսեցի: Հիշում եմ, թե ինչ տեղի ունեցավ, երբ հնազանդվելու որոշում կայացրի: Երբ մեքենագրում էի, մտքումս արագորեն գաղափարներ էին կազմվում, որոնց շուրջ երբեք չէի խորհել, և որոնք նախկինում չէի լսել: Ես արագորեն հասկացա, որ այդ ուղերձները ոչ թե իմն էին, այլ՝ Նրանը: Այդ օրվանից տարիներ են անցել. այժմ այն ուղերձները, որոնք Նա տվել է ինձ գրքերի տեսքով, թարգմանված են ավելի քան 130 լեզվով, և տպագրված օրինակները, որոնց թիվը հասնում է տասնյակ միլիոնների, տարածվել են աշխարհով մեկ:

Առաջին գիրքը գրելուց հետո խոստացա Աստծուն, որ երբեք գիրք չեմ գրի՝ պարզապես գրելու համար: Ես միայն կգրեմ, եթե Նա հանձնարարի ինձ: Այդ խոստումը փորձվեց: Ամեն տարի՝ 1992-1999 թվականները, Նա նոր ուղերձ էր տալիս, որը պետք է գրեի, սակայն *«Ծածկոցի տակ»* գիրքը գրելուց հետո երեք տարի շարունակ նոր ուղերձ չէի ստանում Աստծուց: Հրատարակիչները հաճախ էին հարցնում ինձ, թե որն էր լինելու իմ հաջորդ գիրքը, և թե՝ կարո՞ղ էին արդյոք հրատարակել, բայց ես ոչինչ չէի ձեռնարկում. ես դեռ Աստծուց խոսք չունեի:

Ի վերջո, երեք տարի անց Աստված ուղերձ տվեց՝ այն ուղերձը, որն այժմ ձեր ձեռքում է: Ես հավատում եմ, որ այս ուշացման պատճառներից մեկն այն աշխատանքն էր, որը Սուրբ Հոգին պետք է կատարեր իմ ներսում, որպեսզի այս գիրքը պատշաճ կերպով ծնունդ առներ: Ես քսանհինգ տարի

է՝ հավատացյալ եմ, սակայն երբեք Նրան մոտ լինելու այսքան ուժգին ձգտում չեմ ունեցել: Վերջին մեկուկես տարում վերապրել եմ ավելի խորը մտերմություն Տիրոջ հետ, քան երբևէ անցյալում: Ամբողջ կյանքում երբեք այնքան շատ լաց չեմ եղել, որքան վերջին տասնութ ամսում: Աստծո ներկայությունը համակել է ինձ հյուրանոցային համարներում, ինքնաթիռներում, իմ գրասենյակում, մեքենայի մեջ, տանը և հրաշալի բացօթյա վայրերում, երբ կենտրոնացված՝ ժամանակ եմ տրամադրել աղոթքին: Նրա ներկայությունը երբեք այսքան իրական և շոշափելի չի եղել:

Հավատում եմ, որ այս գիրքը Սուրբ Հոգու կողմից տարիներ տևող պատրաստության արդյունք է: Այն մտերմության հրավեր է Աստծո սրտից, որն ուղղված է ձեզ՝ Իր զավակին: Մինչև սկսելը ուզում եմ, որ միասին աղոթենք: Ասեք այս խոսքերը ձեր սրտից՝ իմանալով, որ ես բարձրաձայն արել եմ այս աղոթքը ձեզ համար իմ աշխատասենյակում: Հիսուսը խոստացել է, որ երբ «երկուսը երկրի վրա միաբանվեն, այն, ինչի համար որ խնդրեն, կլինի նրանց իմ Հորից, որ Երկնքում է» (Մատթ. 18.19): Եկեք միասին խնդրենք.

> «Հայր, ես խնդրում եմ Հիսուսի անունով, որ այս գրքի ուղերձն ընթերցելիս Դու բացես իմ աչքերը՝ տեսնելու համար, իմ ականջները՝ լսելու համար, և ընկալող ու հասկացող սիրտ տաս: Ես ցանկանում եմ մշտապես մտերիմ ընթացք ունենալ Քեզ հետ: Ես ցանկանում եմ ճանաչել Քո խորհուրդը, կամքը, գաղտնիքները և ձգտումները, ինչպես նաև բնակվել Քո ներկայության մեջ: Թող որ այս ուղերձը տա ինձ ոչ միայն գիտելիք, այլև զորություն, որը կվերափոխի իմ կյանքը՝ Քո սիրելի Որդու և իմ Տեր Հիսուսի պատկերով: Որովհետև երբ Նա այս երկրի վրա էր, կատարելապես ցուցադրում էր Քո փառքը՝ այն բանով, թե որքան մտերիմ էր Քեզ հետ: Թող որ ես նույնպես ցուցադրեմ Հիսուսի փառքը՝ այն բանով, թե որքան մտերիմ եմ դառնում Նրա

հետ՝ Սուրբ Հոգու Անձի միջոցով: Ես ներկայացնում եմ այս խնդրանքը Քեզ և նախապես շնորհակա՛լ եմ այն վերափոխման աշխատանքի համար, որը կատարելու ես ինձանում, երբ ես լսեմ և հետևեմ այն խոսքերին, որոնք Դու ոգեշնչել ես այս աշխատության մեջ: Շնորհակալությո՛ւն, որ իմ կյանքն այլևս նույնը չի լինի: Ես խնդրում եմ սա՝ համաձայնելով Քո ծառա Ջոն Բիվերի հետ: Ամե՛ն»:

Այժմ հավատացե՛ք և գոհացե՛ք Աստծուց ձեր ջերմեռանդ աղոթքին պատասխանելու համար: Ես ցնծում եմ՝ իմանալով, որ հենց այս պահից Սուրբ Հոգին առաջնորդում է ձեզ ավելի խորը մտերմության՝ բարձրացնելով ձեր աղոթքը դեպի Նրա սուրբ գահը, Ով միայն կարող է ճշմարտապես գոհացնել ձեր յուրաքանչյուր փափագը: Թող որ Հայրը, Հիսուսը և Սուրբ Հոգին ձեզ համար դառնան ավելի իրական, քան նախկինում:

Անկեղծորեն՝
Ջոն Բիվեր

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀՐԱՎԵՐԸ

«Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ»:
ՀԱԿՈԲՈՍ 4.8

Գոյություն ունի Աստծո սրտից բխող կանչ, ավելի ճիշտ՝ աղաղակ, որն ամեն օր ավելի ուժգին է դառնում. «Ինչո՞ւ եք բավարարվում առանց Իմ ներկայության. ինչո՞ւ եք հեռվում մնում, եթե կարող եք մտերմորեն հաղորդակցվել Ինձ հետ»:

Բոլորս ունենք ընկերներ կամ մարդիկ, որոնց համակրում ենք և որոնց հետ ցանկանում ենք ավելի մտերմանալ: Նրանք հատուկ տեղ են զբաղեցնում մեր սրտերում, և նրանց հետ ժամանակ անցկացնելը հաճելի է, հատկապես երբ նրանք են հրավիրում մեզ: Նրանց ընկերակցելու խնդրանքը համակում է մեզ սպասմամբ, ուրախությամբ և ոգեշնչմամբ: Մենք հաճույքով անում ենք անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի մի կողմ դնենք մեր մյուս գործերը և ընդունենք նրանց հրավերը:

Հակոբոսի գրքում գտնում ենք բոլոր ժամանակների մեծագույն հրավերը. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ» (4.8): Մի պահ կա՛նգ առեք և մտածե՛ք. տիեզերքը, երկիրը և բոլոր բնակիչներին Ստեղծողը խնդրում է ձեր ներկայությունը: Ավելին՝ Նա ցանկանում է մտերմորեն հաղորդակցվել ձեզ հետ, քանի որ գրված է. «Նա Աստված է, Ով նախանձավորությամբ է վերաբերվում ձեզ հետ հարաբերությանը» (Ելից 34.14, NLT):

Սա Աստծո անփոփոխ ցանկությունն է: Նա է ուղղել այս հրավերը, քանի որ փափագում է ճանաչվել Իր զավակներից: Մարդու անկումից ի վեր պահանջվել են հազարավոր տարիներ, բարդագույն պատրաստություններ և ահռելի գին, որպեսզի ճանապարհ բացվի նման մտերիմ հաղորդակցության համար: Հովհաննեսը՝ Հիսուսի մտերիմ ընկերներից մեկը, գրել է.

> «Ոչ մի մարդ երբևէ չի տեսել Աստծուն որևէ ժամանակ. միակ եզակի Որդին կամ միածին Աստված, Ով Հոր ծոցում [մտերիմ ներկայության մեջ] է, Նա է ազդարարել Նրան [Նա է հայտնել Նրան և տեսանելի կերպով ցույց տվել Նրան. Նա է մեկնել Նրան և ճանաչեցրել Նրան]» (Հովհ. 1.18, AMP):

Ադամը բացահայտ ճանաչում էր Տիրոջը, սակայն մեղքի կամ անհնազանդության պատճառով բաժանվեց Նրա փառավոր ներկայությունից, և նրա դառը ճակատագիրը դարձավ ամբողջ մարդկության բաժինը: Մարդիկ այլևս չէին կարող տեսնել կամ ճանաչել Աստծուն այնպես, ինչպես Ադամը՝ անցյալում: Այնուամենայնիվ, Հայրը մեծ ձգտմամբ և կարեկցանքով ցանկանում էր վերադարձնել մեր շփումն այդ սարսափելի բաժանությունից: Որպես պատասխան, Նա ուղարկեց Հիսուսին՝ մարմնով հայտնված Աստծուն, Ով սկզբից էլ Հոր հետ էր: Հիսուսը վճարեց խավարից մեզ ազատելու գինը, որպեսզի հաշտեցնի Աստծո հետ, եթե ընդունենք Նրան՝ որպես Տիրոջ:

Այնուամենայնիվ, մենք լիարժեք կերպով չենք քարոզել, ո՛չ էլ վերապրել ենք Աստծո և մարդու այս վերամիավորումը: Մենք շեշտադրել ենք ազատությունը մեղքից և մահից, սակայն չենք ազդարարել այն մտերիմ շփումը, որը սպասում է նրանց, ովքեր ազատություն են ստացել: Այս անտեսումը թանկ է արժենում մեզ համար. այն նույնիսկ կործանարար է, քանի որ բազմաթիվ մարդիկ չունեն Աստծուն մտերմորեն ճանաչելու սքանչելի փորձառությունը: Մենք տեսնում ենք այս ողբերգության զուգահեռը Հին կտակարանում՝ Աբրահամի ժառանգների կյանքում:

ԵՐԿՈՒ ԼԻՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ ՇԱՐԺԱՌԻԹ

Ես միշտ ապշել եմ Մովսեսի և նրա ազգակիցների՝ Իսրայելի զավակների վերաբերմունքի և վարքի հակադրության պատճառով: Ելից գիրքը սկսվում է Աբրահամի ժառանգների տառապանքով՝ ծանր գերության ներքո: Նրանք գրեթե չորս հարյուր տարի Եգիպտոսում էին: Սկզբում վայելում էին այդ ժողովրդի բարյացակամությունը, բայց շատ ժամանակ չանցած նրանց ստրկացրին և դաժանորեն շահագործեցին: Իրենց տառապանքի մեջ նրանք աղաղակեցին Տիրոջը՝ ազատություն խնդրելով:

Նրանց աղոթքները հուզեցին Տիրոջը, և Նա ուղարկեց Մովսես անունով մի փրկչի: Թեև Մովսեսը ծնունդով հրեա էր, նա ազատվել էր ստրկությունից և մեծացել էր որպես փարավոնի թոռ՝ նրա ընտանիքում: Որպես Եգիպտոսի արքայազն՝ իր եղբայրների դժբախտությունը հուզեց նրան, սակայն նա ստիպված էր անապատ փախչել՝ փրկելով կյանքը, և վերադարձավ միայն քառասուն տարի անց, որպեսզի Աստծո Խոսքով և զորությամբ փրկեր Իսրայելը գերությունից:

Կարելի է զուգահեռ անցկացնել այն բանի միջև, թե ինչպես Իսրայելը փրկվեց Եգիպտոսի գերությունից, և ինչպես մենք փրկվեցինք մեղքի ստրկությունից: Եգիպտոսը խորհրդանշում է այս աշխարհի համակարգը, իսկ Իսրայելը՝ եկեղեցին: Երբ

վերստին ծնվում ենք, մենք ազատվում ենք այս աշխարհի բռնակալական և կեղեքիչ համակարգից:

Դժվար չէ պատկերացնել, թե որքան դաժանորեն էին Եգիպտոսի քաղաքացիները շահագործում Իսրայելի զավակներին: Նրանց մեջքերը սպիացած էին փարավոնի գործավարների մտրակներից, նրանց տները ետնախորշերում էին, և նրանց կերակուրը բաղկացած էր մնացորդներից: Նրանք ժառանգության ոչ մի հույս չունեին, քանի որ ստրկացված էին՝ իրենց եգիպտացի տերերի բարգավաճումը կառուցելու համար: Նրանք ողբում էին, երբ իրենց հազարավոր նորածին տղաները մահվան էին մատնվում՝ փարավոնի հրամանով:

Թեև նրանք ամբողջությամբ կրել էին այդ դաժանությունը, նրանք արագորեն մոռացան այդ մասին: Նույնիսկ Եգիպտոսից ազատվելուց հետո ամեն անգամ, երբ խնդիրներ էին ծագում, նրանք զղջում էին, որ հեռացել էին Եգիպտոսից, և ծաղրում էին ազատության մասին իրենց աղոթքները՝ այսպիսի մեկնաբանություններով. «Եգիպտոսում *մեզ համար ավելի լավ էր»* կամ *«Լավ չէ՞ մեզ համար,* որ Եգիպտոս դառնանք»: Նրանք նույնիսկ այնքան համարձակ գտնվեցին, որ առաջարկեցին. «Եկ մեկ զորագլուխ ընտրենք և Եգիպտոս դառնանք» (Թվոց 14.4, *շեղագիրը հեղինակինն է):*

Բայց Մովսեսն այդպիսին չէր. նա միակն էր, որի կյանքի պայմանները Եգիպտոսում ավելի լավ էին. իրականում, ամբողջ աշխարհում ոչ ոք կյանքի ավելի լավ պայմաններ չէր ունեցել: Նրան խնամում էր աշխարհի ամենահարուստ մարդը, նա ապրում էր լավագույն վայրում, կրում էր լավագույն հագուստը, սնվում էր լավագույն կերակուրով և կրթվում էր լավագույն ուսուցիչների կողմից: Ծառաները հոգում էին նրա յուրաքանչյուր կարիքը և կատարում յուրաքանչյուր ցանկությունը: Նա մեծ ժառանգություն ուներ՝ թե՛ հարստությամբ, թե՛ ապագայի մասին խոստումներով: Նա հոժարաբար թողեց այդ ամենը և, ի տարբերություն Իսրայելի զավակների, ոչ մի անգամ ետ չնայեց, և ո՛չ էլ փափագեց այն ամենին, ինչ ետևում էր մնացել:

Ո՞րն էր տարբերությունը: Պատասխանը հետևյալն է. Մովսեսը հանդիպեց Աստծուն: Նա տեսավ կրակը և մոտեցավ: Նա հանդիպեց վառվող մորենու մեջ գտնվող կենդանի Աստծուն Սինա սարի մոտ, իսկ Իսրայելը՝ ոչ: Երբ Տերը կանչեց նրան, նա մոտեցավ: Ավելի ուշ, երբ Իսրայելի զավակներն ավելի հրաշալի հրավեր ստացան, նրանք ետ քաշվեցին (տես Ելից 20.18-21):

Շատ հաճախ հարցնում եմ եկեղեցիներին. «Ո՞ւր էր Մովսեսը տանում Իսրայելի զավակներին, երբ նրանք հեռացան Եգիպտոսից»: Որպես կանոն, ինձ պատասխանում են. «Խոստման երկիր»: Այնուամենայնիվ, դա ճիշտ չէ: Նա գնում էր դեպի Քորեբ կամ Սինա սարը: Հիշե՛ք, թե ինչ Աստված ասաց փարավոնին՝ Մովսեսի միջոցով. «Արձակի՛ր Իմ ժողովրդին, որ անապատում Ինձ պաշտեն» (Ելից 7.16): Նա չասաց. «Արձակի՛ր Իմ ժողովրդին, որ երկիր ժառանգեն»: Ինչո՞ւ Մովսեսը պետք է տաներ նրանց Խոստման երկիր՝ առանց՝ սկզբում ծանոթացնելու Խոստացողի հետ, Ով բոլոր ազգերի Փափագն է: Եթե Մովսեսն առաջին հերթին Խոստման երկիր տաներ նրանց, նրանք կսիրեին խոստումներն ավելի, քան Խոստացողին՝ Աստծուն: Մովսեսն անհամբեր սպասում էր, որ բերեր նրանց այն վայրը, որտեղ ինքը հանդիպել էր Աստծուն:

Մեծ մասամբ մենք այսպես ենք վարվել մեր եկեղեցիներում. ավելի շատ քարոզել ենք այն մասին, թե ինչ կարող է անել Հիսուսը մեզ համար, քան այն մասին, թե իրականում ով է Նա: Արդյունքում մենք բարձրացրել ենք շատերին, որոնք ծառայում են Աստծուն գլխավորապես շահի համար, այնինչ նրանց ծառայությունը պետք է ուրախալի արձագանք լիներ Նրա Անձին: Որպես համեմատություն, պատկերացրեք մի կնոջ, որն ամուսնանում է մի տղամարդու հետ՝ փողի համար: Նրա շարժառիթը ոչ թե իր ամուսնու անձը ճանաչելն է, այլ այն, ինչ այդ տղամարդը կարող է անել իր համար: Գուցե նա ինչ-որ չափով սիրում է այդ տղամարդուն, սակայն լիովին սխալ պատճառներով:

Այն մարդիկ, որոնք շեշտադրում են Աստծո օրհնությունները՝ անտեսելով հարաբերությունը Նրա հետ, կրթում են այնպիսի աշակերտների, որոնք գալիս են Աստծո մոտ՝ ինչ-որ բան ստանալու համար, ոչ թե այնպիսիների, որոնք արձագանքում են Նրա Անձին: Նրա նմանը չկա, և ոչինչ չի կարող համեմատվել Նրա սքանչելիության հետ: Երբ տեղի է ունենում հանդիպում Նրա հետ՝ այնպիսին, ինչպիսին վերապրեց Մովսեսը, Նրա բոլոր խոստումները հայտնվում են իրենց պատշաճ տեղում: Նա ավելի հրաշալի է, քան ցանկացած բան, նույնիսկ Նրա օրհնությունները:

Իսրայելին փրկելու Աստծո գլխավոր նպատակն այն էր, որ նրանք կարողանային ճանաչել և սիրել Իրեն: Նա ցանկանում էր հայտնվել նրանց: Նա ասաց. «Ձեզ արծվի թևերի վրա տարա և Ինձ մոտ բերեցի» (Ելից 19.4): Այնուամենայնիվ, նրանք բաց թողեցին այն, ինչի համար կանչված էին:

Իր ժողովրդի հետ մտերիմ լինելու Աստծո փափագը երբեք չի պակասել և չի փոխվել: Այս ցանկությունը շարունակ հայտնվում է Իր Խոսքում և արտացոլվում է Պողոսի ջերմեռանդ աղոթքի մեջ.

> «[Որովհետև ես միշտ աղոթում եմ] մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստծուն՝ փառքի Հորը, որ Նա շնորհի ձեզ իմաստության և հայտնության [խորհուրդների և գաղտնիքների մեջ թափանցելու] հոգի՝ Նրա մասին *[խորը և մտերիմ]* գիտելիքով» (Եփես. 1.17, AMP, *շեղագիրը հեղինակինն է):*

Նա հայտնի է դարձրել Իր փափագը: Աստված ցանկանում է, որ յուրաքանչյուր վերստին ծնված զավակ խորապես և մտերմորեն ճանաչի Իրեն: Սա ոգևորո՞ւմ է ձեզ: Եթե ոչ, մի պահ մտորե՛ք սրա շուրջ և թո՛ւյլ տվեք, որ այս զարմանալի իրողությունը լիովին համակի ձեզ:

Մենք ծառայում ենք կենդանի Աստծո՝ այն Հորը, Ում սիրտը ցավում է Իր զավակների համար: Նա հաղորդակցվող Անձ է

և ցանկանում է շփվել մեզ հետ: Պողոսը շտապեց մատնանշել սա Կորնթոսի հավատացյալներին, որոնք դժվարություններին էին բախվել իրենց հավատքի մեջ. «Դուք կհիշեք, որ մինչև քրիստոնյաներ դառնալը գնում էիք մի կուռքից մյուսը, որոնցից ոչ մեկը *նույնիսկ մեկ բառ չէր կարողանում խոսել»* (Ա Կորնթ. 12.2,3, TLB): Պողոսի հորդորից տեսնում ենք այն գլխավոր հատկանիշներից մեկը, որը տարբերում է մեր Հայր Աստծուն բոլոր սուտ աստվածներից և կուռքերից. Նա խոսում է:

«ԿԱՆԳՆԵՑՐՈ՛Ւ ՄԵՔԵՆԱՆ ՃԱՄՓԵԶՐԻՆ»

Վերջերս, երբ մեքենա էի վարում, Սուրբ Հոգին խոսեց սրտիս. «Ես ինչ-որ բան եմ ուզում ասել քեզ: Կանգնեցրո՛ւ մեքենան ճամփեզրին»:

Ես սովորել եմ, որ երբ Աստված պատվիրում է ինձ ինչ-որ բան անել, պետք է անմիջապես հնազանդվեմ, անկախ այն բանից, թե որքան աննշան կամ անհարմարավետ է դա թվում այդ պահին: Չէ՞ որ Մովսեսն էլ էր արածեցնում իր անեղոջ հոտերը անապատի ետին մասում, երբ Տերը գրավեց նրա ուշադրությունը (Աստված տարբեր կերպերով է գրավում մեր ուշադրությունը): Աստված եկավ մի մորենու մոտ և այնպես արեց, որ այն վառվեր՝ առանց սպառվելու:

Մենք կարդում ենք, որ Մովսեսն ասաց ինքն իրեն. «Մեկ դառնամ ու տեսնեմ» (Ելից 3.3): *«Դառնալ»* բառը եբրայերեն *«կուվր»* բառն է: Ջեյմս Սթրոնգը, որն Աստվածաշնչի բնագիր լեզուների մասնագետ է, սահմանում է այս բառը որպես «դուրս գալ ճանապարհից»: Մովսեսը գիտակցաբար թողեց իր գործերի ծրագրված ընթացքը, որպեսզի արձագանքեր այն Սուրբին, Ով հրավեր ուղղեց իրեն:

Գրված է, որ հենց որ նա արձագանքեց, «Տերը տեսավ, որ նա դարձավ տեսնելու, և Աստված մորենու միջից կանչեց նրան և ասաց. «Մովսե՛ս, Մովսե՛ս»»:

Քանի դեռ Աստված չէր տեսել Մովսեսի ճանապարհից դուրս գալը, Նա չշարունակեց հետամուտ լինել նրան և անունով

չկանչեց: Ես հավատում եմ, որ Տերը ոչինչ չէր ձեռնարկի, եթե Մովսեսը չարձագանքեր: Աստված չկանչեց նրան այն ժամանակ, երբ հոտերն արդեն Հոթորի փարախներում էին. Մովսեսի համար դա ամենից հարմարավետ ժամանակը չէր: Ինչ կլիներ, եթե Մովսեսը մտածեր. *«Եթե դադարեմ հետևել այս հոտերին, նրանք կցրվեն, և կպահանջվեն ժամեր, գուցե ամբողջ օրը՝ նրանց հավաքելու համար: Ավելի ուշ ես կստուգեմ, թե ինչ է դա, երբ կարգավորեմ ամեն ինչ, և երբ դա չխանգարի իմ առօրյա գործերին»:* Միթե արդյունքը նույնը կլիներ:

Ոմանք կարող են մտածել, որ Աստված ավելի տպավորիչ բան կաներ, բայց մի՞թե նման գործելաոճը համապատասխանում է Նրա բնույթին: Հիշեք Սամուելի պատմությունը, երբ նա երիտասարդ տարիքում ծառայում էր Հեղի քահանայապետին և նրա որդիներին (տես Ա Թագ. 3-րդ գլուխ): Մի երեկո նա պառկեց քնելու և մի ձայն լսեց. «Սամուել, Սամուել»:

Սամուելը վազեց Հեղիի մոտ և ասաց. «Ահա՛ ես, որովհետև դու կանչել ես ինձ»:

Հեղին պատասխանեց. «Ես չեմ կանչել քեզ. գնա՛ քնելու»:

Սամուելը երկրորդ անգամ լսեց, որ ինչ-որ մեկը կանչում էր իր անունը: Նա կրկին վազեց քահանայի մոտ և ստացավ նույն պատասխանը: Սա տեղի ունեցավ երեք անգամ, և վերջապես քահանան, հասկանալով, թե ինչ էր տեղի ունենում, սովորեցրեց երիտասարդ Սամուելին, թե ինչպես պատասխանել: Չորրորդ անգամ, երբ նա լսեց «Սամուել, Սամուել», արդեն գիտեր, թե ինչպես պատասխաներ. «Խոսի՛ր, որովհետև Քո ծառան լսում է»: Այդ ժամանակ Տերը խոսեց՝ ցույց տալով նրան Իր կամքը և խորհուրդները, որոնք դեռ պետք է հայտնվեին:

Աստված կարող էր այլ կերպ վարվել: Երկրորդ անգամ, երբ Նա տեսավ, որ Սամուելը չէր հասկանում, Նա կարող էր ասել. «Սամուել, մի՛ վազիր Հեղիի մոտ. Ես եմ՝ քո Տեր Աստվածը, որ կանչում է քեզ, և Ես ուզում եմ խոսել քեզ հետ»: Բայց մի՞թե Նրա գործելաոճն այդպիսին է: Նա կամենում է ցանկալի և ճանաչելի լինել. Նա կամենում է, որ մենք ճանաչենք Իրեն:

Նա որոնում է այնպիսի մարդկանց, որոնք հոգով ջանասեր են, որոնք կձգտեն և հետամուտ կլինեն, նույնիսկ եթե դրա համար աննահանջ հաստատակամություն պահանջվի:

Նայելով Ավետարաններին՝ տեսնում ենք նույն գործելաոճը: Հիսուսն ավարտեց՝ հինգ հազարին հինգ հացով և երկու ձկով կերակրելը: Դրանից հետո Նա պատվիրեց Իր աշակերտներին նավակը նստել և Իրենից շուտ անցնել ծովի մյուս կողմը: Նա գնաց դեպի սարը, որպեսզի ժամանակ անցկացներ Իր Հոր հետ: Ավելի ուշ, այդ երեկո, երբ աշակերտները դեռ պայքարում էին քամու դեմ՝ ծովի մյուս կողմը անցնելու համար, տեղի ունեցավ հետևյալը.

> «Եվ գիշերվա չորրորդ պահին [Հիսուսը] ծովի վրայով գնալով՝ նրանց մոտ եկավ և *ուզում էր նրանցից անցնել»* (Մարկոս 6.48, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք *«ուզում էր նրանցից անցնել»* բառերին: «Նոր ամերիկյան ստանդարտ թարգմանության» մեջ գրված է. *«Եվ Նա մտադրված էր նրանց կողքով անցնել»:* Այնուամենայնիվ, երբ աշակերտները տեսան Նրան, աղաղակեցին, և Նա պատասխանեց. «Քաջ եղեք, Ես եմ, մի՛ վախեցեք»: Նա մտավ նավակը, և քամին դադարեց: Եթե աշակերտները չաղաղակեին, Նա կշարունակեր քայլել: Նա կանցներ նրանց կողքով, և եթե նրանք չաղաղակեին, Նա չէր հարկադրի նրանց ընդունել Իրեն:

Թվում է՝ Աստծո գործելաոճը հետևյալն է. Նա քայլ է անում դեպի մեզ, և եթե մենք արձագանքում ենք, Նա ևս մեկ քայլ է անում և ավելի է մոտենում: Եթե մենք չենք արձագանքում, Նա չի հարկադրում Իր կամքը և չի միջամտում մեր գործերին: Ով գիտի, եթե Մովսեսը չշրջվեր, Աստված պարզապես կսպասե՞ր, ինչպես որ վարվեց Սամուելի դեպքում, և ինչպես որ Հիսուսը վարվեց աշակերտների դեպքում: Հաճախ Նա սպասում է, մինչև որ մենք բավականաչափ քաղց ունենանք՝ արձագանքելու համար:

Վերադառնալով իմ պատմությանը՝ երբ մեքենայի ղեկին էի, ի՞նչ կլիներ, եթե չկանգնեցնեի մեքենան ճամփեզրին, երբ Նա խոսեց. ես բա՞ց կթողնեի այդ հանդիպումը Նրա հետ: Համոզված եմ, որ երբեմն այդպես էլ եղել է: Այնուամենայնիվ, այդ ժամանակ ես մայրուղով էի ընթանում, և կես մղոն անց հանգստի գոտի տեսա: Հենց որ կանգնեցրի մեքենան, Աստծո Հոգին շշնջաց իմ սրտում. «Մի՞թե Ես չեմ պատվիրել քեզ անդադար աղոթել» (Ա Թեսաղ. 5.17):

Ես պատասխանեցի. «Այո՛, Տեր»:

Նա շարունակեց. «Աղոթքը մենախոսությո՞ւն է, թե՞ երկխոսություն»:

Ես պատասխանեցի. «Այն երկխոսություն է, Տեր, այն երկկողմանի զրույց է»:

Նա անմիջապես ասաց. «Այդ դեպքում, եթե Ես պատվիրել եմ, որ անդադար աղոթես, նշանակում է՝ Ես կամենում եմ անդադար հաղորդակցվել քեզ հետ»:

Կարիք չկա ասել, որ ես ոգեշնչվեցի: Ես գիտակցեցի ինձ ընձեռնված հրաշալի հնարավորությունը, որը վերաբերում է ոչ միայն ինձ, այլև Նրա յուրաքանչյուր զավակին:

Այժմ կարող եք հարցնել. *«Դուք նկատի ունեք, որ Աստված անդադար խոսելո՞ւ է»:* Ո՛չ, Նա այլ բան նկատի ուներ, երբ խոսեց սրտիս: Նա ասաց, որ *կամենում է* անդադար հաղորդակցվել: Խոսքը հաղորդակցման տեսակներից ընդամենը մեկն է: Կինս կարող է մեկ հայացք ուղղել ինձ, և ես գիտեմ, թե ինչ է ասում, թեև ոչ մի բառ չի ասվել, և երբեմն ես կարող եմ մինչև երեք էջ գրել այն մասին, թե ինչ նա ասաց այդ մեկ հայացքով: Ինչո՞ւ: Ես ավելի քան քսան տարի է ապրում եմ նրա հետ և սովորել եմ նրա հաղորդակցման ձևերը: Դուք կարող եք նույն սենյակում լինել, երբ նա նման հայացք ուղղի ինձ, և դա ոչինչ չի նշանակի ձեզ համար: Ինչո՞ւ: Քանի որ դուք չեք ճանաչում նրան այնպես, ինչպես ես եմ ճանաչում: Իրականում, մեր ամուսնության առաջին մի քանի տարիներին գուցե ես էլ չհասկանայի նրա ասելիքը: Այժմ՝ նրա հետ քսան-

մեկ տարի ապրելուց հետո, ես մի փոքր ավելի եմ սովորել նրա հետ հաղորդակցվելու ձևերը:

ՄՈՏԵՆԱԼՈՒ ԿԱՆՉ

Կարևոր է իմանալ, որ այս գիրքը գործնական ձեռնարկ չէ. այն ավելի շուտ նման է ուղեցույցի կամ քարտեզի, որն ուղղորդում է դեպի մեր կարևորագույն նպատակակետը՝ Աստծո սիրտը: Եթե ես ունենայի գանձերի քարտեզ, որը ցույց է տալիս ճանապարհը դեպի թաքնված գանձը մի անմարդաբնակ կղզում, այն անօգուտ կլիներ ինձ համար, քանի դեռ չէի ուղևորվել այդ կղզի և չէի ծանոթացել տեղանքին՝ այդտեղ կողմնորոշվելու համար: Այնուհետև ես պետք է ջանք գործադրեի՝ քայլեի արահետներով, մագլցեի ժայռերը և իջնեի ձորերը՝ այդ թաքնված գանձին հասնելու համար: Ես պետք է գին վճարեի, ուժեր ծախսեի և ջանք գործադրեի: Այդ քարտեզը միայն ցույց էր տալու ինձ ճանապարհը և թույլ չէր տալու վատնել իմ ժամանակը զուր ջանքերի և որոնումների վրա, ինչպես նաև պաշտպանելու էր ինձ թաքնված ծուղակներից: Այս գիրքը նման է քարտեզի. այն հրավեր է՝ ինձ հետ միասին սկսելու զարմանալի և ոգեշնչող ճանապարհորդություն դեպի Աստծո սիրտը: Աստծո Խոսքը, որն այս էջերում է, կպահպանի ձեզ փոսերից, ծուղակներից և վտանգներից, որոնք կփորձեն ճանապարհից շեղել ձեզ: Այն թույլ չի տա, որ հայտնվեք ոչ անհրաժեշտ խնդիրների մեջ և զուր տեղը վատնեք ձեր ուժերը:

Ուրեմն, եթե պատրաստ եք, սկսե՛նք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ձեր կյանքի ո՞ր իրադարձությունը կամ փորձառությունն է դրդել ձեզ ընթերցել այս գիրքը:
2. Դիտարկե՛ք Աստծո կողմից Իրեն մոտենալու հրավերի հետևյալ օրինակները.

- Մովսեսը տեսավ վառվող մորենին և դարձավ՝ պարզելու համար, թե ինչ էր դա: Երբ նա այդպես վարվեց, Աստված կանչեց նրան:
- Երիտասարդ Սամուելը չորս անգամ ձայն լսեց, մինչև որ պատասխանեց. «Խոսի՛ր, որովհետև Քո ծառան լսում է»:
- Երբ աշակերտները տեսան Հիսուսին ջրի վրայով քայլելիս՝ այնպես, ասես Նա նրանց կողքով էր անցնելու, նրանք աղաղակեցին:

Այս օրինակներից որո՞նք են լավագույնս նկարագրում Աստծո հրավերը, որն ուղղված է ձեզ: Դուք արձագանքե՞լ եք դրան: Եթե այո, ինչպիսի՞ բնույթի էր ձեր արձագանքը:

3. Հաշվի առնելով, որ աղոթքը երկխոսություն է՝ երկկողմանի զրույց, մտածե՛ք այն մասին, թե ինչպես է Աստված հաղորդակցվել ձեզ հետ՝ թե՛ խոսքային, թե՛ ոչ խոսքային ձևով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՍՏԾՈ ՓԱՓԱԳԸ

Տերն ասաց. «Ես արժևորեցի քեզ ավելի,
քան Ինքս Ինձ»:

Աստվածաշունչը ներկայացնում է մեզ հիմքային թեմաներ՝ այնպիսի ճշմարտություններ, որոնք կարելի է տեսնել Սուրբ Գրքում՝ Ծննդոցից մինչև Հայտնություն: Այս թեմաներից մեկն Աստծո փափագն է մարդու հանդեպ և մարդուն հետամուտ լինելը: Փաստ է, որ Աստված ցանկանում է մոտենալ մեզ նույնիսկ ավելի, քան մենք ենք ցանկանում մոտենալ Նրան:

Իրականում, Նա փափագում է մեզ (տե՛ս Հակոբ. 4.5): «Փափագել» բառը նշանակում է «բուռն կերպով ձգտել»: Սա Նրա սրտի խորը աղաղակն է՝ սկսած ժամանակների սկզբից: Այն բանից հետո, երբ Ադամը մեղանչեց, Աստծո առաջին խոսքերը դատաստանի ազդարարումը չէր, այլ՝ «Ադա՛մ, որտե՞ղ ես»: Դուք լսո՞ւմ եք Նրա սրտի անկեղծ աղաղակը. «Ինչո՞ւ ես թաքնվում Ինձնից»: Դիտարկենք Նրա փափագը մեր հանդեպ պատմության ամբողջ ընթացքում:

ԱԴԱՄԻ ԹՈՌՆՈՐԴՈՒ ԹՈՌՆՈՐԴԻՆ

Ենովքն Ադամի թոռնորդու թոռնորդին էր: Ես հավատում եմ, որ եկավ մի օր, երբ Ենովքն Ադամի մոտ գնաց և խնդրեց պատմել պարտեզում ապրելու ժամանակվա մասին: Նա ուզում էր իմանալ, թե իրականում ինչի էր նման կենդանի Աստծո հետ վարվելը: Գուցե մտածեք, թե ինչպես Ենովքը կարող էր խոսել իր մեծ պապի մեծ պապի հետ: Պատասխանը հետևյալն է. երբ 930 տարի եք ապրում, դուք տեսնում եք ձեր թոռնորդիների թոռնորդիներին, և ոչ միայն: Ադամը դեռ 622 տարեկան էր, երբ ծնվեց Ենովքը:

Ըստ հաշվարկների, Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Ադամը 687 տարեկան էր, երբ Ենովքն այցելեց նրան 65 տարեկան հասակում: Այս թիվը ստացվել է Ծննդոց գրքի պատումից այն մասին, որ Ենովքը երեք հարյուր տարի վարվեց Աստծո հետ՝ մինչև 365 տարեկանը:

> «Ենովքն Աստծո հետ վարվեց... երեք հարյուր տարի, և տղաներ և աղջիկներ ծնեց: Եվ Ենովքի բոլոր օրերը երեք հարյուր վաթսունհինգ տարի եղան» (Ծնն. 5.22,23):

Այսպիսով, հնարավոր է, որ Ենովքի համար ամեն ինչ փոխվեց 65 տարեկանում, երբ նա օրհնություն ստացավ հայրապետ Ադամի շուրթերից և լսեց նրա սրտի ցավը:

Ես կարող եմ միայն ենթադրել, և չկա ոչ մի գրվածք՝ իմ խոսքերը հիմնավորելու համար, որ Ենովքից տարիներ պահանջվեցին, մինչև որ նա համարձակվեց այցելել իր հռչակավոր նախապապին, որպեսզի հարցներ պարտեզի մասին, քանի որ Ադամը հեշտորեն չէր խոսում այդ մասին: Ադամի բոլոր ժառանգները գիտեին դա, և ավելի քան հավանական է, որ Ենովքին երիտասարդ տարիքից զգուշացրել էին, որ չխոսեր այդ մասին Ադամի հետ:

Պատմական հրեական գրվածքները նկարագրում են

այն ընկճվածությունը, որը վերապրում էր Ադամը՝ պարտեզից վտարվելուց հետո: Դրա ծանրությունը գրեթե անտանելի էր: Որոշ գրվածքներ պատմում են այն մասին, որ Ադամն ու Եվան նստում էին խավար քարանձավներում և չէին կարողանում նայել միմյանց՝ այն ամոթից, որը զգում էին կատարվածի պատճառով:

Ադամը կորցրել էր իր փառքը: Այլ բան է Աստծո հետ վարվելու խոստման մասին լսելը, և լիովին այլ բան է Նրա փառքի մեջ բնակվելու շոշափելի իրականությունը կորցնելը: Ադամն անասելի կորուստ էր կրել, սակայն Ենովքը հաստատակամորեն դիմեց Ադամին, լսեց նրա պատմությունը նրա վաղեմի վշտի մասին և խառնեց այն հավատքի և սպասման հետ: Թեև սերունդները տրտնջում էին՝ արտահայտելով իրենց հիասթափությունը Ադամի կորստի պատճառով, Ենովքը խոստում տեսավ դրանում. «Ես կվարվեմ Աստծո հետ»:

Ես միայն կարող եմ պատկերացնել այդ երկուսի հանդիպումը: Ենովքը դողում էր, բայց նրա ձգտումն ի վերջո գերազանցեց վախը: Հաղթահարելով պարտության դողդոջուն ստվերները՝ նա հավատաց լույսին, հավատաց, որ կարող է լինել ավելին: Նրա համար Ադամի պատմությունն ավելին էր, քան ձախողման նկարագրություն. այն հայտնություն էր Աստծո մեծագույն ցանկության մասին, որը մարդու հետ վարվելն է: Հետաքրքիր է՝ Ադամը զգա՞ց Ենովքի ներսում բորբոքվող կրակը, երբ փոխանցեց նրան հուշերում բնակվող դրախտային պարտեզում իր կյանքի վաղեմի օրհնությունը:

Ադամը լաց էր լինում՝ ներկայացնելով իր սրտահույզ պատմությունը.

- Ենո՛վք, ես զբոսնում էի Նրա հետ... Նրա փառքի մեջ: Տիեզերքի Արարիչը, այն ամենի Ստեղծողը, ինչ տեսնում ես, քայլում էր իմ կողքով: Նա պատմում էր Իր մեծ ծրագրի ծածուկ իմաստությունը՝ այն, թե ինչպես էր Իր մատներով տեղադրել տիեզերքի աստղերը: Նույն այդ մատները ստեղծել էին ինձ, ինչպես նաև բռնում էին իմ ձեռքը: Նա անվանել էր յուրաքանչ-

յուր աստղը և հաստատել դրանք որպես նշաններ՝ կողմնորոշվելու և տարվա եղանակների համար: Նա ցույց տվեց ինձ, թե ինչպես էր հավասարակշռություն հաստատել երկրի վրա՝ գրավիտացիոն և էլեկտրամագնիսական դաշտերով, և ինչպես էր կատարյալ կլիմա ստեղծել: Նա պատմեց ինձ սերմի գաղտնիքը, թե ինչպես է այն պտուղ տալիս՝ իր տեսակի պես, ինչպես է այն ոռոգվում ստորջրյա աղբյուրներով, որոնք հատուկ կերպով անցկացված են երկրով մեկ: Նա վստահեց ինձ բոլոր կենդանի արարածներին անվանելու արտոնությունը՝ ավելի քան հինգ միլիարդ տեսակների: Մենք միասին էինք քննարկում դա, բայց Նա ինձ էր վստահում վերջնական որոշումը:

Որքան ավելի էր Ադամը խոսում, այնքան ավելի էր Ենովքի մոտ քաղց առաջանում, մինչև որ ավյունը համակեց նրան. նա պետք է վարվեր Աստծո հետ, ինչպես Ադամը. նա մերժում չէր ստանա:

Ենովքը նույնիսկ ժառանգեց այնպիսի բան, ինչ Ադամը չուներ: Ադամի մարմինը վերադարձավ հողին, բայց Ծննդոց գրքում գրված է. «Եվ Ենովքն Աստծո հետ վարվեց և չէր գտնվում, որովհետև Աստված առավ նրան» (Ծննդ. 5.24): Նա հեռացավ այս երկրից՝ մահ չտեսնելով:

Իր կյանքի ընթացքում Ենովքը մեծ մարգարե էր: Նա խոսեց իր ժամանակակիցներին, ինչպես նաև մարգարեացավ մեր օրերի մասին: Նա մարգարեացավ այն ինքնակոչ մարդկանց մասին, որոնք վերջին օրերում ի հայտ էին գալու եկեղեցում և այնպես էին վարվելու, ասես շնորհքով փրկված էին, և նույնիսկ հավատալու էին դրան: Նա նույնպես մարգարեացավ այն դատաստանի մասին, որը գալու էր դրանից հետո (տես Հուդա 1-15 խոսքերը): Նա տեսավ տեսիլքներ Աստծո դատաստանի մասին և ազդարարեց Տիրոջ Երկրորդ գալուստը՝ Նրա՝ կույսից ծնվելուց հազարավոր տարիներ առաջ:

Ինչո՞ւ Աստված վերցրեց նրան, երբ նա 365 տարեկան էր: Մի՞թե պատճառը նրա մեծ մարգարեական ծառայությունն էր: Ո՛չ. պատճառն այն էր, որ նա «Աստծո հետ վարվեց», և Եբ-

բայեցիների գիրքը հայտնում է, որ դա «հաճելի էր Աստծուն» (Եբր. 11.5):

Սխալ մի՛ հասկացեք ինձ. նրա ընթացքն Աստծո հետ ծնունդ տվեց ազդեցիկ և արդյունավետ ծառայության, բայց Աստծուն մտերմորեն ճանաչելու նրա կրակոտ ցանկությունն էր, որ հաճեցրեց Տիրոջը: Նա հպվեց Աստծո սրտի փափագին՝ ձգտելով մտերմորեն հաղորդակցվել Նրա հետ, ինչպես որ Նա է ձգտում հաղորդակցվել մեզ հետ:

ԱՍՏԾՈ ՍՐՏԻ ԱՂԱՂԱԿԸ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Սա եղել է Աստծո սրտի աղաղակը բոլոր ժամանակներում: Այնպիսի ժողովուրդ, որը ցանկանում է ճանաչել Նրան՝ ի պատասխան մեզ ուղղված Նրա ցանկությանը: Ենովքից հետո Նոյն էր՝ ևս մեկ ծոռնորդի, որը հպվեց Աստծո սրտին: Ծննդոց գրքում գրված է. «Նոյը Աստծո հետ վարվեց» (Ծննդ. 6.9): Նոյն արձագանքեց հաղորդակցվելու Աստծո ցանկությանը և մոտեցավ Նրան: Երբ նա մոտեցավ Աստծուն, Աստված նույնպես մոտեցավ նրան և զգուշացրեց գալիք իրադարձությունների մասին: Այն դատաստանը, որը հանկարծակի վրա հասավ ամբողջ աշխարհին, սկզբում գաղտնիք էր Նոյի և Աստծո միջև: Նոյի մտերիմ հարաբերությունը Աստծո հետ ծնունդ առավ այն վստահությունից, որ Աստված կարձագանքի Իրեն հետամուտ լինողներին՝ ովքեր համարձակվում են հավատալ և մոտենալ, որպեսզի վերապրեն Իր մտերմությունը:

Մենք կրկին ականատես ենք լինում սրան Աբրահամի կյանքում, երբ Աստված հրավեր ուղղեց նրան. «Իմ առջև՛ վարվիր» (Ծննդ. 17.1): Այս հրավերը կրկին ու կրկին ուղղվեց Իսահակին և Հակոբին, և նույնիսկ մինչև Հակոբի ծնվելը Աստված ասաց. «Հակոբին սիրեցի» (Հռոմ. 9.13): Տերը հետամուտ էր լինում նրան, ինչպես որ Նա վարվում է բոլորիս հետ, նույնիսկ երբ Հակոբը հետամուտ չէր լինում Աստծուն: Իր եղբորից փախչելիս Հակոբը գտավ Աստծուն, որը սպասում էր՝ նրան

գրավելու համար: Երբ Հակոբը քնած էր քարե բարձի վրա, Աստված զարթնեցրեց՝ մի երազ տալով, որտեղ աստիճան էր, և հրեշտակները բարձրանում ու իջնում էին: Աստծո և մարդու միջև գերբնական կապ հայտնվեց:

Չորս հարյուր տարի տևող գերությունից հետո Իսրայելի զավակները՝ Հակոբի սերունդը, չէին հասկանում, թե որն էր իրենց գերությունից ազատելու Աստծո գլխավոր նպատակը: Նրանք կարծում էին, թե այդ ամենը նախատեսված էր ինչ-որ խոստացված երկիր ժառանգելու համար, սակայն նպատակը ավելին էր: Աստծո մեծագույն ցանկությունը մտերիմ շփումն էր, և Նա պարզորեն հայտնեց Իր դիտավորությունները, երբ դիմեց ամբողջ ազգին՝ ավյունով համակված բանաստեղծական խոսքերով.

> «Դուք տեսաք՝ ինչ որ արի եգիպտացիներին, և ձեզ արծվի թևերի վրա տարա և *Ինձ մոտ բերեցի*» (Ելից 19.4, *շեղագիրը հեղինակինն է):*

Այնուամենայնիվ, Նրա ցանկությունները չարտացոլվեցին Իսրայելի զավակների խոսքերում. նրանց ասելիքը լիովին այլ շարժառիթ էր մատնում. «Եվ ապաքեն մեզ կաթ ու մեղր բխող երկիր էլ չտարար, և ո՛չ էլ մեզ արտի և այգու ժառանգություն տվեցիր» (Թվոց 16.14): Նրանց սրտերն ուղղված էին այն բաներին, *ինչ* իրենք պետք է ժառանգեին, ոչ թե Նրան, *Ում* պետք է ժառանգեին:

Մովսեսը շարունակ պարզաբանում էր Աստծո ցանկությունը Աբրահամի ժառանգներին: Ահա նրա պնդումներից մեկը.

> «Նա Աստված է, Ով նախանձավորությամբ է վերաբերվում Իր հարաբերությանը ձեզ հետ» (Ելից 34.14, NLT):

Աստված ազդարարեց ամբողջ Իսրայելին. «Ես ձեզ սիրել եմ»: Այնուամենայնիվ, նրանք պատասխանեցին տգիտությամբ և խստասրտությամբ. «Ինչո՞վ ես սիրել մեզ» (Մաղաքիա 1.2):

Կույր լինելով այն փաստի հանդեպ, որ Աստծո սիրտը փափագում էր իրենց, նրանք շփոթեցին իրենց ձեռք մեկնելու Նրա փորձերը իրենց դատելու հետ:

Թեև նրանք շարունակ անհնազանդ էին, Նրա ցանկությունն անփոփոխ էր մնում: Երեմիայի օրերում Նա աղաղակեց. «[Ես] խոսեցի ձեզ հետ՝ կանուխ վեր կենալով ու խոսելով, բայց դուք չլսեցիք, և կանչեցի ձեզ, բայց դուք չպատասխանեցիք» (Երեմիա 7.13): Նա հայտնեց, որ հետամուտ էր եղել նրանց այս կերպով այն օրվանից, երբ դուրս էր բերել Եգիպտոսից, մինչև այդ պահը (տես Երեմիա 7.25):

Այս ամենից Նրա սերը երբեք չսասանվեց: Մեր հանդեպ ունեցած Նրա վեհ ձգտման մեծագույն ապացույցը հայտնվում է Հիսուսի մեջ: Հիսուսն այսպես է բացատրում սա. «Ես՝ Մարդու Որդին, եկա, որ *հետամուտ լինեմ* և փրկեմ նրանց... ովքեր կորսված են» (Ղուկ. 19.10, NLT, *շեղագիրը հեղինակինն է):* Նա չեկավ միայն փրկելու համար. Նա եկավ նաև *հետամուտ լինելու* համար, թեև մենք Նրա թշնամիներն էինք:

ՆՐԱ ՄՏՔԵՐԸ ՄԵՐ ՄԱՍԻՆ՝ ԱՆՀԱՏԱՊԵՍ

Երբ ձգտում ենք ինչ-որ մեկին, մենք հաճախ ենք մտածում նրա մասին: Մեր մտքերը վերադառնում են նրան օրվա ընթացքում, և հաճախ՝ նույնիսկ գիշերը, երբ քնած ենք: Մենք նույնիսկ կարող ենք խոցելի դարձնել մեզ՝ պատմելով մարդկանց, թե որքան հաճախ ենք ցանկանում հաղորդակցվել այդ անձնավորության հետ, և որքան հաճախ ենք այցելում նրան մեր մտքերում: Նույնը վերաբերում է Աստծուն: Նա պատմեց Դավթին մեզ ուղղված Իր մտքերի մասին: Դավիթը ներկայացնում է՝ թե որքան զարմանալի են Աստծո մտորումները յուրաքանչյուրիս մասին.

> «Որքա՜ն թանկ են Քո մտքերն իմ մասին, ո՜վ Աստված: Դրանք անհամա՜ր են: Ես չեմ էլ կարող հաշվել դրանք. դրանց թիվը գերազանցում է ավազահատիկները» (Սաղմ. 139.17,18, NLT):

Այս փաստը գրեթե անհնար է ըմբռնել, բայց Նրա մտքերը յուրաքանչյուրիս մասին ավելի շատ են, քան այս աշխարհի ավազահատիկները: Մի պահ մտածեք այս մասին. պատկերացրեք յուրաքանչյուր ավազահատիկը՝ հավաքված մեր ամբողջ մոլորակի յուրաքանչյուր լողափից, անապատից, լճի, ծովի և օվկիանոսի հատակից և, իհարկե, յուրաքանչյուր գոլֆի դաշտից: Երբ նայում եմ գոլֆի դաշտի միայն մի փոքր ավազե փոսիկին, ես չեմ կարողանում պատկերացնել, թե որքան ավազահատիկ կա այդտեղ: Այնուամենայնիվ, Աստված նկատի ունի այս մոլորակի յուրաքանչյուր ավազահատիկը: Այդ թիվն անըմբռնելի՜ է: Վերջին քսանմեկ տարում ես շատ հաճելի մտքեր եմ ունեցել իմ կնոջ մասին, բայց բոլոր մտորումներով հանդերձ, կասկածում եմ, որ դրանցով ամենահագեցած օրը իմ մտքերը նրա մասին նույնիսկ մի փոքր անոթ կլցնեին, էլ ի՞նչ խոսք ամբողջ Երկիր մոլորակի մասին:

ԴՈՒՔ ՀԵՏԱՄՈՒՏ ԵՔ ԼԻՆՈՒՄ ԱՅՆ ԲԱՆԻՆ, ԻՆՉՆ ԱՐԺԵՎՈՐՈՒՄ ԵՔ

Այս տեսակի մտքերը պահված են նրանց համար, որոնց դուք սիրում եք, ձգտում եք և որոնց հետ ցանկանում եք մտերիմ լինել: Դուք հասկանո՞ւմ եք, թե որքան է Նա սիրում ձեզ: Երբևէ ժամանակ տրամադրե՞լ եք, որ մտորեք, թե որքան կարևոր եք Նրա համար: Երբ գնումներ ենք կատարում, մենք շրջում ենք խանութներով, որոնք լի են գնապիտակներ ունեցող ապրանքներով: Որոշ ապրանքներ զեղչված են, մյուսները թանկ են. յուրաքանչյուրը գին ունի՝ ըստ արժեքի: Բայց եթե մենք իմաստուն գնորդներ ենք, մշտապես կգնենք այնպիսի ապրանքներ, որոնց արժեքը մեզ համար համապատասխանում է դրանց գնին կամ ավելին է:

Այս կյանքում ամեն ինչին արժեք է վերագրվում: Այդ արժեքը որոշվում է գնորդի ընկալմամբ: Մի քանի տարի առաջ վաճառքի հանվեց բեյսբոլի մի գնդակ: Բայց դա սովորական հին գնդակ չէր, այլ այն գնդակը, որն ընդունել էր Մարկ Մակգվայրի

յոթանասուներորդ արդյունավետ հարվածը: Այդ ժամանակ նա նոր խոշոր ռեկորդ սահմանեց իր լիգայում՝ կատարելով առավելագույն արդյունավետ հարվածներ մեկ խաղաշրջանում: Այդ գնդակը վաճառվեց 2.7 միլիոն դոլարով: Նույնիսկ եթե ես ունենայի այդ գումարը, ոչ մի դեպքում այդքան չէի վճարի այդ գնդակի համար: Ինչո՞ւ: Քանի որ այդ գնդակն այդքան արժեքավոր չի ինձ համար: Այնուամենայնիվ, հիշում եմ, որ կարդում էի, որ ոմանք պատրաստ էին վճարել նույնիսկ ավելին, եթե հնարավորություն ունենային: Բայց այժմ, երբ այդ ռեկորդը գերազանցված է, ես կասկածում եմ, որ ինչ-որ մեկը կվճարեր այդ գնի նույնիսկ աննշան մասը՝ այդ երբեմնի անչափ բաղձալի գնդակի համար: Դրա արժեքը նվազել է:

Այսպիսով, հարցն այն չէ, թե որքան է մեր արժեքը հասարակության համար: Այն տատանվելու է: Նույնիսկ մարդկային կյանքի արժեքն է փոփոխական մարդկանց համար, քանի որ կան միլիոնավոր ծնողներ, որոնք սպանում են իրենց չծնված երեխաներին: Նրանց համար իրենց մանկան կյանքը չարժե իրենց պատճառած անհարմարավետությանը: Կան ամուսիններ, որոնք լքում են իրենց կանանց և երեխաներին, քանի որ չեն համարում, որ արժե ժամանակ և ուժեր ծախսել այդ հարաբերության վրա: Նրանց համար իրենց հարմարավետությունը և հաճույքներն արժեն ավելին, քան իրենց կողակցի և երեխաների կյանքերը: Կան մարդիկ, որոնք վաճառում են սեփական մարմինը՝ մարմնավաճառությամբ զբաղվելով: Այս ցուցակն անվերջ է, և դրա արդյունքը միլիոնավոր խոցված մարդիկ են մեր հասարակության մեջ: Որոշ մարդիկ չսիրված և անցանկալի են զգում իրենց, քանի որ դիտարկել են իրենց արժեքն այլ մարդկանց աչքերով:

ՄԵՐ ԱՐԺԵՔԸ ՀԱՅՐ ԱՍՏԾՈ ՀԱՄԱՐ

Ո՞րն է մեր արժեքն Աստծո համար: Ահա թե ինչպես մենք կբացահայտենք մեր ճշմարիտ արժեքը: Աստված է, որ որոշում է ամեն ինչի արժեքը տիեզերքում, ոչ թե մարդը, որով-

հետև «այն, ինչը մեծապես արժևորվում է մարդկանց միջև, գարշելի է Աստծո առջև» (Ղուկ. 16.15, NIV):

Հիսուսն ասաց. «Որովհետև ի՞նչ օգուտ ունի մարդը, որ ամբողջ աշխարհն ստանա և իր անձը կորցնի, կամ՝ ի՞նչ գին կտա մարդը՝ իր անձը փրկելու համար» (Մատթ. 16.26): Մի պահ մտածե՛ք այս աշխարհի ամբողջ հարստության մասին: Մտածե՛ք այն միլիոնավոր դոլարների արժեք ունեցող առանձնատների, բոլոր թանկարժեք քարերի և մետաղների, բոլոր գեղեցիկ ավտոմեքենաների, զբոսանավերի և ինքնաթիռների, վերջին սերնդի էլեկտրական սարքավորումների մասին, և այս ամենը այս աշխարհի «բարիքների» ընդամենը մի փոքր մասն է: Այս աշխարհում դեռ այնքա՜ն շատ գանձեր կան, որ գրեթե աներևակայելի է: Ըստ վերջին ուսումնասիրությունների, ամբողջ աշխարհի համախառն արտադրանքը գնահատվում է 35.8 տրիլիոն ԱՄՆ դոլարով: Դա 35.800.000.000.000.00 ԱՄՆ դոլար է: Դա ահռելի հարստություն է, և այս գնահատումը նույնիսկ չի ընդգրկում անշարժ գույքը: Այնուամենայնիվ, Հիսուսն ասում է մեզ, որ այն մարդը, ով փոխանակում է իր կյանքը ամբողջ այս հարստության հետ, անշահավետ գործարք է կատարում:

Եթե մեր ճշմարիտ արժանիքը՝ այն արժեքը, որն Աստված վերագրում է մեզ, ավելին է, քան ամբողջ հարստությունը, որն այս աշխարհում է և պատկանում է այս աշխարհին, ապա ո՞րն է մեր արժեքը Նրա համար: Գրված է. «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3.16): Մենք չար իշխանի՝ Լյուցիֆերի իշխանության ներքո էինք այն բանից հետո, երբ Ադամը մատնեց մեզ դրան (տե՛ս Ղուկ. 4.6): Ադամի անհնազանդությունը տարածվեց բոլորի վրա, և մենք մեղքի ստրուկներ էինք մի տիրույթում, որի տիրակալը Լյուցիֆերն է: Նա հավակնում էր մեզ և հրաժարվում էր ազատ արձակել: Մենք գնում էինք դեպի հավիտենական խավարը, որտեղ չկա փրկության հույս: Մենք կարող էինք

ազատություն ստանալ, միայն եթե ինչ-որ մեկը փրկագին տար մեզ համար, սակայն մեր փրկագինն այնքան բարձր էր, որ ոչ մի մարդ չէր կարող վճարել:

Աստված տվեց Հիսուսին՝ որպես փրկագին մեզ համար: Այլևս ոչ ոք և ոչինչ չէր կարող գնել մեզ, քանի որ Աստված ասում է. «Կյանքի փրկագինը թանկ արժե, ոչ մի վճար երբևէ բավական չէ» (Սաղմ. 49.8, NIV): Աստված այնքան բարձր է արժևորում մեզ, որ գնեց մեզ անձամբ Հիսուսով: Պողոսը գրում է. «Աստված գնեց ձեզ բարձր գնով» (Ա Կորնթ. 6.20, NLT): Կրկին, նա ասում է, որ Հայրը «այնքան հարուստ է բարությամբ, որ գնեց մեր ազատությունը՝ Իր Որդու արյամբ» (Եփես. 1.7, NLT):

Ամբողջ տիեզերքում չկա ոչ ոք և ոչինչ ավելի արժեքավոր Հայր Աստծո համար, քան Նրա Որդի Հիսուսը: Այնուամենայնիվ, այս գնումով Աստված ազդարարեց մեր արժեքը՝ Իր մեծագույն Գանձի համեմատ: Ահա մի զարմանալի միտք. եթե մենք թեկուզ մեկ լումա պակաս արժենայինք Աստծո համար, քան Հիսուսը, Հայրը ոչ մի դեպքում չէր տա Նրան, քանի որ Աստված երբեք անշահավետ գործարքներ չի կնքում: Անշահավետ գնումը կամ փոխանակումն այն է, երբ դուք տալիս եք ավելի արժեքավոր բան՝ պակաս արժեքավոր բանի փոխարեն: Սա զարմանալի՞ է: Դուք հասկանո՞ւմ եք, թե որքան կարևոր եք Հոր համար: Հիսուսը հաստատում է սա՝ ասելով. «Ես տվել եմ նրանց այն փառքը, որը Դու տվեցիր Ինձ, որպեսզի նրանք մեկ լինեն, ինչպես որ Մենք ենք մեկ. Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում, բոլորը՝ կատարելապես մեկացած: Այդ ժամանակ այս աշխարհը կիմանա, որ Դու ուղարկեցիր Ինձ, և կհասկանա, որ Դու սիրեցիր նրանց *նույնքան*, *որքան* սիրեցիր Ինձ» (Հովհ. 17.22-24, NLT, *շեղագիրը հեղինակինն է):* Հիսուսը հստակ հայտնում է, որ Հայրը սիրում է մեզ նույնքան, որքան սիրում է Իրեն: Դուք լսեցի՞ք սա: Դուք գիտակցո՞ւմ եք ձեր ճշմարիտ արժեքը: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու է Նա հետամուտ լինում ձեզ:

«ԱՅՈ՛, ԲԱՅՑ ԵՍ ԸՆԴԱՄԵՆԸ ՇԱՏԵՐԻՑ ՄԵԿՆ ԵՄ»

Ոմանք կարող են առարկել. «Այո՛, Աստված արեց դա ամբողջ մարդկության համար՝ հավաքականորեն, բայց ո՞վ եմ ես այդ մեծ բազմության մեջ»: Պատասխանը այս առարկությանը այն է, որ եթե դուք միակը լինեիք, Նա, միևնույն է, հետամուտ կլիներ և կփրկագներ ձեզ՝ վճարելով այս մեծ գինը: Մենք հստակ տեսնում ենք սա Հիսուսի ծառայության մեջ: Նա մի ամբողջ օր անցկացրեց՝ սովորեցնելով բազմություններին Աստծո թագավորության մասին: Նա հոգնած էր, սակայն կար այնպիսի բան, ինչը չէր կարող սպասել: Սուրբ Հոգու առաջնորդությամբ Հիսուսը հանձնարարեց Իր աշակերտներին մի նավ նստել և անցնել Գալիլեայի ծովը: Երբ նրանք ծովի մեջտեղում էին, բարձրացավ այնպիսի փոթորիկ, որը սպառնում էր նրանց կյանքին, բայց Հիսուսն այնքա՜ն էր հոգնել, որ քնել էր: Աշակերտները վախեցած արթնացրին Նրան՝ տեղեկացնելով սպառնացող վտանգի մասին: Հիսուսն արձագանքեց՝ հրամայելով ալիքներին և քամուն հանդարտվել:

Նրանք անցկացրին գիշերվա զգալի մասը՝ այդ փոթորկված ծովն անցնելով: Հասնելով մյուս ափին, նրանք կարծեցին, թե վերջապես կկարողանային հանգստանալ: Բայց նավից իջնելուն պես հանդիպեցին մի դիվահար խելագարված մարդու: Նա ապրում էր գերեզմանոցում, և նրան չէին կարողանում զսպել նույնիսկ շղթաներով: Ամբողջ օրը և գիշերվա ընթացքում նա թափառում էր գերեզմաններում՝ ճիչեր արձակելով և քարերով իրեն կտրատելով (տե՛ս Մարկ. 5.3-5, NLT):

Եթե այդ մարդն ապրեր այսօր, նրան կտանեին հոգեբուժարան և, ամենայն հավանականությամբ, կմեկուսացնեին: Նրան դեղամիջոցներ կտային և այդպես էլ կթողնեին: Շատերը կվերաբերվեին նրան որպես մի վտարանդիի, որին ողջ են պահում, միայն որովհետև օրենքն արգելում է սպանել: Նրան կդիտարկեին որպես հասարակության անպետք մասնիկի: Նրա արժեքը գրեթե ոչինչ կլիներ: Քչերը կձգտեին շփվել նրա հետ:

Այնուամենայնիվ, այդ խելագարը մեծ արժեք ուներ Հոր, Հիսուսի և Աստծո Հոգու համար: Հիսուսն ազդեցիկ կերպով ծառայեց նրան: Նրա ազատագրումն այնքան զորավոր էր, որ մինչև այդ օրվա ավարտը նա նստած էր Հիսուսի կողքին՝ հագնված և սթափ վիճակում: Զարմանալին այն է, որ այդ մարդուն ծառայելուց հետո Հիսուսը կրկին նավակը նստեց և «դարձյալ այն կողմն անցավ» (Մարկ. 5.21): Ես երբեք չեմ մոռանա այն օրը, երբ Աստված ցույց տվեց սա ինձ: Ես անչափ տպավորված էի: Ես մեծ ակնածանքով վերաբերվեցի այն փաստին, որ Հիսուսը, ծանր օրվանից հետո սաստիկ հոգնած, անցավ ծովի մյուս ափը՝ պայքարելով փոթորկի դեմ, միայն որպեսզի ծառայեր մի դիվահար վտարանդիի, որին հասարակությունն անարժեք էր համարում, իսկ հետո կրկին նավը նստեց և վերադարձավ՝ անցնելով նույն ճանապարհը: Նա արեց այդ ամենը միայն մեկ մարդու համա՛ր:

Երբ հասկացա այս պատմությունը, լիարժեք կերպով գիտակցեցի, որ եթե ես միակը լինեի, Նա, միևնույն է, կորոներ ինձ և կվճարեր իմ փրկագինը, որպեսզի կարողանայի հաղորդակցվել Իր հետ: Զարմանալի չէ, որ երկնային հրեշտակները երգում էին այդ երեկո, երբ Նա ծնվեց՝ տոնելով խաղաղություն երկրի վրա և բարեհաճություն մարդկանց հանդեպ: Այն, որ Աստված հետամուտ է լինում մեզ, բացահայտվում էր ամբողջ աշխարհի համար:

ԻՆՉՊԵՍ Է ՀԻՍՈՒՍԸ ԴԻՏԱՐԿՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՍ

Ես ստացա մեծագույն հայտնությունը, որ Տերը երբևէ տվել է ինձ փրկվելուց կարճ ժամանակ անց: Ես շփվում էի Նրա հետ մեքենա վարելիս, և հանկարծ Նա խոսեց այնպիսի բան, ինչը փոխեց իմ մտածելակերպը: Նա շշնջաց իմ սրտում. «Ջո՛ն, դու գիտե՞ս, որ Ես համարում եմ քեզ ավելի կարևոր, քան Ինքս Ինձ»:

Հիշում եմ՝ երբ լսեցի դա, համոզված էի, որ դա հայհոյություն էր և ոգեշնչված էր դժոխքից: Ես վճռեցի, որ դա բացար-

ձակապես հանդուգն և աներկյուղ պնդում էր: Իմ շուրթերից գրեթե դուրս եկավ. «Ետի՛ս գնա, սատանա՛»: Այնուամենայնիվ, խորը իմ սրտում ես զգում էի, որ դա Տիրոջ ձայնն էր: Այնպես որ, ես ընտրեցի ամենից ապահով արձագանքը, որի մասին գիտեի: Ես պատասխանեցի. «Տե՛ր, այս պնդումը չափազանց արմատական է թվում ինձ՝ հավատալու համար: Ինձ հայ-հոյություն է թվում այն, որ Դու, Տեր Հիսո՛ւս, երկնքի և երկրի Արարիչը, համարում ես ինձ՝ աննշան մի մարդու, ավելի կարևոր, քան Քեզ: Միակ միջոցը, որով կկարողանամ ընդունել այդ միտքը, այն է, որ Դու տաս ինձ երեք նորկտակարանյան հատված՝ դա ապացուցելու համար»:

Այս խոսքերն ասելուց հետո զգացի Նրա հաճությունը և անմիջապես սրտումս լսեցի. «Ինչ է գրված Փիլիպեցիների 2.3-ում»:

Ես գիտեի այդ խոսքը և բարձրաձայն մեջբերեցի. «Ոչ մի բան չլինի գրգռմամբ, և ո՛չ էլ սնապարծությամբ, այլ՝ խոնարհությամբ թող մեկը մյուսին իր անձից ավելի լավը համարի»:

Տերն ասաց. «Ահա՛ քո առաջին աստվածաշնչյան հատվածը»:

Ես չհամաձայնեցի. «Տե՛ր, այս հատվածում Պողոսը խոսում է փիլիպեցի հավատացյալների հետ՝ պատվիրելով յուրաքանչյուրին իրենից ավելի լավը համարել մյուսներին: Այստեղ գրված չէ Քո և իմ հարաբերությունների մասին»:

Ես անմիջապես լսեցի. «Որդի՛ս, Ես երբեք չեմ պատվիրում Իմ զավակներին այն, ինչ Ինքս չեմ կատարում»: Դրանից հետո նա ցույց տվեց, որ սա խնդիր է բազմաթիվ ընտանիքներում: Ծնողներն ակնկալում են այնպիսի վարք իրենց երեխաներից, որն իրենք չունեն: Տերը երբեք մեզնից չի ակնկալում այն, ինչում Ինքն օրինակ չէ մեզ համար:

Ես հասկացա, սակայն դա, միևնույն է, չհամոզեց ինձ, որ Նա Իրենից ավելի լավ է համարում ինձ: Ես ասացի. «Տե՛ր, սա միայն մեկ խոսք է. ինձ պետք է ևս երկուսը»: Ես աներկյուղ չէի. փոխարենը՝ զգուշավոր էի:

Նա խոսեց ինձ հետ՝ տալով մի հարց, որն ամբողջությամբ

գրավեց ուշադրությունս. «Ջո՛ն, ո՞վ գամվեց խաչին, դո՞ւ, թե՞ Ես»:

Հանկարծակիի եկած այն բանից, ինչն արդեն գիտեի, բայց ինչն այժմ ավելի իրական դարձավ ինձ համար, ես զգաստորեն պատասխանեցի. «Դո՛ւ, Հիսո՛ւս»:

Նա շարունակեց. «Դո՛ւ պետք է գամված լինեիր այդ խաչին, բայց Ես կրեցի քո մեղքերը, դատաստանը, տկարությունը, հիվանդությունը, ցավը և աղքատությունը: Ես արեցի դա, որովհետև Ինձնից ավելի լավը համարեցի քեզ»:

Ես ցնցվեցի՝ լսելով այդ խոսքերը: Բոլոր կասկածներն ի չիք դարձան Նրա խոսքերից հետո: Ես զգաստորեն մտածեցի այն մասին, որ Նա արժանի չէր Իր կրածի նույնիսկ աննշան մասին: Նա արդար և անմեղ էր: Ես հիշեցի Ա Պետրոսի 2.24-ը. «Որ Ինքը մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք, որ Նրա խոցերով բժշկվեցիք»:

Այդ ժամանակ ես գիտեի, որ Նա ճշմարտապես համարում էր ինձ ավելի կարևոր, քան Ինքն Իրեն: Ես սկսեցի արտասվել և երկրպագել: Ես արդեն գիտեի, որ լինելու էր երրորդ խոսքը և, իհարկե, Նա խոսեց այն իմ սրտում. «Ի՞նչ է գրված Հռոմեացիների 12.10-ում»:

Դա ևս մեկ ծանոթ խոսք էր, և կրկին, ես մեջբերեցի այն. «Եղբայրասիրության մեջ իրար հանդեպ գթա՛ծ եղեք, պատիվ տալու մեջ իրարից առա՛ջ անցեք»:

Ես լսեցի, թե ինչպես Նա ասաց. ««Մի՞թե Ես Անդրանիկը չեմ շատ *եղբայրների* մեջ» (Հռոմ. 8.29): Ես նախապատվություն եմ տալիս Իմ եղբայրներին և քույրերին և համարում եմ նրանց ավելի լավը, քան Ինքս Ինձ»:

Ես հաճախ էի լսել, թե որքան է Հիսուսը սիրում մեզ: Բայց երբ Նա ասաց այս խոսքերն իմ սրտում, ինձ համար այնքա՛ն իրական դարձավ այն փաստը, թե որքան հատուկ ենք մենք Նրա համար՝ որպես անհատներ: Նա անվանում է Իր ընտանիքի անդամներին Իր գանձերը: Նա ասում է մեզ, որ յուրահատուկ ենք: Նա ասում է մեզ, որ մենք Իր աչքի բիբն ենք:

Փորձեք ընկալել հետևյալը. Նա ցնծում է մեզ համար: Այո՛, լսեք այս ճշմարիտ և գեղեցիկ խոսքերը. «Քո Տեր Աստված, Ով քո մեջ է՝ Զորավորը, կփրկի. Նա կցնծա քեզ համար՝ ուրախությամբ, Նա կհանդարտեցնի քեզ Իր սիրով, Նա կցնծա քեզ համար՝ երգելով» (Սոփոնիա 3.17, NKJV):

ԻՆՉ Է ՄԱՐԴԸ

Հրեշտակները հետաքրքրասիրությամբ հետևում են այն բանին, որ վեհ և սուրբ Աստված այսքան ուշադրություն է դարձնում հասարակ մարդկանց: Գրված է. «Երբ որ տեսնում եմ Քո երկինքը, Քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր. ի՞նչ է մարդը, որ Դու հիշում ես նրան, և մարդու որդին, որ Դու խնամք ես տանում նրա համար» (Սաղմ. 8.3,4): Թեև Դավիթն է գրել այս խոսքերը, ես համոզված եմ, որ Աստված թույլ է տվել նրան լսել Իր գահը շրջապատող զորավոր հրեշտակների մտքերը: Այս հրեշտակները տեսել են, թե ինչպես էր այս Հզոր Աստված ստեղծում տիեզերքը: Նրանք այնքա՜ն երկյուղած են Նրանից, որ շարունակ կանչում են մեկը մյուսին՝ «Սո՛ւրբ, Սո՛ւրբ, Սո՛ւրբ», քանի որ ամեն հաջորդ վայրկյանը Նրա փառքի ևս մեկ կողմ է հայտնում, և միակ բանը, որ նրանք կարող են անել ամբողջ հավիտենության ընթացքում, «Սո՛ւրբ» գոչելն է: Նրանք այնքա՜ն բարձր են գոչում, որ ցնցում են Աստծո գահի սրահի (մի դահլիճ, որն ամենաքիչը տասը միլիոն մարդ է տեղավորում) դռների սյուները: Այնուամենայնիվ, նրանք չեն հասկանում, թե ինչու է այս վեհաշուք Աստված այսքան շատ մտածում մեր մասին: Նրանք զգում են, որ Նրա սիրով և բարությամբ լեցուն մտքերը մեր մասին անհաշվելի են, քանի որ ավելին են, քան այս երկրի վրա եղող ավազահատիկները. դա զարմացնո՛ւմ է նրանց:

Մենք Նրա թանկ սեփականությունն ենք, Նրա ցանկալի զարդերը՝ կենդանի քարերը, որոնք կազմում են այն խորանը, որտեղ Նա ցանկանում է բնակվել: Ինչո՞ւ է Աստված նման զգացումներ տածում մեր հանդեպ: Ի՞նչ ենք մենք արել՝ նման

սիրո արժանանալու համար: Մեծագույն ճշմարտությունն այն է, որ մենք ոչինչ չենք արել՝ Նրա սիրուն և ձգտմանը արժանի լինելու համար: Երբ մենք դեռ անօգնական, կորսված մեղավորներ և թշնամիներ էինք, Նա որոնեց մեզ: Նա տեսավ մեզանում այն, ինչ միայն Իր սերը կարող էր նկատել: Նա տեսավ գանձեր՝ անառակության, մեղքի և արատավորության մեջ: Նա գնեց՝ թանկարժեք համարելով այն, ինչը շատերը ցածրարժեք կամ, նույնիսկ, անարժեք էին համարում: Նա տեսավ հեռուն, քան մեր ներկա վիճակն էր՝ այն արդյունքը, որ միայն Իր շնորհքը կարող էր ստանալ:

Այժմ մենք կարող ենք հեշտորեն հասկանալ Աստվածաշնչի հետևյալ խոսքերը. «Աստված գնեց ձեզ թանկ գնով: Մի՛ ստրկացվեք այս աշխարհի կողմից» (Ա Կորնթ. 7.2, NLT): Ինչո՞ւ այս աստիճան սիրված և գնահատված մեկը պետք է ցանկանա վերադառնալ այն համակարգին, որում նա մի ժամանակ ստրկացված էր, և որում նրան խիստ աննշան էին համարում՝ մեր ճշմարիտ արժեքի համեմատ:

Երբ իրականում հասկանում ենք, որ Նա ամենից ակնառու Էակն է ամբողջ տիեզերքում, սակայն նաև ամենից անհատականն է, և որ Նա եռանդուն կերպով հետամուտ է լինում մեզ, ինչպե՞ս կարող ենք անտեսել Նրան մոտենալու այդպիսի սքանչելի հրավերը: Մենք այլևս չենք կարող մերժել Նրան, քանի որ միայն անիրազեկությունը կարող է նման ողբերգական անգործության պատճառ լինել:

(Կարևոր նշում. Աստվածաշունչը պնդում է, որ թեև Աստված հետամուտ է լինում մեզ, մենք պետք է արձագանքենք, որպեսզի սկսենք մեր հարաբերությունը Նրա հետ: Եթե դուք դեռևս չեք ընդունել Հիսուս Քրիստոսին որպես ձեր Տեր և Փրկիչ, այս պահին անչափ կարևոր է, որ անմիջապես բացեք Հավելված Ա-ն, որը գրքի վերջում է):

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Երբ Իսրայելի զավակներն ազատվեցին չորս հարյուր տարի տևող եգիպտական գերությունից, նրանք չէին հասկանում, թե որն էր իրենց ազատելու Աստծո գլխավոր նպատակը: Տերն ազդարարեց. «Ես... բերեցի ձեզ Ինձ մոտ», սակայն նրանք բողոքում և տրտնջում էին՝ մտածելով, որ այդ ամենի նպատակը՝ իրենց խոստացված երկիրը ժառանգելն էր: Ինչպես պնդում է հեղինակը, նրանց սրտերն ուղղված էին այն բաներին, ինչ իրենք պետք է ժառանգեին, ոչ թե Նրան, Ում պետք է ժառանգեին:

   Աստված ազատել է ձեզ մեղքի գերությունից՝ ցանկանալով բերել Իր մոտ: Դուք երբևէ բողոքել կամ տրտնջացել եք: Արդյո՞ք դուք սխալ եք դիտարկել ձեր ժառանգությունը՝ կենտրոնանալով նյութականի, ոչ թե Աստծո Անձի վրա:

2. Այս գլխում հնչեց հետևյալ հարցը. «Ինչո՞ւ այս աստիճան սիրված և գնահատված մեկը պետք է ցանկանա վերադառնալ այն համակարգին, որում նա մի ժամանակ ստրկացված էր»: Ինչպե՞ս կպատասխանեիք այդ հարցին:

3. Հեղինակը ներկայացրեց իր փրկվելուց կարճ ժամանակ անց Աստծո հետ ունեցած մի երկխոսություն այն մասին, թե որքան բարձր էր ինքը գնահատված Տիրոջ կողմից: Ինչպե՞ս է գիտելիքն այն մասին, որ դուք մեծապես արժևորված «ցանկալի զարդ» եք, փոխում ձեր կյանքը և փոխհարաբերությունները, կամ՝ ինչպե՞ս դա պետք է փոխի ձեզ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՊԱՇՏՊԱՆԵ՛Ք ՁԵՐ ՔԱՂՑԸ

Մենք քաղց կզգանք այն բանի հանդեպ,
ինչով սնվում ենք:

Մինչև որ չփրկված մարդը կկարողանա մոտենալ Աստծուն, Ինքը՝ Տեր՛ը, նախ պետք է մոտենա նրան: Է. Ու. Թոզերը գրում է. «Մինչև որ մեղավոր մարդը կկարողանա որևէ արդար միտք ունենալ Աստծո մասին, նրանում պետք է լուսավորության աշխատանք կատարվի» (*«Ձգտում Աստծո հանդեպ»*): Հիսուսն ասում է մեզ. «Ոչ ոք չի կարող Ինձ մոտ գալ, եթե Հայրը, որ Ինձ ուղարկեց, չքաշի նրան» (Հովհ. 6.44): Ահա թե ինչու է անչափ կարևոր բարեխոսել նրանց համար, ովքեր չունեն հարաբերություն Աստծո հետ՝ Հիսուսի միջոցով: Թեև Աստված «կամենում է, որ ամեն մարդ փրկվի և ճշմարտության գիտությանը գա» (Ա Տիմոթ. 2.4), և հետամուտ է եղել այս նպատակին ամբողջ պատմության ընթացքում, Նա, միևնույն է, ցանկանում է, որ Իր զավակներն ընդունեն Իր բուռն ձգտումը կորսվածների հանդեպ և աղաղակեն Իրեն նրանց

համար: Այս պատճառով Հիսուսն ասաց. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ: Արդ, աղաչե՛ք հունձքի Տիրոջը, որ մշակներ հանի Իր հունձքի մեջ» (Մատթ. 9.37,38):

Հենց որ մենք փրկվում ենք՝ Հիսուսի մասին հայտնություն ստանալով, մենք Աստծուն մոտենալու բաց հրավեր ենք ստանում: Ովքեր Իրենն են, Նա ասում է. «Մոտեցե՛ք Ինձ»: Աստված արդեն արել է առաջին քայլը՝ այս անժամանակյա հրավերի միջոցով: Մորենին այրվում է... Նա կանչում է մեր անունը... Նա քայլում է մեր նավակի կողքով... սպասելով մեր պատասխանին:

Վերջերս մի հավատացյալ ասաց.

- Ջո՛ն, որքան ապրել եմ Աստծո հետ և ծառայել եմ Նրան, այնքան ավելի եմ հասկացել, որ մեր մտերմությունը Նրա հետ Նրա նախաձեռնությունն է:

Ես չհամաձայնեցի.

- Ո՛չ, դա ճի՛շտ չէ:

Նա մեջբերեց Հիսուսի խոսքերը, որ ոչ ոք չի կարող մոտենալ Իրեն, եթե Հայրը, նախ, չմոտեցնի նրան: Ես պատասխանեցի.

- Այո՛, սա վերաբերում է անհավատներին: Բայց Աստված ասում է, որ դու Իրենն ես, և Նա խնդրում է քեզ. «Մոտեցի՛ր Ինձ, և Ես կմոտենամ Քեզ»: Նա պարզորեն ասում է, որ մենք կարող ենք նախաձեռնել այս քայլը ցանկացած պահին:

Այո՛, կա ժամանակ, երբ Նա է ցանկանում հանդիպել մեզ, և Նա է նախաձեռնում շփումը մեզ հետ: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ մենք չենք կարող առաջինը մոտենալ Նրան: Մենք փոխհարաբերության մեջ ենք Նրա հետ և, ինչպես հոր և որդու առողջ փոխհարաբերության դեպքում, կա ժամանակ, երբ երեխան է նախաձեռնում շփումը, և կա ժամանակ, երբ հայրն է անում դա:

ԻՆՉՈ՞Ւ ՇԱՏԵՐԸ ՉԵՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ ՆՐԱ ՀՐԱՎԵՐԻՆ

Կա մի շփոթեցնող հարց. ի՞նչն է պատճառը, որ բազմաթիվ հավատացյալների փոխհարաբերությունն Աստծո հետ մակերեսային է: Ինչո՞ւ նրանք չեն ձևավորում ավելի խորը, ավելի կայուն հարաբերություն Աստծո հետ: Ի՞նչն է ետ պահում նրանց: Ի՞նչը կբորբոքի և կդրդի նրանց արձագանքել Նրան մոտենալու կանչին: Պատասխանը բարդ չէ. դա Նրան ճանաչելու մեր քաղցը և ծարավն է: Դավիթն աղաղակում է.

«Իմ անձը ծարավ է Աստծուն՝ կենդանի Աստծուն.
ե՞րբ կգամ և Նրա երեսի առջև կերևամ:
Իմ արտասուքն ինձ հաց եղավ ցերեկ և գիշեր,
որ ինձ ամեն օր ասում են. «Ո՞ւր է քո Աստվածը»:
Ես այս բաները հիշում և
իմ հոգին թափում եմ ինձանում» (Սաղմ. 42.2-4):

Մինչև շարունակելը, կրկին դանդաղորեն կարդացե՛ք այս խոսքերը և յուրացրե՛ք յուրաքանչյուր բառը: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ Դավիթն ասում է. «Ես այս բաները *հիշում* և իմ հոգին թափում եմ ինձանում»: Եբրայերեն *«հիշել»* բառը *«զակար»*-ն է: Վ. Է. Վայնը տեղեկացնում է մեզ, որ այս հունարեն բառը, ինչպես և դրա անգլերեն համարժեքը, նշանակում է «ավելի, քան «վերհիշել». այն նշանակում է «մտապահել»»: Այս սահմանումը, անկասկած, համապատասխանում է այս հատվածին: Դավիթն իրականում ասում է. «Երբ *ես պահում եմ Աստծո հանդեպ ցանկությունը իմ մտածմունքներում*, դա դրդում է ինձ թափել իմ հոգին ինձանում»: Սա անհագ քաղց է առաջացնում Նրա հանդեպ: Այս քաղցը դրդում է մեզ մոտենալ Նրան՝ անկախ այն բանից, թե ինչ հոգևոր, մտավոր կամ ֆիզիկական խոչընդոտների ենք բախվում: Այնպես որ, կարևոր է, որ մենք պաշտպանենք, ինչպես նաև ավելացնենք մեր քաղցը Նրա հանդեպ:

ՏԵՐ, ԱՎԵԼԱՑՐՈՒ ԻՄ ՔԱՂՑԸ

Շատերն աղոթում են. «Տեր, ավելացրու՛ իմ քաղցը Քո հանդեպ»: Այնուամենայնիվ, դա ճիշտ չէ: Մենք ենք որոշում մեր քաղցի չափը, ոչ թե Նա: Ամերիկայում կա նյութական ունեցվածքի, զվարճանքների, հաճույքների և հարստության առատություն: Միակ միջոցը, որով կարող ենք առաջացնել և պահպանել քաղցն Աստծո հանդեպ, մեր անձը պաշտպանելն է՝ ընտրելով, թե ինչով ենք հագեցնում այն:

Առակաց 27.7-ը պնդում է. «Կուշտ անձը կոխ է տալիս մեղրախորիսխը»: Պարզ ասած, եթե ձեր անձը հագեցած է հոգսերով, հաճույքներով, հարստությամբ կամ այս աշխարհի ցանկություններով, դուք կուշտ կլինեք և իրականում կարհամարհեք Աստծո հետ շփման քաղցր մեղրախորիսխը:

Մտածե՛ք Գոհության տոնի մասին՝ որպես օրինակ: Ամերիկացիների մեծ մասը հավաքվում է ընտանիքի անդամների և ընկերների հետ այդ տոնին՝ խնջույքի համար: Շատերը չեն նախաճաշում, որպեսզի ավելի ուշ կարողանան ավելի շատ ուտել: Խնջույքը սկսվում է. մատուցվում է մեծ հնդկահավ, լցոն, քաղցր կարտոֆիլ, բանջարեղեն, լոռամրգի թանձրուկ, թխվածքներ և այլն: Մենք մեծ քանակությամբ կերակուր ենք սպառում, քանի որ մեծ ախորժակ ունենք: Երբ ամեն ինչ ավարտվում է, մենք հառաչում ենք, քանի որ չափազանց շատ ենք կերել. մենք կո՛ւշտ ենք: Երկու ժամ անց գնում ենք ընտանիքի ևս մեկ անդամի տուն: Կրկին, մեր առջև կերակուր է դրված՝ իր ամբողջ փառքո՛վ: Այս անգամ ճաշատեսակներն ավելի համեղ են, բայց փոխարենը ցանկանանք այդ արտակարգ կերակուրը, այն հակակրանք է առաջացնում, և մենք շրջվում ենք դրանից. մենք դեռ այնքա՛ն կուշտ ենք նախորդ ճաշկերույթից, որ պարզապես մեկ հայացք ենք գցում այդ խնջույքի սեղանին և հասկանում ենք, որ ոչինչ չենք ուտելու: Այլևս կարևոր չէ, որ այդ կերակուրը կարող է շատ ավելի համեղ լինել. մենք, ըստ էության, անարգում ենք այն: Ահա թե ինչ նկատի ունի Առակաց գիրքը:

Այս ճշմարտությունը մեկ քայլ առաջ տանելով պետք է հասկանանք, որ այն համեմատական է: Եթե ձեր անձը ծանրացած է այս կյանքի ցանկություններով, գուցե դուք չանարգեք այդ խնջույքը, բայց կարող եք լրջորեն չվերաբերվել դրան: Եթե չափազանց շատ չեք կերել, այլ սովորականի պես սնվել եք երկու ժամ առաջ, դուք չեք անարգի այն. դուք կարող եք միայն մի փոքր փորձել կամ էլ հրաժարվել: Հաճախ, երբ որևէ քաղաք եմ ժամանում, ինձ հրավիրում են ճաշելու բարձրակարգ ռեստորաններում, բայց ես քաղցած չեմ լինում, քանի որ դրանից երկու ժամ առաջ արդեն ճաշել եմ, այնպես որ, ես քաղաքավարիորեն մերժում եմ այդ հրավերը: Ուտելու մասին միտքը հակակրանք չի առաջացնում, ինչպես վերևում պատկերված Գոհության տոնի օրինակում. այն պարզապես չի գրավում ինձ: Բայց նույն առաջարկը՝ ուղղված ինչ-որ մեկին, որը մեկ կամ երկու օր քաղցած է եղել, լիովին այլ արձագանք կառաջացներ: Այդ մարդը եռանդորեն կձգտեր այն կերակուրին, որին դուք անտարբերությամբ եք նայում: Այսպիսով, ճշմարտությունը հետևյալն է. այն չափը, որով դուք լցված եք այս կյանքի իրողություններով, որոշում է ձեր արձագանքը Նրա կանչին:

Չափազանց հաճախ եկեղեցիներում գտնվող մարդիկ անտարբեր են Աստծո իրողությունների հանդեպ: Շատերը չեն անարգում Նրա ներկայությունը, բայց, ի տարբերություն քաղցած մարդու, նրանք անփութորեն են վերաբերվում իրենց առջև գցած խնջույքի սեղանին: Ի վերջո, մի քանի ժամ առաջ նրանք սնվել են այս աշխարհի սեղանից և կուշտ են: Ես տեսել եմ մարդկանց, որոնք ասում են, թե ձգտում են Նրան, բայց նրանց գործերը հերքում են նրանց խոսքերը: Կարծում եմ՝ այս գիրքը ձեր ձեռքում է, քանի որ դուք ցանկանում եք ավելի ճանաչել Նրան, բայց արդյո՞ք ձեր անձը սաստիկ փափագում է Նրան: Դուք նման եք այնպիսի մարդու, որն օրեր շարունակ ոչինչ չի կերել, կամ հարբեցողի, որը խմիչք չի ունեցել, կամ թմրամոլի, որը թմրանյութի իր չափաբաժնի կարիքն ունի: Սա

այն քաղցի օրինակն է, որը պետք է ձևավորենք՝ Աստծո հանդեպ նախանձավոր դառնալու համար:

ԱՆՏԱՐԲԵՐ ԵԿԵՂԵՑԻ

Ուշադրությամբ ուսումնասիրելով Հայտնության գրքի վերջին եկեղեցուն ուղղված Հիսուսի խոսքերը՝ մի զարմանալի փաստ ենք բացահայտում: Նախևառաջ, հաշվի առեք, որ թեև Հիսուսն ուղարկեց նամակներ Ասիայում գտնվող յոթ եկեղեցիներին, այդ ուղերձները նախատեսված չէին միայն այդ պատմական եկեղեցիների համար, այլև՝ բոլորիս համար, այլապես դրանք զետեղված չէին լինի Աստվածաշնչում: Այն փաստը, որ դրանք Աստվածաշնչում են, նշանակում է, որ դրանք մարգարեական կիրառություն ունեն, այսինքն՝ դրանք դեռ խոսում են մեզ հետ այսօր:

Մարգարեական ուղերձները կարող են ունենալ և հաճախ ունեն բազմաթիվ կիրառություններ, իմաստներ և իրականացումներ: Բացի այն, որ այդ եկեղեցիներից յուրաքանչյուրին ուղղված նամակն ուղերձ է պարունակում, հնարավոր է, որ այս ուղերձը վերջինն է գրված, քանի որ այն վերաբերում է Նրա վերադարձից առաջ այս երկրի վրա գտնվող եկեղեցուն: Սա հավանական է, քանի որ այս վերջին նամակն ավարտելուց հետո Հովհաննեսը գրեց. «Եվ սրանից հետո տեսա, և ահա մի բացված դուռ երկնքում, և այն առաջին ձայնը, որ լսեցի *փողի* պես, որ խոսում էր ինձ հետ, ասաց. «Վե՛ր ելիր այստեղ…»» (Հայտն. 4.1, *շեղագիրը հեղինակինն է):* Ուշադրություն դարձրե՛ք *«փող»* բառին: Մենք գիտենք, որ վերջին օրերում Ինքը՝ Տերը, կգա նրանց ետևից, ովքեր Իրենն են՝ իջնելով երկնքից «հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստծո *փողով»* (Ա Թեսաղ. 4.16,17, *շեղագիրը հեղինակինն է):* Ես հավատում եմ, որ այս եկեղեցու ուղերձը հատուկ նշանակություն ունի այն օրերի համար, որոնցում ապրում ենք:

Հիսուսը հայտարարեց, որ այդ եկեղեցին գաղջ վիճակում էր: Ավելի ժամանակակից լեզվով, նրանք չունեին ջերմեռան-

դություն և անփութորեն էին վերաբերվում այն ամենին, ինչը կարևոր էր Նրա համար: Նրանք հազվադեպ էին թողնում իրենց ճանապարհները՝ Նրան հաճեցնելու համար: Ո՞րն էր նման վարվելակերպի պատճառը: Հիշեք, որ դա ինքնահռչակ եկեղեցի չէր, որին Աստված չէր ընդունում. Ինքը՝ Հիսուսն է եկեղեցի անվանում այն: Պատասխանը կյանքի հանդեպ նրանց դիրքորոշման մեջ է: Հիսուսն ասում է. «Որովհետև ասում ես, թե՝ ես հարուստ եմ և մեծացա և ոչ մի բանի կարոտ չեմ» (Հայտն. 3.17): Այս բառերը մատնում են ջերմեռանդության պակասը նրանցում. նրանց անձերը կշտացած էին, սակայն, ցավոք սրտի, ոչ թե Նրանով, այլ՝ ունեցվածքով:

ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԱԽՏԱՆՇԱՆ

Ոմանք կասեն, որ նրանց խնդիրը չափազանց շատ փողը կամ նյութական ունեցվածքն էր: Սա, լավագույն դեպքում, Հիսուսի խոսքերի մակերեսային գնահատականն է: Մտածեք Դավթի մասին. նա բազմաթիվ ծառաներ և մեծ հարստություն ունեցող մարդ էր: Իրականում, նա փոխանցեց Սողոմոնին «չորս հազար տոննա ոսկի, գրեթե քառասուն հազար տոննա արծաթ և այնքան շատ երկաթ և բրոնզ», որն անկարելի էր կշռել (տե՛ս Ա Մնաց. 22.14, NLT): Սակայն նա այսպես էր նկարագրում իրեն. «Տե՛ր, խոնարհեցրո՛ւ քո ականջը և պատասխանի՛ր ինձ, որովհետև *աղքատ եմ ես և խեղճ»* (Սաղմ. 86.1, *շեղագիրը հեղինակինն է):* Նա անվանում էր իրեն աղքատ և խեղճ: Մենք գիտենք, որ նա պարզապես քաղաքականորեն բարեկիրթ պնդում չէր անում, քանի որ դուք չեք կարող ստել, երբ գտնվում եք աստվածային ոգեշնչման ներքո: Նա իսկապես դիտարկում էր իրեն որպես աղքատ և խեղճ, նույնիսկ արծաթի պաշարներ ունենալով: Նա անձամբ Աստծո կարիքն ուներ, և այդ կարիքը ձևավորվել էր աստվածային քաղցի միջոցով: Կրկի՛ն լսեք նրա աղաղակը. «Տե՛ր, խոնարհեցրո՛ւ քո ականջը և պատասխանի՛ր ինձ...»: Նա հուսահատորեն ցանկանում էր պատասխան ստանալ Աստծուց: Նա մտերմության քաղց և

ծարավ ուներ: Ահա թե ինչպես էր ձևավորվել նրա եռանդագին փափագը. «Իմ արտասուքն ինձ հաց եղավ ցերեկ և գիշեր, որ ինձ ամեն օր ասում են. «Ո՞ւր է քո Աստվածը»» (Սաղմ. 42.3):

Լավոդիկեի եկեղեցու խնդիրը ոչ թե նյութական ունեցվածքն էր, այլ այն փաստը, որ նրանք թույլ էին տվել, որ նյութական ունեցվածքը հագեցներ իրենց անձերը: Դավիթը երբեք թույլ չտվեց, որ դա տեղի ունենար: Նա երբեք թույլ չտվեց, որ իր մեծ հարստությունը հագեցներ իր անձի ախորժակը: Ավելի քան հավանական է, որ այդ եկեղեցու անդամների ունեցվածքն անհամեմատ քիչ էր Դավթի ունեցվածքից, բայց նրանք սնվում էին իրենց ունեցվածքով, և նրանք հագեցել էին: Դա հանգցրել էր նրանց փափագն Աստծո ներկայության և Նրա հետ շփվելու հանդեպ:

ԿՏՐՈՒԿ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ես շատ հաճախ եմ տեսել սա վերջին քսան տարում: Հիշում եմ, որ մեկ անգամ հավաքույթներ էի անցկացնում Կրի հնդկացիների մոտ՝ Կանադայի հյուսիսում: Այդ հյուսիսամերիկյան հնդկացիների ցեղը վերջինն էր, որ ռեզերվացիայում էր բնակվում: Իրականում, ընդամենը քսան տարի առաջ այդ խիզախ մարդիկ ապրում էին թիփիներում և տեղաշարժվում էին անտառային արահետներով: Նրանք հասարակ մարդիկ էին, որոնք համեստ պայմաններում էին ապրում: Ընդամենը տասը տարի էր անցել, ինչ նրանք հեռուստացույցներ էին գնել իրենց համեստ տների համար:

Այդ հավաքույթներին մոտավորապես հազար մարդ էր մասնակցում: Ես այդտեղ էի մի քանի օրով և տարօրինակ բան նկատեցի: Գրեթե առանց բացառության, որոնց տարիքը քսանն անց էր, անչափ մեծ քաղց ունեին Աստծո իրողությունների հանդեպ: Նրանք շատ ավելի ջերմեռանդ էին, քան Հյուսիսային Ամերիկայի բնակչության մեծ մասը: Նրանք հուսահատորեն ցանկանում էին ճանաչել Աստծուն: Այնուամենայնիվ, մինչև քսան տարեկան երիտասարդներն անտարբեր էին,

և թվում էր՝ նրանք բոլորովին քաղց չունեին:

Հավաքույթներից մեկի ժամանակ սովորեցնելու և քարոզելու օծությունն անչափ ուժգին էր: Մարդիկ նստած էին մեծ վրանում, և նրանք իսկապես ընդունում էին քարոզվող ուղերձը: Մի պահ նկատեցի, որ վրանից դուրս և ետնամասում գտնվող երիտասարդներն անչափ ձանձրացած և անտարբեր տեսք ունեին: Ես գիտեմ, թե ինչ է, երբ քարոզը ձանձրալի է լինում, բայց դա չէր վերաբերվում այդ ուղերձին. Սուրբ Հոգին զարմանալիորեն զորացրել էր ինձ՝ Աստծո Խոսքն ազդարարելու համար: Հանկարծ, մինչև որ հասկացա, թե ինչ էի անում, ես վազեցի շարքերով՝ անցնելով հոգևոր քաղց ունեցողների կողքով, դեպի այդ երիտասարդները, որոնք վրանից դուրս էին: Ես խնդրեցի նրանց ներս գալ և լսել: Նրանք այնպես նայեցին ինձ, ասես ես խելագարվել էի և ոչինչ չէի հասկանում կյանքից:

Այդ ժամանակ էր, որ ուշադրություն դարձրի նրանց վերնաշապիկներին և գլխարկներին. այն, ինչ գրված էր դրանց վրա, կարծես լուսավորվեց և առանձնացավ ինձ համար: Դրանց վրա տարբեր պրոֆեսիոնալ բասկետբոլային և ֆուտբոլային թիմերի պատկերանշաններ էին: Սուրբ Հոգին ցույց տվեց ինձ, որ նրանք հարբած և հագեցած էին այն ամենից, ինչ դիտում էին հեռուստատեսությամբ: Ցավոք, նրանք իրենց անձերի քաղցը հագեցրել էին իրենց համար անօգտակար բաներով: Ես հասկացա, որ նրանց ավագ սերունդը չէր մեծացել հեռուստատեսային սննդակարգով: Իմ տարակուսանքը քսանից ցածր և բարձր տարիքային խմբերի միջև տարբերության պատճառով պատասխանվեց:

Խնդրո՛ւմ եմ, հասկացե՛ք, թե ինչ նկատի ունեմ: Հեռուստատեսությունը միշտ չէ, որ կործանարար է մեր հոգևոր աճի և քաղցի համար. խնդիրը մեր վերաբերմունքն է դրան: Հիմա մեր տանը հեռուստացույց կա, թեև մեր ամուսնությունից հետո տարիներ շարունակ մենք հեռուստացույց չենք ունեցել: Ես ոգեշնչվել եմ և որոշ բաներ եմ սովորել տարբեր հաղորդումնե-

րի միջոցով: Ես կարող եմ հետևել համաշխարհային իրադարձություններին՝ հեռուստատեսության միջոցով: Այնուամենայնիվ, այն չի սնուցում կամ հագեցնում ինձ: Այն իմ ձգտումը չէ: Ես կարող եմ դիտել այն և, միևնույն է, ձգտել աստվածային իրողությունների և պահպանել իմ շփումը Սուրբ Հոգու հետ: Թեև այդ երիտասարդներն աղքատ էին, նրանք տվել էին իրենց ախորժակն այնպիսի բանի, ինչն անօգուտ էր իրենց համար:

Այդ դեպքից կարճ ժամանակ անց ես ուղևորվեցի Միացյալ Նահանգների հյուսիս-արևմուտքում գտնվող մի եկեղեցի: Ինձ խնդրեցին քարոզել ուրբաթ երեկոյան հավաքույթին: Այդ հավաքույթը բաց էր ամբողջ եկեղեցու համար, բայց, ի զարման ինձ, նկատեցի, որ յոթ հարյուր ներկաներից հինգ հարյուրը դեռահասներ էին: Երբ հավաքույթն ավարտվեց, ինձ շրջապատեցին մի քանի տասնյակ դեռահասներ և սկսեցին հարցեր տալ հոգևոր իրողություններից: Երբ նայեցի ժամացույցիս, արդեն գրեթե կեսգիշեր էր: Ծառայության ավարտից հետո բավականին ժամանակ մենք խոսում էինք աստվածային իրողություններից: Ի վերջո, ասացի.

- Ինձ անչափ դուր է գալիս բոլորիդ մեծ քաղցն Աստծո հանդեպ:

Նրանք հարցրին՝ կարո՞ղ են մինչև իմ մեկնելը ճաշի հրավիրել ինձ հաջորդ օրը: Ես չէի կարող մերժել նրանց. այնպես որ, նրանք մեծ սրահ վարձեցին մի ռեստորանի վերնահարկում, և մեր քննարկումը շարունակվեց: Այն զարմանալի էր, և դրանում թարմություն կար: Երիտասարդների այդ երկու խմբերի միջև հեգնական հակադրություն կար. հյուսիս-արևմուտքի բարեկեցիկ կյանքով ապրող երիտասարդները քաղցած էին, թեև նրանք ունեին ավելին, քան հնդկացի երիտասարդները:

Այնուամենայնիվ, հյուսիս-արևմուտքում գտնվող այդ եկեղեցում, որտեղ քսանից բարձր տարիքի մարդիկ էին, այնքան քաղցած չէին, որքան երիտասարդները: Ինչո՞ւ նրանք չէին շրջապատել ինձ: Ինչո՞ւ էին ավելի շատ դեռահասներ ներկա

այդ հավաքույթին, քան մնացած տարիքային խմբերը՝ միասին: Ես հավատում եմ, որ այդ մեծահասակների անձերը ծանրացած էին կյանքի հոգսերով և հաճույքներով: Աստվածային իրողությունները նրանց կյանքի որոշակի մասն էին կազմում, բայց նրանք չէին ձգտում դրանց, թեև ընդունում էին Հիսուսի իշխանությունը:

Այդ եկեղեցու ավագ և երիտասարդականի հովիվներին հանդիպելուց հետո ակնհայտ դարձավ, որ ավագ հովվի ազդեցությունը փոխանցվում էր իր եկեղեցու անդամներին, և նույնը վերաբերում էր երիտասարդականի հովվին: Ովսե 4.9-ը ակնհայտ դարձավ ինձ համար. «Ինչպիսին քահանան է, այնպիսին էլ ժողովուրդն է. քանի որ քահանան անօրեն է, ժողովուրդը նույնպես անօրեն է» (NLT): Կարելի է ասել նաև հետևյալ կերպ. «Ինչպիսին քահանան է, այնպիսին էլ ժողովուրդն է. եթե հովիվը չունի ջերմեռանդություն, մարդիկ նույնպես անտարբեր կլինեն»: Աստված տեղափոխեց այդ երիտասարդականի հովվին, որը լեցուն էր տեսիլքով և նախանձավորությամբ, և այսօր նա ազդեցիկ ծառայություն ունի այլ քաղաքում:

ԴԵՂԱՄԻՋՈՑ՝ ԱՆՏԱՐԲԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՄԱՐ

Այս ասիական եկեղեցում գերակշռող անտարբերությունը հենց այն թեման էր, որին Հիսուսն անդրադարձավ Իր ուղերձում: Լսե՛ք Նրա խոսքերը.

> «Ահա Ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ» (Հայտն. 3.20):

Ինձ զարմացնում է, թե որքան հաճախ են Ավետարանի ծառայողներն օգտագործում այս խոսքը՝ որպես կանչ չփրկված մարդկանց համար, թեև Հիսուսը բոլորովին այլ բան նկատի ուներ: Նա դիմում էր այդ եկեղեցուն. Նա դիմում էր ջերմեռան-

դություն չունեցող հավատացյալներին: Ուշադրություն դարձրեք, որ Նա ասաց. «Եթե մեկը լսի...»: Ինչը թույլ չի տալիս մեզ լսել: Արդեն իսկ հագեցած անձն է, որ թույլ չի տալիս մեզ լսել Նրա ձայնը: Աստված ուղարկեց Մովսեսին անապատի ետին մասը՝ հեռու Եգիպտոսի շեղող հանգամանքներից, որպեսզի գրավեր նրա ուշադրությունը: Աստված արեց դա մեկ հանդիպման ընթացքում, և նա այլևս չշեղվեց՝ անկախ այն բանից, թե որտեղ էր, նույնիսկ երբ նա վերադարձավ Եգիպտոս:

Հիսուսն ասաց, որ եթե ինչ-որ մեկը լսի Իր ձայնը և բացի իր անձի դուռը, Նա ներս կմտնի և հաց կկիսի այդ մարդու հետ: Նա կմատուցի «Կյանքի հացը» մեր անձին. Նա է Կյանքի Հացը: Ըստ թարգմանություններից մեկի՝ «եթե լսես, որ Ես ձայն եմ տալիս, և բացես դուռը, Ես ներս կմտնեմ, և մենք հաց կկիսենք՝ ընկերների պես» (NLT): Ինձ դուր է գալիս սա, քանի որ այդ ժամանակ նույնիսկ ավելի, քան այսօր միասին հաց կիսելը հասարակական մտերմության ավելի բարձր մակարդակի ցուցանիշ էր: Իմ ճանապարհորդությունների ընթացքում ես սիրում եմ գոնե մեկ անգամ ճաշել ինձ հրավիրող համաժողովի ղեկավարի կամ եկեղեցու հովվի հետ մինչև մեկնելը, քանի որ այդ շփման ընթացքում է, որ մենք միմյանց իսկապես ճանաչելու հնարավորություն ենք ունենում: Կերակուրի սեղանի շուրջ տեղի ունեցող փոխադարձ շփումն ավելի խորն է, քան ցանկացած այլ միջավայրում: Ահա թե ինչու է Պողոսը պատվիրում հաց չկիսել այնպիսի մարդու հետ, որը պնդում է, թե հավատացյալ է, սակայն ապրում է շարունակական մեղքի մեջ: Մենք բացում ենք մեր սիրտը և մտերմանում ենք հաց կիսելիս, և եթե դա տեղի ունենա բացահայտ ապստամբությամբ ապրող մարդու հետ, այդ շփումը հոգևորապես առողջ չի լինի:

ՄԵՆՔ ՔԱՂՑ ԿԶԳԱՆՔ ԱՅՆ ԲԱՆԻ ՀԱՆԴԵՊ, ԻՆՉՈՎ ՍՆՎՈՒՄ ԵՆՔ

Քաղցն այն բանալի գործոնն է, որը որոշում է, թե արդյո՞ք մենք ձգտում ենք Աստծո հետ մտերմության: Այնպես որ, պետք է մտապահենք, որ մենք ենք տնօրինում մեր ախորժակը, ոչ թե Աստված: Հարցը հետևյալն է. ի՞նչ ախորժակ կամ ի՞նչ բաղձանքներ ենք մենք զարգացնելու: Գոյություն ունի մի հոգևոր սկզբունք, որը երբեք չի փոխվում.

Մենք քաղց կզգանք այն բանի հանդեպ,
ինչով սնվում ենք:

Ես վերստին ծնվեցի 1979 թվականին տղաների համալսարանական հանրակացարանում: Մի երեկո մեր հանրակացարանի խոհանոցում էի և ուտելու ինչ-որ բան էի փնտրում, երբ լսեցի Տիրոջը. «Քո մարմինն Իմ տաճարն է. հո՛գ տար դրա մասին»:

Այդ ժամանակ ես մոլեռանդորեն «արագ սնունդ» էի օգտագործում: Կարծում եմ՝ *«մոլեռանդ»* բառը պատշաճ կերպով է նկարագրում ինչ-որ բանից կախվածություն ունեցող մարդուն: Ես անառողջ սնունդ էի օգտագործում, քանի որ դա հաճելի էր իմ ախորժակին: Ես սիրում էի գազավորված ըմպելիքներ, քաղցրավենիք, արագ սնունդ, փքաբլիթներ, ամեն տեսակի ճարպոտ կերակուրներ, սպիտակեցված ալյուրից պատրաստված ուտեստներ և այլն: Ես մեծ ախորժակով ուտում էի ցանկացած անառողջ կերակուր, քանի որ դրա համն ինձ դուր էր գալիս: Իմ պատկերացումը լավ կերակուրի մասին մեծ համբուրգերն էր, Կոկա-կոլան և տապակած կարտոֆիլը:

Երբ Աստված ասաց ինձ այդ մասին, ես գիտակցեցի, որ իմ մարմինը համալիր բնակավայր է՝ Սուրբ Հոգու, ինչպես և ինձ համար: Ես մտածեցի, որ եթե նոր թանկարժեք մեքենա ունենայի, երբեք կեղտոտ վառելիք կամ օգտագործված և զտված յուղ չէի լցնի դրա մեջ: Ես կօգտագործեի ամենաորակյալ վա-

ռելիքը և յուղը, որպեսզի այն ավելի արդյունավետ և երկար ծառայեր: Ես մտածեցի, որ ինձ տրվել է միայն մեկ մարմին, որը չի փոխարինվելու, այնինչ, թանկարժեք մեքենան կարելի է փոխարինել: Ես անմիջապես սկսեցի փոխել իմ սննդային սովորությունները: Սկսեցի կարդալ և հարցեր տալ, որպեսզի իմանայի, թե ինչ էր անհրաժեշտ իմ մարմնին՝ երկարատև և առավելագույն ներուժով ծառայելու համար: Դա տևական գործընթաց էր, բայց մի քանի տարի անց իմ սննդային սովորությունները լիովին փոխվեցին:

Այդ ամենը հրաշալի էր, բայց ես ձեռք բերեցի ևս մեկ առավելություն, որը չէի կանխատեսել: Երբ սկսեցի առողջ կերակուր օգտագործել, ինձ դուր չէր գալիս դրա համը, բայց ես ուտում էի, քանի որ օգտակար էր ինձ համար: Այնուամենայնիվ, որոշ ժամանակ անց իմ ախորժակը փոխվեց: Նախկինում, եթե ինձ առաջարկեին ընտրել արագ սննդի և կանաչեղենով աղցանի, եփած ձկան և ամբողջական հացահատիկից պատրաստված հացի միջև, ես առանց մտածելու կվերցնեի բուրգերը՝ շրջվելով ձկից և աղցանից: Բայց այսօր, եթե առաջարկեին նույն երկու տարբերակը, ես կվերցնեի առողջ կերակուրը և նույնիսկ չէի մտածի անառողջ սննդի մասին: Իրականում, իմ ճանապարհորդությունների ժամանակ ես հաճախ չեմ սնվել, եթե միայն արագ սնունդ է հասանելի եղել: Ես գերադասում եմ քաղցած մնալ, քան ուտել այն, ինչ մի ժամանակ սաստիկ ցանկանում էի: Ես այլևս չունեմ ախորժակ դրա հանդեպ, և դա չի գրավում ինձ: Դա նույնիսկ դուր չի գալիս ինձ:

Նույն սկզբունքը վերաբերում է մեր անձերին: Մեր անձերը ցանկանում են այն, ինչով մենք կերակրում ենք նրանց: Եթե մշտապես սնվենք սպորտով, մենք կձգտենք սպորտային հեռուստաալիքներ դիտելուն: Եթե մշտապես սնվենք ֆիլմերով և հոլիվուդյան բամբասանքներով, մենք կդիտենք այնպիսի ֆիլմեր, կգնենք այնպիսի ամսագրեր և կզրուցենք այնպիսի թեմաներով, որոնք հաճելի են այդ տեսակի ախորժակին: Եթե մշտապես սնվենք գործարար աշխարհով և ներկա իրա-

դարձություններով, մենք դրանց էլ կձգտենք: Եթե մեր բավականությունը մեր տների, մեքենաների, հագուստի և այլ ունեցվածքի մեջ լինի, մենք պատրաստակամորեն կզրուցենք գնումների, նոր մեքենայի կամ ձևավորման գաղափարների մասին, իսկ հոգևոր զրույցները ձանձրալի կլինեն մեզ համար: Մեզ համար դժվար կլինի Աստվածաշունչ կարդալ կամ մնալ աղոթքի սենյակում: Այնուամենայնիվ, եթե մենք սնվենք Աստծո Խոսքի կայուն սննդակարգով, մենք հեշտորեն ժամանակ կտրամադրենք աղոթքին, իսկ զրույցները հոգևոր իրողությունների մասին հաճելի կլինեն և բնականորեն կընթանան: Մենք կփափագենք Աստծո ներկայությանը և կցանկանանք մտերմորեն հաղորդակցվել Նրա հետ:

ԱՆԱՌՈՂՋ ԾԱՅՐԱՀԵՂՈՒԹՅՈՒՆ

Այս ամենը կարելի է հասցնել անառողջ ծայրահեղության: Մենք ապրում ենք ֆիզիկական մարմնում: Մենք պարբերաբար հանգստի և առողջ ժամանցի կարիք ունենք: Երբ սովորում էի Աստվածաշնչյան դպրոցում, ես աշխատում էի շաբաթական քառասուն ժամ և լիարժեք կերպով հաճախում էի բոլոր դասերին: Մեկ անգամ՝ շաբաթավերջին, իմ սենյակակիցը հրավիրեց ինձ ամերիկյան ֆուտբոլ խաղալու մի խումբ ընկերների հետ: Ես հրաժարվեցի, որպեսզի ժամանակ տրամադրեի Աստվածաշնչի ուսումնասիրությանը: Հենց որ նա գնաց, ես վերցրի իմ Աստվածաշունչը՝ կարդալու և աղոթելու համար, բայց այն ասես փակ լիներ: Ես չէի կարողանում լսել Աստծուց: Ես պարզապես ընթերցում էի, բայց ոչինչ չէի ընկալում: Իմ սենյակակիցը գրեթե մեկ ժամ էր, որ գնացել էր, և ես բացականչեցի. «Տե՛ր, ինչո՞ւ է ինձ համար այսքան դժվար ինչ-որ բան ստանալ Աստվածաշնչից և լսել Քո ձայնը: Ինչ է կատարվում: Արդյո՞ք ես Քեզ տհաճություն պատճառող որևէ բան եմ արել կամ մեղք եմ գործել»:

Ես լսեցի Նրա պատասխանը. «Գնա՛ ֆուտբոլ խաղալու»:

Ես հանկարծակիի եկա, իսկ հետո հարցրի. «Ինչ: Ֆուբոլ

խաղալու: Դա չի՛ կառուցի իմ հավատքը, և ո՛չ էլ կմոտեցնի ինձ Քեզ: Ինչպե՞ս կարող ես պատվիրել, որ անեմ դա»:

Տերը մի խոսք հիշեցրեց, որը հանկարծ կենդանացավ ինձ համար. «Շատ գրքեր շինելը ծայր չունի, և *շատ կարդալը կհոգնեցնի մարմինը»* (Ժողով. 12.12, *շեղագիրը հեղինակինն է):* Նա ասաց. «Որդի՛ս, դու ապրում ես ֆիզիկական մարմնում (որի մի մասն ուղեղն է), և այն հանգստի տարբեր տեսակների կարիք ունի: Եթե չտրամադրես մարմնիդ իրեն անհրաժեշտ հանգիստը, այն կսահմանափակի Ինձնից լսելու և հոգևորապես աճելու քո կարողությունը»: Նա ցույց տվեց ինձ, որ այն բանից հետո, երբ աշակերտները ծառայեցին շատերին, Նա առաջարկեց. «Դուք առանձին անապատ տեղ եկեք և մի քիչ հանգիստ առեք» (Մարկ. 6.31): Պարզ ասած, Հիսուսը նկատի ուներ՝ «հանգստացե՛ք, որպեսզի չսպառվեք»:

Ես դուրս եկա իմ սենյակից և գնացի ֆուտբոլ խաղալու: Ավելի ուշ՝ նույն օրը, երբ կրկին նստեցի Աստվածաշունչ կարդալու, Սուրբ Գիրքը բացվեց ինձ համար, և ես կրկին զգացի, թե ինչպես է Աստծո կյանքը հոսում իմ էության մեջ, մինչ հաղորդակցվում էի Սուրբ Հոգու հետ Աստծո Խոսքի շուրջ:

ՉԱՓԱԶԱՆՑ ԶԲԱՂՎԱԾ

Աստվածաշնչի ուսումնասիրությանը չափազանց շատ ժամանակ տրամադրելը՝ անտեսելով անձի և մարմնի կարիքները, այն սխալը չէ, որը շատերը գործում են մեր օրերում: Փոխարենը, ամենամեծ գողը, որը գողանում է մեր քաղցն Աստծո հանդեպ, մեր զբաղված կենսաոճն է: Այս ծուղակում հայտնվել են բազմաթիվ բարի դրդապատճառներ ունեցող հավատացյալներ. նրանք փոխարինել են ժամանակն Աստծո հետ զբաղված քրիստոնեական կենսաոճով: Սա նույնպես վերաբերում է ծառայողական խաբուսիկ և շարունակական աշխատանքին:

Եկեք մի պարզ հարց տանք, որը լույս կսփռի մեր կյանքում. ինչո՞ւ ենք մենք կերակրում մեր մարմինը: Հուսով եմ, որ դուք կպատասխանեք՝ մեր մարմնին սնուցում և ուժեր հաղորդելու

համար: Կարո՞ղ եք պատկերացնել, որ շարունակեք ձեր կյանքի բնականոն ընթացքը՝ առանց սնվելու: Եթե, փորձի համար, մենք դադարեինք սնվել մի քանի օրով, բայց շարունակեինք ժամեր տևող ֆիզիկական աշխատանք կատարել՝ առանց քնի հավելյալ ժամերի, ի՞նչ տեղի կունենար: Մի պահ մտածե՛ք այս մասին. մենք ուժասպա՞ռ կլինեինք:

Այնուամենայնիվ, որքա՞ն հեշտորեն ենք այսպես վարվում հոգևոր առումով: Կա մի պատճառ, թե ինչու ենք մենք դիմանում դրան հոգևորապես, բայց ոչ՝ ֆիզիկապես: Եթե մենք չսնվենք չափազանց երկար ժամանակ, մեր ստամոքսը կբողոքի, և այն էլ՝ ոչ մեկ անգամ: Ժամանակի ընթացքում այն ավելի կբարձրացնի իր ձայնը և կբղավի՝ մեզ ավելի սաստիկ ցավ պատճառելով: Այն կգոչի. «Ես քաղցա՛ծ եմ, կերակրի՛ր ինձ»: Այնուամենայնիվ, մեր հոգին այդպես չի բղավում: Տեղի է ունենում ճիշտ հակառակը. ժամանակի ընթացքում մեր ներսի մարդու ձայնն ավելի է ցածրանում: Սա է պատճառը, որ մենք չենք լսում այն. մեր հոգին տկարանում է, և մեր մարմինն ավելի գերիշխող է դառնում:

Մենք կորցնում ենք մեր ախորժակը, երբ տևական ժամանակով չենք սնվում: Եթե դուք ավելի քան հինգ օր ոչինչ չուտեք, քաղցի մարմնական բղավոցը կդադարի: Կերակուրն այլևս չի հրապուրի ձեզ, և տապակած մսի կտորը նույնքան գրավիչ կթվա, որքան կոշիկ ուտելը: Դուք կկորցնեք ձեր ախորժակը, և այն այլևս չի վերադառնա, մինչև որ ձեր բոլոր ներքին պաշարները սպառվեն, և սկսվի սովամահությունը:

Ես ուշադրություն եմ դարձրել, որ եթե թույլ եմ տալիս զբաղված կենսաոճին փոխարինել իմ ժամանակը Տիրոջ հետ, տեղի է ունենում նույնը: Սկզբում նվազում է հետաքրքրությունն Աստվածաշնչի հանդեպ, իսկ հետո մարում է աղոթելու ցանկությունը: Եթե ես միայն անկանոն աղոթեմ կամ Աստվածաշունչ ընթերցեմ, չեմ զգա կյանքի հոսքն իմ ներսում: Աստվածաշունչը չի խոսի ինձ հետ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ ես հետևողականորեն սնվում էի Սուրբ Գրքով:

Ես հրաժարվել եմ ֆիզիկական սննդից մինչև այն պահը, երբ այլևս ախորժակ չեմ ունեցել, և պարզել եմ, որ իմ ախորժակը վերականգնելու միակ միջոցն այն է, որ ստիպեմ ինձ սնվել: Նույնը ճշմարիտ է հոգևոր առումով: Եթե ես կորցրել եմ իմ հոգևոր ախորժակը, ես բացում եմ Աստվածաշունչը, ապաշխարում եմ ծուլության համար, իսկ հետո սպասումով ձգտում եմ լսել Աստծո ձայնը: Ես ընթերցում եմ, մինչև որ ինչ-որ բան Աստվածաշնչում խոսում է ինձ հետ: Սովորաբար երկար ժամանակ չի պահանջվում. մինչ ընթերցում եմ, Նա միշտ հավատարմորեն խոսում է Ինձ հետ: Կա ևս մեկ միջոց Աստծո հետ կապը վերականգնելու համար. ես առանձնանում եմ որևէ վայրում մեկ կամ երկու օրով և պարզապես ընթերցում և աղոթում եմ մինչև հագենալը:

ՁԵՐ ՀՈԳԵՎՈՐ ՋԵՐՄԱՉԱՓԸ

Բոլորս պետք է ունենանք այս կարգապահությունը: Նահանջը չի սկսվում, երբ մարդը հասկանում է, որ անկողնում է անծանոթ կնոջ հետ, կամ բացահայտում է, որ ուժգին ցանկություն ունի ալկոհոլի կամ պոռնոգրաֆիայի հանդեպ: Այն չի սկսվում, երբ նա անարգում է իր սիրելիներին, անտեսում է իր երեխաներին և այլն: Ո՛չ, նահանջը սկսվում է, երբ անտարբեր ենք դառնում Աստվածաշնչի և աստվածային իրողությունների հանդեպ: Այն տեղի է ունենում, երբ մենք ավելի ոգեշնչվում ենք բնական, քան աստվածային իրողություններով:

Քաղցը ձեր հոգևոր ջերմաչափն է: Մտածե՛ք այս մասին բնական տեսանկյունից: Ինչն է մարդը կորցնում առաջին հերթին, երբ հիվանդանում է: Պատասխանն է՝ ախորժակը: Եթե երբևէ հարբուխով հիվանդացել եք, կհիշեք... դուք պարզապես չեք ուզում ոչինչ ուտել: Մտածե՛ք այն հիվանդների մասին, որոնք մահացու հիվանդությունների վերջին փուլում են. նրանք երեսուն-երեսունհինգ կիլոգրամ քաշ են կորցնում և ներերակային սնուցման կարիք ունեն: Հիվանդ մարդիկ գրեթե կամ բոլորովին չեն ուզում ուտել: Դուք լսած կլինեք, երբ ասում

են. «Նա առողջ ախորժակ ունի»: Այդպես է նաև հոգևոր առումով. հոգևոր առողջության նշանը ախորժակն է Աստծո Խոսքի հանդեպ: Հոգևոր հիվանդության նշանը ախորժակի կորուստն է աստվածային իրողությունների հանդեպ:

Ես շփվել եմ ծառայողների հետ, որոնք ավելի ոգեշնչվում են՝ խոսելով իրենց եկեղեցու շենքի կառուցման ծրագրի, նոր մեքենայի, սպորտային թիմերի և այլ թեմաների մասին, քան՝ աստվածային իրողությունների: Երբ կիսվում եք Տիրոջ մասին կամ պատմում եք, թե ինչ է Նա խոսել ձեր սրտին, նրանք այնպես են արձագանքում, ասես դուք դատարկաբանությամբ եք զբաղված: Նրանք խանդավառվում են, երբ խոսում են իրենց նոր տան մասին, որը վերջերս են կառուցել: Ես հետևում եմ նրանց երկրպագության ժամանակ. նրանք իրենց շուրջն են նայում, խոսում են կողքինների հետ կամ վերանայում են իրենց քարոզի նշումները, փոխարենը բարձրացնեն ձեռքերը և կենտրոնանան Նրա վրա, Ով պետք է անչափ թանկ լինի իրենց համար: Սա ընդամենը ավելի խորը խնդրի ախտանշան է:

Ես նկատել եմ, որ այսպիսի եկեղեցիներում չկա Աստծո ներկայությունը: Երբ ապաշխարության կոչ եմ անում և հրավիրում եմ մարդկանց մոտենալ Աստծուն, Սուրբ Հոգին գալիս է, և նրանք զարմանում են: Նրանք կա՛մ հիշում են, թե որտեղից են ընկել, կա՛մ խույս են տալիս՝ համարելով դա մեր ծառայությանը հատուկ պարգև: Ոմանք նույնիսկ հակառակվում են, երբ դա տեղի է ունենում: Ամեն դեպքում, եթե նրանցում գոնե աննշան ցանկություն կա, Աստծո ներկայությունը կրկին բորբոքում է նրանց քաղցը:

Եսային ասում է. «Առկայծող պատրույգը չի հանգցնի» (Եսայի 42.3): Այս պնդումը բառացիորեն լամպի սպառվող պատրույգի մասին է, երբ յուղը գրեթե վերջանում է, և կրակի լեզուն վերածվում է ծխի նոսր, չքացող գոլորշու: Նա խոսում է տկար, նվազ, թույլ, անզոր և բեկուն վիճակի մասին: Նա չի հանգցնի մարմրող պատրույգը, այլ կփչի դրա վրա՝ կրկին կրակ բորբոքելով: Հիշեք՝ Նա շարունակում է հետամուտ լի-

նել մեզ, նույնիսկ երբ մենք ընդամենը ծխացող պատրույգ ենք: Որքա՜ն ավելի լավ կլինի, եթե մենք համագործակցենք Նրա հետ և արձագանքենք Նրան, քանի որ Նա չի հարկադրի Իր ներկայությունը մեր կյանքում:

Ես շատ հաճախ եմ տեսնում սա: Տեսել եմ, որ Տերը կրկին բորբոքել է հանգչելու եզրին գտնվող կրակը շատերի կյանքում: Եկեղեցիներում և համաժողովներին մարդիկ մշտապես ասում են ինձ, որ իրենք նույնիսկ չէին գիտակցում իրենց անկումը, քանի դեռ կրակը կրկին չէր բորբոքվել, և Նրան փնտրելու ցանկությունը կրկին չէր բռնկվել: Նրանք գիտակցեցին, որ չէին հսկել իրենց սրտերը և կորցրել էին առողջ սրտին հատուկ ախորժակը:

ՀՍԿԵ՛Ք ԱՅՆ, ԻՆՉ ԱՄԵՆԻՑ ԹԱՆԿ Է

Աստծո Խոսքը պատվիրում է մեզ. «Ամեն ինչից առավել հսկի՛ր քո սիրտը» (Առակ. 4.23, NIV): Չկա ավելի կարևոր բան՝ պահպանելու, հսկելու և պաշտպանելու համար: Խորհելով այս խոսքերի շուրջ, ես մտածում եմ այն մասին, թե ինչպես են մարդիկ պաշտպանում թանկարժեք իրերը: Բոլորս ենք տեսել չկոտրվող ապակու ծածկի ներքո ցուցադրվող թանկարժեք քարեր: Ցուցասրահը վերահսկվում է անվտանգության համակարգով, որը զգայուն է քաշի և ջերմաստիճանի ցանկացած փոփոխության հանդեպ: Նույնիսկ ամենաթեթև տատանման դեպքում ազդանշաններ կմիանան, և դռները կկողպվեն: Ցուցասրահում միացված է հսկողության համակարգ՝ ինֆրակարմիր ճառագայթներով, որոնք հատելու դեպքում զինված մարդիկ անմիջապես կներխուժեն այդ տարածք: Ցուցասրահը վճարում է անվտանգության աշխատողներին, որոնք հսկում են այդ առարկաները օրը 24 ժամ և շաբաթը 7 օր: Ծախսվում են հազարավոր դոլարներ՝ *քարի մի կտոր* հսկելու և պաշտպանելու համար:

Աստված ասում է մեզ, որ ամենից թանկարժեք ունեցվածքն այս աշխարհում մեր սրտերն են, ոչ թե քարերը: Այնուամե-

նայնիվ, հավատացյալները տալիս են իրենց սրտերն այնպիսի բաների, որոնք ոչ միայն օգուտ չեն բերում, այլև վնաս են հասցնում: Մենք պատրաստ ենք դիտել և ընթերցել գրեթե ամեն ինչ, որտեղ չկան չափից դուրս մերկություն և հայհոյանքներ: Այդ ամենի մեջ չենք նկատում այս աշխարհի հոգուն, որը թշնամության մեջ է Աստծո Հոգու հետ: Այնուամենայնիվ, այս աշխարհի մարդիկ ավելի իմաստուն են այս հարցում, քանի որ նրանք ջանասիրաբար պահպանում են այն, ինչն ամենից ավելի են արժևորում, այնինչ հավատացյալներն այն աստիճան անփույթ են, որ, ապրելով այս աշխարհում, չեն պաշտպանում իրենց սրտերը այն կրքերից և ցանկություններից, որոնք գողանում են իրենց քաղցը միակ Անձնավորության հանդեպ, Ով կարող է ճշմարտապես հագեցնել իրենց:

Տերը «կշտացնում է կարոտած անձին և լցնում է սոված անձը բարությամբ» (Սաղմ. 107.9): Նա սպասում է, որ հագեցնի մեզ, սակայն Նրա բարությունը չի հագեցնի մեզ, եթե արդեն իսկ լցված ենք այլ բաներով: Եկեք պահենք մեր սրտերը քաղցած վիճակում և թեթևորեն չվերաբերվենք մեզ ուղղված Նրա կանչին: Որովհետև Նա խոստացել է, որ երբ մոտենանք Իրեն, Նա կմոտենա մեզ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Առակաց 27.7-ում գրված է. «Կուշտ անձը կոխ է տալիս մեղրախորիսխը»: Մտորելով այս խոսքի շուրջ, ինչպիսի՞ հոգսերի, ցանկությունների և հաճույքների համար եք առավել խոցելի: Ի՞նչ կերպով են դրանք թուլացնում ձեր քաղցը Աստծո հետ հաղորդակցվելու «քաղցր մեղրախորսխի» հանդեպ:

2. Այս գլխում հեղինակը պատմում է իր դիտարկումները քսան տարեկանից ցածր և բարձր մարդկանց մասին երկու տարբեր եկեղեցիներում՝ խոսելով նրանց ջերմեռանդության կամ Աստծո հանդեպ քաղցի մասին: Դի-

տարկելով ձեր եկեղեցու կյանքը՝ ինչպե՞ս կբնութագրեիք ձեր հոգևոր ընտանիքի ախորժակը. հագեցա՞ծ, քաղցա՞ծ, թե՞ անտարբեր:

3. Հաշվի առնելով Առակաց 4.23-ի՝ «Ամեն ինչից առավել հսկի՛ր քո սիրտը» հորդորը, ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել այսօր, որպեսզի պաշտպանեք ձեր սիրտը: Արդյո՞ք կա որևէ «անառողջ հոգևոր սնունդ» ձեր սննդակարգում, որը պետք է հեռացնել կամ փոխարինել այլ բանով:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՁԳՏՈՒՄ ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆԸ

Մենք լսում ենք Աստծո կողմից ասված Խոսքը,
երբ Նրա ներկայության մեջ ենք:

Իմ ծառայության ավելի քան քսան տարվա ընթացքում քարոզել եմ Աստծո Խոսքը բոլոր աշխարհամասերում գտնվող եկեղեցիներում և համաժողովներին՝ բացի Անտարկտիկայից: Ես արտոնություն եմ ունեցել լինելու երկու եկեղեցիների աշխատակազմերում՝ ընդհանուր առմամբ յոթ տարում, մինչև լրիվ ժամանակով շրջիկ քարոզիչ դառնալը: Ամբողջ այս ընթացքում բացահայտել եմ երկու խոշոր խումբ եկեղեցու ներսում, և թվում է՝ նրանց տարբերվող մտածելակերպերը շարունակ ավելի են հեռվանում, որքան որ մոտենում է Տիրոջ գալուստը: Առաջին խմբի մարդիկ փնտրում են Աստծուն՝ Նրա կարողության համար. երկրորդ խմբի մարդիկ փնտրում են Աստծուն՝ Նրա Անձի համար:

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Մենք տեսնում ենք այս հակադրությունը Մովսեսի և Իսրայելի ժողովրդի միջև: Ավելի խորը ուսումնասիրենք այն: Իսրայելը հուսահատորեն ցանկանում էր ազատվել կեղեքումից, և ժողովուրդն աղաղակեց Աստծուն՝ ընդունելով Նրան որպես իրենց Փրկչի: Աբրահամի այս ժառանգներին կարելի էր համեմատել այն խմբի հետ, որը փնտրում է Աստծուն՝ Նրա կարողության համար: Եկեղեցում կան մարդիկ, որոնք չեն ցանկանում կրել այս աշխարհի համակարգի գերությունը. այնուամենայնիվ, նրանք անգիտակցաբար դեռևս գերիներ են: Նրանք դավանում և ընդունում են Հիսուսին որպես Տեր՝ փրկություն և մատակարարում սպասելով Նրանից: Այնուամենայնիվ, ինչպես և Իսրայելի զավակների դեպքում, նրանց սիրտը բացահայտվում է իրենց որոշումներով, արարքներով, խոսքերով և աշխարհիկությամբ:

Իսրայելը մի քանի հարյուր տարի հառաչում էր՝ Աստծուց ազատություն խնդրելով: Աստված հայտնվեց Մովսեսին և ասաց, որ եկել է ժամանակը, և տվեց Իր Խոսքը՝ իրագործելու համար: Մինչև փարավոնի մոտ գնալը Մովսեսը հանդիպեց Իսրայելի երեցներին և ազդարարեց Աստծո խոստումը փրկության մասին: Լսելով այդ բարի լուրը՝ նրանք «շուտով համոզվեցին, որ Տերն էր ուղարկել Մովսեսին և Ահարոնին: Եվ երբ նրանք գիտակցեցին, որ Տերը տեսել է իրենց թշվառությունը և խորապես մտահոգված է իրենցով, բոլորը խոնարհեցրին գլուխները և երկրպագեցին» (Ելից 4.31, NLT):

Պատկերացրեք այդ հավաքույթին տիրող զգացմունքները: Ամբողջ կյանքում այդ առաջնորդները լսել էին Աստծուց եկող փրկչի մասին: Խոստացված հույսը ազատության, նաև կաթ ու մեղր բխող երկրի մասին, փոխանցվել էր նրանց իրենց հայրերից և պապերից: Նրանց աչքերի առջև իրենց ծերերը ապրել էին, մահացել էին և այդպես էլ չէին տեսել դա: Այդ առաջնորդներին տանջում էր միևնույն հարցը. «Մենք կտեսնե՞նք դա մեր

կյանքի ընթացքում, թե՞ կմահանանք մինչև այդ խոստման կատարվելը»: Այժմ նրանց միջև էր Եգիպտոսի նախկին արքայազնը՝ կրթված առաջնորդ, որը կարող էր հրաշքներով հաստատել, որ Աստծո ձեռքն իր վրա էր: Նա, ով պետք է իշխեր իրենց, փրկելու էր իրենց: Միայն Աստված կարող էր նման հրաշք գործել: Նրանց սրտերը համակված էին ուրախությամբ: Նրանք միայն կարող էին փառք տալ Աստծուն՝ երկրպագելով և գոհանալով:

Հեռանալով նրանցից՝ Մովսեսը հանդիպեց փարավոնին: Բայց Եգիպտոսի առաջնորդն այնքան էլ չտպավորվեց Աստծո փրկարար խոսքով: Նա արհամարհեց Մովսեսին և Աբրահամի ժառանգներին և ծանրացրեց նրանց բեռը դաժան աշխատանքային պահանջներով, որոնք գրեթե անկարելի էր կատարել: Ամեն ինչ արագորեն փոխվեց: Նույն առաջնորդները քննադատեցին Մովսեսին և սկսեցին տրտնջալ նրա դեմ: Նրանց երկրպագությունը մոռացվեց. նրանք այն աստիճան վհատվեցին և հիասթափվեցին Մովսեսից, որ դատաստան կանչեցին նրա վրա (տես Ելից 5.21):

Այնուամենայնիվ, չնայած դրան, որոշ ժամանակ անց Աստված Իր ողորմությամբ ազատեց նրանց՝ բազում հրաշքներով և նշաններով: Երբ փարավոնը վերջապես թույլ տվեց նրանց գնալ, կրկին դիրքորոշման կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ. նրանք համակվեցին ուրախությամբ և դուրս եկան մեծ փառքով և օրհնություններով: Պատկերացրեք այդ ազատության մթնոլորտը. նրանք պարում էին Եգիպտոսից դուրս գալիս՝ վայելելով Աստծո բարությունը և հավատարմությունը: Բացի ազատությունից, նրանք առատորեն ստացան ոսկե և արծաթե թանկարժեք իրեր, նաև առողջություն և ուժեր, որոնք փոխանցվեցին նրանց Զատկի գառն ուտելիս: Բացի այն, որ այդ նախկին ստրուկները շնորհակալ էին Աստծուց, նրանց վստահությունը Մովսեսի հանդեպ ավելին էր, քան երբևէ:

Անմիջապես Եգիպտոսից դուրս գալուց հետո Աստված

պատվիրեց Մովսեսին առաջնորդել ժողովրդին դեպի Կարմիր ծովի ափը: Ետ նայելով՝ նրանք տեսան, որ փարավոնը իր զորքով հետապնդում էր իրենց: Տեղի ունեցավ դիրքորոշման ևս մեկ զգալի փոփոխություն: Նրանք կրկին դառնորեն տրտնջացին և քննադատություններով գրոհեցին Մովսեսի վրա. «Մի՞թե Եգիպտոսում գերեզմաններ չկային, որ մեզ բերիր անապատի մեջ մեռնելու: Սա ի՞նչ է որ մեզ արիր, որ մեզ Եգիպտոսից հանեցիր: Սա այն խոսքը չէ՞, որ քեզ ասում էինք Եգիպտոսում, թե՝ թո՛ղ տուր մեզ, որ եգիպտացիներին ծառայություն անենք: Որովհետև *ավելի լավ է մեզ համար* եգիպտացիներին ծառայություն անել, քան թե անապատում մեռնել» (Ելից 14.11,12, *շեղագիրը հեղինակինն է):* Եգիպտոսում, երբ ամեն ինչ վատ էր, նրանք հորդորում էին Մովսեսին հանգիստ թողնել իրենց. այժմ նրանք կրկին դժգոհ էին իրենց անձեռնահաս առաջնորդից և կրկնում էին իրենց բողոքը: Նրանք կարծում էին, թե տրտնջում էին Մովսեսի և Ահարոնի դեմ, սակայն Մովսեսն ասաց նրանց. «Ձեր տրտունջը մեր դեմ չէ, այլ՝ Տիրոջ դեմ» (Ելից 16.8): Նրանց ձգտումը սեփական շահին՝ գերազանցում էր Աստծո կամքը կատարելու ցանկությունը: Ուշադրություն դարձրե՛ք *«ավելի լավ է մեզ համար»* բառերին: Նրանցում չկար Աստծո սիրտը ճանաչելու կրակոտ ցանկություն. նրանք սիրում էին միայն իրենց կյանքը:

Աստված ևս մեկ անգամ ողորմած գտնվեց՝ կիսելով Կարմիր ծովը և անցկացնելով նրանց չոր գետնով: Դրանից հետո Աստված ջրի տակ թաղեց աշխարհի ամենից ազդեցիկ բանակը՝ նրանց, որոնք չորս հարյուր տարի շարունակ կեղեքում էին Իսրայելը: Այժմ նրանք լիառատ կերպով ցնծո՛ւմ էին: Նրանք ուրախացան և պարեցին Տիրոջ առջև: Գրված է. «Դրանից հետո Մարիամ մարգարեուհին՝ Ահարոնի քույրը, դափ վերցրեց իր ձեռքը, և բոլոր կանայք հետևեցին նրան՝ դափերով և պար բռնելով» (Ելից 15.20): Կարո՞ղ եք պատկերացնել ութ հարյուր հազարից մեկ միլիոն կանանց, որոնք պարում են և դափ են

զարկում: Ինչպիսի՜ փառաբանության ծառայություն: Նրանք երբեք այդքան ուրախ չէին եղել: Այնուամենայնիվ, դա կարճ տևեց, մինչև որ ընդամենը երեք օր անց ջուրը վերջացավ: Նրանք կրկին դառնորեն տրտնջացին, և Աստված կրկին մատակարարեց:

Անցավ ևս մի քանի օր, և այս անգամ խնդիրը կերակուրն էր: Նրանք գանգատվեցին. «Երանի՜ թե Տիրոջ ձեռքով մեռած լինեինք Եգիպտոսի երկրում, երբ որ մսի կաթսաների մոտ նստած էինք և կուշտ հաց էինք ուտում, որովհետև մեզ այս անապատը հանեցիք, որ ամբողջ այս ժողովքը սովածությունից մեռցնեք» (Ելից 16.3):

Դուք տեսնո՞ւմ եք այս հաջորդականությունը: Նրանք երջանիկ և գոհացող էին, քանի դեռ Աստված անում էր իրենց ուզածը՝ իրենց ուզած ժամանակին, և դժգոհ էին, երբ Աստված չէր անում իրենց ուզածը՝ իրենց ուզած ժամանակին: Նրանց հիմնական շարժառիթը բացահայտվում էր նրանց վարքից և խոսքերից՝ այն ժամանակ, երբ գտնվում էին ճնշման ներքո. նրանք մտածում էին միայն իրենց մասին: Նրանց ցանկություններն ավելի կարևոր էին իրենց համար, քան Աստծո սրտի ցանկությունները և Նրա ներկայությունը:

ՄՈՎՍԵՍԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Այդ ամենը կրկնվեց, մինչև որ Աստված հոգնեց դրանից: Նա ասաց Մովսեսին.

> «Վե՛ր կաց այստեղից՝ դու և այն ժողովուրդը, որ Եգիպտոսի երկրից հանեցիր, և գնա՛ այն երկիրը, որի համար երդում արի Աբրահամին, Իսահակին և Հակոբին՝ ասելով. «Քո սերնդի՛ն պիտի տամ այն»: Եվ քո առջև մեկ հրեշտակ կուղարկեմ և դուրս կանեմ քանանացուն, ամորհացուն, քետացուն, փերեզացուն, խևացուն և հեբուսացուն կաթ ու մեղր բխող երկիրը, որովհետև Ես

> ձեր մեջ վեր չեմ գնա, նրա համար, որ դու մի խստապարանոց ժողովուրդ ես. միգուցե քեզ ճանապարհին բնաջինջ անեմ» (Ելից 33.1-3):

Աստված ասաց Մովսեսին, որ նա կարող էր առաջնորդել այդ ժողովրդին Խոստման երկիր, որին նրանք անչափ երկար էին սպասել, և որ Ինքը նույնիսկ ընտիր հրեշտակ կուղարկեր նրանց առջևից՝ նրանց թշնամիներին վտարելու համար, որպեսզի երկիրը նրանցը լիներ. այնուամենայնիվ, Ինքը (Իր ներկայությունը) նրանց հետ չէր գնալու:

Լավ է, որ Աստված ասաց դա Մովսեսին, քանի որ եթե Նա առաջարկեր Իսրայելի զավակներին, նրանք ուրախությամբ կհամաձայնեին, խնջույք կանեին և ճանապարհ կընկնեին: Ինչո՞ւ եմ այսպես կարծում: Մտածե՛ք այս մասին. եթե նրանք պատրաստ էին Եգիպտոս վերադառնալ՝ առանց որևէ հրեշտակի և առանց Աստծո, միայն որպեսզի փախչեին անապատի անհարմարավետությունից, ես համոզված եմ, որ կընտրեին Խոստման երկիրը՝ հրեշտակի հետ: Այնուամենայնիվ, լսե՛ք Մովսեսի պատասխանն Աստծո առաջարկին.

> «Եթե Քո երեսը (կամ՝ Քո ներկայությունը) մեզ հետ չգնա, մեզ այստեղից մի՛ հանիր» (Ելից 33.15):

Մենք պետք է հիշեցնենք մեզ, թե որտեղ էր «այստեղ»-ը: Նրանք անապատում էին՝ նեղության վայրում, հարմարավետությունից և վայելքներից զուրկ երկրում: Նրանք առատություն չունեին. ընդամենը լրացվում էին նրանց ամենօրյա կարիքները, և նույնիսկ դա գերբնական ձևով էր տեղի ունենում: Այդտեղ չկային պարտեզներ, բնական պաշարներ և անվտանգություն: Չկային տներ, գետեր, խաղողի այգիներ, դաշտեր և պտղատու ծառեր, որոնցից կարելի էր սնվել: Չկային խանութներ, հանգստի և ժամանցի հնարավորություններ (եթե դուք այնպիսի մարդ չեք, որին դուր է գալիս դիտել, թե ինչ-

պես են օձերը խայթում իր սիրելիներին): Շրջապատող ամեն ինչ անջրդի և միօրինակ էր: Այդ վայրում ոչ մի գեղեցիկ բան չկար, սակայն Մովսեսը պնդեց. «Ավելի լավ է՝ վերապրեմ Քո ներկայությունն այս անցանկալի և անհարմարավետ վայրում, քան լինեմ առատություն և գեղեցկություն ունեցող երկրում՝ առանց Քո ներկայության»:

Ո՞րն էր նրա սրտի աղաղակը. Աստծո ներկայությունը: Նա ցանկանում էր անձամբ Տիրոջը՝ ավելի, քան Նրա խոստացած օրհնությունները: Նա բարձր էր գնահատում մտերմությունն Աստծո հետ՝ ավելի, քան ցանկացած գանձ, որ Աստված կարող էր տալ իրեն: Այս վերաբերմունքն առանձնացնում էր Մովսեսին Իսրայելի զավակներից: Նրանք փնտրում էին Աստծուն՝ Նրա կարողության համար, այնինչ Մովսեսը փնտրում էր Աստծուն՝ Նրա Անձի համար: Այս շարժառիթը մինչև օրս երկու խմբի է բաժանում հավատացյալներին, և այս բաժանումը գերազանցում է հարանվանական սահմանները: Կան մարդիկ, որոնք չգիտեն, որ կարելի է փնտրել Աստծուն ավելիի համար, քան Նրա պաշտպանությունը, մատակարարումը և առաջխաղացումը, որ իրենք կարող են անձնապես հաղորդակցվել Նրա հետ և մտերմորեն ճանաչել Նրան: Ինչո՞վ է սա տարբերվում այն կնոջ վերաբերմունքից, որն ամուսնանում է փողի համար: Նա չի ամուսնանում իր ամուսնու անձի համար, այլ՝ նրա կարողության համար: Այդպիսի միության մեջ երկուսն էլ տուժում են, քանի որ նման շարժառիթի դեպքում անկարելի է մտերմություն կառուցել:

ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Ես այցելել եմ աշխարհի ամենագեղեցիկ վայրերից մի քանիսը և տեսել եմ անզուգական ճոխությամբ տներ և շինություններ, որոնք ոչինչ չարժեն ինձ համար, քանի որ դրանցում չկա Աստծո ներկայությունը: Ես եղել եմ նաև ոչ հաճելի վայրերում, օրինակ՝ բանտերում, զարգացող երկրներում և այնպի-

սի տներում, որոնցում չկային շատ ցանկալի բաներ, սակայն լցված էին Աստծո ներկայությամբ: Ես անկեղծորեն կարող եմ ասել, որ կգերադասեմ լինել այդ դժվարին և անհարմարավետ վայրերում, որտեղ Աստծո Հոգին է բնակվում, քան ապարանքներում, որոնք լցված են գանձերով, սակայն զուրկ են Աստծո ներկայությունից:

Ես արտոնություն եմ ունեցել թենիս խաղալու Միացյալ Նահանգների «Ուսանողական սպորտաձևերի ազգային ասոցիացիայի» Առաջին դիվիզիոնի կազմում և «Պատանեկան Դեվիսի գավաթի» մրցաշարերում, նաև հաղթելու մեր նահանգի առաջնությունը: Ես ստացել եմ ուսանողական մրցանակներ, հասարակական կարգավիճակ, իմ հասակակիցների, մարզիչների և ղեկավարների հարգանքը: Ես ժամադրել եմ գեղեցիկ, հայտնի աղջիկների: Մարդիկ ոչ միայն ցանկանում են այդ ամենը, այլև ամբողջ սրտով ձգտում են դրան: Իրականում, այդ փառքը և հաճույքը միասին նույնիսկ աննշան կերպով չի կարող համեմատվել Աստծո ներկայության ընդամենը երեսուն վայրկյանի հետ: Այս երկուսն անկարելի է համեմատել: Լսե՛ք, թե ինչպես է Աստվածաշունչը նկարագրում Մովսեսին.

> «Հավատքով՝ Մովսեսը, երբ որ մեծացավ, չկամեցավ փարավոնի աղջկա որդի կոչվել: Ավելի լավ համարեց Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան թե միաժամանակ մեղքի զվարճությունն ունենալ՝ ավելի մեծ հարստություն համարելով Քրիստոսի նախատինքը եգիպտացիների հարուստ գանձերից, որովհետև աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը: Հավատքով թողեց նա Եգիպտոսը՝ չվախենալով թագավորի բարկությունից, որովհետև համբերեց՝ Անտեսանելուն տեսնողի պես» (Եբր. 11.24-27):

Ուշադրություն դարձրեք, որ նա ընտրեց չարչարվելը: Նրա կարգավիճակը տարբերվում էր Իսրայելի զավակների կար-

գավիճակից. նրանք ընտրություն չունեին: Այնուամենայնիվ, նրանք տրտնջում էին, իսկ նա՝ ոչ: Իր իսկ կամքով նա թողեց լավագույնը, որ այս աշխարհը կարող էր առաջարկել, և բարձրագույն կարգավիճակը, որին մարդը կարող էր հասնել: Ինչո՞ւ: Նա ձգտում էր այլ վարձատրության: Նրա վարձատրությունը Խոստման երկիրը չէր, այլ՝ Նրա ներկայության խոստումը: Մորենու մոտ միայն մեկ հանդիպումից հետո այն ամենը, ինչ նա ցանկանում էր, Աստծուն մտերմորեն ճանաչելն էր:

Ես քարոզել եմ հազարավոր համաժողովներին և եկեղեցիներում, ծառայել եմ միլիոնավոր մարդկանց՝ հեռուստատեսության և գրքերի միջոցով: Աստված օրհնել է մեզ այնպես, որ ես նույնիսկ չէի կարող պատկերացնել: Այնուամենայնիվ, եթե ես ընտրության առջև կանգնեի, առանց վարանելու կփոխեի այն ակնհայտ հաջողությունը, որը Նա տվել է, Նրա հայտնված ներկայության հետ: Չկա որևէ բան, որ կարելի է համեմատել դրա հետ: Այն զգացողությունը, որ Նա մոտ է, և Նրա ձայնը լսելը, երբ Նա շշնջում է այնպիսի բաներ, որոնք երբեք հայտնի չեն եղել իմ սրտին, ավելին է, քան բազմություններին քարոզելը և միլիոնավոր գրքեր վաճառելը: Նրա ներկայության փառքը ավելին է, քան ցանկացած բան:

Իմ սիրտը ցավում է, երբ տեսնում եմ, որ ծառայողները ձգտում են հաջողության՝ հավատալով, որ դրանում բավականություն են գտնելու: Նրանց անխոս նպատակը մարդկանց կողմից գնահատվելը և ճանաչվելն է: Ես տեսել եմ, որ նրանք, ովքեր ձգտում են հայտնի և հաջողված դառնալ՝ ծառայողական ձեռքբերումների միջոցով, ընկել են հուսահատության գիրկը, իսկ հետո՝ խավարի ծուղակը: Նրանք կառուցել են մեծ ծառայություններ, սակայն հայտնվել են անբարոյության մեջ կամ ագահության ծուղակում, մինչև որ հասկացել են, թե որքան դատարկ է այդ ամենը:

Ես տեսել եմ շատերին, որոնք այդպես էլ չեն հասել առաջինների հաջողությանը, սակայն ավարտել են իրենց ընթաց-

քը նույն ողբերգական ձևով: Նրանք հուսալքվել են, քանի որ այդպես էլ չեն կարողացել կառուցել այնպիսի եկեղեցի, որտեղ կլիներ երկու հարյուրից, հինգ հարյուրից, հազարից կամ հինգ հազարից ավելի մարդ, կամ հասնել այլ նպատակների, որոնց սրտանց ձգտել են: Նրանց գրքերի վաճառքն այդպես էլ չհասավ իրենց սպասված թվերին, և նրանց այդպես էլ չհրավիրեցին «մեծ» համաժողովների, որտեղ նրանք ցանկանում էին քարոզել: Նրանք բավականություն էին փնտրում այնտեղ, որտեղ այն անկարելի է գտնել: Սա ոչնչով չի տարբերվում գործարար աշխարհում կարգավիճակի և ձեռքբերումների ձգտելուց: Այս հավատացյալները չեն հասկանում, թե իրականում ինչի համար են ստեղծվել:

Ի հակադրություն, ես հանդիպել եմ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց, որոնք մեծ ծառայություններ են ղեկավարում և հաջողված են, սակայն նրանց սրտերում Աստծուն ավելի շատ ճանաչելու փափագ կա: Նրանք կիսվել են, որ ուրախությամբ կթողնեն այդ ամենը և կլինեն այլ ծառայության մեջ կամ բոլորովին այլ բանով կզբաղվեն, եթե Աստված կամենա: Նրանցից շատերը երբեք չեն ձգտել այն դիրքին, որն այսօր զբաղեցնում են, և որից բոլորովին չեն կառչում: Նրանք խոստովանում են, որ գիտեն՝ Աստված է կարգել իրենց այդտեղ, և իրենց ցանկությունը միայն Նրան հաճեցնելն է: Ես լսել եմ նրանց սրտի աղաղակը մեր զրույցների ընթացքում և տեսել եմ դա նրանց գործերով. նրանք նման են Դավթին, որը մեծ հաջողության էր հասել, սակայն աղքատ և խեղճ մարդ էր անվանում իրեն:

Ես նույնպես հանդիպել եմ այնպիսի մարդկանց, որոնց ծառայությունները փոքր են եղել՝ նախորդների համեմատ, սակայն նրանք խաղաղությամբ և օրհնությամբ են ապրել, քանի որ իմացել են, որ կատարել են այն, ինչի համար կանչված են եղել: Նրանց ձգտումը ոչ թե թվերը կամ արտաքին հաջողությունն էր, այլ՝ Աստծուն մտերմորեն ճանաչելը և Նրա հայտնված ներկայության մեջ վարվելը: Սա պետք է վերաբերի յուրաքանչյուրին: Բոլորս ստեղծվել ենք Աստծո համար, և ոչ

ոք երբևէ չի գտնի ճշմարիտ բավականություն՝ առանց Նրան ճանաչելու և առանց Նրա ներկայության մեջ վարվելու: Ահա թե որտեղ է ճշմարիտ խաղաղությունը և բավականությունը:

ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ

Այս պահին պետք է սահմանենք Աստծո ներկայության երկու տեսակ, որոնք տեսնում ենք Աստվածաշնչում: Առաջինը Նրա *ամենագոյությունն* է: Դավիթը խոսում է այս մասին, երբ գրում է. «Ո՞ւր գնամ Քո Հոգուց և Քո երեսից ո՞ւր փախչեմ» (Սաղմ. 139.7): Ամենագոյությունը նկարագրում է Նրա ամենուրեք լինելը: Դավիթը շարունակում է. «Եթե բարձրանամ երկինք, Դու այնտեղ ես. եթե իջնեմ մահացածների վայրը, Դու այնտեղ ես... Ես կարող էի խնդրել խավարին թաքցնել ինձ, և իմ շուրջը գտնվող լույսին՝ գիշեր դառնալ, բայց նույնիսկ խավարի մեջ ես չեմ կարող թաքնվել Քեզնից: Քեզ համար գիշերը ցերեկվա պես լույս է տալիս: Խավարը և լույսը՝ երկուսն էլ նույնն են Քեզ համար» (խոսք 8,11,12, NLT): Այս հատվածը ներկայացնում է Տիրոջ խոստումը մեզ երբեք չթողնելու և չլքելու մասին (տե՛ս Եբր. 13.5): Թեև մենք չենք կարող զգալ այս ներկայությունը, դա չի ժխտում այն փաստը, որ Նա ներկա է: Մենք պարզապես տեղյակ չենք այդ մասին:

Երկրորդը, որը Սուրբ Գիրքը սահմանում է, Նրա *հայտնված ներկայությունն* է: Տիրոջ հայտնված ներկայությունն այն էր, ինչ Մովսեսը ջերմեռանդորեն ցանկանում էր: Այս ժամանակ է, որ Տերը ոչ միայն հայտնում է Իրեն մեր հոգուն, այլև մեր միտքը և զգայարանները նույնպես տեղյակ են լինում Նրա մոտ լինելու մասին: Այս ժամանակ է, որ գիտելիքը Նրա մասին հայտնվում է մեր մտքին: Հիսուսը նկատի ուներ հենց այս ներկայությունը, երբ ասաց.

> «Ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան»
> (Հովհ. 14.21):

Սաղմոսերգուն խոսում է այս մասին՝ հռչակելով. «Երանի՜ այն ժողովրդին, որը սովորել է գովաբանել Քեզ, որը քայլում է Քո ներկայության լույսի մեջ, ո՜վ Տեր» (Սաղմ. 89.15, NIV): Պետրոսը հորդորեց հոգևոր քաղց ունեցող մարդկանց, որոնք հարցնում էին իրեն Պենտեկոստեի օրը. «Ուրեմն զղջացեք և ե՛տ դարձեք, որ ձեր մեղքերը ջնջվեն, որ Տիրոջ *երեսից* (կամ՝ *ներկայությունից)* հանգստանալու ժամանակները գան» (Գործք 3.19, *շեղագիրը հեղինակինն է):*

Աստված կարող է հայտնել Իր ներկայությունը տարբեր կերպերով: Աստվածաշնչում ոմանք տեսան Նրան, մյուսները լսեցին Նրա ձայնը՝ առանց Նրան տեսնելու, ուրիշները զգացին Նրա մոտ լինելը և անմիջապես իմացան այնպիսի բաներ, որոնք նախկինում չգիտեին՝ Նրա հայտնության շնորհիվ: Բայց մեկ բան հաստատ է. երբ Նա գալիս է, դուք գիտեք այդ մասին. դուք կզգաք Նրան ձեր էության խորքում և կիմանաք, որ Նա ներկա է:

ՓՆՏՐԵԼ ՏԻՐՈ՞ՋԸ, ԹԵ՞ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ես տեսել եմ մարդկանց, որոնք եռանդագին ձգտել են վերապրել Նրա ներկայությունը, սակայն մոլորվել են: Նրանք փնտրել են դրսևորում, ոչ թե Տիրոջ Անձը: Աստված անցավ Եղիայի կողքով, և մի շարք մեծ դրսևորումներ տեղի ունեցան: Առաջինը՝ մեծ և ուժգին քամի սկսվեց, բայց Տերը քամու մեջ չէր: Հաջորդը՝ երկրաշարժ տեղի ունեցավ, բայց Աստվածաշունչը պարզ ասում է, որ Նա երկրաշարժի մեջ չէր: Ապա կրակ եղավ, բայց կրկին, Նա կրակի մեջ չէր: Կրակից հետո մեղմ ու բարակ ձայն էր. այդ ժամանակ էր, որ Եղիան հասկացավ, որ անձամբ հանդիպեց Տիրոջ ներկայությանը:

Ես տեսել եմ մարդկանց, որոնք դրսևորումներ են փնտրել՝ կարծելով, թե դրսևորումների միջոցով կգտնեն Աստծուն, փոխարենը փնտրեն Տիրոջը իրենց սրտում և, որպես արդյունք, վերապրեն Նրա հայտնված ներկայությունը: Հաճախ, Աստծուց ոգեշնչված և սրտերին հպվող ուղերձ քարոզելուց հե-

տո, ես առջև եմ հրավիրում մարդկանց՝ Աստծուն հանդիպելու համար: Երբեմն ոմանք այնպես են աղոթում, որ խանգարում են, շեղում են կամ հակառակ են գնում այն բանին, ինչ տեղի է ունենում այդ մթնոլորտում: Մյուսները ծիծաղում են, ցնցվում են կամ այլ տեսակի ժեստեր են անում: Պատճառն այն է, որ մի ժամանակ նրանք փնտրել են Աստծուն և ցնցվել են, լաց են եղել կամ ծիծաղել են Նրա ներկայության մեջ. այնպես որ, այժմ նրանք ենթագիտակցորեն անում են նույնը՝ հույս ունենալով, որ Աստված կգտնվի այդ դրսևորումների մեջ, բայց Նա դրանցում չէ: Հաճախ ես հանդարտեցնում եմ մարդկանց և պատվիրում եմ ոչինչ չանել, պարզապես լուռ լինել և դիմել Նրան իրենց սրտերում՝ փնտրելով Հիսուսի Անձը: Եթե ինչ-որ դրսևորում տեղի ունենա, հրաշալի է: Բայց մենք չպետք է փնտրենք Նրան դրսևորումների միջոցով: Մենք պետք է փնտրենք անձամբ Տիրոջը:

Ես հիշում եմ մի հավաքույթ Ասիայում, որի ժամանակ բազմաթիվ մարդիկ արձագանքեցին ապաշխարության կանչին: Հնարավոր չէր առաջ կանչել բոլորին, քանի որ լսարանում շատերն էին արձագանքել. այնպես որ, ես պատվիրեցի մարդկանց աղոթել և փնտրել Տիրոջը այնտեղ, որտեղ նրանք գտնվում էին: Աղոթքից հետո խրախուսեցի ներկաներին դիմել Տիրոջը: Աստծո ներկայությունը հրաշալի կերպով լցրեց այդ սրահը: Զարմանալի է տեսնելը, թե ինչպես է Նա մուտք գործում և հայտնում Իրեն: Ես շատ անգամներ եմ վերապրել դա, բայց դա երբեք հասարակ կամ սովորական չի դառնում: Հաճախ դուք կարող եք ընկալել Նրան ավելի պարզ, քան ձեզ շրջապատող մարդիկ: Հենց որ Նրա ներկայությունը եկավ, մի խումբ մարդիկ սկսեցին ծիծաղել, բայց ես տրտմություն զգացի, և այդ զգացումը հաստատվեց. շատ ավելի արագ, քան Նա եկել էր այդ դահլիճ, Նա հեռացավ, թեև մարդիկ շարունակում էին ծիծաղել և բարձրացնել իրենց ձայները, ասես Նա դեռ ներկա էր:

Ես կանգնեցրի նրանց և հանդիմանեցի՝ հասկանալով, որ նրանք պարզապես կրկնօրինակում էին այն, ինչ տեղի էր ունեցել Նրա ներկայության մեջ մի քանի ամիս առաջ, երբ մի ավետարանիչ էր եկել իրենց երկիր: Այդ ավետարանչի ծառայությունը կրում է մի երևույթի շատ ուժգին դրսևորում, որը շատերն անվանում են «սուրբ ծիծաղ»: Իհարկե, ես հավատում եմ, որ կան պահեր, երբ Աստված գալիս է, և մարդիկ ծիծաղում են: Իրականում, ես ինքս էլ վերապրել եմ դա, ինչպես և տեսել եմ մեր հավաքույթներին: Մեկ անգամ, երբ Ինդոնեզիայում էի, Աստծո Հոգին իջավ հավաքույթի ժամանակ, և երկու ժամ շարունակ իմ թարգմանիչը և ես դիտում էինք մարդկանց, որոնք այնքան ուժգին էին ծիծաղում, որ մեջքի վրա գալարվում էին: Դա սկսվեց հինգ կանանցից, որոնք արտասվում էին, և վերածվեց զվարթ ծիծաղի, որը տարածվեց ամբողջ եկեղեցական համայնքով: Նրանք երբեք նման բան չէին վերապրել. նրանք փնտրում էին Աստծուն:

Այնուամենայնիվ, այս անգամ ամեն ինչ այլ էր: Մարդկանց հայացքն ուղղված էր դրսևորմանը, ոչ թե անձամբ Տիրոջը: Նրանք այն եզրակացության էին, որ եթե չկա ծիծաղի դրսևորում, ուրեմն Աստծո ներկայությունը չի հայտնվել: Ես հաճախ եմ եղել Աստծո ներկայության մեջ և ազդեցիկ կերպով զգացել եմ Նրան, սակայն չեմ վերապրել ոչ մի արտաքին դրսևորում: Ես նաև եղել եմ Աստծո ներկայության մեջ և անվերահսկելի կերպով լաց եմ եղել, սակայն գիտակցել եմ, որ դա ընդամենը Նրան փնտրելու և Նրա ներկայության մեջ գալու արդյունք է:

Որպես բացատրություն, մի պարզ օրինակ կբերեմ տաբատ հագնելու վերաբերյալ: Ինչ կլիներ, եթե ես ձեռքերս տանեի իմ տաբատի առջևի գրպանները՝ դրանք ուղղելու համար, և հարյուր դոլարանոց թղթադրամ գտնեի: Ես չէի հագել այդ տաբատը՝ փող գտնելու համար, բայց հայտնաբերեցի թղթադրամը՝ այդ տաբատը հագնելիս: Ես ուզում էի հագնվել, և անելով դա,

օգուտ ստացա և անակնկալի եկա՝ փող գտնելով: Մենք չենք փնտրում դրսևորումը, այլ՝ Տիրոջ Անձը. մնացած ամեն ինչը պարզապես օգուտ է, որը քաղում ենք:

Այդ ասիական եկեղեցական համայնքին հանդիմանելուց հետո ես ասացի, որ հասկանում էի նրանց քաղցը Նրա ներկայության հանդեպ, և զգուշացրի, որ չփոխարինեին Աստծուն որևէ վերապրումի հետ: Այս հորդորից հետո Տիրոջ ներկայությունը վերադարձավ՝ սուրբ ակնածանքի մթնոլորտում: Այս անգամ շատերը լաց էին լինում, ոչ թե ծիծաղում էին, բայց կարևորն այն էր, որ բոլոր Նրան փնտրողները ստացան Նրա հրաշալի ներկայության խորը հպումը, անկախ այն բանից՝ լա՞ց եղան, թե՞ ոչ:

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՊԱՏՃԱՌՈՒՄ

Երբեք մի՛ մոռացեք, որ մանանան այդպես էլ չհագեցրեց Իսրայելի զավակներին: Աստված տվեց նրանց մանանան անապատում, որպեսզի գործնականորեն ցույց տար, որ իրենք հուսահատորեն կարիք ունեին ավելիին՝ Իր ներկայությանը: Մովսեսն ասաց.

> «Եվ հիշի՛ր այն ամբողջ ճանապարհը, որ քո Տեր Աստված այս քառասուն տարում քեզ ման տվեց անապատի մեջ, որ քեզ խոնարհեցնի՝ քեզ փորձելու և սրտիդ միջինը իմանալու համար... Եվ քեզ խոնարհեցրեց և սոված պահեց և մանանա ուտեցրեց... որ քեզ իմացնի, թե ոչ միայն հացով կապրի մարդ, այլև մարդը Տիրոջ բերանից *դուրս եկած* ամեն բանով (կամ՝ խոսքով) կապրի» (Երկր. Օր. 8.2,3, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրությամբ ուսումնասիրեք «դուրս եկած» բառը: Այն խոսում է ոչ թե անցյալ, այլ ներկա գործողության մասին, և

կրում է ոչ թե անցյալի, այլ ներկայի իմաստ: Մենք լսում ենք Աստծո կողմից ասված Խոսքը, երբ Նրա ներկայության մեջ ենք: Եղիան չտարվեց Աստծո դրսևորումներով, որոնք անցնում էին իր մոտով. փոխարենը, նա սպասեց Նրա ներկայության մեղմ, բարակ ձայնին, մինչև արձագանքելը: Ասիայում գտնվող այդ եկեղեցու անդամները տարվել էին այն դրսևորմամբ, որով Աստված նախկինում անցել էր իրենց մոտով, բայց Աստված արդեն առաջ էր շարժվել: Նա այլևս դրանում չէր: Նա անցել էր նոր բանի, իսկ նրանք ետ էին մնացել՝ փորձելով գտնել Նրան այնտեղ, որտեղ Նա եղել էր անցյալում:

Ինչպես որ մանանան չհագեցրեց Իսրայելի զավակներին, այնպես էլ դրսևորումները ոչ մի դեպքում տրված չեն՝ մեր խորը ձգտումները հագեցնելու համար. դրանք ինքնանպատակ չեն: Եթե հետամուտ լինենք դրանց, մենք բավականություն չենք ունենա, մինչև որ չշրջվենք դրանցից և չձգտենք Նրա հետ մտերմության:

ԲԱՎԱՐԱՐՎԵԼ ՄՏԱՎՈՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՇՓՈՒՄՈՎ

Երբ հավատացյալները կարևորում են դրսևորումներն ավելի, քան Տիրոջը փնտրելը՝ Նրան ճանաչելու համար, տեղի է ունենում ևս մեկ ցավալի բան. դա հեռացնում է բազմաթիվ մարդկանց Աստծո ճշմարիտ ներկայությունից: Հիասթափվելով դրսևորումներ փնտրող մարդկանց անհամապատասխան և տարօրինակ վարքից՝ նրանք զգուշանում են՝ բավարարվելով Աստծո հետ մտավոր մակարդակի շփումով: Սա ողբերգական է, քանի որ մենք ստեղծվել ենք ավելիի համար: Է. Ու. Թոզերը գրում էր, որ այս վերջին օրերում հավատքով արդարանալու վարդապետությունը...

> «...այնպես է մեկնվում շատերի կողմից, որ իրականում թույլ չի տալիս մարդկանց ճանաչել Աստծուն: Կրոնական դարձի գալու ամբողջ գործընթացը դարձվել է ար-

> հեստական և անկյանք... Մարդը «փրկվում» է, բայց նա քաղցած և ծարաված չէ Աստծո հանդեպ: Իրականում, նրան հատուկ սովորեցնում են բավարարվել և խրախուսում են գոհանալ քչով» (*«Ձգտում Աստծո հանդեպ»*):

Մտավոր մակարդակի շփումն Աստծո հետ արհեստական և անկյանք է: Մենք ստեղծված ենք, որպեսզի բնակվենք Նրա հետ իրական, առօրյա կյանքում, ոչ թե միայն տեսականորեն: Մինչև մենք լիարժեք չվերապրենք սա, երբեք չպետք է բավարարված զգանք: Հիսուսը մահացավ, որպեսզի հեռացներ այն քողը, որը բաժանում էր մեզ Աստծո ներկայությունից: Այս պատճառով, մենք լսում ենք սաղմոսերգուի աղաղակը.

> «Որքա՜ն հաճելի են Քո խորանները (բնակարանները), ո՛վ զորքերի Տեր: Իմ անձը տենչում է, այո՛, նույնիսկ դալկանում է և կարոտում է Տիրոջ սրահները. իմ սիրտը և իմ մարմինը բացականչում են և երգում են ուրախությունից կենդանի Աստծուն: Այո՛, ճնճղուկը տուն է գտել, և ծիծեռնակը՝ բույն իր համար, որտեղ կարող է դնել իր ձագերին, հենց Քո խորանները, ո՛վ զորքերի Տեր, իմ Թագավո՛ր և իմ Աստվա՛ծ:
>
> Օրհնված (երջանիկ, բախտավոր, նախանձելի) են նրանք, ովքեր բնակվում են Քո տանը և Քո ներկայության մեջ. նրանք կգովերգեն Քեզ ամբողջ օրը: Սելա՛» (Սաղմ. 84.1-4, AMP):

«Ջեյմս թագավորի նոր թարգմանության» մեջ երկրորդ խոսքն այսպիսին է. «Իմ սիրտը և իմ մարմինը աղաղակում են՝ ձգտելով կենդանի Աստծուն»: Հեղինակը շարունակում է՝ ասելով, որ ճնճղուկը և ծիծեռնակը տներ են գտել, սակայն նա անտուն է համարում իրեն, քանի որ տենչում է Աստծո բնակարանին: Նա հայտարարում է, որ այն իր փափագելի տունն է՝ այն վայրը, որտեղ Աստծո ներկայությունն է: Ուշադրություն

դարձրեք, որ նա ասում է. «Երջանիկ, բախտավոր [և] նախանձելի են նրանք, ովքեր բնակվում են Քո ներկայության մեջ»: Սա է Աստծուն սիրող մարդկանց նպատակը: Նրանք քաղցած են Նրա հայտնված ներկայությանը: Որքան ավելի մոտ ենք Նրան, այնքան ավելի ուժգին է այն դառնում, և այնքան ավելի մեծ ազդեցություն է այն գործում մեզ վրա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Այս գլխի սկզբում հեղինակը գրում է. «Ամբողջ այս ընթացքում ես բացահայտել եմ երկու խոշոր խումբ եկեղեցու ներսում... Առաջին խմբի մարդիկ փնտրում են Աստծուն՝ Նրա կարողության համար. երկրորդ խմբի մարդիկ փնտրում են Աստծուն՝ Նրա Անձի համար»: Անկեղծ եղե՛ք. ո՞ր խմբում եք տեսնում ձեզ:
2. Եգիպտոսի գերությունից ազատվելուց հետո հաճախ էր լինում, որ մեկ օր իսրայելցիները փառաբանում և երկրպագում էին Աստծուն՝ Նրա մատակարարման համար, իսկ անմիջապես հաջորդ օրը բողոքում և տրտնջում էին, քանի որ Նա չէր մատակարարել այն, ինչ իրենք ուզում էին: Հիշելով ձեր կյանքի «անապատային փորձառությունները»՝ ի՞նչ նմանություններ եք տեսնում ձեր և Իսրայելի զավակների վերաբերմունքի միջև:
3. Գուցե դուք ընթերցում եք այս գիրքը, քանի որ ներկայում «հոգևոր անապատով» եք անցնում: Եթե այդպես է, ի՞նչ կարող եք սովորել Եղիայի փորձառությունից՝ քամու, երկրաշարժի և կրակի դրսևորումների ժամանակ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ԵՏԵՎՈՒՄ

Աստծո ներկայությունն առանձնացնում է մեզ այս աշխարհի բոլոր ժողովուրդներից:

Տիրոջ ներկայությունը մշտապես ավելի մեծ հայտնություն է բերում Նրա Անձի մասին, և ամեն անգամ Նրան հանդիպելիս մեկընդմիշտ փոխվում ենք: Ուսումնասիրելով Աստվածաշունչը՝ բացահայտում ենք, որ Աստծո ճանապարհների մասին ավելի մեծ հայտնություն ունեին այն մարդիկ, որոնք հետամուտ էին լինում Նրա ներկայությանը և վերապրում էին այն:

ԱՌԱՆՁՆԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆԸ

Նախորդ գլխում տեսանք, որ Մովսեսը մի առաջարկ ստացավ Աստծուց, որը մերժեց: Տերը պատրաստ էր տալ Իր խոստումները, բայց՝ առանց Իր ներկայության: Մովսեսն արագորեն պատասխանեց. «Եթե Քո երեսը (կամ՝ Քո ներկայությունը) մեզ հետ չգնա, մեզ այստեղից մի՛ հանիր» (Ելից 33.15):

Մովսեսն առաջինը ցույց տվեց, որ մտերմությունն Աստծո հետ ավելին է, քան խոստումները՝ առանց Նրա ներկայության: Այժմ լսե՛ք Մովսեսի պատճառաբանությունը՝ հրեշտակային ուղեկցությունը մերժելու համար.

> «Եթե Քո երեսը մեզ հետ չգնա, մեզ այստեղից մի՛ հանիր: Եվ ինչո՞վ պիտի իմացվի, թե շնորհք գտա Քո առջև՝ ես և Քո ժողովուրդը, չէ՞ որ Քո՝ մեզ հետ գնալով: Եվ այսպես ես և *Քո ժողովուրդը երկրի երեսի վրա եղած բոլոր ժողովուրդներից կգերազանցենք»* (Ելից 33.15,16, *շեղագիրը հեղինակինն է):*

Նրա պատասխանը ներկայացնում է մի ազդեցիկ ճշմարտություն. Աստծո ներկայությունն է, որ առանձնացնում է մեզ այս աշխարհի բոլոր ժողովուրդներից: Ոչ թե այն, որ մենք դավանում ենք քրիստոնեությունը, հաճախում ենք Աստվածաշնչին հավատացող եկեղեցիներ կամ հաճելի մարդիկ ենք, որոնք մի ժամանակ աղոթել են մեղավորի աղոթքը մի ընկերոջ հետ կամ արձագանքել են ապաշխարության կանչին եկեղեցում: Նրա ներկայությունն է, որ առանձնացնում է մեզ և դարձնում է սուրբ (առանձնացված՝ Նրա համար): Նրա ներկայությունն է, որ ակնհայտ է դարձնում սա այս երկրի բնակիչների համար:

Ինչո՞ւ են, այդ դեպքում, շատերը հաշտվել Աստծո հետ մտավոր մակարդակի շփումով: Ինչո՞ւ ենք մենք բավարարվել այնպիսի քրիստոնեությամբ, որը զուրկ է Քրիստոսի ներկայությունից: Ինչպե՞ս մենք սովորեցինք գոհունակ լինել՝ առանց մտերմության: Ինչո՞ւ ենք մենք սովորեցրել այնպիսի քրիստոնեություն, որը Նրան մոտենալու և Նրա ներկայության մեջ բնակվելու ձգտում չի առաջացնում մարդկանց մեջ: Ի պատասխան, Է. Ու. Թոզերը գրում է.

> «Աստված կամենում է, որ մենք ձգտենք Իր ներկայությանը և ապրենք մեր ամբողջ կյանքը դրանում: Այն

պետք է փորձառաբար հայտնի լինի մեզ: Այն ավելին է, քան վարդապետություն, որին պետք է հարել. այն կյանք է, որը պետք է վայելել ամեն օրվա ամեն պահին» (*«Ձգտում Աստծո հանդեպ»*):

Շատերը բավարարվել են պատկանելության մասին մտավոր գիտելիքով՝ երբևէ չձգտելով Նրա հետ հաղորդակցվելու իրականությանը: Փրկության հասկացությունն այնքան խորն է արմատացած մեր մեջ, որ քչերն են դրանից առաջ անցնում: Նրանք արել են իրենց աղոթքը և մեկ օր մահանալու են ու Նրա հետ են լինելու: Այնուամենայնիվ, Քրիստոսի իրականությունն անուշադրության է մատնված, և զորավոր հայտնությունն այն մասին, որ Աստված ցանկանում է վարվել մեզ հետ, կորսված է: Խոսքը մեկանգամյա կամ հեռավոր փորձառության մասին չէ, այլ՝ մեզ հետ մշտապես հաղորդակցվելու Նրա եռանդուն ցանկության: Եկեք ճանապարհորդենք Աստվածաշնչով՝ այն հետազոտելու համար:

Ո՞Վ ՎԵՐԱՊՐԵՑ ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մենք տեսնում ենք Նրա հայտնված ներկայությունը ամբողջ Աստվածաշնչում: Պարտեզում Ադամն ու Եվան Աստծո հետ էին վարվում, մինչև որ անհնազանդությունը դրդեց նրանց թաքնվել «Տեր Աստծո երեսից» (Ծննդ. 3.8), և մարդն առանձնացավ Աստծո ներկայությունից: Նրանց որդի Կայենն ավելի հեռացավ Աստծո ներկայությունից՝ խստացած սրտի արդյունքում:

Այնուամենայնիվ, Աստված չհանձնվեց և, միևնույն է, ցանկանում էր մտերիմ լինել մարդու հետ, որին սիրում էր: Ի վերջո, Ենովքի և Նոյի պես մարդիկ արձագանքեցին և իրենց հերթին հպվեցին Աստծո սրտին՝ իրենց աննահանջ ձգտմամբ: Արդյունքում նրանք ավելի մոտ էին Նրան, քան որևէ մեկն իրենց հազարամյակում՝ այն բանից հետո, երբ Ադամը լքեց Եդեմի պարտեզը:

Աբրահամը հաճախ էր վերապրել Նրա հայտնված ներկայությունը իր կյանքի ընթացքում: Նման հանդիպումներից մեկը տեղի ունեցավ, երբ Աստված եկավ՝ Սոդոմի և Գոմորի ապագան քննարկելու: Այդ քաղաքների դատաստանից հետո գրված է. «Հաջորդ առավոտյան Աբրահամը վաղ արթնացավ և շտապեց այն վայրը, որտեղ կանգնել էր Տիրոջ ներկայության մեջ» (Ծննդ. 19.27, NLT): Սա միայն մեկն էր այն բազմաթիվ դեպքերից, երբ Աբրահամը վայելել էր շփումն Աստծո հետ անմիջապես Նրա ներկայության մեջ: Իրականում, իր տարեց հասակում Աբրահամը խոսեց իր ծառայի հետ՝ ասելով. «Որովհետև այն Տերը, որի ներկայության մեջ ես վարվել եմ, կուղարկի Իր հրեշտակին քեզ հետ և հաջողություն կտա քո առաքելությանը» (Ծննդ. 24.40, NLT):

Մենք կարդում ենք, որ Սամուելը «մեծացավ, և Տերը նրա հետ էր, և իր բոլոր խոսքերից մեկը գետնին չգցեց» (Ա Թագ. 3.19): Ինչպե՞ս եղավ, որ նրա խոսքերից ոչ մեկն անկատար չմնաց: Պատասխանը հաջորդ խոսքում է. «Եվ Տերը տվեց Աննային երեք որդի և երկու դուստր: Այդ ընթացքում Սամուելը մեծանում էր Տիրոջ ներկայության մեջ» (Ա Թագ. 2.21, NLT): Կրկին տեսնում ենք, որ Տերը հայտնում է Իրեն Իր ներկայության մեջ: Երբ մենք ճանաչենք Նրան, կխոսենք այն, ինչ Նա է խոսում, և մեր խոսքերն անկատար չեն մնա:

Դավիթը, որը սիրում էր և վերապրում էր Աստծո ներկայությունը ավելի, քան ցանկացած այլ անձնավորություն Հին կտակարանում, հավանաբար, բացառությամբ Մովսեսի, աղաղակում էր. «Թող որ Քո ծառա Դավթի գահատոհմը հաստատվի Քո ներկայության մեջ» (Բ Թագ. 7.26, NLT): Ինչպես և Մովսեսը, նա չէր ուզում հաջողություն ունենալ՝ Աստծո ներկայությունը կորցնելու հաշվին: Իրականում, ավելի ուշ, երբ նա գործեց շնության և սպանության իր ծանր մեղքը, նրա ջերմեռանդ ապաշխարության աղաղակը հետևյալն էր. «Մի՛ վտարիր ինձ Քո ներկայությունից, և մի՛ վերցրու Քո Սուրբ Հոգին ինձնից» (Սաղմ. 51.11, NLT): Նա գիտեր, որ կյանքն իսկապես դատարկ և անիմաստ

կդառնար՝ առանց Աստծո ներկայության: Հետևյալ խոսքերը նրա գրչին են պատկանում. «Դու ցույց կտաս ինձ կյանքի ճանապարհը՝ շնորհելով ինձ Քո ներկայության ուրախությունը և Քեզ հետ հավիտյան ապրելու վայելքները» (Սաղմ. 16.11, NLT):

Ըստ հոգեբանության, ավելի քան հինգ տարում ունեցած հարաբերությունները ձևավորում են մեր անհատականությունը: Ես չեմ կարող չհամաձայնել դրան, քանի որ Աստվածաշնչում գրված է. «Չար ընկերակցություններն ապականում են բարի վարքերը» (Ա Կորնթ. 15.33), և կրկին. «Իմաստունների հետ վարվողն իմաստուն կդառնա» (Առակ. 13.20): Ի՞նչ կարող ենք ասել Դավթի մասին: Նա մենակ էր անապատում, երբ «նրա մոտ հավաքվեցին հարստահարված մարդիկ, պարտք ունեցող մարդիկ և սրտով վիրավորված մարդիկ, և նա նրանց վրա զորագլուխ եղավ, և նրա հետ չորս հարյուրի չափ մարդ եղավ» (Ա Թագ. 22.2): Ինչպիսի՞ բազմություն՝ ավելի քան տասը տարի միասին ապրելու համար: Հարստահարված, վիրավորված և պարտքեր ունեցող: Նրանք բարկացած, չարացած և, ամենայն հավանականությամբ, կոպիտ և անզգա էին: Մի՞թե նրանք ձևավորեցին Դավթի անհատականությունը: Ո՛չ: Ինչո՞ւ: Քանի որ Դավիթն այնքան շատ ժամանակ էր անցկացնում Աստծո ներկայության մեջ, որ մշտապես թագավորական կեցվածք ուներ և, հետևաբար, ինքը ձևավորեց այդ մարդկանց՝ դարձնելով ակնառու առաջնորդներ շատ սերունդների համար:

Իմ ամենասիրելի աստվածաշնչյան հատվածներից մեկը Դավթի արձագանքն է Աստծո հրավերին: Նա գրում է.

> «Իմ սիրտը լսել է, որ Դու ասում ես. «Եկ և զրուցի՛ր ինձ հետ»: Եվ իմ սիրտն արձագանքում է. «Տե՛ր, ես գալիս եմ»» (Սաղմ. 27.8, NLT):

Նրա կյանքն այսպիսին էր. նա այնքան շատ ժամանակ էր անցկացնում Տիրոջ հետ, որ ազդեցություն թողեց ոչ միայն այդ չորս հարյուր մռայլ տղամարդկանց վրա, այլև՝ ամբողջ ազգի: Նա ազդեցիկ մարդ էր, քանի որ ժամանակ էր անցկացնում

իմաստության, գիտելիքի և հասկացողության Աղբյուրի հետ: Այնուամենայնիվ, Դավիթը չէր անում դա, որ «ստանար» Աստծո իմաստությունը. նա ձգտում էր Նրան, քանի որ փափագում էր ճանաչել Նրա սիրտը: Նա սիրում էր Տիրոջն ավելի, քան ցանկացած մարդու կամ ցանկացած բան, և այդ սերը ձևավորվել էր նրանում շնորհիվ այն ժամանակի, որ անցկացրել էր Տիրոջ հետ:

Երանի՜ Դավթի որդի Սողոմոնը ժառանգեր այս կրակոտ ցանկությունը: Նա երկու անգամ տեսավ Իսրայելի Աստծուն և ստացավ շատ ավելի մեծ իմաստություն, քան իրենից առաջ կամ հետո եղող թագավորները, սակայն չհասկացավ, թե որքան կարևոր է բնակվել Նրա ներկայության մեջ: Կյանքի ավարտին, երբ անցկացրել էր իր տարիները, նա գրեց տրտմալի Ժողովող գիրքը: Թեև նա ստացել էր իմաստություն, անասելի հարստություն, այս աշխարհի ամենագեղեցիկ կանանց, ինչպես նաև լայնորեն տարածված համբավ և ազդեցություն, նա միայն կարող էր աղաղակել. «Ունայնությո՛ւն ունայնությանց»: Եթե նա ունենար իր հայր Դավթի սիրտը, Իսրայելի պատմությունը բոլորովին այլ կլիներ:

Իրականում, աստվածաշնչյան պատմության մեծ մասը այլ կլիներ, եթե տարբեր անհատներ իմանային, թե որքան կարևոր է ձգտել Աստծո ներկայությանը: Ցավոք, շատերն են վերապրել Նրա ներկայությունն ինչ-որ չափով, բայց այդպես էլ չեն հասկացել, թե ինչ են ճաշակել: Նրանք այդպես էլ չեն հասկացել, որ Աստծո ներկայության մեջ մնայուն բավականություն կա, և միայն մշտապես Նրան հետամուտ լինելով կարելի է տևական հաջողություն ունենալ: Այդ մարդկանցից էր Ոզիա թագավորը, որը Դավթի ժառանգներից էր: Նա փնտրեց Աստծուն երիտասարդ տարիքում և արդյունքում մեծ հաջողության հասավ, սակայն, ավելի ուշ, մոռացավ թե որտեղից էր եկել իր հաջողությունը: Իր հպարտությամբ նա դադարեց հետամուտ լինել Տիրոջը և արդյունքում մահացավ մեկուսացման մեջ՝ որպես բորոտ (տե՛ս Բ Մնաց. 26-րդ գլուխ):

ՄԵԾԱԳՈՒՅՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Մենք կարող էինք շարունակել դիտարկել ամբողջ Հին կտակարանը, սակայն մեծագույն ողբերգությունը տեղի ունեցավ Դավթից շատ տարիներ առաջ, երբ նրա նախահայրերը՝ Աբրահամի ժառանգները, դուրս եկան Եգիպտոսից: Նախորդ գլուխներից մեկում իմացանք, որ Աստված ցանկանում էր ազատել նրանց, որպեսզի Իր մոտ բերեր: Նա ցանկանում էր մոտենալ նրանց, որպեսզի հայտներ Իր ներկայությունը, սակայն երբ Նա արեց դա, ցավոք, գրված է. «Եվ ժողովուրդը *հեռու կանգնեց,* և Մովսեսը *մոտեցավ* այն թանձր խավարին, ուր որ Աստված էր» (Ելից 20.21, *շեղագիրը հեղինակինն է):* Որքա՜ն ողբերգական է: Աստված հայտնեց Իրեն, իսկ նրանք ետ քաշվեցին: Միայն Մովսեսն Աստծուն մոտենալու ձգտում ուներ: Նրանց արձագանքի պատճառով Աստված ստիպված էր քահանայություն ձևավորել, որը կկանգներ Իր առջև՝ հանուն ժողովրդի: Անհրաժեշտ էր խորան կանգնեցնել, որպեսզի Աստծո ծածկված ներկայությունը բնակվեր նրանց մեջ: Այն բանից հետո, երբ այն մանրակրկիտ ձևով կառուցվեց՝ ըստ Աստծո ցուցումների, և կանգնեցվեց, գրված է.

> «Այդ ժամանակ ամպը ծածկեց Խորանը, և Տիրոջ *փառավոր ներկայությունը* լցրեց այն: Մովսեսն այլևս չէր կարողանում մտնել Խորանը, քանի որ ամպն իջել էր դրա վրա, և Խորանը լցված էր Տիրոջ զարմանալի փառքով» (Ելից 40.34,35, NLT, *շեղագիրը հեղինակինն է):*

ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Այս պահին պետք է մի պահ կանգ առնեմ և խոսեմ Աստծո ներկայության տարբեր աստիճանների մասին: Ուշադրություն դարձրե՛ք *«փառավոր ներկայություն»* բառերին վերևի հատվածում: Երբ խորանը առաջին անգամ կանգնեցվեց, Նրա ներ-

կայությունն այնքան փառավոր էր, որ Մովսեսը՝ այն մարդը, որը խոսում էր Աստծո հետ երես առ երես՝ որպես ընկեր, չկարողացավ ներս մտնել: Կարո՞ղ եք պատկերացնել Նրա զարմանալի այցելության ուժգնությունը՝ այն ներկայության, որն այդ պահին և՛ հրաշալի էր, և՛ զարհուրելի:

Տարիներ անց, Հեղիի առաջնորդության ներքո, որը դատավոր էր, քահանա և Ահարոնի հեռավոր ազգականը, Տիրոջ ներկայությունը գրեթե աննշան էր խորանում: Իրականում, քահանաները ոչ միայն կարողանում էին մտնել, այլև բացահայտ մեղք էին գործում նույն վայրում, որտեղ Մովսեսը չէր կարողանում մտնել: Գրված է. «Այն օրերը Տիրոջ Խոսքը հազվագյուտ էր. հայտնի տեսիլք չկար» (Ա Թագ. 3.1): Ինչո՞ւ էր Տիրոջ Խոսքը հազվագյուտ: Կրկին, Աստծո հայտնությունը, ներառյալ՝ Նրա Խոսքը, գտնվում է Նրա ներկայության մեջ: Որտեղ Նրա ներկայությունը չկա, հայտնությունը բացակայում է. որտեղ Նրա ներկայությունն ընդամենը փոքր չափով է, հայտնությունը հազվագյուտ է. և որտեղ Նրա ներկայությունն ուժգին է, հայտնությունն առատ է: Այս գլխում գրված է, որ Աստծո կանթեղը (Նրա ներկայությունը) թուլացել էր և գրեթե հանգչում էր (ներկայությունը չկար): Սա տեղի ունեցավ Հեղիի կառավարման տարիների վերջում, երբ փղշտացիները գերեցին Ուխտի տապանակը: Նրա կյանքի վերջին օրը ազդարարվեց *Իքաբոդ* անունը, որը նշանակում է «փառքը հեռացել է»:

Ի տարբերություն Հեղիի օրերի, երբ Աստծո ներկայությունը հազվագյուտ էր և գրեթե աննշմար էր՝ մեղքի պատճառով, կան իրավիճակներ, որոնցում թեև Նրա ներկայությունը փառավոր չէ, ինչպես խորանը կանգնեցնելու ժամանակ, սակայն շատ իրական է, և հայտնությունն առատ է: Այս դեպքերում Աստված մոտենում է ավելի աննկատ՝ որոշելով չհայտնել Իր փառքը: Մենք տեսնում ենք սա Հակոբի օրինակով: Նա մարտնչեց Աստծո հետ և երես առ երես տեսավ Նրան, բայց ակնհայտորեն՝ ոչ Նրա փառքով: Այնուամենայնիվ, այդ հանդիպման արդյունքում Հակոբը վերափոխվեց և աճեց Աստծո

հայտնության մեջ (տե՛ս Ծնն. 32.24-30): Հեսուն տեսավ Տիրոջը և նույնիսկ չհասկացավ, որ խոսում էր երկնքի զորքերի Հրամանատարի հետ: Մյուս կողմից, Մովսեսն աղաղակ բարձրացրեց՝ խնդրելով տեսնել Տիրոջ երեսը, և ստացավ հետևյալ պատասխանը. «Դու Իմ երեսը չես կարող տեսնել, որովհետև մարդ չի կարող Ինձ տեսնել և ապրել» (Ելից 33.20): Մենք տեսնում ենք, որ Մովսեսը ցանկացավ տեսնել Աստծուն՝ Իր ամբողջ փառքով, բայց չկարողացավ, իսկ Հեսուն և մյուսները տեսան Տիրոջ երեսը և շարունակեցին ապրել: Ինչպե՞ս բացատրել սա: Պատճառն այն է, որ նրանք չտեսան Տիրոջը՝ Իր փառքի լիությամբ:

ՆՐԱ ԵՐԵՍԻ ԼՈՒՅՍԸ

Առաջինը՝ հակիրճ խոսենք Տիրոջ փառքի մասին: Ոմանք կարծում են, թե այն մշուշ է, ամպ է, կամ՝ այլ նման դրսևորում: Այս պատճառով մարդիկ, օրինակ, ասում են. «Աստծո փառքն իջավ նախորդ օրվա ծառայությանը»: Բայց նման պնդումները նսեմացնում և խավարեցնում են Նրա խորհուրդը՝ անիմաստ խոսքերով (տե՛ս Հոբ 38.2):

Նախևառաջ, Աստծո փառքն ամպ չէ: Գուցե հարցնեք. «Այդ դեպքում, ինչո՞ւ է ամպը հիշատակվում գրեթե ամեն անգամ, երբ Աստծո փառքը հայտնվում է Աստվածաշնչում»: Պատճառն այն է, որ Աստված թաքնվում է ամպի մեջ: Նա չափազանց վեհ է, որ կարողանանք նայել Նրան: Այնպես որ, ամպը ծածկում է Նրա երեսը, եթե ոչ, Նրա ներկայության մեջ գտնվող ամեն մարմին կսպառվեր և անմիջապես կմահանար: Հիշեք՝ Աստված ասաց Մովսեսին, որ ոչ մի մարդ չէր կարող տեսնել Իր երեսը և ողջ մնալ: Առաջանում է ևս մեկ հարց. ինչպե՞ս Եսային, Եզեկիելը և Հովհաննես առաքյալը տեսան Տիրոջ փառքը և ողջ մնացին, որպեսզի գրեին այդ մասին: Պատասխանը պարզ է. նրանք հոգով էին և իրենց մարմնից դուրս էին: Մահկանացու մարմինը չի կարող դիմանալ Սուրբ Աստծո ներկայության մեջ՝ Նրա ամբողջ փառքով: Նա սպառող կրակ է,

որում բոլորովին խավար չկա (Եբր. 12.29, Ա Հովհ. 1.5): Պողոսը գրում է Հիսուսի մասին.

> «Երանելին և միակ Հզորը, թագավորների Թագավորը և տերերի Տերը, որ միայն Նա անմահություն ունի, անմատույց լույսի մեջ բնակված, որ մարդկանցից ոչ ոք չտեսավ, և ոչ էլ կարող է տեսնել, Նրան լինի պատիվ և զորություն հավիտյանս: Ամե՛ն» (Ա Տիմոթ. 6.15,16):

Հիսուսը բնակվում է անմատույց լույսում, և ոչ մի մարդ չի տեսել և չի կարող տեսնել Նրան: Իրականում, սաղմոսերգուն ազդարարում է, որ Տերը լույս է կրում՝ որպես զգեստ (տես Սաղմ. 104.2): Պողոսը հեշտորեն կարող էր գրել այս մասին, քանի որ նա վերապրել էր Նրա փառավոր ներկայության անմատույց լույսի որոշակի չափը Դամասկոսի ճանապարհին: Նա պատմեց այդ մասին Ագրիպպաս թագավորին հետևյալ կերպով.

> «Կեսօրվա ժամանակին ճանապարհի վրա տեսա, ո՛վ արքա, որ երկնքից արեգակի լույսից ավելի մի լույս ծագեց իմ չորս կողմով, և նրանցով էլ, որ ինձ հետ գնում էին» (Գործք 26.13):

Պողոսը չտեսավ Հիսուսի երեսը. նա միայն տեսավ Նրանից ճառագող լույսը, որը մթագնեցրեց և ստվերի մեջ թողեց Մերձավոր Արևելքի պայծառ արևը: Նա Հիսուսի փառքի ներկայության մեջ էր: Խոսքը ո՛չ առավոտյան, ո՛չ էլ ուշ ցերեկվա արևի մասին է, այլ՝ կեսօրվա արևի: Ես տասներկու տարի ապրել եմ «արևային նահանգ» Ֆլորիդայում և ոչ մի անգամ *սփրպված չեմ եղել* արևային ակնոց կրել: Այնուամենայնիվ, մի քանի տարի առաջ Լիզայի հետ ճանապարհորդեցի Մերձավոր Արևելք. այնտեղ *սփրպված էի* արևային ակնոց կրել: Արևը շատ ավելի պայծառ էր չոր անապատային կլիմայում, և հասարակածին մոտ լինելը բազում անգամներ ավելացնում էր դրա պայծառությունը: Այնտեղի արևին կարելի էր դիմանալ վաղ առա-

վոտյան և ուշ ցերեկվա ժամերին, բայց ժամը 11:00-14:00-ը այն շատ պայծառ էր: Այնուամենայնիվ, Պողոսն ասաց, որ Հիսուսի լույսն ավելի՛ պայծառ է, քան Մերձավոր Արևելքի կեսօրյա արևը: Մի պահ հիշեք, թե երբ եք վերջին անգամ փորձել նայել ուղիղ կեսօրյա արևին: Դա դժվար է, եթե այն քողարկված կամ ծածկված չէ ամպով: Տիրոջ փառքը բազմիցս գերազանցում է այդ պայծառությունը:

Այս փաստը բացատրում է, թե ինչու և՛ Հովելը, և՛ Եսային ասացին, որ վերջին օրերում, երբ Տիրոջ փառքը հայտնվի, արևը կխավարի: «Ահա գալիս է Տիրոջ օրը... երկնքի աստղերը և նրա աստեղատները իրենց լույսը չեն տալու. արեգակը դուրս գալիս խավար է լինելու, և լուսինը չի ցոլացնելու իր լույսը» (Եսայի 13.9,10):

Թույլ տվեք շարունակել իմ բացատրությունը: Ի՞նչ ենք մենք տեսնում պարզ գիշերային երկնքում: Աստղե՛ր: Դրանք ամենուր են գիշերային երկնքում: Բայց առավոտյան, երբ արևը ծագում է, ի՞նչ է կատարվում: Ո՞ւր են աստղերը գնում: Մի՞թե դրանք փախչում են մինչև արևամուտը, իսկ հետո շտապում իրենց տեղերը՝ հորիզոնի ետևում գտնվող իրենց թաքստոցից: Պատասխանն է՝ ակնհայտորեն՝ ո՛չ: Այդ դեպքում, ի՞նչ է տեղի ունենում: Աստղերի փառքը որոշակի չափ ունի, բայց արևի փառքն այնքան է գերազանցում դրանք, որ երբ այն հայտնվում է, աստղերի լույսը խավարում է: Աստղերը մնում են իրենց տեղում, սակայն չեն երևում: Նմանապես, երբ Հիսուսը վերադառնա, Նրա փառքն այնքան կգերազանցի արևի փառքը, որ Նա կխավարեցնի այն: Այն չի երևա, թեև իր տեղում կլինի: Զարմանալի՛ է: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչու էր Պողոսը գրում. «Որ մարդկանցից ոչ ոք չտեսավ, և ո՛չ էլ կարող է տեսնել»:

Տիրոջ փառքը մթագնեցնում է ցանկացած լույս: Նա կատարյալ և ամեն ինչ սպառող լույս է: Ահա թե ինչու Նրա երկրորդ գալուստի ժամանակ այս աշխարհի մարդիկ կմտնեն «ժայռերի այրերի մեջ և երկրի խոռոչները՝ Տիրոջ ահավորութ-

յան առջևից և *Նրա վեհափառության մեծությունից,* երբ որ Նա վեր կենա՝ երկիրը սարսռեցնելու» (Եսայի 2.19, *շեղագիրը հեղինակինն է):* Հովհաննեսն այսպես է նկարագրում.

> «Եվ երկրի թագավորները, և մեծամեծները, և հարուստները, և հազարապետները, և զորավորները, և ամեն ծառա, և ամեն ազատ թաքցրին իրենց անձերը այրերի և ժայռերի մեջ, և ասում էին սարերին և ժայռերին. «Վա՛յր ընկեք մեզ վրա և ծածկե՛ք մեզ աթոռի վրա Նստողի *երեսից* և Գառան բարկությունից»» (Հայտն. 6.15,16, *շեղագիրը հեղինակինն է):*

Ի՞ՆՉ Է ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ

Պատասխանենք հետևյալ հարցին. «Ի՞նչ է Աստծո փառքը»: Պատասխանելու համար վերադառնանք Մովսեսի հանդիպմանը Աստծո հետ: Մովսեսը ոչ միայն խնդրեց Աստծո ներկայությունը, այլև աղաչեց, որ տեսներ Նրա փառքը:

> «Եվ նա [Մովսեսը] ասաց. «Աղաչո՛ւմ եմ, Քո *փառքը* ցո՛ւյց տուր ինձ»» (Ելից 33.18, *շեղագիրը հեղինակինն է):*

«Փառք» բառը թարգմանված է եբրայերեն *«կավոդ»* բառից: «Սթրոնգի աստվածաշնչյան բառարանը» սահմանում է այն որպես «ինչ-որ բանի կշիռը, բայց միայն՝ փոխաբերական և դրական իմաստով»: Դրա սահմանումը նույնպես ենթադրում է շքեղություն, առատություն և պատիվ: Մովսեսը խնդրում էր Աստծուն. «Հայտնի՛ր Քեզ՝ Քո ամբողջ շուքով»: Ուշադրությամբ կարդացեք Աստծո պատասխանը.

> «Իմ ամբողջ *բարությունը* քո առջևից պիտի անցկացնեմ, և Տիրոջ անունը քո առջև պիտի կանչեմ» (Ելից 33.19, *շեղագիրը հեղինակինն է):*

Մովսեսը խնդրեց Նրա ամբողջ փառքը, իսկ Աստված պատասխանեց՝ ասելով. *«Իմ ամբողջ բարությունը»:* «Բարություն» բառը թարգմանված է եբրայերեն *«տով»* բառից: Այն նշանակում է «բարի՝ ամենալայն իմաստով»: Այլ կերպ ասած՝ անթաքույց և անարգել:

Դրանից հետո Աստված ասաց. «Տիրոջ անունը քո առջև պիտի կանչեմ»: Նախքան որևէ երկրային թագավորի գալը իր գահի սրահը, նրա անունը ազդարարվում է մունետիկի կողմից: Այդ ազդարարումն ուղեկցվում է շեփորների ձայնով, մինչ նա մուտք է գործում իր շուքով: Թագավորի մեծությունը երևում է, և նրա արքունիքում կասկած չի լինում այն մասին, թե ո՛վ է թագավորը: Նրա վեհ ներկայությունը երկյուղով է համակում մարդկանց: Բայց ի՞նչ կլիներ, եթե նույն գահակալը քայլեր իր քաղաքի փողոցներով՝ հասարակ հագուստ հագած և առանց ծառաների: Ճշմարտությունն այն է, որ այն, ինչն ակնհայտ է արքունական միջավայրում, կորսված կլիներ դրսում, քանի որ նրա կողքով անցնող մարդիկ չէին իմանա, թե իրականում ով է նա: Նրա ներկայությունը չէր լինի այնքան տպավորիչ և նկատելի, որքան իր գահի սրահի փառքի մեջ: Ըստ էության, Աստված ճիշտ սա արեց Մովսեսի համար՝ ասելով. «Ես կազդարարեմ Իմ անունը և կանցնեմ քո կողքով՝ Իմ ամբողջ շուքով»:

Նոր կտակարանում կարդում ենք, որ Տիրոջ փառքը հայտնվում է Հիսուս Քրիստոսի դեմքում (տե՛ս Բ Կորնթ. 4.6): Ովքեր եղել են Տիրոջ ներկայության մեջ, վկայում են, որ տեսիլքով տեսել են Հիսուսին և նայել են Նրա դեմքին: Սա շատ հավանական է, բայց կասեմ ձեզ հետևյալը. նրանք չեն տեսել Նրան՝ Իր ամբողջ փառքով:

Մյուսները գուցե վիճարկեն՝ ասելով, որ աշակերտները նայում էին Հիսուսի դեմքին այն բանից հետո, երբ Նա հարություն առավ մեռելներից: Սա նույնպես ճիշտ է, բայց դա Նրա փառքի բացահայտ դրսևորումը չէր: Ինչպես նշեցի, Հին կտակարանում կային մարդիկ, որոնք տեսան և վերապրեցին

Տիրոջ ներկայությունը, բայց ոչ՝ Նրա փառքի հայտնությամբ: Տերը հայտնվեց Աբրահամին Մամբրեի կաղնիների մոտ, բայց ոչ՝ Իր փառքով (տե՛ս Ծննդ. 18.1,2): Հակոբը մարտնչեց Աստծո հետ, Հեսուն նույնիսկ չճանաչեց Նրան (տե՛ս Հեսու 5.13-15), և կային այլ մարդիկ, որոնք հանդիպեցին Նրան:

Երբ Հեսուն նայեց Նրա դեմքին՝ Երիքովը գրավելուց առաջ, Տերը երևաց որպես Պատերազմող: Չհասկանալով, թե ով էր Նա, Հեսուն հարցրեց. «Մեզնի՞ց ես Դու, թե՞ մեր թշնամիներից»: Տերը *հայտնեց* Իրեն որպես Տիրոջ Զորավարը և պատվիրեց Հեսուին հանել իր կոշիկները, որովհետև նրա կանգնած տեղը սո՛ւրբ էր: Հակոբը մարտնչեց Տիրոջ հետ ամբողջ գիշեր և լուսադեմին վերջապես աղաղակեց. «Խնդրո՛ւմ եմ, ասա՛ ինձ Քո անունը» (Ծննդ. 32.29, NASB): Սա նման է մեր օրինակին այն մասին, որ թագավորը կարող է քայլել իր թագավորության փողոցներով՝ հասարակ հագուստով, և շատերը չեն ճանաչի նրան: Ահա թե ինչ տեղի ունեցավ Հեսուի և Հակոբի հետ, սակայն նրանք, միևնույն է, մեծ հայտնություն ստացան Նրա մասին:

Նույնը տեղի ունեցավ հարությունից հետո: Առաջին անձնավորությունը, որի հետ Հիսուսը խոսեց, Մարիամ Մագդաղենացին էր, որը կարծեց, թե Նա պարտիզպան է (տե՛ս Հովհ. 20.15,16): Աշակերտները ձկան նախաճաշ կերան Հիսուսի հետ ծովափին (տե՛ս Հովհ. 21.9,10), բայց սկզբում չճանաչեցին Նրան, և ո՛չ էլ Նրա ձայնը: Նրանք ճանաչեցին Հիսուսին, երբ Նա այնպիսի բան արեց, ինչը ծանոթ էր իրենց: Կրկին, Իր հարությունից հետո Հիսուսը քայլեց Իր աշակերտներից երկուսի հետ, որոնք Նրա մահից առաջ լսել էին, թե ինչ էր տեղի ունենալու, սակայն նրանք չճանաչեցին Նրան, քանի որ «նրանց աչքերը բռնված էին» (Ղուկ. 24.16): Այդ աշակերտները նաև չճանաչեցին Նրան դեմքով, կազմվածքով և ձայնով: Բոլոր այդ մարդիկ տեսան Նրա դեմքը և վերապրեցին Նրա ներկայությունը, սակայն ոչ՝ Նրա փառքի բացահայտ դրսևորմամբ. այնուամենայնիվ, բոլորն էլ հայտնություն ստացան Նրա ներկայությունից:

Ի հակադրություն, Հովհաննես առաքյալը տեսավ Հիսուսին Հոգու մեջ, երբ Պատմոս կղզում էր, բայց այդ հանդիպումը լիովին տարբերվում էր ծովի մոտի նախաճաշից, քանի որ այդտեղ Հովհաննեսը տեսավ Հիսուսին՝ Նրա փառքով: Նա այսպես նկարագրեց Հիսուսին. «Նրա երեսը՝ ինչպես արեգակը, որ ճառագայթում է իր զորությամբ: Եվ երբ որ տեսա Նրան, մեռածի պես ընկա Նրա ոտքերի առջև, և Նա Իր աջ ձեռքն ինձ վրա դրեց և ասաց. «Մի՛ վախեցիր, Ես եմ Առաջինը և Վերջինը»» (Հայտն. 1.16,17): Տիրոջ փառավոր ներկայությունն այնքա՜ն ուժգին էր, որ Հովհաննեսն ընկավ՝ մահացածի պես:

Աստծո փառքն այն ամենն է, ինչ Նրան Աստված է դարձնում: Նրա փառքն ընդգրկում է Նրա բոլոր հատկանիշները՝ իշխանությունը, զորությունը, իմաստությունը, բառացիորեն՝ Նրա անչափելի կշիռը և մեծությունը, որը դրսևորվում է անթաքույց և անարգել: Այս փառավոր ներկայությունը կարելի է վերապրել կա՛մ՝ երբ Աստծո կերպարանքը մասամբ է երևում, ինչպես Մովսեսի դեպքում էր, երբ տեսանելի էին միայն Նրա ոտքերը և մեջքը, կա՛մ՝ ինչպես Սողոսի դեպքում էր՝ Դամասկոսի ճանապարհին, երբ չերևաց ոչ մի կերպարանք, և կար միայն անթափանցելի լույս և ձայն:

ՆՐԱ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

Վերադառնանք Աբրահամի ժառանգներին: Երբ Աստված առաջին անգամ հայտնեց Իր ներկայությունը Սինա սարի վրա, ժողովուրդը ետ քաշվեց և գոչեց. «Ահա՛ մեր Տեր Աստվածը մեզ ցույց է տալիս Իր *փառքը* և մեծությունը, և Նրա ձայնը լսում ենք կրակի միջից... Եվ հիմա ինչո՞ւ մեռնենք, որովհետև այս մեծ կրակը մեզ սպառելու է. եթե մենք մեր Տեր Աստծո ձայնը կրկին լսելու լինենք, կմեռնենք» (Երկր. Օր. 5.24,25, *շեղագիրը հեղինակինն է):* Նրանք չէին կարողանում դիմանալ Նրա փառավոր ներկայությանը, քանի որ նրանց խիղճն արա-

տավորված էր իրենց եսակենտրոն ճանապարհներով:

Դրանից հետո կանգնեցվեց խորանը, և Աստված բնակվեց դրա ներքին բաժնում, որը կոչվում էր Ամենասուրբ վայր կամ Սրբություն սրբոց: Այդտեղ էր, որ քահանայապետը մտնում էր տարին մեկ անգամ: Երբ դա տեղի էր ունենում, քահանայապետը, նախ, մտնում էր արտաքին գավիթով, որտեղ արյան զոհաբերություն էր մատուցվում պղնձե զոհասեղանի վրա՝ քավելու համար իր մեղքը և ժողովրդի մեղքերը: Այնուհետև քահանան լվացվում էր այդ զոհասեղանին կից ավազանում, ինչից հետո մտնում էր Սուրբ վայրը կամ Սրբությունը՝ վարագույրից անցնելով: Ոչ մի բնական լույս չէր թափանցում այդ վայրը: Միակ լույսը ոսկե աշտանակից էր, որը խորհրդանշում էր Հիսուսին՝ որպես մեր Լույսը (տե՛ս Հովհ. 9.5): Նույնպես, այդտեղ էր առաջավորության հացը, որը խորհրդանշում էր Հիսուսին՝ որպես մեր Կյանքի Հացը (տե՛ս Հովհ. 6.48): Երրորդ առարկան խնկի սեղանն էր, որը խորհրդանշում էր շարունակական աղոթքի և երկրպագության կյանքը:

Նույնիսկ գտնվելով այդտեղ՝ նա դեռ մուտք չէր գործել այն վայրը, որտեղ բնակվում էր Աստծո ներկայությունը: Կար ևս մեկ վարագույր, որով Սրբությունը բաժանվում էր Սրբություն սրբոցից: Այս վայրում՝ ողորմության աթոռի կամ քավության վերևում, բնակվում էր Աստծո հայտնված ներկայությունը: Սա այն վարագույրն է, որը պատռվեց, երբ Հիսուսը հանձնեց Իր Հոգին. «Տաճարի վարագույրը երկու ճղվեց՝ վերևից մինչև ցածը» (Մատթ. 27.51): Ուշադրություն դարձրե՛ք, որ այն պատռվեց վերևից ներքև, ոչ թե ներքևից վերև: Այդ վարագույրը պատռեց Աստված, ոչ թե մարդը, քանի որ Նա տեղափոխում էր Իր բնակության վայրը: Նա պատրաստվում էր բնակվել նոր վայրում, որը մշտապես փափագում էր՝ Իր վերածնված զավակների սրտերում: Ե՞րբ դա տեղի ունեցավ: Հիսուներեք օր անց՝ Պենտեկոստեի օրը, Աստված բնակվեց Իր փափագելի խորանում: Գրված է.

> «Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից: Եվ նստեցին նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենը Սուրբ Հոգով լցվեցին» (Գործք 2.2-4):

Ինչպես որ Աստծո ներկայությունը մուտք գործեց, երբ Մովսեսը *կապարեց* խորանի ամբողջ աշխատանքը, այնպես էլ, երբ Հիսուսն ասաց. ««*Կատարված է*», և գլուխը խոնարհեցրեց, Հոգին ավանդեց» (տես Հովի. 19.30), Տերը տեղափոխվեց Իր բնակության նոր վայրը՝ պատրաստված հավիտենական Գառան արյամբ:

> «Արդ, եղբայրնե՛ր, որովհետև համարձակություն ունենք սրբարանը մտնելու՝ Հիսուսի արյամբ, որը նորոգեց մեզ համար նոր և կենդանի ճանապարհ... թող *մոտենանք Նրան*՝ ճշմարիտ սրտով, հավատքի լրությամբ, մեր սրտերը մաքրված չար խղճմտանքից, և մեր մարմինը լվացված սուրբ ջրով: Պինդ բռնենք հույսի դավանությունն անսայթաք, որ հավատարիմ է Խոստացողը» (Եբր. 10.19-23, *շեղագիրը հեղինակինն է):*

Մենք համարձակություն ունենք *մոտենալու* Նրան, Ով բնակվում է «Ամենասուրբ վայրո՛ւմ»: Այս վայրը վրան կամ տաճար չէ. այժմ այն մեր մարմիննե՛րն են: Այո՛, Աստված տեղափոխվեց այն մարդկանց սրտերը, որոնք սրբացված են Հիսուսի զոհով: Հաճախ, երբ կանչում ենք Նրան, մենք պատկերացնում ենք, որ մուտք ենք գործում միլիոնավոր կիլոմետրերով հեռու գտնվող մի հեռավոր գահի սրահ: Ո՛չ, Նա բնակվում է մեր սրտերում: Մենք դեռ չենք սովորել նայել մեր ներսը. մենք դեռ դուրս ենք նայում: Նոր կտակարանը պարզորեն հայտնում է մեզ. «Կարիք չկա, որ երկինք գնաք (որպեսզի գտնեք Քրիստոսին և ներքև իջեցնեք Նրան՝ ձեզ օգնելու համար)» (Հռոմ. 10.6, NLT):

Այո՛, Աստված ունի նյութական գահի սրահ, որը երրորդ երկնքում է: Այնուամենայնիվ, Նա այնքա՛ն էր փափագում մոտ լինել Իր ժողովրդին, որ Հին կտակարանում Նա պատրաստեց բնակության վայր վրանում՝ այս երկրի վրա, որտեղ գտնվում էր Նրա հայտնված ներկայությունը: Այժմ Նա պատրաստել է այլ բնակության վայր՝ այն մարդկանց սրտերում, որոնք նվիրել են իրենց կյանքը Հիսուսին և խնդրել են Նրա Հոգու լեցունությունը: Նա այնպիսի վայր է պատրաստել Իր համար, որն ամենից մոտ է Իր սիրո և համակրանքի առարկային: Երբ մենք մոտենում ենք Նրան, Ով բնակվում է մեր սրտում, մենք մուտք ենք գործում նաև այն գահի սրահը, որը միլիոնավոր կիլոմետրերով հեռու է մեզնից: Ինչպե՞ս է դա տեղի ունենում: Աստծո Հոգու մեջ տարածություն չկա: Նրա ներկայության մեջ լինելը նշանակում է լինել գահի սրահում՝ Հիսուսի և Հոր հետ, քանի որ Նա Քրիստոսի և Աստծո Հոգին է (տե՛ս Հռոմ. 8.9):

Ուշադրություն դարձրե՛ք, որ Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է. «Պինդ բռնենք հույսի դավանությունն անսայթաք, որ հավատարիմ է Խոստացողը»: Նա նույնպես գրում է.

> «Այս հույսը մենք ունենք որպես անձի խարիսխ՝ և հաստատ, և անսասան, և որը մտնում է *Ներկայության մեջ*՝ վարագույրի ետևը» (Եբր. 6.19, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Հին վարագույրի պատռվելը հնարավորություն տվեց յուրաքանչյուր երկրպագուի այս աշխարհում մտնել Աստծո ներկայության մեջ՝ նոր և կենդանի ճանապարհով: Այդ վարագույրն այժմ մեր մարմինն է: Եթե կարողանանք ներս մտնել մեր մարմնի արտաքին գավթից՝ խաչելով կամ ուրանալով այն (տե՛ս Գաղատ. 5.24), մենք կմտնենք նոր «Ամենասուրբ վայրը»՝ մեր սիրտը, որտեղ մշտական հաղորդակցություն կա: Նրա ներկայությունը մշտական իրականություն կդառնա: Նա երաշխավորեց, որ եթե մենք մոտենանք Իրեն ճշմա-

րիտ սրտերով, Նա կհայտնի՛ Իր ներկայությունը: Նա երբեք չասաց, որ դա նախատեսված է եղել սահմանափակ ժամանակվա համար: Ինչպես որ խորանում Նրա ներկայությունը մշտական էր, երբ Իր ժողովուրդը հավատարիմ էր Իրեն, այնպես էլ Նրա ներկայությունը մշտական է մեր սրտերում պատրաստված Իր խորանում:

Կրկի՛ն լսեք Հակոբոսի խոսքերը. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ»: Ինչպիսի՛ հույս, ինչպիսի՛ պարզորոշ հավաստիացում. Աստված խոստանում է և երդվում է Իրենով, և «անկարելի է, որ Աստված սուտ խոսի, [որ] հաստատուն մխիթարություն ունենանք մենք, որ ապավինեցինք՝ մեր առջև դրված հույսը բռնելու» (Եբր. 6.18): Ո՞րն է այս հույսը: Եթե մենք մոտենանք, Նա կմոտենա մեզ: Նա երաշխավորե՛լ է դա:

Այդ դեպքում, ինչո՞ւ ավելի շատ մարդիկ չեն վայելում Նրա հայտնված ներկայությունը: Ինչպես Է. Ու. Թոզերն էր աղաղակում.

> «Եթե վարագույրն արդեն հեռացվել է՝ Հիսուսի մարմնի պատռվելով, և եթե ոչինչ Աստծո կողմից չի խանգարում մեզ մտնել, ինչո՞ւ ենք մենք հապաղում: Ինչո՞ւ ենք մենք համաձայնում անցկացնել մեր բոլոր օրերը Սրբություն սրբոցից դուրս և այդպես էլ ներս չենք մտնում՝ Աստծուն տեսնելու համար: Մենք լսում ենք, որ Փեսան ասում է. «Ցո՛ույց տուր ինձ քո երեսը, ձայնդ ինձ լսե՛լ տուր, որովհետև ձայնդ քաղցր և դեմքդ հաճելի է» (Երգ երգոց 2.14): Մենք զգում ենք, որ այդ կանչը մեզ է վերաբերում, բայց, միևնույն է, չենք մոտենում Նրան, և տարիներն անցնում են, և մենք ծերանում և հոգնում ենք խորանի արտաքին գավիթներում: Ի՞նչն է խոչընդոտում մեզ» (*«Ձգտում Աստծո հանդեպ»*):

Կրկին, հարցը հետևյալն է. ի՞նչն է խոչընդոտում մեզ: Ինչո՞ւ ենք մենք պայքարում մեր ուժերով և վրիպում՝ մեր կուրութ-

յան պատճառով: Ինչո՞ւ շատերը բավականություն չեն ստանում և ձանձրանում են, այնինչ մենք ունենք նման հրաշալի հույս, որը հաստատված է Նրա անխախտ խոստմամբ: Շարունակելով՝ մենք կբացահայտենք, թե ինչն է խոչընդոտում այս հրաշալի հարաբերությունը, որն Աստված հասանելի է դարձրել յուրաքանչյուր հավատացյալի համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Այս գլխի սկզբում տրվում են հետևյալ հարցերը. «Ինչո՞ւ են... շատերը հաշտվել Աստծո հետ մտավոր մակարդակի շփումով: Ինչո՞ւ ենք մենք բավարարվել այնպիսի քրիստոնեությամբ, որը զուրկ է Քրիստոսի ներկայությունից: Ինչպե՞ս մենք սովորեցինք գոհունակ լինել՝ առանց մտերմության»: Ինչպե՞ս դուք կպատասխանեիք այդ հարցերին:

2. Հեղինակը նշում է, որ, ըստ հոգեբանության, ավելի քան հինգ տարում ունեցած հարաբերությունները ձևավորում են մեր անհատականությունը: Նա նույնպես պնդում է, որ Աստվածաշունչը հաստատում է սա. «Չար ընկերակցություններն ապականում են բարի վարքերը» (Ա Կորնթ. 15.33), և «Իմաստունների հետ վարվողն իմաստուն կդառնա» (Առակ. 13.20): Ձեր կյանքում եղե՞լ են այնպիսի իրավիճակներ, երբ այս երկուսն էլ տեղի են ունեցել: Ինչպիսի՞ն էին յուրաքանչյուրի արդյունքները:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՍՏԾՈ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Նա մտերմություն առաջարկեց նրանց,
սակայն, իրենց իսկ ընտրությամբ,
նրանք չկարողացան ընդունել այն:

Երբ գրում էի այս բացման գլուխները, իմ սրտում սաստիկ քաղց էր առաջանում: Այս ամենի մասին խոսելը բորբոքում է իմ ներսի կրակը և ավելացնում է իմ ցանկությունը՝ փնտրելու Նրան, Ով հրաշալի կերպով սիրում է մեզ: Նա մշտապես հետամուտ է եղել մեզ՝ անհատապես, բոլոր ժամանակների այս սիրավեպի ընթացքում: Այնուամենայնիվ, Նա, Ով լիովին արժանի է, որ ինքներս հետամուտ լինենք Նրան, այնքան էլ *հեշտ թիրախ* չէ: Նա սուրբ և մեծ Թագավոր է, ուրեմն Նրան պետք է երկյուղածությամբ վերաբերվել: Այդ պատճառով անկարելի է խոսել Աստծուն մոտենալու մասին՝ առանց անդրադառնալու սուրբ երկյուղի թեմային:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Երբ խոսքը սուրբ երկյուղի մասին է, «փնտրողներին հարմարեցված ուղերձները» և ճշմարտությունը հաճախ բաժանվում են: Նման ուղերձներ կարելի է գտնել ցանկացած հարանվանությունում և շրջանակներում. մարդիկ քարոզում են այնպիսի Աստծո, որը ձգտում է մարդկանց և փափագում է օրհնել նրանց, սակայն այդ ուղերձները սխալ են, քանի որ անտեսում են Նրա սրբությունը: Հաճախ դա արվում է բարի դրդապատճառներով. ոմանք տեսել կամ վերապրել են օրինապաշտության ցավալի դրսևորումներ, իսկ մյուսները պարզապես ցանկանում են սեր և հոգատարություն ցուցաբերել մարդկանց հանդեպ: Սակայն, ցավոք, երբեմն մարդիկ միտումնավոր ոչ լիարժեք ուղերձ են քարոզում՝ ավելի շատ հետևորդներ ձեռք բերելու համար:

Այն մարդիկ, որոնք փախչել են օրինապաշտության կապանքներից և միայն քարոզում են սիրող, ըմբռնող Աստծո, որը ծածկում է մեր անօրինությունը և աշխարհիկությունը, իրենց շարժառիթներով և մեթոդներով ընդամենը հակադարձում են իրենց նախկին փորձառությանը: Նրանք չեն ընդունել այդ ուղերձը՝ մտնելով Աստծո ներկայության մեջ և անձամբ լսելով Նրա Խոսքը: Եթե այդպես վարվեին, կգիտակցեին, որ չկա Նրան մոտենալու այլ ճանապարհ՝ բացի այն ուղուց, որը եզրագծված է և՛ սուրբ սիրով, և՛ սուրբ երկյուղով:

Այդպիսի ուղերձները քարոզում են «հեշտորեն հասանելի Տիրոջ»՝ ձախողելով հենց այն նպատակը, որին փորձում են հասնել: Տիրոջ երկյուղն անտեսելը, ըստ էության, «փակում է» Աստծո ներկայությունը մարդկանցից:

ԱԿՆԱԾԱԼԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Գոյություն ունի մշտական և անփոփոխ ճշմարտություն Նրա ներկայության մեջ ընդունելություն ստանալու վերաբերյալ: Այն ամփոփված է այս մեկ խոսքով.

«Աստծուց պետք է մեծապես երկյուղել սուրբերի ժողովում, և Նրանից պետք է ակնածեն նրանք, ովքեր Նրա շուրջն են» (Սաղմ. 89.7, NKJV):

Կրկին կարդանք այս խոսքի երկրորդ մասը. «Աստծուց... պետք է ակնածեն նրանք, ովքեր Նրա շուրջն են»: Այս պնդումը մշտապես ճիշտ է և անփոփոխ. Աստված երբեք չի հայտնի Իր ներկայությունը այնպիսի մթնոլորտում, որտեղ Իրեն ակնածանքով չեն վերաբերվում: Նա չի մոտենա և չի բնակվի այնպիսի միջավայրում, որտեղ Իրեն չեն վերաբերվում մեծագույն պատվով, գնահատանքով և հարգանքով: Կարևոր չէ, թե որքան հաճելի են երգերը կամ «երկրպագությունը», որքան տպավորիչ է քարոզը կամ ուսուցումը, կամ որքանով է աղոթքը համապատասխանում Աստվածաշնչին. եթե Աստծուն երկյուղով չեն վերաբերվում, Նա չի մոտենա՝ Իրեն հայտնելու համար: Կլինի այնպես, ինչպես Հեղիի և նրա որդիների կյանքում:

Տարիների ընթացքում ես մտել եմ այնպիսի եկեղեցական սրահներ, որոնցում հարյուրավոր կամ հազարավոր հավատացյալներ էին հավաքված, և անթիվ անգամներ պատահել է, որ, ցավոք, դրանցում նույնիսկ Աստծո ներկայության նշույլ չի եղել: Պատճառն այն էր, որ կար սուրբ երկյուղի պակաս հավատացյալների, իսկ երբեմն նաև առաջնորդների միջև: Փառաբանության և երկրպագության թիմերը կարող են գերազանց լինել՝ ծածանվող դրոշներով և պարողներով, հմուտ երաժիշտներով և երգիչներով: Ծառայությունները կարող են հագեցած լինել բարձր տեխնոլոգիական միջոցներով՝ էկրանների վրա ցուցադրվող հայտարարություններով և այլ նորություններով: Միջոցառումը կարող է ստեղծարար և զվարճալի լինել. մարդկանց կարող են ներկայացնել հումոր և հետաքրքրական թեմաներ, բայց ինչ-որ բան պակասում է: Մթնոլորտը զուրկ է Աստծո ներկայությունից: Ցավալին այն է, որ ներկաների մեծ մասը տեղյակ չէ, թե իրականում որքան դատարկ է մթնոլորտը: (Այս պահին թույլ տվեք նշել, որ հաղորդակցական նորարարական

միջոցները թարմություն են բերում և ինքնին ոչ մի կերպով չեն խոչընդոտում Աստծո հայտնված ներկայությունը: Ես եղել եմ նման առաջադեմ վայրերում և առատորեն վայելել եմ Աստծո ներկայությունը: Աստծո ներկայությունը որևէ առնչություն չունի տեխնոլոգիայի կամ դրա բացակայության հետ. այն արտացոլում է սրտի վիճակը):

Այսպիսի իրավիճակներում Տերն առաջնորդում է ինձ քարոզել հնազանդության և Տիրոջ երկյուղի մասին, և ամեն անգամ, երբ ապաշխարության կոչ եմ անում, ես ականատես եմ լինում մեծամասնության, հաճախ նաև առաջնորդների արձագանքին: Գրեթե ամեն անգամ մինչև աղոթելը հայտնվում է Աստծո ներկայությունը, և մարդիկ լաց են լինում: Ինչո՞ւ է սա տեղի ունենում: Քանի որ Աստված մոտենում է նրանց, ովքեր սիրում են, պատվում են և երկյուղով են վերաբերվում Իրեն: Այս պատճառով, Հակոբոսը գրում է.

> «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակոբ. 4.8,9):

Առաջին հայացքից գուցե մտածեք, որ այս հատվածում Հակոբոսը դիմում է անհավատներին, քանի որ մենք սովորաբար «մեղավոր» ենք անվանում վերստին չծնված մարդկանց: Այնուամենայնիվ, իր ուղերձի մեջ Հակոբոսը տասնհինգ անգամ «եղբայրներ» է անվանում իր ունկնդիրներին: Նա խոսում է վերստին ծնված մարդկանց հետ:

Այնպես որ, դիտարկենք «մեղավոր» բառը հունարենում: Այն *«համարտոլոս»* բառն է: Ըստ Վայնի սահմանման, այն բառացիորեն նշանակում է «նա, ով վրիպում է նշանակետից»: Այս բառը, իհարկե, կարող է վերաբերել չփրկված մարդուն, բայց այն նույնպես օգտագործվում է քրիստոնյաների վերաբերյալ: Այս համատեքստում այն վերաբերում է հավատացյալին, որը վրիպում է նշանակետից իր մտքում, ինչը, իր հերթին, առաջացնում է կրկնվող սխալ գործեր կամ վարք: Նա շարու-

նակում է. «Ձեր սրտերը մաքրեք, ո՛վ երկմիտներ»: Այս հորդորով նա ցույց է տալիս հավատացյալի նշանակետից վրիպելու հիմնական պատճառը:

Անչափ կարևոր է, որ հասկանանք՝ Տիրոջ երկյուղը սկիզբ է առնում սրտում և արտահայտվում է մեր տեսանելի գործերում: Մի անգամ Աստված ասաց հետևյալը Իր ժողովրդի մասին (ուշադրություն դարձրեք «մոտենալ» բառին).

> «Այս ժողովուրդը իր բերանով է *մոտենում* և իր շրթունքներով է Ինձ պատվում, իսկ նրանց սիրտը հեռու է Ինձնից, և նրանց՝ Ինձ պատվելը մարդկանց սովորեցրած պատվեր է» (Եսայի 29.13, *շեղագիրը հեղինակինն է):*

Աստծուն մոտենալը մշտապես սկիզբ է առնում այնպիսի սրտում, որն ունի Աստծո երկյուղը և սիրում է Աստծուն ավելի շատ, քան ցանկացած մարդու և ցանկացած բան: Այն պարզապես տեսանելի գործ չէ, այլ՝ սրտի շարժառիթ: Այնպես որ, սահմանելով Տիրոջ երկյուղը, նախ՝ մենք պետք է խոսենք սրտի վիճակի մասին:

Եկեք սկսենք. Աստծուց երկյուղելը նշանակում է արժևորել, պատվել և առավելագույն գնահատանքով վերաբերվել Նրան, ինչպես նաև պատկառանք և ակնածանք տածել Նրա հանդեպ և մեծարել Նրան: Այն նշանակում է դողալ՝ մեծագույն հարգանքով Նրա, Նրա ներկայության, Նրա պատվիրանների, ինչպես նաև ցանկությունների հանդեպ: Սա միայն սկիզբն է:

ԱՆԵՐԿՅՈՒՂ ԳԱԼ ԱՍՏԾՈ ԱՌՋԵՎ

Երբեմն ինչ-որ բանի իմաստը հասկանալու համար օգտակար է իմանալ, թե ինչ այն չէ: Մենք կարող ենք տեսնել Աստծո ներկայությանը առանց սուրբ երկյուղի մոտենալու գերազանց օրինակ Ահարոնի երկու որդիների կյանքում:

Մինչև խորանը ավարտելը, Տերը պատվիրեց Մովսեսին. «Եվ դու քեզ մոտ մոտեցրու քո եղբայր Ահարոնին և նրա որ-

դիներին նրա հետ՝ Իսրայելի որդիների միջից, որ Ինձ քահանայություն անեն՝ Ահարոնին և Ահարոնի որդիներ Նադաբին և Աբիուդին, Եղիազարին և Իթամարին» (Ելից 28.1):

Այս մարդիկ առանձնացվել և կրթվել էին, որպեսզի ծառայեին Տիրոջը և կանգնեին խրամատում ժողովրդի համար: Նրանք լիազորված էին մոտենալու Նրա ներկայությանը: Նրանց պարտականությունները և երկրպագության չափանիշները ներկայացված էին հստակ ցուցումներով, որոնք Աստված փոխանցել էր Մովսեսին: Երբ նրանց պատրաստությունն ավարտվեց, նրանց ընծայեցին Աստծուն, ինչից հետո Աստծո ներկայությունը լցրեց խորանը, և նրանց ծառայությունը սկսվեց:

Բայց նրանցից երկուսի ծառայությունը կարճ տևեց այն բանից հետո, երբ Աստծո փառքը հայտնվեց խորանում: Գրված է, որ մի փոքր ժամանակ անց.

> «Ահարոնի որդիները՝ Նադաբն ու Աբիուդը, ամեն մեկն իր բուրվառն առավ, և նրանց մեջ կրակ դրին և վրան խունկ դրին և Տիրոջ առջև *օտար* (կամ՝ *պիղծ)* կրակ մատուցեցին, որ Ինքը չէր պատվիրել նրանց» (Ղևտ. 10.1, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք, որ Նադաբը և Աբիուդը մատուցեցին օտար կամ պիղծ կրակ Տիրոջ ներկայության մեջ: *«Պիղծ»* բառի սահմանումներից մեկը *«Վեբսթերի բառարանում»* հետևյալն է. «Անարգանք կամ արհամարհանք ցուցաբերել սուրբ բաների հանդեպ. աներկյուղ»: Այն նշանակում է հասարակի պես վերաբերվել այն ամենին, ինչ Աստված սուրբ կամ սրբված է անվանում: Այս երկու տղամարդիկ վերցրին այն բուրվառները, որոնք առանձնացված էին Տիրոջը պաշտելու համար, և լցրին իրենց ընտրած կրակով և խնկով, ոչ թե այն ընծայով, որը կարգադրել էր Աստված: Նրանք անփույթ էին սուրբ բաների նկատմամբ, և դա հանգեցրեց նրանց անհնազանդությանը:

Նրանք մոտեցան Տիրոջ ներկայությանը՝ բերելով աներկյուղ, անընդունելի զոհ. նրանք հասարակ համարեցին այն, ինչը սուրբ էր: Ահա թե ինչ տեղի ունեցավ.

> «Եվ Տիրոջ առջևից կրակ ելավ և սպառեց նրանց, և նրանք մահացան Տիրոջ առջև» (Ղևտ. 10.2):

Այս երկու տղամարդիկ ակնթարթորեն դատաստանի ենթարկվեցին իրենց աներկյուղ վերաբերմունքի համար և իսկույն մահացան: Այս աներկյուղ արարքը տեղի ունեցավ անմիջապես Աստծո ներկայության մեջ. թեև նրանք քահանաներ էին, դա չէր նշանակում, որ նրանք ազատված էին Աստծուն պատիվ ցուցաբերելուց: Նրանք մեղանչեցին՝ մոտենալով սուրբ Աստծուն այնպես, ասես Նա հասարակ էր: Նրանք սկսել էին սովորականի պես վերաբերվել Նրա ներկայությանը: Լսե՛ք Մովսեսի խոսքերն անմիջապես նրանց դատաստանից հետո և ուշադրություն դարձրե՛ք *«Ինձ մոտեցողներով»* արտահայտությանը.

> «Եվ Մովսեսն ասաց Ահարոնին. «Սա այն է, որ Տերը խոսեց՝ ասելով. *«Ինձ մոտեցողներով* պիտի սրբվեմ, և ամբողջ ժողովրդի առջև պիտի փառավորվեմ»»: Եվ Ահարոնը լռեց» (Ղևտ. 10.3, *շեղագիրը հեղինակինն է):*

Սա հավիտենական, ինչպես նաև համընդհանուր պնդում է: Աստված ասում է, որ ոչ ոք չի կարող *մոտենալ Իրեն*՝ անհարգալից վերաբերմունքով, կամ Իրեն հասարակ համարելով: Ովքեր Նրա ներկայության մեջ են, պետք է սուրբ համարեն և ակնածանքով վերաբերվեն Նրան:

Տերը պարզորեն հայտնել էր, որ աներկյուղ վերաբերմունքը չի կարող մնալ Իր ներկայության մեջ, բայց Նադաբը և Աբիուդն ուշադրություն չդարձրին դրան: Այսօր ոչինչ չի փոխվել. Նա նույն սուրբ Աստվածն է: Մենք չենք կարող ակնկալել, որ մեզ թույլ կտրվի մտնել Նրա ներկայության մեջ՝ անհարգալից վերաբերմունքով:

Չկան հատուկ բացառություններ՝ ընտանեկան կապերի պատճառով: Այս երկու քահանաները Մովսեսի զարմիկները և Ահարոնի որդիներն էին: Բայց երկուսն էլ պետք է հասկանային, որ չի կարելի կասկածի ենթարկել Աստծո դատաստանները, որովհետև միայն Նա է արդար: Իրականում, Մովսեսը զգուշացրեց Ահարոնին և նրա երկու ողջ մնացած որդիներին նույնիսկ չսգալ նրանց դատաստանի պատճառով, որ իրենք էլ չմահանային: Այդկերպ նրանք ավելի կանարգեին Տիրոջը. այնպես որ, Նադաբի և Աբիուդի մարմինները հեռացվեցին ժողովրդի բանակատեղիից և թաղվեցին:

Այս երկու երիտասարդները կարևորություն չտվեցին Աստծո հստակ հրահանգներին: Նրանք վարվեցին առանց ակնածանքի, չունենալով Աստծո երկյուղը, և սրտի այս վիճակը եղավ անհնազանդ արարքների պատճառ: Մենք տեսնում ենք, որ մեղքի արմատը Տիրոջ երկյուղի բացակայությունն է:

ՎԱԽԵՑԱ՞Ծ, ԹԵ՞ ԵՐԿՅՈՒՂԱԾ ԱՍՏԾՈՒՑ

Երբ Աստված հայտնվեց Իսրայելի զավակներին Սինա սարի վրա, նրանք չկարողացան դիմանալ Նրա ներկայությանը: Պատճառն այն էր, որ նրանք չունեին Տիրոջ երկյուղը, քանի որ, երբ ժողովուրդը ետ քաշվեց Նրա ներկայությունից, Մովսեսը դիմեց նրանց.

> «Մի՛ վախեցեք, որովհետև Աստված ձեզ փորձելու համար է եկել՝ այնպես, որ Նրա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչեք» (Ելից 20.20):

Մովսեսն ասաց. «Մի՛ վախեցեք», որովհետև Աստված եկել է, որպեսզի տեսնի, թե արդյո՞ք Իր «վախը ձեր առջև է»: Թվում է՝ սա հակասություն է, սակայն այդպես չէ: Մովսեսը տարբերակում էր դնում Աստծուց վախենալու և Տիրոջ երկյուղի միջև: Տարբերությունն ահռելի է: Այն մարդը, որը վախենում է Աստծուց, թաքցնելու բան ունի. նա չի ցանկանում մոտենալ, քանի

որ Աստծո ներկայության պայծառ լույսը կբացահայտի այն, ինչ նա թաքցնում է: Պողոսն ասում է մեզ. «Այն ամենը, ինչ բացահայտվում է, հայտնի է դառնում լույսով» (Եփես. 5.13, NKJV):

Աստված ցանկանում է, որ մենք ոչ թե վախենանք, այլ երկյուղ ունենանք Իրենից: Պողոսը գրում է. «Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության (կամ՝ վախի) հոգի» (Բ Տիմոթ. 1.7), և Հովհաննեսը գրում է. «Վախ չկա սիրո մեջ, այլ՝ կատարյալ սերը հեռացնում է վախը: Որովհետև վախը տանջանք ունի, բայց նա, որ վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ» (Ա Հովհ. 4.18): Այս խոսքերում առաքյալները նկատի ունեին վախի հոգին, ոչ թե Տիրոջ երկյուղը, քանի որ Նոր կտակարանի հեղինակները նաև պատվիրում են մեզ. «Ահով և դողալով գործե՛ք ձեր անձերի փրկությունը» (Փիլիպ. 2.12), և կրկին, Պողոսը պատվիրում է, որ «[Պաշտենք] հաճությամբ Աստծուն՝ ահով և երկյուղածությամբ: Որովհետև մեր Աստված փչացնող կրակ է» (Եբր. 12.28,29): Պետրոսը նույնիսկ ավելի ուղղակիորեն է խոսում այս մասին. «Որովհետև գրված է. «Սո՛ւրբ եղեք, որ Ես սուրբ եմ»: Եվ եթե Հայր եք կանչում Նրան, որ առանց աչառության դատաստան է անում ամեն մեկի գործի պես, ապա ձեր պանդխտության ժամանակը վախով վարվեք» (Ա Պետր. 1.16,17): Կարդալով այս պնդումները՝ անկասկած չեք կարող առարկել, որ սուրբ երկյուղը Նոր կտակարանի քրիստոնեության կարևորագույն մասն է:

Ուշադրություն դարձրեք, որ երբ եկավ Աստծո ներկայությունը, Մովսեսն ասաց ժողովրդին, «որ Նրա վախը ձեր առջև լինի, որ չմեղանչեք»: Ոչ թե Աստծո սերը, այլ Տիրոջ երկյուղն է, որ հեռու է պահում մեզ մեղքից: Պողոսը պատվիրում է գործել մեր անձերի փրկությունը «ահով և դողալով», ոչ թե «սիրով և բարությամբ»: Մեկ այլ թղթում նա հորդորում է, որ ունենալով խոստում այն մասին, որ Աստծո ներկայությունը բնակվում է մեր մեջ, «մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1): Ուշադրություն դարձրեք, որ նա չասաց. «Աստծո սիրով»:

Երբեք չեմ մոռանա իմ այցելությունը մի հայտնի ծառայողի, որը բանտում էր հայտնվել խարդախության պատճառով: Ես հարցրի.

- Ե՞րբ դուք թողեցիք Հիսուսի սերը:

Նա նայեց ինձ և անվարան պատասխանեց.

- Երբե՛ք:

Զարմացած՝ ես կրկին հարցրի.

- Այդ դեպքում, ինչպե՞ս դուք խարդախություն և շնություն գործեցիք:

Նա ասաց.

- Ջո՛ն, ես սիրում էի Աստծուն ամբողջ այդ ընթացքում, բայց չէի վախենում Նրանից: – Եվ նա այնպիսի բան ասաց, ինչը ցնցեց ինձ: – Ջո՛ն, միլիոնավոր ամերիկացի քրիստոնյաներ ճիշտ ինձ նման են: Նրանք անվանում են Հիսուսին իրենց Փրկիչը և սիրում են Նրան, սակայն չեն վախենում Նրանից՝ որպես իրենց գերագույն Տեր:

Նրա խոսքերը բացեցին իմ աչքերը: Ես հասկացա, որ մենք կարող ենք սիրել «Հիսուսի» մի պատկեր, որը ստեղծել ենք մեր երևակայության մեջ և մտքում, բայց գուցե դա իրական Հիսուսը չէ, քանի որ Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Տիրոջ երկյուղը Աստծուն մտերմորեն ճանաչելու սկիզբն է կամ սկզբնակետը (տե՛ս Առակ. 1.7, 2.5): Ես հասկացա, որ այդ մարդը սիրել էր խեղաթյուրված պատկերացում Հիսուսի մասին:

«ԵՐԱՆԻ ՆՐԱՆՔ ՎԱԽԵՆԱՅԻՆ ԻՆՁՆԻՑ»

Մովսեսը հստակ ցույց տվեց, որ Տիրոջ երկյուղն է, որ պահում է մեզ մեղքից, իսկ մեղքը բաժանում է մեզ Աստծո հետ մտերիմ լինելուց: Տերն ասաց Իր ուխտի ժողովրդին. «Ձեր անօրինությունները ձեզ բաժանել են ձեր Աստծուց, և ձեր մեղքերը թաքցրել են Նրա երեսը ձեզնից» (Եսայի 59.2, NKJV): Ուշադրություն դարձրեք՝ նա ասաց, որ մեր մեղքերը բաժանե-

ցին մեզ Նրանից, ոչ թե Նրան՝ մեզնից: Նա ասում է այս խոսքերն Իր ժողովրդին, ոչ թե հեթանոսներին: Մենք ենք, որ բաժանում ենք մեզ Աստծո հետ մտերմությունից, և դրա արմատը սուրբ երկյուղի բացակայությունն է:

Ի տարբերություն այն մարդու, որը վախեցած է Աստծուց, Աստծո երկյուղն ունեցող մարդը թաքցնելու ոչինչ չունի: Նա գիտի, որ իր կյանքը բաց գիրք է Տիրոջ առջև: Նա վեր է դասում Աստծո ցանկությունները մնացած ամեն ինչից: Դրանք ավելի ծանրակշիռ են նրա համար, քան իր ընկերների, ընտանիքի կամ հենց իր անձի ցանկությունները: Նա հասկանում է, որ ոչինչ չի կարող ավելի մեծ բավականություն պատճառել, քան Աստծուն հնազանդվելը: Նա ուրացել է իր անձը, վերցրել է իր խաչը և հետևում է Հիսուսին: Նա ապրում է Աստծո համար:

Այսպիսին էր Մովսեսի կյանքը: Նա երկյուղ ուներ Աստծուց, իսկ Իսրայելի ժողովուրդը՝ ոչ: Նրանք արժևորում էին իրենց ցանկությունները, կարիքները և հարմարավետությունն ավելի, քան այն, ինչ Աստված էր ցանկանում: Նրանք չէին վստահում Աստծուն, թեև շարունակ պնդում էին հակառակը: Նրանք մշտապես կասկածում էին, թեև նրանց դավանությունն այլ էր: Նրանք չէին արժևորում Աստծո Խոսքը, ցանկությունները և հրամաններն ավելի, քան ցանկացած բան, և քանի որ նրանք չունեին երկյուղ Աստծուց, այդպես էլ չկարողացան ճշմարտապես սիրել Նրան: Ինչո՞ւ: Նրանք երբեք չէին վերապրել իրական հայտնություն Նրա մասին: Սա էր պատճառը, որ նրանք ետ քաշվեցին Աստծո ներկայությունից: Կային խնդիրներ, որոնք նրանք ուզում էին թաքցնել Նրա ներկայության լույսից: Նրանք գիտեին, որ ինչ-որ պահին այդ լույսը պարտադրելու էր իրենց հեռացնել դրանք և վճռել, թե ում էին ուզում ծառայել:

Իսրայելը ետ քաշվեց, իսկ Մովսեսը մոտեցավ: Այժմ նա պետք է ասեր Տիրոջը, որ այն ժողովուրդը, որին Նա այդքան ազդեցիկ և հրաշալի կերպով ազատել էր գերությունից և Իր մոտ էր բերել, բոլորովին չէր ուզում մոտենալ Իրեն: Մովսեսը

զարհուրում էր այդ պահից, բայց Աստված արդեն գիտեր, և Նա զարմացրեց Մովսեսին՝ պատասխանելով.

> «Այս ժողովրդի՝ քեզ ասած խոսքերի ձայնը լսեցի. նրանց ամեն ասածը լավ է» (Երկր. Օր. 5.28):

Ես միայն կարող եմ պատկերացնել Մովսեսի ապշահար հայացքը: Նա ոչ միայն հանկարծակիի եկավ այն բանից, որ Աստված գիտեր նրանց խոսքերը (մի՞թե զարմանալի չէ, որ մենք մոռանում ենք, որ Նա գիտի ամեն ինչ), այլև ինչպիսի՜ ցնցում էր լսելը, որ Իսրայելի զավակներն ի վերջո ինչ-որ լավ բան ասացին: Հավանաբար, Մովսեսը հարցրեց. «Ինչո՞ւ նրանք չեն կարող մոտենալ Քեզ»:

Կարելի է զգալ Աստծո ձայնի տրտմությունը, երբ Նա բացատրեց, թե ինչու ժողովուրդը չէր կարող *մոտենալ Իրեն*.

> «Երանի՜ թե նրանց սիրտն էլ այնպես լիներ, որ Ինձնից վախենալով՝ Իմ բոլոր պատվիրանները պահեին ամեն ժամանակ» (Երկր. Օր. 5.28):

Իր պատասխանով Աստված պարզորեն հայտնեց երկու բան: Առաջինը՝ անհնար է մոտենալ Աստծուն՝ առանց սուրբ երկյուղի, և երկրորդը՝ այս երկյուղն ունենալու ապացույցը Նրա պատվիրաններին հնազանդվելն է: Իսրայելի զավակները գիտեին ճիշտ խոսել և ճիշտ կերպով ներկայանալ, բայց նրանց սրտերում չկար երկյուղ Աստծուց: Այն մշտապես սկիզբ է առնում սրտից և դրսևորվում է մեր հնազանդությամբ:

Դրանից հետո Տերն անում է Հին կտակարանի ամենացավալի պնդումը: Նա փոխանցում է այն Իր ժողովրդին՝ Մովսեսի միջոցով.

> «Գնա՛ նրանց ասա. «Ետ դարձեք ձեր վրանները»» (Երկր. Օր. 5.30):

Որքա՜ն կոտրված պետք է լիներ Աստծո սիրտը, և ինչպի-

սի՛ ծանրություն պետք է լիներ Մովսեսի սրտին, երբ նա վերադառնում էր: Նույնիսկ այս պահին իմ սիրտը զգում է այդ ծանրությունը: Աստված հանեց նրանց Եգիպտոսից մեկ նպատակով՝ բերել Իր մոտ, իսկ նրանք բաց թողեցին այդ հնարավորությունը (տե՛ս Ելից 19.4): Դա Նրա մեծ փրկության աստվածային նպատակն էր, բայց երբ Նա Իրեն հայտնելու հնարավորություն ունեցավ, ժողովուրդը ետ քաշվեց. նրանք չկարողացան դիմանալ Նրա ներկայությանը, քանի որ չէին վախենում Նրանից: Նրանք վերադարձան իրենց վրանները և մնացին առանձնացված Նրա ներկայությունից և ձայնից: Նա մտերմություն առաջարկեց նրանց, սակայն, իրենց իսկ ընտրությամբ, նրանք չկարողացան ընդունել այն:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՏԻՐՈՋ ՀԵՏ

Այն բանից հետո, երբ Աստված պատվիրեց ժողովրդին վերադառնալ իրենց վրանները, Նա ասաց Մովսեսին.

> «Իսկ դու կանգնի՛ր այստեղ՝ Ինձ մոտ, և Ես կխոսեմ քեզ հետ» (Երկր. Օր. 5.31, NKJV):

Զարմանալի՛ է: «Կանգնի՛ր այստեղ՝ Ինձ մոտ, և Ես կխոսեմ քեզ հետ»: Ինչպիսի՛ բերկրանք: Ինչպիսի՛ բացարձակ ուրախություն: Ինչպիսի՛ անըմբռնելի արտոնություն: Մովսեսը հրավեր է ստանում մնալու և լսելու այն, ինչ Աստծո սրտում է: Չկա ավելի լավ բան ամբողջ տիեզերքում: Հրավեր ստանալ՝ մնալու Նրա ներկայության մեջ, Ում սերը, իմաստությունը, գիտելիքը և զորությունն անսահման են: Կանգնելու Նրա կողքին, Ում պաշտում և փափագում է ամբողջ երկինքը. Մովսեսը ստացա՛վ այս հրավերը:

Մովսեսն ընտրել էր Տիրոջ երկյուղը և այդ պատճառով կարող էր մտերմորեն շփվել Նրա հետ: Մենք տեսնում ենք այս պնդման ապացույցը սաղմոսերգուի խոսքերում. «Նա իմաց արեց Իր ճանապարհները Մովսեսին, Իսրայելի որդիներին՝

Իր գործերը» (Սաղմ. 103.7): Մովսեսը հաճախ գիտեր, թե ինչ էր Աստված անելու, նույնիսկ մինչև Նա կաներ դա, քանի որ Տերը սրտում եղածով կիսվում էր Մովսեսի հետ, երբ Մովսեսը Նրա ներկայության մեջ էր՝ այնտեղ, որտեղ ժողովուրդը չկարողացավ գալ:

Իսրայելը ճանաչում էր Աստծուն՝ իրենց աղոթքների պատասխաններով: Նրանք չէին ճանաչում Նրա շարժառիթները, ցանկությունները, ծրագրերը և Նրա սրտի խորքում եղած այլ բաներ: Նրանք գիտեին, թե ինչ էր Նա անում, բայց նույնիսկ պատկերացում չունեին, թե ինչու: Մովսեսը գիտեր Նրան այն ամենով, ինչ ասվում էր իրեն ծածուկ վայրում: Իմ ամենասիրելի աստվածաշնչյան խոսքերից մեկը հետևյալն է.

> «Տիրոջ մտերմությունը նրանց հետ է, որ վախենում են Նրանից, և Իր ուխտը սովորեցնում է նրանց» (Սաղմ. 25.14):

Առանց փոխելու համատեքստը, մենք կարող ենք ասել. «Տիրոջ սրտի գաղտնիքները նրանց հետ են, որոնք վախենում են Նրանից, և Նա ցույց կտա նրանց Իր ուխտի ճանապարհները»: Բոլորս գաղտնիքներ ունենք (որոնցից բոլորը չէ, որ վատն են), բայց մենք չենք պատմում դրանք մեր ծանոթներին, այլ՝ մտերիմ ընկերներին, որոնք մեր սրտակիցներն են, և որոնց մենք վստահում ենք: Պատճառն այն է, որ մենք գիտենք. նրանք երբեք չեն օգտագործի այն թանկ բաները, որոնք մեր սրտում են՝ մեզ վնասելու կամ շահագործելու համար: Մենք գիտենք, որ նրանք զգուշորեն կվարվեն այն բաների հետ, որոնք թանկ են մեզ համար: Մենք գիտենք, որ նրանք սխալ չեն մեկնաբանի այն, ինչով մենք կիսվում ենք, և չեն խեղաթյուրի դա՝ իրենց շահի համար: Նրանք գիտեն մեր սիրտը և ցանկանում են լավագույնը մեզ համար:

Նույնը վերաբերում է Աստծուն. Նա չի կիսվում Իր գաղտնիքներով այնպիսի մարդկանց հետ, որոնք չափազանց մտահոգված են սեփական հաճույքներով և բարեկեցությամբ: Նա

կիսվում է Իր գաղտնիքներով այնպիսի մարդկանց հետ, որոնք ունեն Նրա սրտի ձգտումները և նվիրել են Նրան իրենց կյանքերը: Նա կիսվում է Իր գաղտնիքներով այնպիսի մարդկանց հետ, որոնց ընկերներ է անվանում: Մի թարգմանություն հաստատում է սա. «Ընկերությունը Տիրոջ հետ պահված է նրանց համար, որոնք վախենում են Նրանից. նրանց հետ Նա կիսվում է Իր ուխտի գաղտնիքներով» (Սաղմ. 25.14, NLT):

ԱԲՐԱՀԱՄԸ՝ ԱՍՏԾՈ ԸՆԿԵՐ

Կար մի մարդ Հին կտակարանում, ով Աստծո ընկերը կոչվեց. նրա անունը Աբրահամ էր: Ինչո՞ւ էր նա Աստծո ընկերը: Պատասխանը Աբրահամի կյանքի մեծագույն փորձության մեջ է: Նա քսանհինգ տարի սպասել էր Աստծո խոստմանը՝ այն որդուն, որը ծնվեց իրենից և իր կին Սառայից, որն ամուլ էր: Աստված պարգևեց այդ որդուն, երբ Սառայի որդեծնության ժամանակը վաղուց անցել էր, և նրանք անվանեցին նրան Իսահակ, ինչը նշանակում է *«ծիծաղ»:* Այդ որդին այնպիսի ուրախություն բերեց նրանց տուն, որը վեր էր նրանց պատկերացումից:

Աստված ուշադրությամբ հետևում էր այս ընտանիքին, մինչ Աբրահամը և նրա սիրելի որդի Իսահակն ավելի էին սիրում և կապվում միմյանց: Եկավ փորձության ժամանակը, և Աստված խնդրեց Աբրահամին. «Ա՛ռ *քո սիրած* մեկ հատիկ որդուն՝ Իսահակին, և Մորիայի երկիրը գնա, և այնտեղ նրան ողջակեզ արա այն սարերից մեկի վրա, որ Ես քեզ կասեմ» (Ծնն. 22.2, *շեղագիրը հեղինակինն է):*

Կարո՞ղ եք պատկերացնել Աբրահամի ցնցումն այդ խնդրանքի պատճառով: Դա վերաբերում էր խոստացված որդուն, որին նա քսանհինգ տարի համբերատար սպասել էր: Իսմայելն արդեն վտարվել էր, և նա ձեռնունայն էր մնալու: Ինչո՞ւ հիմա, երբ սիրո կապն այդքան ուժգին էր: Ինչո՞ւ Աստված այդքան երկար սպասեց: Ինչո՞ւ Նա չխնդրեց դա, երբ նա նորածին էր: Բազմաթիվ աստվածաբաններ հավատում են, որ այդ ժամանակ Իսահակը երեսուներեք տարեկան էր:

Կարո՞ղ եք պատկերացնել այդ գիշերը: Աբրահամի ներսում, հավանաբար, պայքար էր ընթանում: Ինչպե՞ս Աստված կարող էր խնդրել դա իրենից: Ամեն ինչ հունով ընթանում էր. Իսահակը կամուսնանար, և նրա ժառանգներից կծնվեին ազգեր և թագավորներ, ինչպես որ Աստված խոստացել էր: Ինչպե՞ս Աստված կարող էր խնդրել նրա կյանքն այդքան վաղ տարիքում: Դուք լսո՞ւմ եք նրա ներսում ընդդիմացող հարցերը. *«Եթե այդպես է, ինչո՞ւ Նա տվեց ինձ Իսահակին: Ինչո՞ւ Աստված տվեց նրան, եթե վերցնելու էր: Արդյո՞ք Նա սիրում է Իսահակին այնքան, որքան ես եմ սիրում: Ինչո՞ւ Նա չի վերցնում իմ կյանքը՝ նրա փոխարեն»:*

Այնուամենայնիվ, ինչ-որ բան Աբրահամի ներսում հաղթահարեց բոլոր այդ հարցերը և մտքերը՝ նրա երկյուղը Տիրոջից: Աստված խոսել էր, և նա հնազանդվելու էր: Գրված է. «Եվ Աբրահամն *առավոտ կանուխ* վեր կացավ և իր էշի համետը դրեց և վեր առավ իր հետ երկու ծառաների և իր որդի Իսահակին: Եվ ողջակեզի փայտ ճղեց և վեր կացավ գնաց այն տեղը, որ Աստված իրեն ասել էր» (Ծնն. 22.3, *շեղագիրը հեղինակինն է):* Ուշադրություն դարձրե՛ք *«առավոտ կանուխ»* բառերին: Դուք երբևէ լսե՞լ եք, որ ինչ-որ մեկն ասի. «Աստված արդեն մի քանի ամիս է՝ խոսում է ինձ հետ այս մասին, բայց ես դեռ չեմ արել»: Նա ցույց է տալիս, որ չունի երկյուղ Տիրոջից:

Աստծուց երկյուղ ունենալը նշանակում է դողալ Նրա Խոսքից: Մենք հնազանդվում ենք, նույնիսկ եթե չենք տեսնում որևէ պատճառ դրա համար կամ որևէ օգուտ դրանից: Մենք հնազանդվում ենք, նույնիսկ երբ դա ցավ է պատճառում մեզ: Որպես Ավետարանի ծառայողներ, մենք մեծ վնաս ենք հասցրել Քրիստոսի մարմնին: Չափազանց հաճախ մենք ձևավորում ենք այնպիսի մոտեցում, որ մենք պետք է հնազանդվենք, միայն երբ գիտակցում ենք դրա օգուտը: Մենք ասում ենք. «Եթե զոհաբերեք, Աստված կանի հետևյալը...», «Եթե աղոթեք, Աստված կանի հետևյալը...», կամ՝ «Եթե հնազանդվեք, Աստված կանի հետևյալը...»: Մենք քարոզում ենք մի ուղերձ,

որը կոչվում է. «Եկ Հիսուսին՝ ինչ-որ բան ստանալու համար»: Արդյո՞ք ես հավատում եմ, որ Նա օրհնում է: Իհա՛րկե: Այնուամենայնիվ, օրհնությունը երբեք չպետք է լինի մեր շարժառիթը՝ Նրան ծառայելու համար: Մենք պետք է ծառայենք՝ հիմնվելով այն բանի վրա, թե ով է Նա, ոչ թե ելնելով այն բանից, թե ինչ Նա կարող է անել մեզ համար:

Աբրահամի հնազանդությունն անհապաղ էր, քանի որ նա երեք օրվա ճանապարհի ընկավ դեպի այն սարը, որն Աստված ցույց տվեց: Ինչո՞ւ Աստված չընտրեց ավելի մոտ մի վայր: Ինչո՞ւ երեք օրվա ճանապարհ: Ես համոզված եմ, որ Նա ժամանակ տվեց Աբրահամին՝ ամեն ինչի մասին մտածելու և նույնիսկ ետ դառնալու համար: Այլ բան է սկզբնական քայլ անելը, երբ լսում եք Աստծո ձայնը, բայց ի՞նչ կասեք գործը մինչև վերջ հասցնելու մասին: Ի՞նչ կանեք երեք օր անց, երբ ոչինչ չեք լսել Նրանից, և արդեն հառել եք ձեր հայացքն այն սարին, որտեղ պետք է մահվան մատնեք ամենակարևոր մարդուն ձեր կյանքում:

Բայցևայնպես, Աբրահամը բարձրացավ սարի գագաթը, զոհասեղան կառուցեց, կապեց Իսահակին և բարձրացրեց իր դանակը: Հանկարծ Տիրոջ Հրեշտակը կանչեց Աբրահամին.

> «Ձեռքդ մի՛ բարձրացրու տղայի վրա և ոչինչ մի՛ արա նրան. որովհետև հիմա Ես գիտեմ, որ դու վախենում ես Աստծուց, *քանի որ* դու չխնայեցիր քո որդուն՝ քո միակ որդուն, Ինձնից» (Ծննդ. 22.12, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Ինչպե՞ս Աստված իմացավ, որ Աբրահամը վախենում էր Իրենից: Քանի որ Աբրահամը հնազանդվեց, նույնիսկ երբ նա չէր հասկանում, նույնիսկ երբ դա ցավ էր պատճառում նրան, և նույնիսկ երբ նա շահ չուներ դրանից: Աստված տեսավ, որ Աբրահամը վեր դասեց Տիրոջ ցանկությունները մնացած ամեն ինչից: Եվ Աստված ասաց. «Ահա մի մարդ, որին Ես կարող եմ հայտնել Ինձ, և որի հետ կարող եմ կիսվել Իմ սրտում եղածով»:

ԱՍՏԾՈ ՀԱՅՏՆՎԱԾ ԿՈՂՄԵՐԻՑ ՄԵԿԸ

Անմիջապես դրանից հետո Աբրահամը բարձրացրեց իր աչքերը և տեսավ մի խոյի, որը բռնված էր փշերի մեջ, և նրա սրտից դուրս եկավ հետևյալ աղաղակը. «Եհովա Իրե» (նշանակում է՝ «Տերը, Ով մատակարարում է»): Աստված հայտնեց Իր այս կողմը, որի մասին նախկինում ոչ ոք չգիտեր՝ ի պատասխան Աբրահամի երկյուղածության և հնազանդության:

Գուցե դուք ճանաչում եք ինձ որպես «հեղինակ Ջոն Բիվեր»: Ոմանք գուցե ճանաչում են որպես «քարոզիչ Ջոն Բիվեր»: Բայց կա մի անձնավորություն, նրա անունը Լիզա է, ով ճանաչում է ինձ որպես «ամուսին Ջոն Բիվեր»: Նա իմ մտերիմ ընկերն է, իմ կինը, և ես կիսվում եմ նրա հետ այնպիսի գաղտնիքներով, որոնց մասին ոչ ոք չգիտի: Ես ունեմ որդիներ, որոնք ճանաչում են ինձ որպես «հայրիկ Ջոն»: Ես այնպես եմ շփվում նրանց հետ, ինչպես միայն հայրը և որդիները կարող են շփվել: Ձեր կյանքում նույնպես կան նման մարդիկ: Նույնը վերաբերում է Աստծուն:

Աստված կիսվեց Աբրահամի հետ այնպիսի բաներով, որոնք այլևս ոչ ոք չգիտեր: Տերը նույնիսկ կիսվում էր Իր ծրագրերով Աբրահամի հետ և թույլ էր տալիս նրան միջամտել՝ հայտնելով իր կարծիքը: Նրանք միասին էին քննարկում դա: Նման դեպքերից մեկը Սոդոմը և Գոմորն էր: Աստված ասաց. «Մի՞թե կթաքցնեմ Իմ ծրագիրն Աբրահամից» (Ծնն. 18.17, NLT): Տերը մոտեցավ Աբրահամին, որպեսզի քննարկեր այդ իրավիճակը, և Աստված արժևորեց նրա ներդրումը և ուշադրություն դարձրեց դրան: Նա կխնայեր Սոդոմը, եթե դրանում տասը արդար լիներ: Այնուամենայնիվ, այնտեղ նույնիսկ տասը արդար չկար:

ԱՍՏԾՈ ԾՐԱԳՐԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ

Զարմանալի է, որ Աբրահամի զարմիկ Ղովտը, որին Աստվածաշունչն «արդար» է անվանում (տես Բ Պետր. 2.7), լիո-

վին տարբերվում էր նրանից: Ղովտը մարմնավոր էր և չուներ երկյուղ Աստծուց: Նրա կյանքի պատմությունը լիովին այլ էր: Սկզբում նա Աբրահամի հետ էր, բայց ամեն անգամ, երբ մարմնական բնությունը հոգու հետ է բնակվում, ի վերջո բախում է տեղի ունենում: Աբրահամը, որն ավելի շահագրգռված էր աստվածային իրողություններով, քան այն ամենով, ինչ առաջարկում է այս աշխարհը, թույլ տվեց Ղովտին ընտրել: Աբրահամը վերցրեց Ղովտի ընտրության մնացորդը, թեև երկուսն էլ անտեղյակ էին, որ այն, ի վերջո, լինելու էր ամենապտղաբեր երկիրը՝ կաթ ու մեղր բխող երկիրը:

Գրված է. «Ղովտը երկար նայեց Հորդանանի հովտի պարարտ հարթավայրերին» (Ծննդ. 13.10, NLT): Այդ ժամանակ այն ամենից ցանկալի և պտղաբեր երկիրն էր: Ինչո՞ւ նա երկար նայեց: Նա գիտեր, որ Սոդոմ և Գոմոր քաղաքներում շատ անօրինություն կար: Երկար նայելիս, հավանաբար, փորձում էր մտածել՝ ինչպես վայելել այդ մարդկանց առատությունը՝ առանց նրանց ազդեցությանը տրվելու: Նա որոշեց իր վրանը բացել Սոդոմի դաշտերում, ոչ թե բնակվել անմիջապես քաղաքում: Այդ կերպով նա կարող էր հեռու լինել դրա անօրինության կենտրոնից և միաժամանակ վայելել այն առատությունը, որը կար այդ վայրում: Գրված է. «Ղովտը տեղափոխեց իր վրանները մի վայր, որը մոտ էր Սոդոմին» (Ծննդ. 13.12, NLT): Այնուամենայնիվ, որքան էլ լավ ծրագրեք մեղքից հեռու մնալը, եթե դուք չունեք Աստծո երկյուղը, ի վերջո մեղքը ձգելու է ձեզ: Սա վերաբերում էր նաև Ղովտին. սկզբում նրա վրանը դաշտավայրում էր, բայց վեց գլուխ անց գրված է, որ նա արդեն տուն ուներ Սոդոմի պարսպի ներսում (տե՛ս Ծննդ. 19.2):

Սոդոմը ծաղկող և բարգավաճ էր: Դրա բնակիչները նույնիսկ գաղափար չունեին, որ մի քանի ժամից ջնջվելու էին երկրի երեսից: Սա չպետք է զարմացնի մեզ: Տագնապալին այն էր, որ Ղովտը նույնպես տեղյակ չէր այդ ամենից: Նրան զգուշացնելու համար Աստված ուղարկեց հրեշտակների, որոնք ողորմության ավետաբերներ էին: Որպես հակադրություն, Աբրահա-

մը, որն Աստծո երկյուղն ուներ, գիտեր Նրա գաղտնի խորհուրդները մինչև դրանց կատարվելը, այնինչ Ղովտը նույնքան անտեղյակ էր, որքան Սոդոմի մեղավորները: Աբրահամն Աստծո ընկերն էր, որովհետև երկյուղ ուներ Նրանից:

ԻՐԱԿԱ՞Ն ՀԻՍՈՒՍԸ

Տիրոջ երկյուղի լույսի ներքո ուսումնասիրելով Մովսեսի և Աբրահամի կյանքերը՝ կարող ենք ընդլայնել մեր սահմանումը: Տիրոջ երկյուղը նշանակում է սիրել այն, ինչ Աստված սիրում է, և ատել այն, ինչ Աստված ատում է: Այն, ինչ կարևոր է Նրա համար, կարևոր է դառնում մեզ համար, և այն, ինչ այնքան էլ կարևոր չէ Նրա համար, այնքան էլ կարևոր չէ նաև մեզ համար: Մենք դարձնում ենք Նրա առաջնահերթությունները և ցանկությունները մեր անձնականը: Տիրոջ երկյուղն արտահայտվում է Աստծո ցանկություններին և կամքին անշեղորեն հնազանդվելով:

Համաձայն Աստվածաշնչի, երբ ընտրում ենք Տիրոջ երկյուղը, Աստված մոտենում է մեզ: Երբ անձնական հանդիպում ենք ունենում Նրա հետ, մեր սերը Նրա հանդեպ ավելի ուժգին է դառնում: Մենք սկսում ենք սիրել ճշմարիտ և կենդանի Աստծուն, Ով հայտնում է մեզ Իր Անձը, ոչ թե որևէ պատկերացում Նրա մասին: Առանց Տիրոջ խորը և մնայուն երկյուղի, մենք պարզապես դավանում ենք մեր սերը, թեև իրականում մտերմորեն չենք ճանաչում Նրան: Մենք գիտենք Նրա մասին, բայց չենք ճանաչում Նրան. այնպես որ, մեր զգացումներն ուղղված են «Հիսուսի» պատկերին, որին մենք ստեղծել ենք մեր երևակայության մեջ, ոչ թե իրական Հիսուսին, Ով նստած է Հոր աջ կողմում:

Այս երևույթը կարելի է համեմատել այն բանի հետ, թե ինչպես են երկրպագուները դիտարկում հոլիվուդյան աստղերին կամ հայտնի մարզիկներին: Նրանց դուր է գալիս, թե ինչպես են այդ գերաստղերը պատկերվում մեդիայի կողմից՝ հարցազ-

րույցների և թերթերի հոդվածների միջոցով: Նրանց անունները հաճախ են հնչում ամերիկյան ընտանիքներում: Ես լսել եմ, որ երկրպագուները խոսում են հանրահայտ մարդկանց մասին, ասես նրանք իրենց մտերիմ ընկերները լինեին: Ես տեսել եմ, որ նրանք զգացմունքորեն քննարկում են հանրահայտ մարդկանց անձնական կյանքը, ասես նրանք իրենց ընտանիքի անդամները լինեին: Բայց եթե նրանք անձամբ հանդիպեին այդ մարդկանց, գուցե բացահայտեին, որ իրականում այդ մարդիկ շատ են տարբերվում իրենց կերպարից: Հանրահայտ մարդկանց և նրանց երկրպագուների հարաբերությունը միակողմանի է: Եթե նրանք հանդիպեին այդ մարդկանց, կունենային շատ քիչ ընդհանրություններ և նույնիսկ ավելի քիչ նյութ՝ զրուցելու համար, քանի որ նրանք իրապես չեն ճանաչում միմյանց:

Միևնույն միտումը կա նաև եկեղեցում: Շատերը այնպես են խոսում Տիրոջ մասին, ասես Նա շատ մտերիմ է իրենց հետ, սակայն, լսելով նրանց, այնպիսի զգացում է առաջանում, որ նրանք պարզապես գիտեն Նրա մասին, բայց չեն ճանաչում Նրան: Այդ մարդիկ գիտեն ճիշտ խոսելաձևը, բայց ոչ՝ Նրա ձայնը. Նրա գործերը, բայց ոչ՝ Նրա ճանապարհները. այն, ինչ Նա ասել է, բայց ոչ՝ այն, ինչ Նա ասում է:

Այս միտումը պատկերող մի ծայրահեղ բան տեղի ունեցավ անցած տարի: Մեր ընտանիքն արձակուրդն անցկացնում էր Հավայան կղզիներում: Ես վաղ արթնացա՝ ժամային գոտիների փոփոխության պատճառով: Այդ առավոտ աղոթում էի լողափում, երբ մի տղամարդ մոտեցավ ինձ և սկսեց զրուցել: Նա այնքա՛ն ոգևորված էր այդ կղզում լինելու առիթով, որ անմիջապես ասաց. «Այստեղի աղջիկներն արտակարգ են: Նրանք շատ ընկերական և շփվող են»: Նա շարունակեց խոսել մի երեկույթի մասին, որին վերջերս էր մասնակցել, և այլ մարմնավոր թեմաների շուրջ՝ անդադար հայհոյանքներ օգտագործելով իր խոսքի մեջ:

Նա հարցրեց իմ զբաղվածությունից, և ես պատասխանեցի նրան: Երբ իմացավ, որ ծառայող եմ, անչափ ոգևորվեց և սկսեց խոսել Տիրոջ մասին: Նա ասաց, որ ներգրավված է իր եկեղեցու ավետարանչական ծառայության մեջ, որն ուղղված է բայքերներին, իսկ հետո խոսեց իր հովվի մասին: Նա պատմեց, թե ինչպես ճանաչեց Հիսուսին, և նույնիսկ մի ավետարանչական գրքույկ նվիրեց ինձ: Դրանից հետո նա խոսեց իր կնոջ և երեխաների մասին, որոնք քնած էին հյուրանոցում (ես անմիջապես հիշեցի նրա ոգևորությունն այդ կղզու աղջիկների վերաբերյալ): Իմ սիրտը ցավում էր, քանի որ ակնհայտ էր, որ այդ տղամարդը հավատում էր, թե ճանաչում էր Տիրոջը, սակայն նրա կյանքը հակառակն էր ցույց տալիս: Ահա թե ինչու Հիսուսն ասաց, որ մենք կճանաչենք հավատացյալներին իրենց պտղից կամ կենսաոճից, ոչ թե խոսքերից կամ ծառայություններից (տե՛ս Մատթ. 7.20-23):

Սա միայն մեկն է մի քանի օրինակներից, որոնք կարող եմ պատմել: Համոզված եմ, որ դուք նույնպես նման ծայրահեղ օրինակներ կարող եք պատմել: Բոլոր այս դեպքերում այդ «դավանող քրիստոնյաների» գիտելիքն Աստծո մասին նման է երկրպագուի գիտելիքին որևէ գերաստղի մասին: Իմ սիրտը ցավում է այս պատճառով: Այս մարդիկ ցանկանում են փրկություն ստանալ, սակայն սիրում են այս աշխարհը և վեր են դասում իրենց հաճույքները, ծրագրերը և նպատակներն Աստծո ցանկություններից:

Կան նաև այնպիսի մարդիկ, որոնք իրականում փրկված են, բայց, ինչպես Ղովտը, մարմնավոր են և խճճված են այս աշխարհի գործերի մեջ: Նրանք ուզում են ծառայել Աստծուն, սակայն ստրկացված են իրենց ցանկություններին: Նրանք հակառակվել են Աստծո մաքրագործման աշխատանքին և թույլ չեն տվել, որ խաչը սպանի իրենց եսակենտրոն կյանքը: Նրանք եռանդուն կերպով չեն փնտրում Աստծո կամքը և չեն ձգտում Նրա թագավորության առաջխաղացմանը: Թեև փրկված են, նրանք չունեն մտերիմ հարաբերություն Աստծո

հետ: Նրանք դեռ ապրում են արտաքին գավիթում: Սահմանափակված իրենց մարմնի վարագույրով՝ նրանք չեն կարողանում մոտենալ նոր և կենդանի ճանապարհով: Նրանք մոտ են Աստծո անմիջական ներկայությանը, բայց միևնույն ժամանակ այնքա՛ն հեռու են:

Արտաքին գավիթում ապրողները չեն հասկացել, թե ինչու է Նա ազատել իրենց այս աշխարհի կեղեքումից: Նրանք անուշադրության են մատնում Աստծուն մտերմորեն ճանաչելու բարձրագույն կոչումը: Նրանք սիրում են ուղերձներ Աստծո սիրո, օրհնությունների, պաշտպանության, մատակարարման և առատության մասին, և այդ ամենը ճիշտ է, բայց նրանք ետ են քաշվում այն ամենից, ինչը վերաբերում է իրենց սրտին: Նրանք ընտրել են այնպիսի բաներ, որոնք չեն կարող հագեցնել իրենց, և անտեսել են Կենդանի Ջրի աղբյուրը, որը բնակվում է իրենց սրտում:

Մենք պետք է հայտնի դարձնենք, որ Աստված ցանկանում է մտերմորեն հաղորդակցվել մեզ հետ, որ Նա սուրբ է, և Նա չի ծաղրվի: Նա այնքա՛ն մեծ գին է վճարել՝ մեզ Իր մոտ բերելու համար. ինչպե՞ս մենք կարող ենք մնալ այս աշխարհի ընկերը: Աստծուն մոտենալու իր հորդորից առաջ Հակոբոսը զգուշացնում է. «Չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ» (Հակոբոս 4.4): Նա շարունակում է՝ ասելով, որ եթե ձգտենք այս աշխարհի կրքերին, մենք Աստծո թշնամին կդառնանք: Հիշեք՝ նա դիմում է հավատացյալներին: Պողոսը նույնպես գրում է ոչ երկիմաստ կերպով. «Որովհետև Աստծո շնորհքը երևաց, որ փրկարար է, բոլոր մարդկանց համար, որ խրատում է մեզ, որ ուրանանք ամբարշտությունը և աշխարհական ցանկությունները և խոհեմությամբ և արդարությամբ և աստվածապաշտությամբ ապրենք այս աշխարհում՝ սպասելով այն երանելի հույսին և մեծ Աստծո և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի փառքի հայտնությանը» (Տիտոս 2.11-13): Կրկին, ահա թե ինչու է Պողոսը պատվիրում մեզ ահով և դողալով գործել մեր փրկությունը:

ՀԻՍՈՒՍԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Հաճախ լսում ենք ուղերձներ այն մասին, որ ովքեր ընդունում են Հիսուսին, Նրա ընկերներն են: Հուսով եմ՝ այժմ հասկանում եք, որ Աստված էժանագին խմբային ընկեր չէ: Մի անգամ, երբ աղոթքի մեջ էի, Նա բացականչեց. «Հարցրո՛ւ Իմ ժողովրդին՝ նրանք կուզեի՞ն, որ Ես հավատարիմ լինեի նրանց այնպես, ինչպես նրանք են հավատարիմ եղել Ինձ»: Հիսուսը չեկավ՝ որպես Փրկիչ, որ բոլորը միանան Նրա «վերստին ծնվածների ակումբին»: Նա փնտրում է հարաբերություն այն մարդկանց հետ, որոնք սիրում են Իրեն՝ այնպես, ինչպես որ Ինքն է սիրել նրանց. ահա թե ինչպես մենք կստանանք Նրա ընկերությունը: Այս պնդումը հաստատվում է անմիջապես Նրա խոսքերով.

> «Դուք Իմ ընկերներն եք, եթե կատարում եք այն ամենը, ինչ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհ. 15.14, NKJV):

Կան հատուկ չափանիշներ Հիսուսի հետ ընկերության համար: Նա չասաց. «Բոլորդ Իմ ընկերներն եք, եթե հավատում եք, որ Ես Քրիստոսն եմ»: Փոխարենը՝ Նա ասաց. «Դուք Իմ ընկերներն եք, եթե կատարում եք այն ամենը, ինչ Ես պատվիրում եմ ձեզ»: Այս գլխում խոսեցինք այն մասին, որ Նրա բոլոր պատվերները կատարելու զորությունը Տիրոջ երկյուղի մեջ է:

Հիսուսն ասաց այս խոսքերն այն բանից հետո, երբ Հուդան հեռացավ՝ Նրան դավաճանելու պատճառով: Հաջորդ խոսքում Հիսուսը դիմեց տասնմեկին. «Այլևս ծառա չեմ ասում ձեզ» (Հովհ. 15.15): «Այլևս» բառը ենթադրում է, որ կար ժամանակ, երբ Նա դիտարկում էր նրանց որպես ծառաների, սակայն նրանք արդեն նոր մակարդակում էին գտնվում: Այս պնդումից հետո Նա շարունակեց.

> «Որովհետև ծառան չգիտի, թե իր տերն ինչ է գործում, բայց ձեզ բարեկամ (կամ՝ ընկեր) ասացի, որով-

հետև ամեն ինչ, որ լսեցի իմ Հորից, իմացրի ձեզ» (Հովհ. 15.15):

Ուշադրություն դարձրեք, որ Տիրոջ ընկերները գիտեն, թե ինչ է Նա անում: Նրանք գիտեն Նրա ճանապարհները: Ինչո՞ւ նրանք կոչվեցին ընկերներ այդ պահին, ոչ թե իրենց հարաբերությունների սկզբում: Քանի որ նրանք ապացուցեցին իրենց հավատարմությունը և հնազանդությունը՝ թե՛ հետևելով Նրան փորձությունների և դժվարությունների մեջ, թե՛ ուրախանալով Նրա հետ հրաշքների և բարիքների մեջ: Նրանց հավատարմությունն ապացուցվեց նրանց հնազանդությամբ:

Նրա խոսքերն ուղղված են նրանց, ովքեր կանչում են Նրա անունը. «Դուք Իմ ընկերներն եք, եթե կատարում եք այն ամենը, ինչ Ես պատվիրում եմ ձեզ»: Ուշադրություն դարձրեք, որ Նա պարզորեն հայտնեց. ընկերությունը պահված է նրանց համար, ովքեր հնազանդվում են Իրեն: Այս սկզբունքն արտացոլում է այն, ինչ տեսանք Սաղմոսների գրքում. «Տիրոջ հետ ընկերությունը պահված է նրանց համար, ովքեր վախենում են Նրանից» (NKJV):

Ինչո՞ւ է Աստված ետ պահում Իր ընկերությունը: Իմ համոզմամբ, որպեսզի պաշտպանի մեզ Իրեն սովորականի պես վերաբերվելու վտանգներից: Հիշե՛ք Ահարոնի որդիներին և այն հորդորը, որը տրվեց նրանց հայր Ահարոնին. *«Ինձ մոտեցողներով* պիտի սրբվեմ» (կամ՝ «Բոլոր Ինձ մոտեցողները պետք է սուրբ համարեն Ինձ», NKJV):

Սա կրկին տեղի ունեցավ Նոր կտակարանում, երբ մի մարդ իր կնոջ հետ մուտք գործեց սուրբ Աստծո ներկայության մեջ՝ անառողջ և աներկյուղ վերաբերմունքով: Նրանք մահացան Նրա ներկայության մեջ (տես Գործք 5.1-11): «Մեծ ահ» եկավ ամբողջ եկեղեցու վրա, քանի որ հավատացյալների մարմինը գիտակցեց, թե որքան լուրջ է երկյուղի բացակայությունը: Կրկին, «Աստծուց... պետք է ակնածեն նրանք, ովքեր Նրա շուրջն են»:

Անցյալ տարի ես մի հրաշալի գաղտնիք բացահայտեցի: Սկսելով աղոթել՝ ես զերծ էի մնում խոսքերից և պարզապես մտորում էի իմ Հոր հրաշալի վեհության և մեծության շուրջ: Ես մտածում էի Հիսուսի մեծության մասին և այն փառավոր պայքարի, որում Նա հաղթանակ տարավ, որպեսզի ես Իրենը դառնայի: Ես մտորում էի Նրա զարմանալի Հոգու շուրջ, նաև այն փաստի, որ Նա որոշել է ապրել ինձ հետ: Որքա՜ն աներևակայելի է այդ ամենը:

Ես բացահայտեցի, որ այսպես վարվելով, մինչև նույնիսկ մեկ բառ ասելը, ես վերապրում էի Տիրոջ ներկայությունը: Զարմացած այն բանից, թե որքան հեշտ էր դառնում Նրա ներկայության մեջ մտնելը, ես հարցրի այդ մասին Սուրբ Հոգուն: Նա խոսեց սրտիս. «Որդի՛ս, ի՞նչ պատվիրեց Հիսուսն Իր աշակերտներին, երբ սովորեցրեց նրանց աղոթել»: Ես մեջբերեցի Տերունական աղոթքը. «Հայր մեր, որ Երկնքում ես, սո՛ւրբ լինի Քո անունը...»: Ես ապշեցի և ուրախությունից բացականչեցի. «Ա-հա՛ դա, ահա՛ դա: Ահա՛ և պատասխանը. հենց սկզբից Նրան պետք է Սուրբ համարել. «Սո՛ւրբ լինի Քո անունը»»: Մենք պետք է գանք Նրա ներկայության մեջ՝ սուրբ ակնածանքի ճանապարհով: Քանի՞ տարի եմ կրկնել այս աղոթքը՝ առանց հասկանալու, թե իրականում ինչ նկատի ուներ Հիսուսը:

ԿՅԱՆՔԻ ԳԱՆՁԵՐԻ ԲԱՆԱԼԻՆ

Տիրոջ երկյուղը Աստծո հետ մտերմության բանալին է և կյանքի հիմքը: Եսային գրում է.

> «Տերը մեծարված է, քանի որ Նա բնակվում է բարձրում. Նա կլցնի Սիոնը [Իր եկեղեցին] իրավունքով և արդարությամբ: Նա կլինի հաստատ հիմք քո ժամանակների համար, փրկության և իմաստության և գիտելիքի առատ պաշար. Տիրոջ երկյուղն այս գանձի բանալին է» (Եսայի 33.5,6, NKJV):

Սուրբ երկյուղը բացում է փրկության, իմաստության և գիտելիքի գանձարանը: Ինչո՞ւ: Քանի որ այն Աստծո հետ մտերմության հիմքն է, և մտերմության վայրում հայտնվում են Նրա գանձերը: Աստծո սիրո հետ միասին այն կազմում է մեր կյանքի հիմքը: Մենք չենք կարող ճշմարտապես սիրել Աստծուն և վայելել մտերմություն Նրա հետ, քանի դեռ չունենք Նրա երկյուղը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ձեր բառերով, ինչպե՞ս կբացատրեք տարբերությունը Աստծուց երկյուղ ունենալու և Նրանից վախենալու միջև:

2. Այս գլուխը հակադրում է Աբրահամին՝ «Աստծո ընկերոջը», նրա զարմիկ Ղովտի հետ, որն «արդար» կոչվեց: Ճննելով անօրեն Սոդոմ և Գոմոր քաղաքները շրջապատող ցանկալի տեղանքը՝ Ղովտն ակնհայտորեն փորձում էր մտածել, թե ինչպես վայելեր նրանց առատությունը՝ առանց նրանց ազդեցության ներքո հայտնվելու: Դուք երբևէ հակված եղե՞լ եք նման մտքերի:

   Տիրոջից երկյուղ ունենալը ի՞նչ կերպով վերջ կտար նման սխալական մտածողությանը:

3. Հիշե՛ք հեղինակի հանդիպումը մի տղամարդու հետ Հավայան կղզիների լողափում: Դուք երբևէ այդպիսի հանդիպումներ ունեցե՞լ եք: Ի՞նչ եք արել նման դեպքերում:

   Թե՛ նույնքան, թե՛ պակաս ծայրահեղ իրավիճակում, երբևէ պատահե՞լ է, որ ինքներդ լինեք լողափում գտնվող այդ տղամարդու փոխարեն, երբ տվյալ պահին ձեր խոսքը կամ գործերը մատնել են, թե որտեղ է եղել ձեր սիրտը: Ի՞նչ եք սովորել կամ ի՞նչ եք սովորում հիմա նման իրավիճակներից:

4. Խոսելով Սաղմոս 25.14-ի մասին («Ընկերությունը Տիրոջ հետ պահված է նրանց համար, որոնք վախենում են Նրանից»)՝ հեղինակը նշում է, որ Աստված ետ է պահում Իր ընկերությունը, որպեսզի պաշտպանի մեզ Իրեն սովորականի պես վերաբերվելու վտանգներից:

   Որո՞նք են Աստծուն «սովորականի պես վերաբերվելու վտանգները»:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ԻՆՉՆ Է ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ ՃՇՄԱՐԻՏ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Խաբված մարդիկ մխիթարվում են
Աստծո ճանաչողությամբ,
որն իրենք պարզապես չունեն:

Տիրոջ երկյուղն Աստծո հետ մտերմության հիմքն է: Սա ակնհայտորեն պատկերված է Առակաց գրքի սկզբում: Գրված է. «Իմաստության սկիզբը [հիմքը] Տիրոջ վախն է» (Առակ. 1.7): Ինչպիսի՞ իմաստության: Հեղինակը հայտնում է դա մեզ մի քանի խոսք անց.

«Որդյա՛կս, եթե իմ խոսքերն ընդունես
և իմ պատվերները պահես քեզ մոտ,
Որ ականջ դնես իմաստությանը
և սիրտդ ուղղես հանճարին,
Երբ որ հասկացողությանը կանչես
և ձայն տաս հանճարին,
Եթե դու նրան որոնես՝ ինչպես արծաթը,
և գանձերի նման նրան պտրտես,

Այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը
և *Աստծո գիտությունը* կգտնես» (Առակաց 2.1-5, *շեղագիրը հեղինակինն է):*

«Գիտություն» կամ «գիտելիք» բառն այս հատվածում սահմանվում է *«Աստվածաշնչյան լեզուների բառարանում»* որպես «տեղեկություն որևէ անձի մասին, որը ստացվել է նրա հետ փոխհարաբերությունից»: *«Վայնի բացատրական բառարանը»* հայտնում է, որ *«գիտելիք»* բառը ենթադրում է «Նրա (Աստծո) մտերիմ փորձառական ճանաչողություն»: Այս սահմանման շարունակությունն է. «Դրական իմաստով, Աստծուն «ճանաչելը» համապատասխանում է Նրանից երկյուղ ունենալուն»:

Այս աստվածաշնչյան հատվածում տեսնում ենք, որ Տիրոջ երկյուղը Նրա պատվիրանները գանձերի պես արժևորելն է: Նրա պատվիրաններն արժևորելը նշանակում է խոնարհեցնել ականջը դեպի Նրա Խոսքը՝ հնազանդվելու ամենայն պատրաստակամությամբ, անկախ հանգամանքներից: Մտերմության ճիշտ հակառակը սպասում է նրանց, ովքեր չունեն երկյուղ Տիրոջից, քանի որ Հակոբոսը գրում է, որ մենք խաբում ենք մեր անձերը (տե՛ս Հակոբ. 1.22), երբ գիտենք Նրա կամքը, սակայն չենք հնազանդվում դրան: Խաբված մարդիկ մխիթարվում են Աստծո ճանաչողությամբ, որն իրենք պարզապես չունեն:

ՏԻՐՈՋ ԽԵՂԱԹՅՈՒՐՎԱԾ ՊԱՏԿԵՐ

Առանց Տիրոջ երկյուղի, մենք իրականում չենք ճանաչում Աստծուն: Մեր անձի և երևակայության մեջ զարգանում, ձևավորվում և կաղապարվում է ոչ ճշգրիտ պատկերացում: Թեև մենք դավանում ենք, որ հաղորդակցվում ենք Նրա հետ, և պատվում ենք Նրան մեր շուրթերով, մեր սիրտը մոտ չէ Նրա սրտին, և մեր կյանքը չի համապատասխանում Նրա ցանկություններին: Սա ակնհայտ էր Իսրայելի որդիների դեպքում:

Ինչպես նշվեց նախորդ գլուխներում, Մովսեսը բերեց

նրանց՝ հանդիպելու Աստծո հետ Սինա սարի մոտ, սակայն «ժողովուրդը հեռու կանգնեց, և Մովսեսը մոտեցավ» (Ելից 20.21): Որքա՜ն ցավալի էր, որ նրանք չկարողացան մոտենալ սպասված փառավոր հանդիպմանը: Ո՞վ գիտի, թե ինչ տեղի կունենար այդ դեպքում: Նրանք հնարավորություն ունեին ընդունելու Նրա խոսքերը՝ Նրա ձայնը լսելու միջոցով: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, նրանք չկարողացան դիմանալ Աստծո ներկայությանը, քանի որ նրանց սրտերում չկար երկյուղ Նրա հանդեպ, ուստի նրանք չէին կարող պահել Նրա պատվիրանները (տե՛ս Երկր. Օր. 5.29):

Դա վշտացրեց Աստծուն, և Նա Իր և ժողովրդի միջև միջնորդ հաստատեց: Նա դիմեց Մովսեսին. *«Ահարոնի հետ մեկտեղ* ելի՛ր» (Ելից 19.24, *շեղագիրը հեղինակինն է):* Աստված կանչեց Մովսեսին և Ահարոնին Իր մոտ՝ որպես միջնորդների: Նրանք պետք է լսեին ժողովրդին ուղղված Իր խոսքերը և ժողովրդի խոսքերն էլ փոխանցեին Իրեն: Դա շատ հեռու էր այն մտերմությունից, որը Նա սկզբնապես ծրագրել էր:

Այնուամենայնիվ, շարունակելով կարդալ Ելից գիրքը, մենք տեսնում ենք, որ Մովսեսը սարի վրա էր, իսկ Ահարոնը վերադարձել էր ժողովրդի բանակատեղին: Հավանաբար, նա սկսել էր սար բարձրանալ, բայց ի վերջո հայտնվել էր ժողովրդի միջև: Ինչո՞ւ: Նա ավելի հարմարավետ էր զգում իրեն մարդկանց ներկայության մեջ, քան՝ Աստծո: Նա չուներ Տիրոջ երկյուղը: Ահարոնն ավելի շատ երկյուղ ուներ մարդկանցից, քան Աստծուց. ուստի նա ծառայում էր մարդկանց: Ի վերջո, նա տալու էր մարդկանց իրենց ուզածը և, ինչպես կտեսնենք, դրա համար շատ ժամանակ չէր պահանջվելու:

Մովսեսը գրեթե քառասուն օր սարի վրա էր, և մենք կարդում ենք հետևյալը.

> «Եվ ժողովուրդը տեսավ, որ Մովսեսն ուշացավ սարից իջնելուց, և Ահարոնի մոտ ժողովվեց ժողովուրդը,

> և ասացին նրան. «Վե՛ր կաց, մեզ համար աստվածներ շինի՛ր, որ մեր առջևով գնան: Որովհետև այդ Մովսես մարդը, որ մեզ Եգիպտոսի երկրից հանեց, չգիտենք, թե ինչ եղավ նրան»» (Ելից 32.1):

Ահարոնն օժտված էր առաջնորդական պարգևով, որը որոշակի հատկություններ ունի: Դրանցից մեկը մարդկանց մագնիսի պես ձգելն է: Այն գրավելու է մարդկանց, անկախ այն բանից՝ այդ օժտված առաջնորդն Աստծո հե՞տ է, թե՞ ոչ: Այս պնդումը բացատրում է, թե ինչպես է հնարավոր հազարավոր մարդկանցից բաղկացած եկեղեցի ունենալ, որը զուրկ է Աստծո ներկայությունից, և որտեղ Նրա ցանկությունները սխալմամբ են մեկնաբանվում: Չափազանց հաճախ այն առաջնորդը, որը չունի երկյուղ Տիրոջից, օգտագործում է Աստծուց իրեն տրված պարգևները՝ կատարելու համար ոչ թե Տիրոջ, այլ մարդկանց ցանկությունները:

Մարդիկ հորդորեցին Ահարոնին. «Վե՛ր կաց, մեզ համար աստվածներ շինի՛ր, որ մեր առջևով գնան: Որովհետև այդ Մովսես մարդը... չգիտենք, թե ինչ եղավ նրան»: Ուշադրություն դարձրեք, որ նրանք չասացին. «Որովհետև Աստված... չգիտենք, թե ինչ եղավ Նրան»: Նրանք չուրացան Աստծուն. նրանք ընդամենը որակազրկեցին Մովսեսին:

աստվա՞ծ, ԹԵ՞ ԱՍՏՎԱԾ

Ուսումնասիրելով բնագիր տեքստերը՝ հարց է ծագում, թե արդյո՞ք թարգմանիչները ճշտորեն են փոխանցել այն, ինչ գրված է այստեղ: Նրանք օգտագործել են *«աստվածներ»* բառը: Այնուամենայնիվ, նրանք թարգմանել են *«աստվածներ»* բառը եբրայերեն *«էլոհիմ»* բառից: Այս բառը գրված է Հին կտակարանում 2.606 անգամ, և գրեթե 2.350 դեպքում (ավելի քան 90 տոկոսը) այն վերաբերում է Ամենակարող Աստծուն, Ում մենք ծառայում ենք: Այն գրված է 32 անգամ միայն Ծնն-

դոց գրքի առաջին գլխում, և յուրաքանչյուր դեպքում այն վերաբերում է Տիրոջը: Օրինակ, առաջին խոսքն Աստվածաշնչում այսպիսին է. «Սկզբում Աստված *[էլոհիմ]* ստեղծեց երկինքը և երկիրը» (Ծննդ. 1.1): Այստեղ *«էլոհիմ»* բառը թարգմանված է «Աստված» բառով:

Մոտավորապես 250 անգամ Հին կտակարանում այս բառն օգտագործվում է՝ նկարագրելու համար սուտ Աստծո: Այնպես որ, մենք պետք է կարդանք այս բառն իր համատեքստով, որպեսզի որոշենք դրա ճիշտ նշանակությունը:

Ահարոնն ասաց ժողովրդին. «Ձեր կանանց, ձեր որդիների և ձեր աղջիկների ականջներին եղած ոսկի օղերը հանե՛ք և ինձ մո՛տ բերեք» (Ելից 32.2): Ժողովուրդն այդպես էլ վարվեց. «Եվ նա առավ նրանց ձեռքից և քանդակագործիքով ձևակերպեց նրան և շինեց մի ձուլածո հորթ» (32.4):

Հենց որ նա ձուլեց ոսկին և իր գործիքներով հորթ պատրաստեց, ամբողջ ժողովուրդն ասաց. «Սրա՛նք են քո աստվածները, ո՛վ Իսրայել, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին» (Ելից 32.4): Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ էր տեղի ունենում: Շարունակենք կարդալ, որպեսզի համոզված լինենք, թե ինչ նկատի ուներ ժողովուրդը:

> «Եվ Ահարոնը, տեսնելով, նրա առջև սեղան շինեց: Եվ Ահարոնը կանչեց՝ ասելով. «Վաղը տոն է *Եհովայի* համար»» (Ելից 32.5, *շեղագիրը հեղինակինն է):*

Այս խոսքում օգտագործվում է եբրայերեն *«Եհովա»* կամ *«Յահվեհ»* բառը: *«Յահվեհ»*-ը ամենասուրբ բառն է Հին կտակարանում: Այն միակ ճշմարիտ Աստծո անունն է: Այն ոչ մի անգամ չի օգտագործվել Հին կտակարանում՝ որևէ սուտ աստծո նկարագրելու կամ անվանելու համար: Այս բառն այնքան սուրբ էր, որ հրեա դպիրները նույնիսկ ամբողջովին չէին գրում այն: Նրանք չէին նշում ձայնավորները և պարզապես գրում

էին «ՅՀՎՀ»: Հրեա դպիրներն անվանում էին այն սուրբ քառագիր, անարտասանելի չորս տառ: Այս բառն արգելված էր բարձրաձայն հիշատակել. այս սուրբ անունը Իսրայելում պահվում էր հայհոյությունից:

Այնպես որ, ըստ էության, Ահարոնը և Իսրայելի զավակներն արեցին հետևյալը. նրանք հորթ ձուլեցին, մատնացույց արին այն և ասացին. «Սա Յահվեհն է՝ միակ ճշմարիտ Աստված, Ով դուրս հանեց մեզ Եգիպտոսի երկրից»: Նրանք չասացին. «Սա Բահաղն է, ով դուրս հանեց մեզ Եգիպտոսից»: Ո՛չ էլ նրանք վերագրեցին իրենց փրկությունը որևէ այլ կեղծ աստծո: Նրանք կոչեցին այդ հորթը Տիրոջ անունով:

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻՆ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆ ՄԱՐՄՆԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նրանք բացահայտ կերպով չուրացան Աստծուն. փոխարենը՝ փոքրացրին Նրա փառքը՝ հասցնելով այդ ձուլած հորթի մակարդակին և պատկերին: Նրանք խաբված էին Նրա մասին ունեցած իրենց գիտելիքով: Նրանք շարունակում էին ընդունել, որ Յահվեհն էր փրկել և ազատել իրենց Եգիպտոսից: Նրանք չուրացան Նրա բժշկարար զորությունը. նրանք ընդամենը փոխեցին Նրա Անձի պատկերը: Շարունակելով՝ մենք տեսնում ենք.

> «Եվ հետևյալ առավոտյան կանուխ վեր կացան և ողջակեզներ մատուցեցին և խաղաղության զոհեր բերին: Եվ ժողովուրդը նստեց ուտելու և խմելու և վեր կացան խաղալու» (Ելից 32.6):

Ուշադրություն դարձրեք, որ նրանք զոհեր մատուցեցին: Ինչո՞ւ էր պետք զոհեր մատուցել: Պատվելու համար Նրան, Ում, իրենց խոսքերով, իրենք ծառայում էին՝ Յահվեհին: Զոհեր մատուցելուց կամ երկրպագությունից հետո նրանք խաղացին,

այսինքն՝ հագեցրին իրենց մարմնի ցանկությունները: «Նոր միջազգային թարգմանության» մեջ գրված է, որ նրանք «վեր կացան՝ անզուսպ խրախճանքին տրվելու»:

Կարո՞ղ է սա տեղի ունենալ այսօր: Կա՛ն արդյոք մարդիկ, որոնք ազատվել են այս աշխարհից՝ Նրա փրկարար շնորհքով, սակայն չունեն Աստծո երկյուղը և կանչում են այնպիսի Հիսուսի, որ իրենք են ստեղծել իրենց երևակայության մեջ: Լինելով եկեղեցում՝ նրանք հենվում են իրենց վերստին ծնունդի փորձառության վրա, ընդունում և դավանում են Նրան՝ որպես Տեր, երգեր են երգում փրկության և ազատության մասին, ուղերձներ են լսում, նվիրատվություններ են կատարում, սակայն, եկեղեցուց դուրս գալով, ստում են՝ գործարք կնքելու համար, և շարունակ վկայում են, որ Աստված օրհնում է իրենց գործը: Գուցե նրանք բամբասում են իրենց հովիվներից և այլ մարդկանցից և արդարացնում են դա հետևյալ կերպով. «Սա ճշմարտություն է, և այս մասին գիտեն նաև ուրիշները»: Նրանք պոռնկություն և այլ պիղծ արարքներ են գործում, իսկ հետո արդարացնում են այդ ամենը՝ ասելով, որ թեև Հիսուսը փրկել է իրենց, իրենք դեռ ապրում են մարմնի մեջ և կարիքներ ունեն: Այս ցուցակը գրեթե անվերջ է:

Մի՞թե նրանք ճանաչում են Հիսուսին: Հարցրե՛ք նրանց. նրանք վճռականորեն կպատասխանեն. «Այո՛»: Իսկ գուցե նրանք խաբվա՞ծ են: Մի՞թե նրանք դավանում են այն Անձին, Ով այժմ նստած է Աստծո մեծության աջ կողմում, թե՞ այնպիսի Հիսուսի, որին իրենք են ստեղծել՝ իրենց իսկ պատկերով, որը պատրաստ է տալ իրենց այն ամենը, ինչ ուզում են: Ավելի կարևոր հարց. հնարավո՞ր է, որ մենք նույնպես նման դրության մեջ ենք:

Դուք կբացահայտեք, որ երբ մարդիկ չունեն երկյուղ Տիրոջից, գուցե նրանք կանչում են Նրա անունը, բայց նրանց գրավում են մարմնի ցանկությունները, իսկ մարմինը թշնամության մեջ է Աստծո հետ, քանի որ այն չի հպատակվում Աստծո կամ-

քին (տե՛ս Հռոմ. 8.5-7): Նրանք անհնազանդ են Աստծո ցանկություններին, թեև կանչում են Նրա անունը, դավանում են, որ ճանաչում են Նրան, և հավատում են, որ Նա հավանություն է տալիս իրենց վարքին: Նրանց անհնազանդության արմատը սուրբ երկյուղ չունեցող սիրտն է. նրանք խաբում են իրենց՝ համարելով, որ «ճանաչում են Հիսուսին»:

ՈՉԻՆՉ ԹԱՔՆՎԱԾ ՉԷ

Մենք այս երևույթն ամբողջությամբ տեսնում ենք Աստվածաշնչում: Մարդկության անկումից հետո շատ ժամանակ չպահանջվեց, որ այն դրսևորվեր. դա սկսվեց Ադամի որդի Կայենից: Երբ Կայենի ծնողները մեղանչեցին պարտեզում, անտեղյակ լինելու պատճառով նրանք ծածկեցին իրենց թզենու տերևներով՝ երկրի պտղով: Աստված ցույց տվեց նրանց Իր կամքը, որը կենդանու զոհ էր: Նա հագցրեց նրանց հագուստ կենդանու կաշվից, որը, իմ համոզմամբ, գառ էր:

Այնուամենայնիվ, Կայենը անտեղյակ չէր. նա գիտեր իր ծնողներից, որ Աստված ցանկանում էր կենդանու զոհ, ոչ թե երկրի պտղի զոհ: Այնուամենայնիվ, գրված է. «Եվ եղավ, որ օրեր անցնելուց հետո Կայենը երկրի պտղից *Տիրոջն* ընծա մատուցեց» (Ծննդ. 4.3, *շեղագիրը հեղինակինն է):* Ակնհայտ է, որ նա փորձում էր ծառայել Աստծուն, քանի որ այստեղ գրված չէ, որ նա զոհ մատուցեց որևէ սուտ աստծո: Նա ջանասիրաբար աշխատել էր՝ Աստծուն իր զոհը մատուցելու համար. այնուամենայնիվ, նա ակնհայտ անհնազանդության մեջ էր:

Ո՞րն է նրա անհնազանդության արմատը: Ոչինչ՝ բացի Տիրոջ երկյուղի պակասից: Սա ակնհայտորեն երևաց, երբ Աստված հարցրեց նրան, թե որտեղ էր նրա սպանված եղբայրը: Նրա պատասխանն արհամարհական էր. «Չգիտեմ: Մի՞թե ես եղբորս պահապանն եմ» (Ծննդ. 4.9): Ինչպես Իսրայելի և ձուլածո հորթի պատմության մեջ, մենք կրկին տեսնում ենք, որ Տիրոջ երկյուղի բացակայության դեպքում Նրա պատկերը

փոքրացվում է, և Նրան ծառայելու ընդունելի ձևերը փոփոխվում են: Լինելով խաբված՝ Կայենը նույնիսկ սկսել էր մտածել, որ կարող էր ինչ-որ բան թաքցնել Աստծուց, ինչպես որ կարող էր թաքցնել ինչ-որ մարդուց: Կայենի համար Աստծո պատկերը փոքրացվել էր՝ հասցվելով հասարակ մարդու մակարդակի: Պողոսը լրջորեն զգուշացնում է մեզ, որ վերջին օրերում մենք նույնպես տեսնելու ենք այս դիրքորոշման օրինակը. «Որովհետև, Աստծուն ճանաչելով, Նրան Աստծո պես չփառավորեցին... Եվ անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողունների պատկերի նմանության հետ» (Հռոմ. 1.21-23): Ինչպես Կայենի դեպքում, աստվածային երկյուղի բացակայությունը մոլորության է մատնում նրանց, և նրանք հավատում են, որ Աստված չի նկատում իրենց խոտորված ճանապարհները:

Կայենի արձագանքը ցույց է տալիս, որ նա մոռացել էր, որ ոչինչ թաքնված չէ Աստծուց: Աստված մարդ չէ. Նա տեսնում է և գիտի ամեն ինչ: Երբ մենք կորցնում ենք Տիրոջ երկյուղը, նվազեցնում ենք մեր հոգևոր ողջամտությունը, քանի որ նույնիսկ բացահայտ մեղավորը գիտի, որ Աստված տեղյակ է իր ապստամբությունից: Ովքեր գիտեն Աստծո մասին, սակայն չունեն Նրա սուրբ երկյուղը, մխիթարում են իրենց. «Տերը չի՛ տեսնում» (Եզեկ. 9.9, NLT), կամ, եթե նույնիսկ տեսնում է, Նա հասկանում է: Նույնիսկ առաջնորդները զերծ չեն սրանից: Աստված ասում է. «Մարդո՛ւ որդի, տեսնո՞ւմ ես՝ ինչ են անում Իսրայելի տան ծերերը խավարում, ամեն մարդ իր նկարների սենյակներում, որովհետև ասում են, թե՝ Տերը մեզ չի տեսնում» (Եզեկիել 8.12):

Արդյո՞ք մոռացել ենք Հիսուսի խիստ կարևոր խոսքերն այն մասին, որ մենք պետք է վախենանք Աստծուց: Քանի որ Նա ասում է. «Ոչինչ չկա ծածուկ, որ չհայտնվի, և թաքուն, որ չիմացվի» (Ղուկ. 12.2): Այնուամենայնիվ, երբ կորցնում ենք Աստծո երկյուղը, մենք փոքրացնում ենք Նրա պատկերը՝ հասցնե-

լով մեր մակարդակին, և ենթագիտակցորեն մտածում ենք, որ կարող ենք ինչ-որ բան թաքցնել Նրանից: Եթե այդ մարդկանց հարցնեն Աստծո ամենագոյության և ամենագիտության մասին, նրանք անվարան և միանշանակ կհամաձայնեն: Այնուամենայնիվ, իրենց անձի խորքում նրանք կորցրել են գիտակցումը Նրա զարմանալի էության մասին, քանի որ, եթե դեռ ունենային դա, նրանք չէին փորձի գաղտնի պահել որոշ բաներ: Նրանք թաքցնում են որոշ բաներ աստվածապաշտ մարդկանցից և հաճախ հաջողվում է նրանց, սակայն մոռանում են. «Տիրոջ աչքերը ամեն տեղ են, քննում են չարերին և բարիներին» (Առակ. 15.3):

ԵՐԲ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՔ, ՈՐ ՀՆԱԶԱՆԴ ԵՔ, ՍԱԿԱՅՆ ԱՅԴՊԵՍ ՉԷ

Այնուամենայնիվ, ամեն ինչ այսքանով չի ավարտվում: Մոլորության հաջորդ քայլը հետևյալն է. դուք հավատում եք, որ հնազանդ եք, այնինչ, իրականում, այդպես չէ: Այս վիճակը պատկերվում է Դավթի ժառանգներից մեկի կյանքում՝ մի թագավորի, որի անունը Ոզիա է: Երբ նա տասնվեց տարեկան էր, նրա հայր Ամասիան մահացավ, և Ոզիային թագադրեցին Հուդայում՝ իր հոր փոխարեն: Եթե ձեզ թագադրել են տասնվեց տարեկանում, և դուք խելացի եք, դուք փնտրելու եք Աստծուն: Ոզիան այդպես էլ վարվեց: Արդյունքում նա մեծապես բարգավաճեց: Տարիներ շարունակ նա առատություն և հաջողություն ուներ: Գրված է. «Եվ նրա համբավը մինչև հեռու տեղերը գնաց, որովհետև զարմանալի կերպով օգնություն գտավ, մինչև որ ուժովացավ» (Բ Մնաց. 26.15):

Բայց երբ Ոզիան հզորացավ, նա հպարտացավ իր սրտում: Հպարտությունը և Տիրոջ երկյուղը հակառակ են: Երբ սրտում չկա սուրբ երկյուղ, ծնվում է հպարտությունը: Ուշադրությամբ կարդացեք, թե ինչ տեղի ունեցավ.

«Բայց երբ որ զորացավ, այն ժամանակ սիրտը հպարտացավ մինչև չարություն գործելու, և հանցանք գործեց իր Տեր Աստծո դեմ, և մտավ Տիրոջ տաճարը, որ խնկի սեղանի վրա խունկ ծխի: Եվ նրա ետևից Ազարիա քահանան մտավ, և նրա հետ՝ Տիրոջ ութսուն քահանաները, որ զորավոր մարդիկ էին: Եվ նրանք Ոզիա թագավորին դեմ կանգնեցին և ասացին. «Քո գործը չէ՛, ո՛վ Ոզիա, որ Տիրոջը խունկ ծխես, այլ՝ Ահարոնի որդիներ քահանաներին, որոնք սրբված են՝ խունկ ծխելու: Դո՛ւրս եկ սրբարանից, որովհետև հանցանք գործեցիր, և սա քեզ համար պատիվ չէ Տեր Աստծուց»: Եվ Ոզիան բարկացավ, և ձեռքին էր բուրվառը, որ խունկ ծխի: Եվ նա քահանաների վրա բարկանալիս՝ բորոտությունը երևաց նրա ճակատին՝ քահանաների առջև Տիրոջ տանը խունկ ծխելու սեղանի մոտ» (Բ Մնաց. 26.16-19):

Մենք պետք է տանք հետևյալ հարցը. երբ Ոզիայի սիրտը հպարտացավ, նա դարձավ ավելի՞, թե՞ պակաս հոգևոր: Երբ տալիս եմ այս հարցը լսարաններին, մեծ մասը պատասխանում է, որ նա դարձավ պակաս հոգևոր: Այնուամենայնիվ, դա ճիշտ չէ, քանի որ նա մտավ տաճարը՝ *երկրպագելու* համար: Իրականում, նա դարձավ ավելի հոգևոր (կրոնական) իր արարքներում: Շատ հաճախ դուք կբացահայտեք, որ չափազանցված հոգևոր վարքը և հպարտությունը միասին են, և դրանցից մեկը քողարկում է մյուսին: Հպարտությունը թույլ չի տալիս մարդուն ընդունել, որ ինքը կրոնական է, իսկ կրոնը քողարկում է հպարտությունը՝ իր հոգևոր վարվելակերպով: Այս երկու հատկանիշներն էլ զուրկ են Տիրոջ երկյուղից և ճշմարիտ խոնարհությունից:

Ուշադրություն դարձրեք, որ Ոզիան բարկացավ, երբ նրան ընդդիմացան ճշմարտությամբ: Աստվածաշնչում գրված է. «Եվ Կայենը շատ բարկացավ, և երեսը կախեց» (Ծնն. 4.5): Կայենը բարկացավ Աստծո՛ վրա: Երբ ընդդիմանում եք անհնազան-

դության մեջ ապրող մարդուն ճշմարտությամբ, սուրբ երկյուղի բացակայության պատճառով նա բարկանում է: Ինչո՞ւ: Նա իսկապես հավատում է, որ ճիշտ է: Նա խաբված է, և խաբված լինելը նշանակում է հավատալ, որ դուք ճիշտ եք, այնինչ՝ սխալ եք:

Ինչո՞ւ Ոզիան պետք է բարկանար քահանաների վրա, եթե չհավատար, որ ինքը ճիշտ էր: Նա մտավ տաճար՝ երկրպագելու համար, սակայն, նման Ահարոնի երկու որդիներին, չպատվեց Տիրոջ կանոնները և փոքրացրեց Նրա պատկերը: Նա լիովին անտեղյակ էր իր անհնազանդության մասին: Անշուշտ, նրա նպատակն Աստծուն մոտենալն էր, սակայն, իրականում, նա ավելի հեռացավ Նրանից, Ում ձգտում էր երկրպագել:

Արդյո՞ք սա պատասխանում է այն հարցին, թե ինչու են բազմաթիվ մարդիկ եկեղեցում դավանում, որ մտերիմ շփում ունեն Աստծո հետ, սակայն անհաղորդ են Նրա ցանկություններին: Չիմանալով այն սկզբունքները, որոնք քննարկեցինք, դուք կարող եք շփոթվել, երբ տեսնեք, որ մարդիկ կիսվում են Աստծուց ստացած հայտնություններով, որոնք, սակայն, հակասում են Աստվածաշնչին: Ինչպե՞ս նրանք կարող են ժամանակ տրամադրել աղոթքին, իսկ հետո քննադատել այն առաջնորդներին, որոնց Աստված պատվիրում է պատվել: Եթե համարձակվում եք հիշեցնել նրանց այն, ինչ Աստվածաշունչն է ասում, նրանք բարկանում են: Նրանք կարծում են, թե դուք անհաղորդ եք և հոգևոր չեք, այնինչ, իրականում, հենց իրենք են հակառակվում Աստծո ճանապարհներին:

Որպես առաջնորդ, ես անթիվ անգամներ հնարավորություն եմ ունեցել զրուցելու մարդկանց հետ, որոնք պատմում են այնպիսի բաներ, ինչը, իրենց համոզմամբ, Աստված է հայտնել իրենց, բայց ես անհանգստություն եմ զգում իմ հոգում: Թեև նրանք համոզված են, որ լսել են Աստծուց, նրանք չեն ընդունում ոչ մի խոսք Աստվածաշնչից, որով ես կիսվում եմ նրանց հետ: Նրանք այդպես են վարվում ոչ միայն ինձ հետ,

այլև նրանց հետ, ովքեր փորձում են օգնել իրենց: Նրանք օգտագործում են այլ աստվածաշնչյան հատվածներ՝ անտեսելով դրանց համատեքստը, որպեսզի արդարացնեն իրենց պնդումները, և նրանք բաց չեն հետագա քննարկման համար: Դրանից հետո նրանք խուսափում են ինձնից, նաև մեկուսանում են նրանցից, ովքեր փորձում են օգնել իրենց, քանի որ, իրենց կարծիքով, մենք այլևս հոգևոր մարդիկ չենք: Ժամանակի ընթացքում նրանց պտղից ակնհայտ է դառնում, որ նրանց ճանապարհներն Աստծո կամքին հակառակ են եղել, կամ՝ որ նրանց սպասումները չեն իրականացել: Հնարավո՞ր է, որ նրանք լսել էին իրենց երևակայության ձայնը, ոչ թե Հիսուսին: Ինչպե՞ս ստացվեց, որ ձգտելով մտերմության, նրանք մոլորության հասան:

ԱՍՏԾՈՒՆ ԿՌԱՊԱՇՏ ՍՐՏՈՎ ՄՈՏԵՆԱԼԸ

Գոյություն ունի մի միջոց՝ այս սարսափելի մոլորությունից հեռու մնալու համար, և այն կրկին գտնվում է Տիրոջ երկյուղի մեջ: Եթե մենք երկյուղած ենք Տիրոջից, պետք է գանք Նրա մոտ չեզոք սրտով՝ պատրաստ լսելու Նրա խրատը կամ շտկումը: Մենք չենք հենվում մեր հասկացողության կամ եսակենտրոն ցանկությունների վրա, այլ ջերմեռանդորեն ցանկանում ենք Նրա կամքը:

Տիրոջը մոտենալը՝ ուժգին ցանկություններով, այն դեպքում, երբ Նա հայտնել է մեզ, որ դրանք չեն համապատասխանում Իր կամքին, կարող է ամենից անմիտ և վտանգավոր նախաձեռնությունը լինել, որովհետև դա կարող է տանել մեզ մոլորության հաջորդ մակարդակին, որն ամենից զգաստացնողն է: Մոլորության այս մակարդակն այն է, երբ Ինքը՝ Աստված, տալիս է մեզ կամ թույլ է տալիս, որ ունենանք այն, ինչ մենք ցանկանում ենք.

> «Եվ Տիրոջ Խոսքը եղավ ինձ՝ ասելով. «Մարդո՛ւ որդի, այս մարդիկ իրենց կուռքերը դրել են իրենց սրտում, և իրենց անօրինության գայթակղությունը դրել են իրենց երեսի առջև. մի՞թե ես եմ տալու դրանց պատասխանը»» (Եզեկ. 14.2,3):

Տերը տրտմած էր, որ Իր ժողովուրդը եկել էր Իր առջև՝ առաջնորդություն, խորհուրդ և իմաստություն խնդրելու համար, սակայն նրանք եկել էին՝ թաքցնելով կուռքեր իրենց սրտերում: Պարզ չէ՝ արդյո՞ք նրանք լիարժեք գիտակցում էին դա. այնուամենայնիվ, թվում է՝ ճշմարտությունը ծածկված էր նրանց աչքերից: Այդ կուռքերը դրդում էին նրանց սայթաքել՝ անօրինության մեջ հայտնվելով: *«Անօրինություն»* բառը եբրայերենում *«ավոն»* բառն է, նշանակում է հանցանք Աստծո կամքի դեմ՝ միտումնավոր կամ ոչ միտումնավոր:

Ուշադրություն դարձրեք, որ Աստված չասաց, որ նրանք կուռքեր էին դրել իրենց բակերում, հյուրասենյակներում կամ ննջասենյակներում: Կռապաշտությունը նրանց սրտերում էր: Հիշեք՝ կռապաշտությունը չի սահմանափակվում որևէ օտար աստծո անունը կանչելով: Ինչպես արդեն նշեցի, կռապաշտության ձևերից մեկն Աստծո պատկերը փոքրացնելն է ավելի ցածր պատկերի, որը պատրաստ է տալ մեզ այն, ինչ մենք ջերմեռանդորեն ցանկանում ենք: Դուք կբացահայտեք, որ ամեն կռապաշտության արմատն ագահությունն է: Նոր կտակարանը հաստատում է սա.

> «Ուրեմն, սպանե՛ք ձեր անդամները, որ երկրի վրա են՝ պոռնկությունը, պղծությունը, կիրքը, չար ցանկությունը և *ագահությունը, որ կռապաշտություն է»* (Կողոս. 3.5, *շեղագիրը հեղինակինն է):*

Եփեսացիների 5.5-ում Պողոս առաքյալը գրում է, որ ագահ մարդը կռապաշտ է: Պարզ է, որ կռապաշտությունը սահման-

վում է որպես ագահություն. այնպես որ, եկեք սահմանենք *«ագահություն»* բառը: *«Վեբսթերի բառարանը»* սահմանում է այն որպես «որևէ ենթադրյալ բարիք ձեռք բերելու և դրան տիրանալու ուժգին ցանկություն»: Աղոթքի մեջ խնդրեցի Տիրոջը տալ Իր սահմանումը: Նրա պատասխանն էր. «Ագահությունը շահ ստանալու ցանկություն է»:

Ագահությունը չի սահմանափակվում փողի հանդեպ ցանկությամբ: Այն ընդգրկում է ունեցվածքը, դիրքը, հարմարավետությունը, ընդունված լինելը, հաճույքը, իշխանությունը, սեռական կիրքը և այլն: Ագահությունն այնպիսի վիճակ է, որում մենք հայտնվում ենք, երբ գոհունակ չենք: Մենք ինչ-որ բանի ենք ձգտում, քանի որ չունենք խաղաղություն և հանգստություն այն ամենում, ինչ Աստված տվել է մեզ: Մենք գիտակցաբար կամ անգիտակցաբար ընդդիմանում ենք Նրա ծրագրին կամ Նրա կողմից կատարվող աշխատանքին մեր կյանքում: Ահա թե ինչու է Խոսքը պատվիրում մեզ. «Վարքն առանց արծաթասիրության (կամ՝ ագահության) լինի. բավակա՛ն համարեք այն, որ ձեռքներումդ ունեք, որովհետև Ինքն ասաց, թե՝ չե՛մ թողնի քեզ և երեսից չե՛մ գցի» (Եբր. 13.5): Երբ ապրենք հետևյալ համոզմամբ՝ «Քո [Տիրոջ] երեսի առջև ուրախությունների լիություն կա, և Քո աջ կողմը՝ քաղցրություններ՝ հավիտյան» (Սաղմ. 16.11), մենք բավականության չենք ձգտի՝ Նրա ներկայությունից կամ մեզ համար Նրա ունեցած ծրագրից դուրս:

Ագահությունը բնակվում է անհանգստության մեջ և բորբոքվում է անդադար ցանկությամբ: Այս պնդումը կատարելապես նկարագրում է Իսրայելի զավակներին, որոնք դուրս եկան Եգիպտոսից: Նրանք շարունակ բուռն ցանկանում էին այն ամենը, ինչը, իրենց կարծիքով, լավագույնն էր իրենց համար, թեև Աստված հայտնել էր Իր կամքը: Նրանց դուր չէր գալիս այն ընթացքը, որն Աստված ընտրել էր, որպեսզի պատրաստեր իրենց տիրանալու Խոստման երկրին, և նրանք բողոքում էին իրենց պայմաններից, ջրից, կերակուրից և այլն: Նրանցում չկար սուրբ

երկյուղ, և նրանց սրտերը պարարտ հող էին ագահության համար: Երբ Աստված հայտնեց Իրեն, նրանք փախուստի դիմեցին՝ ձգտելով թաքցնել ճշմարտությունն այն մասին, որ հաճույք և շահ ստանալու իրենց ծածուկ ցանկություններն ավելին էին, քան իրենց փափագն Աստծո հանդեպ:

Հենց որ Տերը և Մովսեսը միասին հեռացան, ժողովուրդը կարողացավ հաղորդել Աստծուն այնպիսի պատկեր, որը թույլ էր տալու իրենց կատարել իրենց ագահությունից դրդված ցանկությունները: Հետաքրքրական է, որ այդ ամենը պտտվում էր ոսկու շուրջ: Նրանց սերը փողի հանդեպ ցույց էր տալիս, որ նրանցում չկար նվիրում Աստծո կամքին: Այդ պահին նրանք գործում էին մոլորության թանձր մառախուղի մեջ:

(Որպես կողմնակի նշում, ագահությունը նաև կռապաշտության այլ տեսակների արմատն է: Ամբողջ մարդկությունը ստեղծված է Աստծուն երկրպագելու ներհատուկ ցանկությամբ: Այնուամենայնիվ, շատերը չեն ցանկանում հպատակվել ճշմարիտ Արարչին: Այնպես որ, նրանք ստեղծում են սուտ աստծո, բայց ո՞վ է սուտ աստծո արմատը: Պատասխանն է՝ այն ստեղծողը, այսինքն՝ մարդը: Մարդը երկրպագում է սուտ աստծո, որը, ըստ էության, տալիս է նրան իր ուզածը: Կրկին, արմատն ագահությունն է):

Այսպիսով, ինչպիսի տեսք էլ կուռքերն ընդունեն, բոլորն էլ աղբյուր են և գրավում են այն տեղը, որին միայն Աստված է արժանի: Կուռքը կարող է լինել ձեր երջանկության, մխիթարության, խաղաղության կամ մատակարարման աղբյուրը և այլն: Աստված ասում է. «Դուք ձեզ համար... կուռքեր չշինեք» (Ղևտ. 26.1): Մենք ենք կուռք շինողները: Կուռքն այն է, ինչը մենք Աստծուց առավել ենք դասում մեր կյանքում: Կուռքն այն է, ինչը մենք սիրում ենք, հավանում ենք, ցանկանում ենք, կամ՝ ինչին վստահում ենք և ուշադրություն ենք դարձնում ավելի, քան Տիրոջը: Կուռքն այն է, ինչից դուք ուժ եք ստանում, կամ՝ ինչին տալիս եք ձեր ուժը: Հավատացյա-

լը հրապուրվում է կռապաշտությամբ, երբ թույլ է տալիս, որ իր սրտում դժգոհություն առաջանա, և բավականության է ձգտում՝ իր համար Աստծո ունեցած ծրագրից դուրս: Կրկին, դրա արմատն ագահությունն է:

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏ

Վերադառնալով Եզեկիելին ուղղված Աստծո խոսքերին, Նա գանգատվեց, որ Իր իսկ ժողովուրդը եկել էր օգնության՝ իրենց սրտերում պահված կուռքերով: Նրանք ուզում էին, որ Աստված տար այն, ինչ իրենք եսասիրաբար ցանկանում էին, փոխարենը փնտրեին Նրա կամքը: Գրեթե նույնը տեղի է ունենում դեռահասների մոտ, որոնք ակնկալում են, որ ծնողները համաձայնելու են իրենց գաղափարներին, փոխարենը հարցնեն ծնողներից և օգտվեն նրանց իմաստությունից: Նրանք չեն գիտակցում, որ ծնողներն ավելի իմաստուն են և ցանկանում են միայն լավագույնը:

Աստծո պատասխանը Եզեկիելին և՛ մտահոգիչ է, և՛ սթափեցնող է: Նա միանշանակ ասաց Եզեկիելին, որ երբ ինչ-որ մեկն Իր ժողովրդից գա Իր մոտ՝ ագահությամբ լցված սրտով, «Ես՝ Տերս, նրան պատասխան պիտի տամ, որ գալիս է, նրա կուռքերի շատության համեմատ» (Եզեկ. 14.4): «Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչում» այս խոսքը գրված է հետևյալ կերպ. «Ես՝ Տերս, դրդված կլինեմ տալ նրան պատասխան այդ հարցում՝ հաշվի առնելով նրա կուռքերի բազմությունը»: Այս խոսքը կարելի է հասկանալ հետևյալ կերպ. «Ես՝ Տերս, դրդված կլինեմ տալ նրան պատասխան այդ հարցում՝ նրա ագահությունից դրդված ցանկությունների համեմատ»:

ԱՍՏԾՈ ՄՈԼՈՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՂ

Սա ակնհայտ է Բաղաամի կյանքում: Նա Եհովայի մեծ մարգարե էր. ոչ թե որևէ կեղծ աստծո, այլ՝ Նրա, Ում մենք ծառա-

յում ենք: Նրա մարգարեական ծառայությունն այնքան ազդեցիկ էր, որ թագավորները լսել էին այդ մասին: Այդ թագավորներից մեկը Բաղակն էր՝ Մովաբի և Մադիամի թագավորը:

Մովաբի և Մադիամի ժողովուրդը սարսափած էր, քանի որ Իսրայելը որոշ ժամանակ առաջ պարտության էր մատնել աշխարհի ամենահզոր պետությանը՝ Եգիպտոսին, և այժմ նրանք բանակ էին դրել Մովաբի դաշտավայրում: Նրանք մտածեցին, որ եթե իսրայելցիները կարողացել էին հեշտորեն կործանել Եգիպտոսը, նրանք անխոչընդոտ կվարվեին նույնկերպ նաև իրենց հետ: Վախն իսրայելցիներից տարածվեց և նույնիսկ հասավ արքունիք:

Թագավորը մի ծրագիր կազմեց: Նա հասկանում էր՝ ում մեծ մարգարե Բաղաամն օրհներ, օրհնված էր լինելու, և ում անիծեր, անիծված էր լինելու: Նա Բաղաամի մոտ ուղարկեց ազնվականների՝ մեծ նվերներով, և խնդրեց նրան վերադառնալ նրանց հետ, կանգնել թագավորի կողքին և անիծել Իսրայելը Մովաբի բարձրավանդակներից:

Դա հետաքրքրեց Բաղաամին. «Այս գիշեր այստեղ մնացեք, և ես պատասխան կտամ ձեզ, ինչպես որ Տերը ինձ հետ խոսելու լինի» (Թվոց 22.8): Նրա պատասխանն այսօր նման է շատ հավատացյալների պատասխանին. «Թո՛ւյլ տվեք աղոթել այս հարցի վերաբերյալ և լսել, թե ինչ է ասում Տերը»:

Տերը եկավ Բաղաամի մոտ և պահանջեց. «Ովքե՞ր են այդ մարդիկ քեզ մոտ»: Այլ կերպ ասած. «Ինչո՞ւ ես աղոթում սրա վերաբերյալ: Այդ մարդիկ ուխտ չունեն Ինձ հետ, սակայն խնդրում են, որ անիծես Իմ ուխտի ժողովրդին: Նույնիսկ կարիք չկա, որ հարցնես այս մասին»:

Սա ուղերձ է բոլորիս համար. կան բաներ, որոնց մասին մենք նույնիսկ աղոթելու կարիք չունենք: Մենք պետք է իմանանք Աստծո ցանկությունը, նույնիսկ՝ մինչև խնդրելը: Ինձ համար տհաճ է, երբ իմ դեռահաս որդիները մոտենում են ինձ և ինչ-որ բան են խնդրում, թեև արդեն գիտեն, որ ես «ոչ» եմ

ասելու: «Ինչո՞ւ են նրանք ընդհանրապես հարցնում այս մասին»,- փնթփնթում եմ ես այն բանից հետո, երբ տալիս եմ նրանց այն պատասխանը, որի մասին նրանք արդեն գիտեին սրտի խորքում:

Նրանք այդպես են վարվում, քանի որ նրանց կյանքի այդ ոլորտում իմ խոսքը դեռևս օրենք կամ արգելք է նրանց համար, այլ ոչ թե նրանց բերկրանքը:

Վերադառնալով Բաղաամին՝ ենթադրում եմ, որ նրան առաջարկել էին մեծ վարձատրություն, ինչպես և պատվավոր դիրք Մովաբի և Մադիամի ժողովուրդների միջև: Արդյո՞ք Բաղաամի փող և պատվավոր դիրք ստանալու ցանկությունը քողարկել էր նրա աչքերը՝ թույլ չտալով հասկանալ ողջամիտ իմաստությունը:

Աստված, Ով ողորմած է, հավանաբար, մտածեց. *«Լա՛վ, Բաղաամ, քանի որ դու չհասկացար Իմ ակնարկը կամ իրականում չես ուզում հասկանալ, ես շատ պարզ կհայտնեմ քեզ Իմ կամքը»:* Նա ասաց. «Դրանց հետ չգնա՛ս, ժողովրդին չանիծե՛ս, որովհետև նա օրհնված է» (խոսք 12): Մի՞թե սա հասկանալի չէ: Ես տեսնում եմ, որ հաճախ, երբ Աստված խոսում է, Նրա խոսքերը պարզ և հասկանալի են. մենք ենք, որ անորոշ ենք դարձնում և բարդացնում:

Բաղաամը հնազանդվեց և հետևյալ առավոտյան ետ ուղարկեց դեսպաններին՝ ասելով. «Գնացե՛ք ձեր երկիրը, որովհետև Տերն ինձ *արգելում է* ձեզ հետ գնալու» (խոսք 13, *շեղագիրը հեղինակինն է):* Թեև նա հնազանդվեց, կարելի է դժկամություն նկատել նրա ձևակերպման մեջ, հատկապես՝ *«արգելում է»* բառի: Պատկերացրե՛ք հետևյալը. մի դեռահաս աղջիկ պարասրահ գնալու հրավեր է ստանում մի երիտասարդ տղայից, որը շատ հայտնի է, բայց վատ համբավ ունի: Ոգևորված նման հայտնի տղայի հրավերից՝ աղջիկը խանդավառությամբ պարասրահ գնալու թույլտվություն է խնդրում իր հորից: Նրա հայրը, իր աղջկա հանդեպ սիրուց դրդված և

նրա մասին մտահոգվելով՝ մեղմորեն մերժում է խնդրանքը: Աղջիկը հիասթափությամբ ասում է այդ երիտասարդին. «Ես չեմ կարող գալ. ծնողներս թույլ չեն տալիս»: Իրականում նա նկատի ունի՝ իմ ծնողները մերժեցին, բայց ես կհամաձայնեի: Պատճառը նրա ծնողներն են, որոնք չթույլատրեցին նրան: Նա ցանկանում է գնալ, բայց միայն նրա ծնողների խոսքն է, որ սահմանափակում է նրան բաղձալի ցանկությունից: Դժբախտաբար, եթե նա չընդունի այն, ինչ կա իր ծնողների սրտում, ի վերջո որևէ միջոց կգտնի այդ երիտասարդի հետ ժամադրության գնալու համար և, ամենայն հավանականությամբ, դրա հետևանքները ցավալի կլինեն:

Բաղաամը մարգարե էր, որն անառողջ ցանկություն ուներ փողի հանդեպ: Ագահությունը վառվում էր նրա ներսում: Նա բուռն կերպով ցանկանում էր ստանալ այս կյանքի առավելությունները, ինչպես նաև ավելի մեծ հասարակական ազդեցություն ձեռք բերել: Նա հնազանդվեց, բայց ոչ՝ առանց դժկամության: Աստծո խոսքն արգելք էր, ոչ թե բերկրանք, քանի որ թույլ չէր տալիս ստանալ այն, ինչ իրականում ցանկանում էր:

ՀՐԱՊՈՒՐՎԱԾ ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ

Մովաբի և Մադիամի ծերերը վերադարձան Բաղակ թագավորի մոտ և ասացին. «Բաղաամը հրաժարվեց գալ մեզ հետ»: Այնուամենայնիվ, դա չկանգնեցրեց թագավորին իր մտադրությունից. նա անմիջապես ուղարկեց ավելի բարձր և պատվավոր դիրքեր ունեցող մարդկանց Բաղաամի մոտ՝ ավելի շատ փողով:

Ինչո՞ւ էր Բաղակն այդպես վարվում: Ես համոզված եմ, որ դիվային ուժերն էին դրդում նրան: Ինչո՞ւ եմ համոզված: Աստվածաշունչը բացատրում է. «Բայց ամեն մեկը փորձվում է *բուն իր ցանկությունից հրապուրված և խաբված»* (Հակոբ. 1.14, *շեղագիրը հեղինակինն է):* Ուշադրություն դարձրեք երկու բանի: Առաջինը՝ *«բուն իր ցանկությունից»* բառերը: Յուրաքանչյուր

ուժգին ցանկություն, որը հակառակ է Աստծո կամքին, ագահություն է, որը կռապաշտություն է: Երկրորդը՝ ուշադրություն դարձրեք *«խաբված»* բառին. սա թշնամու բառն է. նա է խաբում և գայթակղեցնում: Բայց լսեք. դուք չեք կարող խաբվել կամ գայթակղվել այնպիսի բանով, ինչը չեք ցանկանում: Եթե դուք «էքստազի» թմրանյութ առաջարկեիք եկեղեցում գտնվող մարդկանց մեծ մասին, նրանք անվարան կհրաժարվեին: Ինչո՞ւ: Նրանք չունեն ցանկություն դրա հանդեպ: Դուք չեք կարող գայթակղվել այնպիսի բանով, ինչը չեք ցանկանում: Այնուամենայնիվ, դուք կարող եք գայթակղվել այն ցանկություններով, որոնք չեք թողել խաչի մոտ: Մենք գայթակղվում ենք այն բաներով, որոնց հանդեպ բաղձանք ունենք, կամ, կարելի է ասել, որոնք *սաստիկ ցանկանում* ենք:

Թշնամին գիտեր, որ այդ մարգարեն փող և ճանաչում էր սիրում, և նա դրդեց անօրեն թագավորին ուղարկել ավելին երկուսից էլ: Բաղակի ներկայացուցիչներն իշխանություն ունեին առաջարկելու ցանկացած բան, ինչ պատկանում էր նրան՝ ասելով. «Ես կանեմ այն, ինչ ասես»: Ինչպիսի՞ առաջարկ: Այլ բան է, երբ ձեզ առաջարկվում է այն, ինչ ունի ձեր հարևանը. գուցե նա շատ բան ունենա, իսկ գուցե՝ ոչ: Այնուամենայնիվ, լիովին այլ բան է, երբ որևէ թագավոր է առաջարկում ձեզ այն, ինչ նա ունի, հատկապես եթե ձեր թուլությունն այն ոլորտներում է, որոնցում այդ թագավորը կարողություն ունի: Այնուամենայնիվ, լսեք Բաղաամի պատասխանը.

> «Եթե Բաղակն իր տունը լիքն ինձ արծաթ ու ոսկի տա, իմ Տեր Աստծո խոսքից *չեմ կարող* անց կենալ՝ մի փոքր կամ մի մեծ բան անելու» (Թվոց 22.18, *շեղագիրը հեղինակինն է):*

Մեծ մասը կոգեշնչվեր Բաղաամի հնազանդությամբ: Այնուամենայնիվ, կրկին ուշադրություն դարձրեք նրա բառերի ընտրությանը՝ «չեմ կարող»: Կրկին, Տիրոջ խոսքը սահմանափա-

կում էր նրան այն բանից, ինչ նա իրականում ցանկանում էր: Բաղաամը գիտեր այն, ինչ գիտի եկեղեցի հաճախող մարդկանց մեծ մասը. անկարելի է միտումնավոր անհնազանդ լինել Տիրոջ խոսքին և օրհնված լինել: Նա նույնպես գիտեր այն, ինչ գուցե գիտի եկեղեցի հաճախող մարդկանց կեսը. միտումնավոր կերպով անհնազանդ մարդկանց դատաստան է սպասում: Այնուամենայնիվ, երբեմն այս մասին իմանալով, դուք կարող եք փորձանքի մեջ հայտնվել, քանի որ, եթե չկարողանաք ստանալ ձեր ուզածը՝ Աստծո կամքի միջոցով, դուք կշարունակեք որոնել ձեր ուզածը ստանալու այլ միջոց՝ իբրև թե Աստծո կամքի չափանիշների սահմաններում: Որպես բացատրություն, կարդացեք Բաղաամի հաջորդ պնդումը.

> «Եվ հիմա աղաչում եմ, այս գիշեր դուք էլ այստեղ մնացեք, որ գիտենամ, թե Տերն ուրիշ ինչ պիտի ասի ինձ» (Թվոց 22.19):

Դուք լսեցիք «թե Տերն ուրիշ ինչ պիտի ասի ինձ» խոսքերը: Միթե նա մտածում էր, որ ավելի մեծ գումարը կփոխեր Աստծո միտքը: Միթե նա կարծում էր, որ երբ առաջին անգամ Տերն ասաց՝ «Դրանց հետ չգնա՛ս», Նա ուզում էր, որ Բաղաամն ավելի շահավետ առաջարկ ստանար:

Ինչո՞ւ նա պետք է կրկին աղոթեր սրա վերաբերյալ: Դուք տեսնո՞ւմ եք, որ նա դեռ փորձում էր ինչ-որ միջոց գտնել՝ իր ուզածը ստանալու համար: Նրա սաստիկ ցանկությունն անտեսում էր ամեն ողջամտություն: Սա նույնն է, ինչ մեր օրինակի դեռահաս աղջիկը, որն այնքան ժամանակ հանգիստ չի տալիս իր հորը, մինչև որ ժամադրության է գնում այդ հայտնի տղայի հետ: Բաղաամը համառ էր. նա չէր ցանկանում ուրախությամբ կատարել Աստծո կամքը, քանի որ այն հակառակվում էր իր ագահ սրտին: Միգուցե ավելի ճիշտ կլինի ասել՝ կռապաշտ սրտին: Աստվածաշունչը հաստատում է սա. «Համառությունը կռապաշտության պես է» (Ա Թագ. 15.23, ASV): Լսե՛ք Աստծո պատասխանը Բաղաամին.

> «Եվ Աստված գիշերը Բաղաամի մոտ եկավ և ասաց. «Եթե [այդ] մարդիկ քեզ կանչելու գան, վեր կաց, նրանց հետ գնա՛, բայց ինչ որ քեզ հետ խոսեմ, միայն այն անես»» (Թվոց 22.20):

Այդ մարդիկ կանչելու էին նրան հաջորդ առավոտյան, քանի որ նրանք մնացել էին Բաղաամի մոտ և հուսով էին, որ նա վերադառնալու էր իրենց հետ: Այնպես որ, ըստ էության, Աստված նկատի ուներ. «Երբ այդ մարդիկ գան քեզ կանչելու, գնա՛ նրանց հետ, բայց արա՛ միայն՝ ինչ որ Ես կասեմ քեզ»: Զարմանալի՜ է: Գուցե մենք սխալ էինք մեր գնահատման մեջ: Ուշադրություն դարձրեք, որ գրված չէ. «Եվ սատանան գիշերը Բաղաամի մոտ եկավ և ասաց. «Վեր կաց, նրանց հետ գնա՛»»: Ո՛չ էլ գրված է. «Եվ մի մոլորեցնող հոգի գիշերը Բաղաամի մոտ եկավ և ասաց...»: Նախկինում ես կատակում էի այս մասին, բայց այնպիսի տպավորություն է, որ Աստված դրդում էր նրան սպասել, որպեսզի ավելի շատ փող ստանար, քանի որ այժմ Նա ասում է. «Գնա՛»:

ՄԵՐ ՈՒՂԱԾԸ ՍՏԱՆԱԼԸ

Այժմ Բաղաամը Տիրոջից խոսք ուներ՝ գնալու համար: Հաջորդ օրը նա արթնացավ վաղ առավոտյան, որպեսզի աներ այն, ինչ Տերը կարգադրել էր նրան նախորդ գիշեր, և ահա թե ինչ տեղի ունեցավ.

> «Եվ Բաղաամն առավոտյան վեր կացավ և իր էշի համետը դրեց և Մովաբի իշխանների հետ գնաց: Եվ *գնալու համար Աստծո բարկությունը բորբոքվեց»* (Թվոց 22.21,22, *շեղագիրը հեղինակինն է):*

Սպասեք: Այժմ Տերը բարկացած է, քանի որ Բաղաամը պարզապես կատարում է այն, ինչ Ինքն ասաց նրան նախորդ գիշեր: Մենք գիտենք, որ Աստված չի հակասում Ինքն Իրեն.

ուրեմն ինչպե՞ս բացատրել սա: Պատասխանը Եզեկիելին ուղղված Աստծո խոսքերում է: Հիշե՛ք, որ Տերն ասաց, որ երբ ինչ-որ մեկն Իր ժողովրդից գա Իր մոտ՝ ագահությամբ լցված սրտով՝ «Ես՝ Տերս, դրդված կլինեմ տալ նրան պատասխան այդ հարցում՝ նրա ագահությունից դրդված ցանկությունների համեմատ»:

Սա մի ճշմարտություն է, որը շատերը եկեղեցում չգիտեն և չեն հասկանում: Եթե մենք իրականում ինչ-որ բան ենք ցանկանում, եթե մենք շարունակում ենք բուռն կերպով ցանկանալ դա նույնիսկ այն բանից հետո, երբ Աստված հայտնում է Իր կամքը, ամենայն հավանականությամբ, Նա կտա դա մեզ, նույնիսկ եթե դա հակառակ է Իր կամքին, և նույնիսկ եթե Նա գիտի, որ հետագայում մենք դատաստանի ենք ենթարկվելու դրա պատճառով:

Այս պահին գուցե ցնցված լինեք, բայց հիշե՛ք Իսրայելի ժողովրդին, երբ ցանկանում էին թագավոր ունենալ: Սամուելը մոտեցավ Տիրոջը՝ նրանց խնդրանքով, և Աստված հայտնեց նրանց, որ Իր կամքն էր, որ նրանք թագավոր չունենային: Նա ասաց Սամուելին, որ թագավորը վերցնելու էր նրանց լավագույն որդիներին, դուստրերին, հողատարածքները, խաղողի այգիները և պարտեզները, ինչպես նաև հարկեր էր պահանջելու նրանցից:

Սամուելը փոխանցեց Տիրոջից ստացած խոսքը ժողովրդին: Կարդացե՛ք նրանց արձագանքը. «Սակայն ժողովուրդը *Սամուելի* խոսքը լսել չուզեց»: Ուշադրություն դարձրեք՝ Աստվածաշունչը չի ասում, որ նրանք հրաժարվեցին լսել Տիրոջ խոսքը: Կրկին, ինչպես և Մովսեսի դեպքում, նրանք որակազրկեցին ավետաբերին՝ պահպանելով *Տիրոջ՝ իրենց կողմից ստեղծված պատկերը*, որպեսզի կարողանային անել այն, ինչ կամենում էին: Աստված մխիթարեց Սամուելին ծածուկում. «Նրանք քեզ չեն մերժել, այլ Ինձ են մերժել» (տե՛ս Ա Թագ. 8-րդ գլուխ):

Ի պատասխան, Աստված թագավորների տվեց նրանց: Նա նույնիսկ ընտրեց նրանց, և առաջինը Սավուղն էր: Համաձայն կանխատեսման, թագավորները վերցրին ժողովրդի լավագույն հողատարածքները, որդիներին և դուստրերին, ինչպես նաև հարկեր գանձեցին: Ի վերջո, թագավորների պատճառով Իսրայելը բաբելոնյան գերության մեջ հայտնվեց: Աստված տվեց նրանց այն, ինչ նրանք սաստիկ ցանկացան:

Մտածե՛ք Իսրայելի մասին անապատում: Նրանք ուտում էին լավագույն կերակուրը, որը մարդը երբևէ կերել էր՝ մանանան: Եղիան միայն երկու շոթ կերավ դրանից և վազեց քառասուն օր և գիշեր: Դա մեծ ուժ հաղորդող կերակուր էր:

Այնուամենայնիվ, Իսրայելը հոգնեց դրանից և տրտնջաց՝ միս պահանջելով: Նրանք միս խնդրեցին Տիրոջից, և գրված է, որ Աստված «նրանց տվեց իրենց ուզածը» (Սաղմ. 106.15): Կրկին, նրանց ագահությունից դրդված ցանկությունը շնորհվեց նրանց, և Նա նույնիսկ արեց դա հրաշքով.

«Նա երկնքում վեր կացրեց արևելյան քամին:
Եվ Իր զորությամբ մոտ քշեց հարավային քամին:
Եվ միս թափեց նրանց վրա՝ ինչպես փոշի,
և թևավոր թռչուններ՝ ինչպես ծովի ավազ,
Եվ նրա բանակի մեջ գցեց՝
նրա բնակարանների չորս կողմով» (Սաղմ. 78.26-28):

Նրանք խնդրանք ներկայացրին, և Աստված շնորհեց այն՝ հրաշագործ միջամտությամբ («Իր զորությամբ»). Նա անապատ բերեց այնքան լորամարգիներ, որքան բավական էր՝ երեք միլիոն մարդու կերակրելու համար: Ինչպիսի՜ զարմանալի հրաշք, որովհետև լորամարգիները չեն ապրում անապատում: Բացի այդ, նրանք չունեին որսորդական զենքեր և շներ: Ինչպիսի՜ հրաշք: Այնուամենայնիվ, ահա թե ինչ տեղի ունեցավ.

«Եվ կերան և խիստ կշտացան:
Եվ *իրենց ցանկությունը* տվեց:
Իրենց ցանկությունից չէին դադարել.
դեռ իրենց կերակուրը բերաններում էր,
Աստծո բարկությունը դուրս եկավ նրանց վրա
և սպանեց նրանց պարարտներից
և գետնով զարկեց Իսրայելի երիտասարդներին»:
(Սաղմ. 78.29-31, *շեղագիրը հեղինակինն է)*

Նա հրաշքով շնորհեց նրանց ցանկությունը, բայց մինչև որ նրանք ավարտեցին, Նրա դատաստանը եկավ նրանց վրա: Նա պատասխանեց ժողովրդին՝ նրանց սրտերի սաստիկ ցանկության համեմատ:

Պատկերացրե՛ք մի երիտասարդի, որը հանդիպում է մի աղջկա հետ: Նրա ծնողները մտահոգված են. «Որդի՛ս, մենք վատ զգացողություն ունենք ձեր հարաբերության պատճառով: Մենք ուզում ենք, որ դադարես հանդիպել նրա հետ»: Այդ տղայի երիտասարդական հովիվը հաստատում է դա. «Ուզում եմ կրկնել քո ծնողների խոսքերը: Երբ աղոթում եմ սրա վերաբերյալ, ես շատ վատ զգացողություն ունեմ: Դու իսկապես պետք է դադարես հանդիպել այդ աղջկա հետ»: Բայց այդ երիտասարդն ի վերջո ընդդիմանում է. «Ես շարունակ աղոթում էի, և Աստված ասաց ինձ, որ կարող եմ ամուսնանալ նրա հետ»: Նրանք ամուսնանում են, և հետագայում նա չի կարողանում հասկանալ իրենց անհաղթահարելի խնդիրների պատճառը:

Պատկերացրեք մի տղամարդու, որն ասում է իր կնոջը, որ աղոթում է որոշակի աշխատանքի համար: Նրա կինն ասում է. «Ես վատ զգացողություն ունեմ: Եթե դու ստանաս այդ աշխատանքը, գործուղումների մեջ ես լինելու տարվա մեջ ավելի քան երկու հարյուր օր: Դու չես կարողանա եկեղեցի հաճախել, գուցե միայն ամիսը մեկ անգամ, և բաց կթողնես այն ուղերձները, որոնք Աստված դնում է մեր հովվի սրտում, էլ չեմ խո-

սում երկրպագության մասին և ցանկացած ծառայության, որ դու կարող էիր կատարել եկեղեցում...»: Նրա հովիվը կիսվում է նմանատիպ մտահոգություններով, բայց այդ տղամարդը վճռականորեն աղոթում է, մինչև իր առաջխաղացումը ստանալը: Մեկ տարի անց նա չի հասկանում, թե ինչպես է հայտնվել հյուրանոցային համարում մի անծանոթ կնոջ հետ և հեռվացել իր ընտանիքից:

Կարելի է անվերջ օրինակներ բերել: Մենք պետք է գիտակցենք, որ երբ սաստիկ ցանկանում ենք այնպիսի բան, ինչը հակառակ է Աստծո կամքին, Աստված հաճախ կտա դա մեզ. Նրա պատասխանը կլինի՝ համաձայն մեր սրտում եղած կուռքերի: Ի վերջո, Նա այդպես է վարվում, որպեսզի կրկին շահի մեր սրտերը:

> «Ես՝ Տերս, նրան պատասխան պիտի տամ, որ գալիս է, նրա կուռքերի շատության համեմատ, որպեսզի բռնեմ Իսրայելի տունը իրենց սրտից, որոնք օտարացել են Ինձնից՝ իրենց բոլոր կուռքերով» (Եզեկ. 14.4,5):

«Նոր միջազգային թարգմանությունը» փոխանցում է այս խոսքը հետևյալ կերպով. «Ես այդպես կվարվեմ, որպեսզի կրկին շահեմ Իսրայելի ժողովրդի սրտերը»: Տերը հուսահատորեն ցանկանում է վերադարձնել մեզ դեպի Իր սիրտը: Հիշեք՝ Նա հետամուտ է լինում մեզ, Նա փափագում է մեզ: Թեև Նա ցանկանում է, որ ոչ ոք չմոլորվի, Նա չի ծաղրվելու: Նրա սիրտը պահված է այն մարդկանց համար, որոնք լիովին ընծայել են Նրան իրենց սրտերը: Այս պատճառով, Նա ձգտում է կրկին շահել մեր սրտերը՝ հեռացնելով ցանկացած ծուղակից, որում թաքնված է ագահությունը, որը կռապաշտություն է:

Երբ անառակ որդին ժառանգություն խնդրեց հորից, նա եկավ որպես որդի. նա չեկավ որպես օտարական կամ ծառա, այլ՝ որպես նրա ընտանիքի անդամներից մեկը: Ակնհայտ է, որ նա չէր ճանաչում իր հոր սիրտը, այլ վարվում էր իր եսակենտ-

րոն շարժառիթների մղումով: Հայրը չմերժեց նրա խնդրանքը, թեև գիտեր, որ իր որդին սխալ էր տնօրինելու դա: Նա, միևնույն է, տվեց նրան այդ շատ մեծ գումարը, և արդյունքում որդին մեծ տառապանք կրեց, ինչպես որ հայրը կանխատեսում էր: Բարի լուրն այն է, որ որդին, ի վերջո, ուշքի եկավ և վերադարձավ հոր մոտ: Այդ վերամիավորման ժամանակ նա ճանաչեց իր հոր սիրտը՝ այնպես, ինչպես երբեք չէր ճանաչել:

Աստված հույս ունի կրկին շահելու յուրաքանչյուր զավակի, որը մոլորվել է սուրբ երկյուղի բացակայության պատճառով: Ցավոք, ինչպես Բաղաամի դեպքում էր, ոմանք այդպես էլ չեն շտկվում և չեն ճանաչում Տիրոջ սիրտը: Եթե շարունակեք կարդալ պատմությունը Բաղաամի մասին, նա չդադարեց ագահության ձգտել և ի վերջո դատաստանի ենթարկվեց՝ սրով սպանվելով:

Այս համեմատությունը ներկայացվում է նաև Նոր կտակարանում, ըստ որի ներկայումս սուրբ երկյուղ չունեցող մարդիկ դասվում են Իսրայելի զավակների, Կայենի և Բաղաամի հետ (որոնց մասին խոսեցինք այս գլխում): Կարդանք այս զգուշացումը.

> «Ես պետք է հիշեցնեմ ձեզ, և դուք շատ լավ գիտեք դա, որ թեև Տերը փրկեց Իսրայելի ազգը Եգիպտոսից, Նա հետագայում կործանեց նրան, ով հավատարիմ չմնաց» (Հուդա 5, NLT):

Դրանից հետո Հուդան նկարագրում է Նոր կտակարանի հավատացյալներին, որոնք դավանում են Աստծո շնորհքը, սակայն նահանջում են՝ ապրելով ագահությամբ, կրքով և անհնազանդությամբ.

> «Վա՜յ նրանց, որովհետև նրանք գնացել են Կայենի ճանապարհով, ագահությամբ վազել են Բաղաամի մոլորությամբ՝ շահի համար, և կորսվել են Կորխի ապստամ-

բությամբ: Նրանք բծեր են ձեր սիրո խնջույքներում, երբ կերուխում են անում ձեզ հետ՝ առանց երկյուղի՝ ծառայելով միայն իրենց» (Հուդա 11,12, NKJV):

Ուշադրություն դարձրեք, որ նրանք բծեր են մեր սիրո խնջույքներում, ինչը կարող է վերաբերել մեր եկեղեցական ծառայություններին: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ Հիսուսը գալիս է հարսնացուի (Իր մտերիմ սիրեկանի) ետևից, որն անբիծ է պահել իրեն այս աշխարհի կրքերից: Բայց Հուդան ասում է, որ այդ դավանող հավատացյալները «կերուխում են անում ձեզ հետ՝ առանց երկյուղի, ծառայելով միայն իրենց»: Նրանք ուզում են օրհնություններ ստանալ և նույնիսկ մոտ լինել Տիրոջը, սակայն չունեն Աստծո երկյուղը: Նրանք մոլորված են, և նրանց մոլորությունը միայն ավելանալու է, եթե չվերադառնան Աստծո սրտին՝ սուրբ երկյուղով և սիրով:

ԶԳՈՒՇԱՑՆԵԼ ԵՎ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

Թույլ տվեք այլ կողմից ներկայացնել սա: Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է. «Բայց մենք նման չենք նրանց, ովքեր դարձնում են իրենց մեջքն Աստծուն՝ անդառնալի հետևանքներ կրելով» (Եբր. 10.39, NLT): Ես համոզված եմ՝ այս պահին դուք ընթերցում եք այս գիրքը և պատրաստ եք քննել ձեր սիրտը, քանի որ ոչ միայն ցանկանում եք մտերմորեն վարվել Աստծո հետ, այլև ամբողջ սրտով ցանկանում եք հաճելի լինել Նրան՝ գործով և ճշմարտությամբ, ոչ թե ընդամենը դիտավորությամբ և խոսքով: Այս պատճառով, գրված է.

«Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունում, այլև հիմա էլ ավելի՝ իմ բացակայությունում, *ահով և դողալով* գործե՛ք ձեր անձերի փրկությունը: Որովհետև Աստված է,

որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.12,13, *շեղագիրը հեղինակինն է):*

Սուրբ երկյուղով վարվող մարդիկ կինազանդվեն թե՛ այն ժամանակ, երբ զգում են Աստծո ներկայությունը, թե՛ այն ժամանակ, երբ չեն զգում այն: Նրանք հաստատուն են, նույնիսկ երբ թվում է, թե Աստված թողել է իրենց, ինչը Նա երբեք չի անի: Տերը մոտենում է նրանց, ովքեր վարվում են սուրբ երկյուղով, և զորացնում է նրանց, որպեսզի նրանք ոչ միայն կամենան, այլև կատարեն այն, ինչ հաճելի է Իրեն: Նա չխրատեց, որ գործենք մեր փրկությունը սիրով և ուրախությամբ, այլ՝ ահով և դողալով: Կրկին, Տիրոջ երկյուղը վճռական դեր ունի, և այն անպայմանական հնազանդություն է առաջացնում մեր սրտերում, ինչպես նաև գործերում:

Այն, ինչ գրել եմ այս գլխում, սթափեցնող է: Այնուամենայնիվ, Պողոսը հայտնում է մեզ, որ յուրաքանչյուր հավատացյալի Քրիստոսում կատարյալ ներկայացնելու համար պետք է խրատենք կամ զգուշացնենք, ինչպես նաև սովորեցնենք (տես Կողոս. 1.28): Զգուշացումներն առաջին հայացքից կարող են դրական չթվալ. այնուամենայնիվ, ի վերջո դրանք կյանքեր են փրկում և պտուղ են տալիս, եթե մարդիկ ուշադրություն են դարձնում դրանց: Ինձ հաճելի է ուրախ և դրական բառեր լսելը, բայց նաև գիտակցում եմ, որ շատերը կնայեն ծառայողներին Դատաստանի օրը և կբացականչեն. «Ինչո՞ւ դուք չզգուշացրիք ինձ»: Այդ քարոզիչները կդողան, եթե նրանք քարոզում էին «փնտրողներին հարմարեցված» և նրանց հանդեպ զգայուն ուղերձներ, և նրանց ձեռքերի վրա արյուն կմնա:

Մեկ անգամ այս մասին խոսեցի մի ծառայության ժամանակ, և հետո մի հովիվ վրդովված մոտեցավ ինձ.

- Ինչպե՞ս եք համարձակվում ասել, որ ինչ-որ մեկի արյունը կարող է մեր ձեռքերի վրա լինել: Դա շնորհքը չէ, այլ՝ Հին կտակարանին վերաբերող ուսմունքներ:

Ես բացեցի իմ Աստվածաշունչը և ցույց տվեցի Պողոսի խոսքերը.

> «Սրա համար այս օրը վկայություն եմ դնում ձեզ, որ ես ամենիդ արյունից անմեղ եմ: Որովհետև ես ետ չքաշվեցի Աստծո ամբողջ կամքը ձեզ պատմելուց: Արդ, զգո՛ւյշ կացեք ձեր անձերից և ամբողջ հոտին, որի մեջ Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ դրեց» (Գործք 20.26-28):

Երբեք չեմ մոռանա նրա զարմացած հայացքը, երբ կարդաց այդ խոսքերը: Նա տարիներ շարունակ ծառայության մեջ էր և շատ անգամներ էր կարդացել այդ խոսքերը, սակայն այդ օրը առաջին անգամ տեսավ դրանք: Նա զգաստությամբ ներողություն խնդրեց, և մենք մի քանի րոպե խոսեցինք այն մասին, թե որքան կարևոր է քարոզելիս չընկնել միակողմանի լինելու թակարդը՝ մշտապես շեշտադրելով միայն դրականը կամ բացասականը: Մենք պետք է հավասարակշռված լինենք. մենք պետք է և՛ զգուշացնենք, և՛ սովորեցնենք:

Սա այնպիսի ժամանակահատված է, որում Հիսուսը զգուշացրեց, որ շատերը, ներառյալ ընտրյալները, կարող են մոլորվել: Նա ասաց, որ մոլորությունը լայնորեն տարածված է լինելու: Մենք պետք է ուշադիր լինենք այն բանին, թե որտեղ ենք կանգնած, որպեսզի չընկնենք: Մենք պետք է մոտենանք սուրբ երկյուղ ունեցող սրտով, ոչ թե անհոգ սրտով, որը կարող է հեշտորեն մոլորվել: Մեր սիրող Հայրը մեր կողմից է, և Նա տվել է մեզ անհրաժեշտ ամեն ինչ՝ կյանքի և աստվածապաշտության համար: Նա շնորհք է տվել մեզ՝ մեր Տեր Հիսուսի միջոցով, որպեսզի ապրենք հնազանդ Նրա կամքին, և միայն սուրբ երկյուղի միջոցով է, որ կարող ենք ճշմարիտ մտերմություն ունենալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Այս գլխում պնդում արվեց այն մասին, որ «առանց Տիրոջ երկյուղի ...մեր անձի և երևակայության մեջ զարգանում, ձևավորվում և կաղապարվում է ոչ ճշգրիտ պատկերացում»: Ետ նայելով ձեր հավատքին մինչև այժմ, եղե՞լ է արդյոք այնպիսի ժամանակ, երբ ձեր պատկերացումն Աստծո մասին ոչ ճշգրիտ էր: Եթե այո, ի՞նչ կերպով էր այն խեղաթյուրված:

2. Հեղինակը նշում է, որ երբ մենք սաստիկ կերպով ինչ-որ բան ենք ցանկանում՝ հակառակ այն բանին, ինչ Աստված է կամենում մեզ համար, Աստված հաճախ տալիս է դա մեզ: Անկեղծորեն նայելով ձեր աղոթքի կյանքին՝ կա՞մ արդյոք այնպիսի բան, ինչի համար դուք շարունակ մոտենում եք Աստծուն, և ինչը կարող է ագահությունից դրդված ցանկություն լինել: Կա՞մ արդյոք որևէ օրինակ ձեր կյանքում, երբ ստացել եք ինչ-որ բան, ինչը բուռն կերպով ցանկացել եք, սակայն հետագայում զղջացել եք:

3. Գրքի առաջին գլխի առաջին հարցն այն մասին էր, թե ի՞նչն էր ցանկություն առաջացրել ձեր մեջ ընթերցելու այս գիրքը: Մտածելով այն մասին, ինչ դուք սովորեցիք մինչև հիմա, ի՞նչ մարտահրավերներ եք ստացել: Ինչպե՞ս է փոխվում ձեր պատկերացումն Աստծո մասին և այն մասին, թե ինչ է նշանակում հաճեցնել Նրան՝ գործով և ճշմարտությամբ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Կրոնի հոգին այն է, երբ մարդն օգտագործում է
Իմ Խոսքը՝ իր կամքը կատարելու համար:

Տիրոջ երկյուղը չունեցող մարդկանց մոլորություն է սպասում, իսկ Նրան սուրբ երկյուղով մոտեցողներին՝ մտերմություն: Սրա արտաքին ապացույցը անպայմանական հնազանդությունն է Աստծո ցանկություններին. մենք ոչ միայն հնազանդվում ենք, այլև սրտանց ցանկանում ենք կատարել Նրա կամքը: Մենք կրկին ու կրկին տեսնում ենք սա Աստծո հետ վարվող մարդկանց կյանքերում:

Ենովքի վկայությունն այն էր, որ նա հաճեցրեց Տիրոջը: Մենք կօգտվենք Առաջին եկեղեցու հայրերից մեկի՝ Կղեմեսի աշխատություններից՝ ավելին հասկանալու համար: Կղեմես Հռոմեացին, ով ապրում էր առաջին դարում և Պետրոս ու Պողոս առաքյալների ծառայակիցն էր, գրում է. «Որպես օրինակ բերենք Ենովքին, ով *արդար գտնվելով՝ իր հնազանդությամբ,* փոխադրվեց, և հայտնի է, որ մահը երբեք չպատահեց նրան»:

Ենովքի հանդեպ Աստծո բարեհաճության տարբերիչ հատկանիշը նրա հնազանդությունն էր:

Հաջորդ անձնավորությունն Աստվածաշնչում, որը մտերմորեն վարվեց Աստծո հետ, Նոյն էր: «Նոր կենդանի թարգմանությունը» պատկերացում է տալիս նրա կյանքի մասին.

> «Սա Նոյի և նրա ընտանիքի պատմությունն է: Նոյն արդար մարդ էր, միակ անարատ մարդը, որ ապրում էր երկրի վրա այդ ժամանակ: Նա *հետևողականորեն կատարում էր Աստծո կամքը* և վայելում էր սերտ հարաբերություն Նրա հետ» (Ծնն. 6.9, NLT, *շեղագիրը հեղինակինն է):*

Ինչպես և Ենովքը, Նոյի կյանքի տարբերիչ հատկանիշն այն էր, որ նա հետևողականորեն կատարում էր Աստծո կամքը: Այլ կերպ ասած, նա հնազանդ էր Աստծո ցանկություններին: Նրանք Բաղաամի հակապատկերներն էին. Բաղաամը հնազանդվում էր՝ ելնելով միայն անձնական շահերից: Նա հասկանում էր, որ մարդը չի կարող օրհնված լինել և, ի վերջո, դատվելու է բացահայտ անհնազանդության համար: Նա խեղաթյուրեց Աստծո Խոսքը՝ այն իմաստով, որ ձգտում էր իր շահին հնազանդության մեջ, ոչ թե հնազանդվում էր՝ Աստծո կամքն ամբողջապես կատարելու ջերմեռանդ ցանկությամբ: Տիրոջ կամքը նրա մեծագույն ցանկությունը չէր. փոխարենը, այն օրենք էր:

Դավիթը բոլորովին այսպիսին չէր: Աստվածաշունչը գրում է նրա մասին.

> «Եվ նրան փոխելով՝ Դավթին նրանց համար թագավոր կանգնեցրեց, որ նրա համար էլ վկայություն տվեց և ասաց. «Հեսսեի որդի Դավթին գտա՝ Իմ սրտի պես մարդ, որ նա Իմ ամբողջ կամքը կանի»» (Գործք 13.22):

Տիրոջ երկյուղն այն է, երբ մենք ոչ միայն հնազանդվում ենք, այլև կատարում ենք Նրա կամքն ամբողջությամբ: Մենք

ձգտում ենք կատարել Նրա ցանկությունները, ասես դրանք մերը լինեն: Մենք ընդունում ենք Նրա սրտի ցանկությունները, ասես դրանք մերը լինեն: Սա է ճշմարիտ հնազանդությունը:

ԿՐՈՆԻ ՀՈԳԻ

Երբեք չեմ մոռանա, որ մի անգամ, երբ երկրպագում էի Տիրոջը, Նա մեղմորեն խոսեց սրտիս. «Ջո՛ն, դու գիտե՞ս, թե ինչ է կրոնի հոգին»:

Ես սովորել եմ, որ երբ Աստված հարց է տալիս, Նա տեղեկություն չի փնտրում. փոխարենը՝ Նա հարցնում է, քանի որ մենք չգիտենք այդ մասին, կամ՝ որպեսզի ավելի ընդլայնի մեր սահմանափակ հայտնությունը: Ես գրել և քարոզել էի կրոնական մարդու վարքի մասին, բայց պատասխանեցի Նրա հարցին. «Տե՛ր, ակնհայտ է, որ ես չգիտեմ: Ի՞նչ է կրոնի հոգին»:

Նա խոսեց սրտիս. «Կրոնի հոգին այն է, երբ մարդն օգտագործում է Իմ Խոսքը՝ իր կամքը կատարելու համար»: Մի քանի օր նրա խոսքերը խորապես արձագանքում էին իմ սրտում, քանի որ ես շարունակ շատ հարցերի պատասխաններ էի ստանում:

Բաղաամը ճիշտ այսպես վարվեց: Նա ցանկանում էր հնազանդվել, սակայն անում էր դա հանուն իր շահի, ոչ թե ձգտելով կատարել Աստծո սրտի ցանկությունը: Այս պատճառով էր, որ Տիրոջ հրեշտակն ասաց նրան. «Քո ճանապարհը *ծուռ* է Իմ առջև» (Թվոց 22.32, NKJV, *շեղագիրը հեղինակինն է): «Վեբսթերի բառարանը»* սահմանում է *«ծուռ»* բառը որպես «խեղաթյուրված»: Այսպիսով, այն կարելի է սահմանել որպես Աստծո Խոսքի նպատակի աղավաղում կամ խեղաթյուրում, նաև Աստծո Խոսքը մեր սեփական շահի համար օգտագործելը:

ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

Եթե ուսումնասիրեք Աբրահամի, Մովսեսի, Հեսուի, Դավթի, Եսթերի, Դանիելի և Աստվածաշնչում եղող այլ մարդկանց կյանքերը, որոնք մտերմորեն էին վարվում Տիրոջ հետ, կտես-

նեք այս ընդհանուր հայտարարը բոլորի կյանքերում: Աստծո հետ նրանց մտերմության հիմքում էր սրտանց հնազանդությունը Նրա ցանկություններին: Աստծո աղաղակը յուրաքանչյուր անձնավորությանը, ում հետ Ինքն ուխտի հարաբերություն ուներ Հին կտակարանում, հետևյալն էր.

> «Որովհետև Ես ձեր հայրերին պարզապես խրատեցի այն օրից, որ նրանց հանեցի Եգիպտոսի երկրից, մինչև այսօր, կանուխ վեր էի կենում ու խրատում և ասում. *«Լսեք Իմ ձայնին»*» (Երեմիա 11.7, *շեղագիրը հեղինակինն է):*

Տերը սգում էր այն պատճառով, որ Իր ժողովուրդը չէր հնազանդվում, այլ հետևում էր իրենց սրտերի թելադրանքին: Նրանք չէին ընդունում այն, ինչ կար Նրա սրտում. փոխարենը՝ այն, ինչ Նա խոսում էր, սահմանափակում էր նրանց: Հետևաբար, նրանք միջոցներ էին փնտրում, որպեսզի կատարեին իրենց ցանկությունները՝ այն սահմաններում, որոնք, իրենց պատկերացմամբ, Աստված հանդուրժելու էր, և այդ պատճառով չէին կարողանում մտերմորեն շփվել Նրա հետ: Լիարժեք հնազանդությունը բացարձակապես կարևոր է մտերմության համար: Նոր կտակարանում Հիսուսն ասում է.

> «Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է *ուզում* Իրեն երկրպագողներից: Աստված Հոգի է, և նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ. 4.23,24, *շեղագիրը հեղինակինն է):*

Այս մի քանի պնդումներում այնքա՛ն շատ բան է ասվում: Առաջինը՝ ուշադրություն դարձրեք, որ Հայրը ուզում է կամ ձգտում է, որ Իր երկրպագուներն այսպիսին լինեն: Հիշե՛ք նախորդ գլուխներից մեկը, որում խոսում էինք այն մասին, թե որքան ջերմեռանդորեն է Նա ցանկանում մեզ և հետամուտ է

լինում մեզ հետ շփմանը: Կրկին, սա հաստատվում է Հիսուսի խոսքերով:

Երկրորդը՝ Նա փնտրում է այնպիսի մարդկանց, որոնք երկրպագում են Իրեն հոգով և ճշմարտությամբ: Խոսենք երկրպագության մասին: Երբեք չեմ մոռանա մի դեպք, երբ Աստվածաշունչ էի կարդում, և Սուրբ Հոգին բացականչեց իմ սրտում. «Երկրպագությունը դանդաղ երգ չէ՛»: Դա անմիջապես գրավեց ուշադրությունս:

Շատերը հենց այսպես են դիտարկում երկրպագությունը՝ որպես դանդաղ երգ: Մտածե՛ք սովորական ավետարանական եկեղեցու ծառայության կարգի մասին. մենք հավաքույթների ենք գալիս և սկսում ենք փառաբանությամբ, ինչին հետևում է երկրպագությունը, հետո՝ հայտարարությունները, զոհաբերությունը, հիմնական ուղերձը և վերջապես ծառայությունը մարդկանց՝ խորանի մոտ: Ավանդական եկեղեցիները ծրագրեր են տպում, իսկ մենք՝ ավետարանականներս, պարզապես հիշում ենք մերը, սակայն պարծենում ենք, որ Հոգով ենք առաջնորդվում կամ ազատ ենք: Ինչ վերաբերում է երկրպագությանը. ովքեր չգիտեն տարբերությունը փառաբանության և երկրպագության միջև, ասեմ, որ փառաբանությունը արագ երգերն են, իսկ երկրպագությունը՝ դանդաղ երգերը: Բավականին զվարճալի է այն, որ մենք ազատվեցինք երգարաններից, սակայն պարզապես անցում կատարեցինք մեծ էկրաններին: Այնպես որ, երբ ասում եք *«երկրպագություն»* բառը, առաջինը, ինչ մտաբերում է հավատացյալների մեծ մասը, դանդաղ երգեր են՝ լսասկավառակով, երաժշտական հոլովակով կամ եկեղեցական ծառայության ժամանակ:

Երբ Տերը խոսեց սա ինձ հետ, ես անմիջապես ետ հրեցի իմ Աստվածաշունչը և ասացի. «Տե՛ր, ես չգիտեմ, թե ինչ է երկրպագությունը: Խնդրում եմ, ասա՛ ինձ, թե իրականում ինչ է այն:

Նա հաստատակամորեն ասաց. «Մարդու ամբողջ կյանքը»:

Նա անմիջապես մի օրինակ բերեց. «Որդի՛ս, մտածի՛ր

հետևյալը. դու արթնանում ես առավոտյան, և Լիզային օգնություն է պետք, որպեսզի պատրաստի երեխաներին դպրոց գնալու, բայց դու ասում ես, որ չափազանց զբաղված ես: Մի փոքր անց այդ առավոտյան նրան օգնություն է պետք, և դու նույնն ես պատասխանում: Դրանից հետո նա հարցնում է՝ արդյո՞ք կարող ես օգնել իրեն կերակուր պատրաստել ճաշի համար, բայց կրկին, դու պատասխանում ես, որ չափազանց զբաղված ես: Օրվա ընթացքում նա հարցնում է, թե կարո՞ղ ես դպրոցից տուն բերել երեխաներին, և կրկին ստանում է նույն պատասխանը քեզնից: Կրկին, նա խնդրում է քո օգնությունը ընթրիքի ժամանակ և դրանից հետո՝ սեղանը հավաքելու համար, և կրկին ստանում է նույն պատասխանը. դու չափազանց զբաղված ես»:

Նա շարունակեց. «Այդ երեկո, այն բանից հետո, երբ երեխաները պառկում են քնելու, դու ինչ-որ բան ես ցանկանում նրանից, մասնավորապես՝ սեռական հարաբերություն: Այնպես որ, դու մոտենում ես նրան քաղցր խոսքերով, օրինակ՝ «Սիրելի՛ս, այնքա՛ն եմ սիրում քեզ»»:

Աստված հարցրեց ինձ. «Ի՞նչ նա կպատասխանի քո սիրո խոսքերին և սեռական մտերմությանը, որին ձգտում ես»:

Ես պատասխանեցի. «Նա, հավանաբար, կասի՝ գնա՛ քո ճանապարհով»:

Նա ասաց. «Ճիշտ ես, իսկ ինչո՞ւ այդպես կասի»:

Ես պատասխանեցի. «Քանի որ մտերիմ հարաբերությունը սկսվում է առավոտյան և հասնում է գագաթնակետին երեկոյան՝ սեռական մտերմությամբ»:

Մտորելով այն ամենի շուրջ, ինչ Նա խոսեց, ես հասկացա, որ եթե այդպես վարվեի կնոջս հետ, նրա հանդեպ իմ սիրո խոստովանությունը կլիներ միայն խոսքով, ոչ թե գործով և ճշմարտությամբ: Ամուսինը, որը շարունակ այդպես է վարվում իր կնոջ հետ, խաբում է ինքն իրեն:

Տերը շարունակեց. «Որդի՛ս, ես ունեմ բազմաթիվ զավակներ, որոնց ուշադրությունը ձգտում եմ գրավել շաբաթվա ըն-

թացքում, բայց նրանք անտեսում են Ինձ: Ես փորձում եմ դրդել նրանց ծառայել իրենց հարևանին, բայց նրանք չեն լսում կամ ճնշում են Իմ առաջնորդությունը, քանի որ զբաղված են կամ ուզում են վայելել իրենց ծրագրած հաճույքները: Նրանք չեն լսում ինձ, երբ Ես խնդրում եմ նրանց զոհաբերություն տալ, ծառայել եկեղեցում կամ ծառայել իրենց բնակավայրում, իրենց ընտանիքի անդամներին և այլն: Դրանից հետո նրանք գալիս են ծառայության և ինչ-որ բան են ցանկանում Ինձնից, այսինքն՝ *օրհնություններ,* և սկսում են մեղմ երգեր երգել այն մասին, թե որքան են սիրում Ինձ, և երկրպագություն են անվանում դա: Դա երկրպագություն չէ, այլ՝ դանդաղ երգ:

Ես ապշած էի: Գիտակցում էի, որ իմ պատկերացումը երկրպագության մասին խեղաթյուրված էր: Ավելի ուշ բացահայտեցի մի զարմանալի բան, որը նախկինում երբեք չէի նկատել: Թույլ տվեք մի հարց տալ ձեզ՝ ընթերցողին. ե՞րբ է *«երկրպագություն»* բառը հանդիպում Աստվածաշնչում առաջին անգամ: Այս հարցը շատ կարևոր է, քանի որ ես սովորել եմ, որ գիրք գրելիս, երբ նոր հասկացություն եք ներմուծում, որը ծանոթ չէ մեծ մասին, դուք պետք է անեք հետևյալ երեք բանը. սահմանում տաք, բերեք օրինակ, որը պատկերում է դրա իմաստը, կամ օգտագործեք այնպիսի բառ, որը ներկայացնում է դրա իմաստը: Առաջին դեպքը, երբ դուք հանդիպում եք «երկրպագություն» բառին Աստվածաշնչում, Ծննդոց 22-րդ գլխում է: Գրված է.

> «Եվ Աբրահամն ասաց իր ծառաներին. «Դուք այդ էշի հետ այստեղ մնացե՛ք, և ես ու տղան մինչև այնտեղ գնանք և *երկրպագություն* անենք և ձեզ մոտ ետ կդառնանք»» (Ծնն. 22.5, *շեղագիրը հեղինակինն է):*

Աբրահամը չէր պատրաստվում մինչև այնտեղ գնալ, որպեսզի դանդաղ երգ երգեր Իսահակի հետ: Նա պատրաստվում էր վեր բարձրանալ, որպեսզի մահվան մատներ այն, ինչն ամենաթանկն էր իր կյանքում, միայն՝ որովհետև Աստված

խնդրել էր նրան անել դա: Այնպես որ, ինչպես տեսնում եք, երկրպագությունը *հնազանդ կյանք* է: Սա բացատրում է, թե ինչու է Աստված ավյունով ասում Իր ժողովրդին, որոնք երգեր էին երգում Իրեն.

> «Քո երգերի աղմուկը հեռացրո՛ւ Ինձնից, որ չլսեմ տավիղներիդ ձայնը: Բայց թող իրավունքը հորդի ջրի պես, և արդարությունը՝ վարար գետի պես» (Ամովս 5.23,24):

Ես եղել եմ բազմաթիվ հավաքույթներում, որտեղ ժամանակակից և գեղեցիկ երաժշտություն էր հնչում, սակայն չկար Տիրոջ հայտնված ներկայությունը: Նման իրավիճակներում սովորաբար առաջին հերթին ջանասիրաբար քննում եմ իմ սիրտը՝ հարցնելով Սուրբ Հոգուն. «Արդյո՞ք տրտմեցրել եմ Քեզ կամ մեղանչել եմ»: Ամենից հաճախ սրտիս խորքում հավաստիացում եմ ստանում, որ դա տեղի չի ունեցել. այնպես որ, ես գիտեմ, որ խոչընդոտի պատճառը ներկաներն են: Այդ ժամանակ ես վստահությամբ քարոզում եմ Տիրոջ երկյուղի և հնազանդության մասին: Նման մթնոլորտում գրեթե ամեն անգամ ականատես եմ լինում, որ ներկաների ավելի քան հիսուն տոկոսն արձագանքում է ապաշխարության կանչին ուղերձի վերջում: Դրանից հետո ես գալիս եմ հաջորդ ծառայությանը, որտեղ երկրպագության նույն երգերն են և փառաբանության նույն թիմն է, և գրեթե ամեն անգամ Աստծո ներկայությունը հրաշալի կերպով հայտնվում է: Ո՞րն է պատճառը: Ճշմարիտ երկրպագությունը հնազանդության կյանք է, և այդ կյանքից են բխում երկրպագության երգերը, որոնք բերկրանք են պատճառում Աստծո սրտին, ոչ թե վանում են Նրան, ինչպես վերևում բերված աստվածաշնչյան հատվածում: Սա նույնն է, ինչ՝ եթե ես մոտենամ իմ կնոջը՝ սեռական մտերմության համար, ամբողջ օրը նրա հանդեպ սիրով վարվելուց, ոչ թե նրան անտեսելուց հետո:

ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՄԲ

Հիսուսն ասում է մեզ, որ Հայրը ցանկանում է կամ փնտրում է նրանց, ովքեր երկրպագում են Իրեն հոգով և ճշմարտությամբ: Հետագա գլուխներում ծավալուն կանդրադառնանք Աստծուն *հոգով* երկրպագելուն: Այժմ խոսենք Նրան *ճշմարտությամբ* երկրպագելու մասին: *«Ճշմարտություն»* բառը թարգմանված է հունարեն *«ալեթեիա»* բառից: *«Վայնի բառարանը»* սահմանում է այս բառը որպես «Որևէ երևույթի հիմքում գտնվող իրողությունը. որևէ բանի հայտնված, ճշմարիտ էությունը»:

Ինձ դուր է գալիս այս սահմանումը, քանի որ այն գեղեցիկ կերպով ընդլայնում է այն, ինչ Հիսուսը հաղորդում է մեզ: Նա ցույց է տալիս, որ ճշմարիտ երկրպագությունը մարդու հիմքային մակարդակում է, այսինքն՝ նրա սրտում: Սա բացատրելու համար թույլ տվեք նշել և սահմանել հաղորդակցման երեք մակարդակները:

Առաջինը խոսքային հաղորդակցումն է, որն ամենացածր մակարդակն է: Հիսուսը մատնացույց արեց սա մի օրինակով, որում հայրը խնդրեց իր երկու որդիներին աշխատել իր այգում (տե՛ս Մատթ. 21.28-31): Որդիներից մեկն ասաց. «Իհա՛րկե, հայրի՛կ», սակայն ոչինչ չարեց: Մյուս որդին պատասխանեց. «Ո՛չ մի դեպքում», սակայն հետո գնաց: Հիսուսը բացատրեց, որ իր հոր կամքը կատարող որդին իրականում նա էր, որը սկզբում «ոչ» ասաց, ոչ թե նա, որն «այո» ասաց: Այս օրինակը ցույց է տալիս, որ գործը հաղորդակցման ավելի բարձր մակարդակ է, քան խոսքը:

Հակոբոսը նույնպես ցույց է տալիս, որ խոսքային հաղորդակցումն ամենացածր մակարդակն է՝ ասելով. «Ենթադրենք, դուք տեսնում եք մի եղբոր կամ քրոջ, որը կերակուրի կամ հագուստի կարիք ունի, և ասում եք. «Լա՛վ, ցտեսություն, Աստված օրհնի քեզ. ջերմացի՛ր և լավ սնվի՛ր», բայց չեք տալիս այդ մարդուն որևէ կերակուր կամ հագուստ: Ի՞նչ օգուտ դրանից» (Հակոբոս 2.15,16, NLT): Հովհաննես առաքյալը նույնպես հաստատում է այս ճշմարտությունը. «Բայց եթե որևէ մեկը բավականաչափ

փող ունի՝ բարեկեցիկ ապրելու համար, և տեսնում է մի եղբոր կամ քրոջ՝ կարիքի մեջ, և հրաժարվում է օգնել, ինչպե՞ս Աստծո սերը կարող է լինել այդ մարդու մեջ» (Ա Հովհ. 3.17, NLT):

Սա կարելի է տեսնել անթիվ իրավիճակներում, որոնցից մեկը կարող է լինել մի տղամարդ, որն ասում է իր կնոջը, թե սիրում է նրան, սակայն երբեք ժամանակ չի անցկացնում նրա հետ, կամ մի կին, որն ասում է իր ամուսնուն, թե հարգում է նրան, սակայն չի լսում նրա խորհուրդը և շարունակում է սպառել վարկային քարտերը մինչև թույլատրելի սահմանաչափը: Կարծում եմ՝ հասկանում եք, որ նման իրավիճակները կարող են անթիվ լինել: Հովհաննեսը շարունակում է իր նամակում.

> «Որդինե՛ր, չսիրենք խոսքով, և ո՛չ էլ լեզվով, այլ՝ գործով և ճշմարտությամբ» (Ա Հովհ. 3.18):
>
> «Ընդլայնված Աստվածաշնչում» այս խոսքը գրված է հետևյալ կերպով. «Փոքրի՛կ երեխաներ, եկեք չսիրենք [ընդամենը]... խոսքով, այլ՝ գործով և ճշմարտությամբ»: Անկասկած, մենք պետք է սիրենք խոսքով, բայց կեղծավորություն կլինի, եթե մեր սիրո խոսքերը չհաստատվեն գործով և ճշմարտությամբ: Ուշադրություն դարձրեք, որ նա ասում է. «գործով և ճշմարտությամբ»: Այս երկուսը հաղորդակցման ավելի բարձր մակարդակներն են:

Հաջորդ մակարդակը *գործն* է. այնուամենայնիվ, այն հաղորդակցման բարձրագույն մակարդակը չէ և կարող է հեշտորեն շփոթեցնել, քանի որ գործերը կարող են չհամապատասխանել ճշմարտությանը: Օրինակ, Պողոսը գրում է. «Եվ եթե իմ բոլոր ապրանքներն աղքատներին ուտեցնեմ և իմ մարմինը մատնեմ, որ այրվի, բայց սեր չունենամ, ես ոչ մի օգուտ չեմ ունենա» (Ա Կորնթ. 13.3): Այն գործերը, որոնք նա նկարագրում է այս խոսքում, կարող են համարվել սիրո բարձրագույն մակարդակը, սակայն նա ասում է, որ մենք կարող ենք կատարել այս փառավոր թվացող արարքները՝ չունենալով Աստծո սերը մեր սրտերում:

Հաջորդը հաղորդակցման բարձրագույն մակարդակն է՝ *սիրտը:* Այն մարդու հիմքային մակարդակն է: Սա այն մակարդակն է, որը և՛ Հովհաննեսը, և՛ Հիսուսը *ճշմարտություն* էին անվանում: Սրտի մտքերը և մտադրությունները հայտնում են, թե որքանով է ճշմարիտ մեր երկրպագությունը, սակայն դրանք չեն կարող զանազանվել Աստծո Խոսքից դուրս: Մեզ պատվիրված է ջանասիրաբար հսկել մեր սիրտը, քանի որ դրանից են բխում մեր կյանքի ուժերը: Այս պատվերն անտեսելու դեպքում մենք կարող ենք հեշտորեն խաբվել: Սիրտը, որը թողնված է ինքն իրեն՝ Աստծո Խոսքի և Նրա Հոգու խորհրդից դուրս, խաբուսիկ է ցանկացած բանից ավելի:

Աստված հայտնում է Իր ժողովրդին. «Եթե *հոժարեք* և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.19, *շեղագիրը հեղինակինն է):* Ուշադրություն դարձրեք, որ Նա չի ասում՝ միայն հնազանդ, այլ՝ *հոժար* և հնազանդ: Հոժարությունը գործ ունի մեր սրտի վերաբերմունքի հետ: Ես կարող եմ խնդրել իմ որդուն ինչ-որ բան անել, և նա կարող է անմիջապես հնազանդվել և հնազանդ թվալ, սակայն ամբողջ ընթացքում տրտնջալ իր սրտում: Իրականում, նա հնազանդվում է ոչ թե ճշմարտությամբ, այլ՝ ձևականորեն: Հովհաննեսն ասում է, որ մենք պետք է սիրենք Աստծուն և մարդկանց գործով, ինչպես նաև ճշմարտությամբ, որը սրտի մակարդակն է. «Եվ սրանով մենք իմանում ենք, որ ճշմարտությունից ենք, և պետք է հաստատենք մեր սրտերը Նրա առջև» (Ա Հովհ. 3.19, NKJV):

Երբեք չեմ մոռանա մի դեպք, երբ Աստված ընդդիմացավ ինձ այս հարցում: Ես լրջորեն աշխատում էի խուսափել ցանկացած տեսակի տրտունջից: Ես հասկացել էի, որ տրտունջն անարգանք է Աստծո բնավորության հանդեպ, քանի որ տրտունջն ասում է Աստծուն. «Ինձ դուր չի գալիս այն, ինչ Դու անում ես, Քո փոխարեն ես այլ կերպ կվարվեի»: Դա սուրբ երկյուղի բացակայություն է, և Աստված ատում է դա. իրականում, դա զրկեց Իսրայելի զավակներին Խոստման երկիր մտնելու հնարավորությունից: Այնպես որ, որոշ ժամանակ ես չէի

տրտնջացել խոսքով, և իրականում հպարտացել էի այդ պատճառով: Այնուամենայնիվ, մի առավոտ, երբ արթնացա, լսեցի, որ Սուրբ Հոգին հաստատակամորեն ասաց. «Ես լսում եմ քո սրտի տրտունջը»: Ես քարացա. ցնցված նստեցի՝ գիտակցելով, թե որքան խաբված էի իմ հպարտության պատճառով: Ես չէի երկրպագում Աստծուն ճշմարտությամբ, և պահանջվեց Նրա շտկման խոսքի լույսը՝ իմ սրտի սխալմունքը բացահայտելու համար: Անմիջապես ապաշխարեցի: Հիմա ես թեթևություն եմ զգում, քանի որ այդ ժամանակից ի վեր Նա այլևս չի շտկել ինձ այդ կերպով: Փա՛ռք Աստծուն Նրա շնորհքի համար:

Այս լույսի ներքո կրկին դիտարկենք ճշմարտության սահմանումը *«Վայնի բառարանում»:* Նա ասում է, որ ճշմարտությունը նշանակում է որևէ երևույթի հիմքում գտնվող իրողությունը և որևէ բանի հայտնված, ճշմարիտ էությունը: Մենք կարող ենք այնքա՛ն հեշտորեն հեռանալ ճշմարտությունից: Մի օրինակ կբերեմ: Մենք կարող ենք աղոթել և երգել Տիրոջը, սակայն, հնարավոր է, որ այդ բառերից ոչ մեկը դուրս չգա մեր սրտից: Երգելու ամբողջ ընթացքում կարող ենք մտածել, որ քաղցած ենք, որ առավոտյան երեխաները վիճում էին, թե որքան հրաշալի ժամանց ենք ծրագրել ծառայությունից հետո, և այլն: Մենք կարող ենք աղոթել և ասել. «Տե՛ր, ես այնքա՛ն շնորհակալ եմ Քեզ»: Այնուամենայնիվ, օրեր շարունակ մենք տրտնջում էինք այն բանի համար, թե որքան ծանր է մեր կյանքը: Արդյո՞ք մենք իրականում շնորհակալ ենք, թե՞ մեր սրտի խորքում մեղադրում ենք Տիրոջը այն բանի համար, որ չի ուղղորդել այնպես, ինչպես կարծում էինք, որ պետք է աներ: Կարելի է անվերջ նման օրինակներ բերել:

Աստծուն ճշմարտությամբ երկրպագելը նշանակում է ոչ միայն հնազանդվել Նրան, այլև բերկրանք զգալ այն ամենում, ինչ Նա խնդրել է ձեզ կատարել: Դա նշանակում է ասել Նրան այն, ինչ իրականում ձեր սրտում է, ոչ թե այն, ինչը, ձեր կարծիքով, պետք է ասել: Դա նշանակում է երկդիմի չլինել Աստծո հետ: Ես սիրում եմ Դավթի հետևյալ խոսքերը.

«Հուսացե՛ք Նրան ամեն ժամանակ, ո՛վ ժողովուրդներ,
Թափե՛ք ձեր սրտերը Նրա առջև.
Աստված մեր ապավենն է» (Սաղմ. 62.8, *շեղագիրը հեղինակինն է):*

Ես բացահայտել եմ, որ երբ լիովին անկեղծ եմ լինում Տիրոջ հետ, Նա մոտենում է ինձ: Եթե ինչ-որ բան եմ ծածկում, դա խոչընդոտում է ինձ, և ես չեմ կարողանում որևէ արդյունքի հասնել աղոթքի մեջ. աղոթքը պարզապես լարված ջանքերի է վերածվում, քանի որ ես չեմ կարողանում կապ հաստատել Նրա հետ: Նա փնտրում է այնպիսի մարդկանց, որոնք կմոտենան անկեղծ սրտով, ոչ թե ձևականորեն: Երբեմն հարց է առաջանում, երբ հավաքույթների ժամանակ հետևում եմ մարդկանց, որոնք ասում են. «Շնորհակա՛լ եմ, Հիսո՛ւս... Ալելուի՛ա... Փա՜ռք Աստծուն». արդյո՞ք նրանք ընդամենը խոսում են «քրիստոնեական ժարգոնով», թե՞ ասում են այդ խոսքերը իրենց հիմքային մակարդակից կամ իրենց սրտից: Սա նույնն է, ինչ այն ամուսինը, ով կնոջը հանդարտեցնելու համար ասում է կես սրտով. «Ես սիրում եմ քեզ, թանկագի՛նս»: Դա շատ է տարբերվում այն ժամանակվանից, երբ նա նշանված էր այդ կնոջ հետ և սիրով լցված ասում էր նրան. «Ես սիրո՛ւմ եմ քեզ»:

Ճշմարիտ երկրպագությամբ բնութագրվող կյանքից (որը նշանակում է՝ հնազանդություն մեր էության խորքից) հոսում են երկրպագության երգերը: Կան թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք Քրիստոսի մարմնում, որոնք օժտված են փառաբանության և երկրպագության երգեր ծնունդ տալով: Նրանք ժամանակակից սաղմոսերգուներ են: Նրանցից ոմանք ապրում են ճշմարիտ երկրպագության կյանքով, իսկ մյուսներն աշխարհիկ և շնչավոր մարդիկ են: Ովքեր ապականել են իրենց, միևնույն է՝ կարող են զարմանալի երգեր հորինել՝ իրենց պարգևի շնորհիվ, սակայն, երբ նրանք երգում են, չկա Տիրոջ սուրբ ներկայությունը: Իսկ սրբությամբ ապրող մարդիկ կրում են Աստծո

փառավոր ներկայությունը, երբ ծառայում են Նրան և Նրա ժողովրդին՝ իրենց սրտերից:

ՀԻՍՈՒՍԻ ԽՈՍՏՈՒՄՆ ԻՐԵՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աստծուն ճշմարտությամբ երկրպագելը նշանակում է երկրպագել Նրան անկեղծ սրտով: Դա նշանակում է երկյուղել և ակնածել Նրանից՝ ճշմարիտ իմաստով: Սաղմոսերգուն ասում է.

> «Երջանիկ են նրանք, ովքեր լսում են երկրպագության ուրախալի կոչը, որովհետև նրանք կքայլեն Քո ներկայության լույսի մեջ, Տեր» (Սաղմ. 89.15, NLT):

Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, որոնք կլսեն երկրպագության կյանք վարելու Իր կանչը: Նրա կանչին արձագանքողները կվարվեն Նրա ներկայության մեջ: Նրանք մտերմորեն կճանաչեն Նրան, քանի որ Նա կհայտնի Իրեն այդ մարդկանց: Հիսուսը ձևակերպեց սա հետևյալ կերպով.

> «Մի փոքր ժամանակ էլ, և աշխարհն էլ չի տեսնի Ինձ, բայց դուք կտեսնեք Ինձ... Ով որ Իմ պատվիրաններն ունի և պահում է, նա է Ինձ սիրողը: Եվ Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, և Ես կսիրեմ Նրան և *Ինձ կհայտնեմ նրան»* (Հովհ. 14.19-21, *շեղագիրը հեղինակինն է):*

Հիսուսի ճշմարիտ երկրպագուներն այն մարդիկ են, որոնք ունեն Նրա պատվիրանները և պահում են, և Նա խոստացավ, որ նրանք կտեսնեն Իրեն: Հիշեք, որ *հայտնելը* նշանակում է դուրս բերել անտեսանելի ոլորտից դեպի տեսանելի ոլորտը և անհայտից դեպի հայտնի ոլորտը: *«Նոր ամերիկյան ստանդարտ Աստվածաշնչում»* գրված է հետևյալը. «Ես կսիրեմ նրան և Ինձ կբացահայտեմ նրան»: *«Ընդլայնված Աստվածաշունչը»* այսպես է ձևակերպում սա.

> «Եվս մի փոքր ժամանակ, և այս աշխարհն այլևս չի տեսնի Ինձ, բայց դուք կտեսնեք Ինձ... Այն անձնավորությունը, որն ունի Իմ պատվիրանները և պահում է, Նա է, ով [իրականում] սիրում է Ինձ, և ով որ [իրականում] սիրում է Ինձ, սիրված կլինի Իմ Հորից, և Ես [նույնպես] կսիրեմ նրան և ցույց կտամ (կհայտնեմ, կդրսևորեմ) Ինձ նրան: *[Ես թույլ կտամ, որ նա պարզորեն տեսնի Ինձ, և կդարձնեմ Ինձ իրական նրա համար]*» (Հովհ. 14.19,21, AMP, *շեղագիրը հեղինակինն է):*

Միայն Նրան ճշմարտապես երկրպագող մարդիկ են, որ *իրականում* ճանաչում են Նրան: Նա հայտնում է Իրեն այդ մարդկանց, քանի որ նրանք Իր սիրելի ընկերներն են: Այս խոսքերն ապշեցրին առաքյալներին. այնպես որ, նրանցից մեկը խոսեց.

> «Հուդան՝ ոչ Իսկարիովտացին, հարցրեց Նրան. «Տե՛ր, ինչպե՞ս է, որ Դու կհայտնես Քեզ՝ իրական կդարձնես Քեզ մեզ համար, և ոչ՝ այս աշխարհի»: Հիսուսը պատասխանեց. «Եթե ինչ-որ մեկն [իրականում] սիրում է Ինձ, *նա կպահի Իմ Խոսքը՝ կհնազանդվի Իմ ուսմունքին*, և Իմ Հայրը կսիրի նրան, և Մենք կգանք նրա մոտ և Մեր տունը (կացարանը, բնակության հատուկ վայրը) նրա մոտ կլինի: Նա, ով [իրականում] չի սիրում Ինձ, չի պահում Իմ ուսմունքը և չի հնազանդվում դրան»» (Հովհ. 14.22-24, AMP, *շեղագիրը հեղինակինն է):*

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ամեն ինչ հանգում է հնազանդությանը: Հիշե՛ք այն, ինչ Աստված ամպրոպի պես թնդացրեց իմ սրտում. «Երկրպագությունը՝ Նրա սրտի ցանկություններին հնազանդ կյանք է»: Երբ ճշմարտապես սիրում ենք Նրան, Նա գալիս է մեզ մոտ՝ ոչ թե այցելելու համար, այլ՝ հաստատելու Իր բնակության վայրը մեզանում. այդ կերպով է, որ Նա հայտնում է Իրեն:

Շատերն են օժտված Աստծո Հոգու կողմից, սակայն նրանք

ամբողջ սրտով չեն պահում Տիրոջ խոսքերը: Նման մարդիկ կարող են ամենից հեշտորեն խաբվել: Պատճառն այն է, որ նրանք որոշակի չափով զգում են Տիրոջ ներկայությունը՝ իրենց պարգևի շնորհիվ, օրինակ՝ քարոզելու, երգելու, աղոթելու կամ այլ տեսակի ծառայության: Նույնը վերաբերում էր Բաղաամին, որն անչափ օժտված էր մարգարեության մեջ և որոշակի չափով վերապրում էր Աստծո ներկայությունը, երբ այդ պարգևը գործում էր, սակայն նա շատ հեռու էր Աստծո սրտից:

Մոլորությունը հետևյալն է. այս մարդիկ հեշտորեն կարող են ենթադրել, որ Տիրոջ ներկայությունը, որը տեսանելի է ծառայության ժամանակ, նշանակում է, որ Նա հավանություն է տալիս իրենց կյանքի ոճին, նաև սխալմամբ համարել, որ այդ ներկայությունը նշանակում է մտերիմ հարաբերություն Նրա հետ: Սա գրեթե նույնն է, ինչ՝ եթե մի բարի մարդ աշխատանքի ընդունի ինչ-որ մեկին: Այդ աշխատողը կարող է սխալմամբ համարել, որ պարզապես ամեն օր իր գործատուի ներկայության մեջ լինելը նշանակում է, որ նա մտերիմ շփում ունի նրա հետ: Ինչպես հասկանում եք, դա սխալ ենթադրություն է: Հիսուսն ասում է, որ բազմաթիվ մարդիկ, որոնք դավանում են, թե ճանաչում են Իրեն, «դրսում կկանգնեն և դուռը կթակեն՝ ասելով. «Տե՛ր, Տե՛ր, բա՛ց մեզ համար»: Եվ Նա [Տերը] պատասխանելով՝ կասի ձեզ. «Չե՛մ ճանաչում ձեզ, թե որտեղից եք»: Այն ժամանակ կասեք. «Մենք Քո առջև կերանք և խմեցինք, և Դու մեր հրապարակներում սովորեցրիր»: Եվ կասի. «Ասում եմ՝ Ես չե՛մ ճանաչում ձեզ, թե որտեղից եք: Հեռո՛ւ կացեք Ինձնից, բոլոր անիրավություն գործողներդ»»:

Եթե կարդաք այս հատվածը Մատթեոսի Ավետարանում գտնվող զուգահեռ հատվածի հետ (տես Մատթ. 7.21-23), կբացահայտեք, որ այս խոսքերն ասողները Հիսուսի անունով հրաշքներ գործող մարդիկ են: Նրանք օժտված էին, սակայն ենթադրում էին, որ Տիրոջ ներկայությունը, որն ուղեկցում էր իրենց պարգևները, նույնն էր, ինչ Նրա հավանությունը և մտերմությունն արտահայտող ներկայությունը: Կարող եք տեսնել այս

մարդկանց ցնցված լինելը, որոնք դավանում էին, թե ճանաչում էին Նրան, սակայն մերժվեցին: Անչափ կարևոր է, որ հասկանանք, որ կա տարբերություն Նրա բնակվող ներկայության և ծառայությանն ուղեկցող ներկայության միջև:

Ինչպես տեսնում ենք, Հիսուսի պատասխանը Հուդային (ոչ՝ Իսկարիովտացուն), վերևում գտնվող աստվածաշնչյան հատվածում հայտնում է, որ Իրեն ճշմարտությամբ երկրպագող մարդիկ նրանք են, որոնց Նա կձգտի դարձնել Իր բնակության վայրը: Այս պնդումն անչափ ակնառու է, քանի որ այն Նրա բնակվող ներկայության մասին է: Ինձ դուր են գալիս այն բառերը, որոնք Նա օգտագործում է. *տուն, կացարան, բնակության հատուկ վայր:* Այս բառերում է ակնառու տարբերությունը Հին կտակարանի և Նոր կտակարանի սրբերի միջև: Հին կտակարանի սրբերը չունեին Աստծո բնակավայրը լինելու արտոնությունը: Աստծո բնակավայրը «Սրբության սրբոցն» էր խորանում կամ տաճարում: Այնուամենայնիվ, մենք մի զուգահեռ ենք տեսնում այս երկուսի միջև: Աստծո ներկայությունը հազվագյուտ էր և գրեթե բացակայում էր խորանում Հեղիի օրերում՝ նրա և ժողովրդի եսակենտրոն ճանապարհների պատճառով: Այնուամենայնիվ, Նրա ներկայությունն ուժգին էր այն օրերին, երբ Նրա ժողովուրդը ջանասիրաբար հնազանդվում էր Նրան:

Նույնը այսօր է: Այն հավատացյալները, որոնք հնազանդվում են Նրան հոգով և ճշմարտությամբ, այսինքն՝ հնազանդվում են Նրան ջերմեռանդ սրտերով, վերապրում են Նրա բնակվող ներկայությունը: Նրանք են այն մարդիկ, որոնց Նա որոշում է հայտնել Իրեն: Ինչպիսի՜ փառավոր շփում է սպասում մեզ: Ինչպե՞ս որևէ հավատացյալ կարող է սիրախաղ անել անհնազանդության և աշխարհիկության հետ, երբ մեզ նման գանձ է սպասում:

Նա խոստացել է դարձնել մեզ Իր տունը, կացարանը և հատուկ բնակության վայրը, և այդ կերպով Նա կբացահայտի կամ կհայտնի, թե իրականում Ով է Ինքը: Միայն մտածե՛ք այս փառավոր խոստման մասին, որը վերաբերում է ոչ միայն

ապագային, այլև՝ ներկային: Սրանք իմ ամենասիրելի բառերից են Աստվածաշնչում՝ այն, որ այս փառավոր Արքան ցանկանում է «հայտնել Իրեն» կամ ճանաչեցնել Իրեն անձամբ ձեզ և ինձ: Հետագա գլուխներում մեծ ուրախությամբ կուսումնասիրենք, թե ինչպես է Նա անում դա: Այնուամենայնիվ, հաջորդ գլխում, նախ, կխոսենք ևս մեկ կարևոր և անհրաժեշտ առաքինության մասին, որը Նա փնտրում է այն մարդկանց մեջ, որոնցում բնակվում է:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ուսումնասիրելով այնպիսի մարդկանց կյանքերը, ինչպիսիք են Ենովքը, Նոյը, Աբրահամը, Մովսեսը, Դավիթը, Եսթերը, Դանիելը և այլք Աստվածաշնչում, դուք կպարզեք, որ ընդհանուր հայտարարը նրանց կյանքերում անկեղծ, սրտանց հնազանդությունն էր Աստծո ցանկություններին՝ սեփական ցանկություններին հնազանդվելու փոխարեն: Ի՞նչ տեղի կունենար ձեր կյանքում, եթե վարվեիք նման հնազանդությամբ այսօր:
2. Մտածելով հեղինակի զվարճալի պնդման մասին՝ «փառաբանությունը արագ երգերն են, իսկ երկրպագությունը՝ դանդաղ երգերը», կարո՞ղ եք ասել, որ ինքներդ էիք այդպես մտածում: Այն ուղերձը երկրպագության վերաբերյալ, որը նա ի վերջո ստացավ Տիրոջից, հետևյալն էր. «Երկրպագությունը կյանք է»: Արդյո՞ք այս պնդումը դրդում է ձեզ փոփոխություններ կատարել ձեր կյանքում:
3. Մտածելով այն մասին, ինչ Հիսուսն ասաց Ղուկասի 13.25-27-ում և Մատթեոսի 7.21-23-ում, ինչպե՞ս կնկարագրեիք տարբերությունը Նրա բնակվող ներկայության և ծառայությանը ուղեկցող ներկայության միջև:

MessengerX

Ձեր հավելվածը ամենօրյա աշակերտության համար

Լիովին անվճար

Պարզապես ներբեռնե՛ք ձեր շարժական սարքի վրա և օգտագործե՛ք:
Կամ օգտագործե՛ք վեբ-տարբերակը՝ հետևյալ հասցեով.

MessengerX.com

120 + լեզուներ, որոնց թիվն ավելանում է

- Դիտեք և ներբեռնեք նյութեր ավելի քան 120 լեզուներով:
- Կիսվեք նյութերով ձեր ընկերների հետ կամ ուսումնական խումբ սկսեք:
- Մենք մշտապես ավելացնում ենք նոր նյութեր:

Դիտեք: Կարդացեք: Լսեք:

Հետազոտեք նյութերի ընդարձակ դարան, որն ընդգրկում է դասընթացներ, էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր և ավելին, որոնք կարող եք դիտել, կարդալ և լսել:

Աճ ամենակարևոր բնագավառներում

Հետազոտեք այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ընտանիքը, առողջ փոխհարաբերությունները, ձեր կյանքի նպատակը, ազատագրում պոռնոգրաֆիայից, ձեր հավատքը կառուցելը, Աստծո ձայնը լսելը, ձեր գործը ղեկավարելը և ավելին:

Ձեր աճի ուղին

MessengerX-ի նպատակն է օգնել ձեզ, որ անեք հաջորդ քայլը ձեր կյանքում: Մենք ստեղծել ենք աշակերտական ուղի՝ ազդեցիկ գործիքներով, որոնք կօգնեն ձեզ մնալ այդ ուղու վրա:

Ավելի շատ հնարավորություններ, որոնք ձեզ դուր կգան

- Պարզ և հեշտ գործիքներ, որոնք կօգնեն ձեզ կիսվել այս նյութերով և նույնիսկ ուսումնական խմբեր սկսել:
- «Chromecast» և «AirPlay»՝ ձեր սիրելի սմարթ հեռուստացույցերով դիտելու համար:
- Պահպանեք ձեր առաջադիմությունը ձեր բոլոր սարքերի վրա: Պահպանեք ձեր նախընտրելի նյութերը ձեր գրադարանում՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեք նյութերը ձեր սարքի վրա՝ անցանց դիտման համար:
- Խելացի որոնում և զտում՝ գտնելու համար հենց այն, ինչ փնտրում եք:
- Ինքնաշխատ կերպով նվագարկեք աուդիո գրքերի, աուդիո Աստվածաշնչերի և նույնիսկ երկրպագության երգերի հաջորդական գլուխներ՝ ձեր լեզվով:

MessengerX - Այնքան հեշտ, որքան 1-2-3-ը



1 Ներբեռնեք **MessengerX** հավելվածը «App Store»-ից և «Google Play»-ից

2 Ստեղծեք հաշիվ և օգտվեք հավելվածից ձեր լեզվով

3 Որոնեք, կարդացեք, դիտեք, լսեք և ներբեռնեք ձեր նախընտրելի նյութերը և կիսվեք դրանցով

Աշակերտ դարձեք և աշակերտեք

Լինելով **MessengerX**-ի մաս, դուք կօգնեք մեզ տրամադրել այս թարգմանված նյութերն աշխարհով մեկ գտնվող մարդկանց:

Որովհետև յուրաքանչյուրն արժանի է իմանալու:

MessengerX.com

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է բոլոր բրաուզերներով

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ո՞ՒՄ ՀԵՏ Է ԲՆԱԿՎՈՒՄ ԱՍՏՎԱԾ

Աստծո թագավորության զորավոր երկվորյակները *Տիրոջ երկյուղը* և *Խոնարհությունն* են:

Այս գլխում կուսումնասիրենք ևս մեկ էապես կարևոր տարր, որն անհրաժեշտ է, որպեսզի մոտենանք Նրան, Ով ջերմեռանդորեն փափագում է շփվել մեզ հետ: Մեր հիմնական խոսքը կոչ է անում մեզ. «Մոտեցեք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ»: Այնուամենայնիվ, ուսումնասիրենք այն, ինչ գրված է այս զարմանալի հրավերից առաջ և հետո.

> «Նրա համար ասում է. «Աստված ամբարտավաններին հակառակ է կանգնում, բայց *խոնարհներին* շնորհք է տալիս»: ...Մոտեցեք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: ...*Խոնարհվեք* Տիրոջ առջև, և Նա կբարձրացնի ձեզ» (Հակոբ. 4.6-10, *շեղագիրը հեղինակինն է):*

Աստծո սրտի աղաղակը գտնվում է խոնարհության մասին

երկու հորդորի միջև, և դա պատահական չէ, քանի որ Աստված ասում է.

> «Այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենության մեջ Բնակվողը, և Ում անունը Սուրբ է. «Ես բնակվում եմ *բարձրում* և սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրած և *խոնարհ հոգի* ունեցողի հետ, որ *խոնարհների* հոգին կենդանացնեմ»» (Եսայի 57.15, *շեղագիրը հեղինակինն է):*

Հակոբոսն ասում է, որ եթե խոնարհեցնենք մեզ Աստծո առջև, Նա կբարձրացնի մեզ: Դեպի ո՞ւր: Աստված ասում է մեզ այս մասին Եսայի մարգարեի միջոցով. *դեպի բարձր և սուրբ տեղը:* Նա փնտրում է մարդկանց, որոնցում կարող է բնակվել, ոչ թե մարդկանց, որոնց կարող է այցելել: Հակոբոսը հրավիրում է մեզ ավելի, քան այցելության. մենք հրավիրված ենք շարունակաբար բնակվելու Նրա ներկայության մեջ, և ինչպես Եսային է ասում, դա հասանելի է միայն խոնարհներին:

ՄԵՐ ԱՆԻՐԱՋԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շատերը Քրիստոսի մարմնում չեն հասկանում խոնարհությունը և դրա զորությունը. նրանց կարծիքով, խոնարհ լինելը նշանակում է լինել տկար, թշվառ, թուլակամ կամ, նույնիսկ, կրոնական մարդ: Այնուամենայնիվ, փաստ է, որ հաճախ ճշմարտապես խոնարհ մարդկանց սխալմամբ ամբարտավան են համարում: Մտածե՛ք Դավթի մասին, որն իր հոր խնդրանքով այցելեց փղշտացիների դեմ պատերազմող իր ավագ եղբայրներին: Տեղ հասնելով՝ նկատեց, որ բոլոր զինվորները՝ իր եղբայրների հետ միասին, գտնվում էին նոր տարօրինակ մարտական դիրքում. նրանք թաքնված էին քարերի ետևում՝ հսկա Գողիաթի վախից: Նա իմացավ, որ դա տևում էր ուղիղ 40 օր:

Այդ ժամանակ Դավիթը համարձակորեն հարցրեց մարդկանց. «Այս անթլփատ փղշտացին ո՞վ է, որ կենդանի Աստծո զորքերին նախատի» (Ա Թագ. 17.26):

Դա սաստիկ բարկացրեց նրա ավագ եղբայր Եղիաբին: Ամենայն հավանականությամբ, նա մտածեց. *«Իմ կրտսեր եղբայրը ոչ միայն անդաստիարակ է, այլև չափազանց ինքնագոհ է»:* Այնպես որ, Եղիաբը նետեց Դավթին ի պատասխան. «Ես քո *հպարտությունը* և քո սրտի չարությունը գիտեմ» (Ա Թագ. 17.28, *շեղագիրը հեղինակինն է):* «Նոր միջազգային թարգմանության» մեջ նրա խոսքերն այսպիսին են. «Ես գիտեմ, թե որքան *ինքնահավան* ես դու»:

Սպասե՛ք, ո՞վ էր հպարտ: Միայն մեկ գլուխ առաջ գրված է, որ Սամուել մարգարեն Հեսսեի տուն եկավ, որպեսզի օծեր հաջորդ թագավորին, և նրա առաջնեկը չհամապատասխանեց Աստծո չափանիշներին: Թե՛ Հեսսեն, թե՛ Սամուելը ենթադրում էին, որ Եղիաբն էր ընտրյալը, քանի որ նա, հավանաբար, Հեսսեի որդիների ամենից բարձրահասակը, ուժեղը և խելացին էր: Այնուամենայնիվ, Աստված հաստատակամորեն ասաց. «Ես մերժել եմ նրան» (Ա Թագ. 16.7, NIV): Կա միայն մեկ պատճառ, որով Աստված մերժում է մարդուն. հպարտությունը: Այն հպարտությունը, որում Եղիաբը մեղադրում էր Դավթին, բնակվում էր նրա ներսում, այն դեպքում, երբ Աստված պարծեցավ Դավթի խոնարհությամբ՝ ասելով, որ նա Իր սրտի համեմատ մարդ էր (Գործք 13.22): Իսկ Դավիթն անչափ հեռու էր տկար, թշվառ և թուլակամ անձնավորություն լինելուց:

Դավիթն անտեսեց այդ խոսքային հարձակումը և դուրս եկավ հսկայի դեմ մեծ վստահությամբ՝ հայտնելով նրան, որ նա կորցնելու էր իր գլուխը: Դրանից հետո Դավիթը վազեց դեպի թշնամու բանակը, սպանեց Գողիաթին և կտրեց գլուխը:

Թույլ տվեք ավելի հաստատել, որ շատ հաճախ մենք չենք հասկանում, թե ինչ է խոնարհությունը: Թվոց գիրքը, որն Աստվածաշնչի առաջին հինգ գրքերից է, պատկանում է

Հնգամատյան կոչվող գրքերի խմբին: Մենք կարդում ենք այս գրքում.

> «Եվ Մովսես մարդը շատ հեզ (կամ՝ «խոնարհ») էր՝ երկրի բոլոր մարդկանցից ավելի» (Թվոց 12.3):

Ինչպիսի՞ պնդում: Եթե անկեղծ լինենք, մենք կխոստովանեինք, որ կուզեինք, որ դա ասվեր մեր մասին, բայց ինքներս չէինք համարձակվի ասել դա: Ինչո՞ւ: Միայն ամբարտավան մարդը կարող է նման բան ասել իր մասին: Սակայն ո՞վ է գրել Թվոց գիրքը: Պատասխանն է՝ Մովսեսը: Զարմանալի՞ է:

Մենք երբեք խոնարհ չէինք համարի այն մարդուն, ով կասեր, որ ինքը խոնարհ էր, ի՞նչ խոսք՝ ամենախոնարհ մարդը ամբողջ աշխարհում: Կարո՞ղ եք պատկերացնել մի ծառայողի, որը կանգնում է մի քրիստոնեական համաժողովին և ասում է. «Լսե՛ք, բոլո՛ր դ, ես խոնարհ եմ. այնպես որ, թույլ տվեք սովորեցնել ձեզ այդ մասին»: Նրան ծաղրուծանակի կենթարկեին և հերձված կանվանեին: Այնուամենայնիվ, լսե՛ք, թե ինչ է ասում Հիսուսը.

> «Ինձ մոտ եկե՛ք բոլոր վաստակածնե՛ր և բեռնավորվածնե՛ր... և *Ինձնից սովորե՛ք,* որովհետև Ես հեզ եմ և սրտով *խոնարհ,* և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք» (Մատթ. 11.28,29, *շեղագիրը հեղինակինն է):*

Այնպես որ, ըստ էության, մենք չենք հասկացել խոնարհության ճշմարիտ իմաստը, քանի որ կարծել ենք, թե այն նշանակում է երբեք չպաշտպանել մեր իրավունքները և ապրել անարժան որդերի պես, սակայն ոչինչ չի կարող ավելի հեռու լինել ճշմարտությունից:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Խոնարհությունն ունի երեք կողմ: Առաջինը՝ մեր հնազանդությունն Աստծուն, երկրորդը՝ մեր բացարձակ կախվածությունը Նրանից, և երրորդը՝ մեր տեսանկյունը մեր մասին: Համառոտ դիտարկենք այս կողմերից յուրաքանչյուրը:

Առաջինը մեր հնազանդությունն է. անմիջապես այն բանից հետո, երբ Հակոբոսը գրում է խոնարհության մասին, նա շարունակում է. «Ուրեմն, հնազանդվե՛ք Աստծուն» (4.7, NKJV): Այս պնդումը կապակցում է հնազանդությունը խոնարհության հետ: Տերը մշտապես հայտնում է Իր ժողովրդին Իր խոստումները և ծրագրերը: «Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը» (Երեմիա 29.11): Այս խոստումները Նրա կամքն են և մեր ներսում ձևավորում են մարգարեական պատկեր, որը ցույց է տալիս մեր ճանապարհը: Մենք ջանասիրաբար ցանկանում ենք, որ դա իրականություն դառնա, քանի որ Նա է, որ դնում է այդ ցանկությունները մեր սրտերում (տե՛ս Սաղմ. 37.4): Մեր սրտերում պատկերացում ենք կազմում այն մասին, թե որտեղ է Նա տանում մեզ, և մեր միտքը որոշում է տրամաբանական ուղի դեպի այդ նպատակակետը: Այնուամենայնիվ, շատ հաճախ Նա առաջնորդում է մեզ այնպիսի ճանապարհներով, որոնք, թվում է, լիովին հակառակ են տրամաբանությանը: Ճշմարիտ խոնարհությունն ընդունում է Աստծո իմաստությունը և ցուցումները՝ համարելով դրանք ավելի գերազանց սեփականից, և որոշում է կայացնում հնազանդվել, նույնիսկ՝ երբ մենք չենք հասկանում: Առակաց 3.5-ում գրված է. «Տիրոջն ապավինի՛ր քո ամբողջ սրտով և քո հասկացողությանը մի՛ վստահիր»:

Աբրահամը տարիներ շարունակ սպասեց, որպեսզի խոստումն Իսահակի մասին իրականություն դառնար: Հետագայում Իսահակը, տրամաբանորեն, պետք է ամուսնանար

և երեխաներ ունենար: Աբրահամը տեսնելու էր, թե ինչպես է իրականանում բազմության հայր լինելու իր խոստումը: Բայց մի գիշեր Աստված փոխեց այդ ամենը՝ պատվիրելով Աբրահամին երեք օրվա ճանապարհ գնալ և սպանել Իսահակին: Դա անիմաստ էր թվում: Պատկերացնո՞ւմ եք նրա պայքարը՝ հնազանդվելու համար: Դա ցավոտ հրաման էր, որը բոլորովին անիմաստ էր՝ այդ խոստման տեսանկյունից: Այնուամենայնիվ, իր խոնարհության շնորհիվ Աբրահամը որոշում կայացրեց հնազանդվել, թեև նա չէր հասկանում:

Աստվածաշնչում կան ավելի շատ օրինակներ այս մասին, երբ Աստված կարգադրում կամ թույլ է տալիս, որ տեղի ունենան հանգամանքներ, որոնք հակառակ են թվում այն ամենին, ինչ Նա հայտնել է մեզ: Այնուամենայնիվ, հնազանդվելով, մենք կտեսնենք, որ Նրա խոստումն իրականանում է՝ այնպես, որ վեր է մեր հասկացողությունից:

ՄԵՐ ԼԻԱՐԺԵՔ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՍՏԾՈՒՑ

Երկրորդը՝ խոնարհությունը կարելի է սահմանել որպես մեր լիարժեք և բացարձակ կախվածությունն Աստծուց: Դավիթն ամբարտավան էր թվում, սակայն գիտեր, որ իր կարողությունն Աստծուց էր: Իր իսկ խոսքով՝ «Տերը, որ առյուծի և արջի ձեռքից ինձ ազատեց, այս փղշտացու ձեռքից էլ կազատի» (Ա Թագ. 17.37): Նրա եղբայրները վստահում էին իրենց կարողությանը. այդ պատճառով էր, որ, համեմատվելով Դավթի հետ, նրանք ավելի հասակով և ուժեղ էին թվում իրենց աչքին: Դավթի ուժն իր հավատքի և հնազանդության մեջ էր:

Մենք տեսնում ենք սա նաև Քաղեբի և Հեսուի կյանքում: Նրանք երկուսն էին այն տասներկու առաջնորդներից, որոնք ընտրված էին Խոստման երկիրը լրտեսելու համար: Քառասուն օր անց նրանք վերադարձան՝ այդ երկրի մասին Մովսեսին և ժողովրդին զեկուցելու համար: Այդ առաջնորդներից

տասն ասացին հետևյալը. «Մեզ ուղարկած երկիրդ գնացինք, և իրավ որ կաթ ու մեղր է բխեցնում այն, և նրա պտուղը սա է: Միայն թե այն երկրի մեջ բնակվող ժողովուրդը զորավոր է, և քաղաքները պարսպավոր և խիստ մեծ են» (Թվոց 13.28,29):

Հենց որ այդ մարդիկ խոսեցին, ժողովրդի մեջ իրարանցում սկսվեց: Այդ ժամանակ Քաղեբը հանդարտեցրեց ժողովրդին և մեծ վստահությամբ հորդորեց. «Ելնե՛նք և ժառանգե՛նք այն, որովհետև մենք անպատճառ կարող ենք նրան տիրել» (խոսք 30):

Մյուս առաջնորդներն արագորեն պատասխանեցին. «Մենք չենք կարող այն ժողովրդի վրա ելնել, որովհետև նրանք մեզնից զորավոր են» (խոսք 31):

Աստվածաշունչն ասում է հետևյալը. «Եվ ամբողջ ժողովքն ասաց, թե՝ քարերով քարկոծենք նրանց [Քաղեբին և Հեսուին]» (Թվոց 14.10):

Ժողովրդի և մյուս առաջնորդների կարծիքով, Քաղեբը և Հեսուն չափազանց ինքնավստահ և մեծամիտ էին: Այն առաջնորդները, որոնք ասում էին, թե չէին կարող գրավել այդ երկիրը, իրատես էին: Նրանք գնահատել էին իրավիճակը և հասկացել էին, որ անկարելի էր, որ իրենք՝ նախկին ստրուկները, զավթեին նման զորավոր և ամուր քաղաքներ ունեցող ժողովրդի: Չէ՞ որ նրանք միայն փորձում էին պաշտպանել իրենց կանանց և երեխաներին (տե՛ս Թվոց 14.3): Թվում էր՝ այդ առաջնորդները խոնարհ էին և հոգում էին իրենց ազգի մասին, որոնց թվում էին նաև տարեց և անօգնական մարդիկ: Թվում էր՝ Քաղեբը և Հեսուն այն աստիճան ինքնահավան էին, որ չէին մտածում այդ անօգնական մարդկանց բարեկեցության մասին:

Այնուամենայնիվ, լսե՛ք, թե որն էր նրանց վստահության աղբյուրը. «Միայն թե Տիրոջ դեմ մի՛ ապստամբեք, և այն երկրի ժողովրդից մի՛ վախեցեք, որովհետև նրանք մեր կերակուրն են, նրանց պաշտպանությունը գնացել է իրենց վրայից, ու Տե-

որը մեզ հետ է. նրանցից մի՛ վախեցեք» (Թվոց 14.9): Հեսուն և Քաղեբը լիովին կախված էին Աստծո կարողությունից, ոչ թե իրենց կարողությունից: Նրանք գիտեին, որ Նրա կամքն էր, որ իրենք գնային այդ երկիր և զավթեին այն: Հնարավոր է՝ նրանք մեծամիտ էին թվում, իսկ մյուս առաջնորդներն իրատես մարդկանց տպավորություն էին թողնում: Բայց Աստված էր, որ բաժանեց խոնարհներին հպարտներից:

Խոնարհությունը կամ բացարձակ կախվածությունն Աստծո կամքից պատկերվում է Պողոսի կյանքում: Նա ասում է իր մասին.

> «Չկա ոչինչ մեզանում, ինչը թույլ է տալիս պնդել, որ մենք կարող ենք կատարել այս աշխատանքը: Այն կարողությունը, որ մենք ունենք, Աստծուց է» (Բ Կորնթ. 3.5, TEV):

Եվ կրկին.

> «Ես ուրախությամբ եմ պարծենում այն մասին, թե որքան տկար եմ. ես ուրախ եմ լինել Քրիստոսի զորության կենդանի դրսևորումը, փոխարենը ցուցադրեմ իմ ուժը և կարողությունները» (Բ Կորնթ. 12.9,10, TLB):

Պողոս առաքյալի կյանքում առաջադիմություն կար. որքան ապրում էր, այնքան ավելի կախված էր դառնում Աստծո շնորհքից և այնքան քիչ էր ապավինում իր ուժեղ կողմերին, տաղանդներին և կարողությանը: Որքան ավելի էր նա դատարկում իրեն՝ հպատակվելով Քրիստոսին, այնքան ավելի համարձակ և ուժեղ էր դառնում՝ Քրիստոսին փառավորելու իր վճռականության մեջ:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԴԻՏԱՐԿՈՒՄ ՄԵԶ

Այս պնդմամբ անցում ենք կատարում խոնարհության երրորդ

կողմին՝ այն, թե ինչպես ենք մենք դիտարկում մեզ: Անմիջապես փրկվելուց հետո Պողոսը խոնարհեցրեց իրեն՝ թողնելով իր բոլոր ձեռքբերումները և այն կարգավիճակը, որին հասել էր մինչև Հիսուսին հանդիպելը. նա աղբ անվանեց այդ ամենը: Մարդկանց մեծ մասի համար դժվար չէ աղբ համարել այն կյանքը, որը վարում էինք մինչև Քրիստոսին ճանաչելը:

Բայց ի՞նչ կասեք այն ձեռքբերումների մասին, որոնք ունեցել ենք Քրիստոսում՝ մեր փրկությունից հետո: Սա հաճախ լիովին այլ կերպով է ընկալվում: Մտածե՛ք այն սխրանքների մասին, որոնք նա նշում է. «Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա. ետևի բաները *[այն, ինչ Աստված կատարել էր նրա միջոցով՝ նրա փրկվելուց հետո]* մոռանալով՝ դեպի առջևում լինողներն եմ նկրտում» (Փիլիպ. 3.13, *շեղագիրը հեղինակինն է):*

Դարձի գալուց տարիներ անց Պողոսն առաքյալ կարգվեց (տե՛ս Գործք 13.1-4): Նա առատորեն հոգևոր հայտնություններ և իմաստություն էր ստանում, ինչը կրկին ձեռքբերումներ ունենալու հնարավորություն էր ընձեռնում նրան: Նա ծնունդ տվեց եկեղեցիների ամբողջ Ասիայում և Արևելյան Եվրոպայում: Մենք տեսնում ենք նրա խոնարհությունը մ.թ. 56 թվականին՝ իր նամակում, որը գրեց Կորնթոսի եկեղեցուն, որն ինքն էր հիմնադրել: Նրա կյանքն ավարտվելու էր տասը տարի անց, և նա Քրիստոսի հին և փորձված ծառայողն էր: Այնուամենայնիվ, լսե՛ք նրա խոսքերը.

> «Որովհետև ես առաքյալների հետինն եմ, որ արժանի չեմ առաքյալ կոչվելու, որովհետև Աստծո եկեղեցուն հալածեցի» (Ա Կորնթ. 15.9):

Դուք լսո՞ւմ եք այն խոնարհությունը, որը կա նրա խոսքերում: Ուզում եմ մատնանշել, որ սա կեղծ խոնարհություն չէ: Կեղծ խոնարհությունը գիտի, թե ինչպես քաղաքականորեն կոռեկտ լինի՝ խոնարհ թվալու համար. այնուամենայնիվ, նման

մարդու սրտում և մտքում հեզություն չկա: Այն խաբուսիկ է և չի համապատասխանում իրականությանը: Բայց, գրելով Աստվածաշունչը Սուրբ Հոգու օծության ներքո, մարդը չի կարող ստել: Նրան թույլ չէր տրվի նման պնդում գրել, եթե նա իրականում այդպես չդիտարկեր իրեն: Այնպես որ, երբ Պողոսն ասաց, որ ինքը վերջին առաքյալն էր, դա քաղաքականորեն կոռեկտ բառապաշար չէր, այլ՝ ճշմարիտ խոնարհություն:

Այնուամենայնիվ, ահա՛ Պողոսի հաջորդ պնդումը. «Նրանց ամենից ավելի աշխատեցի» (Ա Կորնթ. 5.10): Ովքե՞ր են նրանք: Պատասխանն է՝ բոլոր առաքյալները: Սպասե՛ք. մի՞թե Պողոսը պարծենում է: Այժմ թվում է, թե նա այլ շարժառիթներ ունի: Ինչպե՞ս նա կարող է ասել, որ բոլոր առաքյալներից հետինն է, իսկ հետո շարունակել. «Ես արել եմ ավելին, քան մյուս առաքյալները»: Առաջին հայացքից, դա ամբարտավանություն է թվում, ասես նա նկատի չուներ այն, ինչ ասում էր սկզբում, սակայն այդպես չէ: Այս պնդմանը հաջորդում է ևս մեկ հայտարարություն Աստծուց կախված լինելու մասին.

> «Սակայն ոչ թե ես, այլ՝ Աստծո շնորհքը, որ ինձ հետ է» (Ա Կորնթ. 5.10):

Նա հաջորդեց հետինը լինելու իր գնահատականը խոստովանությամբ, որ այն ամենը, ինչ ինքը կատարել էր, միայն Աստծո շնորհքով էր եղել: Նա կարող էր առանձնացնել իրեն բոլոր ձեռքբերումներից. նա լիովին գիտակցում էր, որ իր բոլոր ձեռքբերումները բխում էին Աստծո կարողությունից, որը գործում էր իր միջոցով:

Պողոսի ինքնապատկերումը որպես «առաքյալների հետինը» դժվար է ընկալել: Թե՛ իր կյանքի ժամանակ, թե՛ եկեղեցու պատմության ամբողջ ընթացքում նա գնահատվել է որպես մեծագույն առաքյալներից մեկը: Այժմ մտածե՛ք այն մասին, թե ինչ ասաց Պողոսը եփեսացիներին յոթ տարի անց՝ մ.թ. 63 թվականին, իր երկրային կյանքից հեռանալուց երեք կամ չորս

տարի առաջ: Կորնթացիներին գրած նամակին հաջորդող յոթ տարում նա ունեցել էր ավելի շատ ձեռքբերումներ, քան իր կյանքի ցանկացած այլ փուլում: Ահա թե ինչպես է նկարագրում իրեն.

> «Ինձ՝ *բոլոր սուրբերի հետինիս,* տրվեց այս շնորհքը, որ հեթանոսների մեջ ավետարանեմ Քրիստոսի անքննելի հարստությունը» (Եփես. 3.8, *շեղագիրը հեղինակինն է):*

Յոթ տարի առաջ նա անվանեց իրեն «առաքյալների հետինը», իսկ այժմ նկարագրում է իրեն այնքան ցածր, որքան «բոլոր սուրբերի հետինը»: Ի՞նչ: Եթե ինչ-որ մեկը կարող էր պարծենալ, իհարկե, դա կլիներ Պողոսը, և հիշեք, որ Աստվածաշունչը գրելիս դուք չեք կարող ստել և կրոնականորեն կոռեկտ բառապաշար օգտագործել: Նա իրականում այդպես էր դիտարկում իրեն:

Այս առաջադիմությունը շարունակվեց, քանի որ մենք պարզում ենք, որ անմիջապես իր մահից առաջ Տիմոթեոսին ուղղված մի նամակում նա հայտարարում է.

> «Ճշմարիտ է այս խոսքը և ամեն ընդունելության արժանի, որ Քրիստոս Հիսուսն աշխարհ եկավ մեղավորներին փրկելու, որոնցից առաջինը ես եմ» (Ա Տիմոթ. 1.15):

Այժմ նա ո՛չ առաքյալների հետինն է, և ո՛չ էլ բոլոր սուրբերի փոքրագույնը. նա դիտարկում է իրեն որպես առաջինը կամ գլխավորը բոլոր մեղավորներից: Ուշադրություն դարձրեք, որ նա չասաց. «Ես առաջինն *էի»,* այլ՝ «Ես առաջինն *եմ»:* Եվ խոսքն այն մարդու մասին է, որը հայտնություն էր ստացել, որ ինքը նոր ստեղծված է Քրիստոսում, որ հներն անցել են, և այն, ինչ նոր է եղել (տե՛ս Բ Կորնթ. 5.17): Նա երբեք չմոռա-

ցավ, թե որքան մեծ էր իր պարտքը Փրկչի առջև:

Որքան ավելի էր Պողոսը ծառայում, այնքան ավելի փոքր էր նա համարում իրեն, և նրա խոնարհությունը շարունակ ավելանում էր: Հնարավո՞ր է, որ հենց այս պատճառով էր Աստծո շնորհքը համաչափորեն ավելանում նրա կյանքում՝ նրա տարիքի հետ: Որովհետև Հակոբոսն ասում է մեզ, որ Աստված «խոնարհներին շնորհք է տալիս» (Հակոբ. 4.6): Հնարավո՞ր է նաև, որ այս պատճառով էր Աստված այնքան մտերմորեն հայտնում Պողոսին իր ճանապարհները, որ դա ապշեցնում էր Պետրոս առաքյալին: Աստված ասում է Եսայու միջոցով, որ Նա բնակվում է խոնարհների հետ, ոչ թե այցելում է նրանց: Նրա հետ բնակվելով՝ մենք մտերմանում ենք Նրա հետ:

ԶՈՐԱՎՈՐ ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐ

Եկել է ժամանակը ծանոթանալու Աստծո թագավորության զորավոր երկվորյակների հետ. *Տիրոջ երկյուղի* և *Խոնարհության:* Հիշե՛ք, որ նախորդ գլուխներում պարզորեն տեսանք, որ Տիրոջ երկյուղը Նրան մտերմորեն ճանաչելու սկիզբն է. այնուամենայնիվ, այժմ տեսնում ենք, որ նույնը վերաբերում է խոնարհությանը: Սաղմոսերգուն ազդարարում է.

> «Նա... սովորեցնում է *հեզահոգիներին* Իր *ճանապարհը»* (Սաղմ. 25.9, *շեղագիրը հեղինակինն է):*

Աստված հայտնում է Իր ճանապարհները հեզահոգիներին կամ խոնարհներին, սակայն ընդամենը մի քանի խոսք անց տեսնում ենք հետևյալը.

> «Ո՞վ է այն մարդը, որ *վախենում է Տիրոջից.*
> ահա՛ կսովորեցնի նրան այն *ճանապարհը,* որ ընտրել է» (Սաղմ. 25.12, *շեղագիրը հեղինակինն է):*

Ըստ էության, Տիրոջից երկյուղ ունեցող մարդիկ ճշմարտապես խոնարհ են, և ճշմարտապես խոնարհ մարդիկ Տիրոջից երկյուղ ունեն: Հիշե՛ք, որ Մովսեսը գիտեր Տիրոջ ճանապարհները, սակայն Իսրայելը գիտեր Նրան՝ միայն իրենց աղոթքների պատասխաններով, այսինքն՝ Նրա գործերով: Մովսեսը և՛ երկյուղ ուներ Տիրոջից, և՛ շատ խոնարհ էր: Դուք տեսնո՞ւմ եք այս կապը: Իսրայելը չուներ երկյուղ Տիրոջից (տե՛ս Երկր. Օր. 5.29), ինչպես նաև խոնարհություն (ինչը մենք տեսանք վերը նշված օրինակում Հեսուի և Քաղեբի մասին):

Սաղմոսերգուն կապակցում է Տիրոջ երկյուղը խոնարհության հետ, որպես՝ գրեթե անբաժանելի իրողություններ: Մենք շարունակաբար տեսնում ենք սա Աստվածաշնչում: Ահա մեկ օրինակ.

> «*Տիրոջ երկյուղն* է իմաստության խրատը, և փառքի առջևով *խոնարհություն* է գնում» (Առակ. 15.33, *շեղագիրը հեղինակինն է):*

Խավարի թագավորությունը նույնպես զորավոր երկվորյակներ ունի: Դրանք *Տիրոջ երկյուղի* և *Խոնարհության* հակապատկերներն են՝ *Ապստամբությունը* և *Հպարտությունը:* Մենք տեսնում ենք այս երկվորյակների հակադրությունը Առակաց գրքում.

> «*Խոնարհության* և ակնածանքով ու երկրպագությամբ լի *Տիրոջ երկյուղի* վարձատրությունն է հարստություն և պատիվ և կյանք: Փշեր և ծուղակներ կան *համառ* և *կամակոր* մարդկանց ճանապարհին. նա, ով հսկում է իրեն, հեռու կլինի դրանցից» (Առակ. 22.4,5, AMP, *շեղագիրը հեղինակինն է):*

Դուք տեսնո՞ւմ եք, թե ինչպես են խոնարհությունը և Տիրոջ երկյուղը կապակցված, նաև ինչպես են դրանք հակադրվում

հպարտությանը և ապստամբությանը: Հիսուսը խոնարհեցրեց Իրեն ավելի, քան ցանկացած մարդ կամ հրեշտակ: Այնպես որ, Նա իրավամբ բարձրացվեց ավելի, քան ցանկացած անձ (տե՛ս Փիլիպ. 2.8,9): Նույնպես, Տիրոջ երկյուղը Նրա բերկրանքն էր՝ ավելի, քան ցանկացած այլ առաքինություն. այդ պատճառով, Աստծո Հոգու ներկայությունը Նրա հետ և Նրա վրա առանց չափի էր (տե՛ս Եսայի 11.2,3, Հովհ. 3.34):

Ի հակադրություն՝ Արուսյակը, որն օծված քերովբե էր և այժմ հայտնի է որպես սատանա, բարձրացրեց իրեն հպարտության միջոցով, և ապստամբ դարձավ ավելի, քան ցանկացած անձ իրենից առաջ կամ հետո: Այնպես որ, նա իջեցվեց «գուբի խորքերը» (կարդացե՛ք Եզեկիել 28.14-17, Եսայի 14.12-15):

Մտապահե՛ք, որ Աստվածաշունչը շարունակաբար ցույց է տալիս, որ Աստծո բնակավայրը բարձրերում է, իսկ դիվային ուժերինը՝ ցածրերում: Դուք կրկին ու կրկին կտեսնեք ամբողջ Աստվածաշնչում, որ հպարտությունը և ապստամբությունը ցածր են համարվում, իսկ խոնարհությունը և Տիրոջ երկյուղը՝ բարձր: Բարձրացվելը նշանակում է մտերմորեն բնակվել Տիրոջ հետ:

ՄԱՐԴԻԿ, ՈՐՈՆՑ ԱՍՏՎԱԾ ՁԳՏՈՒՄ Է

Աստված հակառակվում է հպարտներին և ապստամբներին (տե՛ս Հակոբ. 4.6), բայց Նրան գրավում են իրենից երկյուղ ունեցող մարդիկ, որոնք ճշմարտապես խոնարհ են: Հին կտակարանում կար մարդկանց մի խումբ, որոնք ծառայում կամ երկրպագում էին Աստծուն՝ համաձայն սուրբգրային ցուցումների: Նրանք գառների և ցուլերի զոհաբերություններ էին կատարում, խունկ էին վառում սրբարանում և հացի ընծաներ էին բերում: Այնուամենայնիվ, Աստված ասաց, որ Իր աչքերում նրանց զոհերը նման էին մարդ սպանելուն, նրանց ընծաները Նրա համար խոզի արյուն մատուցելու պես էին, և նրանց խունկը, որն աղոթքի և փառաբանության խորհրդապատկեր

է, նման էր կուռք օրինելուն: Դրանից հետո Աստված ասաց այդ մարդկանց, թե ինչու էր այդպես.

> «Որովհետև Ես կանչեցի, և պատասխանող չկար, խոսեցի, և նրանք չլսեցին, և չարություն արին Իմ աչքի առջև և Իմ չուզած բանը ընտրեցին» (Եսայի 66.4):

Ո՞րն է Նրա չուզած բանը: Զոհերը, որոնք չեն ուղեկցվում հնազանդությամբ (տե՛ս Ա Թագ. 15.22): Այլ կերպ ասած, ցանկացած տեսակի երկրպագություն, որը զուրկ է Տիրոջ երկյուղից:

Տերը սաստիկ հարված հասցրեց այդ «երկրպագուներին»: Նա կտրեց գետինը նրանց ոտքերի տակից: Կարո՞ղ եք պատկերացնել այդ մարդկանց զարմանքը: Նրանք կարծում էին, թե ծառայում էին և հաճեցնում էին Նրան, սակայն պարզեցին, որ իրենց երկրպագությունը հակակրանք էր առաջացնում Նրա մոտ: Այնուամենայնիվ, գործելով Իր ժողովրդի հետ, Տերը երբեք արմատախիլ չի անում այն տեղը, որտեղ մտադրված չէ տնկել. Նա երբեք չի քանդում այն տեղը, որտեղ մտադրված չէ կառուցել: Այնպես որ, Նա խրախուսում է նրանց՝ ասելով, թե ինչն է գրավում Իրեն.

> «Ես սրան եմ մտիկ տալիս՝ խոնարհին և կոտրած հոգի ունեցողին և Իմ Խոսքից դողացողին» (Եսայի 66.2):

Այն եբրայերեն բառը, որը թարգմանված է որպես *«մտիկ տալ», «նաբատ»* բառն է: *«Սթրոնգի բառարանը»* սահմանում է այն որպես «ուշադիր նայել. վերաբերվել համակրանքով, բարեհաճությամբ կամ հոգատարությամբ»: Այնպես որ, ըստ էության, Աստված նկատի ունի. «Ինձ գրավում է այսպիսի մարդը. ահա թե ում եմ ես ձգտում»: Թոմի Թինին, որը ժամանակակից հեղինակ և ուսուցիչ է, ունի մի աշխատություն, որը ես համարում եմ մեր սերնդի մեծագույն գրքերից մեկը՝ «Աստծուն

ձգտողները»: Այս վերնագիրը կատարելապես նկարագրում է այն մարդկանց սրտերը, որոնք սիրում են Աստծուն:

Մտածե՛ք Դավթի մասին: Աստված կարգադրեց Իսրայելի գլխավոր մարգարե Սամուելին գնալ Հեսսեի տուն, նույնիսկ հակառակ Սամուելի ցանկությանը, քանի որ նա վախենում էր Սավուղի բարկությունից: Այնուամենայնիվ, Աստված, միևնույն է, պատվիրեց նրան գնալ, քանի որ Նա ձգտում էր Հեսսեի որդիներից մեկին: Մարգարեի առջև բերեցին յոթ ավագ որդիներին, և վերջապես Տերը, ըստ էության, ասաց նրան. «Ո՛չ, Սամուե՛լ, ոչ թե այս ավելի մեծ տղաները, այլ այն փոքր շիկակարմիր մազերով տղան, որը դաշտերում է՝ ոչխարների հետ. Ես հենց նրա՛ն եմ ձգտում» (շրջասությունը հեղինակինն է):

Ինչո՞ւ էր Աստված ձգտում Դավթին, ոչ թե նրա ավագ եղբայրներին կամ այլ մարդկանց Իսրայելում: Պատասխանը վերոբերյալ խոսքում է: Նա բարեհաճությամբ է վերաբերվում և ձգտում է նրանց, ովքեր խոնարհ են, կոտրած հոգի ունեն և դողում են Իր Խոսքից: Կոտրած հոգի ունեցողները նրանք են, ովքեր պատրաստակամորեն ապաշխարում են, քանի որ հանձն են առել հպատակվել աստվածային իշխանությանը: Այլ թարգմանության մեջ գրված է. «Ինձ հաճելի են նրանք, ովքեր խոնարհ և ապաշխարող են, ովքեր վախենում են Ինձնից և հնազանդվում են Ինձ» (TEV): Կոտրած հոգին ճշմարիտ խոնարհության և Տիրոջ երկյուղի ևս մեկ ձև է: Այնպես որ, ըստ էության, Նա ցույց է տալիս, որ ձգտում է նրանց, ովքեր խոնարհ են և վախենում են Իրենից, ովքեր վարվում են Աստծո թագավորության զորավոր երկվորյակների առաքինությամբ: Ահա թե ինչու է գրված.

> «Նա չի հանդուրժում ինքնահավան մարդկանց, այլ՝ բարեհաճություն է ցուցաբերում նրանց հանդեպ, ովքեր խոնարհ են» (Առակ. 3.34, TEV):

Եվ կրկին.

«Քանի՜ մեծ է Քո բարությունը,
որ պահեցիր Քեզնից վախեցողների համար... Դու
ծածկում ես նրանց Քո երեսի ծածկույթով...» (Սաղմ.
31.19,20):

Ահա թե ինչու է Նոր կտակարանը պատվիրում մեզ. «Զգեստավորվե՛ք խոնարհությամբ» (Ա Պետր. 5.5, NIV) և «ապրե՛ք ձեր կյանքերը որպես օտարականներ այստեղ՝ ակնածալի վախով» (Ա Պետր. 1.7, NIV): Սուրբ Հոգի Աստված հորդորում է մեզ այս խոսքերով՝ Պետրոսի միջոցով, որպեսզի մենք վերապրենք քաղցր հաղորդություն Իր հետ, որն Իր սրտի փափագն է մեզ՝ Իր թանկ զավակներին:

Որոշումը մերն է: Աստված ճանապարհ է բացել, որպեսզի մենք վարվենք Իր հետ, և տվել է մեզ Իր շնորհքը դրա համար: Ինչպիսի՜ հրաշալի Աստծո և Հոր ենք մենք ծառայում: Այժմ պետք է որոշում կայացնենք ականջ դնել և ուշադրություն դարձնել Նրա կանչին դեպի Իր ներքին սրահը, որտեղ նա հայտնում է Իրեն: Հաջորդ մի քանի գլուխներում կխոսենք այն մասին, թե ինչպես է Նա անում դա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Այս գլխում նշվեց, որ թեև խոնարհությունն ընդհանուր առմամբ ընկալվում է թյուր կերպով՝ տկար, թշվառ և թուլակամ իմաստով, ճշմարտապես խոնարհ մարդկանց հաճախ սխալմամբ ամբարտավան են համարում: Մտորելով սրա շուրջ՝ կարո՞ղ եք հիշել այնպիսի մարդկանց, որոնց դուք ամբարտավան էիք համարում, սակայն, իրականում նրանք մեծ խոնարհություն ունեին: Եթե այո, ի՞նչ կարող եք սովորել այդ ոչ ճշգրիտ գնահատականից:
2. Մտորե՛ք խոնարհության երեք կողմերի շուրջ, որոնք են հնազանդությունն Աստծուն, բացարձակ կախվածությու-

նը Նրանից և մեր տեսանկյունը մեր մասին, նաև՝ այդ կողմերից յուրաքանչյուրի աստվածաշնչյան օրինակների: Եթե խոստովանելու լինեիք այն կողմը, որն ամենից դժվար է տրվում ձեզ, ապա ո՞րը կլիներ:

3. Եսայի 66-րդ գլխում կար մարդկանց մի խումբ, որոնք ծառայում և երկրպագում էին Աստծուն՝ օրենքի տառով. նրանք պատշաճ զոհաբերություններ էին կատարում, պատշաճ խունկ էին վառում և պատշաճ ընծաներ էին բերում: Այնուամենայնիվ, Տիրոջը հաճելի չէր նրանց երկրպագությունը, քանի որ հնազանդ չէին: Ինչ կերպերով մեր երկրպագությունը կարող է տհաճ լինել Աստծուն, նույնիսկ երբ այն վարում են օժտված, տաղանդավոր առաջնորդներ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՀԵՏ

Ես համոզված եմ, որ Սուրբ Հոգին
ամենից անտեսված անձն է եկեղեցում:

Այժմ հասնում ենք գրքի այն մասին, որն անչափ ցանկանում էի ներկայացնել՝ թե իրականում ինչպես է Աստված մոտենում մեզ: Նախևառաջ, թույլ տվեք կրկնել, որ Նա փափագում է մեզ ավելի, քան մենք՝ Նրան: Հիշե՛ք Մովսեսի խոսքերը. «Նա Աստված է, Ով նախանձավորությամբ է վերաբերվում Իր հարաբերությանը ձեզ հետ» (Ելից 34.14, NLT):

Վերջերս, երբ խորամուխ էի եղել աղոթքի մեջ, մինչև լիովին կհասկանայի, թե ինչ էի ասում, աղաղակեցի. «Տե՛ր, եթե չեմ կարող մտերմորեն շփվել Քեզ հետ այստեղ՝ երկրի վրա, խնդրում եմ, տա՛ր ինձ տուն՝ Երկինք, Քեզ մոտ»: Ծնկներս մի փոքր դողացին, քանի որ իմ խոսքերը սրտիցս էին բխում: Ես գիտեի, որ նկատի ունեի այն, ինչ ասացի, սակայն գրեթե անմիջապես իմ միտքը գոչեց. «Ի՞նչ խնդրեցիր հենց նոր»: Դատո-

ղությունս վիճարկեց՝ արդյո՞ք պետք է նման բաներ խնդրեի:

Մի քանի ժամ անց ինքնաթիռ նստեցի, որն ուղևորվում էր Արիզոնա նահանգի Ֆինիքս քաղաքը, զբաղեցրի իմ նստատեղը, վերցրի Աստվածաշունչս պայուսակից և պարզապես բացեցի: Առաջինը խոսքը, որն աչքերս տեսան, հետևյալն էր.

«Տե՛ր, դեպի Քեզ եմ կանչում.
իմ Վե՛մ, լուռ մի՛ կենա ինձնից.
որ չլինի, թե Դու ինձնից լուռ կենաս,
և ես գերեզմանի մեջ մտնողներին նմանվեմ» (Սաղմ. 28.1):

Ես գրեթե վեր ցատկեցի նստատեղից: Ինչպիսի՞ հավանականություն կար, որ իմ աչքերը պատահաբար տեսան այդ խոսքը: Այն ուղղակիորեն վերաբերում էր մի քանի ժամ առաջ մտքումս առաջացած հարցին: Ես հասկացա, որ դա խոսք էր Աստծուց, և սիրտս սկսեց արագորեն բաբախել:

Դավիթն ասում է, որ մենք ոչնչով չենք տարբերվում դժոխք գնացող մեղավորից, եթե Աստված չի խոսում մեզ հետ: Ինձ մոտ մշտապես կա նաև Աստվածաշնչի «Նոր կենդանի թարգմանությունը». այնպես որ, ես կարդացի այդ խոսքը նաև այդ թարգմանությամբ, և այն համապատասխանում էր իմ առավոտյան աղոթքին: Գրված է. «Որովհետև եթե Դու լուռ լինես, գուցե ես հանձնվեմ և մահանամ»: Սա ճիշտ այն էր, ինչի համար ես աղաղակում էի: Ես շատ անգամներ եմ կարդացել այս խոսքը, սակայն երբեք չեմ տեսել այս լույսի ներքո:

Ես անմիջապես հասկացա, որ աղոթել էի ոչ թե Աստծո կամքին հակառակ, այլ՝ Սուրբ Հոգով: Այդ փորձառությունը կրկին հաստատեց ինձ համար, որ Աստված չի ցանկանում լուռ լինել մեր կյանքում. փոխարենը, Նա ջանասիրաբար ցանկանում է հաղորդակցվել մեզ հետ: Իմ ամենասիրելի աստվածաշնչյան խոսքերից մեկում Դավիթը գրում է հետևյալը.

> «Իմ սիրտն ասում է Քեզ Քո խոսքը, թե՝ խնդրե՛ք Իմ երեսը. ահա՛, Տե՛ր, ես էլ խնդրում եմ Քո երեսը» (Սաղմ. 27.8, NLT):

Դուք լսո՞ւմ եք Աստծո սրտի բուռն ցանկությունը: Նա հրավիրում է յուրաքանչյուրիս. «Մոտեցի՛ր, Ես ուզում եմ հաղորդակցվել քեզ հետ, կիսվել Իմ սրտի եղածով և ցույց տալ մեծ և զորավոր բաներ, որոնք դու չգիտես»:

Այսպիսին պետք է լինի յուրաքանչյուր հավատացյալի կյանքը. «Մոտեցե՛ք Աստծուն», և եթե մենք մոտենանք, Նա երաշխավորում է. «Նա կմոտենա ձեզ»: Մենք ենք որոշում մեր մտերմության մակարդակը, ոչ թե Նա: Նա արդեն բացել է Իր ներքին սրահները տանող դուռը. Նա սպասում է և կանչում է մեզ, որ գանք Իր մոտ: Մենք ենք որոշում, թե արդյո՞ք կպատասխանենք Նրան, և որքան ավելի ենք մոտենում, այնքան ավելի է Նա հայտնում Իրեն և Իր ցանկությունները: Այնուամենայնիվ, կրկին կարդանք Հակոբոսի խոսքերը, որոնք գրված են անմիջապես այս մեծ հրավերից առաջ.

> «Կամ թե կարծում եք՝ Սուրբ Գիրքը պարա՞պ տեղն է ասում. «Նախանձով փափագում է Հոգին, որ բնակված է մեզանում»» (Հակոբ. 4.5):

Նա փափագում է մեզ, բայց՝ նախանձով: Վերջին մի քանի գլուխներում տեսանք, որ Նա չի պատրաստվում կիսել մեզ այս աշխարհի կրքերի հետ: Այդ պատճառով է, որ Հակոբոսը գրում է. «Չգիտե՞ք, որ աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ. արդ, ով որ կարողանա աշխարհի բարեկամ լինել, իր անձն Աստծուն թշնամի կանի» (Հակոբ. 4.4): Սա նույնն է, ինչ՝ եթե կինն ասի իր անհավատարիմ ամուսնուն. «Դու չես կարող լինել և՛ ինձ հետ, և՛ քո սիրուհու հետ. այնպես որ, ընտրի՛ր: Եթե ընտրես նրան, դու կմերժես ինձ, և ես կհեռանամ»: Տերը վարվում է նույն կերպով. Նա չի պատրաստվում կիսել մեզ այս աշ-

խարհի հետ: Նա պետք է լինի մեր սրտերի փափագը, կամ՝ չի հայտնի Իրեն:

ՄԵԶԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀՈԳԻՆ ՓԱՓԱԳՈՒՄ Է

Ավելի վաղ լայնորեն քննարկեցինք այն, որ Նա փափագում է մեզ, բայց այժմ պետք է կենտրոնանանք *«Հոգի»* բառի վրա: Անչափ ուշագրավ է, որ Աստվածաշնչում գրված է. «Նախանձով փափագում է Հոգին, որ բնակված է մեզանում»: Ուշադրություն դարձրեք, որ գրված չէ. «Նախանձով փափագում է Հիսուսը, որ բնակված է մեզանում»: Հիսուսն այստեղ՝ երկրի վրա չէ. Նա նստած է Մեծության աջ կողմը՝ Երկնքում, և Նա գրեթե երկու հազար տարի է՝ այդտեղ է: Այն օրը, երբ Հիսուսը հեռացավ, հրեշտակներն ասացին Նրա աշակերտներին. «Ո՛վ գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և մտիկ եք անում դեպի երկինքը: Այս Հիսուսը, որ ձեզնից վերացավ երկինքը, այսպես կգա, ինչպես Նրան տեսաք երկինք գնալիս» (Գործք 1.11): Նա ֆիզիկապես տարվեց մի ամպով՝ նրանց աչքերի առջև, և մենք խոստում ունենք, որ Նա կվերադառնա նույն կերպով:

Սխալ մի՛ հասկացեք ինձ. մեր հրաշալի Փրկիչ Հիսուսը փափագում է մեզ, բայց Նա, Ով գտնվում է մեր մեջ՝ Նրա մեկնելուց հետո և մինչև օրս, Սուրբ Հոգին է, և Նա Աստվածության այն Անձն է, Ում մասին գրված է այս խոսքում: Այնուամենայնիվ, Նա շատ առումներով անտեսված է Հիսուսի անունը կանչողներից: Իրականում, ես համոզված եմ, որ Սուրբ Հոգին ամենից անտեսված անձն է Եկեղեցում: Մտածեք հետևյալը. պատահե՞լ է, որ մեքենա վարեք գրեթե քսան րոպե, և ինչ-որ մեկը նստած լինի ձեր կողքին, սակայն դուք նույնիսկ մեկ բառ չխոսեք նրա հետ ճանապարհին: Այնուամենայնիվ, հաճախ մենք հենց այսպես ենք վարվում Նրա հետ:

Մենք մտածում ենք մեր առօրյայի մասին, լսում ենք քրիս-

տոնեական երաժշտություն կամ ռադիոկայաններ, երբ մեքենա ենք վարում, և շատ հաճախ չենք էլ գիտակցում Նրա ընկերակցությունը: Մենք չենք գիտակցում Նրա ընկերակցությունը տանը, գրասենյակում և անթիվ այլ վայրերում, որոնք զբաղեցնում են մեր ժամանակը. այնուամենայնիվ, եթե մեզ հարցնեն, մենք, անկասկած, ընդունում ենք Նրա գոյությունը և այն փաստը, որ Նա բնակվում է մեր սրտերում:

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ

Պատճառներից մեկը, թե ինչու մենք չենք գիտակցում Նրա ներկայությունը և ընկերակցությունը, մեր պատկերացումն է Սուրբ Հոգու մասին: Մեր պատկերացումն առեղծվածային է՝ այն պատճառով, թե ինչպես ենք գրել և քարոզել Նրա մասին: Իրականում, եթե ինձ մեկ դոլար տային ամեն անգամվա համար, երբ ես լսել եմ, որ ինչ-որ մեկը խոսել է Սուրբ Հոգու մասին՝ որպես անդեմ երևույթի, ես կհարստանայի: Դժբախտաբար, շատերը դիտարկում են Նրան որպես «սուրբ էություն», ոչ թե որպես այնպիսի Անձնավորություն, Ով Ամենասուրբն է, և Ով ցանկանում է լինել քո ամենամտերիմ ընկերը: Եթե միայն մենք խորհեինք Աստծո Խոսքի շուրջ, կտեսնեինք, որ Նա ունի միտք (տե՛ս Հռոմ. 8.27) և կամք (տե՛ս Ա Կորնթ. 12.11), նաև զգացմունքներ, որոնք պատկերվում են մեր հանդեպ Նրա սիրով (տե՛ս Հռոմ. 15.30): Նա խոսում է (տե՛ս Եբր. 3.7). իրականում, Նա պարզորեն է խոսում (տե՛ս Ա Տիմոթ. 4.1): Նա սովորեցնում է (տե՛ս Ա Կորնթ. 2.13). Նրան կարելի է տրտմեցնել (տե՛ս Եփես. 4.30), նախատել (տե՛ս Եբր. 10.29) և ստել, ինչպես և ցանկացած մարդու:

Մեր առաջին տպավորությունը Նրա մասին սովորաբար աղավնու պատկերն է: Բայց ինչո՞ւ է Նա պատկերվում որպես աղավնի: Նա նույնիսկ մեկ անգամ չհայտնվեց որպես աղավնի: Չորս Ավետարաններում գրված է, որ Հովհաննես Մկրտիչը տեսավ Աստծո Հոգուն, որ իջնում էր Հիսուսի

վրա «աղավնու պես» (Մատթ. 3.16, Մարկ. 1.10, Ղուկ. 3.22, Հովհ. 1.32): Դա աղավնի չի դարձնում Նրան: Երբեմն մարդիկ ասում են. «Այդ կինը վազում էր՝ քամու պես», կամ՝ «Այդ տղամարդն ուժեղ է՝ ցլի պես»: Այդ խոսքերը չեն նշանակում, որ այդ կինը քամի է, իսկ այդ տղամարդը՝ չորքոտանի անասուն: Նրանք մարդիկ են:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Այո՛, բայց Հովհաննես առաքյալը տեսավ Սուրբ Հոգուն՝ որպես յոթ աշտանակների, երբ նայում էր Աստծո գահին»: Այո՛, ճիշտ է, քանի որ նա գրում է. «Անմիջապես Նրա գահի առջև յոթ լուսավորված աշտանակներ էին, որոնք խորհրդանշում են Աստծո յոթնապատիկ Հոգին» (Հայտն. 4.5, TLB): Այնուամենայնիվ, նույն Հովհաննես առաքյալը նաև գրում է. «Եվ տեսա, և ահա... երեցների մեջ մի Գառ կանգնած՝ մորթվածի նման... Եվ [երեցները և մյուսները Գահի սրահում] նոր երգ են երգում և ասում. «Արժանի ես առնելու այդ գիրքը և դրա կնիքները բանալու, որովհետև մորթվեցիր և Քո արյունով մեզ գնեցիր Աստծո համար՝ ամեն ցեղից և լեզվից և ժողովրդից և ազգից»» (կարդացե՛ք Հայտն. 5.6-9): Ակնհայտ է, որ Նա նկատի ունի Հիսուսին, բայց մենք չենք ընկալում Նրան որպես կենդանու: Անկասկած, մենք գիտենք, որ Հիսուսն այն Անձն է, Ում պատկերով մենք ստեղծված ենք, իսկ մենք ստեղծված չենք որևէ կենդանու պատկերով:

Սուրբ Հոգին Անձ է, և մենք ստեղծվել ենք Նրա պատկերով: Այո՛, Նրա՛ պատկերով: Մենք կարդում ենք Ծննդոց գրքում. «Եվ Աստված ասաց. «Մեր պատկերով և Մեր նմանության պես մարդ շինենք»» (Ծննդ. 1.26). Գրված չէ. «Ես մարդ կշինեմ՝ Իմ պատկերով»: Ո՛չ, Հայրը, Որդին և Սուրբ Հոգին ներդաշնակորեն ստեղծեցին մարդուն: Մենք քաջատեղյակ ենք Հոր և Որդու դերից արարչագործության մեջ, բայց Աստվածաշունչը նաև պարզորեն հայտնում է. «Աստծո Հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը՝ ինձ

կյանք տվել» (Հոբ 33.4), ինչպես նաև՝ «Հոգիդ ուղարկում ես՝ ստեղծվում են» (Սաղմ. 104.30): Այնպես որ, երբ Աստված ասաց. «Մեր պատկերով և Մեր նմանության պես մարդ շինենք», Սուրբ Հոգին, անկասկած ներգրավված էր դրանում: Մենք ստեղծված ենք Հոր, Որդու և Սուրբ Հոգու պատկերով: Նա Անձ է. Նա Աստվածության երրորդ Անձն է, ոչ թե ինչ-որ առեղծվածային քամի կամ թռչուն:

Ինչպե՞ս Մարիամը կարող էր Սուրբ Հոգուց հղացած գտնվել, եթե մենք ստեղծված չլինեինք Նրա պատկերով: Աստվածաշնչում գրված է. «Բայց երբ նա դեռ կույս էր, հղացավ Սուրբ Հոգուց» (Մատթ. 1.18, NLT): Ավելի ուշ Տիրոջ հրեշտակն ասաց Հովսեփին. «Նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. 1.20): Եթե Սուրբ Հոգին ինչ-որ անդեմ երևույթ է, ինչպե՞ս Մարիամի մեջ կարող էր մարդ ձևավորվել: Նա Սուրբ Հոգուց հղացած գտնվեց: Անհրաժեշտ է նույն պատկերն ունեցող երկու էակ՝ առողջ սերունդ ստանալու համար:

Հուսով եմ՝ դուք հասկանում եք, որ Սուրբ Հոգին Անձ է, իրականում՝ ամենահրաշալի Անձը: Այս պատճառով, Պողոսը գրում է հավատացյալներին.

> «Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, Հայր Աստծո սերը և *Սուրբ Հոգու հաղորդությունը*՝ ձեր ամենի հետ: Ամե՛ն» (Բ Կորնթ. 13.13, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք, որ Նա ասում է. «Սուրբ Հոգու *հաղորդությունը*՝ ձեր ամենի հետ»: Տարիներ շարունակ ուսումնասիրել եմ *«հաղորդություն»* բառը, քանի որ իմ փափագը՝ Աստծուն մտերմորեն ճանաչելն է: Ես փնտրել եմ այն գրեթե յուրաքանչյուր հունարեն բառարանում: Ստորև այս բառի հիմնական սահմանումներն են.

- Շփում
- Ընկերակցություն *կամ* ընկերական փոխհարաբերություն

- Համագործակցություն *կամ* համատեղ մասնակցություն
- Սերտ հաղորդակցություն
- Մտերմություն

Կան այլ բառեր, որոնք օգտագործվում են՝ սահմանելու համար *«հաղորդություն»* բառը, սակայն դրանք շատ նման են վերոբերյալ սահմանումներից առնվազն մեկին. այնպես որ, ես ընտրեցի այս սահմանումները: Առանձին դիտարկենք յուրաքանչյուրը և մտորենք դրանց շուրջ:

ՇՓՈՒՄ

«Վեբսթերի բառարանը» սահմանում է առաջին բառը՝ *շփումը,* որպես *ընկերակցություն կամ ընկերություն:* Այս բառը սահմանվում է նաև որպես *«ընկերական լինելու որակ կամ վիճակ»:* Անկարելի է պատկերացնել ընկերների, որոնք չեն հաղորդակցվում: Ընկերները տեղյակ են պահում միմյանց այն մասին, թե ինչ են իրենք ներկայումս անում և ինչ են ծրագրում անել: Ընկերները մշտական կապ ունեն իրար հետ: Գործք առաքելոց գրքում կրկին ու կրկին ներկայացվում են նման շփման օրինակներ Սուրբ Հոգու և Նրա ծառաների միջև: Ստորև գտնվող աստվածաշնչյան հատվածն ընդամենը մեկ օրինակ է՝ Պողոսի խոսքերից.

> «Եվ այժմ ես Երուսաղեմ եմ գնում՝ անդիմադրելիորեն տարվելով այնտեղ Սուրբ Հոգով՝ չիմանալով, թե ինչ է ինձ պատահելու՝ բացի այն, որ Սուրբ Հոգին *քաղաքից քաղաք* ասել է ինձ, որ առջևում բանտարկություն և չարչարանք է սպասվում» (Գործք 20.22,23, NLT, *շեղագիրը հեղինակինն է):*

Պողոսի խոսքերից կարելի է նկատել այն շարունակական հաղորդակցությունը, որը կար նրա և Սուրբ Հոգու միջև: Նրանք ընկերներ էին՝ կյանքում, ճանապարհորդությունների և ծառայության մեջ:

Նույնը վերաբերում է Տիրոջ յուրաքանչյուր ծառայի Նոր կտակարանում: Ուր էլ գնային, Սուրբ Հոգին նրանց հետ էր և հաղորդակցվում էր նրանց հետ, երբ փնտրում էին Նրան: Նա այդ մարդկանց Ընկերն էր: Փիլիպոսը՝ ևս մեկ առաքյալ, թողեց քաղաքում անցկացվող հավաքույթը և ճանապարհվեց անապատ, սակայն նա մենակ չէր և տարակուսած չէր՝ չիմանալով, թե ինչ աներ, քանի որ «Հոգին էլ Փիլիպոսին ասաց. «Մոտեցի՛ր և հասի՛ր այդ կառքին»» (Գործք 8.29):

Պետրոսը, դժվարըմբռնելի տեսիլք ունենալով, ստիպված չէր հենվել Աստվածաշնչի իր գիտելիքի վրա՝ դրա նշանակությունը հասկանալու համար, քանի որ նա լսեց Հոգու ձայնը. «Այն, որ Աստված սրբեց, դու պիղծ մի՛ համարիր»: Եվ, որպես հավելյալ առաջնորդություն, «...*Հոգին նրան ասաց*. «Ահա երեք մարդիկ քեզ որոնում են: Բայց վե՛ր կաց, իջի՛ր և գնա՛ նրանց հետ՝ առանց խղճմտանք անելու, որովհետև Ես եմ ուղարկել նրանց»» (Գործք 10.19,20, *շեղագիրը հեղինակինն է):*

> Դուք կարող եք տեսնել Սուրբ Հոգու ընկերակցությունը Պողոսի ամբողջ թիմի հետ, քանի որ Ղուկասը գրում է. «Եվ Փռյուգիան և գաղատացիների երկիրը ման եկան՝ *Սուրբ Հոգուց արգելվելով,* որ Ասիայի մեջ Աստծո Խոսքը չխոսեն: Երբ որ եկան Միսիայի կողմերը, ջանք էին անում, որ գնան դեպի Բյութանիա, և *Հոգին թույլ չտվեց նրանց»* (Գործք 16.6,7, *շեղագիրը հեղինակինն է):*

Ես կարող էի ևս մի քանի օրինակ նշել: Այնուամենայնիվ, նկատի ունեմ, որ Նոր կտակարանի ծառայողները քաջատեղյակ էին Աստծո Հոգու մշտական ընկերակցությունից. Նրա հետ հաղորդակցվելը երբեք վախեցնող կամ արտասովոր երևույթ չէր: Նրանք ակնկալում էին Նրա ներգրավվածությունն իրենց կյանքերում, ինչպես որ մենք կակնկալեինք որևէ անձի ներգրավվածությունը մեր կյանքում, եթե ապրեինք նրա հետ օրը 24 ժամ և շաբաթը 7 օր:

Մարդիկ հարցնում են ինձ, թե արդյո՞ք չեմ ձանձրանում հյուրանոցային համարներից իմ բոլոր ճանապարհորդությունների ընթացքում: Ես պատասխանում եմ. «Անկեղծ ասած, ես երբեք չեմ ձանձրանում դրանցից»: Իրականում, ես եղել եմ աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մի քանիսում և տեսարժան վայրեր այցելելու ոչ մի ցանկություն չեմ ունեցել, քանի որ այնքա՛ն եմ վայելում Նրա ընկերակցությունը, որ չեմ ցանկանում կորցնել այդ ժամանակը: Անցյալում, մինչև որ իրականում հասկանում և վերապրում էի Սուրբ Հոգու ընկերակցությունը, ես վատ տրամադրություն էի ունենում, երբ մենակ էի լինում: Ինձ պետք էր, որ շուրջս մշտապես մարդիկ լինեին: Այժմ ես ձգտում եմ մենության, որպեսզի կարողանամ հեշտորեն լսել Նրան և խոսել Նրա հետ:

Նա փափագում է հաղորդակցվել ձեզ հետ: Մի պահ կա՛նգ առեք. փակե՛ք ձեր աչքերը և մտածե՛ք այն մասին, որ Սուրբ Հոգին ձեր ընկերակիցը կամ ընկերն է: Քանի որ Աստծո Խոսքն ազդարարում է. «Սուրբ Հոգու *շփումը* ձեզ հետ լինի»: Կամ մտորե՛ք սրա շուրջ. «Սուրբ Հոգու *ընկերակցությունը* ձեզ հետ լինի», կամ՝ կրկին. «Սուրբ Հոգու *ընկերությունը* ձեզ հետ լինի»: Թույլ տվեք, որ այս բառերն ընդլայնվեն ձեր սրտում, որպեսզի մտերմության դուռ բացեն ձեր և ձեզ Ստեղծողի միջև:

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երկրորդ սահմանումը՝ *ընկերակցություն* կամ *ընկերական փոխհարաբերություն*, վերաբերում է մտքերի և զգացմունքների փոխանակմանը: Ամենալեցուն պահերը, որոնք անցկացրել եմ իմ մի քանի մտերիմ ընկերների հետ, եղել են այն ժամանակ, երբ մենք զրույցի ենք բռնվել և կիսվել ենք միմյանց հետ մեր սրտի խորը կամ գաղտնի բաներով: Այդ պահերին մենք խոցելի ենք դառնում. մենք կիսվում ենք այնպիսի բաներով, որոնք ինչ-որ մեկը, որն իրականում չի ճանաչում մեզ, կարող

է սխալ հասկանալ կամ, նույնիսկ, ծաղրի ենթարկել: Այնուամենայնիվ, մենք գիտենք, որ դա չի վերաբերում մեր թանկ ընկերներին. նրանք այդպես չեն վարվի, քանի որ ճանաչում են մեր սիրտը և սխալ չեն հասկանա այն, ինչով կիսվում ենք նրանց հետ: Պողոսը բերում է Սուրբ Հոգու հետ նման հարաբերության օրինակ՝ գրելով. «Քրիստոսի ներկայության մեջ ես խոսում եմ բացարձակ ճշմարտացիությամբ՝ ես չեմ ստում, և իմ խիղճը *և Սուրբ Հոգին* հաստատում են, որ այն, ինչ ասում եմ, ճշմարիտ է» (Հռոմ. 9.1, NLT): Սուրբ Հոգին ճանաչում էր Պողոսի սիրտը, նաև Պողոսն էր ճանաչում Նրա սիրտը: Նրանց միջև մտերմություն էր ձևավորվել, քանի որ նրանք կիսվում էին մտքերով և զգացմունքներով իրենց սրտի խորքից:

Կրկին, ահա թե ինչու է Տիրոջ երկյուղն այդքան կարևոր: Տերը չի կիսվի Իր սրտի մտքերով նրանց հետ, ովքեր թանկ չեն համարում դրանք, ինչպես որ մենք չէինք գցի մեր մարգարիտները նրանց առջև, ովքեր կվնասեին դրանք: Պարզ ասած, մենք երբեք չենք կիսվի մեր կյանքի խորը վերապրումներով այնպիսի մարդկանց հետ, որոնք չգիտեն, թե ինչ կա մեր սրտում, և նույնը վերաբերում է Աստծուն:

Հին կտակարանի սրբերից մեկն աղաղակում է. «Կարո՞ղ ես բացահայտել Աստծո խորությունները» (Հոբ 11.7, NKJV): Այնուամենայնիվ, շնորհիվ Սուրբ Հոգու հետ մտերմության այն բաց դռան, որը բերում է Նոր ուխտը, Պողոսը ոգեշնչված գրում է. «Բայց մեզ հայտնեց Աստված *Իր Հոգով,* որովհետև Հոգին բոլոր բաները քննում է, և Աստծո *խորքն* էլ» (Ա Կորնթ. 2.10, *շեղագիրը հեղինակինն է):* Ուշադրություն դարձրեք, որ դա տեղի է ունենում Նրա Հոգով: Նա Աստվածության այն Անձն է, Ով կիսվում է մեզ հետ Աստծո ծածուկ կամ խորը բաներով: Մի՞թե սա չի ոգեշնչում ձեզ:

Այնպես որ, կրկին մի պահ կա՛նգ առեք, փակե՛ք ձեր աչքերը և մտորե՛ք այն փաստի շուրջ, որ Սուրբ Հոգին ցանկանում է

այս տեսակի մտերմություն ձեզ հետ: Նա փափագում է հայտնել ձեզ Իր խորը մտքերը և զգացմունքները, նաև լսել ձերը: Քանի որ Աստծո Խոսքը պնդում է. «Սուրբ Հոգու *մտքերի և զգացմունքների փոխանակումը* ձեզ հետ լինի»:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երրորդ սահմանումը՝ *համագործակցությունը* կամ *համատեղ մասնակցությունը* գեղեցիկ կերպով երևում է Առաջին եկեղեցու առաջնորդների վկայության օրինակից: Նրանք գրեցին իրենց նամակում.

> «Որովհետև Սուրբ Հոգուն և մեզ հաճո երևաց»
> (Գործք 15.28):

Նրանք հստակորեն ցույց տվեցին Սուրբ Հոգու տեսանկյունը, ինչպես նաև իրենցը: Այդ որոշումը կայացվեց համատեղ մասնակցությամբ. նրանք գործակիցներ էին Աստծո թագավորության գործի մեջ: Մենք տեսնում ենք այս օրինակի զուգահեռը Հին կտակարանում, երբ Աստված եկավ Աբրահամի մոտ՝ քննարկելու համար Իր ծրագրերը Սոդոմի վերաբերյալ: Աբրահամին թույլ տրվեց ներկայացնել իր տեսանկյունը, և Աստված վերջնական որոշում կայացրեց՝ Աբրահամի խորհուրդը լսելով:

Մենք տեսնում ենք նույնը մի քանի անգամ նաև Մովսեսի դեպքում: Տերը Իր բարկությամբ պատրաստ էր կործանել Իսրայելի զավակներին, և այդպես էլ կվարվեր, եթե չլիներ Մովսեսի խորհուրդը: Նա հիշեցրեց Աստծուն Իր խոստումների և համբավի մասին: Նման պատմություններից մեկում կարդում ենք, որ Մովսեսի մասնակցության արդյունքում «Տերը փոխեց Իր միտքն այն չարիքի վերաբերյալ, որը Նա ասել էր, որ պատճառելու էր Իր ժողովրդին» (Ելից 32.14, NAS): Եվ Մովսեսը, և Աբրահամն Աստծո գործընկերներն էին. այնուամենայ-

նիվ, նրանք չունեին այն շարունակական հաղորդությունը, որը տրվել է մեզ այսօր՝ համաձայն Նոր Ուխտի պայմանների: Եթե մտածեք դրա վերաբերյալ, դա ապշեցուցիչ է:

Մենք տեսնում ենք պարզ ապացույց այն մասին, որ Սուրբ Հոգին մեր ավագ Գործընկերն է՝ լսելով Եփեսոսի առաջնորդներին ուղղված Պողոսի խոսքերը.

> «Արդ, զգո՛ւյշ կացեք ձեր անձերին և ամբողջ հոտին, որի մեջ *Սուրբ Հոգին* ձեզ վերակացուներ դրեց, որ արածեցնեք *Աստծո* եկեղեցին, որ *Իր արյունով* ստացավ» (Գործք 20.28, *շեղագիրը հեղինակինն է):*

Այս խոսքում հստակ տեսնում ենք Աստվածության Անձերին, որոնք կատարյալ ներդաշնակության մեջ են: *Սուրբ Հոգին* առաջին Անձն է, որի մասին գրված է, և Նա էր, որ վերակացուներ էր դարձրել նրանց: Դրանից հետո գրված է Հոր մասին՝ *«Աստծո եկեղեցին»* արտահայտության մեջ, և վերջապես տեսնում ենք Որդու դերը, քանի որ *Նրա արյունն* էր, որ գնեց մեզ. երեք Անձ, սակայն մեկ Աստված: Սա դժվար է ընկալել. այնուամենայնիվ, կա բնական օրինակ, որը ճշգրտորեն պատկերում է սա: Մենք գիտենք, որ ջուրը երեք վիճակ ունի՝ սառույց, հեղուկ և գոլորշի, սակայն բոլորը մեկ մոլեկուլային կառուցվածք ունեն: Նույնպիսին է Աստվածությունը՝ երեք Անձեր, որոնք, սակայն, կատարելապես մեկ են:

Կրկին, հետաքրքրական է նշել, որ Սուրբ Հոգին Աստվածության այն Անձն էր, Ով կարգել էր այդ առաջնորդներին իրենց պաշտոններում: Սա նույնպես պարզորեն նշվում է այլ եկեղեցու՝ Անտիոքի եկեղեցու դեպքում, որի առաջնորդները փնտրում էին Տիրոջը: Երբ նրանք փնտրում էին Տիրոջը, «Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշե՛ք Բառնաբասին և Սողոսին՝ այն գործի համար, որ Ես նրանց կանչել եմ»»: Դրանից հետո նրանք աղոթեցին այդ երկուսի համար, և գրված է. «Եվ նրանք էլ, *Սուրբ Հոգուց ուղարկված…*» (Գործք 13.2-4, *շե-*

ղագիրը հեղինակինն է): Նա Աստվածության այն Անձն էր, Ով համագործակցում էր այդ մարդկանց հետ՝ Հիսուսին փառավորելու համար:

Այս երկու օրինակներից տեսնում ենք հստակ համագործակցություն, որում Սուրբ Հոգին Առաջնորդն էր կամ գլխավոր Գործընկերը: Ես պետք է կրկին շեշտադրեմ սա. Նա ցանկանում է, որ դուք և ես լինենք Նրա գործակիցները, այո՛, գործընկերներ՝ը: Մենք պարզորեն կարդում ենք այս մասին Կորնթացիներին ուղղված Պողոսի թղթում, երբ Նա գրում է. «Որովհետև մենք Աստծո գործակիցներն ենք» (Ա Կորնթ. 3.9): *«Կից»*-ը նշանակում է, որ մենք *ընկերակից* կամ *օգնական* ենք: Աստվածաշնչի «Ջեյմս թագավորի թարգմանության» մեջ սա ավելի պարզ է գրված. «Որովհետև մենք մշակներ ենք՝ Աստծո հետ միասին»: Զարմանալի՜ է: Կրկին, ես հարցնում եմ. դուք գիտե՞ք այնպիսի ընկերների, որոնք չեն հաղորդակցվում և միասին չեն գործում:

Մի քանի վայրկյան հատկացրե՛ք և մտածե՛ք այն մասին, որ Սուրբ Հոգին ցանկանում է դառնալ ձեր ավագ Գործընկերը: Որովհետև Աստծո Խոսքը պնդում է. «Սուրբ Հոգու *համագործակցությունը* ձեզ հետ լինի» կամ կրկին. «Թող որ Սուրբ Հոգին ձեզ հետ *համատեղ մասնակցություն* ունենա ամեն բանում»:

ՍԵՐՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաջորդ սահմանումը *սերտ հաղորդակցությունն* է: Ես կարող եմ լավագույնս նկարագրել սա այն փորձառություններով, որոնք տարիների ընթացքում ունեցել եմ՝ հանդիպելով Աստծուն ծառայող տղամարդկանց և կանանց: Ես հիշում եմ, երբ առաջին անգամ հանդիպեցի Դոկտոր Դեյվիդ Չոյին, որը հովվում է աշխարհի ամենամեծ եկեղեցիներից մեկը Սեուլում՝ Կորեայում: Դա նրա առաջին այցն էր մեր եկեղեցի: Այդ ժամանակ ես հովվի օգնական էի, և իմ պարտականությունն էր

նրան մեքենայով տեղափոխելը նրա այցի ընթացքում: Ես մի քանի տարի էր՝ կատարում էի այդ ծառայությունը. այնպես որ, դրանից առաջ օդանավակայանից դիմավորել էի շուրջ հարյուր ծառայողի, քանի որ մեր եկեղեցում շատ ծառայողներ էին հյուրընկալվում: Այնուամենայնիվ, այս անգամ ամեն ինչ այլ էր լինելու, քանի որ, երբ նա առաջին անգամ նստեց իմ մեքենան, Տիրոջ ներկայությունը պատեց այն: Ես անմիջապես սկսեցի արտասվել. արցունքները հոսում էին այտերովս: Ես շատ լուռ էի, քանի որ չէի ցանկանում խանգարել նրան ծառայություն անցկացնելուց առաջ, սակայն զգացի, որ պետք է խոսեի: Ես ասացի զգաստ և մեղմ. «Դոկտոր Չո՛, Աստված այստեղ է՝ մեր մեքենայում»: Նա ժպտաց և գլխով արեց:

Հետագայում ես մտածում էի, թե որքան էր այդ մարդը գրել և քարոզել այն հաղորդության մասին, որը վայելում էր Սուրբ Հոգու հետ: Ես հիշեցի այլ ծառայողների, որոնց դիմավորել էի տարիների ընթացքում, որոնք նույնպես շեշտադրում էին սերտ հարաբերությունը Սուրբ Հոգու հետ և ապրում էին դրանով: Թեև ես գրեթե հարյուր ծառայողի էի տեղափոխել իմ մեքենայով, կային միայն մի քանիսը, որոնց կարող եմ հիշել, որոնց հանդիպելիս ես անմիջապես վերապրում էի Սուրբ Հոգու ներկայությունը: Նրանցից մեկը մի կին էր՝ Ջին Վիլկերսոնը. այդ ծառայողը տարիներ էր անցկացրել բարեխոսական աղոթքի մեջ, և նա արդեն Տիրոջ մոտ է: Երբ նա նստեց մեր եկեղեցու մեքենան, և դա առաջին անգամն էր, երբ հանդիպում էի նրան, իմ բերանը ամբողջ ճանապարհին երևի թե բաց էր մնացել՝ երկյուղածության զգացումից: Ես հազիվ էի կենտրոնանում մեքենա վարելու վրա: Ես գիտակցեցի, որ գտնվում էի մի կնոջ ներկայության մեջ, որը ոչ միայն գիտեր Աստծո մասին, այլև իսկապես մտերմորեն ճանաչում էր Նրան: Նա շատ էր խոսում Սուրբ Հոգու մասին, և Նրա ներկայությունն ակնհայտ և ազդեցիկ էր ամեն անգամ, երբ այդ կնոջ կողքին էի:

Վերջերս քարոզեցի չորս հազար անդամ ունեցող մի եկեղեցում, որը Միացյալ Նահանգների միջին արևմուտքում է: Ես քարոզեցի Սուրբ Հոգու մասին կիրակի առավոտյան ծառայությանը, և այդ օրվա երեկոյան ծառայությանը պետք է ամբիոնի մոտ բարձրանայի հավաքույթի սկզբից քառասունհինգ րոպե անց: Այնուամենայնիվ, ես կարողացա վերցնել միկրոֆոնը միայն երկու ժամ անց, քանի որ Սուրբ Հոգին այլ ծրագրեր ուներ: Նա ծառայեց բազմաթիվ մարդկանց. դա զարմանալի էր: Ի վերջո, մինչև որ ես ամբիոնի մոտ բարձրացա, այդ եկեղեցու հովիվը, որը մեղմ և թույլ տղամարդ չէ (նա կարող է հրում կատարել ավելի, քան 230 կիլոգրամով՝ պառկած դիրքից), մոտեցավ ինձ՝ արցունքներն աչքերին, և ասաց.

- Ջո՛ն, իմ հովվության ութ տարիներին այս եկեղեցում, ես երբեք այսքան ուժգին չեմ զգացել Աստծո ներկայությունը:

Ես անմիջապես պատասխանեցի.

- Պատճառն այն է, որ այսօր առավոտյան մենք խոսեցինք Սուրբ Հոգու մասին, և երբ ինչ-որ մեկը խոսում է Նրա մասին, Նա հայտնում է Իրեն:

Այս սերտ հաղորդակցությունը կարելի է տեսնել ամուսնությունների մեջ: Որոշ տղամարդ ծառայողներ հաճախ են խոսում իրենց կանանց մասին: Նրանք հաճախ են հիշատակում նրանց իրենց ուղերձների մեջ, ինչպես նաև խոսակցությունների ժամանակ, երբ իրենց կանայք ներկա չեն: Նրանք հաճախ են միասին լինում, ոչ միայն տանը, այլև հանրության առջև: Եվ մտածելով այդ ծառայողի մասին՝ դուք նույնպես մտածում եք նրա կնոջ մասին (նույնը վերաբերում է կին ծառայողներին): Ինձ հաճախ են հարցնում Լիզայի մասին, երբ նա ինձ հետ չէ, քանի որ ես հաճախ եմ խոսում և գրում նրա մասին: Այնուամենայնիվ, կան այլ ծառայողներ, որոնք, թեև ամուսնացած են, հազվադեպ են խոսում իրենց կանանց մասին, և նրանց հազվադեպ կարելի է միասին տեսնել: Երբ հիշատակվում են նման ծառայողների անունները, դուք անմիջապես չեք մտածում նրանց կանանց մասին:

Նույնը ճշմարիտ է Սուրբ Հոգու դեպքում: Կան որոշ ծառայողներ, որոնք սերտորեն հաղորդակցվում են Սուրբ Հոգու հետ: Խոսելով նրանց մասին՝ դուք մտածում եք Սուրբ Հոգու մասին, քանի որ այդ տղամարդիկ և կանայք գիտակցաբար ծառայում են՝ որպես Նրա կրտսեր գործընկերներ, և շարունակ արտահայտում են իրենց գոհությունը Նրանից: Այդ պատճառով, Նա հայտնում է Իրեն նրանց ծառայության մեջ: Արդյունքում՝ Հիսուսն ավելի մեծ պատիվ է ստանում, քանի որ Աստծո Հոգին փառավորում է Հիսուսին:

Սուրբ Հոգին ցանկանում է սերտորեն հաղորդակցվել ձեզ հետ: Եթե դուք պատվեք Նրան, Նա կհայտնի Իրեն. եթե ոչ, կլինի գրեթե նույնը, ինչ այն ծառայողի դեպքում, որը մտերիմ չէ իր կնոջ հետ, որի հետ տարիներ շարունակ ամուսնացած է: Այդ ծառայողը և նրա կինը հեռվացած կլինեն ոչ միայն իրենց ամուսնության մեջ, այլև հանրության առջև: Այնպես որ, մտորեք հետևյալի շուրջ. «Սուրբ Հոգու *սերտ հաղորդակցությունը* ձեզ հետ լինի»:

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ

Վերջին սահմանումը մեր ցուցակում *«մտերմություն»* բառն է: Այն «հաղորդություն» բառի լավագույն սահմանումն է, քանի որ ամփոփում է մեր քննարկած նախորդ չորս կետերը միասին: Իրականում, *«հաղորդություն»* բառի *«Վեբսթերի բառարանի»* սահմանումներից մեկն է. *«մտերիմ շփում կամ ներդաշնակ հարաբերություններ. հաղորդակցություն»:* Մտերմությունը կարող է ձևավորվել միայն հաղորդակցության միջոցով, որն ամուր ընկերության պայմանն է: Նոր կտակարանի թարգմանություններից մեկում գրված է. «Սուրբ Հոգու մտերիմ ընկերությունը բոլորիդ հետ լինի» (*«Ուղերձ» թարգմանություն):*

Կրկին, այս ամենը հանգում է ընկերությանը, քանի որ այն հաղորդության վերջնական նպատակն է: Աստծո Հոգին ցանկանում է լինել ձեր ընկերը: Նա ձգտում է շփվել ձեզ հետ: Նա

ցանկանում է սովորեցնել ձեզ այն, ինչ Ինքը գիտի, իսկ Նրա գիտելիքն անսահման է: Նա Աստված է. չկա ոչինչ թաքնված կամ առեղծվածային Նրա համար: Չկա այնպիսի բան, ինչ Նա չգիտի: Ինչպես Եսային է գրում.

> «Ո՞վ ուղղություն տվեց *Տիրոջ Հոգուն* կամ, որպես Նրա խորհրդական, տեղեկություն հայտնեց: Ո՞ւմ հետ Նա խորհրդակցեց, և ո՞վ հասկացողություն տվեց Նրան: Եվ ո՞վ խրատեց Նրան արդարության ճանապարհում և գիտելիք սովորեցրեց Նրան, և ցույց տվեց Նրան ըմբռնողության ճանապարհը» (Եսայի 40.13,14, NASB, *շեղագիրը հեղինակինն է):*

Պատասխանն է՝ ոչ ոք, որովհետև Նա Աստված է:

Ես կկրկնեմ սա. Նա Աստվա՛ծ է: Նրա իմաստությունը, գիտելիքը և հասկացողությունը անսահման են, և Նա փափագում է սովորեցնել ձեզ այն, ինչ Ինքը գիտի: Մտածե՛ք այս մասին. երբ դուք ինչ-որ արժեքավոր բան գիտեք, դուք ձգտում եք պատմել այդ մասին այն մարդկանց, որոնք մոտ են ձեզ, և որոնց դուք սիրում եք: Սա վերաբերում է նաև Նրան: Նա ցանկանում է կիսվել ձեզ հետ այն ամենով, ինչ Ինքը գիտի: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է հասանելի ձեզ: Հնարավո՞ր է, որ դուք բաց եք թողել այնպիսի բաներ, որոնք անհրաժեշտ են ձեզ, քանի որ դուք չեք ձգտել Աստվածության այն Անձին, Ով բնակվում է ձեզանում: Հնարավո՞ր է, որ դուք փորձել եք կառուցել ձեր հարաբերությունը Հիսուսի հետ՝ առանց Սուրբ Հոգու:

Չափազանց հաճախ շատերը եկեղեցում փորձում են մոտենալ Հիսուսին՝ առանց կառուցելու մտերիմ հարաբերություն Սուրբ Հոգու հետ: Վերջերս խորհում էի սրա շուրջ և մտածեցի, որ Հիսուսի երկրային ծառայության օրերին հրեաները հաճախ ցանկանում էին հարաբերություն կառուցել Աստծո հետ՝ առանց Հիսուսի: Նրանք, օրինակ, ասում էին. «Մենք անօրինական զավակներ չենք... միակ Հայրը, որ ունենք, Ինքը՝

Աստված է» (Հովհ. 8.41, NIV), և «Մենք Մովսեսի աշակերտներն ենք: Մենք գիտենք, որ Աստված Մովսեսի հետ խոսեց» (Հովհ. 9.28,29): Նրանք վստահ էին Աստծո հետ իրենց հարաբերության մեջ, որն իրականում չունեին: Նրանց վստահությունը բխում էր այն փաստից, որ գիտեին Նրա Խոսքը (Սուրբ Գիրքը), որը տրվել էր Մովսեսի միջոցով: Սակայն մի՞թե այդպես էր: Նրանք հրաժարվեցին ընդունել հենց այդ Խոսքը, որը մարմին էր դարձել և գտնվում էր իրենց մեջ:

Նույն կերպով, այսօր շատ հավատացյալներ ցանկանում են հարաբերություն կառուցել Հիսուսի հետ՝ առանց Սուրբ Հոգու: Այնուամենայնիվ, Նա է, Ով մեր մեջ է, և ոչ ոք չի կարող ճանաչել Հիսուսին՝ առանց Նրա: Իրավիճակը բարդանում է այն բանով, որ մենք կարող ենք ավելի հեշտ անարգել Աստծո Հոգուն, քան հրեաները՝ Հիսուսին, քանի որ Նա ներկա չէ մարմնով և արյամբ, ինչպես որ Հիսուսն էր:

Հիսուսն ասաց. «Եթե դուք իրականում ճանաչեիք Ինձ, Իմ Հորն էլ կճանաչեիք» (Հովհ. 14.7, NIV): Հիսուսը պարզապես նկատի ուներ. «Հայրն այստեղ չէ. Նա Երկնքում է, բայց եթե դուք ճանաչեք Ինձ, դուք կճանաչեք Իմ Հորը, որովհետև Մենք մեկ ենք»: Նույնը վերաբերում է Սուրբ Հոգուն: Հիսուսն այլևս այստեղ չէ. Նա Երկնքում է: Այնուամենայնիվ, եթե դուք ճանաչեք Սուրբ Հոգուն, դուք կճանաչեք Հիսուսին, քանի որ Նրանք մեկ են: Ահա թե ինչու է Սուրբ Հոգին նաև հայտնի որպես «Քրիստոսի Հոգի» (Ա Պետր. 1.11, Հռոմ. 8.9):

ՈՒՐԻՇԸ՝ ՃԻՇՏ ԻՆՁ ՆՄԱՆ

Անմիջապես Իր աշակերտներից հեռանալուց առաջ Հիսուսն ասաց նրանց.

> «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք: Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան: Ճշմարտության Հոգին, Ում

աշխարհը չի կարող ընդունել, որ չի տեսնում Նրան, և ոչ էլ ճանաչում է Նրան: Բայց դուք Նրան ճանաչում եք, որովհետև ձեզ մոտ է մնում և ձեզ հետ կլինի: Ձեզ որբ չեմ թողնի. կգամ ձեզ մոտ» (Հովհ. 14.15-18):

Այս մի քանի խոսքերում այնքա՜ն շատ բան է ասվում: Առաջինը՝ կրկին ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը խոսում է հնազանդության մասին՝ «Իմ պատվիրանները պահե՛ք», որից հետո Նա ասում է. «Եվ Ես Հորը կաղաչեմ, և» Սուրբ Հոգու ընկերակցությունը «կտա ձեզ»: Նա ուղղակիորեն կապակցում է Սուրբ Հոգուն ընդունելը Իր Խոսքին հնազանդվելու, այսինքն՝ Տիրոջ երկյուղի հետ: Պետրոսը հաստատում է սա՝ ասելով. «Եվ մենք Նրա վկաներն ենք այս բաների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստված *Իրեն հնազանդվողներին տվեց»* (Գործք 5.32, *շեղագիրը հեղինակինն է):* (Կրկին, ուշադրություն դարձրե՛ք համագործակցության վրա. նշվում են երկու վկաներ՝ աշակերտները և Սուրբ Հոգին): Պետրոսը գրում է, որ Աստված տալիս է Սուրբ Հոգուն *նրանց, ովքեր հնազանդվում են Իրեն:* Այնպես որ, կրկին, մտերմության հիմքը Տիրոջ երկյուղն է: Ինչո՞ւ մենք ավելի պատրաստակամորեն չենք քարոզել այս մասին մեր ուղերձներում:

Վերադառնալով Հովհաննեսի 14-րդ գլխին, Հիսուսն ասում է, որ Հայրը կտա նրանց, ովքեր Աստծո երկյուղն ունեն, *«ուրիշ* Մխիթարիչի»: Կան երկու հունարեն բառեր, որոնք Նոր կտակարանում թարգմանվում են *«ուրիշ»* բառով: Ուսումնասիրելով դրանք՝ մենք ավելին կիմանանք Սուրբ Հոգու մասին: Առաջինը հունարեն *«ալլոս»* բառն է, որը նշանակում է «ուրիշ՝ նույն տեսակի»: Հաջորդը հունարեն *«հետերոս»* բառն է, որը նշանակում է «ուրիշ՝ այլ տեսակի»:

Կարելի է բերել հետևյալ օրինակը՝ այս բառերի տարբերությունը պատկերելու համար: Օրինակ, դուք միրգ եք խնդրում, և ես դեղձ եմ տալիս ձեզ: Այն ուտելուց հետո դուք

խնդրում եք ևս մեկ հատ, և ես խնձոր եմ տալիս ձեզ: Ես իսկապես ևս մեկ միրգ տվեցի ձեզ, բայց՝ այլ տեսակի: Այնուամենայնիվ, եթե ես ևս մեկ դեղձ տայի ձեզ, այն կլիներ նույն տեսակի՝ ճիշտ այնպիսին, ինչպիսին արդեն տվել էի: Ահա տարբերությունը *«հետերոս»* և *«ալլոս»* բառերի միջև:

Հիսուսն օգտագործում է հունարեն *«ալլոս»* բառը. ուրիշը՝ *նույն տեսակի:* Հիսուսը նկատի ունի. «Սուրբ Հոգին ճիշտ Ինձ նման է»: Իրականում, «Մխիթարիչ» բառը թարգմանված է հունարեն *«պարակլետոս»* բառից: Այս բառը կազմված է երկու բառերից. *«պարա»* բառը նշանակում է «կողքին», և *«կալեոո»* բառը նշանակում է «կանչել»: Այսպիսով, *«պարակլետոս»* բառը նշանակում է *«նա, որը կանչված է մյուսի կողքին՝ նրան օգնելու համար»:* Այս բառը սկզբնականորեն օգտագործվում էր դատարանում՝ իրավական հարցերով օգնականի, պաշտպանության խորհրդատուի, դատապաշտպանի իմաստով, իսկ հետագայում ընդհանուր առմամբ նշանակում էր «մարդ, որը պաշտպանում է մյուսի գործը, բարեխոս կամ սատարող»: Հետաքրքրական է, որ այս բառն օգտագործվում է միայն մեկ անգամ առաքյալների թղթերում, և այն մատնանշում է Հիսուսին (տե՛ս Ա Հովհ. 2.1): Այնպես որ, ինչպես Հիսուսն է հավիտյան ապրում՝ մեր դատապաշտպանը կամ բարեխոսը լինելու, այնպես էլ Սուրբ Հոգին է մեր դատապաշտպանը: Նա կանչված է լինելու մեր կողքին՝ մեզ օգնելու համար:

Հիսուսն ասում էր Իր աշակերտներին. «Նա կլինի ձեզ հետ ճիշտ այնպես, ինչպես որ Ես եմ եղել ձեզ հետ»: Ես հաճախ եմ լսում մարդկանցից. «Երանի՜ կարողանայի զբոսնել Հիսուսի հետ. ես այնքա՜ն հարցեր կտայի Նրան»: Մի՞թե: Նման պնդումն ընդամենը ցույց է տալիս, որ այդ մարդիկ չունեն մտերմություն Սուրբ Հոգու հետ: Եթե նրանք չեն շփվում Աստծո Հոգու հետ, ի՞նչն է դրդում նրանց մտածել, որ նրանք այլ կերպ կվարվեին Հիսուսի հետ: Իրականում, Հիսուսը մի ապշեցուցիչ պնդում արեց.

«Բայց Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ» (Հովհ. 16.7):

Մինչև որ ավարտեմ Նրա պնդումը, թույլ տվեք նշել, որ այս նախաբանը մշտապես զարմացրել է ինձ: Նա երեք ու կես տարի նրանց հետ էր: Նա երբեք ոչ մի սուտ չէր ասել և ոչ մի մոլորեցնող միտք չէր տվել նրանց: Այն ամենը, ինչ ասել էր նրանց այդ տարիների ընթացքում, մշտապես կատարվել էր: Այնուամենայնիվ, այն, ինչ Նա հայտնելու էր նրանց, այնքա՛ն ապշեցուցիչ էր, որ Նա ստիպված էր նախորդել Իր խոսքերը հետևյալով. «Տղանե՛ր, այն, ինչ Ես ասելու եմ, սուտ չէ, այլ ճշմարտությո՛ւնն է»: Շարունակենք կարդալ այս ապշեցուցիչ պնդումը.

> «Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, թե՝ լավ է ձեզ համար, որ Ես գնամ, որովհետև եթե չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. 16.7):

Մի պահ կանգ առեք և մտածե՛ք այս մասին: Նա ասաց, որ նրանց համար ավելի լավ էր, որ Ինքը գնար: Այժմ կարող եք հասկանալ, թե ինչու Նա պետք է սկսեր այս պնդումը «Տղանե՛ր, Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ» խոսքերով: Այն ընթացքում, երբ Հիսուսը նրանց հետ էր, Նա սովորեցրել էր նրանց ամենախորը բաները Աստծո թագավորության մասին, որ մարդը երբևէ լսել էր: Նա բժշկում էր նրանց հիվանդներին, հարություն էր տալիս նրանց մահացածներին, հանում էր տանջահար անող հոգիները, փակում էր նրանց հաշիվները և վճարում հարկերը, և սա միայն սկիզբն էր: Այնուամենայնիվ, Նա ասաց՝ ձեզ համար ավելի լավ է, որ Ես գնամ: Ինչո՞ւ: Նրա պատասխանն էր, որ եթե Նա գնար, կուղարկեր մեզ Մխիթարիչին կամ Օգնականին:

Մտածե՛ք այս մասին. եթե Հիսուսը մնար երկրի վրա, և մենք ցանկանայինք շփվել Նրա հետ և հարցեր տալ, մենք ստիպ-

ված կլինեինք Թել Ավիվ ուղևորվող ինքնաթիռ նստել, հետո մեքենա վարձել, հասնել Գալիլեայի գյուղական հատվածը և գտնել Նրան: Դա չափազանց դժվար չէր լինի, քանի որ Նրա շուրջը հազարավոր մարդիկ կլինեին: Այնուամենայնիվ, կարիք կլիներ սպասել, մինչև որ ձեզնից առաջ եկած հազարավոր մարդիկ հեռանային, որպեսզի կարողանայիք հասնել բազմության մեջտեղը, որտեղ որ Նա էր: Բայց նույնիսկ այդ ժամանակ դուք ստիպված կլինեիք սպասել, որովհետև Պետրոսն այնքան շատ էր խոսում, որ միջամտելու էր բոլոր խոսակցություններին: Բացի նրանից, այդտեղ էին լինելու Հակոբոսը և Հովհաննեսը՝ որոտման որդիները, որոնք նույնպես լուռ չէին մնալու, ինչպես նաև մյուս աշակերտները, որոնք սպասելու էին հնարավորության, որ հարցնեին այն, ինչ իրենց սրտում էր: Այդ ամենի հետ մեկտեղ, Հիսուսը պետք է քներ վեցից ութ ժամ գիշերը, հոգար Իր անձնական կարիքները և պարբերաբար սնվեր:

Այնուամենայնիվ, Սուրբ Հոգու բնակությունը մեր ներսում հրաշալի է այն բանով, որ Նա քնելու կարիք չունի: Դուք կարող եք խոսել Նրա հետ օրվա կամ գիշերվա ցանկացած պահին և կարիք չկա, որ սպասեք, որ մյուսները վերջացնեն: Նրա ամբողջական և անհատական ուշադրությունը մշտապես ձեզ է պատկանում: Իրականում, տասը հազար մարդ կարող է միաժամանակ մտերմորեն հաղորդակցվել Նրա հետ: Նա կարող է անձնապես հաղորդակցվել բոլորիս հետ, ովքեր քաղց ունեն Նրա հանդեպ: Բայց սա դեռ ավարտը չէ. ամեն ինչ ավելի հրաշալի է, քանի որ Հիսուսը շարունակում է.

> «Կա ավելին, ինչ Ես ուզում եմ պատմել ձեզ, բայց դուք չեք կարող կրել դա հիմա: Երբ ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ ամբողջ ճշմարտության մեջ: Նա չի ներկայացնի Իր գաղափարները. Նա կպատմի ձեզ այն, ինչ լսել է: Նա կպատմի ձեզ ապագայի մասին:

Նա փառք կբերի Ինձ՝ հայտնելով ձեզ այն, ինչ ստանում է Ինձնից: Այն ամենը, ինչ Հայրն ունի, Իմն է. ահա թե ինչ նկատի ունեմ, երբ ասում եմ, որ Հոգին կհայտնի ձեզ այն, ինչ Նա ստանում է Ինձնից» (Հովհ. 16.12-25, NLT):

Երբ Սուրբ Հոգին խոսում է մեզ հետ, ըստ էության, մեզ հետ խոսում է Հիսուսը, որն իրականում Հոր Խոսքն է՝ ուղղված մեզ: Այո՛, թեև Նրանք երեք տարբեր Անձեր են, յուրաքանչյուրը՝ Իր մտքով, կամքով և զգացմունքներով, Նրանք բացարձակապես մեկ են: Դուք երբեք չեք գտնի տարաձայնություններ Նրանց միջև, և մշտապես կտեսնեք, որ նրանք մեկ են՝ նպատակով, ծրագրով և կամքի գործադրմամբ: Հիշե՛ք Աստվածաշնչի պարզ հռչակումը. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Տեր Աստվածը՝ Տերը, մեկ է» (Երկր. Օր. 6.4):

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵՔ ՄԱԿԱՐԴԱԿ

Նախորդ աստվածաշնչյան հատվածում Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ կա ավելին, որ ցանկանում էր հայտնել նրանց, բայց նրանք չէին կարողանա կրել այդ բաները: Նրանք չէին կարողանա ընկալել Աստծո ավելի ծածուկ և մտերիմ իրողությունները՝ իրենց բնական զգայարաններով:

Հիշեք, թե ինչ տեղի ունեցավ, երբ Հիսուսը հարություն առավ մեռելներից. Նա հայտնվեց Իր աշակերտներից տասին, և Թովմասը նրանց հետ չէր: Լսելով, թե ինչպես էին մյուս աշակերտները վկայում Հիսուսի կենդանի լինելու մասին, Թովմասն ասաց. «Եթե Նրա ձեռքերում բևեռների նշանը չտեսնեմ, և իմ մատը չդնեմ բևեռների տեղը, և իմ ձեռքը չկոխեմ Նրա կողը, չեմ հավատա» (Հովհ. 20.25):

Որոշ ժամանակ անց Հիսուսը հայտնվեց նրանց, երբ բոլորը միասին էին: Հիսուսն անմիջապես պատվիրեց Թովմասին դնել մատն Իր ձեռքի մեջ, և ձեռքը՝ Իր կողի մեջ, և հավատալ:

Այդ ժամանակ Թովմասն աղաղակեց. «Իմ Տե՛ր և իմ Աստվա՛ծ»: Ի պատասխան, Հիսուսը մի բան ասաց Թովմասին, ինչը երկար ժամանակ չէի հասկանում:

> «Որովհետև տեսար Ինձ, հավատացիր. Երանի՜ նրանց, որ չեն տեսել և հավատում են» (Հովի. 20.29):

Ինձ թվում էր, թե Հիսուսը մի փոքր խիստ վարվեց Թովմասի հետ, քանի որ Նա բավականաչափ չհուսադրեց Թովմասին այն բանից հետո, երբ նա արդեն ապաշխարել էր և բացականչել. «Իմ Տե՛ր և իմ Աստվա՛ծ»: Իմ կարծիքը սխալ էր՝ իմ անտեղյակության և ոչ ճշգրիտ ըմբռնման պատճառով: Ավելի ուշ Սուրբ Հոգին լույս սփռեց այն բանի վրա, թե ինչ Հիսուսը նկատի ուներ: Հիսուսը խիստ չվարվեց Թովմասի հետ. փոխարենը, Նա մի փաստ արձանագրեց: Հիսուսը պարզապես նկատի ուներ, որ իրենց բնական զգայարաններով Իրեն ճանաչող մարդիկ երբեք չեն կարողանա ճանաչել Իր Անձն այն խորությամբ, որն ունեն իրենց հոգով Իրեն ճանաչող մարդիկ. այդ պատճառով էլ, երկրորդ խմբին պատկանող մարդիկ ավելի օրհնված են:

Մտածե՛ք Պողոս առաքյալի մասին: Նա երբեք չէր վարվել Հիսուսի հետ, ինչպես Պետրոսը և մյուսները. փոխարենը, նա ճանաչել էր Հիսուսին՝ Սուրբ Հոգու հայտնությամբ: Նա գրեց հետևյալը.

> «Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն Ավետարանը, որ ինձնից ավետարանվեց, որ նա մարդուց չէ: Որովհետև ես էլ ո՛չ մարդուց առա այն, և ո՛չ էլ սովորեցի, այլ՝ Հիսուս Քրիստոսի հայտնությամբ... Բայց երբ որ բարեհաճեց Աստված, որ իմ մոր որովայնից ինձ որոշել և Իր շնորհքով կանչել է, որ Իր Որդին ինձանով հայտնի, որ Նրան հեթանոսների մեջ ավետարանեմ, այն ժամանակ իսկույն մարմնի և արյան հետ խորհուրդ չարեցի, և

ոչ էլ գնացի Երուսաղեմ՝ նրանց մոտ, որ ինձնից առաջ առաքյալներ էին, այլ գնացի Արաբիա և կրկին դարձա Դամասկոս» (Գաղատ. 1.11-17):

Ժամանակի ընթացքում Պողոսը կարողացավ ավելի խորը հարաբերություն կառուցել Տիրոջ հետ՝ այնպիսին, որին սկզբնական առաքյալներից ոչ ոք չհասավ: Պետրոսը նույնիսկ նշեց այս փաստը՝ գրելով.

«Սա այնպես է, ինչպես որ մեր սիրելի եղբայր Պողոսը գրեց ձեզ՝ այն իմաստությամբ, որ Աստված տվել է նրան, խոսելով այս բաների մասին իր բոլոր նամակներում: *Նրա մեկնաբանություններից մի քանիսը դժվար է հասկանալ»* (Բ Պետրոս 3.15,16, NLT, *շեղագիրը հեղինակինն է):*

Զարմանալի է: Պետրոսը երեք ու կես տարի շարունակ հաղորդակցվել էր անձամբ մարմնավորված Տիրոջ հետ, իսկ Պողոսը՝ երբեք, սակայն Պողոսը կիսվում էր այնպիսի իմաստությամբ՝ Հիսուսի բնության և ճանապարհների մասին, որ նույնիսկ Պետրոսն էր դժվարանում հասկանալ: Ինչո՞ւ: Քանի որ ավելի քան հավանական է, որ Պետրոսը մշտապես ապրում էր իր տեսածի և լսածի մասին հիշողություններով, և դա թույլ չէր տալիս նրան ավելի խորը մտերմանալ Հիսուսի հետ: Ահա թե ինչու Հիսուսն ասաց. «Կա շատ ավելին, որ Ես ուզում եմ հայտնել ձեզ, բայց դուք չեք կարող կրել դա հիմա: Երբ ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ»:

Որպես ոչ լիարժեք օրինակ (խնդրում եմ, հաշվի առեք, որ այս օրինակը լիովին չի արտացոլում այս սկզբունքը, սակայն կօգնի ավելի պարզ հասկանալ այն), կարող են լինել մարդիկ, որոնք սիրահարվում են համացանցով՝ առանց, նույնիսկ, իրար անձամբ հանդիպելու: Սա հաճախ է տեղի ունենում, և այս սերը հեշտորեն կարող է դառնալ շատ ավելի ուժգին, քան

այն մարդկանց սերը, որոնք անձամբ ճանաչում են միմյանց:

Որպեսզի ցույց տամ, թե որքան ուժգին դա կարող է լինել, ես կպատմեմ մի դեպք, երբ դա նույնիսկ ամուսնություն է կործանել: Հիշում եմ, որ մի երեկոյան հավաքույթից հետո ես մոտեցա մի տղամարդու, որը խիստ մտահոգված տեսք ուներ: Նրա գրկին երկու փոքրիկ երեխաներ էին: Ես մտահոգված հարցրի.

- Ամեն ինչ լա՞վ է:

- Ո՛չ,- ասաց նա,- վերջերս կինս թողել է ինձ և գնացել է մի տղամարդու մոտ, որի հետ ծանոթացել է համացանցով:

Նա պատմեց, որ իր կինը թողել էր ոչ միայն իրեն, այլև իրենց վեց երեխաներին՝ մի տղամարդու համար, որին երբեք անձամբ չէր հանդիպել: Նրանք խորապես սիրահարվել էին համացանցով, և այդ զգացումն այնքան ուժգին էր, որ նա նույնիսկ թողել էր իր երեխաներին:

Վերադառնալով դրականին՝ ժամանակի ընթացքում ես նկատել եմ, որ զույգերը, որոնք սիրահարվում են հեռավար շփման միջոցով, երբեմն մտերմության ավելի խորը մակարդակ են ձևավորում, քան մշտապես ժամադրվող զույգերը: Պատճառը կրկին այն է, որ նրանք կարողացել են գերազանցել ֆիզիկական մակարդակը և մտերմացել են իրենց անձերով: Շատ հաճախ ժամադրվող զույգերը կլանվում են հարաբերությունների ֆիզիկական կողմով, և գեղեցկությունը կամ արտաքին շարժուձևը կուրացնում է նրանց՝ թույլ չտալով տեսնել իրական անձը:

Ինչպես նշեցի նախորդ գլխում, ինչպես որ գոյություն ունի հաղորդակցման երեք մակարդակ՝ խոսքը, գործը և սիրտը, այնպես էլ գոյություն ունի հարաբերությունների կամ միմյանց ճանաչելու երեք մակարդակ: Ամենացածրը բնական կամ ֆիզիկական մակարդակն է: Դժբախտաբար, սա այն մակարդակն է, որը սկիզբ է դնում բազմաթիվ ամուսնությունների, և երբ ֆիզիկական գործոնը կորցնում է փայլը, ամուսինները

մեկուսանում են իրարից: Ամուսինը հաճախ կլանվում է սպորտով, նախասիրություններով, ծառայությամբ և այլն, իսկ կինը տարվում է գնումներով, ընկերուհիներով, ծառայությամբ և այլն: Սա այնքա՛ն ցավալի է:

Հաջորդը շնչավոր կամ անձնային մակարդակն է: Սա այն մակարդակն է, որում Դավիթը և Հոնաթանը սերտորեն կապված էին: Գրված է. «Հոնաթանի անձը կապվեց Դավթի անձին» (Ա Թագ. 1.81, NKJV): Դավիթը, սգալով նրա մահը, բացականչեց. «Ցավո՛ւմ եմ քեզ համար, եղբա՛յրս, Հոնաթա՛ն, դու ինձ խիստ սիրելի էիր. բարձր էր ինձ համար քո սերը՝ կանանց սիրուց» (Բ Թագ. 1.26): Դավիթը երբեք չէր ունեցել որևէ այլասերված հարաբերություն Հոնաթանի հետ. նրանց միջև բոլորովին չկար որևէ ֆիզիկական հրապուրանք: Նրանք կապված էին ավելի խորը մակարդակով, քան ֆիզիկականը, և դա երևում էր այն պնդումից, որ Հոնաթանի սերն ավելի լավ էր կնոջ սիրուց: Նրանց փոխադարձ ճանաչողությունն անձի մակարդակի վրա էր, որն ավելի բարձր մակարդակ է: Գիտելիքն այն մասին, որ անձնային հարաբերությունների մակարդակն ավելի բարձր է, քան ֆիզիկականը, բացատրում է, թե ինչու ոմանք կարող են թողնել իրենց ընտանիքները՝ հետևելով այնպիսի մարդկանց, որոնց հետ նրանք շփվել են միայն հեռախոսով, նամակագրությամբ կամ համացանցով:

Այնուամենայնիվ, ինչ-որ մեկին ճանաչելու բարձրագույն մակարդակը հոգևորն է: Ահա թե ինչու է Պողոսը գրում.

> «Հոգին բոլոր բաները քննում է, և Աստծո խորքն էլ: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու բաները, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրանում է: Այնպես էլ Աստծո բաները ոչ ոք չգիտի, եթե ոչ՝ Աստծո Հոգին: Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է...» (Ա Կորնթ. 2.10բ-12):

Սա այն մակարդակն է, որով Պողոսը ճանաչեց Հիսուսին: Թեև Պետրոսը նույնպես ճանաչեց Հիսուսին այս մակարդակով, նա, ամենայն հավանականությամբ, ժամանակ առ ժամանակ անդրադառնում էր իր հիշողություններին այն ժամանակվա մասին, երբ նա ճանաչել էր Հիսուսին մյուս մակարդակներով, երբ նրանք միասին հաղորդակցվում էին մարմնով: Այս պատճառով Պողոսը պարզորեն նշում է.

> «Ուրեմն, այսուհետև մենք ոչ ոքի չգիտենք մարմնի կողմից, ու թեև Քրիստոսին էլ գիտեինք մարմնի կողմից, այլ հիմա այլևս չգիտենք» (Բ Կորնթ. 5.16):

Եթե ցանկանում ենք հասնել Աստծուն մտերմորեն ճանաչելու մակարդակին, պետք է գիտակցենք, որ մեծագույն օրհնությունը, որը Նա տվել է մեզ, Իր Անձը մեզ ոչ թե մարմնով, այլ Իր Հոգով հայտնելն է:

Զարմանալի՜ է: Դուք ոգեշնչվո՞ւմ եք, ինչպես որ ես: Ինչպիսի՜ զարմանալի Տիրոջ ենք մենք ծառայում: Նա փափագում է խորապես հայտնել Իր Անձը մեզ: Նա է, որ առաջինը ցանկացավ այս մտերմությունը: Արդյո՞ք այս պահին ձեր սիրտն աղաղակում է՝ ցանկանալով նույնը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Դուք երբևէ աղոթե՞լ եք՝ խնդրելով Աստծուց տանել ձեզ տուն, այսինքն՝ Երկինք: Ինչպիսի՞ն էին ձեր հանգամանքներն այդ ժամանակ:
2. Շատերը եկեղեցում փորձում են մոտենալ Հիսուսին՝ առանց Սուրբ Հոգու հետ մտերիմ հարաբերության, թեև նրանք գիտեն, որ ոչ ոք չի կարող ճանաչել Հիսուսին՝ առանց Սուրբ Հոգու: Ինչո՞ւ է այդպես: Դուք նկատե՞լ եք սա ձեր կյանքում:

3. Մտորելով Սուրբ Հոգու հետ համագործակցության շուրջ, ի՞նչ կերպով է Նրա ներկայությունը վստահություն ներշնչում ձեր մեջ՝ Աստծուն ձեր սրտում եղածը պատմելու համար: Իրականում կա՞ այնպիսի բան, ինչը դուք կարող եք ծածկել Նրանից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀՈՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Դուք երբեք օրհնված չեք լինի այն բանով,
ինչին չեք հավատում:

Հիսուս Քրիստոսին որպես Փրկիչ ճանաչեցի 1979 թվականին՝ «Փերդյու» համալսարանի ուսանողական հանրակացարանի տղաներից մեկի միջոցով: Հենց որ դարձա իմ ճանապարհներից և դավանեցի Հիսուս Քրիստոսին որպես իմ Տեր, ես հասկացա, որ ծնվել եմ Աստծո թագավորության մեջ: Աստվածաշունչը հայտնում է մեզ. «Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար» (Հռոմ. 10.9-11):

Որևէ կասկած չունեի իմ փրկության վերաբերյալ: Ես ունեի վկայություն իմ սրտում այդ մասին, և Աստվածաշունչը հաստատում էր այն: Այնուամենայնիվ, իմ նոր կյանքում ես ինչ-որ

բանի պակաս ունեի և մի քանի ամիս շարունակ չէի կարողանում հասկանալ, թե ինչ էր դա: Թվում էր՝ Տերը հեռու էր, թեև ես գիտեի, որ Նրա զավակն էի: Աստվածաշունչ ընթերցելիս, ասես մշուշի մեջ լինեի. այն դժվար էր ընկալել: Ես միայն սահմանափակ կերպով էր հասկանում այն, թեև ջանասիրաբար ընթերցում էի: Ես նույնպես չէի կարողանում հաղթահարել ինձ ընդդիմացող հանգամանքները, և թվում էր՝ անօգնական էի դիմադրելու իմ հասակակից ուսանողներից եկող ուժգին ճնշմանը:

Ժամանակի ընթացքում ես հանդիպում էի մարդկանց, ովքեր, թվում էր, շատ ավելի մտերիմ ընթացք ունեին Տիրոջ հետ, քան ես: Նրանք խոսում էին Նրա մասին մտերիմ և անձնական ձևով: Ես ապշած էի: Ի՞նչ էին նրանք անում, ինչը ես չէի անում: Ինչո՞ւ է Աստված տալիս նրանց այն մտերմությունը, որը ես, թվում է, չէի կարողանում գտնել: Թվում էր՝ նրանք ունեին ուժեր, նաև խորաթափանցություն՝ Աստծո ճանապարհների մեջ, որոնք պարզապես չէի կարողանում ստանալ: Ուսումնասիրելով Աստվածաշունչը՝ բացահայտեցի, որ գոյություն ուներ ևս մեկ հանդիպում Տիրոջ հետ, որը ես չէի վերապրել:

ՀՈՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Դիտարկենք այն, ինչ ես բացահայտեցի Աստվածաշնչից: Հիսուսի Երկինք տարվելուց անմիջապես առաջ գրված է.

> «Եվ նրանց միասին ժողովված ժամանակ *պատվեր էր տալիս* նրանց՝ Երուսաղեմից չհեռանալ, այլ սպասել Հոր ավետիքին (կամ՝ խոստմանը), «որ,- ասաց,– Ինձնից լսեցիք: Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով կմկրտվեք, ոչ թե շատ օրեր սրանից հետո»» (Գործք 1.4-6, *շեղագիրը հեղինակինն է):*

Հիսուսը պատվիրեց հավատացյալներին ոչ մի տեղ չգնալ, չքարոզել, եկեղեցիներ չհիմնել և չկատարել իրենց կոչումները, քանի դեռ չէին ստացել «Հոր խոստումը», որը, Իր խոսքով, Սուրբ Հոգով մկրտությունն էր: «Մկրտված» բառը, որը Հիսուսն օգտագործում է այս խոսքում, թարգմանված է հունարեն *«բապտիզո»* բառից, որը նշանակում է «ընկղմել, սուզել, համակել»: Հիսուսը հայտնում էր նրանց, որ տեղի էր ունենալու այնպիսի ընկղմում Սուրբ Հոգու մեջ, որը նրանք դեռ չէին վերապրել, թեև հավատում էին Նրա հարությանը, դավանում էին Նրա իշխանությունը և Նրա հավատարիմ հետևորդներն էին, որոնք Երկինք էին գնում:

Առաջին իրողություններից մեկը, որն աչքի ընկավ ինձ համար, այն փաստն էր, որ Սուրբ Հոգու լեցունությունը ստանալը խորհուրդ, ընտրանք կամ առաջարկ չէր. դա *պատվեր* էր: Պատվերը տրվում է մեր օգտի, պաշտպանության և Աստծո թագավորության բարօրության համար: Մենք չպետք է թեթևորեն վերաբերվենք Նրա պատվերներին՝ թե՛ մեր օգտի համար, թե՛ հանուն Աստծո թագավորության:

Հոր Խոստումը, որը նրանք ստանալու պատվեր ունեին, տրվելու էր միայն Հիսուսի համբարձվելուց տասն օր անց, թեև նրանք չգիտեին այդ մասին: Հետաքրքրական է, որ Հիսուսը հայտնվեց հինգ հարյուր հավատացյալի Իր մեռելներից հարություն առնելուց հետո (տե՛ս Ա Կորնթ. 15.6), բայց Նրա հեռանալուց տասն օր անց Վերնատանը միայն հարյուր քսան հավատացյալ կար: Ես հաստատ համոզված եմ, որ մեծ մասը այդ հինգ հարյուրից սպասում էր այդ Խոստմանը, սակայն ժամանակի ընթացքում մարդիկ հեռացան՝ անհամբերության, կասկածի, անհավատության կամ այլ պատճառներով, մինչև որ մնաց ընդամենը նրանց մի մասը: Ցավոք, գրեթե հինգից չորսը չվարվեց ըստ Հիսուսի պատվերի:

Ովքեր մնացին, միաբան էին. նրանք մահացած էին իրենց սեփական ծրագրերի համար: Նրանք թեթևորեն չէին վերա-

բերվել այն բանին, ինչ Հիսուսը պատվիրել էր, և արդարացումներ չէին արել: Ես հաստատ համոզված եմ, որ նրանք վճռել էին մնալ այնքան, որքան անհրաժեշտ էր, միայն՝ որովհետև Տերը պատվիրել էր մնալ: Երբ Աստված տեսավ, որ մնացել էին միայն նրանք, ովքեր լրջորեն վերաբերվեցին Հիսուսի պատվերին, գրված է.

> «Եվ երբ որ Պենտեկոստեի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, որ նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ՝ ինչպես կրակից, և նստեց նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենը Սուրբ Հոգով լցվեցին, և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2.1-4):

Այդ օրը կոչվեց «Պենտեկոստե», և սա նորկտակարանյան տերմին չէ, այլ՝ Իսրայելի գլխավոր տոներից մեկի անվանումը: Ուշադրություն դարձրեք, որ նրանք *լցվեցին* կամ *մկրտվեցին* Սուրբ Հոգով, ինչպես որ Հիսուսը կանխասել էր: Սա Հոր Խոստումն էր, և այն ուղեկցվում էր *այլ լեզուներով* խոսելով:

Այսօր ոմանց համար «*լեզուներ*» հասկացությունը շփոթեցնող կամ առեղծվածային է՝ զուտ անտեղյակ լինելու պատճառով: Երբ Աստվածաշունչը խոսում է *լեզուների* մասին, ինչի մասին ես նույնպես կխոսեմ, այն նկատի ունի միայն այնպիսի լեզու, որը հասկանալի չէ ձեր մտքին: Մենք օգտագործում ենք այս բառը նաև ոչ աստվածաշնչյան շրջանակներում: Եթե դուք շփվում եք օտարերկրացու հետ, որն անգլերեն է խոսում, և ուզում եք իմանալ նրա առաջին լեզուն, դուք կարող եք հարցնել նրան, թե որն է նրա *մայրենի լեզուն:* Տալով այս հարցը՝ դուք ընդամենը ցանկանում եք իմանալ, թե որ լեզուն է նա սովորել իր ծնողներից իր մանկության ժամանակ:

Սաստիկ փչող քամու ձայնը Սուրբ Հոգու արթնացնող

կանչն էր, որով Նա ազդարարեց Իր սկզբնական մուտքն այն տաճարների մեջ, որոնցում Նա մշտապես ցանկանում էր բնակվել: Կրկին, Աստվածաշունչը նկատի չունի, որ Նա քամի է. փոխարենը, քամին Նրա մուտքի դրսևորումն էր:

ՀԱԿԱԴԻՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Այս պահին թույլ տվեք ընդմիջարկել մի հետաքրքիր դիտարկումով: Սատանան և նրա զորքերը մշտապես անում են ամեն ինչ՝ հակառակ Աստծո ճանապարհներին կամ խեղաթյուրելով դրանք: Երբ Հոգին առաջին անգամ մուտք է գործում, Նա այնպես է անում դա, որ անկարելի է չնկատել: Մարդիկ *տեսան* և *լսեցին* Նրա դրսևորումը, երբ Նա լցրեց իրենց: Մենք կտեսնենք սա նաև Գործք առաքելոց գրքի այլ պատմություններում: Այնուամենայնիվ, երբ Սուրբ Հոգին հեռանում է, Նա լուռ է անում դա: Հիշեք՝ երբ Դալիլան ասաց Սամսոնին, որ փղշտացիները հարձակվել էին նրա վրա, նա վեր թռավ և ասաց.

> ««Դուրս գամ և առաջվա անգամների պես թոթափվեմ», բայց *չգիտեր,* որ Տերն իրենից գնացել էր» (Դատ. 16.20, *շեղագիրը հեղինակինն է):*

Սամսոնը չգիտեր, որ Տերը թողել էր իրեն, քանի որ Աստծո Հոգին մշտապես լուռ է հեռանում: Ի հակադրություն, երբ դևերն են մտնում, նրանք լուռ են անում դա, բայց երբ դուրս են գալիս, շատ հաճախ նրանք անում են դա տարբեր դրսևորումներով (դուք կտեսնեք սա Ավետարաններում):

ԱՅՍ ԽՈՍՏՈՒՄԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ Է

Այժմ վերադառնանք Պենտեկոստեի օրվան: Կային հրեաներ, որոնք Երուսաղեմ էին եկել տարբեր երկրներից՝ այդ տոնի համար: Երբ ամբողջ քաղաքը լսեց սաստիկ փչող քա-

մու ձայնը, բազմաթիվ մարդիկ հավաքվեցին այնտեղ, որտեղ աշակերտներն էին: Երուսաղեմ եկած հրեաներն ապշեցին՝ լսելով, որ անկիրթ աշակերտները խոսում էին Աստծո զարմանալի գործերի մասին իրենց լեզուներով: Զարմացած՝ նրանք բացականչեցին. «Ի՞նչ է սա նշանակում»:

Պետրոսն օգուտ քաղեց նրանց զարմանքից, բարձրացավ և քարոզեց Հիսուսի մասին բոլոր ներկաներին: Հասնելով իր ուղերձի ավարտին՝ նա ասաց.

> «Սույն այս Հիսուսին Աստված հարություն տվեց, որի վկաներն ենք մենք՝ ամենս: Արդ, Աստծո աջով բարձրացած և Սուրբ Հոգու խոստումը Հորից առած՝ թափեց այս, որ դուք հիմա *տեսնում* և *լսում* եք» (Գործք 2.32,33, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրե՛ք. նա ասաց, որ Սուրբ Հոգու խոստումն այնպիսի բան է, ինչը նրանք կարող էին *տեսնել* և *լսել:* Կրկնե՛ք. «տեսնել և լսել»: Կարևոր է, որ հիշենք սա՝ ուսումնասիրելով հաջորդ խոսքերը:

Հավաքված բազմությունը խորապես ազդվեց և հարցրեց, թե ինչ իրենք պետք է անեին: Պետրոսը պատասխանեց.

> «Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարե՛ք, և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Հիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Հոգու պարգևը կընդունեք: Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է *այս խոստումը,* և *այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստված կկանչի*»» (Գործք 2.38,39, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք՝ այն Խոստումը, որը նրանք տեսան և լսեցին, *բոլոր հեռավորների համար է, որոնց որ մեր Տեր Աստված կկանչի:* Ճիշտ այն, ինչ աշակերտները ստացան

Վերնատանը, խոստացվեց նրանց, ովքեր կանչում են Տիրոջը, ինչն ընդգրկում է նաև ձեզ և ինձ:

Այս պահին կուզեմ համառոտ դիտարկել յուրաքանչյուր պատմություն Նոր կտակարանում, որում մարդիկ ընդունեցին Սուրբ Հոգուն: Կա չորս այլ նման պատմություն: Ուշադրություն դարձրեք երկու բանի: Առաջինը՝ յուրաքանչյուր պատմության մեջ՝ բացի մեկից, այս փորձառությունն առանձին էր Հիսուս Քրիստոսին որպես Տեր ընդունելուց: Երկրորդը՝ յուրաքանչյուր դեպքում դիտորդները կարողանում էին *տեսնել* և *լսել* արտաքին դրսևորում, երբ մարդիկ ստանում էին Սուրբ Հոգու լեցունությունը:

ՍԱՄԱՐԻԱ

Փիլիպոսը գնաց Սամարիայում գտնվող մի քաղաք և քարոզեց Հիսուսի մասին: Բազմաթիվ մարդիկ դուրս եկան՝ նրա խոսքերը լսելու համար: Տեղի ունեցան աներևակայելի հրաշքներ, քանի որ «պիղծ ոգիներ ունեցողներից շատերից մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս, և շատ անդամալույծներ և կաղեր բժշկվում էին» (Գործք 8.7,8): Այդ ավետարանչությունը զարմանալիորեն ազդեցիկ էր, և քաղաքում մեծ ուրախություն էր տիրում: Գրված է.

> «Բայց երբ որ հավատացին Փիլիպոսին, որ ավետարանում էր Աստծո արքայության և Հիսուս Քրիստոսի անվան բաները, ամենքն էլ մկրտվում էին՝ թե՛ մարդիկ, և թե՛ կանայք: Եվ Սիմոնն ինքն էլ հավատաց, և... մկրտվեց» (Գործք 8.12,13):

Մարդիկ հավատացին Հիսուս Քրիստոսի Բարի լուրին և ջրով մկրտվեցին: Այնպես որ, համաձայն Աստվածաշնչի, նրանք այժմ վերստին ծնված են Աստծո թագավորության մեջ: Այնուամենայնիվ, շարունակելով կարդալ, մենք տեսնում ենք.

> «Երբ որ Երուսաղեմում լինող առաքյալները լսեցին, թե Սամարիան Աստծո Խոսքն ընդունեց, Պետրոսին և Հովհաննեսին ուղարկեցին նրանց մոտ, որոնք իջան և աղոթք արին նրանց համար, որ Սուրբ Հոգին առնեն, որովհետև դեռ նրանցից ոչ մեկի վրա չէր իջել. միայն Տեր Հիսուսի անունով մկրտված էին» (Գործք 8.14-16):

Հերթական հաստատումն այն մասին, որ նրանք արդեն ծնվել էին Աստծո թագավորության մեջ, այն պնդումն է, որ նրանք «Տեր Հիսուսի անունով մկրտված էին»: Կասկած չկա, որ նրանք ազատվել էին խավարի թագավորությունից և արդեն Աստծո ընտանիքում էին: Այնուամենայնիվ, թեև նրանք արդեն վերստին ծնված հավատացյալներ էին, դեռ չէին մկրտվել Սուրբ Հոգով:

Գուցե հարցնեք, թե ինչպես նրանք կարող էին փրկություն ստանալ, քանի որ Աստվածաշնչում պարզորեն գրված է. «Ոչ ոք չի կարող Հիսուսին Տեր ասել, եթե ոչ՝ Սուրբ Հոգով» (Ա Կորնթ. 12.3): Սա ճշմարիտ է. մենք չենք կարող դավանել Հիսուսի իշխանությունը՝ առանց Սուրբ Հոգու ազդեցության, սակայն այս վերապրումն այն չէ, ինչ Նրանով լցվելը: Դարձի պահին մենք սրբացվում ենք, կնքվում ենք, և Սուրբ Հոգին բնակվում է մեզանում (տես Ա Պետր. 1.2, Եփես. 1.13, Հռոմ. 8.9-11), սակայն մենք չենք լցվում Նրա ներկայությամբ, քանի դեռ չենք խնդրում Հորը՝ Հիսուսի անունով: Աստվածաշնչում գրված է.

> «Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկ. 11.13):

Հիսուսի՝ «Ձեր երկնավոր Հայրը» բառերից հասկանում ենք, որ այս խոստումը տրվում է միայն նրանց, ովքեր արդեն Նրա

զավակներն են: Նույն կերպով, ավելի ուշ Հիսուսն ասում է, որ «աշխարհը չի կարող ընդունել» ճշմարտության Հոգուն (տե՛ս Հովհ. 14.17): Նրա պնդումներից տեսնում ենք, որ այս վերապրումն առանձին է Աստծո թագավորության մեջ վերստին ծնվելուց:

Վերադառնանք Սամարիայի բնակիչներին.

> «Այն ժամանակ ձեռքերը դրեցին նրանց վրա, և նրանք ընդունում էին Սուրբ Հոգին: Սիմոնը երբ որ *տեսավ,* թե առաքյալների ձեռք դնելով Սուրբ Հոգին տրվում է, փող բերեց նրանց և ասաց. «Ի՛նձ էլ տվեք այս իշխանությունը, որ ում վրա ձեռք դնեմ, Սուրբ Հոգին առնի»» (Գործք 8.17-19, *շեղագիրը հեղինակինն է):*

Այդ հավատացյալներն ընդունեցին Սուրբ Հոգուն արդեն փրկվելուց հետո: Այստեղ հատկապես գրված չէ, որ այդ մարդիկ լեզուներով էին խոսում. այնուամենայնիվ, ինչո՞ւ Սիմոնը պետք է փող առաջարկեր աշակերտներին: Աստվածաշունչն ասում է, որ նա *տեսավ,* որ նրանք ընդունեցին Սուրբ Հոգուն: Գոյություն ուներ ակնհայտ դրսևորում, և դա պետք է լիներ հենց լեզուներով խոսելը, քանի որ դա համապատասխանում է Սուրբ Հոգով լցվելու մյուս փորձառություններին, որոնք նկարագրված են Նոր կտակարանում:

Դիտարկելով աստվածաշնչյան պատմությունը Սամարիայի մասին՝ տեսնում ենք, որ առաջինը՝ Աստծո Հոգու լեցունությունը ստանալը տարբերվող փորձառություն էր դարձի գալուց, և երկրորդը՝ դիտորդները *տեսան* դրա արտաքին դրսևորումը:

ԵՓԵՍՈՍ

Պողոս առաքյալը և նրա թիմը Եփեսոս եկան ու գտան որոշ աշակերտների: Նրանց առաջին հարցը հետևյալն էր.

> «Արդյոք Սուրբ Հոգին ընդունեցի՞ք, երբ որ հավատացիք» (Գործք 19.2):

Սա նաև պետք է լինի մեր առաջին հարցը վերջերս դարձի եկած մարդկանց: Ինչո՞ւ ենք ցանկանում, որ մարդիկ նույնիսկ մեկ ժամ ավելի ապրեն առանց Տիրոջ հետ մտերմության և Հիսուսի վկաները լինելու զորության (տե՛ս Գործք 1.8):

Այդ աշակերտները չէին լսել Սուրբ Հոգու մասին. նրանք միայն մկրտվել էին ջրով՝ Հովհաննես Մկրտչի կողմից: Այնպես որ, Պողոսը և նրա թիմը պատմեցին նրանց Հիսուս Քրիստոսով տրվող փրկության մասին: Մենք շարունակում ենք կարդալ.

> «Եվ երբ որ լսեցին, Տեր Հիսուսի անունով մկրտվեցին» (Գործք 19.5):

Այժմ, համաձայն Աստվածաշնչի, նրանք, անկասկած, վերստին ծնված էին Աստծո թագավորության մեջ, քանի որ դավանել էին Հիսուսի իշխանությունը և ջրով մկրտվել էին: Շարունակելով կարդալ՝ մենք բացահայտում ենք հետևյալը.

> «Եվ երբ որ Պողոսը ձեռք դրեց նրանց վրա, Սուրբ Հոգին եկավ նրանց վրա, և նրանք լեզուներով էին խոսում և մարգարեանում» (Գործք 19.6):

Կրկին, նրանք խոսեցին լեզուներով և մարգարեացան այն պահին, երբ Աստծո Հոգին լցրեց նրանց, և կրկին, դիտորդները *տեսնում* և *լսում* էին Հոր Խոստման դրսևորումը նրանցում, որոնք ընդունեցին այն:

Մարգարեանալը նշանակում է «խոսել աստվածային ոգեշնչմամբ»: Պետրոսը մարգարեացավ Պենտեկոստեի օրը, երբ փայլուն ուղերձ փոխանցեց, որը հազարավորների բերեց Աստծո թագավորություն: Նա ազդարարեց Աստծո Խոսքը՝

առանց որևէ պատրաստության կամ նախնական ուսումնասիրության. նա ոգեշնչմամբ խոսեց այն: Եփեսոսում բնակվող այդ մարդիկ գրեթե պատկերացում չունեին Աստծո ճանապարհների մասին մինչև Սուրբ Հոգով լցվելը, սակայն լցվելուց անմիջապես հետո նրանք ոգեշնչմամբ խոսեցին Աստծո Խոսքը:

Նույնը տեղի է ունենում յուրաքանչյուրի հետ, ով լցվում է Աստծո Հոգով: *Ուսուցիչը* գալիս և բնակվում է մեզանում, և աստվածային իրողություններն ավելի պարզ են դառնում մեզ համար: Մինչև Հոգով մկրտվելը Աստծո Խոսքը և ճանապարհներն աղոտ էին ինձ համար: Սակայն մկրտվելուց հետո ամեն ինչ փոխվեց. Աստվածաշունչն անձնապես բացվեց ինձ համար: Ես անթիվ անգամներ ականատես եմ եղել, որ մարդիկ, որոնք տարիներ շարունակ հավատացյալ են, սակայն Սուրբ Հոգով լցված չեն եղել, Սուրբ Հոգով լցվելուց հետո ասում են. «Ես այնքա՜ն շատ հարցեր ունեի, և այժմ բոլոր այդ հարցերը պատասխանված են», նաև՝ «Աստվածաշունչն այնքա՜ն պարզ է դարձել ինձ համար»:

Նույն կերպով, լսել եմ, թե ինչպես են Աստվածաշունչը ջանասիրաբար ուսումնասիրող մարդիկ, որոնք վերստին ծնված են, սակայն Հոգով լցված չեն, մեկնաբանում Հոգով լցված հավատացյալների աստվածաշնչյան գիտելիքները: Նրանք կարող են երեք անգամ ավելի շատ ուսումնասիրել Խոսքը, սակայն ապշած են Հոգով լցված հավատացյալների ըմբռնման պատճառով: Լսելով նրանց մեկնաբանությունները՝ ես պարզապես պատասխանում եմ. «Ամեն ինչ պարզ է. նրանք, ովքեր լցված չեն, չունեն Սուրբ Հոգու ամբողջական լուսավորումը»: Բայց այդ մարդիկ կարող են ստանալ դա, քանի որ Հոգով լցվելը Աստծո խոստումն է նրանց, ովքեր կանչում են Հիսուսի անունը: Աստված այնքա՜ն բարի է մեր հանդեպ:

Այնպես որ, կրկին, ինչպես և Սամարիայի բնակիչների դեպքում, Եփեսոսի հավատացյալների կողմից Աստծո Հոգուն

ընդունելը նրանց դարձի գալուց տարբերվող փորձառություն էր, և կրկին, դիտորդները *տեսան* դրա արտաքին դրսևորումը:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԸ

Գործքի 9-րդ գլխում Սողոսը, որին մենք գիտենք Պողոս անունով, գնում էր Դամասկոս տանող ճանապարհով՝ հավատացյալներին հալածելու: Նա արդեն մոտ էր քաղաքին, երբ կուրացնող լույս տեսավ երկնքից և լսեց Տիրոջ ձայնը.

«Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում Ինձ»:

Սողոսն անմիջապես հարցրեց, թե ով էր իր հետ խոսողը, և Տերը պատասխանեց.

«Ես Հիսո՛ւսն եմ»:

Սողոսը հարցրեց.

«Տե՛ր, ի՞նչ ես կամենում, որ անեմ»:

Նա պատվեր ստացավ, որ Դամասկոս գնար, և այնտեղ նրան հրահանգներ կտրվեին:

Ես հավատում եմ, որ այդ պահին նա վերստին ծնվեց: Ունեմ երկու պատճառ՝ այդպես մտածելու համար: Առաջինը՝ այն բանից հետո, երբ Տերն ասաց. «Ես Հիսուսն եմ», Սողոսը դավանեց Նրան որպես «Տեր»: Երկրորդը՝ այն բանից հետո, երբ Սողոսը երեք օր ծոմ պահեց, Անանիան եկավ և պարզորեն ասաց.

> «Սավո՛ւղ *եղբայր,* Տերն ուղարկեց ինձ՝ այն Հիսուսը որ երևաց քեզ ճանապարհին, որ գալիս էիր, որ տեսնես և *Սուրբ Հոգով լցվես»* (Գործք 9.17, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրե՛ք *«եղբայր»* բառին: Նա հավատում էր Հիսուս Քրիստոսին, նա դավանել էր Նրան որպես Տեր, և նա երեք օր աղոթում էր: Այնպես որ, արդեն վերստին ծնվելուց հետո Անանիան աղոթում էր, որ նա Սուրբ Հոգով լցվեր:

Այստեղ գրված չէ, որ Սողոսը լեզուներով խոսեց: Այնուա-

մենայնիվ, նա ինքը պարզորեն հայտնում է մեզ կորնթացիներին ուղղված իր նամակում. «Գոհանո՛ւմ եմ իմ Աստծուց, որ ձեր ամենից ավելի լեզուներով խոսում եմ» (Ա Կորնթ. 14.18):

ԿՈՌՆԵԼԻՈՍԸ ԵՎ ՆՐԱ ՏՈՒՆԸ

Կար մի հռոմեացի սպա Կոռնելիոս անունով: Նա, նրա տունը և ընկերները դառնալու էին առաջին վերստին ծնված հեթանոսները: Կոռնելիոսը հաճախ էր ծոմ պահում և աղոթում, և մի օր նրան մի հրեշտակ երևաց և պատվիրեց մարդիկ ուղարկել՝ Պետրոսին կանչելու համար:

Մի քանի օր անց Պետրոսը եկավ, Կոռնելիոսն անմիջապես հավաքեց իր սիրելիներին, և նրանք պատրաստ էին լսել նրա ուղերձը: Պետրոսը սկսեց քարոզել Հիսուսի մասին, և գրված է, որ մինչև որ նա կարողացավ ավարտել, տեղի ունեցավ հետևյալը.

> «Եվ Պետրոսը դեռ այս բանը խոսելիս՝ Սուրբ Հոգին իջավ այն խոսքը լսողներից բոլորի վրա: Եվ զարմացան Պետրոսի հետ եկող հավատացյալները, որ թլփատությունից էին, որ հեթանոսների մեջ էլ Սուրբ Հոգու պարգևը թափվում էր: Որովհետև լսում էին, որ նրանք լեզուներով խոսում և Աստծուն փառավորում էին» (Գործք 10.44-46):

Հրեաները որևէ կերպով չէին առնչվում հեթանոսների հետ կրոնական հարցերով և նույնիսկ հասարակական հարցերի մեծ մասով: Նրանք օտարացած էին խոստման ուխտերից, առանց հույսի էին և առանց Աստծո էին (տե՛ս Եփես. 2.12): Այն, ինչ տեղի ունեցավ այդտեղ, ապշեցրեց Պետրոսի հետ գտնվող հրեաներին: Նրանք ցնցված էին, որ այդ հեթանոսները ստացան փրկությունը և Սուրբ Հոգուն:

Սա միակ դեպքն է Աստվածաշնչում, երբ մարդիկ միաժա-

մանակ փրկվում են և ստանում են Սուրբ Հոգուն: Անձամբ ես հավատում եմ նաև գիտակցում եմ, որ դուք կարող եք վիճարկել իմ կարծիքը, որ Աստված արեց դա, քանի որ Նա գիտեր, որ այդ հրեաները չէին աղոթելու, որ Կոռնելիոսը և նրա սիրելիները ստանային թե՛ Հիսուսին, թե՛ Սուրբ Հոգուն, քանի որ նրանք կասկածի կենթարկեին այն փաստը, որ այդ մարդիկ կարող էին փրկվել: Մտածե՛ք հետևյալը. վերստին ծնունդի դեպքում չկա ոչ մի հրաշագործ արտաքին դրսևորում: Այնպես որ, նույնիսկ եթե այդ մարդիկ ընդունեին Խոսքը, երբ Պետրոսը քարոզում էր, և դավանեին Հիսուսին, հրեաները չէին հավատա, որ նրանք կարող էին դարձի գալ:

Այնուամենայնիվ, երբ Աստված լցրեց նրանց Սուրբ Հոգով, և նրանք սկսեցին լեզուներով խոսել՝ ինչպես այդ հրեաները, երբ իրենք էին լցվել, նրանք չկարողացան հերքել, որ Աստված շնորհել էր Իր փրկությունը հեթանոսներին:

Այս պատմությունը ցույց է տալիս՝ առանց կասկածի նշույլի, որ Սուրբ Հոգուն ընդունելու իրողությունը արտահայտվում է լեզուներով խոսելու արտաքին դրսևորմամբ: Աստվածաշնչի մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «...Սուրբ Հոգու պարգևը թափվել էր նաև հեթանոսների վրա: Եվ դրանում ոչ մի կասկած չէր կարող լինել, քանի որ նրանք լսեցին, որ նրանք խոսում էին լեզուներով և փառավորում էին Աստծուն» (Գործք 10.45,46, NLT): Ինչպե՞ս նրանք իմացան: «Քանի որ նրանք լսեցին...»: Նրանք տեսան և լսեցին Հոր Խոստո՛ւմը:

ԼԵԶՈՒՆԵՐԸ ԿԼՌԵՆ

Գուցե այս պահին հարցնեք. «Այո՛, այս ամենը վերաբերում է առաջին աշակերտներին, բայց չէ՞ որ Աստվածաշունչն ասում է, որ լեզուները կլռեն, երբ գա կատարյալը»: Ճիշտ է, սակայն մի՞թե կատարյալը եկել է: Ոմանք կարող են ասել. «Այո՛, կատարյալը Աստվածաշունչն է, և այժմ, երբ մենք ունենք այն, լե-

զունները մեզ պետք չեն»: Լա՛վ, կարդանք այդ աստվածաշնչյան հատվածը, որպեսզի տեսնենք, թե արդյո՞ք այս մեկնությունը ճիշտ է: Պողոսը գրում է.

> «Սերը երբեք չի վերջանա: Եթե մարգարեություններ կան, կխափանվեն. *եթե լեզուներ, կլռեն.* եթե գիտություն, կխափանվի: Որովհետև փոքրիշատե գիտենք, և փոքրիշատե մարգարեանում ենք: Բայց երբ որ կատարյալը գա, այս փոքրիշատեն կխափանվի» (Ա Կորնթ. 13.8-10, *շեղագիրը հեղինակինն է):*

Առաջինը՝ գրված է, որ երբ կատարյալը գա, ոչ միայն լեզուները կլռեն, այլև գիտությունը (ավելի ճիշտ՝ *հայտնված* գիտելիքը) կխափանվի: Անկասկած, դա դեռ տեղի չի ունեցել: Այնպես որ, շարունակենք կարդալ, որպեսզի ճշտորեն պարզենք, թե ե՞րբ է գալու «կատարյալը»:

> «Որովհետև հիմա հայելու մեջ օրինակով ենք տեսնում, *բայց այն ժամանակ*՝ դեմ առ դեմ: Հիմա փոքրիշատե եմ տեղյակ, *բայց այն ժամանակ* այնպես կգիտենամ, ինչպես գիտեցված եմ» (Ա Կորնթ. 13.12, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք, որ նա երկու անգամ ասում է «բայց այն ժամանակ»: Խոսքն այն ժամանակվա մասին է, երբ կատարյալն արդեն եկած կլինի: Այդ ժամանակը նկարագրվում է երկու իրողությամբ: Առաջինը՝ մենք *դեմ առ դեմ* կտեսնենք Տիրոջը: Դուք դեմ առ դեմ տեսնո՞ւմ եք Նրան հենց հիմա: Դուք տեսնո՞ւմ եք Նրա հարություն առած մարմինը, Նրա աչքերը որոնք կրակի բոցեր են, և մազերը, որոնք սպիտակ են բրդի պես, և Նրա դեմքը, որը փայլում է արևի պես: Երկրորդ իրողությունը հետևյալն է. «Ես կճանաչեմ Նրան այնպես, ինչպես որ ճանաչված եմ»: Դուք ճանաչո՞ւմ եք Նրան այնպես, ինչպես որ Նա է ճանաչում ձեզ: Այս հարցի պատասխանն է՝

ակնհայտորեն ոչ: Նա նկատի ունի այն ժամանակը, երբ մենք Տիրոջ հետ կլինենք մեր փառավորված մարմիններով: Ահա թե երբ կգա կատարյալը:

Այսպիսով, քանի որ կատարյալը դեռ չի եկել, լեզուները, անկասկած, դեռ չեն լռել: Հաջորդ գլուխներում ցույց կտամ, որ լեզուների գլխավոր նպատակներից մեկն ավելի խորը մտերմությունն է Աստծո հետ այս երկրի վրա:

ՄԻԹԵ ԲՈԼՈՐՆ ԵՆ ԽՈՍՈՒՄ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Կրկին, ինչ-որ մեկը կարող է ասել. «Ես հավատում եմ լեզուներին, բայց յուրաքանչյուր հավատացյալ չէ, որ կարող է ստանալ դրանք, քանի որ Աստվածաշունչը նաև հարցնում է. «Միթե բոլորն են խոսում լեզուներով», և պատասխանն է՝ ոչ»: Կրկին, սա Պողոսի հարցի առարկայի կոպիտ թյուրըմբռնում է: Որպեսզի վերջնականորեն պատասխանենք այս հարցին, որը զրկել է շատերին Աստծո Խոստումից, նախ՝ պետք է նշենք, որ Նոր կտակարանում գրված է չորս տարբեր տեսակի լեզուների մասին: Դրանցից երկուսը հանրային ծառայության համար են, իսկ մյուս երկուսը՝ Աստծո հետ անձնական հարաբերության: Մենք հակիրճ կդիտարկենք յուրաքանչյուրը, որպեսզի պատշաճ կերպով պատասխանենք հետևյալ հարցին. *«Արդյոք Աստծո կամքն է, որ Իր բոլոր զավակները լեզուներով խոսեն»:*

ԼԵԶՈՒՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆՇԱՆ ԵՆ ԱՆՀԱՎԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Լեզուների առաջին տեսակը *հանրային* ծառայության համար է: Օգտագործելով *«հանրային»* բառը, նկատի ունեմ այլ մարդու կամ մի խումբ մարդկանց ծառայելը: Այս լեզուների մասին Պողոսը գրում է.

«Ուրեմն լեզուները նշանի համար են, ոչ թե հավատացյալներին, այլ՝ անհավատներին» (Ա Կորնթ. 14.22):

Այս լեզուները գործում են, երբ Սուրբ Հոգին, գերազանցելով մեր միտքը, տալիս է մեզ կարողություն խոսելու այս երկրում գոյություն ունեցող լեզուներից մեկով, որը մենք նախկինում չենք սովորել, և որը մենք չգիտենք: Այս կարողությունը տրվում է Աստծո Հոգու կամքով. մենք չենք կարող ինքներս որոշել գործել այս կերպով, և ամենից հաճախ չենք էլ գիտակցում, երբ նման լեզուներով ենք խոսում: Մենք պարզապես գիտենք, որ լեզուներով ենք խոսում, բայց չենք գիտակցում, որ դա գոյություն ունեցող երկրային լեզու է:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Վերջերս քարոզում էի Կոլորադոյում գտնվող մի մեծ եկեղեցում: Իմ աշխատակազմի անդամներից մեկը ներկա էր այդ հավաքույթին և նստած էր ետևի շարքերից մեկում: Այդ կինը շատ ժամանակ է անցկացնում աղոթքի և բարեխոսության մեջ, և նա զգաց, որ Տերն ուզում էր, որ ինքն աղոթեր ինձ համար, մինչ ես քարոզում էի: Նրա կարծիքով, հավաքույթի ամբողջ ընթացքում նա պարզապես ցածրաձայն աղոթում էր անհայտ լեզուներով (որոնց մասին ես շուտով կխոսեմ): Հավաքույթից հետո մի տղամարդ, որը նստած էր նրա առջևի նստարանին, շրջվեց և ասաց այդ կնոջը.

- Դուք լավ ֆրանսերեն գիտեք, ձեր արտասանությունը գերազանց է:

Նա ասաց այդ մարդուն, որ ֆրանսերեն չգիտի:

Այդ մարդը զարմացած ասաց.

- Ես ֆրանսերենի ուսուցիչ եմ, և նրա քարոզի ամբողջ ընթացքում դուք աղոթում էիք քարոզչի համար գերազանց ֆրանսերենով: Դուք մեջբերում էիք աստվածաշնչյան հատվածներ ձեր աղոթքներում, և անմիջապես այն բանից հետո,

երբ որևէ սուրբգրային հատված էիք մեջբերում, նա խնդրում էր բացել այն մեր Աստվածաշնչերում:

Ավելորդ է ասել, որ դա հպվել էր նրան, և նա անչափ ոգևորված էր: Դա նշան էր այդ մարդու համար, որ այն, ինչ ես քարոզում էի, իսկապես Աստծո Խոսքն էր:

Այս տեսակի լեզուն դրսևորվեց աշակերտների մոտ Պենտեկոստեի օրը: Աստվածաշնչում գրված է.

> «Եվ Երուսաղեմում բնակված էին հրեաներ՝ աստվածավախ մարդիկ երկնքի տակի բոլոր ազգերից: Եվ երբ որ այս ձայնը եղավ, բազմությունը եկավ մեկտեղ և կիտվեց, որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իր լեզվով խոսում էին: Եվ ամենքը հիանում էին և զարմանում և իրար ասում էին. «Չէ՞ որ ահա սրանք ամենը, որ խոսում են, Գալիլեացի են: Եվ ինչպե՞ս մենք ամեն մեկս մեր լեզվով լսում ենք, որ նրանում ծնված ենք [ես բաց եմ թողել ներկայացված ազգությունների ցուցակը] ...լսում ենք, որ նրանք մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաները խոսում են»» (Գործք 2.5-11):

Կրկին, այս լեզուները նշան են անհավատների համար: Դրանք նշան էին նախորդ պատմության ֆրանսիացի ուսուցչի համար, ինչպես նաև այս աստվածաշնչյան պատմության բոլոր կրթված մարդկանց համար: Այս նշանը գրավեց նրանց ուշադրությունը և բացեց սրտերը Աստծո Խոսքի համար:

Ես լսել եմ անթիվ դեպքեր, երբ հավատացյալները քարոզել են Աստծո Խոսքն օտար լեզուներով, որոնք նրանք երբեք չեն սովորել, և դա նշան է, որը հաստատում է Աստծո սիրո ուղերձը: Յուրաքանչյուր դեպքում այս զարմանալի նշանն արդյունավետ ծառայել է մարդկանց:

ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԼԵԶՈՒՆԵՐ

Լեզուների երկրորդ տեսակը նույնպես հանրային ծառայության համար է: Այս լեզուները երկնային են. այս երկրի վրա նման խոսվածքներ չկան: Այսպիսին են նաև լեզուների մյուս տեսակները, որոնց մասին խոսելու եմ:

Այժմ գուցե վիճարկեք այն փաստը, որ երկնքում մեկից ավելի լեզու կամ խոսվածք կա: Մտածեք հետևյալը. Հայտնություն գիրքը տեղեկացնում է, որ Հիսուսը կտա հաղթողին «մի սպիտակ քար, որի վրա նոր անուն է գրված, որը հայտնի է միայն նրան, ով ստանում է այն» (Հայտն. 2.17, NIV): Նույնպես, անձամբ Հիսուսի մասին գրված է, որ «Նրա աչքերը՝ կրակի բոցի պես, և Նրա գլխի վրա՝ շատ պսակներ, և անուն ուներ գրված, որ ոչ ոք չգիտեր, բայց միայն Ինքը» (Հայտն. 19.12): Այսպիսով, եթե ուրիշ ոչ ոք չգիտեր այդ անունները, միակ հավանականությունն այն է, որ երկնքում տարբեր լեզուներ կան:

Այս տեսակի լեզուները պատկանում են Առաջին կորնթացիների տասներկուերորդ գլխում թվարկված Սուրբ Հոգու պարգևների ինը կարգերից մեկին: Գրված է.

> «...մյուսին՝ տարբեր տեսակի լեզուներ, մյուսին՝ լեզուների մեկնություն» (Ա Կորնթ. 12.10):

Ուշադրություն դարձրեք, որ այս լեզուները պետք է մեկնվեն, ոչ թե թարգմանվեն: Ինչո՞ւ: Քանի որ դրանք երկնային լեզուներ են, որոնք հայտնի չեն բնական աշխարհում:

Ես հիշում եմ մի հավաքույթ Սինգապուրում: Ինձ խնդրեցին ծառայել այդ երկրի ամենամեծ եկեղեցիներից մեկում: Դա իմ առաջին այցելությունն էր այդ եկեղեցի, որին հետևեց ևս մի քանիսը: Մինչև որ ինձ հրավիրեցին ամբիոնի մոտ՝ քարոզելու համար, ներկաները, որոնց թիվը մեծ էր, լուռ էին երկրպագության գեղեցիկ երգեր երգելուց հետո: Հանկարծ մի մարդ սկսեց խոսել երկնային լեզվով: Նրա ձայնը շատ բարձր և

պարզ էր, թեև նա բարձրախոս չուներ: Նա այդ մեծ լսարանի պատշգամբում էր, սակայն բոլորը լսեցին նրա ձայնի պարզությունը և իշխանությունը: Երկինքն ասես ուժգնացրել էր այն:

Երբ նա խոսեց, իմ ներսի մարդը լցվեց ուրախությամբ, իսկ դրսի մարդը երկյուղածությունից քարացավ: Թվում էր՝ մարմնիս յուրաքանչյուր մասնիկ ուշադրություն դարձրեց դրան, և սիրտս արագորեն բաբախում էր այդ սուրբ մթնոլորտում: Հենց որ նա ավարտեց, եկավ մեկնությունը, և Տիրոջ խոսքը, որը տրվեց այդ լեզվի միջոցով, ճիշտ այն էր, ինչի մասին քարոզելու էի այդ երեկո: Ես զարմացել էի. Տերը տվեց ոչ միայն ինձ, այլև ամբողջ այդ եկեղեցական համայնքին հաստատություն այն մասին, որ այն, ինչ փոխանցելու էի նրանց այդ երեկո, Իրենից էր:

Լեզուների այս տեսակի մեկնությունը նման է մարգարեության: Այս պատճառով է, որ Պողոսն ասում է. «Ավելի մեծ է մարգարեացողը, քան թե լեզուներով խոսողը, միայն եթե թարգմանի (կամ՝ մեկնի), որ եկեղեցին շինություն առնի» (Ա Կորնթ. 14.5): Կրկին, այս խոսքից մենք տեսնում ենք, որ այս լեզուները տրված են հանրային ծառայության համար եկեղեցում, և սրանք լեզուների այն տեսակն են, որը նկատի ուներ Պողոսը՝ հարցնելով. «Միթե ամենը լեզուներով են խոսում»: Կարդանք այս խոսքն ըստ համատեքստի:

> «Եվ ոմանց դրեց Աստված եկեղեցում. սկզբում՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, Երրորդ՝ վարդապետներին, հետո՝ զորություններ, հետո՝ բժշկությունների պարգևներ, օգնություններ, կառավարություններ, այլևայլ լեզուներ: Միթե ամենն առաքյալներ են: Միթե ամենը մարգարեներ են: Միթե ամենը վարդապետներ են: Միթե ամենը զորություններ անող են: Միթե ամենը բժշկությունների պարգևներ ունեն:

> Մի՞թե ամենը լեզուներով են խոսում: Մի՞թե ամենը թարգմանում են» (Ա Կորնթ. 12.28-30):

Դուք նկատո՞ւմ եք, որ Պողոսը խոսում է այն ծառայության պարգևների մասին, որոնք Աստված հաստատել է եկեղեցում: Անկասկած, բոլորը չէ, որ առաքյալ են, մարգարե են, ուսուցիչ են, հովիվ են կամ հրաշքների և բժշկությունների պարգևներ ունեն, նաև բոլորը չէ, որ լեզուներով խոսելու և երկնային լեզուները թարգմանելու ծառայության պարգև ունեն: Ինչո՞ւ է այդպես: Պատասխանը հետևյալ հատվածում է.

> «Ուրեմն, լեզուները *[լեզուները՝ որպես նշան]* նշանի համար են, ոչ թե հավատացյալներին, այլ՝ անհավատներին: ...եթե ամբողջ եկեղեցին մեկտեղ գա, և ամենը լեզուներով խոսեն *[մեկնության լեզուներ],* և տգետներ կամ անհավատներ մտնեն այնտեղ, մի՞թե չեն ասի, թե դուք գժված եք» (Ա Կորնթ. 14.22,23, *շեղագիրը հեղինակինն է):*

Մինչև այս հարցին պատասխանելը, թույլ տվեք նշել, որ այս երկու խոսքերը պարզորեն ցույց են տալիս տարբերությունը երկու հանրային լեզուների միջև: Նախ՝ նա գրում է, որ լեզուները նշան են անհավատների համար: Նա նկատի ունի խոսելը այնպիսի երկրային լեզուներով, որոնք մենք երբեք չենք սովորել: Անհավատը, որը գիտի այդ լեզուն, պարզորեն գիտակցում է, որ դուք չէիք կարող ասել այդ ամենը՝ առանց Տիրոջ հրաշագործ միջամտության: Այնպես որ, սա նշան է անհավատների համար:

Դրանից հետո Պողոսը խոսում է այն մասին, որ ամբողջ եկեղեցին միասին հավաքվելիս բոլորը միաժամանակ լեզուներով են խոսում: Պարզ է, որ խոսքը երկնային լեզուների մասին է: Ես գիտեմ, որ այդպես է, քանի որ Պենտեկոստեի օրը, երբ բոլոր աշակերտներն ազդարարում էին Աստծո մեծ գործերը

տարբեր երկրային լեզուներով, նրանք մեկնության կարիք չունեին, որովհետև անհավատները հասկանում էին նրանց: Այս խոսքում Պողոսը նկատի ունի եկեղեցուն խոսք ուղղելը՝ երկնային լեզվով, որը պետք է մեկնվի: Եթե այն չմեկնվի, ոչ ոք ոչինչ չի հասկանա: Ինչպես տեսնում եք, կարիք չկա, որ բոլորը լեզուներով խոսեն, այլապես անտեղյակ մարդիկ կամ անհավատները կմտածեն, որ մենք խելագար ենք:

Այսպիսով՝ «Մի՞թե ամենը լեզուներով են խոսում» հարցի պատասխանը, որը թյուր կերպով է ընկալվել շատերի կողմից, պարզ է: Աստված ընտրովի մոտեցում է ցուցաբերում, երբ խոսքն այն ծառայողական պարգևների մասին է, որոնք Նա կարգում է եկեղեցում, քանի որ բոլորը չէ, որ պետք է գործեն դրանցում: Բայց Նա կողմնակալ *չէ*, և ես կրկնում եմ՝ Նա ընտրովի մոտեցում չի ցուցաբերում այն բանում, ինչ տրամադրում է յուրաքանչյուր հավատացյալի՝ մեր անձնական ընթացքի համար: Լեզուների պարգևի հետևյալ երկու տեսակները վերաբերում են Աստծո հետ մեր անձնական հաղորդակցությանը:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԼԵԶՈՒՆԵՐ

Լեզուների հաջորդ երկու տեսակն անձնական աղոթքի համար է, և Հայրը մատակարարել է դրանք յուրաքանչյուր քրիստոնյայի, որը հավատում է: Մենք կարող ենք տեսնել դրանք հետևյալ խոսքերում.

> «Որովհետև եթե ես աղոթք անեմ օտար լեզվով, իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն ի՞նչ է, աղոթք անեմ հոգով, աղոթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ» (Ա Կորնթ. 14.14,15):

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը հատկապես նշում է,

որ այս լեզուներն աղոթքի համար են, ոչ թե եկեղեցուն ծառայելու: Մենք նույնպես կարդում ենք նույն այս գլխում. «Լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ» (Ա Կորնթ. 14.2): Երբ խոսում ենք երկու հանրային լեզուներից որևէ մեկով, մենք դիմում ենք կա՛մ անհավատներին (լեզուները՝ որպես նշան), կա՛մ եկեղեցուն (մեկնության լեզուներ), բայց երբ աղոթում ենք լեզուներով, մենք խոսում ենք Աստծո, ոչ թե մարդկանց հետ: Դուք տեսնո՞ւմ եք տարբերությունը:

Նախորդ հատվածում Պողոսը ցույց է տալիս երկու ձև՝ աղոթելու համար: Առաջինը՝ ձեր մտքով, որն իմ դեպքում անգլերենով է: Հաջորդը լեզուներով աղոթելն է, որի դեպքում իմ հոգին է աղոթում՝ առաջնորդվելով Սուրբ Հոգով: Նույնը ճշմարիտ է երկրպագության երգեր երգելու վերաբերյալ. «Սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ»:

Հուդան գրում է լեզուների անձնական աղոթքի մասին.

> «Բայց դո՛ւք, սիրելինե՛ր, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք՝ Սուրբ Հոգով աղոթք անելով» (Հուդա 20):

Ուշադրություն դարձրեք, որ երբ լեզուներով աղոթում ենք, մենք կառուցում ենք մեր անձերը, այնինչ, երբ լեզուներով խոսում ենք՝ դիմելով եկեղեցուն, և մեկնում ենք, մենք շինում կամ կառուցում ենք եկեղեցին (տե՛ս Ա Կորնթ. 14.5): Աստված ցանկանում է երկուսն էլ, և երկուսն էլ շատ կարևոր են:

Հաջորդ գլխում ավելի խորը կքննարկեմ լեզուների այս տեսակը: Դուք կբացահայտեք, որ այն անչափ կարևոր է մեր Տիրոջ հետ մտերմորեն վարվելու համար: Լեզուների այս տեսակը ես անվանում եմ «Մտերմության լեզու»:

ԲԱՐԵԽՈՍԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

Վերջինը լեզուների չորս տեսակից՝ բարեխոսական լեզուներն են: Բարեխոսությունն այն է, երբ մենք աղոթքով կանգնում ենք խրամատում՝ խնդրելով ինչ-որ մեկի համար, ով կարիքի մեջ է:

> «Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև, թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք, ինչպես արժան է, չգիտենք, բայց Ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում: Եվ սրտերը Քննողը գիտի, թե ինչ է Հոգու խորհուրդը, որովհետև Աստծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխոսում է» (Հռոմ. 8.26,27):

Կան դեպքեր, երբ չգիտենք, թե ինչի համար աղոթենք: «Նոր կենդանի թարգմանությունը» լավագույնս ձևակերպում է սա. «Որովհետև մենք նույնիսկ չգիտենք, թե ինչի համար պետք է աղոթենք, ո՛չ էլ՝ թե ինչպես պետք է աղոթենք»:

Ես չգիտեմ այն, ինչ տեղի է ունենում իմ սիրելիների հետ կամ այլ կարիքավոր մարդկանց հետ, բայց Աստծո Հոգին գիտի: Իմ մայրն ապրում է Ֆլորիդա նահանգում, իսկ ես՝ Կոլորադո: Պատկերացրեք, որ նա այնպիսի իրավիճակում է, որն աստվածային միջամտության կարիք ունի, սակայն նա չգիտի այդ մասին, կամ էլ չի կարող կապվել ինձ հետ: Ինչպե՞ս իմանամ, թե ինչի համար աղոթեմ, կամ՝ որ նա ընդհանրապես աղոթքի կարիք ունի:

Առաջին անգամ, երբ այս աստվածաշնչյան հատվածն իրական դարձավ ինձ համար, իմ ուսանողական տարիներին էր: Ես երկու տարվա հավատացյալ էի, բայց մարդկանց Հիսուսի մասին պատմելու ուժգին հոգևոր քաղց էի զգում: Այնպես որ, Աստվածաշնչյան ուսումնասիրության խումբ սկսեցի մեր համալսարանում՝ տղաների և աղջիկների հանրակացարաննե-

րի ուսանողների համար: Շուրջ վաթսուն ուսանող հաճախում էր մեր հանդիպումներին: Մի երեկո ես սովորեցնում էի Սուրբ Հոգու մասին: Ես պարզապես անցնում էի Աստվածաշնչով և ցույց էի տալիս ներկաներին Աստծո կամքը: Այդտեղ կար մի աղջիկ, որին սովորեցրել էին, որ նա ինքնաբերաբար ընդունել էր Սուրբ Հոգուն, երբ վերստին ծնվել էր, և որ լեզուներով աղոթելու շրջանն անցել էր: Որքա՜ն ցավալի է, որ նրա ուսուցիչները հավատում էին ոչ թե Աստվածաշնչին, այլ՝ իրենց ուսուցիչներին, որոնք նույնպես կուրացած էին: Այնուամենայնիվ, այդ երեկո, երբ նա տեսավ, թե ինչ է Աստվածաշունչն ասում այդ մասին, հավատաց և մի քանի այլ ուսանողների հետ անմիջապես լցվեց Սուրբ Հոգով:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, ես արթնացա մեր հանրակացարանի տղաներից մեկի հաղորդագրությունից այն մասին, որ այցելու ունեի: Ես շտապ հագնվեցի և դուրս եկա մեր հանրակացարանի նախասրահ. իմ այցելուն այդ աղջիկն էր, որի հանրակացարանը փողոցի մյուս կողմում էր: Նրա դեմքը փայլում էր, և նա ասաց.

- Ջո՛ն, ներողություն, որ արթնացրի քեզ, բայց ես այլևս չէի կարող սպասել, որ պատմեի, թե ինչ տեղի ունեցավ այս առավոտյան:

Նա պատմեց, որ Սուրբ Հոգին արթնացրել է իրեն առավոտյան ժամը հինգին, և զգացել է իր սրտում, որ պետք է շտապ աղոթի: Նա հասկացել է, որ ինչ-որ վատ բան է տեղի ունենում. այնպես որ, ապահով վայր է գտել և սկսել է լեզուներով աղոթել: Նա ասաց, որ այդ աղոթքն ավելի լարված է դարձել, և նա հասկացել է, որ հոգևոր պայքարի մեջ է: Այնպես որ, աղոթքի ընթացքում հարցրել է Տիրոջը, թե ո՞ւմ համար է Աստված դրդում իրեն բարեխոսել: Նա լսել է սրտում, որ աղոթում է մի տարեց մարդու համար, որի կյանքին վտանգ է սպառնում: Նա մեկ ժամ աղոթել է և խաղաղություն զգացել սրտում:

Գրեթե մի քանի րոպե անց նրանց սենյակի հեռախոսը զանգում է: Խոսափողի մոտ են կանչում նրա սենյակակից աղջկան, որը նույնպես հավատացյալ էր: Այդ աղջիկը վերցնում է խոսափողը և պարզվում է, որ նրա պապիկը, որի հետ նա շատ մտերիմ էր, սրտի ընդարձակ կաթված է ստացել առավոտյան ժամը հինգին, և նրա կյանքը հրաշքով փրկվել է: Բժիշկները կարողացել էին կայունացնել նրա վիճակը այդ զանգից մի քանի րոպե առաջ՝ ճիշտ այն պահին, երբ այդ աղջիկը խաղաղություն էր զգացել և դադարել էր աղոթել:

Նրա դեմքը փայլում էր: Քրիստոնեական ամբողջ կյանքի ընթացքում նրան ասել էին, որ լեզուներով աղոթելու շրջանն անցել է, քանի որ դրանց կարիքն այլևս չկա: Ի՞նչ էր նա բաց թողել, միայն որովհետև ինչ-որ մեկը չէր հավատում Աստվածաշնչին: Այժմ ոչ ոք չի կարողանա տարհամոզել նրան: Նա մեկընդմիշտ համոզված է, որ լեզուներով աղոթելն այսօր անհրաժեշտ է մեզ՝ հավատացյալներիս համար:

Ես տեսել եմ սա անթիվ անգամներ: Բարեխոսական լեզուների հետ կապված մի շատ պատկերավոր դեպք տեղի է ունեցել Էսթերի՝ մեր Ավստրալիայի գրասենյակի ղեկավարի հետ: Նա աղոթքի հրաշալի պատերազմող է և հրաշալի ծառայող է: Դեռևս ինսուլինական թվականներին, երբ նա Աստվածաշնչյան դպրոցի ուսանող էր, մի առավոտյան, կատարելով տնային գործերը, նա պարզապես բարձրացրել է ձեռքերը և ասել. «Տե՛ր, այսօր չկա մի բան, ինչի համար պետք է աղոթեմ. այնպես որ, եթե Քեզ պետք եմ, ահա՛ ես»:

Նա ասաց, որ հանկարծ իր վրա աղոթքի մեծ բեռ է իջել: Նա ծնկի է եկել իր հյուրասենյակում, և լեզուները պարզապես հորդել են նրանից մեծ ուժով: Իր հոգում նա շարունակ տեսնում էր մի չինացի տղամարդու, որը ծնկի էր եկել կեղտոտ հատակին և շրջանաձև շարժումներ էր անում իր ձեռքերով, ասես լվանում էր այն: Աղոթքի ընթացքում նա զգացել է, որ պետք է գոչի. «Վե՛ր կաց: Վե՛ր կաց: Վե՛ր կաց»: Բավականին ժամա-

նակ աղոթելուց հետո սրտում թեթևություն է զգացել և վերադարձել է տնային գործերին:

Մոտավորապես հինգ ամիս անց մի մարդ Նոր Զելանդիայից, որը միսիոներ էր Չինաստանում, հյուրընկալվել է իրենց Աստվածաշնչյան դպրոցում: Նա պատմել է մի չինացի հովվի մասին, որը մեկ այլ հովվի հետ հալածվում էր և բանտարկված էր մայրցամաքային Չինաստանում: Մյուս հովիվն ասել է նրան, որ Աստված ազատելու է նրան բանտից: Իրենց սրտերի այս խոսքով նրանք անցան իրենց ամենօրյա մաքրության աշխատանքին բանտում:

Կարճ ժամանակ անց բանտապահը որոշեց ետ ուղարկել բոլոր բանտարկյալներին իրենց բանտախցերը՝ բացի այդ հովվից: Նա մենակ էր այդ սրահում և հատակն էր լվանում, երբ հանկարծ մի ուժգին ձայն է լսում. «Վե՛ր կաց: Վե՛ր կաց: Վե՛ր կաց»: Չկարողանալով անտեսել այն, ինչ լսեց, նա վեր կացավ և քայլեց դեպի դուռը: Զարմանալի է, բայց այն փակ չէր. այնպես որ, նա բացեց դուռը և աննկատ դուրս եկավ պաշտպանված բանտից, և երբ դուրս եկավ, ուղիղ բանտի դռան առջևում տաքսի էր կանգնած: Նա նստեց և հեռացավ:

Էսթերն այնքա՜ն ոգեշնչվեց՝ մտածելով, որ գուցե ինքը հենց դրա համար էր աղոթում ամիսներ առաջ: Նա մոտեցավ այդ միսիոներին (որին նախկինում երբեք չէր հանդիպել) այն բանից հետո, երբ ավարտել էր ուղերձը, և պարզեց, որ դա տեղի էր ունեցել նույն օրը, երբ, ըստ իր աղոթքի մատյանի գրառումների, ինքն աղոթում էր իր հյուրասենյակում:

Այդ Աստվածաշնչյան դպրոցի ուսուցիչներից մեկը նույնպես մոտեցավ Էսթերին և այդ միսիոներին: Նա նույնպես հիշեց, որ Սուրբ Հոգին աղոթքի բեռ էր դրել իր վրա մի քանի ամիս առաջ, որպեսզի աղոթեր կարիքի մեջ գտնվող մի մարդու համար: Երբ նա հրատապ կերպով լեզուներով էր աղոթում, նա նույնպես տեսավ մի չինացի տղամարդու, որը բանտում էր: Այդ միսիոները ցույց տվեց այդ չինական եկեղեցու մի խմբա-

յին լուսանկար, որը կար իր մոտ, և Աստվածաշնչյան դպրոցի ուսուցիչը մատնացույց արեց այն մարդուն, որին նա տեսել էր լեզուներով աղոթելիս: Կարիք չկա ասել, որ նա ճշտորեն ցույց է տվել այդ եկեղեցու ավագ հովվին, որն ազատվել էր բանտից:

Էսթերը և Աստվածաշնչյան դպրոցի ուսուցիչը համեմատեցին իրենց աղոթքի մատյանների տվյալները և պարզեցին, որ նրանք աղոթել էին դրա համար ճիշտ նույն օրը: Աստված հաստատեց երկուսի համար էլ, որ նրանք կարևոր դեր ունեին այդ մարդու ազատության մեջ՝ շնորհիվ իրենց հնազանդ աղոթքի:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ՀԱՎԱՏԱԼՈՒ

Ինչ կլիներ, եթե Էսթերին սովորեցնեին, որ լեզուների ժամանակն անցել է այն պահից, երբ ամբողջացել է Աստվածաշունչը: Ինչ կլիներ, եթե նրան սովորեցնեին, որ լեզուները բոլորի համար չեն: Քանի՞սն են զրկվում այս արտոնությունից այսօր, քանի որ հավատացել են այն բանին, ինչ մարդն է սովորեցրել, ավելի, քան այն բանին, ինչ Աստվածաշունչն է սովորեցնում:

Մեծագույն ողբերգությունը, որը նկատել եմ իմ ծառայողական տարիներին, այն է, որ բազմաթիվ քրիստոնյաներ մեկնում են Աստծո Խոսքն իրենց փորձառությամբ, փոխարենը թույլ տան, որ Աստծո Խոսքը թելադրի իրենց փորձառությունները: Աստված սահմանափակված չէ մեր փորձառություններով. Նա ավելին է:

Սուրբ Հոգու լեցունությանը ձգտելու իմ որոնումների մեջ հանդիպել եմ բազմաթիվ բարի մտադրություններ ունեցող քրիստոնյաների, որոնք փորձում էին տարհամոզել ինձ լեզուներով խոսելուց: Հիսուսին որպես Տեր ընդունելուց մի քանի ամիս անց ինձ տարան այն ուսանողական ծառայության առաջնորդական հավաքույթին, որի տպագիր նյութերը

փրկության էին առաջնորդել ինձ: Ես հավիտյան երախտապարտ եմ լինելու այդ ծառայողական խմբին:

Այնուամենայնիվ, այդ հավաքույթին ինձ մեծ ցնցում էր սպասում: Այդ ծառայողական խմբի նախագահը հարցրեց յուրաքանչյուր առաջնորդի, թե որն էր նրանց աղոթքի առաջին խնդրանքն այդ կիսամյակում: Մի երիտասարդ ասաց, որ աղոթում էր միջինը «4» գնահատական ստանալու համար: Մյուսն ասաց, որ աղոթում էր իր սենյակակցի փրկության համար: Երբ մոտեցան ինձ, ես պարզապես ասացի.

- Ես ուզում եմ ընդունել Սուրբ Հոգուն, ինչպես որ գրված է Աստվածաշնչում, երբ նրանք խոսեցին նոր լեզուներով:

Հենց որ ասացի դա, նախագահն արագորեն և նյարդայնացած ասաց.

- Ջո՛ն, մենք կխոսենք այս մասին հավաքույթից հետո:

Մենք այդպես էլ չխոսեցինք: Այնուամենայնիվ, այն տղան մեր հանրակացարանից, որը Տիրոջն էր առաջնորդել ինձ, մի կողմ տարավ ինձ և ասաց.

- Ջո՛ն, նրանք չեն հավատում նոր լեզուներով խոսելուն:

Նորահավատ լինելով՝ ես զարմացած նայեցի նրան և ասացի.

- Ի՞նչ, նրանք չեն հավատում Աստվածաշնչում գրվածի՞ն:

Այդ դեպքը ստիպեց ինձ հիշել իմ նախկին հարանվանությունը, որը մեծ մասամբ հիմնում էր իր վարդապետությունը մարդկային ուսմունքների վրա, ոչ թե Աստվածաշնչի: Իրականում, մեզ խրախուսում էին Աստվածաշունչ չկարդալ, այլ թույլ տալ մեր հովվին մեկնել այն մեզ համար: Ես տասնինը տարի եկեղեցի էի հաճախում և կարծում էի, թե Երկինք էի գնում, այնինչ, իրականում, դժոխքի ճանապարհին էի: Այնպես որ, երբ բացահայտեցի Աստծո փրկության ծրագիրն Աստվածաշնչում՝ իմ հանրակացարանի ընկերներից մեկի միջոցով, ես որոշում կայացրի, որ հավատալու եմ Աստծո Խոսքին, անկախ այն բանից՝ հասկանո՞ւմ էի այն, թե՞ ոչ: Սա Տիրոջ երկյուղն է, և Տիրոջ երկյուղն իմաստության սկիզբն է (տե՛ս Սաղմ. 111.10):

ՕՐՀՆՎԱԾ ԿԱՄ ԱՆՏԵՂՅԱԿ

Ես բարի լուր ունեմ. Աստծո կամքն է, որ դուք լցվեք Իր Հոգով և աղոթեք երկնային լեզուներով: Իրականում, եթե ուզում եք լսել Աստծո սրտի աղաղակն այս մասին, այն հետևյալն է.

> «Ես կամենում եմ, որ դուք ամենդ լեզուներով խոսեք» (Ա Կորնթ. 14.5):

Գուցե ասեք. «Այս խոսքերը Պողոսինն են, և նա ասում էր դա կորնթացիներին»:

Ո՛չ, Աստվածաշունչը պարզորեն հայտնում է մեզ. «Ամենից առավել, դուք պետք է հասկանաք, որ ոչ մի մարգարեություն Աստվածաշնչում երբևէ չի եկել հենց մարգարեներից» (Բ Պետր. 1.20, NLT), և որ «Աստվածաշնչի բոլոր գրքերը տրված են Աստծո ոգեշնչմամբ» (Բ Տիմոթ. 3.16, NKJV): Պարզ ասած, այս խոսքերը Պողոսի խոսքերը չեն՝ ուղղված կորնթացիներին, այլ՝ Տիրոջ Խոսքերը՝ ուղղված մեզ, քանի որ Աստծո Խոսքը «կենդանի և հավիտենական» է (Ա Պետր. 1.23): Աստված է, որ ասում է Իր զավակներին. «Ես կամենում եմ, որ դուք՝ ամենդ, լեզուներով խոսեք»:

Դուք երբեք օրհնված չեք լինի այն բանով, ինչին չեք հավատում: Ես ուզում եմ կրկնել. Աստված պատասխանում է ոչ թե մեր դատողությանը, կարիքին կամ զգացմունքներին, այլ՝ մեր հավատքին: Դուք կրկին ու կրկին կտեսնեք, որ Հիսուսն ասում է մարդկանց. «Քո հավատքով թող լինի քեզ»: Հավատքը պարզապես վստահում է, որ Աստված կկատարի Իր ասածը: Հավատքը գալիս է, երբ մենք լսում ենք Աստծո Խոսքերը, ոչ թե մարդու սխալական համոզմունքները:

Այնքա՜ն կարևոր է, որ մենք քարոզենք ճշմարտությունը և հավատանք ճշմարտությանը, ոչ թե մարդկային փորձառությանը: Փորձառությունը հրաշալի միջոց է, որը հաստատում է ճշմարտությունը, բայց այն չպետք է ճշմարտության ուսուցի-

չը լինի: Սուրբ Հոգին է մեր Ուսուցիչը, և Նա երբեք հակառակ չի խոսի Աստծո Խոսքում գրվածին: Երբ մենք հավատանք Աստծո Խոսքին, կտեսնենք և փորձառաբար կվերապրենք: Շատերն են հակառակն անում. նրանք ուզում են վերապրել, ապա՝ հավատալ: Ահա թե ինչի մասին էր Հիսուսն ասում Թովմասին: Մենք կարող ենք ընտրել՝ արդյո՞ք մեր հավատքը հիմնելու ենք այլ մարդկանց փորձառության վրա, թե՞ Նրա Խոսքի, որի մասին գրված է.

> «Աստված մարդ չէ, որ սուտ խոսի, ո՛չ էլ մարդու որդի, որ զղջա: Մի՞թե կասի և չի անի, կամ՝ կխոսի և չի կանգնեցնի» (Թվոց 23.19):

Ամփոփելով՝ Սուրբ Հոգին ասում է բոլորիս լեզուներով աղոթքի վերաբերյալ. «Ես չեմ ուզում, որ դուք անտեղյակ լինեք» (Ա Կորնթ. 12.1, NKJV): Դրանից հետո Նա քննարկում է այն ամենը, ինչ գրված է այս գլխում, և ավելին: Եվ ավարտելով՝ Նա հստակ ասում է.

> «Բայց եթե մեկը տգետ է, թող տգետ լինի» (Ա Կորնթ. 14.38):

Այլ կերպ ասած՝ Պողոսի միջոցով Նա ասում է մեզ. «Ես պարզորեն հայտնել եմ ձեզ Իմ կամքը լեզուների վերաբերյալ: Եթե դուք որոշեք անտեղյակ մնալ, դուք անտեղյակ կլինեք և չեք օրհնվի Իմ մատակարարմամբ»: Ես համոզված եմ, որ Նա տրտմած էր, երբ դրդեց Պողոսին գրել այս խոսքերը, քանի որ կանխատեսում էր այն մարդկանց, որոնք տարիներ անց քննարկման առարկա էին դարձնելու սա (ինչը բոլորովին չէր վիճարկվում Առաջին եկեղեցում):

Կրկին, Նա ցավով ասում է մեզ, որ մենք կարող ենք անտեղյակ մնալ, բայց եթե այդպես վարվենք, Նրա վերջին խոսքն այս հարցում հետևյալն է.

«Լեզուներով խոսելը մի՛ արգելեք» (Ա Կորնթ. 14.39):

Սա զգուշացում է. եթե դուք երբևէ լսեք ինչ-որ մեկի, ով հակառակվում է լեզուներին, նա ուղղակիորեն անհնազանդ է Տիրոջը: Աստված գիտեր, որ ոմանք վերջին օրերում կա՛մ անտեղյակության, կա՛մ համառության պատճառով սովորեցնելու էին Իր գառներին, որ լեզուներով խոսելու շրջանն անցել է, կամ՝ որ դա Աստծուց չէ:

Իմ աղոթքն է, որ տեսնեք այն հրաշալի մատակարարումը, որն Աստված տվել է Իր զավակներին, քանի որ հաջորդ գլխում խոսելու ենք մտերմության այն հրաշալի լեզվի մասին, որը Սուրբ Հոգին տալիս է հավատացողներին:

(Նշում. եթե դուք չեք սպացել Սուրբ Հոգու լեցունությունը, բացե՛ք Հավելված Բ-ն. ես ուզում եմ առաջնորդել ձեզ աղոթքի մեջ, որպեսզի սպանաք այն):

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Այս գլխի սկզբում հեղինակը խոսում է իր նորագյուտ հավատքից, երբ համալսարանի ուսանող էր: Նա պատմում է, որ նոր կյանք էր ստացել, սակայն զգում էր, որ ինչ-որ բան պակասում էր, թեև ջանասիրաբար Աստվածաշունչ էր կարդում: Կարո՞ղ եք ասել, որ վերապրել եք դա անցյալում, կամ՝ հիմա եք վերապրում:

2. Ինչ վերաբերում է լեզուներով խոսելուն, արդյո՞ք այս ուսուցումը մարտահրավեր է նետում ձեր համոզմունքներին: Ինչպիսի՞ ազդեցություն թողեց ձեզ վրա լուրն այն մասին, որ Աստված կամենում է, որ դուք լցվեք Իր Հոգով և աղոթեք երկնային լեզուներով:

3. Դուք հենց այնպես չեք կարդում այս գիրքը. ինչ-որ վերապրում կամ իրադարձություն դրդել է ձեզ ուսումնասիրել, թե ինչ է նշանակում մոտենալ Աստծուն: Հնա-

րավո՞ր է, որ Նա արդեն իսկ տրամադրել է Իրեն ավելի մոտենալու միջոց՝ այն, ինչ դուք ուսումնասիրում եք հիմա: Հնարավո՞ր է, որ լեզուների պարգևը՝ անձնական և բարեխոսական աղոթքի համար, հաջորդ քայլն է Տիրոջ հետ ձեր ընթացքի մեջ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

Աստծո իմաստությունը կամ խորհուրդը խորը ջրեր են և հաճախ առեղծված են բնական մտքի համար:

Ես բազմիցս գրել եմ սա, բայց որպեսզի համոզվեմ, որ այս խոսքերն իրական են դառնում ձեզ համար՝ ձեր էության խորքում, ես շարունակ կրկնելու եմ. *Աստված եռանդուն կերպով փափագում է ձեզ հետ մտերմության:* Նա բուռն կերպով ձգտում է ձեզ հետ շփման: Նա ոչ միայն ցանկանում է հաղորդակցվել ձեզ հետ, այլև՝ որ այդ հաղորդակցությունը բավականություն պատճառող և հագեցած լինի:

ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԱՍՏԾՈ ՀԵՏ՝ ՆՐԱ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Որպեսզի այս ապշեցուցիչ հաղորդակցությունն իրական դառնա, Աստված ճանապարհ է բացել, որով կարող ենք շփվել Նրա հետ՝ Նրա մակարդակով: Թույլ տվեք բացատրել.

«Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ» (Ա Կորնթ. 14.2):

Մենք գիտենք, որ Պողոսը նկատի չունի հանրային լեզուների երկու տեսակներից ոչ մեկը, քանի որ երկուսի դեպքում էլ մարդիկ փոխանցում են Աստծո Խոսքն ուրիշներին՝ իրենց համար անծանոթ լեզուներով: Այս աստվածաշնչյան խոսքում Պողոսը նկատի ունի լեզուների այն տեսակները, որոնց միջոցով մենք աղոթում ենք կամ հաղորդակցվում ենք Աստծո հետ: Երբ *աղոթում ենք* լեզուներով, մենք խոսում ենք անմիջապես Աստծո հետ, ոչ թե մարդկանց: Պողոսը նույնպես գրում է. «Սուրբ Հոգին օգնում է մեզ մեր նեղության մեջ: Որովհետև մենք նույնիսկ չգիտենք, թե ինչի համար պետք է աղոթենք, ո՛չ էլ՝ թե ինչպես պետք է աղոթենք» (Հռոմ. 8.26, NLT): Կրկին, երկու հստակ խոչընդոտ Աստծո հետ հաղորդակցվելու համար. հաճախ մենք չգիտենք, թե ինչի համար աղոթենք, և երկրորդը՝ թե ինչպես աղոթենք:

Հետևյալ օրինակը լավագույնս նկարագրում է սա: Եթե ես այցելեի Միացյալ Նահանգների նախագահի գրասենյակ, կարո՞ղ էի արդյոք հաղորդակցվել նրա հետ՝ նրա մակարդակով: Պատասխանն ակնհայտ է՝ ո՛չ. նա ստիպված կլիներ իջնել իմ հասկացողության մակարդակին: Նա գիտի մեր երկրի գործերի մասին ավելին, քան ես, ներառյալ բոլոր անվտանգության խնդիրները, որոնք ներկայացված չեն հանրությանը: Նրան հայտնի են մեր երկրի բազմաթիվ ծրագրեր և նախագծեր՝ իրենց ժամկետներով և գործընթացներով, որոնք պետք է գաղտնի պահվեն, քանի որ չար մարդկանց ձեռքերում հայտնվելու դեպքում կարող են սպառնալ ազգային անվտանգությանը:

Զուգահեռ անցկացնելով՝ երբ ես մուտք եմ գործում տիեզերքի Թագավորի գրասենյակ՝ Նրա գահի սրահը, եթե ես միայն աղոթեմ իմ հասկացողությամբ, մեր հաղորդակցությունը սահմանափակ կլինի: Ես չեմ կարող խոսել Տիրոջ հետ՝

Նրա մակարդակով, քանի որ Նա գիտի ավելին, քան ես: Միակ միջոցը, որով Նա կարող է հաղորդակցվել ինձ հետ, իմ հասկացողության մակարդակին իջնելն է: Ինչպես վերևում բերված օրինակում՝ Նա գիտի տիեզերքի գործերի մասին ավելին, քան ես, ներառյալ բոլոր խորհուրդները, որոնք տարբեր պատճառներով գաղտնի են պահվում, որոնցից մեկն այն է, որ դրանք չհայտնվեն չար ձեռքերում: Սա հստակ երևում է Պողոսի հորդորի խոսքերում.

> «Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում խորհրդով, որ Աստված հավիտենից առաջ սահմանեց նրան մեր փառքի համար: Որն այս աշխարհի իշխաններից ոչ ոք չճանաչեց, քանի որ, եթե ճանաչած լինեին, փառքի Տիրոջը խաչը չէին հանի» (Ա Կորնթ. 2.7,8):

Թեև այս հատվածը հատկապես վերաբերում է իմաստությանը Տեր Հիսուսի խաչելության, հարության և դրան հետևող փառքի վերաբերյալ, սա միայն մեկ օրինակ է այն մասին, որ Աստված թույլ չի տալիս, որ Իր իմաստությունը հայտնվի չար ձեռքերում: Սակայն կան նաև այլ իմաստուն խորհուրդներ (տե՛ս Մատթ. 7.6): Աստվածաշունչը հայտնում է, որ մենք պատերազմի մեջ ենք, և այն թշնամիները, որոնց դեմ պատերազմում ենք, հոգևոր իշխանությունները, պետությունները, այս աշխարհի խավարի աշխարհակալները և չար դիվային հոգիներն են (տե՛ս Եփես. 6.12): Բնական պատերազմում պետք է լինի գաղտնի հաղորդակցություն միասին պայքարող անձանց միջև: Նույնը վերաբերում է Տիրոջ զորքերի Հրամանատարին և Նրա թագավորության զինվորներին: Հաղորդակցության ինչպիսի՞ անզուգական միջոց է Տերը տվել Իր զավակներին՝ Իր թագավորության բարօրության և մեր պաշտպանության համար: Թշնամին նույնիսկ գաղափար չունի այն մասին, թե ինչ ենք մենք խնդրում Հորից, երբ լեզուներով ենք խոսում:

Դիվային ուժերը կարող են դավեր նյութել՝ մեզ կամ մեր սիրելիներին հարձակման ենթարկելու համար, բայց երբ մենք աղոթում ենք լեզուներով, հանկարծակի հրեշտակային օգնության պատնեշ է հայտնվում՝ ի զարմանս դևերի: Արդյունքում դևերը սարսափահար փախչում են, և նրանց հարձակումները չեն հաջողվում:

ԳԼԽԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԸ

Մեր լեզուներով աղոթքի միակ նպատակն այն չէ, որ կարևորագույն տեղեկությունը չհայտնվի չար ձեռքերում: Գլխավոր նպատակը մտերմությունն է: Կինս և ես բավականին ժամանակ է՝ միասին ենք, և այնքան մտերիմ ենք դարձել, որ մեր միջև եզակի հաղորդակցություն է ձևավորվել: Նա կարող է ինչ-որ բան ասել ինձ մարդկանցով լի սրահում, ինչը ոչ ոք չի հասկանա: Մենք մտերմության լեզու ենք ձևավորել: Այն գոյություն ունի ոչ միայն ամուսինների և կանանց միջև, այլև նրանց, ովքեր մտերիմ հարաբերություններ ունեն: Այն կարող է ձևավորվել այնպիսի մարդկանց միջև, որոնք ամբողջ կյանքում ընկերներ են եղել, տարիներ շարունակ միասին են աշխատել, միասին պատերազմի դաշտում են եղել և այլն: Իմաստն այն է, որ գոյություն ունի մտերմության լեզու, որը ձևավորվում է մարդկանց միջև և եզակի է նրանց համար:

Նմանապես, Աստված տրամադրել է մեզ միջոց, որով կարող ենք մտերմորեն հաղորդակցվել և շփվել Նրա հետ խորը մակարդակով՝ այնպիսի, որին մեր բնական չփրկագնված միտքը երբեք չէր կարողանա հասնել: Սաղմոսերգուն կանխատեսեց սա՝ գրելով. «Անդունդն անդունդին կանչում է՝ Քո հորձանքների ձայնով» (Սաղմ. 42.7): Այս հաղորդակցությունը համեմատվում է կենդանի ջրհորների հետ: Հիսուսն ասում է մեզ, որ մեր սրտերից ««կենդանի ջրերի գետեր կբխեն»: Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները» (Հովհ. 7.38,39): Մեր մտերիմ շփումը Տիրոջ հետ նմանեց-

ված է կենդանի հոսող ջրերի: Միայն մտածեք, թե ի՞նչ է Սուրբ Հոգին տվել մեզ: Ինչպիսի՞ կարողություն է Նա շնորհել մեզ: Ապշեցուցի՞չ է:

Շարունակենք մեր ուսումնասիրությունը, քանի որ այն ավելի ոգեշնչող է դառնում: Պողոսը շարունակում է խոսել այն հավատացյալի մասին, ով աղոթում է լեզուներով.

> «...որովհետև ոչ ոք չի հասկանում նրան. այնուամենայնիվ, հոգով նա խորհուրդներ է խոսում» (Ա Կորնթ. 14.2, NKJV):

Ի՞նչ նկատի ունի Պողոսը *խորհուրդներ* ասելով: Հունարեն բնագրում օգտագործված է *«մուստերիոն»* բառը: Վ. Է. Վայնը, որը Նոր կտակարանի հունարեն բառերի մասնագետ է, գրում է հետևյալը այս բառի վերաբերյալ. «Նոր կտակարանում այն նշանակում է ոչ թե առեղծվածայինը (ինչպես որ այն հասկացվում է անգլերենում), այլ՝ այն ամենը, ինչը, դուրս լինելով բնական ընկալման սահմաններից, կարող է ճանաչվել միայն աստվածային հայտնությամբ, և հայտնված է... միայն նրանց, ովքեր լուսավորված են Սուրբ Հոգով: Հասարակ իմաստով, «խորհուրդը» նշանակում է պահված գիտելիք. այս բառի սուրբգրային իմաստը հայտնված ճշմարտությունն է»:

Այնպես որ, ահա լեզուներով աղոթելու բազմաթիվ առավելություններից մեկը: Սուրբ Հոգի Աստված գիտի Հիսուսի և Հոր միտքը, քանի որ Նրանք Մեկ են: Նա նույնպես գիտի, թե ինչի կարիքը մենք ունենք, քանի որ Նա մշտապես մեզ հետ է: Եվ Նա միջնորդում է՝ տալով մեզ խոսքեր երկնային լեզվով, որպեսզի մենք խնդրենք, փնտրենք կամ հաղորդակցվենք կատարյալ կերպով: Որքա՞ն հրաշալի է: Գուցե մտածեք. *«Բայց ես չեմ հասկանում, թե ինչ եմ ասում, երբ աղոթում եմ լեզուներով»:* Այս պատճառով է, որ Պողոսն ասում է.

> «Ուրեմն լեզվով խոսողը թող աղոթք անի, որ թարգմանի էլ: Որովհետև եթե ես աղոթք անեմ օտար լեզվով,

իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է» (Ա Կորնթ. 14.13,14):

Այնպես որ, թե՛ խնդրանքի, թե՛ բարեխոսության, և թե՛ Աստծո հետ հաղորդակցվելու դեպքում եթե ես խնդրեմ Սուրբ Հոգուն լուսավորել իմ միտքը՝ ցույց տալով, թե ինչ է Նա դրդում իմ հոգուն աղոթել, Նա կանի՛ դա: Եվ արդեն ոչ միայն իմ հոգին է վայելում այդ շփումը, այլև՝ իմ անձը:

ՀԱՅՏՆՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՏՆՏԵՍ ԼԻՆԵԼԸ

Շատ անգամներ, այս շփման մեջ Տիրոջ հայտնությունները գալիս են Աստվածաշնչի խոսքերից, որոնք հանկարծ կենդանանում են: Ես գրի եմ առել և սովորեցրել եմ այս ճշմարտություններն իմ ծառայության տարիների ընթացքում: Այնուամենայնիվ, կան բազմաթիվ ճշմարտություններ, որոնք դեռ չեմ սովորեցրել:

Գուցե հարցնեք, թե ինչու չեմ սովորեցրել: Պատճառն այն է, որ դրանց ժամանակը չի եղել, կամ Աստված ցանկանում էր, որ այլ բան շեշտադրվեր և փոխանցվեր Իր ժողովրդին: Երբ մենք խոսում ենք՝ որպես Աստծո թագավորության դեսպաններ, պետք է հիշենք, որ մենք խոսում ենք Աստծո հրամանները, և կան բաներ, որոնք Նա ցանկանում է, որ ասվեն, և այլ բաներ, որոնք չպետք է ասվեն տվյալ պահին:

Ես երբեք չեմ մոռանա այն դեպքը, երբ դառը փորձով իմացա այս մասին: Ես հանդիպեցի մի ծառայողի, որը շատ հայտնի էր իր աշխարհամասում: Ես լսել էի նրա ծառայության մասին և համակրում էի նրան, նաև ցանկանում էի հանդիպել նրան: Մի հովիվ կազմակերպեց մեր հանդիպումը: Ես այնքա՜ն ոգեշնչված էի: Մի երեկո մենք հանդիպեցինք ընթրիքի սեղանի շուրջ՝ այդ հովիվը, այդ ծառայողը, ես և մեր կանայք: Ընթրիքի ժամանակ ես կիսվեցի Տիրոջ կողմից ինձ տրված խորը

հայտնությամբ, որը կարողացա հիշել, և ես արեցի դա, որպեսզի տպավորեի այդ ծառայողին (ես գիտակցաբար այդպես չէի մտածում այդ պահին, բայց ետ նայելով՝ գիտեմ, որ դա էր իմ շարժառիթը. որքա՜ն ոչ հասուն արարք):

Երեկոյան մեզ հրավիրող հովիվը մեքենայով հյուրանոց տարավ մեզ: Կինս և ես ուժասպառ էինք եղել բուռն օրվանից հետո: Այնուամենայնիվ, թեև ես շատ հոգնած էի, իմ հոգում խիստ անհարմարավետ զգացում կար: Ես գիտեի, որ Տերն ուզում էր, որ աղոթեի. այնպես որ, ասացի կնոջս, որ նա պառկեր քնելու՝ առանց ինձ: Նա այդպես էլ արեց, իսկ ես մեր հյուրանոցային համարի պատշգամբ դուրս եկա: Հենց որ ոտքս անցավ շեմից, Սուրբ Հոգին խստորեն ասաց սրտումս. «Ուրեմն, այս երեկո թագավորը ցուցադրեց իր տան բոլոր գանձերը»:

Ես հանկարծակիի եկա: Ամբողջովին ցնցվեցի, նաև ամոթ զգացի: Ես գիտեի, որ Սուրբ Հոգին նկատի ուներ Եզեկիայի պատմությունը: Նրա մոտ հյուրեր եկան, և նա ուզում էր տպավորել նրանց: Գրված է.

> «Եվ Եզեկիան ուրախացավ նրանց համար և ցույց տվեց նրանց իր գանձերի տունը՝ արծաթը և ոսկին, և խնկեղենները, և պատվական յուղը, և իր զենքերի ամբողջ տունը, և ամեն ինչ, որ գտնվում էր նրա գանձարաններում: Մեկ բան չկար, որ Եզեկիան ցույց տված չլիներ նրանց իր տանը և իր ամբողջ թագավորության մեջ» (Եսայի 39.2):

Իր բոլոր գանձերը ցույց տալուց հետո Եսայի մարգարեն Տիրոջից հանդիմանություն փոխանցեց Եզեկիային: Ես նույն կերպ էի զգում ինձ: Գիտեի, որ այդ երեկո պատմել էի այն ճշմարտությունների կամ գանձերի մասին, որոնք Աստված ցույց էր տվել ինձ, որպեսզի տպավորեի այդ ծառայողին:

Աստված խստորեն ասաց ինձ. «Որդի՛ս, Ես չեմ հայտնել Իմ

թանկ ճշմարտությունները, որ գնաս և աջուձախ պատմես՝ երբ քեզ հարմար թվա: Դրանք տրված չեն տպավորելու համար: Դու այն ամենի տնտեսն ես, ինչ Ես հայտնել եմ քեզ, և չպետք է խոսես, քանի դեռ Ես չեմ դրդել քեզ»:

Ես արագորեն ապաշխարեցի և ներում խնդրեցի: Այդ բեռը հեռացավ ինձնից, և ես խաղաղությամբ գնացի քնելու: Նրա ողորմությունը զարմանալի է:

Եթե մենք իմաստուն ենք, կձևավորենք մեր ներքին ընկերական շրջանակը այնպիսի մարդկանցով, որոնք անհոգ կերպով չեն պատմի ուրիշներին մեր գաղտնիքները: Մտերիմ ընկերներն իմաստուն կերպով են տնօրինում այն, ինչ գիտեն միմյանց մասին: Եթե ընկերներից մեկը շարունակ խախտում է այս սկզբունքը, մենք չպետք է կիսվենք նրա հետ՝ իմանալով, որ նա այլևս թանկ չի համարում մեր գաղտնիքները: Նույնը վերաբերում է Տիրոջ գաղտնիքներին: Եթե մենք ցանկանում ենք, որ Նա կիսվի մեզ հետ Իր սրտում եղածով, պետք է զգայուն լինենք այն հարցում, թե երբ և ինչով է Նա ցանկանում, որ կիսվենք ուրիշների հետ:

ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ԱՍՏԾՈ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Երբ ես աղոթում կամ հաղորդակցվում եմ Աստծո հետ լեզուներով, հայտնաբերում եմ, որ մտքումս գաղափարներ, հայտնություններ, իմաստություն կամ ուսմունքներ են ծագում: Լավագույն միջոցը, որով կարող եմ նկարագրել սա, այն է, որ դրանք պարզապես վեր են բարձրանում՝ նման օդի, որը դուրս է պրծնում ծովի խորքից և հայտնվում է ջրի երեսին: Գաղափարները վեր են բարձրանում իմ ներսի մարդու խորքից և հայտնվում են մտքիս կամ հասկացողությանս մակերեսին: Աստվածաշունչն ասում է մեզ.

> «Մարդու հոգին Տիրոջ ճրագն է. նա քննում է սրտի բոլոր ներսերը» (Առակ. 20.27):

Մենք պետք է մտապահենք, որ Սուրբ Հոգին չի խոսում մեր մտքին, այլ՝ մեր սրտին: Մեր սիրտն է մեր էության այն մասը, որը Նա լուսավորում է: Երբ մենք աղոթում ենք Հոգով և մեկնություն ենք խնդրում, Աստծո իմաստությունը և խորհուրդը վեր են բարձրանում մեր սրտից դեպի մեր մտքի կամ հասկացողության հարթությունը: Աստվածաշունչն ասում է մեզ.

> «Մարդու սրտի խորհուրդը նման է խորը ջրի, բայց հասկացողություն ունեցող մարդը կհանի այն» (Առակ. 20.5, NKJV):

Ի՞նչ է խորհուրդը: Այն իմաստություն է, որը կիրառվում է որոշակի իրավիճակում: Ինչո՞ւ են մարդիկ գնում խորհրդատուների մոտ. որպեսզի ստանան իմաստություն, որը ծածկված է իրենցից, որի կարիքն իրենք ունեն որոշակի իրավիճակում:

Ուշադրություն դարձրեք, որ միակ անձնավորությունը, ով կարող է դուրս բերել Աստծո խորհուրդը, որը նման է խորը ջրհորից հանվող կենդանի ջրի, հասկացողություն ունեցող մարդն է, կամ նա, ով ճանաչում է «Խորհրդականի» ճանապարհները: Սուրբ Հոգին գիտի Աստծո թագավորության բոլոր առեղծվածները (չհայտնված խորհուրդը, գիտելիքը և իմաստությունը): Կրկին կարդանք այն խոսքերը, որոնք Հիսուսը բարձրաձայն ասաց.

> ««Ինձ հավատացողը, ինչպես գիրքն ասում է, Նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները» (Հովհ. 7.38,39):

Համաձայն Առակաց գրքի, այն ջուրը, որը բարձրանում է մեր սրտից, Աստծո խորհուրդը կամ առեղծվածներն են, և Հիսուսը պարզորեն ասում է, որ դրա աղբյուրն Աստծո Հոգին է: Նա է կենդանի ջրի աղբյուրը (տե՛ս Երեմ. 2.13): Այժմ ուշադրությամբ կարդացե՛ք, թե ինչ է ասում Պողոսը.

> «Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում *խորհրդով*... որ ճանաչենք այն բաները, որ Աստծուց տրվեց մեզ: Որն էլ խոսում ենք, ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ՝ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով» (Ա Կորնթ. 2.7,12,13, *շեղագիրը հեղինակինն է):*

Այսպիսով, Աստծո իմաստությունը կամ խորհուրդը խորը ջրեր են և հաճախ առեղծված են բնական մտքի համար: Այնուամենայնիվ, Հիսուսն ասում է մեզ, որ այս կենդանի ջուրը կբխի Սուրբ Հոգու օգնությամբ: Ինչպե՞ս: Պողոսը պարզորեն ցույց է տալիս.

> «Որովհետև նա, որ լեզվով է խոսում, չի խոսում մարդկանց հետ, այլ՝ Աստծո, որովհետև ոչ ոք չի հասկանում նրան. այնուամենայնիվ, հոգով նա *խորհուրդներ* է խոսում» (Ա Կորնթ. 14.2, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Ահա և պատասխա՞նը: Ահա թե ինչպես է հասկացողություն ունեցող մարդը դուրս բերում Աստծո խորհուրդը: Որքա՞ն հաճախ եմ կարդացել այնպիսի հատվածներ Աստվածաշնչում, որոնք անհասկանալի են եղել ինձ համար: Բացի այդ, իմ մտքում չպատասխանված հարցեր են առաջանում: Այդ ամենը *խորհուրդ* կամ *առեղծված* է ինձ համար: Գրեթե միշտ նման դեպքերում ես պարզապես ասում եմ. «Սո՛ւրբ Հոգի, ես չեմ հասկանում սա. խնդրո՛ւմ եմ, ցո՛ւյց տուր սա ինձ...»: Ես պարզապես աղոթում եմ լեզուներով, և՝ կա՛մ այդ պահին, կա՛մ որոշ ժամանակ անց այն բանից հետո, երբ դադարում եմ լեզուներով աղոթելը և հեռանում եմ աղոթքի սենյակից, հայտնությունը թաքնված ճշմարտությունների մասին բարձրանում է դեպի իմ միտքը կամ հասկացողությունը: Որքա՞ն հրաշալի է:

Անթիվ անգամներ պատահել է, որ գիրք գրելիս ասես փակուղու բախվեմ: Այն ուղղությունը, որով պետք է շարունակեմ,

առեղծված է ինձ համար: Նման պահերին ես վեր եմ կենում իմ աթոռից և սկսում եմ լեզուներով աղոթել, և որոշ ժամանակ անց, սովորաբար՝ մի քանի րոպեից, իմաստությունը գալիս է՝ քանդված ամբարտակից բխող ջրի պես, և ես շարունակում եմ գրել ստեղնաշարով ևս մի քանի ժամ:

Երբ ամուրի էի, ինձ համար *առեղծված* էր, թե ո՞ւմ հետ պետք է ամուսնանայի: Այն տարիներին, երբ ամուրի քրիստոնյա էի, կային երեք աղջիկներ, որոնք ինձ շատ էին դուր գալիս, սակայն Հոգով աղոթքի մեջ ժամանակ անցկացնելուց հետո հասկացա, որ Աստված հստակ «ոչ» էր ասում: Դրանից հետո ես ծանոթացա Լիզայի հետ, և մեկ ամսվա ընթացքում ես ամեն օր երեսուն րոպե լեզուներով աղոթում էի մեր հարաբերությունների համար: Աստված տվեց ինձ շատ հստակ հավանություն այդ աղոթքների ընթացքում, այնուհետև՝ բազմաթիվ հաստատություններ: Բայց պետք է ասեմ, որ մինչև այդ հաստատությունները ստանալը, առանց կասկածի նշույլի ես գիտեի, որ նա էր իմ ապագա կողակիցը՝ այն պարզության և խաղաղության շնորհիվ, որ զգում էի լեզուներով աղոթելիս:

Եղել են դեպքեր, երբ ես շփոթված եմ եղել և չեմ կարողացել հասկանալ, թե ինչ է տեղի ունենում իմ կյանքում կամ իմ մտերիմներից որևէ մեկի կյանքում: Դա *առեղծված* է եղել ինձ համար: Նման դեպքերում ես պարզապես խնդրում եմ Սուրբ Հոգուն հայտնել ինձ Իր իմաստությունը կամ տեսանկյունը տվյալ իրավիճակի վերաբերյալ: Անշուշտ, լեզուներով աղոթելուց որոշ ժամանակ անց, եթե կա այնպիսի տեղեկություն, որը Նա ցանկանում է հայտնել ինձ, ես ստանում եմ այն:

Եղել են իրավիճակներ, երբ իմ ընտանիքի անդամներից որևէ մեկն աղոթքի կարիք է ունեցել, և դա ծածկված է եղել իմ մտքից, բայց Աստծո Հոգին եկել է ինձ վրա՝ դրդելով լեզուներով աղոթել նրա համար, և հետագայում իմացել եմ, թե ինչպիսի աստվածային օգնություն է նա ստացել կամ ինչպիսի չարիքից է ազատվել:

Խորհուրդները կամ *առեղծվածներն* այնպիսի բաներ են,

որոնք թաքնված են մեր բնական մտքից: Որպես օրինակ, ո՞ր եկեղեցին պետք է հաճախեմ, ի՞նչ ծառայության մեջ պետք է ընդգրկվեմ, ինչպիսի՞ տուն պետք է գնեմ, կամ՝ ինչպե՞ս արդյունավետ կերպով աղոթեմ նախագահի և այլ պաշտոնյաների համար, ինչպե՞ս արդյունավետ կերպով աղոթեմ իմ հովվի համար: Ինչպես հասկանում եք, այս ցուցակն անվերջ է:

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ՝ ԱՍՏԾՈ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԻՄԱՆԱԼՈՒ ՄԵՋ

Խորհրդի կամ *առեղծվածի* այն ոլորտը, որը, թվում է, ճնշող է հավատացյալների մեծ մասի համար, առաջնորդությունն է: Հիմնականում այս պատճառով է, որ մարդիկ խորհրդատուների են այցելում: Բայց ես հրաշալի լուր ունեմ ձեզ համար: Կարիք չկա, որ երբևէ անհանգստանաք այն մասին, թե ինչ պետք է անեք: Աստված խոստանում է. «Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի *[չգիտի ինչ անել],* թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ» (Հակոբ. 1.5): Մենք կարող ենք խնդրել գերազանց կերպով: Ինչպե՞ս: Լեզուներով աղոթելով մեր իրավիճակի համար: Անցյալում ես եղել եմ խիստ խառնաշփոթ իրավիճակներում, որոնցում չգիտեի՝ ինչպես վարվեի: Ես աղոթել եմ լեզուներով, և ամեն անգամ ինչ-որ ոգեշնչված գաղափար է բարձրացել իմ սրտից՝ այն իմաստությունը, որն անհրաժեշտ է եղել տվյալ իրավիճակում:

Ահա թե ինչպես ենք մենք վարել մեր ծառայությունը տարիներ շարունակ: Երբ ես առաջնորդություն չեմ ունեցել և չեմ իմացել, թե ինչ անեմ, որոշ ժամանակ աղոթել եմ լեզուներով, և հանկարծ ոգեշնչված աստվածային գաղափարները սկսել են հոսել: Կինս և ես սկսել ենք մեր ծառայությունը շատ տարիներ առաջ, և յուրաքանչյուր լուրջ որոշում, որը կայացրել ենք, եկել է Հոգով աղոթելու միջոցով: Այսօր մենք ունենք ավելի, քան երեսուն աշխատող և գրասենյակներ երեք մայրցամաքներում: Աստված արտոնություն է տվել մեզ հպվելու միլիո-

նավոր մարդկանց՝ Իր Խոսքով և ներկայությամբ: Տասնչորս տարի շարունակ մենք ոչ մի անգամ հարկադրված չենք եղել պարտք վերցնել և ունենք բավականաչափ նյութական ապահովություն և աշխատակազմ, որպեսզի արդյունավետ ծառայենք Աստծո ժողովրդին: Այս ամենը տեղի է ունենում, քանի որ Աստված ասում է.

> «Ես եմ քո Աստվածը, որ քեզ սովորեցնում եմ օգտակար եղողը, որ քեզ առաջնորդում եմ քո գնալու ճանապարհում: Երանի՜ թե ուշադրություն անեիր իմ պատվերներին: Այն ժամանակ գետի պես պիտի լիներ քո խաղաղությունը, և քո արդարությունը՝ ծովի ալիքների պես» (Եսայի 48.17,18):

Կարող եմ անկեղծորեն ասել, որ մեր խաղաղությունը հոսել է գետի պես: Եղել են պահեր, երբ, դատելով մեզ շրջապատող հանգամանքներից, մենք պետք է լիովին խուճապի մատնված լինեինք: Այնուամենայնիվ, երբ մենք աղոթում էինք լեզուներով և հանձնում էինք մեր գործերը Նրան, մեր կյանքում իշխում էր խաղաղությունը: Լեզուներով աղոթելու վերաբերյալ գրված է.

> «Իրավ, թոթովախոս շրթունքով և օտար լեզվով պիտի խոսի Նա այս ժողովրդի հետ: Նա, որ նրանց ասաց. «Սա է ձեր հոգնածին հանգստացնելու հանգստությունը», և «Սա է մխիթարությունը», բայց նրանք չուզեցին լսել» (Եսայի 28.11,12):

Այն մարդիկ, որոնք չունեն խաղաղություն, չունեն նաև հանգիստ: Այն հանգիստը, որն Աստված նկատի ունի այս խոսքում, գետի պես հոսող խաղաղության արդյունքներից մեկն է: Ես կարող էի անթիվ պատմություններ պատմել, որոնք տեղի են ունեցել ինձ հետ տարիների ընթացքում՝ որպես այս պնդման օրինակ, բայց ես հիշում եմ մի հատուկ իրադարձություն, որում հեշտորեն կարող էի կորցնել իմ խաղաղությունը, քանի որ չէի պատկերացնում, թե ինչ անեի: Այս պատմությու-

նը տեղի է ունեցել Մեքսիկայում, որտեղ գնացել էի՝ մի ավետարանչական հավաքույթի քարոզելու համար: Ես ինքնաթիռով ուղևորվեցի Մոնտերեյ քաղաք, որտեղ պետք է մեկօրյա ավետարանչական միջոցառում տեղի ունենար: Այն պետք է անցկացվեր քաղաքի կենտրոնում գտնվող մի դահլիճում: Ես ամբողջ օրը աղոթեցի լեզուներով և մի տեսիլք տեսա հոգումս. երկնքից պայծառ լույս էր իջնում այն դահլիճի տանիքի վրա, որտեղ երեկոյան պետք է ավետարանչական միջոցառում անցկացնեինք: Տերը խոսեց սրտիս. «Սա Իմ փառքն է, որը Ես հայտնելու եմ այս երեկո»:

Այդ երեկո այդ միջոցառումը կազմակերպող հովիվը և ես ոգեշնչմամբ ուղևորվեցինք դեպի այդ դահլիճ: Նրա եկեղեցին մեծ աշխատանք էր կատարել՝ այդ ավետարանչական միջոցառմանը պատրաստվելու համար: Երբ տեղ հասանք, և միջոցառման սկզբին տասնհինգ րոպե էր մնացել, ես նկատեցի մի բարկացած մարդու՝ երկու զինված պահապանների ուղեկցությամբ, որը մոտեցավ այդ հովվին: Այդ մարդն իսպաներեն խոսեց նրա հետ, և ես տեսա, որ նա հաճելի տոնով չէր խոսում: Այդ հովիվը մոտեցավ ինձ և ասաց.

- Ջո՛ն, դու չես կարողանա քարոզել այս երեկո:

- Ինչո՞ւ,- ասացի ես:

Նա ասաց.

- Այս մարդը պետական բարձրաստիճան պաշտոնյա է: Մեր երկրում մի օրենք կա, ըստ որի Մեքսիկայի քաղաքացի չհանդիսացող մարդիկ չեն կարող քարոզել Ավետարանը Մեքսիկայում: Այդ օրենքը երբևէ չի կիրառվել, բայց նա պնդում է, որ մենք պետք է հնազանդվենք դրան: Հակառակ դեպքում դու կարող ես լուրջ խնդիրների բախվել: Իրականում, նա ցանկանում է հենց հիմա խոսել քեզ հետ:

Ես անմիջապես մտածեցի Պետրոսի և Հովհաննեսի մասին, որոնք Աստծո Խոսքը չքարոզելու պատվեր ստացան իշխանություններից: Այնպես որ, ասացի այդ հովվին.

- Այսօր ցերեկը Աստված ցույց տվեց ինձ, թե ինչ է տեղի ու-

նենալու այստեղ, և այս մարդը ոչ մի դեպքում չի կարողանա կանգնեցնել դա: Սա որևէ կերպով կազդի՞ քո եկեղեցու վրա: Եթե ոչ, ես կքարոզեմ, հենց որ նա հեռանա: Ես չեմ անցել ամբողջ այս ճանապարհը, որպեսզի անգործ նստեմ այստեղ: Բայց եթե դա բացասական ազդեցություն կունենա քո եկեղեցու վրա, ես չեմ քարոզի:

- Ջո՛ն,- ասաց նա,- այս մարդը կարող է շատ խնդիրներ առաջացնել մեր եկեղեցու համար. այնպես որ, կարծում եմ՝ ավելի լավ կլինի՝ անենք այն, ինչ նա պատվիրում է:

Ես տեղի տվեցի այդ հովվի խորհրդին, և մենք մոտեցանք այդ պետական պաշտոնյային:

Նախ՝ այդ մարդը նայեց ինձ և կտրուկ տոնով ասաց.

- Դուք գիտե՞ք իսպաներեն:

- Ո՛չ, պարո՛ն,- պատասխանեցի ես:

- Ես մեկ բան եմ ուզում ասել ձեզ,- շարունակեց նա:- Դուք խոսելու եք այս մարդկանց հետ միայն զբոսաշրջության մասին:

Նա շրջվեց և շարունակեց խոստորեն խոսել այդ հովվի հետ իսպաներենով: Ամբողջ այդ ընթացքում նրան ուղեկցող զինված պահապանները ահաբեկող հայացքով մեզ էին նայում: Հենց որ այդ պաշտոնյան ավարտեց հովվի հետ խոսելը, նրանք հեռացան:

Այդ հովիվը սաստիկ ցնցված էր. նա ներողություն խնդրեց այն բանի համար, որ ես չէի կարողանալու ծառայել, և վերադարձավ դահլիճ, որպեսզի վերջնական պատրաստությունները կատարեր այդ միջոցառման համար:

Այդ պահին ես սաստիկ բարկացա: Գիտեի, որ Աստծո խորհրդի կարիքն ունեի. իմ հետագա անելիքն առեղծված էր ինձ համար: Այնպես որ, ես դուրս եկա այդ դահլիճից և նկատեցի կիսով չափ մի առանձին վայր, որտեղ կարող էի աղոթել (ես քաղաքի կենտրոնում էի. այդտեղ չկային լիովին առանձին վայրեր): Ես գիտեի, որ Աստծո խորհուրդը դուրս բերելու համար անհրաժեշտ է լեզուներով աղոթել: Եվ ես սկսեցի համար-

ձակ լեզուներով խոսել: Մի քանի մարդիկ անցան կողքովս, բայց ես մտածեցի, որ նրանք, հավանաբար, ինձ համարեցին ինքն իր հետ խոսող օտարերկրացի:

Լեզուներով խոսելուց մի քանի վայրկյան անց Աստծո խաղաղությունով ողողվեց իմ անձը: Ես աղոթեցի գրեթե տասնհինգ րոպե, և հանկարծ մի միտք բարձրացավ սրտիցս: Ես լսեցի. «Մի կո՛ղմ դիր Աստվածաշունչդ և խոսի՛ր այս մարդկանց հետ մեծագույն Զբոսաշրջիկի մասին, որը երբևէ այցելել է Մեքսիկա»:

Ես ոգեշնչմամբ վեր ցատկեցի և բացականչեցի.

- Ճի՛շտ է, ճի՛շտ է: Նա ասաց ինձ, որ կարող եմ խոսել զբոսաշրջության մասին: Ես կպատմեմ նրանց Հիսուսի մասին՝ մեծագույն Զբոսաշրջիկի, որը երբևէ այցելել է Մեքսիկա:

Ես արագ դահլիճ վերադարձա: Այնուամենայնիվ, ծառայությունն արդեն սկսվել էր, և հովիվը բեմ էր բարձրացել՝ այցելուներին ողջունելու համար: Նրա կինը, որ դահլիճի ետնամասում էր, ասաց ինձ.

- Ջո՛ն, հովիվն ուզում է, որ բեմ բարձրանաս:

Երբ բեմ բարձրացա, նա շշուկով ասաց.

- Աստված պատվիրեց, որ ասեմ քեզ, որ անես այն, ինչ Ինքը հանձնարարել է:

Ես սկսեցի խոսել.

- Մի կառավարական պաշտոնյա ասաց ինձ, որ ես կարող եմ խոսել ձեզ հետ միայն զբոսաշրջության մասին: Այնպես որ, ես այստեղ եմ, որ պատմեմ ձեզ մեծագույն Զբոսաշրջիկի մասին՝ Հիսուսի, Ով երբևէ այցելել է Մեքսիկա:

Բազմության մեջ գտնվող հավատացյալները ոգեշնչված բացականչեցին: Հաջորդ վաթսուն րոպեում ես քարոզեցի Աստծո Խոսքը: Երբ ավարտեցի, առաջ կանչեցի նրանց, ովքեր ցանկանում էին թողնել իրենց կյանքը և ընդունել Հիսուսի իշխանությունը:

Մինչ շատերն առաջ էին գալիս, հանկարծ նկատեցի մի ոստիկանի, որը քայլում էր դահլիճի ետնամասից ուղիղ դեպի բեմը: Մտածեցի. *«Ես պետք է փրկության բերեմ այս մարդկանց, քանի դեռ ինձ չեն ձերբակալել»:* Հիշեցի Պետրոսին և Հովհաննեսին, որոնք քարոզում էին Գեղեցիկ դարպասի մոտ, և նրանց ձերբակալեցին, մինչև որ կհասցնեին պատմել մարդկանց, թե ինչպես ընդունեն Հիսուսին: Այնպես որ, ես արագորեն աղոթեցի առաջ եկող մարդկանց հետ, որպեսզի փրկություն ստանան: Նրանց հետ աղոթելուց հետո նկատեցի, որ այդ ոստիկանը քայլում է իմ կողքով՝ բեմի եզրով, և անցավ բեմի ետևի վարագույրով: Ես անմիջապես թեթևություն զգացի, քանի որ կարող էի ծառայել մարդկանց:

Ասացի մարդկանց, որ նրանք կարող են մոտենալ խորհրդատուներին, որոնք կշարունակեն ծառայել իրենց: Մինչ մարդիկ հեռանում էին բեմից, նկատեցի մի կաղ մարդու: Ես լսեցի, որ Սուրբ Հոգին խոսեց սրտումս. «Նա առաջինն է, ում Ես ուզում եմ բժշկել: Անմիջապես կանգնեցրո՛ւ նրան և աղոթի՛ր նրա համար»:

Ես արեցի ճիշտ այն, ինչ Նա պատվիրեց, և այդ մարդու համար աղոթելուց հետո ասացի.

- Իսկ հիմա, խնդրո՛ւմ եմ, թողե՛ք ձեր հենակը:

Նա ինձ նայեց՝ կարծես ասելով. «Ես չեմ կարող անել դա», բայց ես շարունակեցի դրդել նրան, և նա արեց դա: Նա սկսեց դանդաղ քայլել, իսկ հետո ավելի ու ավելի արագացրեց քայլերը, մինչև որ միասին սկսեցինք վազել:

Բոլորը սաստիկ ոգևորվեցին: Մարդիկ առաջ էին գալիս դահլիճի բոլոր հատվածներից, և բեմի մոտ հարյուրավոր մարդիկ հավաքվեցին: Շատերը բժշկվեցին Սուրբ Հոգու զորությամբ: Ես կնշեմ միայն մի քանիսին: Մենք աղոթեցինք մի կնոջ համար, որը կույր էր, և Տերը բացեց նրա աչքերը: Նա այնքան ուժգին էր լաց լինում, որ նրա բաց կապույտ բլուզի առջևի մասը մուգ կապույտ էր դարձել՝ նրա այտերից հոսող արցունքնե-

ից: Աստված բժշկեց ևս մեկ կնոջ աչքերը, նաև քաղցկեղից բժշկեց մեկ այլ կնոջ:

Դրանից հետո մենք աղոթեցինք մի հնգամյա տղայի համար, և նա բժշկվեց: Մենք ավելի քան մեկ ժամ ծառայեցինք մարդկանց. դա հրաշալի էր, և շատերն ուրախությունից լաց էին լինում: Այդ պահին ես նկատեցի մի քանի մարդկանց, որոնց մոտ տեսախցիկներ կային, բայց գրեթե ուշադրություն չդարձրի նրանց:

Ես մեկնեցի այդ երկրից հաջորդ առավոտյան և վերադարձա Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Մեկ շաբաթ անց այդ հովիվն ԱՄՆ եկավ՝ ինձ հանդիպելու: Նա ասաց.

- Ջո՛ն, ես պետք է գայի և անձամբ պատմեի քեզ տեղի ունեցածը:

Նա պատմեց, որ այդ երեկո այդ կառավարական պաշտոնյան քաղաքացիական հագուստով երկու գործակալ էր ուղարկել մեր հավաքույթին, որպեսզի ձերբակալեին ինձ, եթե քարոզեի:

Նրանք տեղ հասան, երբ ես աղոթում էի առաջին կաղ մարդու համար: Երբ տեսան, որ նա քայլում է, նրանցից մեկը հարցրեց մյուսին.

- Կարծում ես՝ սա իրակա՞ն է:

Նրա գործընկերը պատասխանեց.

- Չգիտեմ, բայց արի մոտենանք և պարզենք:

Հովիվն իմացավ այդ խոսակցության մասին, քանի որ նրա կարգուկանոնի ծառայողներից մեկը լսել էր այդ մարդկանց և սկսել էր հետևել:

Այդ երկու սպաներն առաջ եկան և ականատես եղան բոլոր հրաշքներին: Երբ խուլ կնոջ ականջները բացվեցին, նրանցից մեկն ասաց.

- Կարծում եմ՝ սա իրական է:

Դրանից հետո նրանք տեսան հնգամյա տղայի բժշկությունը՝ Աստծո զորությամբ: Նրանք նայեցին միմյանց և ասացին.

- Սա իրակա՞ն է:

Այդ հովիվը շարունակեց.

- Ջո՛ն, այդ մարդիկ, որոնք եկել էին, որ ձերբակալեին քեզ, առաջ եկան և խնդրեցին, որ աղոթեիր իրենց համար, և երկուսն էլ փրկվեցին այդ երեկո:

Կարիք չկա ասել, որ այդ հովիվը և ես ցնծում էինք իմ գրասենյակում, բայց դա դեռ ամենը չէր: Նա բացեց այդ քաղաքի թերթը և ցույց տվեց ինձ մի հոդված, որը հրապարակվել էր մեր հավաքույթի հաջորդ օրը: Համաձայն այդ հոդվածի, պետական պաշտոնյաները պնդում էին, որ ես խարդախությամբ էի զբաղվում և երկրից ապօրինաբար փող էի դուրս բերում: Այնուամենայնիվ, նրանք զեկուցում էին, որ ականատես էին եղել բժշկությունների և չէին տեսել, որ այդտեղ փող հավաքվեր: Հետաքրքրական է, որ ես զգացել էի իմ սրտում, որ չպետք է որևէ զոհաբերություն հավաքեի, և մեր ծառայությունը վճարեց իմ ինքնաթիռի տոմսի համար: Մենք նույնիսկ մեկ սենթ չվերցրինք այդ երկրից այդ միջոցառումն անցկացնելու ընթացքում:

Որքա՜ն հրաշալի է Սուրբ Հոգին: Ինչպե՞ս ինչ-որ մեկը կարող է ապրել մեր օրերում՝ առանց Նրա առաջնորդության: Եթե ես չկարողանայի աղոթել լեզուներով այդ օրը՝ իմ հյուրանոցային համարում, և այդ երեկո՝ դրոշի սյան մոտ, ես վիատված կհեռանայի Մեքսիկայից, քանի որ չէի կատարի Աստծո նպատակը: Այդ հովիվը թույլ չէր տա ինձ քարոզել՝ այդ կառավարական պաշտոնյայի ահաբեկման պատճառով: Այնուամենայնիվ, լեզուներով աղոթելու շնորհիվ Աստծո կամքը և իմաստությունը, որոնք *առեղծված* էին մեզ համար, հայտնվեցին: Ես կարողացա բարեխոսել այդ հովվի համար՝ համաձայն Աստծո կամքի, ինչի արդյունքում նա լսեց Աստծո ձայնը, և Տերն իմաստություն տվեց ինձ՝ ցույց տալով, թե ինչպես հաղթահարել այդ հակառակությունը: Նրա՜ն լինի ամբողջ փառքը:

Որքա՜ն է թշնամին պայքարել լեզուներով աղոթքի դեմ եկեղեցում: Նա վախենում է դրանից, քանի որ դա Աստծո անմի-

ջական հաղորդակցական կապն է Իր սուրբերի հետ, և դևերը ոչինչ չգիտեն այդ մասին: Մեր կյանքում լինում են իրավիճակներ, իսկ մեր սրտում՝ ցանկություններ, որոնք մենք կարողանում ենք ներկայացնել աղոթքի մեջ՝ մեր հասկացողությամբ, սակայն մեր կյանքում նաև տեղի են ունենում այնպիսի իրավիճակներ, որոնք չենք կարողանում ներկայացնել աղոթքի մեջ՝ մեր հասկացողությամբ, և մեզ անհրաժեշտ է Սուրբ Հոգու բառերի օգնությունը: Այս պատճառով է, որ Պողոսը գրում է. «Ուրեմն ի՞նչ է, աղոթք անեմ հոգով, աղոթք անեմ մտքով էլ» (Ա Կորնթ. 14.15):

ԿԱՌՈՒՑԵԼ ՄԵՐ ՆԵՐՍԻ ՄԱՐԴՈՒՆ

Վերջերս իմ սիրտն աղաղակում է այն մասին, որ Աստծո ժողովուրդը մուտք գործի Սուրբ Հոգու հետ ավելի մեծ մտերմության մեջ՝ վերոնշյալ պատճառներով: Մեր արձագանքը Նրա մտերմության կանչին ավելի ու ավելի բախտորոշ է դառնալու: Ժամանակի ընթացքում բավական չի լինի միայն աստվածաշնչյան գիտելիք ունենալը, որին տիրապետում էին նույնիսկ փարիսեցիները: Մենք պետք է ձևավորենք զգայունություն այն ամենի հանդեպ, ինչ Աստծո Հոգին *ասում է*, ոչ թե միայն այն ամենի հանդեպ, ինչ Նա *ասել է:* Հիսուսն ապրում էր այս կերպով: Նա ասաց. «Ինքս Ինձնով Ես ոչինչ չեմ կարող անել. Ես դատում եմ [*որոշումներ եմ կայացնում*] միայն՝ ինչպես որ Ես լսում եմ» (Հովհ. 5.30, NLT, *շեղագիրը հեղինակինն է):* «Ընդլայնված Աստվածաշունչը» շատ ավելի պարզորեն է արտահայտում սա.

> «Ես չեմ կարող ոչինչ անել Ինձնից [անկախ, Իմ իսկ ցանկությամբ, այլ միայն՝ ինչպես որ Ես ուսված եմ Աստծուց, և ինչպես որ Ես ստանում եմ Նրա հրամանները] ...[Ես որոշում եմ, ինչպես որ Ինձ հրամայված է որոշել: Ինչպես որ ձայնը գալիս է Ինձ մոտ, այնպես էլ Ես որոշում եմ կայացնում]» (Հովհ. 5.30, AMP):

Հիսուսն այնքան զգայուն էր Սուրբ Հոգու առաջնորդության և ձայնի հանդեպ, որ շարունակ խոստովանում էր Իր կախվածությունը: Նա ասաց. «Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս» (Հովի. 5.19): Կրկին, Նա ասաց. «Այն բանը (կամ՝ խոսքերը), որ Ես խոսում եմ ձեզ հետ, Իմ Անձից չեմ խոսում» (Հովի. 14.10): Եվ Նրա հետևորդները հստակորեն ստացել են հետևյալ պատվերը. «Ով որ ասում է, թե «Նրանում եմ բնակվում», պետք է, ինչպես որ Նա գնաց, ինքն էլ այնպես գնա» (Ա Հովի. 2.6):

Ինչպես որ Նա էր, այնպես էլ մենք պետք է արձագանքենք Աստծո Հոգուն: Իրականում, անձամբ ես հավատում եմ, որ Աստված ցանկանում է, որ մենք ավելի տեղյակ լինենք Իր տիրույթից, քան՝ թե ինչ է տեղի ունենում մեզ շրջապատող բնական աշխարհում: Լեզուներով աղոթելը կառուցում է մեր ներսի մարդուն, որպեսզի կարողանանք զգայուն լինել Սուրբ Հոգու հանդեպ: Կրկին, գրված է.

> «Լեզվով խոսողն իր անձն է *շինում»* (Ա Կորնթ. 14.4, *շեղագիրը հեղինակինն է):*

«Շինել» բառը թարգմանված է հունարեն *«օիկոդոմեո»* բառից: Գլխավոր սահմանումն է՝ «տուն կառուցել»: Սա հետաքրքիր է՝ հաշվի առնելով այն փաստը, որ մեր մարմինները Սուրբ Հոգու տաճարներն են: Պողոսը հատկապես ասում է մեզ. «Դուք... Աստծո շինվածն եք» (Ա Կորնթ. 3.9): Մենք Նրա տունն ենք: Այդ իսկ պատճառով, երբ լեզուներով աղոթում ենք, մենք ընդլայնում ենք մեր բնակարանը Սուրբ Հոգու համար: Մենք ավելի շատ տեղ ենք տրամադրում Նրան: Իհարկե, սա առարկայական իմաստով չէ, այլ՝ փոխաբերական, քանի որ Վ. Է. Վայնը սովորեցնում է մեզ, որ այս խոսքը «նշանակում է «կառուցել»՝ թե՛ բառացի, թե՛ փոխաբերական իմաստով»:

Այնպես որ, երբ լեզուներով աղոթում ենք, մենք ընդլայնում ենք մեր կյանքում Նրա ներկայությունը և զորությունը կրելու կարողությունը: Մենք զորացնում ենք մեր ներսի մարդուն,

որպեսզի հեշտորեն առաջնորդվենք Սուրբ Հոգով, ոչ թե մեր բնական մտքով:

Պարոն Վայնը նույնպես տեղեկացնում է, որ այս բառն օգտագործվում է փոխաբերական՝ «հավատացյալների հոգևոր աճի և բնավորության կառուցման» իմաստով: Նմանատիպ իմաստով, Հուդա առաքյալն ասում է մեզ իր թղթում.

> «Բայց դո՛ւք, սիրելինե՛ր, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք՝ Սուրբ Հոգով աղոթք անելով» (Հուդա 20):

«Շինել» բառն այս խոսքում թարգմանված է հունարեն *«էպոիկոդոմեո»* բառից: Այս բառի սահմանումն է՝ «կառուցել ինչ-որ բանի վրա»: Սա կրկին վերաբերում է մեր հոգիները շարունակաբար կառուցելուն: Պողոսն ասաց հավատացյալներին, որ նրանք Աստծո շինվածը կամ շինությունն են, և որ ինքն Աստծո շնորհքով հիմք էր դրել՝ բերելով նրանց Քրիստոսի մոտ, սակայն նա շարունակում է՝ պարզորեն ասելով. «Ամեն մեկը մտիկ տա, թե ինչպես է շինում» (Ա Կորնթ. 3.10):

Այսօր բազմաթիվ հավատացյալների հոգիները տկար են, քանի որ նրանք չեն կառուցել իրենց ներսի մարդուն: Նրանք ավելի շուտ նայում են իրավիճակներին բնական աչքերով, քան իրենց սրտի աչքերով: Նրանք ավելի շուտ հավատում են այն ամենին, ինչ լսում են իրենց բնական ականջներով, քան այն ամենին, ինչ Աստծո Հոգին ասում է իրենց սրտերին: Նրանց դրսի մարդը գերիշխում է նրանց կյանքում: Նրանց ներսի մարդուն կարելի է համեմատել այնպիսի անձնավորության հետ, ով ամբողջ օրը նստած է բազմոցին, հեռուստացույց է դիտում և կարտոֆիլի չիփսեր է ուտում: Գուցե նրանք ջանասիրաբար աշխատում են կյանքում և ծառայության մեջ, բայց նրանց ներսի մարդն անտեսված է: Այս հավատացյալները հաճախ ասում են ինձ. «Ինչո՞ւ ես ոչինչ չեմ լսում Աստծուց»: Պատճառը շատ պարզ է: Կրկին, Աստված հաղորդակցվում է մեր հոգու, ոչ թե մեր մտքի հետ: «Մարդու հոգին Տիրոջ ճրագն

է» (Առակ. 20.27): Եթե մեր ներսի մարդը կառուցված չէ, մենք չենք կարողանա պարզորեն լսել:

Պողոսը գրեց հրեա հավատացյալներին, որ ուզում էր ասել նրանց ավելին, բայց չէր կարող, քանի որ նրանց լսողությունը ծանրացել էր (տե՛ս Եբր. 5.11): Այդ մարդկանց լսողական սարքեր պետք չէին. փոխարենը, նրանց ներսի մարդը հետադիմել էր՝ դառնալով անզգա հոգևոր իրողությունների հանդեպ: Այնպես որ, ըստ էության, մարդկանց այդ խումբն անում էր կառուցելու ճիշտ հակառակը. նրանք ավելի էին ծանրանում իրենց սրտերում՝ Տիրոջ Խոսքը լսելու հարցում: Նույն այս սկզբունքը վերաբերում է նրանց, ովքեր անտեսում են իրենց ներսի մարդու կառուցումը: Եթե մեր ներսի մարդն ուժեղ չէ, մեր մտերմությունն Աստծո հետ սահմանափակ կլինի: Այս պատճառով, Պողոսը համարձակ պնդում է. «[Ես] ձեր ամենից ավելի լեզուներով խոսում եմ» (Ա Կորնթ. 14.18): Նա շարունակում է խոսել այն մարդկանց հետ, որոնց ուղղված է Եբրայեցիների թուղթը.

> «Բայց կատարյալների *[հոգևորապես հասուն մարդկանց]* համար է հաստատ կերակուրը, որոնց զգայարանները վարժողությամբ *[գործածությամբ]* կրթված են՝ բարին և չարը զանազանելու» (Եբր. 5.14, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք, որ նա նշում է այդ մարդկանց զգայարանները. խոսքը ոչ թե արտաքին, այլ՝ ներքին զգայարանների մասին է: Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ նա ասում է մեզ, որ գործածելով կամ, ըստ բնագրի, վարժեցնելով մեր ներքին զգայարանները, մենք զորացնում ենք դրանք՝ զանազանելու համար այն, ինչ Աստծուց է, և այն, ինչ չարից է:

Ինչպես որ ունենք հինգ բնական զգայարան, այնպես էլ ունենք հինգ հոգևոր զգայարան: Աստվածաշունչը օրինակներ է տրամադրում մեզ այդ մասին: Կարդալով հետևյալ աստվածաշնչյան հատվածները՝ հարցրեք ձեզ, թե ձեր բնական զգա-

յարաններով կարո՞ղ եք արդյոք անել այն, ինչ գրված է այս խոսքերում: Սա կօգնի եզրակացնել, որ հեղինակները նկատի ունեն ոչ թե բնական, այլ հոգևոր զգայարանները:

ՀԱՄ

«Ճաշակե՛ք և տեսե՛ք, որ Տերը քաղցր է» (Սաղմ. 34.8, *շեղագիրը հեղինակինն է):*

«Որքա՜ն քաղցր է Քո Խոսքն իմ *քիմքին.*

Մեղրից էլ ավելի է իմ բերանին» (Սաղմ. 119.103, *շեղագիրը հեղինակինն է):*

«Քո Խոսքերը գտնվեցին, և ես *կերա* նրանց, և Քո Խոսքն ինձ համար սրտիս ցնծություն և ուրախություն եղավ» (Երեմ. 15.16, *շեղագիրը հեղինակինն է):*

ՇՈՇԱՓԵԼԻՔ

«Նրա համար նրանց միջից դո՛ւրս գնացեք և բաժանվե՛ք,- ասում է Տերը,- և պիղծ բաների մի՛ *դիպչեք,* և Ես կընդունեմ ձեզ» (Բ Կորնթ. 6.17, *շեղագիրը հեղինակինն է):*

«Հեռացե՛ք, հեռացե՛ք, այնտեղից դո՛ւրս եկեք, պիղծ բանի մի՛ *դիպչեք*, դո՛ւրս եկեք նրա միջից, մաքո՛ւր եղեք, ո՛վ Տիրոջ սպասները կրողներ» (Եսայի 52.11, *շեղագիրը հեղինակինն է):*

ՀՈՏԱՌՈՒԹՅՈՒՆ

«Բայց շնորհակալությո՛ւն Աստծուն, որ ամեն ժամանակ մեզ հաղթող է անում Քրիստոսում, և Իր գիտության *հոտը* մեզնով հայտնվում է ամենայն տեղ: Որովհետև մենք Քրիստոսի *անուշ հոտն* ենք Աստծո առջև՝ փրկվածների

մեջ և կորածների մեջ: Ոմանց համար մահվան *հոտ*՝ դեպի մահ, և ոմանց համար կյանքի *հոտ*՝ դեպի կյանք» (Բ Կորնթ. 2.14-16, *շեղագիրը հեղինակինն է):*

«Եվ սիրո՛վ գնացեք, ինչպես որ Քրիստոսն էլ մեզ սիրեց, և Իր Անձը մեզ համար մատնեց՝ պատարագ և զոհ, Աստծո անուշ *հոտ* լինելու» (Եփես. 5.2, *շեղագիրը հեղինակինն է):*

«Բայց ես ամեն բան առել եմ և առատություն ունեմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռքով ընդունեցի այն, որ ձեզնից է՝ անուշ *հոտ*, ընդունելի պատարագ՝ Աստծո հաճո» (Փիլիպ. 4.18,19, *շեղագիրը հեղինակինն է):*

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

«Որովհետև կյանքի աղբյուրը Քեզ մոտ է,

Եվ Քո լույսով *ենք տեսնում* լույս» (Սաղմ. 36.9, *շեղագիրը հեղինակինն է):*

«Որ ձեր սրտերի *աչքերը* լուսավորվելով՝ գիտենաք, թե ի՞նչ է Նրա կոչման հույսը, և ի՞նչ է Իր ժառանգության փառավոր մեծությունը սուրբերում» (Եփես. 1.18,19, *շեղագիրը հեղինակինն է):*

«Որովհետև ամենը, որ հնազանդեցրեց Նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի Նրան: Բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է Նրան: Բայց... *տեսնում ենք* Հիսուսին» (Եբր. 2.8,9, *շեղագիրը հեղինակինն է):*

«Արդ, թե որ քո *աչքը* պարզ լինի, քո ամբողջ մարմինը լուսավոր կլինի: Բայց թե որ քո *աչքը* չար լինի, քո ամբողջ մարմինը խավար կլինի: Ուրեմն, եթե այն լույսը, որ քեզանում է, խավար է, ապա խավարը որքա՞ն ավելի» (Մատթ. 6.22,23, *շեղագիրը հեղինակինն է):*

ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ

«Եվ Եղիան ասաց Աքաաբին. «Վեր գնա, կեր ու խմի՛ր, որովհետև անձրևի սաստիկ *ձայն* կա»» (Գ Թագ. 18.41,42, *շեղագիրը հեղինակինն է):*

«Ով որ *լսելու ականջ* ունի, թող *լսի»* (Ղուկ. 14.35, *շեղագիրը հեղինակինն է):*

«Ով որ *ականջ* ունի, թող *լսի,* ինչ որ Հոգին ասում է» (Հայտն. 2.7, *շեղագիրը հեղինակինն է):*

Ինչ վերաբերում է այն բանին, որ մեր ներսի մարդը կարող է ծանրանալ և անզգա դառնալ Աստծո Հոգու հանդեպ, Հիսուսը պարզորեն ցույց տվեց դա՝ ասելով.

«Այդ պատճառով եմ Ես առակներով խոսում նրանց հետ, որովհետև տեսնելով *[դրսի մարդը]* նրանք չեն տեսնում *[ներսի մարդը],* և լսելով *[դրսի մարդը]* նրանք չեն լսում *[ներսի մարդը],* ո՛չ էլ հասկանում են: Եվ նրանցում կատարվում է Եսայու մարգարեությունը, որն ասում է. «Լսելով՝ դուք կլսեք *[դրսի մարդը]* և չեք հասկանա *[ներսի մարդը],* և տեսնելով՝ դուք կտեսնեք *[դրսի մարդը]* և չեք ընկալի *[ներսի մարդը],* որովհետև այս ժողովրդի սրտերը *[ներսի մարդը]* ծանրացել են: Նրանց ականջները դժվար են լսում *[ներսի մարդը],* և նրանց աչքերն իրենք փակել են *[ներսի մարդը],* որ չտեսնեն իրենց աչքերով *[ներսի մարդը],* և չլսեն իրենց ականջներով *[ներսի մարդը],* որպեսզի չհասկանան իրենց սրտերով *[ներսի մարդը]»»* (Մատթ. 13.13-15, NKJV):

Հոգևորապես հասուն մարդիկ զարգացնում են իրենց ներքին զգայարանները, որպեսզի զանազանեն հոգևոր բաները՝ այն, ինչ Աստծուց է, և ինչ Աստծուց չէ: Այս զարգացումը պայմանավորված է հավատացյալի զգայարանների օգտագործմամբ: Բոլորս բնական զգայարաններ ունենք, և ոմանց

մոտ դրանք ավելի զարգացած են, քան մյուսների, ընդամենը դրանք վարժեցնելու միջոցով: Օրինակ, կան մարդիկ որոնք զարգացրել են իրենց համի զգայարանը՝ գինիների որակը զանազանելու համար: Վարժողության միջոցով նրանք կարող են գինի համտեսել և ասել, թե որ տարվա բերքից է, բերքը վաղահա՞ս էր, թե՞ ուշահաս, այդ տարի տեղումները շա՞տ էին, թե՞ քիչ, և այլն:

Մյուսները վարժեցրել են իրենց աչքերը՝ թանկարժեք քարերի գինը որոշելու համար: Անվարժ աչքի համար նման քարը կարող է անթերի թվալ, բայց վարժված աչքը կարող է որոշել քարի հատման և գույնի որակը, աննշան կամ լուրջ թերությունների թիվը, նաև պարզության աստիճանը:

Կան հնչյունային ռեժիսորներ, երաժիշտներ, դիրիժորներ և այլք, որոնք վարժեցրել են իրենց լսողությունը՝ ձայներ և մեղեդիներ լսելու համար: Նրանք հասկանում են, երբ ամբողջ նվագախմբից միայն մեկ երաժշտական գործիք աններդաշնակ է: Նրանք տարիների ընթացքում վարժեցրել են իրենց լսողության զգայարանը՝ ներդաշնակությունը ճանաչելու համար:

Կան մարդիկ, որոնք վարժեցրել են իրենց հոտառության զգայարանը: Նրանք կարող են ճանաչել որևէ բուրմունքի գլխավոր երանգը և ենթաերանգները, նաև թվարկել ցանկացած օծանելիքի համեմունքների, ծաղկային և ցիտրուսային փունջը:

Այս մարդիկ որոշել են սրել իրենց բնական զգայարանները: Այնպես չէ, որ նրանք ավելի օժտված էին. նրանք վճռականորեն զարգացրել են այն, ինչ ունեցել են: Դա հենց այնպես տեղի չի ունեցել. նրանք ուղղել են իրենց համակ ուշադրությունն այդ նպատակին:

Մինչև այս պահը, հավանաբար, հիշեցիք բազմաթիվ օրինակներ, որոնք պատկերում են, թե ինչպես կարող ենք վարժեցնել մեր արտաքին զգայարանները: Նույն սկզբունքը վերաբերում է հոգևորին: Դուք կարող եք տարիներ շարունակ հա-

վատացյալ լինել, սակայն չզարգացնել ձեր հոգին: Աստվածաշունչն ասում է մեզ, որ Հովհաննես Մկրտիչն «աճում և զորանում էր հոգով» (Ղուկ. 1.80): Պողոսը հանձնարարեց Տիմոթեոսին լիովին տրվել հոգևոր զարգացմանը, որպեսզի. «քո առաջադիմությունն ամենին հայտնի լինի» (Ա Տիմոթ. 4.15): Ինչպե՞ս կառուցել ներսի մարդուն: Աստվածաշունչը պարզորեն հայտնում է մեզ. Աստծո Խոսքի միջոցով (տե՛ս Ա Պետր. 2.2, Գործք 20.32), Նրա Խոսքին հնազանդվելով (տե՛ս Եբր. 5.9) և լեզուներով աղոթելով (տե՛ս Ա Կորնթ. 14.4, Հուդա 20):

ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչո՞ւ է անչափ կարևոր զարգացնել մեր ներքին զգայարանները: Մենք ավելի ազատորեն կհաղորդակցվենք Սուրբ Հոգու հետ, եթե մեր հոգևոր զգայարանները զարգացած լինեն: Նա կարող է ավելի մտերմորեն շփվել մեզ հետ՝ տարբեր մակարդակներով: Որպեսզի բացատրեմ սա, կրկին դիտարկենք բնական զգայարանները: Եթե ձեր հինգ զգայարաններն էլ չգործեին, ես չէի կարողանա հաղորդակցվել ձեզ հետ: Ես կարող էի գոչել, բայց դուք չէիք լսի. թփթփացնել ձեր ուսը, բայց դուք չէիք զգա. որևէ նշան պահել ձեր առջև, բայց դուք չէիք տեսնի, և այլն:

Վերջերս հայրս, որն ութսունն անց է, լսողական սարքի կարիք ուներ, բայց չէր ցանկանում կրել: Երբ ամբողջ ընտանիքը հավաքվում էր ընթրիքի սեղանի շուրջ, և բոլորը զրուցում էին, ես նկատում էի, որ նա ասես այլ վայրում լիներ: Ես հարցնում էի բարձր ձայնով.

- Դու լսեցի՞ր, հայրի՛կ:

Նա զարմացած ինձ էր նայում, ասես հարցներ. «Ինչ ասացի՞ր»: Ես հասկանում էի, որ նա բավականություն չէր ստանում մեր զրույցից, քանի որ նրա լսողության զգայարանը ծանրացած էր (ուրախ եմ ասել, որ նա արդեն լսողական սարք է կրում): Նույնը ճշմարիտ է հոգևոր զգայարանների առումով:

Եթե ձեր զգայարանները ծանրացած են, լավագույն դեպքում դուք միայն կլսեք զրույցի մի մասը: Մարդիկ հաճախ են ասում ինձ. «Աստված մտերմորեն չի խոսում ինձ հետ»: Կրկին, ամենայն հավանականությամբ, ձեր ներքին զգայարանները թերզարգացած են: Մենք պետք է հասկանանք հետևյալը. Աստված ավելի շատ է ուզում խոսել մեզ հետ, քան մենք ուզում ենք լսել Նրանից, բայց չափազանց հաճախ մենք, հրեա հավատացյալների պես, դառնում ենք «դանդաղ... լսելիքով» (Եբր. 5.11):

Դուք ամրապնդում եք այն, ինչ օգտագործում եք, և թուլացնում եք այն, ինչ չեք օգտագործում: Հոգով աղոթելիս մեր ներսի մարդն աղոթում է, իսկ բնական հասկացողությունը և մարմնական բնությունը մերժվում են: Դա մեր բնական դատողությունից ծոմ պահելու միջոց է՝ Աստծո հետ անխաթար հաղորդակցության մեջ մտնելու համար: Ես խրախուսում եմ ձեզ, որ ոչ միայն աղոթեք Հոգով, այլև հավատաք Աստծուն թարգմանության կամ մեկնության համար և վարժեցնեք ձեզ լսելուն աղոթելու ընթացքում:

Որպես կանոն, առավոտյան ես տրամադրում եմ ավելի քան մեկ ժամ պարզապես լեզուներով աղոթելուն: Հենց որ անցնում եմ մտքով թափառելու փուլը, ինչն ավելի հեշտ է տեղի ունենում, երբ երկրպագության երգեր եմ երգում կամ բացում եմ իմ սիրտը Նրա առջև, ես կարողանում եմ հեշտորեն կենտրոնանալ հոգևորի վրա: Սովորաբար այն զգացումը, որ Տերը մոտ է, մթագնեցնում է ցանկացած բնական մտահոգություն կամ պարտավորություն: Այդ պահերին ես հայտնաբերում եմ, որ դեպի իմ միտքը իմաստություն, գաղափարներ և հայտնություններ են բարձրանում: Ես սովորել եմ, որ ամենից իմաստուն արձագանքն այդ ամենը գրի առնելն է, մինչ աղոթում եմ, ինչից հետո Սուրբ Հոգին անցնում է այլ բաների:

Իմ վաղ տարիներին ես մեծ հիասթափություն էի զգում Սուրբ Հոգով աղոթելու ընթացքում, քանի որ ժամանակ առ ժամանակ լեզուներով աղոթելիս մտածում էի բնական իրողությունների մասին: Օրինակ, աղոթքի ընթացքում ես գաղափար-

ներ էի ստանում նոր գրքերի վերնագրերի վերաբերյալ, ինձանում ցանկություն էր հայտնվում զանգել այն մարդկանց, որոնց հետ որոշ ժամանակ չէի շփվել, մտքեր էին ծագում ինչ-որ մեկի համար նվեր պատրաստելու, ծառայողական ֆինանսները տնօրինելու մասին և այլն: Ի վերջո, ես հասկացա, որ մեծ մասամբ դա ոգեշնչում և առաջնորդություն էր Սուրբ Հոգուց: Կարճ ժամանակ անց սկսեցի գրի առնել այդ գաղափարները և նկատեցի, որ գրի առնելուն պես դրանք հեռանում էին իմ մտքից, և այլ գաղափարներ էին հայտնվում: Դրանից հետո սկսեցի գործադրել այդ գաղափարները և տեսա Աստծո օրհնությունը դրանցում: Ես հասկացա, որ լեզուներով աղոթելիս Սուրբ Հոգին ոչ միայն մարդկանց կամ ազգերի էր բերում իմ մտքում, այլև ցուցումներ էր տալիս այն մասին, ինչ Նա ցանկանում էր, որ կատարեի: Կրկին, սա Աստծո հետ ավելի բարձր մակարդակով հաղորդակցվելու միջոց է:

ԱՊՐԵԼ ՀՈԳՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

Անձամբ ես հավատում եմ, որ Պողոսը հենց այս կերպով էր գրում իր թղթերի զգալի մասը: Նա, օրինակ, գրում էր. «Որովհետև թեև մարմնով բացակա եմ, բայց հոգով ձեզ հետ եմ, ուրախանալով՝ ձեր կարգը *տեսնելով,* և ձեր հավատքի հաստատությունը, որ Քրիստոսի վրա է» (Կողոս. 2.5, *շեղագիրը հեղինակինն է):* Նա չէր տեսնում նրանց բնական աչքերով, քանի որ պարզորեն ասաց, որ մարմնով այդտեղ չէր: Կրկին, նա գրում էր կորնթացիներին. «Որովհետև ես, թեև մարմնով բացակա եմ, բայց հոգով ներկա, արդեն վճռել եմ՝ ներկա լինողի պես» (Ա Կորնթ. 5.3): Ինչպես Պողոսը կարող էր ներկա լինել և տեսնել, թե ինչ էին կորնթացի և կողոսացի հավատացյալներն անում և խոսում, սակայն մարմնով չլինել այդտեղ: Մենք պետք է հիշենք, որ հոգևոր էակներ ենք, իսկ Աստծո Հոգու տիրույթում չկա տարածություն և սահմանափակումներ: Այն մարդիկ, որոնց հոգիները կառուցված են Տիրոջ մեջ, ավելի տեղեկացված են դառնում իրադարձություններին,

որպեսզի կարողանան ավելի արդյունավետ աղոթել կարիքի մեջ գտնվող մարդկանց համար կամ ծառայել նրանց: Հիշե՛ք, որ նախորդ գլխում մեր Ավստրալիայի գրասենյակի ղեկավարի Աստվածաշնչյան դպրոցի ուսուցիչը մատնացույց արեց այն չինացի հովվին, ում նա երբեք չէր տեսել, մի լուսանկարում, որտեղ նա իր եկեղեցու բազմաթիվ անդամների հետ էր:

Պողոսը պարզապես իր հոգում տեսնում էր այն, ինչ տեղի էր ունենում տարբեր եկեղեցիներում, երբ աղոթում էր լեզուներով, իսկ հետո գրում էր այդ մասին իր նամակներում և ուղարկում էր դրանք: Իմ ճանապարհորդությունների ընթացքում լեզուներով աղոթելիս տեսել եմ որոշ իրավիճակներ, որոնցում գտնվում էին իմ ընտանիքի կամ աշխատակազմի անդամները: Դրանից հետո ես պատասխանում էի նրանց հեռախոսազանգերին և շատ անգամներ արդեն գիտեի այն լուրը, որը նրանք հայտնելու էին ինձ, մինչև նրանց ասելը: Այնուամենայնիվ, քանի որ Հոգով աղոթել էի, ես արդեն պատրաստ էի. ես գիտեի, թե ինչ ասեի, և թե ինչպես էր պետք կարգավորել այդ իրավիճակը:

Մի անգամ, երբ Աֆրիկայում էի, ծանոթացա Քենիայում բնակվող մի տոհմական մարտիկի հետ: Նա ճանաչել էր Հիսուսին տարիներ առաջ և մնացել էր իր ժողովրդի մեջ՝ նրանց ծառայելու: Նրա քրիստոնեական անունը Ջոն էր, և նա պարբերաբար ճանապարհորդում էր Աֆրիկայից դուրս՝ ծառայելու համար: Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած իր վերջին ճանապարհորդությանը նա հյուրընկալվել էր մի զույգի տանը, որոնց ես նույնպես ճանաչում եմ: Երեք շաբաթ նրանց տանը մնալու ընթացքում նա պարբերաբար պատմում էր, թե ինչով էր զբաղված իր ընտանիքն Աֆրիկայում: Մի փոքր զարմացած՝ այն ամուսինները, որոնց տանը նա ապրում էր, հարցրին նրան, թե որտեղի՞ց այդքան բան գիտեր իր կնոջ մասին, քանի որ նրա ընտանիքը հեռախոս չուներ. իրականում, ամբողջ այդ աֆրիկյան գյուղում նույնիսկ մեկ հեռախոս չկար: Նրա պատասխանը մոտավորապես այսպիսին էր.

- Պողոսը հենց այսպես էր շփվում Ասիայում գտնվող եկեղեցիների հետ: Նրանք իր ընտանիքն էին Տիրոջ մեջ, քանի որ նա հոգևորապես ծնել էր նրանց, և երբ նա հեռու էր նրանցից, աղոթքի ժամանակ նրանց հետ էր հոգով՝ հետևելով նրանց կարգին: Նա նույնիսկ կարող էր գրել նրանց իրենց գործերի մասին: Ես միայն անում եմ այն, ինչի համար Աստված կարողություն է տվել յուրաքանչյուր հավատացյալի՝ Սուրբ Հոգու զորությամբ: Ես հենց այսպես եմ հետևում իմ ընտանիքի գործերին, և ես այսպես եմ վարվում ամեն անգամ, երբ հեռու եմ նրանցից:

Ես պատմեցի ձեզ Ջոնի վկայությունը, քանի որ այն կատարելապես համապատասխանում է Աստծո Խոսքին: Ինչո՞ւ մենք պետք է զարմանանք այս պատճառով: Պողոսը նշեց սա Նոր կտակարանում ոչ թե մեկ, այլ՝ մի քանի անգամ: Այդ աֆրիկացուն ոչ ոք չէր ասել, որ այդ աստվածաշնչյան հատվածները ճիշտ չէին, կամ՝ որ դրանք արդեն չեն գործում, ինչպես որ ասել են շատերին Ամերիկայում: Ինչո՞ւ ենք մենք ետ քաշվել այն բանից, ինչը մեզ տալու համար Հիսուսն անչափ մեծ գին է վճարել: Ինչո՞ւ մենք չենք կառուցում մեր ներսի մարդուն, որպեսզի մեր սիրելի Տեր և Փրկիչ Հիսուսի ավելի արդյունավետ ծառաներն ու զավակները լինենք:

Դեռ շատ ուշ չէ: Կարևոր չէ՝ դուք տա՞սը, թե՞ ութսունհինգ տարեկան եք, վերստին ծնվել եք վերջե՞րս, թե՞ տասնամյակներ առաջ. դուք կարող եք կառուցել ձեր ներսի մարդուն՝ լեզուներով աղոթելով և խնդրելով մեկնությունը, երբ աղոթում եք, որ ձեր միտքն օգուտ ստանա Սուրբ Հոգու հետ այս հրաշալի հաղորդակցությունից: Այնքա՞ն շատ բան կա, որ Նա ցանկանում է հայտնել ձեզ. դուք միայն պետք է հանդարտեցնեք ձեր դրսի մարդուն և ձեր սրտում մոտենաք Նրան, Ով գիտի ամեն ինչ: Ինչպիսի՜ հրավեր. բաց մի՛ թողեք այն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Դուք վերապրե՞լ եք իրավիճակներ, որոնցում լեզուների պարգևն օգնել է ձեզ ավելի լավ հասկանալ, թե ինչպես է Աստված գործում ձեր կյանքում: Ի՞նչ կերպով եք հայտնություն, խաղաղություն և թարմություն ստացել:
2. Հեղինակը գրում է այն մասին, որ անհրաժեշտ է պատշաճ կերպով տնօրինել այն խորհուրդները, որոնք Աստված հայտնում է՝ մատնացույց անելով Եզեկիայի օրինակը (տե՛ս Եսայի 39.2), և իր պատմությունը՝ մի հանրահայտ հովվի հանդիպելու մասին: Որքա՞ն կարևոր է, որ դուք սպասեք Տիրոջ կողմից որոշված պատշաճ ժամանակին, որպեսզի հայտնեք մարդկանց այն, ինչ Նա հայտնել է ձեզ: Արդյո՞ք ձեզանում կա մարդկանց տպավորելու ուժգին ցանկություն, որն անհրաժեշտ է վերահսկել:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՀԱՎԱՏՔԻ ԼԻԱՐԺԵՔ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

Աստված չի պատասխանում մեր կարիքին.
Նա պատասխանում է մեր հավատքին:

Տարիների ընթացքում հանդիպել եմ բազմաթիվ անկեղծ հավատացյալների, որոնք լցված են Սուրբ Հոգով, սիրում են Աստծուն, ունեն Նրա երկյուղը և հեռու են մնում մեղքից, սակայն նրանք նույնպես հարցնում են. «Ինչո՞ւ ես չեմ լսում Աստծուց և չեմ վերապրում Նրա ներկայությունը»: Ես զգում եմ այդ սուրբերի հիասթափությունը, քանի որ նրանք անում են այն, ինչ գիտեն, սակայն չեն կարողանում հաղորդակցվել Աստծո հետ աղոթքի մեջ: Ընդամենը րոպեներ տևող խոսակցության ընթացքում մենք սովորաբար բացահայտում ենք նրանց խնդրի պատճառը: Ամենից հաճախ կա մեկ պատասխան, որը հետևյալ աստվածաշնչյան հատվածում է.

«Ուրեմն, եղբայրներ, *համարձակություն* ունենալով մտնելու Ամենասուրբ վայրը՝ Հիսուսի արյամբ, նոր և

> կենդանի... եկեք *մոտենանք* ճշմարիտ սրտով՝ *հավատքի լիարժեք վստահությամբ,* մեր սրտերը մաքրված չար խղճից, և մեր մարմինները լվացված մաքուր ջրով: Եկեք ամուր պահենք մեր հույսի դավանությունը՝ առանց սասանվելու, որովհետև Նա, Ով խոստացավ, հավատարիմ է» (Եբր. 10.19-23, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Առաջինը՝ հեղինակը հայտնում է, որ մենք կարող ենք գալ Ամենասուրբ վայրը, որտեղ Տերն է բնակվում: Հիշեք՝ այն պահին, երբ Հիսուսն արձակեց Իր հոգին խաչի վրա, տաճարի քողը պատռվեց՝ վերևից՝ ներքև: Աստված դուրս եկավ, պատրաստվելով տեղափոխվել դեպի Իր նոր տաճարը՝ վերստին ծնված մարդու մեջ: Այնպես որ, այժմ, երբ մոտենում ենք Նրան, մենք փնտրում ենք Նրան մեր ներսում, ոչ թե փորձում ենք կուրորեն պատկերացնել, որ մուտք ենք գործում մեզնից միլիոնավոր կիլոմետրերով հեռու գտնվող մի գահի սրահ, քանի որ մեր ներսում Աստծո Հոգու հետ կապ հաստատելը նշանակում է լինել գահի սրահում՝ Հիսուսի և Հոր հետ:

Ուշադրություն դարձրեք՝ հեղինակը հայտնում է, որ մենք պետք է գանք *համարձակությամբ:* Ո՞րն է Նրան վստահաբար մոտենալու պատճառը: Պարզապես այն, որ Նա արդեն ճանապարհ է բացել, որ գանք Իր ներկայության մեջ՝ Իր թագավորական արյամբ, որը թափվեց Գողգոթայում: Մեր խիղճը մաքրվեց մեղքի դատապարտությունից, և այժմ մենք կարող ենք լիարժեք վստահությամբ գալ Նրա ներկայության մեջ:

Այս խոստումը *չի* գործում պատահականության սկզբունքով: Այն փաստ է. Աստված ասում է, որ եթե մենք մոտենանք, Նա նույնպես կմոտենա մեզ: Այնուամենայնիվ, մեծամասնության խնդրի գլխավոր պատճառը կարելի է գտնել «հավատքի լիարժեք վստահությամբ» արտահայտության մեջ: Մենք պետք է մոտենանք հավատքով: Որովհետև Աստվածաշունչն ասում է մեզ.

> «Բայց առանց հավատքի անկարելի է հաճեցնել կամ գոհացնել Նրան: Որովհետև նա, ով *մոտենում է Աստծուն,* պետք է [անհրաժեշտաբար] հավատա, որ Աստված գոյություն ունի, և որ Նա վարձատրող է նրանց, ովքեր ջանասիրաբար և եռանդուն կերպով փնտրում են Նրան» (Եբր. 11.6, AMP, *շեղագիրը հեղինակինն է):*

Լսեք այս խոսքերը. «Առանց հավատքի անկարելի է հաճեցնել Նրան»: Մի քանի վայրկյան մտածեք այս պնդման վերաբերյալ և թույլ տվեք, որ այն խորապես հաստատվի ձեր սրտում:

«ԵՍ ՊԱՐԶԱՊԵՍ ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԻՆ, ՈՎ ԿՀԱՎԱՏԱ»

Երբեք չեմ մոռանա մի դեպք, որը տեղի ունեցավ, երբ ընդամենը մի քանի տարի էր, որ ընդունել էի Տիրոջը, ամուրի էի և ապրում էի մի բնակարանում Հյուսիսային Կարոլինա նահանգում: Մի օր՝ վաղ առավոտյան, երբ խորը քնի մեջ էի, հանկարծ վեր թռա և նստեցի անկողնուս մեջ, և իմ բերանից դուրս թռան հետևյալ բառերը. «Ես պարզապես փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա՞»:

Նայեցի իմ զարթուցիչին. առավոտյան ժամը 04:00-ն էր: Ես այնքա՜ն խորն էի քնել, որ պետք է հիշեի, թե որտեղ էի, և ինչ էր տեղի ունեցել: Միացրի լույսը և նկատեցի, որ իմ սավանը լիովին թրջված էր, սակայն ես ո՛չ բարձր ջերմություն ունեի, ո՛չ էլ հիվանդ էի: Ես ապշած էի, ինչպես նաև երկյուղած էի, քանի որ գիտակցում էի, որ Աստված հենց նոր խոսեց իմ բերանով: Բայց հանկարծ մտածեցի. *«Ինչո՞ւ դա ավելի խորը չէր: Ես գիտեմ, որ Նա փնտրում է մարդկանց, ովքեր հավատում են»:* Ես հոգնած էի. այնպես որ, կրկին քուն մտա:

Հաջորդ առավոտյան, երբ արթնացա, շարունակ լսում էի. *«Ես պարզապես փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա...*

Ես պարզապես փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա... Ես պարզապես փնտրում եմ ինչ-որ մեկին, ով կհավատա...»: Գրեթե որոշ ժամանակ անց հանկարծ հասկացա դա: Ես բարձրաձայն ասացի ինքս ինձ. «Այս պնդումը խորն է»:

Այդ պահից սկսեցի մտորել հետևյալ երկու հարցերի շուրջ. *«Ի՞նչն ամենից շատ տրտմեցրեց Հիսուսին»* (ոչ թե ինչն ամենից շատ բարկացրեց Նրան. իհարկե, պատասխանն է՝ կեղծավոր փարիսեցիները), և *«Ի՞նչն ամենից շատ հաճեցրեց Նրան»:* Առաջինը՝ Նա ամենից շատ տրտմեց այն մարդկանց պատճառով, որոնք չհավատացին, որ Ինքն անելու էր այն, ինչ ասում էր: Պարզ ասած՝ նրանց հավատքի բացակայության պատճառով: Իրականում, հավատքի էությունը հենց դրանում է. այն համոզված է, որ Աստված ասում է այն, ինչ նկատի ունի, և Նա նկատի ունի այն, ինչ ասում է: Աստված մարդ չէ, որ ստի. Նա հաստատում է Իր Խոսքն Իր անվան պատվով: Նա երդվում է Իրենով, քանի որ չկա մեկը, որ բարձր է Իրենից: Այնպես որ, երբ մենք կասկածանքով ենք վերաբերվում Նրան, վիրավորանք ենք հասցնում Նրա ազնվությանը:

Դիտարկենք սա: Ուշադրություն դարձրեք Հիսուսի վրդովմունքին հետևյալ աստվածաշնչյան հատվածներում: Ահա մի քանի հատված միայն Մատթեոսի Ավետարանից (ես ընտրեցի Աստվածաշնչի անգլերեն «Այսօրվա անգլերեն թարգմանությունը», քանի որ այն լավագույնս փոխանցում է Նրա Խոսքի երանգավորումը).

> «Որքա՜ն քիչ հավատք ունեք» (Մատթ. 6.30,31, TEV):

> «Աշակերտները մոտեցան և արթնացրին Նրան. «Փրկի՛ր մեզ, Տեր,- ասացին նրանք:- Մենք գրեթե մահանում ենք»: «Ինչո՞ւ եք այդպես վախեցած,- պատասխանեց Հիսուսը:- Որքա՜ն քիչ հավատք ունեք»» (Մատթ. 8.25,26, TEV):

«Հիսուսն անմիջապես պարզեց ձեռքը, բռնեց նրան և ասաց. «Որքա՜ն քիչ հավատք ունես: Ինչո՞ւ կասկածեցիր»» (Մատթ. 14.31, TEV):

«Ինչո՞ւ եք խոսում ձեր մեջ այն մասին, որ հաց չունեք: Որքա՜ն քիչ հավատք ունեք» (Մատթ. 16.8, TEV):

Դուք նկատո՞ւմ եք Նրա ձայնի հիասթափությունը և տրտմությունը այս հատվածներից յուրաքանչյուրում: Այնուամենայնիվ, ամենից շատ ինձ զարմացնում է այն դեպքը, երբ աշակերտները չկարողացան դև հանել լուսնոտ տղայից: Լսե՛ք, թե ինչ ասաց Հիսուսն Իր ծառայողական թիմին.

««Որքա՜ն անհավատ և սխալ եք դուք, մարդի՛կ: Որքա՜ն ժամանակ Ես պետք է մնամ ձեզ հետ: Որքա՜ն ժամանակ Ես պետք է հանդուրժեմ ձեզ: Բերե՛ք այդ տղային Ինձ մոտ»: Հիսուսը հրամայեց դևին, և այն դուրս եկավ տղայից, և հենց այդ պահին տղան բժշկվեց» (Մատթ. 17.17,18, TEV):

Անկասկած, Նա չզսպեց Իր զգացմունքները: Նրա խոսքի երանգավորումը գերազանցում է հիասթափությունը՝ վերածվելով խորշանքի և տրտմության՝ գրեթե հասնելով արդար ցասման:

Քիչ անց աշակերտները հարցրին Նրան, թե ինչո՞ւ իրենք չկարողացան հանել այդ դևին: Հիսուսը պարզապես ասաց.

«Պատճառն այն էր, որ դուք բավականին հավատք չունեք» (Մատթ. 17.20, TEV):

ԱՍՏՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՄԵՐ ՀԱՎԱՏՔԻՆ

Այն ամենը, ինչ մենք ստանում ենք Տիրոջից, հավատքի միջոցով է: Գոյություն ունի մի ճշմարտություն, որը ես բացահայտել եմ, որից շատերը Քրիստոսի մարմնում անտեղյակ են: Այն հետևյալն է. Աստված չի պատասխանում մեր կարիքին. Նա պատասխանում է մեր հավատքին: Մի պահ մտորեք այս պնդման շուրջ: Ես կարող եմ անթիվ օրինակներ բերել, որպեսզի ցույց տամ այս ճշմարտությունն Աստվածաշնչից, բայց թույլ տվեք բերել միայն երկուսը: Առաջինը՝ մի օր Հիսուսը սովորեցնում էր բազմաթիվ առաջնորդների մի տան մեջ, և գրված է.

> «Եվ Տիրոջ զորությունը կար՝ նրանց բժշկելու համար» (Ղուկ. 5.17):

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է Աստվածաշունչը հատկապես տեղեկացնում, որ Աստծո զորությունը ներկա էր՝ այդ առաջնորդներին բժշկելու համար: Մենք հասկանում ենք, որ այդ առաջնորդներից առնվազն մեկը, բայց, ամենայն հավանականությամբ, մի քանիսը բժշկվելու կարիք ունեին, սակայն նրանցից ոչ մեկը բժշկություն չստացավ: Ինչո՞ւ: Նրանցից ոչ ոք հավատք չուներ՝ այն ստանալու համար:

Այնուամենայնիվ, կային մի խումբ մարդիկ, որոնք պատգարակով մի անդամալույծ տղամարդու բերեցին, սակայն չկարողացան ներս մտնել՝ մարդկանց բազմության պատճառով: Այնպես որ, նրանք բարձրացրին այդ մարդուն տանիքի վրա, քանդեցին կղմինդրները և պարաններով ցած իջեցրին նրան՝ Հիսուսի առջև դնելով: Գրված է.

> «Եվ Նա *նրանց հավատքը տեսնելով*... անդամալույծին ասաց. «Քեզ եմ ասում՝ վե՛ր կաց և մահիճդ ա՛ռ

> և գնա՛ քո տունը»: Եվ նա իսկույն նրանց առջև վեր կացավ, իր վրա առավ այն, ինչի վրա պառկած էր, և գնաց իր տունը՝ Աստծուն փառավորելով: Եվ զարմանք բռնեց ամենին, և փառք էին տալիս Աստծուն և ահով լցվեցին և ասում էին, թե՝ նորանշան բաներ տեսանք այսօր» (Ղուկ. 5.20-26, *շեղագիրը հեղինակինն է):*

Հիսուսը տեսավ նրանց հավատքը: Այդ անդամալույծը, ինչպես և նրան բերողները, գիտեին, որ Տերը բարի է՝ համաձայն Իր Խոսքի: Ավելի քան հավանական է, որ նրանք գիտեին, որ Աստված արդեն խոսել էր Իր ժողովրդի հետ՝ պատվիրելով. «Օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ, և մի՛ մոռացիր Նրա բոլոր բարիքները, որ ներում է քո բոլոր մեղքերը, բժշկում է քո բոլոր ցավերը» (Սաղմ. 103.2,3): Ինչ վերաբերում է այդ առաջնորդներին, նրանք զարմացան, երբ տեսան, որ այդ անդամալույծը բժշկվեց, և փառք տվեցին Աստծուն. այնուամենայնիվ, նրանցից ոչ ոք չբժշկվեց: Ինչո՞ւ: Քանի որ մենք չենք կարող ստանալ նույնիսկ այն, ինչ Աստված ցանկանում է, որ ունենանք, եթե չընդունենք դա հավատքով: Հոր կամքն էր, որ այդ հիվանդ առաջնորդները բժշկություն ստանային, սակայն նրանք ոչինչ չստացան: Աստված պատասխանում է, երբ մենք հավատում ենք, ինչն արտահայտվում է այն բանով, որ մենք քայլ ենք անում՝ Նրա Խոսքի հիման վրա:

Մեկ այլ պատմության մեջ մի հույն կին եկավ Հիսուսի մոտ: Նա աղաչեց Նրան բժշկել իր դստերը դիվային կեղեքումից: Հիսուսն ասաց.

> «Նախ՝ Ես պետք է օգնեմ իմ ընտանիքին՝ հրեաներին: Ճիշտ չէ վերցնել կերակուրը երեխաներից և նետել շներին» (Մարկ. 7.27, NLT):

Նա շուն անվանեց այդ կնոջը: Այդ կինը կարող էր վիրավորվել և բարկացած հեռանալ: Այնուամենայնիվ, ինչ-որ կեր-

պով նա ճանաչում էր Նրա բնավորությունը: Եվ նա անմիջապես պատասխանեց.

> «Դա ճիշտ է, Տեր, բայց նույնիսկ սեղանի տակ գտնվող շներն են ստանում փշրանքներ երեխաների ափսեներից» (Մարկ. 7.28, NLT):

Նա գիտեր, որ գտնվում էր Աստծո Որդու ներկայության մեջ, և հավատում էր, որ Նա բարի Աստված է, Ով չունի զորության պակաս: Նա վճռականորեն էր տրամադրված, քանի որ գիտեր, որ պետք է միայն հաստատուն մնար իր խնդրանքով, և չէր մերժվի: Նա հավատքով հաստատուն մնաց, և այդ պատճառով Հիսուսն ասաց.

> «Այս խոսքի համար գնա՛. դևը դուրս եկավ քո աղջկանից» (Մարկ. 7.29):

Երբ այդ կինը տուն հասավ, պարզեց, որ իր դուստրը լիովին բժշկվել էր: Կրկին, Հիսուսը պատասխանեց նրա հավատքին, ոչ թե կարիքին, որովհետև նրա առաջին խնդրանքը ներկայացված էր՝ կարիքից դրդված, բայց նրա պատասխանը Հիսուսի խոսքերին՝ խթանված էր հավատքով:

ՀԱՎԱՏՔՆ ԱՄԵՆ ԻՆՉ ՍՏԱՆԱԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ Է

Այս սկզբունքը վերաբերում է ամեն ինչին Աստծո թագավորության մեջ: Իրականում, Հակոբոսն այնքան համարձակ է, որ պնդում է, որ մենք պետք է հետևենք այս սկզբունքին ամեն անգամ, երբ աղոթքով դիմում ենք Աստծուն.

> «...հավատքով, առանց կասկածելու, որովհետև նա, ով կասկածում է, նման է քամուց տարուբերվող ծովի ալիքի: Թող այդ մարդը չկարծի, թե որևէ բան կստանա Տիրոջից» (Հակոբ. 1.6,7, NKJV):

Զարմանալի՜ է. կրկի՛ն լսեք այս խոսքերը. «Թող այդ մարդը չկարծի, թե որևէ բան կստանա Տիրոջից»: Պարզապես մի պահ մտորե՛ք այս պնդման շուրջ: Մտածե՛ք «ոչ մի բան չի ստանա» բառերի վերաբերյալ: Սա հստակ պնդում է՝ առանց որևէ անորոշության և առանց որևէ բացառության: Աստված հավաստիանում է, որ սա պարզ լինի մեզ համար: Նա արձագանքում է հավատքին և ուրիշ ոչնչի:

Ահա թե ինչու շատերը չեն ընդունել Սուրբ Հոգուն: Նրանք չեն խնդրում հավատքով: Աստվածաշունչը հարցնում է մեզ.

> «Միայն կամենում եմ սովորել ձեզնից. օրենքի գործերի՞ց ընդունեցիք Հոգին. թե՞ *հավատքի լսելուց»* (Գաղատ. 3.2, *շեղագիրը հեղինակինն է):*

Սա համապատասխանում է Հակոբոսի խոսքերին: Դուք չեք կարող ընդունել Տիրոջից ոչ մի բան, եթե չեք մոտենում Նրան հավատքով, ինչն, անկասկած, վերաբերում է նաև Նրա Հոգուն: Շատ հաճախ ես հանդիպել եմ հոգևոր քաղց ունեցող հավատացյալների, որոնք չեն խոսում լեզուներով: Նրանք գիտեն, որ կա ավելին, և փնտրում են, սակայն, լսելով Աստծո Խոսքը Սուրբ Հոգու լեցունության մասին, նրանք ասում են ինձ. «Մեկ անգամ ես աղոթեցի՝ այն ստանալու համար, և ոչինչ տեղի չունեցավ»: Կամ էլ նրանք խնդրում են Սուրբ Հոգու լեցունությունը՝ մտածելով. «Գուցե ստացվի, իսկ գուցե՝ ոչ»: Նրանք չունեն այն վճռականությունը, որն ուներ այդ հույն կինը: Նրանք չեն գալիս՝ լիարժեք վստահությամբ: Աստված ակնկալում է, որ մենք ճանաչենք Իր կամքը, որովհետև մենք ունենք հետևյալ պատվերը. «Նրա համար մի՛ եղեք անմիտ, այլ իմացե՛ք, թե ինչ է Տիրոջ կամքը» (Եփես. 5.17), և երբ գիտենք այն, մենք պետք է խնդրենք հավատքով և վստահությամբ:

Ինչ վերաբերում է Աստծուն մոտենալուն՝ Նրա հետ մտերմորեն շփվելու համար, գործում է միևնույն սկզբունքը: Շատ հաճախ, երբ հավատացյալները մոտենում են Տիրոջը, նրանք

անում են դա՝ հույս ունենալով, որ իրենք կհաղորդակցվեն Նրա հետ (ես նկատի չունեմ աստվածաշնչյան հույսը, որը նշանակում է «վստահ ակնկալիք», այլ՝ «գուցե ստացվի, իսկ գուցե՝ ոչ» վերաբերմունքը): Հավատացյալները հաճախ են ինչ-որ բաներ ասում՝ հույս ունենալով, որ կլսվեն: Այս վերաբերմունքը հավատք չէ, և այն մուտք չի գործի Աստծո ներկայության մեջ: Կրկին, գրված է. «Բայց առանց հավատքի անկարելի է հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, թե *Նա կա»* (Եբր. 11.6, *շեղագիրը հեղինակինն է):* Հեղինակը գրում է հրեա հավատացյալներին, որ երբ դուք մոտենում եք Աստծուն, դուք պետք է հավատաք, որ *Նա կա:* Այլ կերպ ասած, որ Նա ձեզ մոտ կլինի, Նա կլսի, և Նա կպատասխանի:

Հակոբոսը գրում է. «Թող այդ մարդը չկարծի, թե որևէ բան կստանա Տիրոջից. նա երկմիտ մարդ է» (Հակոբ. 1.7,8, NKJV): Երկմիտ մարդը նա է, ով մոտենում է Աստծուն, սակայն վիճարկում է՝ արդյո՞ք Նրա ներկայության մեջ է: Գուցե նա նույնիսկ հարցնի իրեն՝ արդյո՞ք Աստված նկատել է իր գալը:

Երկմիտ լինելու ախտանշաններից մեկը թափառող մտքերն են: Թույլ տվեք բացատրել: Հաճախ ծառայությունների ժամանակ, երբ ուղերձից հետո մարդիկ առաջ են գալիս՝ աղոթքի համար, ես պատվիրում եմ երաժիշտներին ոչինչ չնվագել: Պատճառն այն է, որ թեև երաժշտությունը միայն գործիքային է, շատերը երգելու են հայտնի երգերի բառերը և չեն կենտրոնանալու Տիրոջ վրա: Հակոբոսն ասում է. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ... ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակոբ. 4.8,9): Ինչպե՞ս կարող ենք փնտրել Աստծուն, երբ մեր միտքը կենտրոնացած չէ Նրա վրա: Պատկերացնո՞ւմ եք, որ փորձեք շփվել ձեր ընկերներից մեկի հետ նման ձևով:

Մարդիկ հեշտորեն շեղվում են, քանի որ, մոտենալով Աստծուն, նրանք միայն հույս ունեն, որ կհաղորդակցվեն Նրա հետ: Ո՛չ, դուք պետք է հավատաք, որ *Նա կա.* դուք պետք է հավատաք, որ *Նա ներկա է.* դուք պետք է հավատաք, որ *Նա*

լսում է և կպատասխանի, և Նա արժանի է ստանալու ձեր անշեղ ուշադրությունը: Հավատքը վստահություն է հաղորդում ձեզ, որ Նա տրամադրում է ձեզ Իր ուշադրությունն ամբողջությամբ, քանի որ դուք գիտեք, որ Նա խոստացել է, և Նա չի կարող ստել. եթե դուք մոտենաք, Նա Իր հերթին նույնպես կմոտենա ձեզ: Այս պահին գրեթե չեմ կարողանում զսպել այն ոգեշնչումը, որը համակում է իմ սիրտը: Ինչպիսի՜ հրաշալի Աստծո ենք մենք ծառայում: Նա կպատասխանի՜ մեզ, եթե հավատքով մոտենանք Նրան:

ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՎԱՏՔ ՍՏԱՆԱԼ

Այժմ պետք է պատասխանենք մի հարցի, որը շատ հաճախ է տրվում. «Ինչպե՞ս ավելացնեմ իմ հավատքը»: Այս հարցը տրվել է տարիներ շարունակ՝ առաքյալների ժամանակից ի վեր:

> «Եվ առաքյալներն ասացին Տիրոջը. «Մեր հավատքն ավելացրո՛ւ»: Եվ Տերն ասաց. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենայիք, այս թզենուն կասեիք՝ պոկվի՛ր և ծովի մեջ տնկվի՛ր, և այն կհնազանդվեր ձեզ»» (Ղուկ. 17.5,6):

Ուշադրություն դարձրեք, որ սկզբում Նա ասաց. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենայիք»: Սերմը փոքր մի բան է, սակայն հսկայական ծառ դառնալու ներուժ ունի իրենում: Այնպես որ, մինչև խոսելը այն մասին, որ հավատքը զարգանում է՝ մեծ և պտղաբեր ծառի վերածվելով, մենք, նախ, պետք է հարցնենք՝ ինչպե՞ս ենք ստանում այդ սերմը: Այս հարցի պատասխանը պարզորեն տրվում է հետևյալ խոսքում.

> «Ուրեմն, հավատքը *լսելուց* է, և *լսելը*՝ Աստծո Խոսքից» (Հռոմ. 10.17, *շեղագիրը հեղինակինն է):*

Ամեն ինչ շատ պարզ է: Հավատքի սերմը գալիս է Աստծո Խոսքը լսելուց: Նույնպես, ուշադրություն դարձրեք, որ *«լսել»* բառն այս խոսքում գրված է երկու անգամ: Երբեմն դա կարող է տեղի ունենալ միայն մեկ անգամ լսելու միջոցով, բայց հաճախ Աստծո Խոսքի սերմը ցանվում է մեր սրտում՝ կրկին ու կրկին լսելու միջոցով: Ահա թե ինչու են հոգևոր քաղց ունեցող բազմաթիվ հավատացյալներ շարունակաբար լսում կամ կարդում Աստծո խոսքի վրա հիմնված որևէ ուղերձ: Շատերն են մոտեցել ինձ և ասել. «Ես մի քանի անգամ կարդացի ձեր գրքերից մեկը», կամ՝ «Ես հինգ անգամ դիտեցի ձեր տեսաուղերձներից մեկը, և հինգերորդ անգամ այն բացվեց ինձ համար»: Այդ պահին էր, որ Աստծո Խոսքի սերմը ցանվեց և արմատ գցեց:

Սա այնքան պարզ է, որ մենք կարող ենք հեշտորեն անուշադրության մատնել և բարդացնել: Հավատքի սերմը գալիս է ընդամենը լսելով Սուրբ Հոգու ներշնչմամբ քարոզված կամ գրված Աստծո Խոսքը: Որքա՞ն ցավալի է, որ այսօր գոյություն ունեն քարոզված անթիվ ուղերձներ և գրված անթիվ գրքեր, սակայն Աստծո Խոսքը դրանցում շատ քիչ է: Առաջին գիրքը, որը գրեցի, մերժվեց մի խոշոր հրատարակչության կողմից, քանի որ, նրանց խոսքով, «այն չափազանց քարոզչական» էր: Դրանում չափազանց շատ սուրբգրային հատվածներ կային. այն, ինչ Աստված էր ասում, չափազանց շատ էր այդ գրքում: Կարծում եմ՝ նրանք ուզում էին այնպիսի բան, ինչը հաճելի կլիներ մարդկային զգացմունքներին և նույնիսկ նրանց մարմնին:

Որքա՞ն ցավալի է, բայց սա այն ճնշումն է, որին բազմաթիվ ծառայողներ տեղի են տալիս այսօր: Այժմ մենք ունենք «փնտրողներին հարմարեցված» եկեղեցիներ, որտեղ հաճախող մարդիկ Աստվածաշնչեր չեն վերցնում իրենց հետ, քանի որ դրանց կարիքը չունեն: Նրանք լսում են հաճելի կամ զվարճալի ուղերձներ, որոնք օգնում են նրանց իրենց զբաղ-

ված և հաճույքների ձգտող կյանքում: Երբ մտորում եմ մեր արևմտյան եկեղեցու վիճակի շուրջ, այս ամենը զավեշտալի է թվում, քանի որ վերջին երկու տարում մեր ծառայությունն ուղարկել է հիսուն հազար Աստվածաշունչ Չինաստանի ընդհատակյա եկեղեցիների առաջնորդներին, որովհետև նրանք հուսահատորեն Աստծո Խոսքի կարիքն ունեն: Աստվածաշնչերն այնքա՛ն սակավաթիվ են Չինաստանում, որ առաջնորդները բաժանում են Նոր կտակարանի էջերն իրենց ավագներին և խնդրում են անգիր սովորել, որպեսզի մշտապես կարողանան քարոզել Աստծո Խոսքը, նույնիսկ եթե իշխանություններն առգրավեն նրանց Աստվածաշնչերը: Այդ տղամարդիկ և կանայք գիտեն Աստծո Խոսքի արժեքը:

Այնուամենայնիվ, Արևմուտքի եկեղեցիներում մենք փորձում ենք քարոզել այնպիսի ուղերձներ, որոնք զվարճացնում են անձը և մխիթարում են մարմնական բնությանը, փոխարենը քարոզենք ուղերձներ Աստծո Խոսքից, որոնք վերափոխում են անձը և մահ են բերում մարմնական բնությանը: Լսելով այս ուղերձները՝ կարելի է ծիծաղել և նույնիսկ արտասվել որևէ հուզիչ պատմությունից, բայց ի՞նչ տեղի կունենա, երբ մեղքը թակի այդ «փնտրողների» դուռը. արդյո՞ք նրանք դիմակայելու ուժ կունենան: Ի՞նչ տեղի կունենա, եթե նրանց անհրաժեշտ լինի իմանալ Աստծո կամքը որևէ բախտորոշ իրավիճակում. արդյո՞ք նրանք կիմանան, թե ինչպես աղոթեն և ինչ խնդրեն: Արդյո՞ք նրանք կունենան այն մարդկանց հավատքը, որոնք պատասխաններ ստացան Աստծուց Ավետարաններում: Կարելի է անվերջ նման հարցեր տալ:

Ես ուրախ եմ, որ այդ հրատարակիչը մերժեց իմ առաջին գիրքը, քանի որ, եթե ընդուներ, հավանաբար, կխնդրեր իր խմբագիրներին թուլացնել դրա ուղերձը, և այն չէր հասնի բազմաթիվ մարդկանց, ում այն զորացրել է (այդ գիրքն, ի վերջո, հրատարակվեց): Զավեշտական է, որ այդ հրատարակչության սեփականատերը հեռացրեց աշխատանքից իր

հրատարակչական ընկերության ղեկավարին և աշխատանքի ընդունեց մի մարդու, որը սրտանց հետևում էր Աստծուն: Այդ նոր հրատարակիչն այնպիսի թիմ հավաքեց, որը նույնպես ձգտում էր հասցնել Աստծո ուղերձները Նրա ժողովրդին: Նա կապ հաստատեց ինձ հետ և հարցրեց՝ արդյո՞ք կարող էր հրատարակել իմ հաջորդ գիրքը: Ես հինգ գիրք գրեցի այդ հրատարակչության համար, որոնցից չորսը հանրաճանաչ գրքեր դարձան, սակայն ավելին՝ մենք շարունակում ենք անթիվ վկայություններ ստանալ մարդկանց կյանքերում, ընտանիքներում և եկեղեցիներում տեղի ունեցած փոփոխությունների մասին: Ամբողջ փառքն Աստծո՛ւնն է:

Ես պատմում եմ ձեզ այս մասին, քանի որ երկրի վրա սով կա, ոչ թե հացի և ջրի, այլ՝ Աստծո Խոսքի (տե՛ս Ամովս 8.11): Ընդհանուր առմամբ, Ամերիկյան եկեղեցում Աստծո Խոսքը գրեթե չի քարոզվում: Ես նկատի չունեմ, որ մենք չունենք ուղերձներ, այո, մենք ունենք անասելի քանակությամբ գրքեր, տեսանյութեր և լսաժապավեններ, բայց մենք Աստծո Խոսքի պակաս ունենք: Ինչպե՞ս է պատահում, որ, գնալով Աֆրիկայի և Ասիայի ժողովուրդների մոտ, տեսնում եմ մարդկանց, որոնք ունեն ավելի քիչ քրիստոնեական նյութեր, քան մենք՝ ամերիկացիներս, սակայն հեշտորեն են ստանում Աստծուց և ունեն ավելի մեծ հավատք և պտուղ իրենց կյանքում: Պատասխանը պարզ է: Նրանք լսում են ոչ թե «փնտրողներին հարմարեցված» կամ օրինապաշտական ուղերձներ, այլ՝ Տիրոջ Խոսքը:

Ես խոստացել եմ Աստծուն, որ երբեք տեղի չեմ տա այս ճնշմանը. ես երբեք չեմ քարոզի ուղերձներ, որոնք հաճելի են մարդկանց՝ այն ուղերձների փոխարեն, որոնք Նա տալիս է ինձ: Պողոսը գրում է. «Ես փորձում եմ շահել մարդկա՞նց հավանությունը, թե՞ Աստծո: Թե՞ ես փորձում եմ հաճեցնել մարդկանց: Եթե ես դեռ փորձեի հաճեցնել մարդկանց, Քրիստոսի ծառան չէի լինի» (Գաղատ. 1.10, NIV): Քանի՞սն են սկսել որ-

պես Քրիստոսի ծառաներ, սակայն այժմ իրենց եկեղեցական համայնքի կամ լսարանի ստրուկն են: Այժմ նրանք ստրկացված են մարդկային ճնշմանը. այն մարդկանց, որոնց իրենք ենթադրաբար առաջնորդում են, պետք է քարոզեն այն, ինչ նրանք են ուզում լսել:

Հավատքը գալիս է լսելուց, իսկ լսելը՝ Աստծո Խոսքից: Աստծո Խոսքն է, որ ցանում է հավատքի սերմերը մեր սրտում: Որպես առաջնորդներ, մենք պետք է տանք Տիրոջ ժողովրդին այն, ինչ նրանց պետք է, ոչ թե այն, ինչ նրանք կարծում են, թե իրենց պետք է: Մենք պետք է սնուցենք նրանց Աստծո հավիտենական Խոսքով, որը կարող է կառուցել նրանց անձը և ժառանգություն տալ նրանց (տե՛ս Գործք 20.32):

Ներկայումս ասպարեզ են գալիս բազմաթիվ առաջնորդներ, որոնք կրկին ազդարարում են Աստծո անարատ և անեղծ Խոսքը: Ոմանք ընկել էին մարդկանց հաճեցնելու ծուղակը և այժմ ազատվում են դրանից, իսկ մյուսները նոր են երևան գալիս: Նրանք կոչ են անում Աստծո ժողովրդին վերադառնալ Նրա մոտ: Ինչո՞ւ է Աստված շեշտադրում մտերմությունն Իր հետ: Պատասխանը պարզ է. Նա ցանկանում է, որ մենք հավատք ունենանք, որպեսզի սերտորեն հաղորդակցվենք Իր հետ, քանի որ անկարելի է մտերիմ լինել Նրա հետ՝ առանց հավատքի: Նա ցանում է Իր սերմերն Իր ժողովրդի կյանքում, որպեսզի մոտենա Նրանց: Որքա՜ն ոգեշնչող է այս ամենը:

ԻՆՉՊԵ՞Ս ԱՎԵԼԱՑՆԵԼ ՀԱՎԱՏՔԸ

Հաջորդ հարցը հետևյալն է. «Ինչպե՞ս ավելացնել հավատքը»: Հիսուսն ասում է Իր աշակերտներին.

> ««Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենայիք, այս թզենուն կասեիք. «Պոկվի՛ր և ծովի մեջ տնկվի՛ր», և այն

> կինազանդվեր ձեզ: Բայց ձեզնից ո՞վ է նա, որ մի հողագործ կամ մի հովիվ ծառա ունենա, որ երբ հանդից գա, տուն մտնի, շուտով ասի նրան, թե՝ ե՛կ, սեղա՛ն նստիր: Այլ չի՞ ասի նրան, թե՝ պատրաստի՛ր՝ ինչ որ իրիկունը պիտի ուտեմ, և գոտիդ կապի՛ր, ինձ ծառայի՛ր, մինչև որ ուտեմ և խմեմ, և հետո դու էլ կուտես և կխմես»: Մի՞թե այն ծառայից շնորհակալ կլինի, որ այն բոլոր իրեն հրամայվածներն արեց: Չեմ կարծում: Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք, ասե՛ք, թե՝ մենք անպիտան ծառաներ ենք, որովհետև այն ենք արել, ինչ որ պարտական էինք անելու» (Ղուկ. 17.6-10):

Ինձ շփոթեցնում էր այն փաստը, որ Հիսուսը, խոսելով այն մասին, որ հավատքը սերմ է, անցում է կատարում ծառայի պարտականություններին իր տիրոջ հանդեպ: Կարող է թվալ, թե Հիսուսի խոսքերը հետևողական չեն, բայց ես գիտեի, որ այդպես չի կարող լինել: Եվ մեկ օր Սուրբ Հոգին բացեց իմ աչքերը:

Առաջինը՝ Նա ասում է մեզ, որ հավատքը գալիս է սերմի տեսքով: Սերմերը շատ փոքր են, բայց դրանցում աճելու և մեծ ծառեր դառնալու ներուժ կա: Այնպես որ, բավական չէ պարզապես ցանել սերմը. սերմերը պետք է մշակվեն՝ իրենց նախասահմանությանը հասնելու համար: Նրա պատասխանի երկրորդ մասը ցույց է տալիս, թե ինչպես աճեցնել հավատքի սերմը՝ մեծ պտղաբեր ծառ դարձնելու համար: Այլ կերպ ասած, ինչպե՞ս վերածել այն այնպիսի հավատքի, որն արմատախիլ է անում թզենիները, շարժում է սարերը և տանում է մեզ անմիջապես Աստծո ներկայության մեջ:

Ինչո՞ւ է ծառան մշակում իր տիրոջ դաշտը կամ արածեցնում նրա հոտերը: Վերջնական նպատակն այն է, որ իր տիրոջ սեղանին կերակուր լինի: Հիսուսի հարցը հետևյալն է. «Ինչո՞ւ է ծառան հոգ տանում ցանքերի կամ հոտերի մասին, եթե դրանից հետո, տուն վերադառնալով, նա ավարտին չի հասցնելու

իր աշխատանքը՝ իր տիրոջ սեղանին կերակուր դնելով»: Որպեսզի հաջողության հասնի, նա պետք է ավարտի *այն ամենը,* ինչ իրեն խնդրել են անել: Իր գործը չավարտելը կարելի է համեմատել այն բանի հետ, որ դուք սերմ եք ցանում, ջրում և պարարտում եք, բայց անմիջապես հունձքից առաջ կործանում եք այդ ցանքը կամ անտեսում եք այն՝ թույլ տալով, որ պտուղը փչանա:

Հիսուսը խոսում է մեր հնազանդության մասին: Նա Տերն է, և մենք Նրա ծառաներն ենք՝ Նրա դաշտերում: Եթե ուզում ենք, որ մեր հավատքի սերմերն աճեն՝ պտղաբերության հասնելով, և արդյունք տան, մենք պետք է հնազանդ ծառաներ լինենք այն ամենում, ինչ մեզ խնդրում են անել: Ուշադրություն դարձրե՛ք Նրա խոսքերին. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք»: Այս խոսքերը հաստատում են, որ Նա նկատի ունի մեր հնազանդությունը, և որ այն է մեր հավատքն ավելացնելու բանալին:

ՄԱՍՆԱԿԻ ՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

Բավական չէ մասնակիորեն հնազանդվել, կամ սկսել հնազանդությամբ, իսկ հետո ետ քաշվել: Սա այն սխալն է, որը գործեցին շատերն Աստվածաշնչում: Դրա վառ օրինակներից մեկը Սավուղ թագավորն է: Տիրոջից եկած խոսքը հստակորեն պատվիրեց նրան ամբողջովին կործանել Ամաղեկը՝ սպանել յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի, ինչպես նաև բոլոր կենդանիներին: Ոչ մի շունչ ունեցող չպետք է ողջ մնար:

Սավուղը չպատասխանեց. «Ես չե՛մ անի դա»: Չափազանց հաճախ մենք սահմանափակում ենք անհնազանդությունը միայն դրա ակնհայտ դրսևորմամբ՝ բացահայտ ապստամբությամբ: Սակայն դա այնքան էլ ճիշտ չէ: Սավուղը չարեց ևս մեկ բան. այնպես չէր, որ նա համաձայնեց, իսկ հետո մտափոխվեց: Շատերը գիտեն նաև անհնազանդության այս տեսակը:

Նաև այնպես չէր, որ Սավուղն անտեսեց դա՝ առաջնահերթություն չհամարելով, և ի վերջո չինազանդվեց՝ այդ հրամանին կարևորություն չտալու կամ այն մոռացության մատնելու պատճառով: Շատերը կընդունեին, որ նման վարքը հնազանդություն չէ, սակայն ներողամտություն կցուցաբերեին՝ հաշվի առնելով այդ մարդու բարի մտադրությունները: Ավելի քան հավանական է, որ բոլորը կհամաձայնեին, որ այս տարբերակներն անհնազանդ վարքի օրինակներ են, բայց կրկին ուշադրություն դարձնենք Սավուղի վարքին:

Նա անմիջապես հավաքեց իր բանակը և հարձակվեց՝ սպանելով յուրաքանչյուր տղամարդու, կնոջ նաև նորածին և կաթնակեր երեխայի: Տասնյակ հազարավորները սրի քաշվեցին Սավուղի և նրա ստվար բանակի կողմից: Այնուամենայնիվ, Սավուղը խնայեց Ամաղեկի թագավորին: Ինչո՞ւ: Ես համոզված եմ, որ նա վարվեց իր ժամանակվա մշակույթի համեմատ: Այն թագավորը, որն այլ երկիր էր նվաճում, ողջ-ողջ բռնում էր այդ երկրի թագավորին և ստրուկ էր դարձնում նրան իր պալատում՝ որպես կենդանի հաղթանշան:

Սավուղը նաև սպանեց հազարավոր կենդանիների: Այնուամենայնիվ, նա խնայեց ոչխարների, ցլերի, հորթերի և գառների լավագույններին և տվեց իր զինվորներին, որպեսզի զոհաբերեին դրանք Աստծուն՝ «սուրբգրային» գործ կատարելու համար: Պատկերացրեք, թե ինչպես մարդիկ պետք է դիտարկեին դա: Զոհաբերելով Տիրոջը այդ կործանման դատապարտված կենդանիները, նրանք մտածում էին. «Ինչպիսի՜ աստվածապաշտ թագավոր մենք ունենք. Տերը միշտ առաջին տեղում է նրա համար»:

Բայց Աստծո դիրքորոշումը լիովին այլ էր: Նա գանգատվեց Սամուելին. «Ես մեծապես զղջում եմ, որ թագավոր եմ կարգել Սավուղին, որովհետև նա ետ դարձավ Ինձ հետևելուց և չկատարեց Իմ պատվիրանները» (Ա Թագ. 15.11, NKJV): Սավուղը սպանեց տասնյակ հազարավորների և խնայեց միայն մե-

կին: Նա կատարեց իրեն հրամայվածի 99.9 տոկոսը: Շատերս կհամարեինք, որ նա հնազանդ էր իր առաքելության մեջ, սակայն Աստված անհնազանդություն համարեց դա: Իրականում, մի քանի խոսք անց Նա ապստամբություն անվանեց դա՝ մարգարեի միջոցով: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ մասնակի հնազանդությունը բոլորովին հնազանդություն չէ: Իրականում, *գրեթե* լիարժեք հնազանդությունը՝ նույնիսկ 99 տոկոսը, համարվում է ոչ թե հնազանդություն, այլ՝ ապստամբություն: Որքա՜ն հաճախ ենք մենք լսում. «Ինչո՞ւ դուք չեք նայում այն ամենին, ինչ ես արել եմ: Դուք միայն կենտրոնանում եք այն փոքրի վրա, ինչը չեմ արել»: Անկասկած, Սավուղը կարող էր ասել դա: Գուցե դա ընդունելի է մարդկային դատողության համար, բայց ոչ՝ աստվածայինի:

ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՂԻՂ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ Է ՄԵՐ ՀԱՎԱՏՔԻՆ

Եթե շարունակեք հետևել Սավուղի կյանքին, կնկատեք, որ նրա հավատքն անշեղորեն քայքայվում էր: Դուք նույնպես կնկատեք, որ նա աստիճանաբար ավելի էր հեռվանում Տիրոջից: Նրա մտերմության մակարդակը նվազում էր այն պատճառով, որ Աստծո հետ մտերմորեն հաղորդակցվելու մեր կարողությունը ուղիղ համեմատական է մեր հավատքին: Հովհաննես առաքյալը գրում է այս մասին.

> «Ահա թե ինչպես մենք վստահ կլինենք Աստծո ներկայության մեջ: Եթե մեր խիղճը դատապարտում է մեզ, մենք գիտենք, որ Աստված ավելի մեծ է, քան մեր խիղճը, և որ Նա գիտի ամեն ինչ: Այնպես որ, իմ թանկագին ընկերնե՛ր, եթե մեր խիղճը չի դատապարտում մեզ, մենք համարձակություն ունենք Աստծո ներկայության մեջ» (Ա Հովհ. 3.19-22, TEV):

Աստծո հետ մտերմորեն հաղորդակցվելու մեր կարողությունն ուղիղ համեմատական է մեր հավատքին, իսկ մեր հավատքն ուղիղ համեմատական է մեր հնազանդությանը՝ Նրան: Թույլ տվեք պարզաբանել այս պնդումը: Ես նկատի չունեմ այնպիսի անհնազանդություն, որին անմիջապես հետևում են խոստովանություն և ապաշխարություն: Դավթի մեղքը շատ ավելի մեծ էր, քան Սավուղինը, բայց նա անմիջապես ապաշխարեց: Նրա հավատքը չթուլացավ, և ո՛չ էլ թուլացավ Տիրոջ հետ մտերմորեն հաղորդակցվելու նրա կարողությունը: Ինչ վերաբերում է Սավուղին, նա շարունակեց ձգտել իր շահին՝ պաշտպանելով և ամրապնդելով այն, ինչ նա իրենն էր համարում: Ի տարբերություն Դավթի, Սավուղի սիրտը չէր ձգտում Աստծո սրտին:

Այս սկզբունքի դիպուկ օրինակ կյանքում կարող է լինել ամուսնու և կնոջ հարաբերությունը: Եթե նրանցից մեկը եսակենտրոն է դառնում և չի հպատակվում մյուսին, վստահությունը և մտերմությունը կորսվում են: Ամուսինը կարող է ասել. «Ես վճարում եմ հաշիվները, ապահովում եմ քեզ սնունդով և բնակարանով, նաև հագուստ եմ գնում քեզ համար: Ինչո՞ւ չեմ կարող սիրուհի ունենալ»: Նա կարող է ասել, որ սիրում է իր կնոջը, նույնիսկ կարող է ասել, որ պատշաճ կերպով հոգ է տանում իր կնոջ մասին, բայց ես երաշխավորում եմ, որ նրանց մտերմության մակարդակն արագորեն կքայքայվի՝ միայն այդ մեկ ոլորտում անհնազանդ լինելու պատճառով:

Մենք կարող ենք հարցնել. «Տե՛ր, ես պարբերաբար եկեղեցի եմ հաճախում, տասանորդ եմ տալիս, Աստվածաշունչ եմ կարդում և աղոթում եմ. ինչո՞ւ է իմ հավատքն այսքան տկար»: Թույլ տվեք մի հարց տալ. ինչպե՞ս եք վերաբերվում ձեր կնոջը: Աստված ասում է. «Նմանապես, մարդի՛կ (կամ՝ ամուսիններ), իմաստությա՛մբ բնակվեք նրանց հետ՝ ինչպես տկար անոթի, կանանց պատիվ տալով՝ իբրև կյանքի շնորհքի ժառանգակիցներ, որ *ձեր աղոթքը չխափանվի»* (Ա Պետր. 3.7, NKJV *շեղա-*

գիրը հեղինակինն է): Մեր հաղորդակցությունն Աստծո հետ խոչընդոտվում է, քանի որ մենք հնազանդ չենք բոլոր ոլորտներում: Հիշե՛ք Հիսուսի խոսքերը. «Այնպես էլ դուք, երբ որ բոլոր ձեզ հրամայված բաներն անեք...»: Մասնակի հնազանդությունը ոչ մի դեպքում չի ավելացնի մեր հավատքը: Միևնույն սկզբունքը վերաբերում է այն բանին, թե ինչպես են կանայք վերաբերվում իրենց ամուսիններին, երեխաները՝ ծնողներին, նաև՝ թե ինչպես են ծնողները վերաբերվում իրենց երեխաներին:

Կարելի է ևս մեկ հարց տալ. արդյո՞ք դուք պահում եք ձեր խոսքը: Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ այն մարդը, ով մտերիմ հաղորդություն ունի Աստծո հետ, «ընկերոջը երդում է անում և չի փոփոխում» (Սաղմ. 15.4): Արդյո՞ք դուք խոսք եք տալիս և չեք պահում ձեր խոստումը: Արդյո՞ք դուք սովորություն եք դարձրել ձեր շուրթերով մեղանչելը և զարմանում եք, թե ինչո՞ւ է ձեր հավատքը տկար: Ես կարող եմ շարունակել՝ նման հարցեր տալով:

Իմաստն այն է, որ մենք պետք է ձգտենք լիովին հնազանդ լինել Աստծո Խոսքին: Քանի որ Աստծո Խոսքը միանշանակ դիմում է մեզ.

> «Իմ որդյակնե՛ր, սա գրում եմ ձեզ, *որ չմեղանչեք»* (Ա Հովհ. 2.1, *շեղագիրը հեղինակինն է):*

Շատերը դիտարկում են մեղքը կա՛մ անփութորեն, կա՛մ օրինապաշտական տեսանկյունից: Մեղքն անփութորեն դիտարկողները հավատում են, որ կարող են խախտել Աստծո Խոսքը, քանի որ մենք շնորհք և ողորմություն ենք ստացել, և խաչը ծածկել է ամեն ինչ: Այո՛, խաչը լուծել է մեղքի հարցը, բայց մենք պետք է հիշենք այն, ինչ Պողոսն ասում է հավատացյալներին. «Չգիտե՞ք, որ եթե դուք շարունակաբար անձնատուր եք լինում որևէ մեկին՝ նրա կամքը կատարելու համար, դուք

նրա ստրուկներն եք, որին հնազանդվում եք՝ թե՛ մեղքին, որը մահվան է տանում, թե՛ հնազանդությանը, որն արդարության է տանում» (Հռոմ.6.16, AMP): Կրկին, Ինքը՝ Հիսուսը, կասի նրանց, ովքեր Տեր են անվանել Իրեն, սակայն շարունակաբար մեղանչել են. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անօրինություն գործողներ» (Մատթ. 7.23):

Օրինապաշտ մարդիկ դիտարկում են մեղքը որպես մարդուն իրենց «սրբության ակումբից» հեռացնելու առիթ: Սա չէ, որ պետք է դրդի մեզ հեռու մնալ ցանկացած անհնազանդությունից. իրականում, այդ շարժառիթը չի կարող պահել մեզ մեղքից: Այնուամենայնիվ, երբ մենք գիտակցենք, որ մեղքը կործանարար է մեր հավատքի համար և իր հերթին խոչընդոտում է մեր մտերիմ հաղորդակցությանն Աստծո հետ, մենք կփախչենք դրանից: Ինչո՞ւ: Քանի որ ամենից առավել ցանկանում ենք մոտ լինել Նրան:

Հիմա մենք հասկանում ենք, թե ինչու է Հակոբոսը պատվիրում մեզ անմիջապես Աստծուն մոտենալու հրավերից առաջ և հետո.

> «Արդ *հնազանդվե՛ք Աստծուն,* հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: *Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ»* (Հակոբ. 4.7,8, *շեղագիրը հեղինակինն է):*

Ամեն ինչ կենտրոնանում է հնազանդության վրա: Ինչո՞ւ: Որպեսզի մենք կարողանանք մոտենալ լիարժեք վստահությամբ: Կրկին, դիտարկենք այս գլխի սկզբում մեջբերված աստվածաշնչյան հատվածը.

> «Ուրեմն, եղբայրնե՛ր, *համարձակություն* ունենալով մտնելու Ամենասուրբ վայրը՝ Հիսուսի արյամբ, նոր և կենդանի... եկե՛ք *մոտենանք* ճշմարիտ սրտով՝ *հավատքի լիարժեք վստահությամբ,* մեր սրտերը մաքրված չար

> խղճից, և մեր մարմինները լվացված մաքուր ջրով: Եկե՛ք *ամուր պահենք մեր հույսի դավանությունը*՝ առանց սասանվելու, որովհետև Նա, Ով խոստացավ, հավատարիմ է» (Եբր. 10.19-23, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Մեր հավաստիացումը կամ լիարժեք վստահությունը բխում է հավատքից, որը գալիս է Աստծո Խոսքը լսելուց և ավելանում է մեր շարունակական հնազանդությամբ: Եթե մեղանչենք, մենք Բարեխոս ունենք Հոր մոտ, և եթե արագորեն ապաշխարենք, մեր խիղճն ազատ կլինի դատապարտությունից, քանի որ Նրա արյունը մաքրում է մեզ՝ ձյունից էլ սպիտակ: Սակայն եթե համառորեն շարունակենք մեղանչել, մեր խիղճը կդատապարտի մեզ, իսկ Աստված ավելի մեծ է, քան մեր խիղճը: Արդյունքում մենք չենք կարողանա լիարժեք վստահությամբ մոտենալ կենդանի Աստծուն:

ՀՈՒՅՍ

Այժմ թույլ տվեք անցնել վերևում բերված աստվածաշնչյան հատվածի երկրորդ պնդմանը. «Եկե՛ք ամուր պահենք մեր հույսի դավանությունը»: Հույսը հաճախ սխալ է հասկացվում. այն չի նշանակում «գուցե ստացվի, իսկ գուցե՝ ոչ». այն նշանակում է «վստահ սպասում»:

Երբ Աստված առաջին անգամ հայտնվեց Աբրահամին, Նա խոստացավ. «Ես քո վահա՛ննեմ, քո չափազանց մեծ վարձատրությունը» (Ծնն. 15.1, NKJV): Աբրահամը չուներ իր ամուլ կնոջից երեխաներ ունենալու *բնական հույս*. այնպես որ, նրա պատասխանը մի փոքր վհատված էր.

> «Ո՛վ Գերիշխան Տեր, ի՞նչ օգուտ ինձ Քո բոլոր օրհնություններից, եթե ես նույնիսկ մեկ որդի չունեմ: Քանի որ ես որդի չունեմ, Դամասկոսցի Եղիազարը՝ իմ տան միջի ծառաներից մեկը, ժառանգելու է իմ ամբողջ հարստությունը: Դու

> երեխաներ չես տվել ինձ. այնպես որ, իմ ծառաներից մեկն է լինելու իմ ժառանգը» (Ծննդոց 15.2,3, NLT):

Ակնհայտ էր, որ այդ մարդը գրեթե կամ բոլորովին հույս չուներ, և Աստված գիտեր, որ Աբրահամը չէր կարող ստանալ Իր խոստումները, եթե հույս չունենար: Այնպես որ, այդ երեկո Տերը դուրս հանեց նրան և պատվիրեց հաշվել աստղերը: Ես հավատում եմ, որ տեղի ունեցավ հետևյալը: Աբրահամն ի վերջո քնեց՝ անթիվ աստղերը հաշվելիս: Հաջորդ առավոտյան Տերն արթնացրեց նրան՝ հարցնելով. «Դու հաշվեցի՞ր բոլորը»:

Աբրահամն ասաց. «Ո՛չ, դրանք չափազանց շատ են»:

Աստված ստացավ այն պատասխանը, որին սպասում էր, և շարունակեց. «Քո ժառանգներն այդչափ կլինեն՝ այնքան շատ, որ անկարելի կլինի հաշվել» (Ծնն. 15.5, NLT): Նա աստվածային հույս դրեց Աբրահամի ներսում: Աստված պարզ պատկեր տվեց նրան Իր խոստման՝ բազմաթիվ ժառանգներ ունենալու մասին: Ամեն անգամ, երբ նա նայում էր աստղերին, հիշում էր Աստծո խոստումը և լսում էր անթիվ ժառանգների, որոնք գոչում էին. «Հա՛յր Աբրահամ, հա՛յր Աբրահամ»: Անդրադառնալով այս պատմությանը՝ Նոր կտակարանը գրում է Աբրահամի մասին.

> «Որ առանց հույսի՝ հույսով հավատաց, թե շատ ազգերի հայր կլինի, ինչպես ասվեց» (Հռոմ. 4.18):

Իսկ ի՞նչ էր ասվել: «Քո ժառանգներն այդչափ կլինեն՝ այնքան շատ, որ անկարելի կլինի հաշվել»: Երբ չկար բնական հույս, աստվածային հույսը միջամտեց՝ մթագնեցնելով տեսանելի երևույթը խոստումով: Աստվածային հույսը նայում էր ակնհայտ իրականությունից այն կողմ՝ դեպի Աստծո վստահ սպասման տիրույթը: Աբրահամը որոշեց ավելի կարևորել աստվածայինը, քան ակնհայտը: Ավելին՝ Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ նա «լիովին համոզված էր, որ այն, ինչ Նա

խոստացել էր, նույնպես կարող էր կատարել» (Հռոմ. 4.21): Նա ստացավ խոստումը՝ հավատքով, որը հաստատված էր հույսով: Գրված է.

> «Հավատքն էլ հուսացած բաների հաստատությունն է» (Եբր. 11.1):

Մեր հավատքը հաստատություն է տալիս հույսին կամ Աստծո խոստումներին: Ինչպես տեսանք Աբրահամի դեպքում, աստվածային հույսն Աստծո կամքի տեսիլքն է կամ գծագիրը, որը մենք դեռևս անկարող ենք տեսնել մեր բնական աչքերով: Աստվածային հույսն անչափ կարևոր է, քանի որ առանց հույսի չի լինի ոչինչ, ինչը հավատքը կարող է հաստատել: Աստծո Խոսքը ոչ միայն հավատք է դնում մեր սրտերում, այլև տալիս է հույս կամ տեսիլք մեր հավատքին:

Որպես համեմատություն, դուք կարող եք ունենալ շինարարական նյութերի հավաքածու՝ սալիկներ, պատուհաններ, կղմինդրներ, փայտ, ցեմենտ, աղյուսներ և այլն: Կարելի է ունենալ բոլոր նյութերը, սակայն առանց շինարարական նախագծի գծագրի, շինարարությունն աղետի կվերածվի: Գուցե մտածեք. *«Ես կարող եմ կառուցել՝ առանց գծագրի»:* Գուցեև կարողանաք, եթե ինչ-որ գծագիր ունենաք ձեր մտքում, բայց միևնույն է՝ դուք ինչ-որ տեսակի ծրագրի կարիք ունեք:

ՄՈՒՏՔ ԱՍՏԾՈ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝ ՎԱՐԱԳՈՒՅՐԻ ՄԻՋՈՎ

Ինչ վերաբերում է մտերմությանը, կրկին կարդանք մեր գլխավոր աստվածաշնչյան հատվածը.

> «Ուրեմն, եղբայրներ, *համարձակություն* ունենալով մտնելու Ամենասուրբ վայրը՝ Հիսուսի արյամբ, նոր և կենդանի... եկե՛ք *մոտենանք* ճշմարիտ սրտով՝ *հավատ-*

> *քի լիարժեք վստահությամբ,* մեր սրտերը մաքրված չար խղճից, և մեր մարմինները լվացված մաքուր ջրով: Եկեք *ամուր պահենք մեր հույսի դավանությունը*՝ առանց սասանվելու, որովհետև Նա, Ով խոստացավ, հավատարիմ է» (Եբր. 10.19-23, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Հեղինակը պարզորեն խոսում է Տիրոջը մոտենալու մասին: Կրկին, ուշադրություն դարձրեք «Եկեք ամուր պահենք մեր հույսի դավանությունը» խոսքերին: Հիշեք, որ հույսն այն բանի գծագիրը, տեսիլքը կամ աստվածային պատկերն է, որը չենք կարող տեսնել մեր բնական աչքերով: Մտապահելով սա՝ ուշադրությամբ կարդացեք հետևյալ աստվածաշնչյան հատվածը.

> «Որովհետև մարդիկ, անկասկած, երդվում են ավելի մեծով, և հաստատման համար արվող երդումը նրանց համար ամեն վիճաբանության ավարտն է: Այսպիսով, Աստված, վճռելով ավելի առատ կերպով ցույց տալ խոստման ժառանգներին Իր խորհրդի անփոփոխ լինելը, հաստատեց այն երդմամբ, որպեսզի երկու անփոփոխ բանով, որոնցում անկարելի է, որ Աստված ստի, կարողանանք հաստատուն մխիթարություն ունենալ, մենք, որ փախուստի ենք դիմել՝ ապաստանի համար, որպեսզի բռնենք մեր առջև դրված հույսը: Այս հույսը մեզ համար անձի խարիսխ է՝ և՛ հաստատ, և՛ անսասան, *որը մուտք է գործում վարագույրի ետևում գտնվող Ներկայության մեջ»* (Եբր. 6.16-19, NKJV, *շեղագիրը հեղինակինն է):*

Դուք տեսնո՞ւմ եք սա: Միացրեք այս երկու հատվածները, և կստացվի հետևյալը.

«Եկեք *մոտենանք* ճշմարիտ սրտով, հավատքի լիարժեք վստահությամբ... *ամո՛ւր պահենք մեր հույսի դավանությունը*՝ առանց սասանվելու, որովհետև Նա, Ով խոստացավ, հավատարիմ է... Այս հույսը մեզ համար անձի խարիսխ է՝ և՛ հաստատ, և՛ անսասան, *որը մուտք է գործում վարագույրի ետևում գտնվող Ներկայության մեջ»* (Եբր. 10.22,23, 6.19, *շեղագիրը հեղինակինն է):*

«Նոր կենդանի թարգմանության» մեջ գրված է հետևյալը. «Այն առաջնորդում է մեզ երկնքի վարագույրի միջով՝ դեպի Աստծո ներքին սրբարանը»: Տերն էր, որ աստվածային հույսի պարզ տեսիլք տվեց Աբրահամին: Ինչ վերաբերում է մտերմությանը, Սուրբ Հոգին տալիս է հետևյալ աստվածային տեսիլքը, որը մեր երկրային աչքերը չեն կարող տեսնել. Նա պատկերում է անձամբ Տիրոջը, Ով բնակվում է երկնային գահի սրահում:

Երբ մոտենում ենք Աստծուն, մենք դիմում ենք մեզանում բնակվող Սուրբ Հոգուն, անցնում ենք մեր մարմնի սահմանափակ բնական մտածելակերպի վարագույրով և մուտք ենք գործում Նրա ներկայության մեջ: Հայտնվելով Նրա ներկայության մեջ՝ միևնույն ժամանակ մտնում ենք երկնքի ներքին սրբարանը, որտեղ հանդիպում ենք Հիսուսին և Հորը: Այս ներքին սրբարանում մենք մտերմորեն հաղորդակցվում ենք Փառքի Տիրոջ հետ:

Աղոթքի ժամանակ հավատացյալները հաճախ փորձում են պատկերացնել, թե ինչպես են մուտք գործում երկնային գահի սրահը: Բայցևայնպես, առանց Սուրբ Հոգու օգնության, նրանց փորձերը կարելի է համեմատել այն բանի հետ, որ Աբրահամն անկարող էր ըմբռնել Աստծո խոստումը՝ առանց Նրա կողմից տրված տեսիլքի: Միայն երբ Ինքը՝ Տերը, պարզ պատկեր ցույց տվեց Աբրահամին, նա կարողացավ վերցնել այն, ինչ Աստված խոստացել էր իրեն:

Մենք չենք կարող վերապրել ճշմարիտ և սերտ մտերմություն ներքին սրբարանում՝ առանց Սուրբ Հոգու: Նա տալիս է մեզ այն բանի հույսը կամ պարզ տեսիլքը, ինչը մեր բնական աչքերը չեն կարող տեսնել: Այս տեսիլքով մենք մոտենում ենք հավատքի լիարժեք վստահությամբ և ամենայն համարձակությամբ՝ վայելելու Աստծո ներկայությունը, քանի որ Հիսուսն անչափ մեծ գին է վճարել, որպեսզի կարողանանք բնակվել այնտեղ: Շնորհակա՛լ եմ, Հիսո՛ւս, որ թափեցիր Քո թագավորական արյունը, որպեսզի մենք կարողանանք վստահաբար մտնել անմիջապես Աստծո ներկայության մեջ՝ և՛ հիմա, և՛ ընդմիշտ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Աստվածաշնչյան «հույս» բառը, որը նշանակում է «վստահ սպասում», հակադրվում է «հույս» բառի մեր լեզվում ձևավորված իմաստին. «գուցե ստացվի, իսկ գուցե՝ ոչ»: Երբևէ զգացե՞լ եք, որ դատարկ խոսքեր եք ասում՝ «գուցե ստացվի, իսկ գուցե՝ ոչ» վերաբերմունքով, չունենալով վստահ սպասում: Եթե այո, ի՞նչ է դա հայտնում ձեր հավատքի վիճակի մասին:

2. Սկսած առաքյալների ժամանակվանից, հավատացյալները երկու հարց են տալիս: Այս հարցերը նման են, սակայն խորապես տարբերվում են.

   - Ինչպե՞ս հավատք ստանալ:
   - Ինչպե՞ս ավելացնել հավատքը:

   Այն ամենից, ինչ սովորեցիք այս գլխում, ինչպե՞ս կպատասխանեք այս հարցերին:

3. Համեմատելով Սավուղի և Դավթի հնազանդության բնույթները, ինչպիսի՞ տարբերություն եք դուք տեսնում: Ինչպիսի՞ ազդեցություն թողեց նրանց հնազանդությունը Աստծո հետ նրանց հարաբերության վրա:

4. Ինչպե՞ս է հնազանդությունն ազդում Աստծուն համարձակ մոտենալու կարողության վրա:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

ՄՈՏԵՆԱԼ ԱՍՏԾՈՒՆ

Դուք կարող եք համարձակվել մոտենալ Նրան,
քանի որ նա անժամանակյա հրավեր է ուղղել ձեզ:

Վերջին գլխում գործնականորեն կներկայացնեմ, թե ինչպես մոտենանք Նրան, Ով առատորեն սիրում է մեզ: Այնուամենայնիվ, նման նկարագրությունը կարելի է համեմատել նորապսակներին մանրամասն ցուցումներ տալուն այն մասին, թե ինչպես մտերմություն ունենալ ննջասենյակում: Դուք կարող եք սովորեցնել այս մասին միայն որոշակի չափով, քանի որ մնացածը պետք է բխի նրանց սրտից: Եվ հենց սրանով է մտերմությունը գեղեցիկ. այն առատորեն բխում է մեր սրտից, ոչ թե ուսուցանվում է մեր մտքին:

Մոտենալով Տիրոջը՝ պետք է հիշենք, որ ստեղծված ենք Նրա պատկերով: Ինչպես որ մենք բազմապիսի զգացմունքներ ունենք, այնպես էլ Նա: Ինչպես որ պետք է զգայուն լինենք մտերիմ ընկերոջ տրամադրության փոփոխություններին,

այնպես էլ պետք է վերաբերվենք Տիրոջը: Օրինակ, կան պահեր, երբ պետք է երգով գանք Նրա ներկայության մեջ, իսկ այլ դեպքերում՝ կոտրված սրտով. երբեմն պետք է գանք համարձակությամբ, իսկ երբեմն՝ դողալով: Կլինեն ծիծաղի պահեր և լացի պահեր, Նրա օգնությամբ խավարի ուժերի դեմ պատերազմելու պահեր, ինչպես նաև խաղաղության և անդորրի պահեր՝ Նրա հրաշալի ներկայության մեջ:

Որպես օրինակ՝ այս տարբերությունները նկարագրելու համար, պատկերացրեք մի տուն, որն ավազակների հարձակման սպառնալիքի ներքո է: Հանցագործներն արդեն կոտրում են տան ետնամասի դուռը: Այդ պահին որդիներից մեկը մոտենում է հորը, որն ինչ-որ տեսակի զենք է փնտրում, և ասում է. «Հայրի՛կ, իմ կարծիքով՝ դու լավագույնն ես: Դու ապահովում ես մեզ ամեն ինչով, դու հումորի զգացում ունես և խելացի ես...»:

Հայրը կընդհատի որդուն՝ խստորեն ասելով. «Ժամանակը չէ, որ պատմես զգացմունքներիդ մասին: Վերցրո՛ւ քո բեյսբոլի գնդակաթիակը և գնացի՛նք տան ետնամասը»:

Դուք պետք է հիշեք, որ մենք՝ որպես Հիսուս Քրիստոսի եկեղեցի, Աստծո տունն ենք: Եվ մենք իրական թշնամիներ ունենք: Երբեմն ես աղոթքի մեջ եմ եղել և պատերազմելու մղում եմ զգացել Սուրբ Հոգուց, և Նրա առաջնորդությունը հոգևոր պատերազմում նույնպես տարբեր է եղել: Այն կարող է լինել Աստծո Խոսքը խոսելով, ջերմեռանդորեն լեզուներով աղոթելով և, նույնիսկ, ջերմեռանդորեն փառաբանելով (կարդացե՛ք Հովսափատի և Իսրայելի բանակի մասին, Բ Մնաց. 20.20-24): Մենք պետք է զգայուն լինենք ոչ միայն միջավայրի հանդեպ, այլև՝ թե ինչպես կատարենք Նրա ցանկությունները:

Վերադառնանք մեր օրինակին և դիտարկենք մյուս կողմից: Պատկերացրեք նույն ընտանիքը. ամեն ինչ լավ է, և հայրը հանգստանում է բուխարու մոտ: Այս անգամ նրա որդին գալիս է սպորտային սաղավարտով և իր բեյսբոլի գնդակաթիակով և գոչում է. «Հայրի՛կ, արի բռնե՛նք նրանց»:

Հայրը կնայի նրան և կասի. «Որդի՛ս, այս պահին ոչ մի վտանգ չկա. նստի՛ր այստեղ և զրուցենք»:

Համոզված եմ, որ արդեն մտաբերեցիք տարբեր իրավիճակներ, որոնցում մենք հայտնվում ենք մեր մտերիմների հետ: Նույն կերպով, գոյություն ունեն տարբեր իրավիճակներ և ձևեր աղոթքի մեջ: Աստվածաշունչը խոսում է այն տեսակի աղոթքների մասին, որոնք ես հիշատակեցի, և նույնիսկ ավելիի մասին: Բանալին հետևյալն է. իմանալ, թե ինչ կա Աստծո սրտում տվյալ պահին:

ԱՍՏԾՈ ՇԱՀԵՐԸ

Ինչպե՞ս կզգաք, եթե ձեր ընկերներից մեկը շփվի ձեզ հետ՝ մտածելով միայն իր շահերի մասին: Ինչպե՞ս հայրը կզգա, եթե իր որդին իր մոտ գա միայն ինչ-որ բան խնդրելու համար: Դուք կբացե՞ք ձեր սիրտը եսասեր մարդկանց համար, կամ այնպիսի մարդկանց, որոնք զուրկ են կարեկցանքից: Եթե մենք ցանկանում ենք հպվել Տիրոջ սրտին, պետք է ձգտենք իմանալ, թե ինչ է Նա ցանկանում և ինչ կարիքներ ունի: Այո՛, կարիքնե՛ր: Թեև Նա ամենակարող է, ամենազոր է և ոչնչի պակաս չունի, Նա, միևնույն է, ազատ կամք է շնորհել մարդկությանը, ինչպես նաև որոշակի ազատություն այս երկրի վրա: Այդպես վարվելով՝ Նա խոցելի է դարձրել Իրեն: Մարդու անկման, ինչպես նաև խավարի ուժերի պատճառով, որոնք ձգտում են մոլորեցնել, ծուղակը գցել և չարչարել մարդկանց, շատերը կարիքի և տառապանքի մեջ են: Նա փափագում է օգնել նրանց և սպասում է այն մարդկանց, որոնք կաղաղակեն նրանց համար: Այս է պատճառը, որ Տերը շատ մոտ է բարեխոսներին և նրանց, ովքեր Աստծո շնորհքով օգնություն են տրամադրում տառապանքի մեջ գտնվող մարդկանց: Հիսուսն ասում է դատաստանի ժամանակ.

> «Որովհետև սովեցի, և դուք տվեցիք Ինձ ուտել. ծարավեցի, և խմեցրիք Ինձ. օտար էի, և Ինձ ձեզ

> մոտ առաք. մերկ էի, և հագցրիք Ինձ. հիվանդ էի, և Ինձ այցելեցիք. բանտի մեջ էի, և Ինձ մոտ եկաք» (Մատթ. 25.35,36):

Այս հատվածում տեսնում ենք փառքի Տիրոջը՝ Նրան, Ում պատկանում է ամբողջ իշխանությունը և զորությունը տիեզերքում, Ով ասում է, որ Ինքը կարիքի մեջ էր: Նրա կարիքը մեր կարիքն է՝ այն մարդկանց կարիքը, որոնց Նա սիրում է, քանի որ Նա ասում է. «Որովհետև այս Իմ փոքր եղբայրներից մեկին արիք, Ինձ արիք» (խոսք 40): Այն մարդիկ, որոնք բարեխոսում են, ֆիզիկական օգնություն են տրամադրում, քարոզում են Աստծո ազատագրող Խոսքը, բժշկում են վերքերը Աստծո զորությամբ և այլն, կգտնեն Նրա սիրտն ավելի արագ, քան մյուսները:

Ինչ-որ պահին Աստծո ժողովուրդը ջանասիրաբար մոտենում էր Նրան, և Նա նույնիսկ ասաց նրանց մասին. «Նրանք Ինձ խնդրում են օրըստօրե և ուզում են գիտենալ Իմ ճանապարհները» (Եսայի 58.2): Այնուամենայնիվ, Տերը չէր պատասխանում: Ժողովուրդը հարցնում էր, թե ինչու Աստված չէր մոտենում իրենց: Նրանք չէին հասկանում, թե ինչո՞ւ Նա չէր պատասխանում իրենց աղոթքներին: Այդ ժամանակ Նա ասաց.

> «Ես կասեմ ձեզ՝ ինչու: Պատճառն այն է, որ դուք ապրում եք ձեզ համար, նույնիսկ երբ ծոմ եք պահում: Դուք շարունակ հարստահարում եք ձեր աշխատողներին: Ի՞նչ օգուտ ունի ծոմ պահելը, եթե դուք շարունակ կռվում և վիճում եք» (Եսայի 58.3,4, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ նրանք կռվում և վիճում էին: Վերադառնանք գրքի գլխավոր աստվածաշնչյան հատվածին. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ»: Դուք կտեսնեք, որ Հակոբոսը սկսում է այս գլուխը՝ ասելով հետևյալը.

«Որտեղի՞ց են պատերազմներ և կռիվներ ձեր մեջ. չէ՞ որ այստեղից է, այսինքն՝ ցանկություններից, որ պատերազմում են ձեր անդամներում: Ցանկանում եք և չունեք: Սպանում եք և նախանձում եք և չեք կարողանում հասնել: Պատերազմում եք՝ կռվում եք, բայց չունեք, որովհետև չեք խնդրում: Խնդրում եք և չեք առնում, որովհետև չար կերպով եք խնդրում, որ ձեր ցանկություններում վատնեք: Շնացողներ... Արդ, հնազանդվե՛ք Աստծուն, հակառա՛կ կացեք սատանային, և նա կփախչի ձեզնից: Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ: Սրբե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտերը մաքրե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակոբ. 4.1-8):

Ահա և բացատրությունը: Մեր առաջին գործնական քայլը հետևյալն է. մենք պետք է կորցնենք մեր կյանքը հանուն Նրա և Ավետարանի: Մենք պետք է ապրենք Նրա ցանկությունների համար: Մենք պետք է սիրենք այն, ինչ Նա է սիրում, և ատենք այն, ինչ Նա է ատում: Այն, ինչը կարևոր է Նրա համար, պետք է կարևոր դառնա մեզ համար, և այն, ինչն այնքան էլ կարևոր չէ Նրա համար, պետք է այնքան էլ կարևոր չլինի մեզ համար: Մենք պետք է Նրա սրտի համեմատ մարդիկ լինենք:

Արդյո՞ք սա նշանակում է, որ մեր կյանքում չեն լինի անձնական հանգստի պահեր: Մի՞թե Աստված հանգիստ և վերականգնում չի տալիս Իր ժողովրդին: Իհարկե, դա ճիշտ չէ: Աստվածաշունչն ասում է մեզ, որ Աստված «ամեն բան տալիս է մեզ առատապես՝ վայելելու համար» (Ա Տիմոթ. 6.17): Բայց երբ մենք ձգտում ենք մեր ցանկություններին՝ անտեսելով Նրանը, կորցնում ենք կապը Նրա սրտի հետ:

Կան մարդիկ, որոնք հավատում են, որ մենք չենք կատարում Աստծո ցանկությունները, եթե ֆիզիկապես չենք օգնում աղքատներին: Եթե սա ճիշտ է, ապա ինչո՞ւ, երբ անհրաժեշտ էր կերակրել այրիներին, Պետրոսն ասաց. «Մեզ վայել չէ, որ Աստծո Խոսքը թողած, սեղանին ծառայենք: Հիմա, եղբայր-

ներ, ձեզնից յոթ վկայված մարդիկ ընտրեք, Սուրբ Հոգով և իմաստությամբ լցված, որոնց այս պիտույքի վրա դնենք: Իսկ մենք աղոթքին և խոսքի պաշտամունքին հետևենք» (Գործք 6.2-4): Պետրոսը գիտակցում էր, որ կան մարդիկ, որոնք հոգում են աղքատների (կարիքավորների) մասին՝ սնուցելով նրանց Աստծո Խոսքով, և մյուսները, որոնք հոգում են նրանց ֆիզիկական կարիքները: Այնուամենայնիվ, այդ մարդիկ մեկ ընդհանրություն ունեն. նրանք լրացնում են Հիսուսի կարիքը. «Ես սովեցի, և դուք տվեցիք Ինձ...»:

Այն մարդիկ, որոնց սրտերում Տիրոջ շահերն են, հեշտորեն են մոտենում Նրան: Մովսեսն այդպիսի մարդ էր: Քանի որ նա հովվում էր Աստծո ժողովրդին՝ ելնելով Տիրոջ շահերից, նա զգայուն էր Աստծո սրտի հանդեպ և առատ հաղորդակցություն ուներ Նրա հետ:

Աստված խոսեց Հովսիայի մասին, որը լավ առաջնորդ էր՝ ասելով. «Նա հավաստիանում էր, որ աղքատները և կարիքավորներն արդարադատություն և օգնություն ստանային, և ամեն ինչ լավ էր նրա համար: Մի՞թե դա չի նշանակում *ճանաչել Ինձ»* (Երեմ. 22.16, NLT, *շեղագիրը հեղինակինն է):*

Այն մարդիկ, որոնք պատշաճ են կատարում իրենց ծառայությունը, լինի օգնություն, կառավարում, ուսուցում, վերակացություն, բաշխում կամ այլ բան, ավելի հեշտ են մոտենում Աստծուն, քան նրանք, որոնց կյանքը և նույնիսկ ծառայությունն առաջնորդվում են իրենց սեփական ձգտումներով: Քանի որ Ինքը՝ Տերը, ասաց. «Մի՞թե դա չի նշանակում ճանաչել Ինձ»:

ՄՈՏԵՆԱԼ ԼՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հաջորդ գործնական խորհուրդը, որը կարելի է տալ այն մարդկանց, որոնք ցանկանում են մոտենալ Տիրոջը, հետևյալ աստվածաշնչյան հատվածում է.

«Զգո՛ւյշ եղիր ոտքիդ համար, երբ որ գնաս Աստծո տունը: Եվ մոտեցի՛ր ավելի լսելու համար, քան թե մատուցելու հիմարների զոհը, որովհետև նրանք չգիտեն, որ չարություն են անում: Մի՛ շտապիր լեզվովդ, և սիրտդ շուտով բան չարտասանի Աստծո առջև, որովհետև Աստված Երկնքում է, և դու՝ երկրի վրա: Սրա համար թող խոսքերդ քիչ լինեն: Որովհետև երազը գալիս է զբաղմունքի շատությունից, և հիմարի ձայնը՝ շատախոսությունից» (Ժողով. 5.1-3):

Առանձնացնենք այս խոսքերի առաջին մասը: Գրված է. «Մոտեցի՛ր ավելի լսելու համար, քան թե մատուցելու հիմարների զոհը»: Շատերը ամեն անգամ մոտենում են Աստծուն՝ խոսելով կամ երգելով: Անկասկած, սա ընդունելի է: Այնուամենայնիվ, ես մեծ արդյունք եմ ստացել աղոթքի մեջ, երբ լռությամբ եմ մոտեցել Նրան և լսել եմ, մինչև որևէ բառ ասելը կամ փառաբանության որևէ երգ երգելը:

Վերջերս հանդիպեցի մի մեծ և ազդեցիկ եկեղեցու հովվի: Ճաշի ժամանակ նա ասաց.

- Ջո՛ն, ես այնպիսի կետի հասա, երբ ասացի Տիրոջը. «Ես հոգնել եմ այն բանից, որ գալիս եմ այս սենյակ ամեն առավոտ և միայն խոսում եմ՝ առանց պատասխանի: Այնպես որ, ես պարզապես գալու եմ այստեղ ամեն առավոտ և լսելու եմ, մինչև որ Դու խոսես ինձ հետ»:

Պահանջվեց մի քանի առավոտ, քանի որ Տերը փորձում էր նրա սրտի անկեղծությունը, բայց մի առավոտ նա մտավ իր աղոթքի սենյակը, և անսպասելիորեն Սուրբ Հոգին սկսեց խոսել Նրա հետ: Այդ ընթացքում Աստված տվեց նրան ամենից ազդեցիկ հայտնությունները, որոնք երբևէ ստացել էր, և նա քարոզեց դրանք իր եկեղեցում մի քանի շաբաթ: Նրա աղոթքի կյանքը հեղափոխություն ապրեց:

Ես սովորել եմ, որ Աստծո ներկայության մեջ լինելու անչափ

ազդեցիկ ձև է վերցնել Աստվածաշունչը և կարդալ որևէ խոսք (հատկապես՝ Սաղմոսներից կամ Նոր կտակարանից). ոչ թե շատ խոսքեր, այլ՝ միայն մեկը, և երբեմն նույնիսկ կեսը, և ժամանակ տրամադրել՝ դրա շուրջ մտորելու համար, իսկ հետո դանդաղ կարդալ ևս մեկ խոսք, և այդ ընթացքում Տիրոջ ներկայությունը հայտնվում է: Երբ դա տեղի է ունենում, ես դադարում եմ կարդալ և կենտրոնանում եմ Նրա վրա՝ թույլ տալով, որ սովորեցնի ինձ կամ ցույց տա գալիք բաները:

Ցանկացած դեպքում, սովորաբար անչափ արդյունավետ է գալ Նրա ներկայության մեջ՝ լսելու համար, մինչև խոսելը: Երբեմն եկեղեցական ծառայությունների փառաբանության ժամանակ ես հանդարտեցրել եմ միտքս՝ սպասելով իմ ներսում բնակվող Սուրբ Հոգուն, որպեսզի զգամ Նրա ցանկությունը կամ տրամադրությունը: Այնուհետև սկսել եմ երգել փառաբանության ծառայողների հետ: Ես միշտ չէ, որ այսպես եմ վարվել, քանի որ եղել են այլ դեպքեր, երբ անմիջապես մոտեցել եմ Նրան՝ սրտիցս բխող գոհությամբ, փառաբանությամբ և ցնծությամբ: Այնպիսի տպավորություն էր, կարծես Աստծո Հոգին ասում էր. «Սկսեցի՛նք», քանի որ Աստվածաշունչը նաև ասում է մեզ.

> «Թող գոհություն տալով գանք Նրա երեսի առջև,
> Սաղմոսներով աղաղակենք դեպի Նա» (Սաղմ. 95.2):

Եվ կրկին.

> «Ծառայե՛ք Տիրոջն ուրախությունով.
> եկե՛ք Նրա երեսի առջև ցնծությունով» (Սաղմ. 100.2):

Ահա աստվածաշնչյան խոսքեր, որոնք հորդորում են մեզ գալ Տիրոջ ներկայության մեջ երգով և գոհությամբ, այնինչ, քիչ առաջ մեջբերված հատվածը պատվիրում է մեզ մոտենալ և լսել: Իմաստն այն է, որ մենք պետք է զգայուն լինենք Նրա

հանդեպ: Ինչպես որ անկարելի է սովորեցնել որևէ տղամարդու իր կնոջ հետ սիրային հարաբերության քայլ առ քայլ ընթացքը, այնպես էլ անկարելի է սովորեցնել մոտենալ Տիրոջը՝ Նրա հետ մտերմորեն հաղորդակցվելու համար:

Պատկերացնո՞ւմ եք այնպիսի տղամարդու, որը թղթի վրա արված նշումներով մոտենում է իր նորապսակ հարսնացուին՝ սիրային հարաբերության համար: Նա կարդում է իր թղթից. «Քայլ առաջին. ասա՛ նրան, որ նա գեղեցիկ է: Քայլ երկրորդ. շոյի՛ր նրա մազերը: Քայլ երրորդ. անջատի՛ր լույսը: Քայլ չորրորդ (չեմ կարողանում կարդալ. ինձ լապտեր է պետք)»: Որքա՜ն զավեշտալի կլիներ: Սակայն որքա՜ն զավեշտալի են ոմանք դարձրել աղոթքը: Նրանք զրկել են իրենց Աստծո սրտին հպվելու և Նրա սիրտը զգալու կարողությունից: Սխալ մի՛ հասկացեք ինձ. կան որոշ ցուցումներ Աստվածաշնչից, որոնց մենք հետևում ենք, բայց մենք պետք է մոտենանք Տիրոջը՝ Աստծո Հոգու օգնությամբ, քանի որ Աստվածաշունչը պարզորեն ասում է մեզ. «Գիրը սպանում է, իսկ Հոգին կենդանացնում է» (Բ Կորնթ. 3.6): Աստծո Հոգին կարող է առաջնորդել մեզ բարեխոսելու, երգելու, գոչելու, աղաղակելու, լուռ լինելու և այլն:

Մյուս հորդորը, որը ստանում ենք, մեր խոսքերով կամ խնդրանքներով չշտապելն է: Նույնիսկ բնական փոխհարաբերություններն են սովորեցնում մեզ այս մասին: Երբ ինչ-որ մեկը չափից շատ է խոսում, մենք հակված ենք ուշադիր չլսել նրան: Այնուամենայնիվ, երբ որևէ մեկն իմաստությամբ է ընտրում իր բառերը, մենք ուշադիր լսում ենք, նույնիսկ եթե նա հաճախակի է խոսում: Այս պատճառով, աղոթքի մեջ իմ ժամանակի մեծ մասը կա՛մ լուռ եմ, կա՛մ խոսում եմ լեզուներով, կա՛մ խոսում եմ Աստծո Խոսքը:

Ես գիտեմ, որ երբ լեզուներով եմ խոսում, ես աղոթում եմ Աստծո կատարյալ կամքի համաձայն: Սուրբ Հոգին տալիս է ինձ բառեր, որոնք ուղղում եմ իմ Հորը՝ Հիսուսի անունով: Ես

չեմ կարող ոչ ճշգրտորեն աղոթել կամ ունայն խոսքեր ասել, երբ Հոգով եմ աղոթում: Երբ ես խոսում եմ գրված Խոսքը, իմ ամբողջ էությունը կառուցվում է, ինչը, իհարկե, ընդգրկում է իմ միտքը: Ահա թե ինչու է մտքով աղոթելը նույնպես կարևոր:

Այնուամենայնիվ, երբ հասկանում եմ, որ Նրա ներկայության մեջ եմ, և լսում եմ, այդ ժամանակ է, որ հայտնությունը, հասկացողությունը և իմաստությունը գալիս են: Այնքա՛ն կարևոր է, որ մենք ժամանակ տանք Տիրոջը, որպեսզի խոսի մեզ հետ: Կարո՞ղ եք պատկերացնել այնպիսի մարդու, որն ամեն անգամ, երբ շփվում է ձեզ հետ, անընդհատ խոսում է և թույլ չի տալիս ձեզ նույնիսկ մեկ բառ ասել: Կարծում եմ՝ երբեմն Սուրբ Հոգին այդպես է զգում Իրեն մեզ հետ: Մենք պետք է լսենք, ինչպես և խոսենք: Հիշեք՝ աղոթքը երկխոսություն է, ոչ թե մենախոսություն:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԲԱԶՄԱՊԻՍԻ ՁԵՎԵՐ

Երբ Աստված մոտենում է մեզ, Նա հայտնում է և՛ Իրեն, և՛ Իր ճանապարհները: Նա ցույց է տալիս մեզ մեծամեծ և անհասանելի բաներ, որոնք մենք չգիտենք (տե՛ս Երեմ. 33.3): Որպեսզի կարողանանք ընդունել դրանք, մենք պետք է գիտակցենք, որ գոյություն ունեն տարբեր միջոցներ, որոնցով նա հաղորդում է այդ ամենը, երբ այցելում է մեզ: Երբեմն Նա խոսում է մեզ հետ, և մենք լսում ենք Նրա ձայնը: Դա կարող է լինել բարձր ձայն մեր սրտում, որը երբեմն կարելի է շփոթել մեր ֆիզիկական ականջներով ընկալվող լսելի ձայնի հետ, կամ դա կարող է լինել հանդարտ, կամաց ձայն, որը մենք լսում ենք մեր սրտի խորքում, որը, ինչպես և Նրա հաղորդակցման բոլոր միջոցները, մշտապես ուղեկցվում է Նրա խաղաղությամբ մեր ներսում և համապատասխանում է Աստվածաշնչին: Երբեմն Նա ինչ-որ բան է հայտնում մեզ՝ որևէ հավատացյալի կամ առաջնորդի միջոցով. երբ նրանք խոսում են, կամ երբ

մենք կարդում ենք նրանց գրքերը, մեր սրտում պայթյուն է լինում: Նա կարող է որոշել խոսել մեզ հետ տեսիլքի կամ երազի միջոցով: Այլ դեպքերում, և ես համարում եմ, որ սա շատ հաճախ է տեղի ունենում, մենք պարզապես իմանում ենք այնպիսի բաներ, որոնք նախկինում չգիտեինք: Հաճախ լինում են նաև դեպքեր, երբ Նա ավանդում է մեզանում Իր Խոսքը, և այն չի հայտնվում, քանի դեռ մենք չենք խոսել: Երբ մենք բացում ենք մեր բերանը և խոսում ենք, լուսավորումը գալիս է:

Հենց սա տեղի ունեցավ Պետրոսի հետ Պենտեկոստեի օրը: Մինչև որ Աստծո ներկայությունը եկավ Նրա վրա, նա գիտեր Աստծո Խոսքը միայն իր մտքով՝ բացառությամբ Աստծուց ստացած հայտնության, որ Հիսուսը Քրիստոսն է (տե՛ս Մատթ. 16-րդ գլուխը): Բացի այդ հայտնությունից, նա անտեղի բաներ էր ասում գրեթե ամեն անգամ, երբ բացում էր իր բերանը՝ հոգևոր թեմաներով խոսելու համար: Վերնատանը նա փորձեց հոգևոր վերակացություն իրականացնել՝ ընտրելով Հուդային փոխարինող աշակերտի: Այդ որոշման պտղից ակնհայտորեն երևում է, որ այն վաղաժամ էր, քանի որ մենք այլևս չլսեցինք այն մարդու մասին, որն այդ ժամանակ ընտրվեց, և հետագայում Պողոսն ասաց իր մասին, որ ինքը «ժամանակից շուտ ծնված» էր (Ա Կորնթ. 15.8, NKJV): Ամենայն հավանականությամբ, Պողոսն էր Աստծո ընտրությունը՝ Հուդային փոխարինելու համար, ոչ թե այն ծառայողը, որն ընտրվեց Պետրոսի աններդաշնակ փորձով՝ վիճակ գցելու միջոցով:

Ըստ էության, հոգևոր առումով Պետրոսը, թվում է, մշտապես աններդաշնակ էր: Այնուամենայնիվ, հենց որ Աստված մոտեցավ նրան, մի քանի վայրկյան անց նա խորը և ազդեցիկ ուղերձ քարոզեց Հովել մարգարեի գրքից և Սաղմոսներից՝ բացատրելով այն, ինչ քիչ առաջ տեղի ունեցավ 120 աշակերտների հետ: Նա չէր կարող ուսումնասիրել նման խորաթափանց ուղերձ ընդամենը մի քանի րոպեում, մինչև բազմության հավաքվելը: Այդ պահին նա գրեթե ակնթարթորեն ստացավ

գիտելիք, որը նախկինում չուներ: Ոչ միայն Պետրոսը, այլև մյուսներն էլ բոպեներ անց այն բանից հետո, երբ Աստծո ներկայությունը եկավ նրանց վրա, միասին սկսեցին խոսել «Աստծո մեծամեծ բաները» (Գործք 2.11):

Այնպես որ, ըստ էության, գոյություն ունեն տարբեր ձևեր, որոնցով Նա հաղորդում է այն, ինչ կամենում է, բայց մեկ բան հաստատ է. մենք երբեք նույնը չենք մնում յուրաքանչյուր դեպքից հետո, երբ Նա մոտենում է մեզ:

ՎԵՐՋԱԲԱՆ

Ինչպես նշեցի գրքի առաջին գլխում, այս ուղերձը նման չէ քայլ առ քայլ ուղեցույցի, քանի որ մտերմությունը ոչ մի դեպքում չի կարող քայլ առ քայլ գործընթաց լինել: Այն նման է գանձերի քարտեզի, որն առաջնորդում է դեպի Աստծո սիրտը: Ես հավատում եմ, որ սա մարգարեական ուղերձ է, կանչ է Նրա սրտից՝ ուղղված բոլորիս, որոնց Նա ջերմեռանդորեն փափագում է: Եթե մենք ջանք և ժամանակ հատկացնենք, որպեսզի հետևենք Աստծո Խոսքի քարտեզին, որը գծագրված է այս գրքում, մենք անպայման կգտնենք Աստծո ներկայությունը և սիրտը: Քանի որ հիշեք՝ Նրա խոստումն այն մասին, որ Ինքը կմոտենա մեզ, եթե, նախ, մենք մոտենանք Իրեն, անհաստատ բան չէ. ընդհակառակը, Նա միշտ կպատվի Իր խոստումը և երբեք չի թողնի այն:

Թույլ տվեք ավարտել գիրքը ևս մի քանի աստվածաշնչյան հատվածներով, որոնք ձեզ կոգեշնչեն՝ Նրան մոտենալու համար.

> «Որովհետև խոտորնակ մարդը զզվելի է Տիրոջը, բայց Նրա մտերմությունը ուղիղների հետ է» (Առակ. 3.32):

> «Բայց ինձ համար բարի է, որ մոտենամ Աստծուն» (Սաղմ. 73.28):

«Տերը մոտ է նրանց, ովքեր կանչում են Իրեն, նրանց, ովքեր անկեղծորեն են կանչում Իրեն: Նա կատարում է նրանց ցանկությունները, որոնք վախենում են Իրենից. Նա լսում է նրանց օգնության աղաղակները և փրկում է նրանց: Տերը պաշտպանում է նրանց, ովքեր սիրում են Իրեն» (Սաղմ. 145.18-20, NLT):

«Ես պիտի մոտեցնեմ նրան, և նա պիտի մոտ լինի Ինձ, որովհետև ո՞վ է նա, որ վստահ լինի իր սրտով Ինձ մոտենալու,- ասում է Տերը» (Երեմ. 30.21):

Դուք կարող եք համարձակ մոտենալ Նրան, քանի որ Նա ձեզ է ուղղել Իր անժամանակյա հրավերը: Այնպես որ, որոշո՛ւմ կայացրեք լինել Նրա ներկայության մեջ բնակվող մարդկանց թվում: Նա սպասում է ձեզ. ինչի՞ն եք սպասում դուք: Մոտեցե՛ք Նրան:

«Եվ Նրան, որ կարող է անարատ պահել ձեզ
և անկեղծ կանգնեցնել
Իր փառքի առջև՝ անբիծ ցնծությամբ,
այն մեկ իմաստուն Աստծուն
և մեր Փրկչին,
փառք և մեծություն,
զորություն և իշխանություն
և՛ հիմա, և՛ հավիտյան:
Ամե՛ն»:
(Հուդա 24,25)

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Մինչև այս գլուխը կարդալը, երբևէ մտածե՞լ էիք, որ Աստված «կարիքներ» ունի: Ի՞նչ կերպով ենք մենք ծառայում այդ կարիքներին:

2. Որքա՞ն կարևոր է, որ լսեք, երբ Սուրբ Հոգին խոսում է: Թեև ձեզ հասանելի են փառաբանության և երկրպագության բազմաթիվ երգեր և Հոգով լցված մարդկանց կողմից գրված գրքեր, դուք փորձե՞լ եք մոտենալ Աստծուն լռությամբ: Որոշո՛ւմ կայացրեք փորձել այս վարժանքը՝ մտերմություն կառուցելու համար, և գրի՛ առեք կամ պատմե՛ք մյուսներին այն, ինչ սովորեցիք:

3. Առաջին գլխում հեղինակը նկարագրում է այս գիրքը որպես գանձերի քարտեզ, որն առաջնորդում է դեպի Աստծո սիրտը, ոչ թե Աստծուն մոտենալու գործնական ձեռնարկ: Մտորելով այն մասին, ինչ սովորեցիք, ի՞նչ գանձեր եք բացահայտել: Ի՞նչ գանձեր եք դեռ բացահայտելու:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա

ՄԵՆՔ ՓՐԿՉԻ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԵՆՔ

Գոյություն ունի կյանքի երկու չափանիշ. մեկը սահմանված է հասարակության կողմից, իսկ մյուսը՝ Աստծո: Մեր մշակույթը կարող է «բարի» համարել ձեզ՝ համաձայն իր չափանիշների, բայց ի՞նչ է մտածում Աստված: Աստվածաշունչն ասում է, որ յուրաքանչյուր մարդ ընկել է Աստծո արդարության չափանիշից. «Ինչպես որ Սուրբ Գիրքն է ասում. «Չկա մեկը, ով ամեն ժամանակ ճիշտ է վարվում, նույնիսկ մեկը»» (Հռոմ. 3.10, NCV), և կրկին. «Որովհետև բոլորը մեղանչեցին. բոլորն ընկան Աստծո փառավոր չափանիշից» (Հռոմ. 3.23, NKJV):

Մեղանչելը նշանակում է չհամապատասխանել Աստծո չափանիշին: Մարդը չէր ստեղծվել՝ մեղավոր լինելու համար, այլ՝ Ադամն ընտրեց այս ընթացքն իր ազատ կամքով: Աստված ստեղծեց առաջին մարդուն՝ Ադամին, գեղեցիկ աշխարհում,

որտեղ չկար հիվանդություն, տկարություն, աղքատություն և բնական աղետներ: Չկար վախ, ատելություն, վեճեր, նախանձ և այլն: Աստված անվանեց այդ վայրը «Եդեմ», և այն Աստծո պարտեզն էր:

Ադամը որոշեց չհնազանդվել Աստծո պատվիրանին և ակնթարթային հոգևոր մահ վերապրեց, թեև ֆիզիկապես նա մահացավ միայն հարյուրավոր տարիներ անց: Խավարը մուտք գործեց նրա սիրտը: Հոգևոր մահը տարբերվում է ֆիզիկական մահից: Ֆիզիկական մահվան դեպքում մարմինը դադարում է գոյություն ունենալուց: Այնուամենայնիվ, հոգևոր մահը լավագույնս նկարագրվում է որպես բաժանություն Աստծուց՝ կյանքը Պարգևողից և ամեն կյանքի Աղբյուրից:

Մեղքը մուտք գործեց Ադամի կերտվածքի մեջ, և նա ծնեց երեխաների՝ այդ բնությամբ. «Եվ Ադամը հարյուր երեսուն տարի ապրեց, և իր նմանությամբ, իր պատկերի պես որդի ծնեց» (Ծննդ. 5.3):

Ադամի բոլոր զավակները ծնվեցին իր բնությամբ, և այդ պահից ի վեր յուրաքանչյուր մարդ ծնվեց Ադամի մեղքի պատկերով՝ իրենց ծնողների միջոցով: Ադամը հանձնեց իրեն և իր ժառանգներին մի նոր տիրոջ՝ սատանային, և նյութական աշխարհը նույնպես ենթարկվեց նրա ստրկությանը: Այժմ մի դաժան տիրակալ օրինապես հավակնեց Աստծո սիրելի ստեղծագործությանը: Մենք պարզորեն տեսնում ենք սա հետևյալ հատվածից. «Եվ սատանան Նրան [Հիսուսին] մի բարձր սար հանեց և աշխարհի բոլոր թագավորությունները ցույց տվեց մի վայրկյանի մեջ: Եվ սատանան ասաց Նրան. «Այս ամբողջ իշխանությունը և սրանց փառքը Քեզ կտամ, *որ ինձ է տրված*, և ում որ կամենում եմ, տալիս եմ սա»» (Ղուկ. 4.5,6, *շեղագիրը հեղինակինն է):*

Ուշադրություն դարձրեք, որ այդ ամենը տրված էր նրան: Ճրբ: Պատասխանն է՝ պարտեզում, քանի որ Աստված սկզբնապես մարդուն էր տվել իշխանությունը ամբողջ երկրի (տե՛ս Ծննդ. 1.26-28): Ադամը կորցրեց ամեն ինչ... թե՛ ինքը,

թե՛ իր ժառանգները՝ բոլոր սերունդների մեջ: Կրկին, գրված է. «Ամբողջ աշխարհը գտնվում է չարի իշխանության ներքո» (Ա Հովհ. 5.19, NKJV):

Մինչև Ադամին պարտեզից վտարելը, Աստված խոստում տվեց: Մի փրկիչ էր վեր կենալու, որը կործանելու էր այն գերությունը և ստրկությունը, որին ամբողջ մարդկությունը ենթարկվել էր:

Այս փրկիչը ծնվեց չորս հազար տարի անց Մարիամ անունով մի կույսից: Մարիամը պետք է կույս լիներ, քանի որ Հիսուսի հայրը Սուրբ Հոգին էր, որը հղացրեց Մարիամին: Եթե Հիսուսը ծնված լիներ բնական ծնողներից, նա կծնվեր Ադամի ստրկության մեջ:

Նրա Հայրն Աստված էր, իսկ Նրա մայրը մարդ էր: Այս պատճառով, Նա լիարժեք Աստված է և լիարժեք մարդ է: Մեր ազատության փրկագինը պետք է տրվեր մարդու որդու կողմից: Սա է պատճառը, որ Հիսուսը մշտապես «մարդու Որդի» էր անվանում Իրեն: Թեև Նա Հոր հետ էր հենց սկզբից, Նա թողեց Իր աստվածային արտոնությունները և մարդ դարձավ, որպեսզի մատուցեր Իրեն՝ որպես մեղքի զոհ:

Խաչը բարձրանալով՝ Նա վերցրեց Իր վրա մեր մեղքի դատավճիռը, որ ազատեր մեզ գերությունից: Աստվածաշունչը հայտարարում է. «Նա անձամբ կրեց մեր մեղքերն Իր մարմնի մեջ՝ խաչի վրա, որպեսզի մենք մահացած լինենք մեղքի համար և ապրենք արդարության համար» (Ա Պետր. 2.24, NLT):

Սա զարմանալի է: Մարդը մեղանչեց Աստծո դեմ, սակայն Աստված (մարմնով հայտնված) վճարեց մարդու ծանր հանցանքի գինը: Կրկին գրված է. «Որովհետև Աստված դարձրեց Քրիստոսին, որը երբեք չէր մեղանչել, զոհ՝ մեր մեղքի համար, որպեսզի մենք կարողանանք արդարացվել Աստծո առջև՝ Քրիստոսի միջոցով» (Բ Կորնթ. 5.20,21, NLT):

Ուշադրություն դարձրեք, որ մենք կարող ենք արդարացվել: Մենք չենք ստանում այն ազատությունը, որի համար Նա անչափ մեծ գին է վճարել, քանի դեռ չենք հավատում մեր

սրտում, որ Նա մահացավ մեզ համար և հարություն առավ մահացածներից, և չենք ընդունում Նրան՝ որպես մեր Տեր: Այս պահին է, որ Նա դառնում է անձամբ մեր Փրկիչը: Ինչպես որ գրված է. «Բայց նրանց, ովքեր հավատացին Նրան և ընդունեցին, Նա Աստծո զավակներ դառնալու իրավունք տվեց: Նրանք վերստին ծնվա՛ծ են: Սա ֆիզիկական ծնունդ չէ, որը բխում է մարդկային ցանկությունից կամ ծրագրից. այս վերստին ծնունդն Աստծուց է» (Հովհ. 1.12,13, NLT):

Երբ մենք ընդունում ենք Հիսուս Քրիստոսին՝ որպես մեր անձնական Տեր և Փրկիչ, մենք մահանում ենք և հոգևորապես վերածնվում ենք: Մենք մահանում ենք՝ որպես սատանայի թագավորության ստրուկներ, և վերստին ծնվում ենք Աստծո թագավորության մեջ՝ որպես Նրա զավակներ: Ինչպե՞ս է սա տեղի ունենում: Երբ մեր սրտում հավատում ենք, միայն պետք է դավանենք մեր բերանով Հիսուսին՝ որպես Տեր, և մենք վերստին ծնվում ենք: Աստվածաշունչը հաստատում է սա. «Որովհետև, եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, կապրես: Քանի որ, սրտով հավատում ենք՝ արդարանալու համար, և բերանով դավանում ենք՝ փրկվելու համար» (Հռոմ. 10.9,10):

Ահա թե որքան պարզ է այս ամենը. մենք չենք փրկվում մեր բարի գործերով: Մեր բարի գործերը երբեք չէին կարողանա վաստակել մեզ համար որևէ դիրք Նրա թագավորության մեջ: Քանի որ, եթե դա ճիշտ լիներ, նշանակում է՝ Քրիստոսը զուր մահացավ: Մենք փրկված ենք Նրա շնորհքով: Այն ձրիաբար տրվող պարգև է, որը չենք կարող վաստակել: Միակ բանը, որ պետք է անենք՝ այն ստանալու համար, հետևյալն է. մենք պետք է հրաժարվենք ինքներս մեզ համար ապրելուց և ընծայենք մեր կյանքը Նրան՝ որպես Տիրոջ, այսինքն՝ գերագույն Իշխանի: «[Նա] ամենի համար մահացավ, որ կենդանի լինողներն այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց համար մահացավ և հարություն առավ» (Բ Կորնթ. 5.15):

Այսպիսով, եթե դուք հավատում եք, որ Քրիստոսը մահացավ ձեզ համար, և ցանկանում եք տալ ձեր կյանքը Նրան և այլևս չապրել ինքներդ ձեզ համար, մենք կարող ենք միասին աղոթել այս աղոթքը, և դուք Աստծո զավակ կդառնաք:

««Աստվա՛ծ, որ Երկնքում ես, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդարության չափանիշից: Ես արժանի եմ հավիտյան դատապարտվելու իմ մեղքի համար: Շնորհակա՛լ եմ, որ չես թողնում ինձ այս վիճակում, որովհետև ես հավատում եմ, որ Դու ուղարկեցիր Հիսուս Քրիստոսին՝ Քո միածին Որդուն, Ով ծնվեց կույս Մարիամից, որպեսզի մահանար ինձ համար և կրեր իմ դատավճիռը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը և այժմ նստած է Քո աջ կողմը՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այնպես որ, 20____ թվականի _____ ամսվա այս օրը ես լիովին հանձնում եմ իմ կյանքը Հիսուսի իշխանությանը»:

Հիսո՛ւս, ես դավանում եմ Քեզ որպես իմ Տեր և Փրկիչ: Ե՛կ իմ սրտի մեջ՝ Քո Հոգով, և փոխի՛ր ինձ՝ Աստծո զավակ դարձնելով: Ես ուրանում եմ այն ամենը, ինչ պատկանում է խավարին, ինչին ես մի ժամանակ հարում էի, և այսօրվանից այլևս չեմ ապրելու ինձ համար, այլ՝ Քեզ համար, Ով տվեց Իր կյանքը հանուն ինձ, որպեսզի ես հավիտյան ապրեմ:

Շնորհակա՛լ եմ, Տե՛ր. այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերում և Քո սրտում է, և համաձայն Քո Խոսքի, ես երբե՛ք չեմ ամաչի»:

Այժմ դուք փրկված եք: Դուք Աստծո զավակ եք: Ամբողջ Երկինքը ցնծում է ձեզ հետ այս պահին: Բարի գալո՛ւստ Աստծո ընտանիք:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ԻՆՉՊԵՍ ԼՑՎԵԼ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

Սուրբ Հոգու լեցունությունն ընդունելը նույնքան հեշտ է, որքան Հիսուսին Տեր և Փրկիչ ընդունելը: Ոմանք պայքարում են, հուսալքվում են և չեն կարողանում ընդունել, շատ հաճախ այն պատճառով, որ խնդրելուց առաջ չեն ստացել հիմնական սուրբգրային ցուցումներ: Ես սովորել եմ, որ մշտապես լավագույն տարբերակն է ցույց տալ մարդկանց, թե ինչ է Աստված ասում այս մասին, մինչև աղոթելը, քանի որ դա հավատք է ծնում նրանց մեջ՝ ընդունելու համար: Այնպես որ, մինչև ես կառաջնորդեմ ձեզ աղոթքի մեջ՝ Սուրբ Հոգու լեցունությունը ստանալու համար, թույլ տվեք, նախ, ցուցումներ տալ (Նշում. կարևոր է, որ մինչև շարունակելը ընթերցեք Գլուխ տասնմեկերորդը):

Նախևառաջ, դուք պետք է արդեն ընդունած լինեք Հիսուս Քրիստոսին ձեր անձնական Տեր և Փրկիչ (տես Հովհ. 14.17):

Ձեր կյանքում չի կարող որևէ տեսակի շարունակական

անհնազանդություն լինել: Աստվածաշունչն ասում է մեզ, որ Աստված տալիս է Իր Հոգին «Իրեն հնազանդվողներին» (Գործք 5.32): Ես սովորել եմ իմ փորձառությունից, որ սա հատկապես ընդգրկում է այն դեպքերը, երբ մարդիկ հրաժարվում են ներել: Մեր հավաքույթների ժամանակ ես տեսել եմ, թե ինչպես են հարյուրավոր մարդիկ ընդունել Սուրբ Հոգուն և անմիջապես խոսել այլ լեզուներով, սակայն մեկ-երկու տասնյակ մարդիկ նրանց միջև շփոթված տեսքով կանգնած էին: Գրեթե յուրաքանչյուր դեպքում, երբ դիմում էի այդ մի քանի տասնյակ մարդկանց, Տերն առաջնորդում էր խոսել թաքցրած վիրավորանքի մասին: Հենց այդ մարդիկ ներում էին, անմիջապես ընդունում էին Սուրբ Հոգու լեցունությունը և խոսում էին լեզուներով: Այնպես որ, մինչև շարունակելը, աղոթենք:

«Հայր, խնդրում եմ, որ Դու ստուգես ինձ և ցույց տաս՝ արդյոք իմ սրտում որևէ անհնազանդություն կա: Խնդրում եմ, ցույց տուր ինձ՝ արդյոք կա որևէ անձ, ում հրաժարվել եմ ներել: Ես որոշում եմ կայացնում հնազանդվել և ներել՝ անկախ այն բանից, թե ինչ Դու կհայտնես ինձ: Ես խնդրում եմ սա Հիսուսի անունով և անչափ շնորհակալ եմ Քեզ»:

Սուրբ Հոգուն ընդունելու համար դուք միայն պետք է խնդրեք: Հիսուսը պարզապես ասում է. «Ձեզնից ո՞վ է, որ հորից իր որդին հաց ուզի, մի՞թե քար կտա նրան: Կամ, եթե ձուկ, մի՞թե ձկան տեղ օձ կտա նրան: Կամ՝ ձու ուզի, մի՞թե կարիճ կտա նրան: Արդ, եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկ. 11.11-13): Նա պարզապես նկատի ունի, որ եթե մեր երեխաներն ինչ-որ բան են խնդրում մեզնից, ինչը կամենում ենք տալ նրանց, մենք ինչ-որ չար կամ այլ բան չենք տա նրանց: Նույն կերպով, եթե խնդրեք Հորից Նրա Հոգին, Նա չար հոգի

չի տա ձեզ: Դուք միայն պետք է խնդրեք Հորը՝ Հիսուսի անունով, և կստանաք Նրա Սուրբ Հոգուն:

Դուք պետք է խնդրեք հավատքով: Նոր կտակարանը հայտնում է մեզ, որ Աստծուց անկարելի է որևէ բան ստանալ՝ առանց հավատքի: Հակոբոս 1.6,7-ում գրված է. «Միայն թե թող հավատքով խնդրի՝ առանց երկմտելու, որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին: Այն մարդը թող չկարծի, որ Տիրոջից մի բան կառնի»: Այնպես որ, այս պահին հարցրեք ձեզ. «Երբ եմ ես ստանալու: Արդյո՞ք դա տեղի կունենա, երբ խոսեմ այլ լեզուներով, թե՞ երբ ես խնդրեմ»: Ձեր պատասխանը պետք է լինի հետևյալը. այն պահին, երբ դուք խնդրեք: Որովհետև Աստծո թագավորության մեջ մենք հավատում ենք և հետո ենք ստանում: Այն մարդիկ, որոնք հավատք չունեն, ասում են. «Ցո՛ւյց տվեք ինձ, և ես կհավատամ», բայց Հիսուսն ասում է. «Ասում եմ ձեզ, թե՝ ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատացեք, թե կառնեք, և կլինի ձեզ» (Մարկ. 11.24): Ուշադրություն դարձրեք, որ սկզբում դուք հավատում եք, իսկ հետո ստանում եք այն, ինչ խնդրել եք:

Գործք 2.4-ում գրված է. «Եվ ամենը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս»: Ուշադրություն դարձրեք, որ նրանք էին, որ խոսեցին լեզուներով. Սուրբ Հոգին չէր, որ խոսեց լեզուներով: Այդ մարդիկ պետք է անեին դա, ինչպես որ Հոգին նրանց բառեր էր տալիս: Այնպես որ, անհրաժեշտ է զիջել: Ես կարող եմ կանգնած լինել արագահոս գետի մեջ, բայց եթե չբարձրացնեմ ոտքերս և չզիջեմ, ես չեմ հոսի այդ գետի հետ: Այսպիսով, կա երեք ոլորտ, որոնցում պետք է զիջենք: Առաջինը՝ մեր շուրթերը: Եթե ես չշարժեմ իմ շուրթերը, ոչ մի բառ՝ թե՛ իմ մայրենի լեզվով, թե՛ որևէ օտար լեզվով, թե՛ երկնային լեզվով, չի արտաբերվի: Երկրորդը՝ մեր լեզուն: Եթե ես չշարժեմ իմ լեզուն, ես չեմ կարողանա խոսել: Երրորդը՝ մեր ձայնալարերը: Եթե ես չզիջեմ իմ ձայնալարերն իմ թոքերին, չեմ կարողանա խոսել:

Այս պահին գուցե մտածեք, որ ես հեգնում եմ, բայց այդպես չէ: Տարիներ շարունակ տեսնելով, թե ինչն է խոչընդոտում մարդկանց, ես հասկացա, որ շատերը ենթագիտակցորեն մտածում են, որ Սուրբ Հոգին տիրանալու է իրենց շուրթերին, լեզվին և ձայնալարերին, և դրդելու է իրենց խոսել: Ո՛չ, մենք ենք խոսում կամ զիջում՝ այնպես, ինչպես որ Նա խոսել է տալիս:

Հիսուսն ասում է. ««Ինձ հավատացողը, ինչպես Գիրքն ասում է, Նրա փորից կենդանի ջրերի գետեր կբխեն»: Սա ասաց այն Հոգու համար, որ ընդունելու էին Նրան հավատացողները, որովհետև դեռ Սուրբ Հոգին տրված չէր, որովհետև Հիսուսը դեռ փառավորված չէր» (Հովի. 7.38,39): Երբ դուք խնդրում եք Սուրբ Հոգուն, գուցե ինչ-որ վանկ վեր բարձրանա կամ պտտվի ձեր մտքում: Եթե դուք խոսեք այն հավատքով, դա նման կլինի ջրապատնեշ քանդելուն, և լեզուն կսկսի բխեցնել: Ինձ դուր է գալիս պատկերացնել դա որպես թելի կծիկ, որը ձեր որովայնում է, իսկ այդ թելի ծայրը կամ կծիկի սկիզբը երևում է ձեր լեզվի վրա: Եվ երբ դուրս եք քաշում այդ թելի ծայրը (կամ սկսում եք խոսել), թելի մնացած մասը դուրս է գալիս: Ոմանք մտածում են, որ նախ՝ մտովի կյուրացնեն ամբողջ այդ լեզուն, և միայն այդ ժամանակ կխոսեն: Ո՛չ, մենք պետք է խոսենք հավատքով:

Հիշում եմ, որ երբ կինս աղոթեց՝ Սուրբ Հոգուն ընդունելու համար, նա որոշ ժամանակ լեզուներով չէր խոսում: Մի քանի շաբաթ անց նա աղոթում էր իր ընկերուհիների հետ և սկսեց լեզուներով խոսել: Նա ասաց.

- Այդ վանկը պտտվում էր իմ մտքում վերջին մի քանի շաբաթվա ընթացքում, երբ աղոթում էի, բայց ես չէի զիջում դրան մինչև այսօր երեկոյան:

Ես հավատում եմ, որ սա վերաբերում է շատերին. նրանք խնդրում են, ստանում են, բայց չեն զիջում:

Աստվածաշունչը պնդում է. «Եվ մարգարեների (խոսողների) հոգիներն էլ մարգարեներին հնազանդվում են» (Ա Կորնթ.

14.32): Սա պարզապես նշանակում է, որ մենք ենք, որ պետք է խոսենք, և որ Սուրբ Հոգին չի պարտադրի մեզ Իր կամքը: Ես հիշում եմ, որ Սուրբ Հոգով լցվելուց մեկ օր անց ես չգիտեի, թե ինչպես կրկին լեզուներով խոսեի: Ես գնացի մի եղբոր մոտ, որը մարզասրահում էր, և հարցրի.

- Ինչպե՞ս կրկին խոսեմ:

Նա ասաց.

- Ջո՛ն, պարզապես խոսի՛ր:

Ես դուրս գնացի՝ վազելու, և վազելու ընթացքում կրկին սկսեցի լեզուներով խոսել: Ես այնքա՜ն էի ուրախացել: Մենք պետք է հիշենք, որ Սուրբ Հոգին մշտապես պատրաստ է. մե՛նք ենք, որ պետք է զիջենք: Դա նման է ջրի շատրվանի. ջուրը մշտապես կա. դուք միայն պետք է պտտեք բռնակը, և ջուրը կհոսի: Այնպես որ, հաճախ աղոթեք լեզուներով:

Այժմ, երբ ստացաք հիմքային ցուցումներ Աստվածաշնչից, եթե դուք հավատում եք, որ կստանաք, մենք կարող ենք միասին աղոթել: Եվ վերջինը. դուք չեք կարող միաժամանակ խոսել անգլերեն և իսպաներեն: Ճիշտ նույն կերպով, դուք չեք կարող միաժամանակ խոսել ձեր մայրենի լեզվով և լեզուներով: Այսպիսով, հիշե՛ք. պարզապես հավատացե՛ք և զիջե՛ք: Եկե՛ք աղոթենք:

«Հա՛յր, Հիսուսի անունո՛վ, ես գալիս եմ Քեզ մոտ՝ որպես Քո զավակ: Դու ասացիր, որ եթե խնդրեմ Քեզնից Սուրբ Հոգուն, Դու կտաս: Այժմ ես ուրախությամբ և հավատքով խնդրում եմ. մկրտի՛ր ինձ և լցրո՛ւ հենց այս պահին Քո Սուրբ Հոգով: Ես ընդունում եմ այն ամենը, ինչ Դու պատրաստել ես ինձ համար, ներառյալ՝ լեզուներով խոսելու կարողությունը: Այնպես որ, այժմ ես հավատքով կխոսեմ նոր լեզուներով: Ամե՛ն»:

ՍԱՏԱՆԱՅԻ ԽԱՅԾԸ

Ապրել վիրավորանքի մահացու թակարդից ազատ

«Սատանայի խայծը» գիրքը բացահայտում է ամենախորամանկ ծուղակներից մեկը, որ թշնամին օգտագործում է հավատացյալներին Աստծո կամքից հեռացնելու համար: Շատերը գտնվում են այս ծուղակի մեջ և նույնիսկ չեն գիտակցում դա:

Մի՛ խաբվեք: Քրիստոսն ասաց. «Անկարելի է, որ գայթակղություններ չգան» (Ղուկաս 17.1): Դուք չեք կարող այնպես անել, որ ձեզ երբևէ չվիրավորեն, բայց դո՛ւք պետք է որոշեք, թե ինչպես պատասխանեք վիրավորանքին: Եթե ճիշտ վերաբերվեք վիրավորանքին, ապա դառնանալու փոխարեն՝ կդառնաք ավելի ուժեղ: Միայն ա՛յս դեպքում ոչինչ չի կարող խոչընդոտել Աստծո հետ ունեցած ձեր շփմանը:

Այս ուղերձի միջոցով Ջոն Բիվերը կզորացնի ձեզ, որպեսզի մնաք Աստծո կամքի մեջ և ազատվեք կասկածամտությունից և թերահավատությունից: Դուք կարող եք ազատվել զոհ լինելու մտածելակերպից և ապրել առանց դառնության և առանց հիասթափության բեռի: Երբ հայտնաբերեք, որ կա Աստծուն հնազանդվելու ավելի բարձր մակարդակ, ձեր կյանքը կլցվի ներելու կարողությամբ, հաշտությամբ և հարատև ուրախությամբ:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

ԱՍՏՎԱ՛Ծ, ՈՐՏԵ՞Ղ ԵՍ

Գտի՛ր զորություն և
նպատակ քո անապատում

Միգուցե անցյալում Աստված խոսում էր ձեզ հետ, բայց այժմ Նա լռում է: Միգուցե անցյալում դուք առաջ էիք շարժվում հավատքի մեջ, բայց այժմ չեք գտնում Նրա ներկայությունը: Բարի գալո՛ւստ անապատ՝ այն վայրը, որը գտնվում է Աստծուց խոստում ստանալու և դրա իրականացման միջև:

Այնուամենայնիվ, կա մի բարի լուր. անապատը պարզապես ամայի և աննպատակ վայր չէ: Աստված օգտագործում է անապատը, որպեսզի պատրաստի և սպառազինի ձեզ ձեր կոչման համար՝ այն դեպքում, եթե ճիշտ անցնեք այն: Հակառակ ընդունված կարծիքին, դուք չեք անցնում ձեր կյանքի այս փուլը՝ պարզապես սպասելով Աստծուն: Դուք պետք է կատարեք ձեր բաժին աշխատանքը, որպեսզի անցնեք այն, և ձեր աշխատանքը շատ մեծ է: Եթե դուք չեք ցանկանում ժամանակ վատնել՝ շարունակ նույն տեղում դոփելով, կարևոր է իմանալ, թե ինչ է անապատը:

Այս բացահայտումներով լի գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը կրթում է ձեզ՝ օգտագործելով կարևոր աստվածաշնչյան հայտնություններ և խորիմաստ պատմություններ, որոնք կօգնեն ձեզ անցնել ձեր կյանքի ամայի և դժվարին փուլերը և ստանալ այն ամենը, ինչ Աստված պատրաստել է ձեզ համար:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

ԿՈՐԾԱՆԵԼ ԿՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Կործանի՛ր այն, ինչը խլում է քո ուժը

Ինչպես Սուպերհերոսը, որը կարող է ցատկել ամեն արգելքի վրայով և հաղթել բոլոր թշնամիներին, Քրիստոսի հետևորդները նույնպես կյանքի դժվարությունները հաղթահարելու գերբնական կարողություն ունեն: Այնուամենայնիվ, և՛ Սուպերհերոսը, և՛ մենք մի խնդիր ունենք. գոյություն ունի կրիպտոնաքար, որը խլում է մեր ուժերը:

Իհարկե, Սուպերհերոսը և կրիպտոնաքարը հորինված են: Բայց հոգևոր կրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը պատասխանում է այն հարցին, թե ինչու են մեզնից շատերն անկարող վերապրել այն աստվածային զորությունը, որն ակնհայտորեն դրսևորվում էր առաջին դարի քրիստոնյաների կյանքում:

«Կործանել կրիպտոնաքարը» գրքում Ջոն Բիվերը ցույց է տալիս, թե ինչ է կրիպտոնաքարը, ինչու է այն խլում մարդկանց ուժերը մեր եկեղեցիներում, և ինչպես ազատվել դրա կապանքներից:

«Կործանել կրիպտոնաքարը» գիրքը հոգևոր թմրեցուցիչ չէ և նախատեսված չէ թուլասիրտների համար: Այս լուրջ ճշմարտությունը նախատեսված է Քրիստոսի այն հետևորդների համար, որոնք ցանկանում են անցնել անձի վերափոխման դժվարին, բայց պտղաբեր ընթացքը:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

X. ԲԱԶՄԱՊԱՏԿԻՐ ԱՍՏԾՈՒՅ ՔԵԶ ՏՐՎԱԾ ՆԵՐՈՒԺԸ

Երբևէ զգացել եք ձեզ որպես դիտորդ Աստծո թագավորության մեջ: Միգուցե դուք գիտեք, որ կա ինչ-որ բան, ինչը պետք է անեք, բայց չեք կարողանում վերջնականորեն որոշել, թե ինչ է դա: Շատերը ցանկանում են մեծ ազդեցություն թողնել, բայց միգուցե ձեր ներսում կան չպատասխանված հարցեր, օրինակ.

- Ինչպե՞ս համոզված լինեմ, որ բաց չեմ թողնում Աստծո կամքն իմ կյանքում:
- Ի՞նչ դեր են կատարում իմ եզակի պարգևները Աստծո թագավորությունը կառուցելու մեջ:
- Ինչպե՞ս վստահ լինեմ, որ օգտագործում եմ Աստծուց ինձ տրված ներուժը:
- Իմ կոչումը պակա՞ս կարևոր է, եթե ես «ծառայության» մեջ չեմ:
- Ինչպե՞ս հավասարակշռություն պահպանել Աստծո շնորհքի մեջ հանգստանալու և Նրա թագավորության համար գործելու միջև:
- Ինչպե՞ս վանել վախը և առաջ գնալ, նույնիսկ անորոշության և վտանգի դեպքում:

Այս խորիմաստ գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը հիմնվում է Սուրբ գրքի մանրակրկիտ ուսումնասիրության վրա և օգտագործում է ազդեցիկ պատմություններ, որպեսզի օգնի ձեզ այլ կերպ մտածել ձեր կոչման մասին և հասկանալ, թե ինչու է այն կարևոր Աստծո համար: Ընթերցելով գրքի էջերը՝ դուք կսովորեք, թե ինչպես բազմապատկեք Աստծուց ձեզ տրված պարգևները և ինչպես օգտագործեք ձեր ներուժը:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

ՊԱՏՎԻ ՎԱՐՁՔԸ

Ոչ մի քրիստոնյա չի ցանկանում սահմանափակել Աստծուն, սակայն շատերս անգիտակցաբար սահմանափակում ենք Նրա գործունեությունը մեր կյանքում, քանի որ անտեսում ենք մի վճռական հոգևոր սկզբունք՝ Պատիվը:

Պատիվն այնպիսի հասկացություն է, որը մեծ մասամբ կորսվել է մեր մշակույթում, բայց, ինչպես կտեսնենք գրքի էջերում, այն առանցքային դեր ունի մեր կյանքի բոլոր ոլորտներն Աստծո թագավորության ազդեցությանը ենթարկելու համար:

«Պատվի վարձքը» գրքում հանրաճանաչ հեղինակ Ջոն Բիվերը ցույց է տալիս, որ, պատասխանելով պատվելու կանչին, դուք ընդունում եք Աստծո արժեհամակարգը և հայտնվում եք այնպիսի դիրքում, որ կարող եք ստանալ այն, ինչ Աստված որոշել է ձեզ համար:

Այս խորաթափանց աստվածաշնչյան սկզբունքները միավորելով դրանք գործնականորեն պատկերող ազդեցիկ պատմությունների հետ՝ այս գիրքը նորովի կներկայացնի ձեզ այս մոռացված առաքինությունը և, ամենակարևորը, ձգտում կառաջացնի, որ ընդգրկեք այն ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

Հասանելի է **MessengerX.com** կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր

- **Անվճար ավելի քան 120 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն

Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:

MessengerX.com

Հասանելի է App Store

Հասանելի է Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

«Մոտենալ Աստծուն» գրքում Ջոն Բիվերը հորդորում է ձեզ չբավարարվել քրիստոնեության դժգույն ստվերով, որը գիտի Աստծո մասին, սակայն չի ճանաչում Աստծուն: Տիեզերքի Արարիչն անհավատալի հրավեր է ուղղել մեզ՝ ոչ թե երկրպագելու Իրեն հեռվից՝ բառերով և ծեսերով, այլ՝ մուտք գործելու այնպիսի իմաստալից և մտերիմ հարաբերության մեջ, որում դուք ճանաչում եք Նրա սիրտը, իսկ Նա՝ ձերը:

Գուցե սա Աստվածաշնչի ամենազարմանալի խոստումն է...
Աստված փափագում է մտերմորեն ճանաչել ձեզ

ՋՈՆ ԲԻՎԵՐԸ միջազգային ճանաչում ունեցող քարոզիչ և հանրաճանաչ հեղինակ է, ով համարձակ և առանց փոխզիջման քարոզում է Աստծո Խոսքը: Ջոնը և կինը՝ Լիզան, հիմնադրել են «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայությունը, որի նպատակն է՝ պատրաստել Քրիստոսի հետևորդների, որոնք փոխզիջման չեն գնում և վերափոխում են այս աշխարհը: Երբ նա տանն է՝ Կոլորադոյում, սեղանի քարտային խաղեր է խաղում չորս որդիների հետ կամ փորձում է համոզել Լիզային գոլֆ խաղալ իր հետ:

MessengerX

Անվճար ներբեռնումների և հոսքային հեռարձակման համար այցելե՛ք **MessengerX.com**

Messenger INTERNATIONAL

Այս գիրքը նվեր է հեղինակից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Տեսածդե՛ք սա՝ ավելի համար